

Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից և ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է

օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

ՊՆԻՔ ԱՌԻՅՆՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅԸ ՆՕՐՊՈՒՄՆԸ ՈՒՆԵԱՆԱԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆԱԿ
ՀՈՒՄԱՆԻՏԱՏՔԵԼԱՂԱՅԵԼԻ ԳՐԹԵՐ:

ԹՎԱՅԻՆ ԳՐԹԵՐԻ ՄՏԵՂՈՒՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԸ "ՀԱՄԱՀՈՅՔՎԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՅՔԻՆ՝

www.freebooks.am

ԸՆԴՈՒՄԱԿԱՆ ԵՒՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՂ ԿՈՅՔԻՆ:
ՑԱՆՎՈՒՄ ԵՒՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:



ԳՐԵՔ ՄԵՔ՝ freebooks@rambler.ru

Ջոն Քոլեման

300 - ի ԿՈՄԻՏԵՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ 2008

Չոն Բոլեման

300 - Ի ԿՈՍԻՏԵՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Թարգմանեց

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԱԳՅԱՆԸ

Մեծ Բրիտանիայի հատուկ ծառայության նախկին աշխատակից դոկտոր Ջոն Բոլեմանի բազմամյա և բազմաթիվ հետազոտությունները նրան հանգեցրել են հետևյալ եզրակացությանը. որ հավաստի և միանգամայն իրական է այն չար դիտավորությունը, ինչը մարմնավորված է ողջ աշխարհի սոցիալական, պետական ու քաղաքական գործընթացները համընդհանուր մակարդակով ծրագրելու և կառավարելու մեջ:

Ամբողջությամբ վերցրած՝ Մարդկության վրա և, առանձին վերցրած, յուրաքանչյուր մարդու գիտակցության վրա համապարփակ վերահսկողություն հաստատելու ծրագրի իրականացման համընդգրկուն համակարգ ու գործիք է 300-ի կոմիտեն՝ որպես համաաշխարհային կառավարության արդի կազմակերպական ձև:

Գիրքը պարունակում է փաստական հարուստ նյութ. բացահայտվում և ցույց են տրվում իրական կառավարման բազում ծածուկ կառույցներ ու միջոցներ: Այն նաև լույս է սփռում ԱՊՀ երկրներում կատարված ավերիչ «բարեփոխումների» ակունքների, բնակչության համատարած գործազրկության և աղքատացման պատճառների վրա:

ԹԱՐԳՄԱՆՉԻ ԽՈՍՔՆ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Մատենիկդ մեջ բռնած գիրքը սովորական գրվածքներից չէ, որոնք հարցեր են հարուցում՝ դրանք անպատասխան թողնելով կամ համոզկեր ու սպառնիչ պատասխան չտալով: Պատկերավոր ասած՝ վիճակագրության պես նման են կնոջ լողազգեստի, որն ամեն ինչ ընդգծում է, բայց ոչ մի բան ցույց չի տալիս: Գիրքն արծարծում է մայրկությանը և յուրաքանչյուրիս հուզող հարցերը, ցուցահանում է դրանց ծածուկ ու փակ դռները և տալիս բանալիների տրցակը:

Պետք է ուշադրությունը հրավիրեն մի փաստի վրա: Մեծ Բրիտանիայի հետախուզության նախկին սպա դոկտոր Քոլենանի այս գիրքը Մոսկվայում հրապարակվել է ընդամենը երեք հազար տպաքանակով, ինչը շատ քիչ է Ռուսաստանի անգամ մեկ միջին հիմնարկի կամ գործարանի համար, իսկ թարգմանիչն էլ զգուշանալով չի գլխի իր անունը:

Հեղինակն ապացուցում է, որ պետությունների, այդ թվում նաև ԱՄՆ-ի ղեկավարները դրածուներ են, որոնք կատարում են իրենց դնոդի կամքը և իրենց հերթին պաշտոնների են դնում մյուս կատարածուներին: Եթե իշխանապետի թեկնածուն հրաման կատարող չէ՝ չի ընտրվում, գահ չի ստանում, իսկ եթե, այնուամենայնիվ, նստում է ոլլան և, իշխանության համն առնելով, կարծում է, թե ինքնիշխան է, կարող է չհնազանդվել, գահից վերցվում է կամ էլ ուղղակի վերացվում:

Պետությունների ղեկավարներ դնույն ու վերցնողը մի գերզառանի ու գերիզոր կազմակերպություն է, որի անունն է 300-Ի ԿՈՄԻՏԵ: Սրա նպատակը աշխարհի մեկ միասնական կառավարություն ստեղծելը և այն գլխավորելն է: Այս բանը նա իրականացնում է պետությունները թուլացնելով, ինչն անում է նախ և առաջ երկրի արդյունաբերությունը քանդել տալով և թմրամոլություն ու անբարոյություն սերմանելով: Կոմիտեի ծրագիրն ամբողջովին ազգավնաս, մարդավնաս ու հոգեկործան է:

Արդեն 150 տարի Մարդու և մարդկայնության թշնամի համաշխարհային այս Օարդը հյուսում է իր ոստայնը, որով պատել է ողջ հողագունդը: Թելերը ձգվում են ամեն տեղ՝ պետական կառավարման մարմիններ, զանգվածային լրատվամիջոցներ, կրթություն, գիտություն, քաղաքականություն, արդյունաբերություն, երգուպար, թմրաուևաուր և, ի վերջո, եկեղեցի և մարդու գիտակցություն ու հոգի: Նրա վերջնական նպատակը ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԽՈՐՏԱԿԵԼԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ՀՈՂԻՆ ՃԱՆԿԵԼՆ Է: 300-Ի ԿՈՄԻՏԵՆ 666-Ի՝ ՆԵՌԻ ՈՒՂԻՆ ՀԱՐԹՈՂՆ Է, ՆՐԱ ՆԱԽԱԿԱՐԱՊԵՏԸ:

Համաշխարհային տիրապետության հասնելու համար երկբևեռ աշխարհի մի կողմը՝ ԽՍՀՄ-ը, փլուզելուց և գլխավոր խոչընդոտներից մեկը վերացնելուց հետո 300-ի կոմիտեն հարվածի ուժը կենտրոնացրել է

մյուս գերտերության՝ ԱՄՆ-ի վրա: Իսկ մենք մեր ուշադրությունը կենտրոնացնենք մեր Հայաստանի վրա: Սկսենք Կոմիտեի պիվահնար խաղից արտաքուստ հեռու մի խաղի պատմությամբ, որն առաջին հայացքից կարող է թվալ խնդրո առաջկայի հետ կապ չունեցող, բայց... համբերությամբ:

Պարսից շահերից մեկն ասելիս է եղել. «Աշխարհն ինձնից է դողում, ես էլ՝ նարդու այս գառից»: Հսկա Պարսկաստանի զորավոր ու ընչաշատ շահր վախ է ունեցել գառից, իսկ փոքրիկ Հայաստանի չքավոր ու անշահ բնակիչը ո՛չ գառերից վախ ունի, ո՛չ գիր-դուշից (լուտոների անուններ են), ո՛չ էլ մյուս բազմաթիվ անշահ լուտոներից, որովհետև ո՛չ աշխատանք ունի, ո՛չ ապրուստ, և ունեցած միակ բանը հույսն է, որ դրեյ է անհույս բանի վրա: Եվ բանի որ միակ բանը հույսն է, վերջին դրամն է տալիս, որ ընտանիքը պահելու համար ընտանեկան գառ ու գիր-դուշ և բախտախաղի մյուս թոթակտորներն առնի: Երեխան էլ վերջին խաղալիքն է վաճառում, որ մեծերի բռնած անհույս խաղը շարունակի:

Այս բազմամուն լուտոյի բուրգի գլխին բազմել է սատանայի մեկյանը՝ խաղատունը, որի բախտանվի կամ խաղանվի (ռուլետկայի) վրայի թվերի ընդհանուր գումարը կազմում է Նեոի անվան թիվը՝ 666: Եվ նեոական տների շարքը ձգվում է արտաքին աշխարհի հետ կապող մեր մայրուղու դռան՝ «Զվարթնոց» օդանավակայանի ճանապարհի երկայնքով: (Իրար անկապելի՝ անուններ: **Զվարթնոց** նշանակում է հրեշտակ, **զվարթնոց՝** հրեշտակների տեղ, տուն, հրեշտականոց. խաղատուն՝ Նեոի տուն՝ նեոանոց): Մեկնում ես՝ ուղեկցում են նեոատները, ժամանում ես՝ դիմավորողները դրանք են:

(Մի տեղեկություն էլ: Քրիստոսի հակառակորդի անունը միայն հայերն են Նեո դրել: Մյուս ազգերը հակաքրիստոս՝ անտիխրիստ կամ անտիքրիստ են ասում: 5-րդ դարում Աստվածաշնչի մեր թարգմանիչները այս ծագեցրել են Ներոն (Nero) կայսեր /54-68թթ./ անունից: Սա առաջին քրիստոնյաների առաջին ամենադաժան հալածիչն էր: Իր պալատի այգում գիշերները քրիստոնյաներին մերկացրած գամում էր խաչափայտերին և հրկիզելով՝ կենդանի ջահելի լույսի տակ խրախճանում ու պոռնկանում էր տարփուհիների հետ: Վերջն էլ Հռոմը վառեց և մեղքը քրիստոնյաների վրա գցեց, որ ամենուրեք նրանց հալածեն ու սպանեն:)

Դստնանք մեր ոչխարներին՝ գառերին: Ո՞ւմ ձեռքն է առաջինը դրանք նետել: Բացենք Ք.ա. 5-րդ դարի հեղինակ, պատմագրության հիմնադիր Հերոդոտոսի Պատմության 1-ին գրքի 94-րդ դրվագը և մտնենք գառախաղը հորինած և անհետացած մի ժողովրդի՝ լյուդիացիների պատմության մեջ, որի ճակատագիրը կրկնօրինակում ենք ամենայն

ճշգրտությամբ: Այս ազգը ասպարեզից վերացել է իր թագավորների ապիկարության և սնափառության պատճառով: Սրանցից մեկի՝ Ատյուսի օրոք այնպիսի թշվառության է մատնվում, որ ազգի կեսը, սովից տանջահար, հեռանում է հայրենիքից ու կորչում օտար ափերում: Մնացած կեսը մյուս թագավորի՝ Կրեսոսի (595-546) անմտության զոհն է դառնում. ընկնում է օտարի իշխանության տակ և հետզհետե մարում:

Լյուդիան Փոքր Ասիայի հարավ-արևմուտքում՝ Վանի հայոց թագավորությանը (Ուրարտուին) մոտիկ այն հնագույն պետությունն էր, որի վերջին թագավորը եղավ Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի, ողբ հայրենասիրի» վեպում իլիշատակված այս Կրեսոսը՝ առասպելական հարստության տերը: Նա իրեն համարում էր երջանկագույնը բոլորից, բայց դրանով չէր բավարարվում, անհատնում զանձեր ու մեծ տերություն ուներ, իշխում էր բազում ազգերի վրա, բայց չէր հագնում: Արհամարհելով իմաստուն խորհուրդը՝ սին փառքից մղված հարձակվեց պարսիկների վրա: Արշավանքն ավարտվեց նրանով, որ սյարսից արքա Կյուրոսը սլաշարեց Լյուդիայի մայրաքաղաք Սարդեսը և գերեվարեց Կրեսոսին: Լյուդիան ջնջվեց քարտեզից:

Ուշադիր ընթերցենք մեջբերումը, ամեն խոսքը կարևոր է մեզ համար. «Լյուդիացիները համանման սովորույթներ ունեն, ինչ հեյլենները, բացի նրանից, որ պոռնկացնում են իրենց դուստրերին: Իրենց մասին տեսնա թե ինչ են պատմում: Մանեսի որդի Ատյուսի թագավորության օրոք ամբողջ Լյուդիայում մեծ սով էր: Սկզբում լյուդիացիները համբերատար էին, բայց քանի որ սովը չէր դադարում, նրանք փրկության միջոցներ էին փնտրում՝ տարբեր հնարքներ մտածելով: Այդ ժամանակ նրանք հնարեցին գառ և վեզ խաղալը... Այսպես, նրանք սովի դեմ հնարք գտան. մի ամբողջ օր խաղում էին, որպեսզի սնվելը մոռանան, իսկ մյուս օրը, խաղը դադարեցնելով, սնվում էին: Այսպես նրանք ապրել են տասնութ ասարի: Ի վերջո թագավորը, համայն լյուդիացիներին երկու մասի բաժանելով, պատվիրեց վիճակ նետել, թե ո՞ր մասը պետք է մնա երկրում, և ո՞ր մասը պետք է հեռանա: Ինքը՝ թագավորը, միացավ այն մասին, ում վիճակվեց մնալ երկրում, իսկ հեռացողների առաջնորդ նա կարգեց իր որդուն, որի անունը Տյուրսենոս էր: Այսպիսով, նրանք, ում վիճակվել էր հեռանալ երկրից, իջան Սմյուննե և, նավեր շինելով... մեկնեցին ապրուստի միջոցներ և նոր երկիր գտնելու: Բազում ազգերի մոտով նավելուց հետո նրանք վերջապես հասան Օմբրիկների երկիրը [Բտալիայում երկիր, որը հիմա չկա - Վ. Ա.], որտեղ և հիմնեցին քաղաքներ... Նրանք փոխեցին իրենց լյուդիացի անունը թագավորի որդու անվամբ, որն իրենց առաջնորդն էր դարձել, և կոչվեցին տյուրսեններ: Իսկ բուն լյուդիացիները ստրկացվեցին պարսիկների կողմից [և հետզհետե վերացան]»:

Քիչ հետո կտեսնենք լրացված պատկերի անկախ Հայաստանի, որը նախկինում կախված էր մեն մի կենտրոնից, իսկ հիմա՝ անկախ ժամանակ, կախված է հազար ու մի ծայրից. զանազան պետությունների կամեցողությունից, ինչ-ինչ հիմնադրամներից, օտարերկրյա և հայրենական հայտատուների ուղորմությունից, անգամ թրքի բռնած լիլիթից ու կամքից: Իսկ Լյուդիան ոչ միայն իրական անկախություն ուներ, այլև այնքան էր ուժեղ, որ նրա թագավոր Կրեստոսը նվաճել էր Ասիայի հեղեճական քաղաքները, նրանց հարկատու էլ դարձրել և իր կամքն էր թելադրում շրջակա ազգերին: Եվ, ի վերջո, հպարտությունից անմտացավ ու հարձակվեց Պարսկաստանի տիրույթի վրա, և Կյուրոսը տվեց նրա վերջը: Գիտե՞ս ինչպես տվեց: Շատ հասարակ ձևով: Ոչ մի ջանք չթափեց: Ո՛չ ժողովրդին կոտորեց, ո՛չ էլ երկիրն ավերեց: ԱՎԵՐԵՑ ՍԱՐԳՎԱՆՑ ՀՈԳԻՆԵՐՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ: Կյուրոսը պարզապես կատարեց իր իսկ՝ Լյուդիայի գերի թագավոր Կրեստոսի հետևյալ խաբկույալը (կատվածը, որի ամեն բառը հույժ ծանրակշիռ է, միջաբերում են, որովհետև այսպես է կատարվել նաև մեզանում). «Լյուդիացիներին դու ներիր և, որպեսզի նրանք այսուհետև չսպաստամբեն ու քեզ վտանգ չսպառնան, արգելիր նրանց գենք կրել և հրամայիր, որ թիկնոցների տակից խլիտոններ [օտար տարազ՝ ներքնազգեստ - Վ. Ա.] հագնեն և ոտքերին՝ ճիտքավոր կոշիկներ: Հրամայիր նաև, որ իրենց երեխաներին սովորեցնեն կիբատ նվագել և երգել ու փերեզակություն անել: Եվ դու, ով արքա, շուտով կտեսնես, թե նրանք ինչպես այրերից կվերածվեն կանանց. այնպես որ այնուհետև դու երբեք չես վախենալու, թե նրանք կսպաստամբեն» (Գիրք I, 155):

Լյուդիացիները այսպիսով վերացան՝ թե՛ օտարություն գնացածները, թե՛ հայրենիքում մնացածները: Արդ՝ խորհենք, թե ինչ ավերիչ ու աղետալի հետևանքներ կարող են ունենալ դրսեկ, օտարտի սովորություններն ու բարբերը, նաև ալանդները արհեստականորեն բուծելը:

Պատմագրության հիմնադրի հնագույն «Պատմության» գրքի մի էջ էլ չբռնող այս երկու դրվագները պատկերն են մեր նորագույն պատմության: Մի ավաչափ այս հայելին 2500 տարվա հեռավորությունից ճշտիվ արտացոլում է մեր պատկերը: Եվ այդ պատկերին մենք բազում տխուր գծեր ենք ավելացրել: Նայենք հայելուն:

Հնի հոծ վրձնահարվածները հետևյալներն են. քաղց, պոռնկություն (մայմնավաճառություն), արտագաղթ, օտարամուտ սովորույթներ, ազգի վերացում:

Մերն էլ նույնն է, բացի վրձնի վերջնահարվածից՝ վե-րա-ցու-մից:

Միասին համադրենք ու համեմատենք հիմն ու նուրը, նրանցի և մերը: Վերցնենք աշակերտական տետրի մի գույգեջ, ձախ կեսի վրա գրանցենք լյուդիացիների գլխին եկածը, իսկ աջ կեսին, յուրաքանչյուր

համանման աղետի դիմաց՝ մերը, յուր համապատասխան գումարելիներով: Համոզված եմ, որ դու ավելի շատ բան կգտնես և ավելի շատ զույգեջեր կլրացնես: Այսպես.

Գիրք առաջին, դրվագ 94

- **Լյուդիացիները պոռնկացնում են իրենց դուստրերին:**

- Մենք՝ ևս: (Մի՛ գայրացիր: Եթե հայուհիները մարմնավաճառությամբ են պարսպում, արդյո՞ք ազգը մեղք չունի դրանում:) Բայց այս մասին հետո: Շատ է ցավեցնում:

- **Մանեսի որդի Ատյուսի թագավորության օրոք Լյուդիայում սով էր:**

- Լևանի թագավորության օրոք Հայաստանում ևս ժողովուրդը սոված էր + սաղաթաթյունը + ցուրտը + խավարը: Նրա հաջորդի օրոք էլ ժողովուրդը կուշտ չէ + հացի + սննդամթերքի բոլոր տեսակների + ջրի + հեռախոսավարձի օրավուր թանկացում + լուսավաճար + էժան էլեկտրափոխադրամիջոցի վերացում + երթուղյակի թանկացում + էլ. հաշվիչների արագասլոտյա + չունեցած հեռախոսագրույցի ու չխմած ջրի վճարներ + բուժման կարիք ունեցողների անհույս ու անմիջապես վիճակ և այլն և այլն:

- **Նրանք սովից փրկվելու միջոցներ էին փնտրում՝ տարբեր հնարքներ մտածելով:**

- Մենք՝ ևս + ցրտից + խավարից: Այդպիսի հնարքներ հուշում էին նաև Տեր-Պետրոսյանն ու իր նախարարները, այն է՝ իրարից պարտք վերցնել, տաքանալու համար մեկի տանը հավաքվել, լուսամուտներին ցելոֆան քաշել և այլն:

- **Այդ ժամանակ նրանք հնարեցին գառ ու վեգ խաղալը:**

- Մենք՝ ևս + գիր - դուշը + կրեստիկ-նուլիկը + շահող ակնթարթներն ու շահող ավտոները և մյուսները: Միայն թե վեգի բնական ոսկորները (դրանք խաշ ուտող փոքրամասնության սեփականությունն են) փոխարինեցինք դոմինոյի արհեստական ոսկորիկներով: (Ուշադրություն դարձրի՞ր, որ տետրի զույգեջի՝ մեզ վերաբերող կեսը երկար է դուրս գալիս, թեև երկարացնելու համար ոչ մի հնարք չենք հորինում:)

- **Նրանք սովի դեմ հնարք գտան. մի ամբողջ օր խաղում էին, որպեսզի սնվելը մոռանան, մյուս օրը, խաղը դադարեցնելով, սնվում էին [այսինքն՝ ապրում էին կիսաքաղց]:**

- Մենք՝ ևս + նրանց բաց թողած օրերին խաղալը + վերջին սննդադրամով լոտո առնելը + մուրացկանություն անելը + աղբանոցները քջջելլու, բայց ոչ Թոմանյանի Անհաղթ Աբլորի պես, որը հետո թագավորի հետ սեղան նստեց:

- **Նրանք այսպես [կիսաքաղց] ապրել են տասնութ տարի:**

- Մենք՝ ևս (հաշվեք, ուղիղ այդքան է) + անհայտ թվով տարիներ + ամեն օր թանկացող ուտելիք + արտարժույթի կիսով չափ արժենվազու-

մը, որով խլվեց ապրուստի միջոցներ հայթայթելու համար պանդխտացած հարազատների ուղարկած փողով գոյատևելու հնարավորության կեսը և ամրագրվեց հայրենիքում կիսաքաղց ապրելը:

- Նրանք հայրենիքից հեռացան տասնութ տարի կիսաքաղց ապրելուց հետո:

- Մենք հայրենիքից սկսեցինք հեռանալ կիսաքաղց մնալուն պես + 18 տարի շարունակ ամեն օր հեռանալը + անորոշ քանակությամբ տարիներ հեռանալը, մինչև որ հայրենիքը դատարկվի:

- Նրանց կեսը գաղթեց օտար երկիր:

- Մեր կեսից ավելին է գաղթել + շարունակում է անդադար գաղթել, և մենք ոչինչ չենք անում այս արյունահոսությունը դադարեցնելու համար:

(Հայր գաղթել է միայն այն ժամանակ, երբ թշնամին՝ արաբը, սելջուկյան թուրքը, թաթար-մոնղոլը, օսմանյան թուրքը, գրավել է Հայաստանը և կեղեքել: Պատմության մեջ առաջին անգամ հայն անբռնադատ՝ ուզելով է հեռանում հայրենիքից, որտեղ օտարացեղ զավթիչը չէ տիրակալը: Պատմության մեջ առաջին անգամ հայն ունեցավ ղզբաշից ու թրքից զերծ Հայաստան, զուտ հայերով բնակեցված հայրենիք: Ո՞վ կպատկերացնեի նման չքնաղ երկիր: Ո՞ր հայի մտքով կանցներ, թե ինքը կարող է լքել այդպիսի Հայաստանը, որին երագել է դարեդար: Ո՞ր մեկս կկարծեր, թե ինքը կունեգրվի իր ազատ երկրում, և կունեգրվի, աղքատության կմատնվի իր պես անկախ Հայաստան երագած մարդկանց ձեռքով ու կտարագրվի գոյությունը պահպանելու համար: Ինչպիսի՞ ապրումներ կունենային նախնի հայերը և հետևյալ տողերը գրած ամենայն հայոց բանաստեղծը, եթե տեսնեին արյունաքամվող Ազատ Մայր Հայաստանը. «Ազատ Հայաստան էին երագում ուսանողը, տաճկահայը, պարսկահայը և բոլոր հեռավոր գաղութները: Ազատ Հայաստան էին երագում հայ ժողովրդի բոլոր խավերը, առանց սեռի ու հասակի խտրության: Ի՞նչ ասես, որ չէր տա գրեթե ամեն մի հայ, միայն թե աչքով տեսներ Ազատ Հայաստանը» /Հովհ. Թումանյան/):

- Նրանք հայրենիքից հեռացան ջրային նավերով:

- Մենք հեռանում ենք օդային նավերով, որոնք հայրենիքից չվեցնում են նրանց ջրանավերից 1000 անգամ արագ:

- Նրանք, բազում ազգերի մոտով նավելուց հետո, հանգրվանեցին Օմբրիկների երկրում: (Այսինքն՝ ազգի կեսը մի տեղ հավաքվեց:)

- Մենք ոչ մի ազգի զանց չենք անում. բուն ենք դնում որ երկրում ասես + ամուսնանում ենք ում հետ պատահի: Այսինքն՝ ցրվում ենք աշխարհով մեկ և տարրալուծվում ենք բոլոր ազգերի մեջ:

- Նրանք Օմբրիկների երկրում հիմնեցին քաղաքներ:

- Մենք իսկի գյուղակ էլ չենք հիմնում: Լավագույն դեպքում հիմնում ենք համայնք կամ նրբանցք, օրինակ՝ Մոսկվայի Արմյանսկի պերեմ-

լուր: Պապերիս ժամանակվա բաներ մեջտեղ չբերենք ու մխիթարվենք: «Անոնք անցյալ են, մենք՝ ներկա» (Հ. Պարոնյան):

- Նրանք փոխեցին իրենց լուրիացի անունը:

- Մենք փոխում ենք մեր անունը մեր հանգրվանած ամեն երկրի անվամբ և նրա բնակիչների անուններով՝ Սերժ (Սարգիս), Մայրլ (Միքայել), Ջեկոբ (Հակոբ), Իվան (Հովհաննես) և այլն:

Գիրք ստաջին, դավազ 155

- Թշնամին արգելեց նրանց գենք կրել՝ զրկեց գենքից:

- Մենք արհամարհեցինք մեր ազատության համար գենք կրողներին, զրկեցինք ու զրկանքների մեջ բողեցինք Արցախն ազատագրելու համար զոհվածների երեխաներին:

- Թշնամին նրանց հրամայեց, որ խիտոն հագնեն քիկնոցի տակից: (Ուշադրություն դարձրեք. ընդամենը մի տեսակ օտարատարազ զգեստ, այն էլ՝ տակից:)

- Մենք, մեր իսկ ջանկությանը, երազանքի առարկա դարձրած, ազգի-ազգի ու այլազգի զգեստներ ենք հագնում տակից ու վրայից, փքվում ու ցուցամոլում, թե «վերսաչի» ենք հագել, փոխանակ ամաչելու, որ այլ ձեռնարկույթի (Ֆիրմայի) հիմնադիրն ու տերը անուն հանած սողունական է: Աշխարհում անկրկնելի մեր դուստրերն էլ, օտարլին կրկնօրինակելով, գնդիկավոր կամ կոպլի «պտոզ» (վեր քաշող մկանի կաթվածահարման հետևանքով կոպր կախվում է աչքի վրա) հիվանդությունից տառապող աչք հիշեցնող պորտերը բացած փողոց են բուշում, չհասկանալով, որ պորտաբացությունը անհամատեղելի է կանացիության հետ, և չիմանալով, որ աշխարհի կանանց 1000-ից մեկն է գեղեցիկ պորտ ունենում, ուստի և հարկ չկա ոչ գեղեցիկ բանը գեղեցիկի տեղ հրամցնելու: Իսկ ով ուզում է իմանալ, թե ո՞րն է գեղեցիկ պորտը, կամ ո՞ր պորտն է գեղեցիկ, թող կարդա Աստվածաշնչում գետեղված «Երգ երգոցը» Սուրունն քազավորի, որը 1000 գեղանի կին ու հարճ (700 կին և 300 հարճ) ուներ և, աշխարհի ամենագեղեցիկ կանանց ունենալով ու աշխարհի ամենափմաստուն մարդը լինելով, շատ լավ էր հասկանում պորտի ու մյուս մարմնամասերի գեղեցկությունից և հիանալի գիտել, թե որ կինն է առավել հիանալի ու արժեքավոր՝ իր ծածուկ գեղեցկությունները մեկի՝ կամար պահո՞ղր, թե՞ ամենքին՝ ցույց տվողը:

Հիմա էլ սկսել են պորտից ներքև տկլորվել՝ չիմանալով, որ իջնում են զեպի էքսիբացիոնիզմ (սեռական բավարարություն ստանալու նպատակով սեռական գործարանը հրապարակավ ցուցադրելը), ինչը այլաբերվածության տեսակ է, այսինքն՝ հոգեկան հիվանդություն: Այս խոսքերի համար ներողություն չեմ խնդրում և չեմ խնդրելու, եթե հետո էլ այսպես խասեմ, ու պիտի չասեմ. «Ինձ ճիշտ հասկացեք»: Չպիտի խնդրեմ ու

ասեմ, որովհետև շատ հասկանալի են ասում և սուտ չեն խոսում:

- Թշնամին նրանց հրամայեց, որ հազնեն ճտքավոր կոշիկներ [այսինքն՝ օտար տարազի մի՛ տեսակ կոշիկ]:

- Մենք մեր արժեքավորությունը ցույց տալու համար հազնում ենք էլ «պալեյոմո» ու «վալենտինո», էլ «վիչինի» ու «ֆաբլո», էլ «կազաչոկ» ու «կամեյոտ» էլ, էլ, էլ, վերջն էլ երկարաճիտքի դիմաց երկարասրածայր մի ոտնամասն ենք ոտներիս քաշել, անունն էլ մեր շատ սիրած «ծիծակը» դրել, առանց իմանալու, որ սրա կերտման պատճառը ոչ թե գեղեցկությունն է եղել, այլ՝ ... այլանդակությունը, ուստի և չի կարող անհեթեթ չլինել: Մասնավորապես կնոջ ոտքը գեղեցիկ է, ելք փոքր է: Եվ փոքր ոտքը ազնվական ծագման նշան է: Եվ գեղեցիկ է այն կոշիկը, որը փոքր ու նրբակերտ է: Իսկ հիշյալ «ծիծակը» կնոջ ոտքը դարձնում է ոչ միայն ծիծաղելի, այլև ահուկի: Գոնե Մոխրոտիկի հեքիաթը հիշենք: Թագավորի տղան ուզում էր ամուսնանալ միայն ու միայն իր ձեռքն ընկած փոքր ոտնամանի մեջ տեղավորվող ոտքի տիրուհու հետ: Իսկ Մոխրոտի խորթ քույրն էլ այնքան էր ուզում թագավորի տղայի կնիկ դառնալ, որ իր ոտքի մեծ պճեղը (բութ մատը) կտրեց, որպեսզի տեղավորվի փոքրիկ կոշիկի մեջ: Աշխարհի ամենամեծ պետության կայսրուհի Եկատերինա Մեծը, որ աշխարհի ամենամեծ կոշիկները կարող էր պատվիրել, 33 համարից էլ փոքր կոշիկներ էր հազնում և շատ էր հպարտանում իր պատվիկ տոտիկներով:

Քանի որ թագավորի տղաների ու թագուհիների սիրած փոքր ոտնամաններից խոսեցինք, վերը հիշատակած անգլիական «կամեյոտը» յոթ մղոնանոց քայլերով ինձ աչքս չճալած Անգլիա բոցրեց: Ծիծակակոշիկ աղաներիս ու մոդնիցա խանումներիս պիտի պատմեն, թե ինչ այլանդակության ծնունդ է իրենց սիրած բիչլոնր (մոդան):

Սրանից 800 տարի առաջ Անգլիայում մի թագավոր է եղել՝ անունը՝ Հենրիխ II Պլանտագենետ: Էս թագավորի աջ ոտքի բութ մատին (Մոխրոտի բրոջ մեծ պճեղը լավ պահեք միտներդ) մի անճոռնի խուլ՝ պալար է դուրս գալիս: Թագավորի հեքիմները ինչ անում-չեն անում, չեն կարողանում այլանդակված ոտքի ձևը փոխեն: Թագավորն էլ, ճարը կտրած, իր համար մի գույգ երկար, վեր ոլորած, սուր թաթելով ոտնամասն է պատվիրում, որ կարողանա կոշիկ հազնի, պալատականներին երևա, դեսպան ընդունի: Բոլորը մնում են հայիլ-մայիլ եղած: Արդեն հաջորդ օրը կոշկագործները մինչև վզները թաղված էին երկարաքթալործուն մաշիկների պատվերների մեջ:

Հիմա կլմանաք, թե ինչու են շարադրում այս պատմությունը: Հենրիխ II-ի ոտքի ցավը տանող պատվիրատուներից յուրաքանչյուրը ձգտում էր իր երկարաքթությամբ գերազանցել նախորդներին: Թագավորը ստիպված է լինում օրենսդրական, այո՛, օրենսդրական, կարգով

ասհմանափակել ոտնամանների քթերի երկարությունը: Հասարակ քաղաքացիների կոշկաքթի երկարությունը չպետք է գերազանցեր կես ֆուտը (1 ֆուտը = 30,5սմ), ասպետներինն ու բայրոններինը՝ 1 ֆուտը, կոմսերինը՝ 2 ֆուտը: Պատկերացրի՞ք: Այստեղից է ծագել ՋՌՑՖ վՈՔՌԲՏՍԳ՝ վՏչց (ճոխ ապրել) արտահայտությունը: Այնպես որ, մեր ամենաճոխ ապրող նոր հայերն ու իրենց վերին արտի ցարեն կամ, իրենց սիրած բառով ասած, էլիսա (սերմացու) կարծողները չափազանց հետ ու շատ «պզտիկ» են մնում հին Անգլիայի հասարակ քաղաքացիներից: Հիմա կասեն. «Հո տրեխ չէինք հագնելու»: Ես էլ կասեմ՝ «Մեծ հրճվանքով կհագնեինք, եթե միայն դրա մոդան օտարը գցել: Եվ տրեխաձև գլխարկ էլ կդնեինք, եթե օտարը պատվիրեր»: Ուստի երկարացրեք ձեր կոշկաքթերը, ո՛վ հայուստ փոքրամասնություն, քանզի 800 տարով հետ և 100 միլիմետրով պատիկ եք մնացել հասարակ մարդկանցից և 800 տարի 650 միլիմետրով՝ հատուկ մարդկանցից: Իսկ մենք 12-րդ դարի Անգլիայից 18 դարով հետ գնանք դեպի Լյուդիա:

Բայց մինչ այդ օտարաձևության սիրահարին հիշեցնեմ, որ մոդան նրանց համար է, ովքեր շնորհքով հագնվել չգիտեն: Ուստի օտարատարազ հագուստ են վրանելը քաշում, որ ճաշակ չունենալը ծածկեն: Իսկ դու մի՛ ճգնիր ուրիշին, անգամ սիրածդ արտիստին նմանակել: Պահպանիր անհատական կերպարդ՝ յուրօրինակությունդ: Այդպես ավելի հետաքրքիր ու սիրուն կլինես:

- Թշնամին նրանց հրամայեց, որ իրենց երեխաներին սովորեցնեն կիթառ նվագել ու երգել:

Բայց մի՞թե նվագելն ու երգելը վատ բաներ են, որ պարտադրվեն: Չէ՞ որ չի կարող լինել երգ ու նվագ չսիրող մարդ, երգ ու նվագ չունեցող ազգ: Ի՞նչն էր թշնամու նպատակը: Օտար երգարվեստ ներարկելը, և ապա՝ ազգի գալիք ողջ սերնդին նվագողների ու երգողներին վերածելով՝ մեռցնել նրա ազատատենչ ու առնական ոգին: Կիթառը (kithara) հունական, այսինքն՝ օտարազգի նվագարան էր, ինչպես որ խիտոնն ու երկարաճիտք կոշիկներն էին օտար տարազի: Օտար նվագարանի միջոցով օտար երգ և խորթ շունչ կսողոսկեր ազգի հոգու մեջ: (Ի դեպ, Կոմիտասը գայլշում էր մեզանում հարազատ կարծվող զուտնայից՝ այն համարելով թաթար-մոնղոլների տիրապետության շրջանում մուծված գործիք, որը աղճատում է հայ երաժշտությունը:) Եվ մանկուց օտար երգունվազ լսող Լյուդիացիներին օտարը կդառնար հարազատ, իսկ հարաբար, հայրենին՝ խորթ և «հաճույք չտվող»: Այսինքն՝ լինելու էր այն, ինչ է Հայաստանում:

30 - 40 տարի առաջ մեզանում կոմկոսի Կենտկոմի հրամանով հարածվող «ռաբխը» (միլիցիոներները ուաբխ երգ հնչեցնող նվագարկիչները մեքենաների միջից խլում էին կամ ջարդում) անգնահատելի, անհ-

նար թվացող մի գործ կատարեց. «անջատեց» Բաքվից տրվող համերգը՝ «Բաքուն համերգ է տալիս»-ը: Իսկ այսօր անկախ Հայաստանի վրա է բացվել ամբողջ աշխարհի կոյուղին, որը բոլոր ծորակներից աղբաջուր է հոսեցնում երեխաների հոգիների մեջ: Եվ այդ կոյուղագիծը բացել է ոչ թե երկիրը գրաված թշնամին, այլ հաղթած Հայաստանի քաղաքացի ծնողը: Հայ երգ ու նվագի տեղը (իսկի կողքին էլ չէ) ամենուրեք օտարազգի ու թրքացեղ նվագահարություն է արտարձակվում: Այս երգուպարերն էլ այնպիսի խենեշ ու անատակաբարո շարժումներով են ուղեկցվում. որ ասես թե երաժշտության հետ շնանում են: Չէ՛, ի՞նչ շնանալ, - ինչպես Արա Վահունու «Վախենալու հեքիաթի» դառնացյալ Դեն է իր շնացյալ կանանց մասին ասում, - շնագայլանում են:

Երգում են՝ երգեն, բայց ի՞նչ գործ ունի այստեղ հետույքը կամ մարմնի մյուս անարգ մասը: Ի՞նչ նպատակով են երգելիս դրանք շոյում ու ցուցահանում: Ո՞ր շունը կամ շնագայլը այդ օրգանները չունի: Երգելիս այնպիսի կքանստումներ են կատարում, կարծես զուգարանակոնքին նստելիս լինեն: Եվ հարգարժան հանդիսատեսն էլ զմայլվում ու հիանում է, փոխանակ զգվելու և վիրավորվելու:

Հաշվեք՝ կտեսնեք, որ հայ ծնողը ավելի շատ օտարազգի երգի-պարի է տալիս երեխաներին, քան մերազգի + այդ երեխաներին բոլորովին էլ ոչ երեխայական պարեր ուսուցանելը + կնոջական գուլպաներով ու զգեստավորումով ցուցադրելը: Ասես հարեմների թեկնածուներ պատրաստելիս լինեն:

Ո՞ր ազգն է հայ ազգի երգերն ու պարերը իր երեխաներին սովորեցնում: Եթե ազգասիրություն չունենք, գոնե ինքնասիրություն ունենանք:

Չույում դարձած ՁԼՄ-ներով (զանգվածային լրատվամիջոցներ) ամբողջ ժամանակ երգիչներից ու կինոդերասաններից են խոսում, դրանց անբարո և միանգամայն ունայն կյանքի մանրամասները համտեսում և հրանցնում, թե՛ որերորդ մարտը կամ կնիկն են առել ու թողել, ինչ շոր են հագնում, ինչ են ուտում, ինչ են... Կարծես թե աշխարհի պորտը սրանք են, և սրանց արածն է ամենակարևոր գործը: Այս պատճառով էլ ում հարցնես, ուզում է բեմ ցատկել՝ դառնալ մոդել, երգիչ, հաղորդավար և այլն, այսինքն՝ ցուցադրվել, որ իրենով հիանան: Պատկերացրեք մի ազգ, որի բոլոր անդամները երգեն ու կաքավեն, լինեն բեմում, բայց ոչ դաշտում, բանակում, գրասենյանի առաջ: Ի՞նչ կլինի ազգն առանց բանաստեղծի, գիտնականի, հոգևորականի ու զինվորականի: Հայ ամենամեծ զիտնականը՝ Մեսրոպ Մաշտոցը, եղել է զինվորական, հոգևորական, ուսուցիչ, դիվանագետ, թարգմանիչ:

Արդ՝ մենք մեկ ազգի երգուպարին գունարեցիկնք այլևայլ ազգերի երգուպարեր սովորեցնելը + դրանք մեր հեռահաղորդակցության միջոցներով տարածելն ու քարոզելը + մեր զավակների կատարմամբ

դրանք **ցուցադրելը** + մեր շինած ռեստորաններում ու զվարճավայրերում մեր երեխաներին օտար երգուպարերով որպես վարձակներ ներկայացնելը այլազգի զբոսաշրջիկներին + մեր երգուպարը քամահրելը:

(Եթե մեկը կարդացածից օտարատյացության /քսենոֆոբիայի/ հոտ առնի, ուրեմն հոտառությունը խաթարվել է օտարոտի հոտեր չափից ավելի շնչելուց, իսկ ինքը ոչ թե օտարասեր է, այլ օտարամոլ ու օտարապաշտ, ինչը նվաստացուցիչ է հենց իր համար և վկայում է թերուսության ու վատ դաստիարակություն ստացած լինելու մասին:)

- **Թշնամին հրամայեց, որ երեխաներին սովորեցնեն փերեզակություն անել:**

Փերեզակությունը մանրավաճառությունն է, չարչիությունը: Մարդս մանր-մունր բաների վաճառքով զբաղվելով, բայց ոչ արտադրելով ու ստեղծագործելով, հետզհետե փոխակերպվում է չարչու՝ մանր-մունր բաների հետևից ընկնող, գծուծ, ազահ, խարդախ, դրամաշուրթ չնչին մարդուկի: Իսկ մենք մեր երեխաներին սովորեցրինք ոչ թե սոսկ փերեզակություն անել, այլ չարչիացրինք հիմնավորապես: Քանզի հիմնովին քանդեցինք գործարաններն ու արհեստագործական ուսումնարանները, որպեսզի եթե ուզենանք էլ արհեստ սովորել, մի տեղ աշխատել ու բան շինել՝ չը-կա-րո-ղա-նանք:

Մենք ոչ միայն երեխաներին սովորեցրինք փերեզակություն անել, այլև ինքներս փերեզակացանք՝ «Հայաստան, երկիր դրախտավայրը» դարձնելով փերեզակավայր: Բովանդակ երկիրը պատվեց առևտրակետերով՝ սեղանիկներ + կրպակներ + վերնիսածներ (գլխավոր պողոտայինը) + քրջանոցներ + տոնավաճառներ (դարձյալ անհեթեթ անուն. ամենօրյա տոնավաճառ՞) + վաճառանոցներ, բոլորը՝ օտար ու ճղճղան անուններով: Անխտի՛ր:

Ամեն ինչ՝ ազգային բովանդակ սեփականությունը, հողի վրայի ու հողի տակի ամբողջ հարստությունը դարձավ վաճառքի առարկա: Անզամ հայ երեխաների ու աղջիկների մարմինները: Շատ ցավոտ լինելու պատճառով վիրադանակը չէի մոտեցնում, բայց այս հիվանդությունը հայի համար ամենատուժալիս է, քանզի մի ցավ է, որով բնավ չէր հիվանդացել, մի ժանտախտ է, որով երբեք չէր վարակվել:

- «Լյուդիացիները պռոնկացնում են իրենց դուստրերին» /Գիրք I, 94/: «Լյուդիացիների բոլոր աղջիկները պռոնկանում են՝ իրենց համար օժիտ հավաքելով, մինչև ամուսնանալը. իսկ ամուսին իրենք են ընտրում իրենց համար» (93):

- Մենք՝ ևս + 8-10 (ութից տասը) տարեկան երեխաներին Էմիրություններ և Դուբայ ուղարկելը՝ պռոնկացնելու (սղծելու) համար:

Լյուդուհիները պռոնկանում էին օժիտ հավաքելու համար, հայուհիները վարձով են տրվում պռոնագործարարներին հարստացնելու

համար:

Լյուդուիհները ամուսին էին ընտրում իրենց համար, հայուհիներն իրենց ամուսինն ու ընտանիքը թողած՝ օտարի ընտանիքի դռանը աղախին են դառնում և ամենահետին աշխատանքն անում՝ բարգավաճեցնելով ու շենացնելով ուրիշի ընտանիքը և քայքայելով ու քանդելով իրենցը:

Լյուդուիհները պոռնկանում էին իրենց հայրենիքում. հայուհիները՝ ևս + արտասահմանյան երկրներում + թշնամու որջերում: Գյումրեցիք այս «առթիվ» մի դառը բաժակաճառ են հանել. «Խմենք էն տղամարդու կենացը, ումն կնիկն օր Թուրքիա չի էրթա-գա»:

Եվ հեչ չզարմանանք, եթե Հայաստանում արմենոիդ՝ կարճագլուխ (բրախիկեֆալ) երեխաների կողքին հայտնվեն երկարազանգ (դալիխուկեֆալ)՝ սեխագլուխ (եմիշաքյալլա) լամուկներ:

Ես բարոյախոսություն չեմ կարդում: Ուղղակի նայում եմ 2500 տարեկան հայելակտորին և նրա տազնապահարույց ցուրը համեմատում եմ մեր համաճարակ հրդեհի հետ: Թող մեկը մատը դնի գունե մի կետի վրա, ուր սուտ լինի:

Փրկիչ Աստծու կենարար հավատն աշխարհում առաջինն ընդունած, այդ հավատը պահպանելու համար աշխարհում առաջինը կոիվ տված և Ավարայրի դաշտում միանգամից, մի ցերեկվա մեջ 1036 վկա՝ հանուն հավատի նահատակ ունեցած, քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակը աշխարհում առաջինը տոնած ժողովուրդը կոապաշտներից անցել է ամեն ինչով՝ լյուդիացիներին պարտադրված մի օտար ներքնազգեստի և մի գույգ կոշկի դիմաց օտար բարբերի ու մոլար վարդապետությունների բազմատարազ պատմունճանները զգենալով...

Բայց այս ամենը միայն Հայաստանի վերքը չէ: Բոլոր ազգերն են վերոհիշյալ խոցերից տառապում: Սատանայի ու 300-ի կոմիտեի բռնավոր ցանցը ամենքի վրա է գցված:

Մի հայելակտոր էլ վերցնենք Հերոդոտոսի գրքից. «Աթենացիներն այդ ժամին առհասարակ նախաճաշում էին, և նախաճաշից հետո նրանցից ոմանք գառ էին խաղում, իսկ մյուսները քնում: Այնժամ Պիսիստրատոսի [VI դարի հույն գործիչ] գորքը հարձակվեց աթենացիների վրա [այսինքն՝ հույները հարձակվեցին հույների վրա] և նրանց փախուստի մատնեց... Նա իր իշխանությունն ամրապնդեց մեծաթիվ վարձկաններով և դրան հավաքելով... Այսպիսով Պիսիստրատոսը դարձավ Աթենքի տիրանը. իսկ աթենացիները, որոնք նրա թշնամիներն էին, մասամբ սպանվեցին մարտում, մասամբ հեռացան հայրենի քաղաքից» (Գլխք I, 63-64):

Գուցե հարցնես. «Իսկ ի՞նչ առնչություն կա անցյալ ժողովրդի պատմության և այսօրվա հայերի ու Հայաստանի և 300-ի կոմիտեի

միջև: Ի՞նչն է նրանց կապում»: Պատասխանն է. «Փաստերի նմանությունը, դեպքերի տրամաբանությունը և չարքի ձեռագիրը»: Կոմիտեն այն ժամանակ չկար, բայց կար հիմա նրան իշխանություն տված հին օձը՝ սատանան, ով մարդուն դրախտում հետապնդել է անձամբ և ապա՝ զանազան անձանց, անմիտ թագավորների, բռնակալների ու զավթիչների միջոցով: Իսկ Կոմիտեն նրա շինածուն ու դրածուն է: Ելք գիրքը կարդաս, կտեսնես, որ Հայաստանի, այլև ԽՍՀՄ-ը կազմած բոլոր հանրապետությունների «զարգացումները» կատարվել են 300-ի կոմիտեի ծրագրին կետ առ կետ համապատասխան: Աջ կամ ձախ ոչ մի քայլ չի արվել, որովհետև կհնչեր կրակոցը:

Եթե ժողովուրդը, մանավանդ խելացի և աշխատասեր ժողովուրդը վատ է ապրում, ուրեմն պետերն անպիտան են: Եվ փուչ ու անպտուղ է այն ասույթը, թե ամեն ժողովուրդ արժե իր դեկավարին: Այս նշանակում է մեղքը գցել ժողովրդի վրա՝ փոխանակ մեղադրելու անպետքին: Իսկ Կոմիտեին հենց այդպիսի պետեր են պետք:

Աշխատության ամենամեծ արժանիքն այն է, որ հեղինակը Կոմիտեի գոյությունն ու ծրագիրը բացահայտելուց հետո նշում է նրա հասցեն. տալիս է նրա անդամների, հիմնարկների, կազմակերպությունների ու բանկերի ցուցակները: (Սրանցից մեկի ցուցանակները տնկուոված են Երևանում. դա IISBC-ն՝ Հոնկոնգի և Շանհայի բանկային կորպորացիան է, որը Քոլեմանը համարում է թմրափողի ամենամեծ լվացքատունը:) Սրանք աշխարհում ամենահարուստն են, հետևաբար ամբողջ փողը Կոմիտեի ձեռքում է:

ԱՄՆ-ի նախագահ Լինկոլնը (քաղաքացիական պատերազմում ջախջախել է ստրկատերերի բանակը և վերացրել ստրկությունը. սպանվել է քատրոնում՝ բազմության աչքի առաջ) իր ժողովուրդին զգուշացնում էր. «Փողը կուտակվելու է մի քանի հոգու մոտ, և հանրապետությունը քանդվելու է»: 150 տարի հետո հանրաճանաչ Բերեգովսկին (մեծահարուստ, ԱՊՀ-ի նախկին քարտուղար ու խմբիշխան՝ օլիգարխ) հայտարարել է. «Եթե ուզենք, հանրապետության նախագահ կրնորեն կապիկի»: Այսինքն՝ Լինկոլնի կանխագուշակությունը կատարվել է:

Իրական հանրապետություններ այլևս գոյություն չունեն: Ամեն պետություն պատկանում է մի խումբ մարդկանց, որոնք կողոպտում են երկիրը: Նրանք 300-ի կոմիտեի անդամներ, սրանց ծառաներ կամ ծառաների ծառաներ են:.

Նկատել էս, որ հիմա գոյություն չունեն նաև ականավոր անձեր, որոնց պատվեն և ունկն դնեն ժողովուրդները: (Եթե լինեին էլ, ոչ ոք չէր լսի. մամոռայի ձայնն է միայն շառաչում:) Մեծեր չկան ոչ մի ասպարեզում. ո՛չ գիտության, ո՛չ արվեստի, ո՛չ էլ քաղաքականության: Բոլոր դարերում եղել են, նոր դարում չկան: Չկա ոչ մի հեղինակություն... որովհետև Կոմի-

տեն շինում է մեկ ամբիւն, որտեղից միայն Նեոյ պիտի բարբառի:

...ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՈՂՋ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ Է, ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԸՆԴՀԱՏՎԱԾ ԸՂԹԱ՝ սկսած առաջին մարդու որդի Կայենից:

Համաշխարհային կառավարության հաստատմամբ և Նեոյի գահակալությամբ մղձավանջը կհասնի գագաթնակետին: Բայց այս կռիվի ընդամենը քառասուններկու ամիս (Հայտնություն, 13.5): Խորհրդային (և ոչ միայն խորհրդային) բանտերում՝ այդ գրեթե անդրշիրիմյան աշխարհում, մարդիկ ապրել են անհամեմատ երկար՝ 10, 15, 25 տարի: Ոմանք տոկացել ու պահպանել են Աստծո տված կերպարը, ոմանք էլ չեն դիմացել ու կորցրել են: Նրանք կցնծային, եթե իմանային, որ պատժաժամկետը երեք ու կես տարի է, և կդիմանային ու չէին մոռանա իրենց նախնական պատկերը:

Աստվածաշունչը խոստում ունի. ովքեր այսօր ու Նեոյի օրոք տոկան փորձություններից, չընկրկեն և չուրանան Քրիստոսին, անմահ կյանք կվաստակեն: Քրիստոսը պիտի սատկեցնի Նեոին՝ Հայտնության զագանին և ազատի հավատարիմներին աստանայի բանտից:

Իսկ ի՞նչ պետք է անենք հիմա՝ մինչ Նեոյի գահակալությունը: Վախից և հուսահատությունից պիտի թևաթափ լինենք, նստենք ու սպասե՞նք: Հենց այսպես էլ մտածում էին, երբ ձեռքիդ գրքից մի հատված էր տպագրվել «Գոյոս Արմենիի» թերթում՝ «300-ի կոմիտեն. Աներևույթ կառավարության գաղանխքները» վերնագրով: Գալիքից սարսափած և հուսահատության մեջ ընկած ընթերցողներն ասում էին. «Էլ ինչո՞ւ ենք ամուսնանում, երեխաներ ունենում, ուսման տալիս, ապագայի ծրագրեր կազմում...»: (Իբր թե ներկան շատ է հուսատու և խոստումնալից: Սա 300-ի կոմիտեի քստմնելի, ճիվաղածին սերմերն իր ընդերքում անեցնող իրականությունն է, որը կցնկնի տերերի ու ծառաների, սպասարկվողների ու սպասարկողների՝ պատմությանն անձանոթ մի դժոխային հասարակարգ, որի կողքին ֆաշիստական ու սուալիմյան բռնակարգերը մանկապարտեզ կերևան:)

Գրքի վերջին էջը ամերիկացի իր հայրենակիցներին նեղինակի հղա՞ծ դիմումն է, որով Կոմիտեին դիմադրելու կոչ է անում: Այն ինքդ կկարդաս: Իսկ մենք միասին խորհենք, թե ինքներս ինչ կարող ենք անել:

Աշխատության գործնական ՕԳՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՆ Է, ՈՐ՝ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՅՆՈՒՄԷ՝ վերահաս՝ գալիք վտանգի մասին, այդպիսով կանխելով դրա հանկարծահատությունը՝ անսպասելիէ՞րթեմը: Համաշխարհային կառավարությունը վերահաս է, բայց ոչ հունի՞ւթ՝ ծախսու: Սա տարերային աղետ չէ, որին պատրաստ: չենք և չենք կախող լլնակայել: Ֆորս մաժոր՝ այնպիսի պարագա չէ, որը չի կարող կանխատեսվել, կանխվել կամ վերացվել. անհաղթահարելի խաչընդոտ չէ: Մարդուս խոցե-

լի, անկարող, անպաշտպան է դարձնում անսպասելիությունը, անպատրաստ լինելը: Իսկ մենք վտանգի մասին գիտենք, ուստի և կարող ենք դիմակայել: Մտածելու ժամանակ ունենք և կարող ենք անելիքներս որոշել:

Եղել են երկրների ղեկավարներ, որոնք կարողացել են 300-ի կոմիտեին ասել՝ ո՛չ: Չեն վախեցել: Բոլորը չէ, որ խլիպիկներ ու ծառաներ են: Ազգերը առավել ևս չեն: Ինչպե՞ս եղավ, որ ազերաթրքերի բոնկեցրած պատերազմում հաղթեցինք հայերս, ելք ամեն ինչ մեր դեմ էր: Մեզ վրա էին հարձակվել բոլշևիկների թրքասեր հակումը ժառանգած խորհրդային աշխարհաստան կայսրության բանակը, ներքին գուրքերը, մոսկովյան ստախոս զանգվածային բոլոր լրատվամիջոցները, Հայրենիքի կեսից ավելին ավելած երկրաշարժը, աղքատությունը, քաղցը, գենքի ու զինամթերքի սոսկալի սակավությունը, թշնամու գերազանց զինավառությունը, սրանկերը, զրահամեքենաները, անսպառ զինապաշարները, կենդանի ուժի հսկայական գերակշռությունը, ազերաթրքական բանակին միացած կովի երկարամյա վիթխարի փորձ ունեցող աֆղանական մոջահեդները (որոնք գրուհի ժամանակ նոնականետերով ընթանում էին առաջին շարքում), չեչենները և այլ վարձկաններ:

Բոլոր փորձագետները կանխատեսում էին Հայաստանի անխուսափելի պարտությունը: Բայց հաղթեց Հայը, որովհետև չէր կարող պարտվել: Իրավունք չուներ: Չուներ այլընտրանք: Հաղթեց, որովհետև միակամ էր, ուներ մեկ նպատակ, միասնական մտածողություն և չվախեցավ թշնամու զորությունից:

Այի նորից ականջ դնենք *Հեյույոտոսին*. «Եթե թրակիական ազգն ունենար մեկ տիրակալ և լիներ միաբան, ապա կդառնար անպարտելի և հզորագույնը բոլոր ազգերի մեջ: Բայց քանի որ նրանք երբևք միաբան չեն եղել, ուստի մնացել են թույլ» (V գլխք, 3):

Յոթերորդ գլքում մի իմաստնագույն պատասխան կա, որն ասես հենց մեզ համար է տրված: Հելլադայի վրա արշավող Քսերքսեսը սպարտացիների նախկին թագավոր Դեմարատոսին հարցնում է, թե հելլենները կհամարձակվե՞ն արդյոք գենք բարձրացնել իր անհամար զորքի (1.700.000-անոց) դեմ: Դեմարատոսը պատասխանում է, որ բոլոր հելլենների մասին չի կարող ասել, այլ միայն սպարտացիների, որոնք Քսերքսեսի դեմ կկռվեն, եթե նույնիսկ 1000 մարդ հավաքվի: Քսերքսեսի ծիծաղին ի պատասխան՝ նախկին թագավորն ասում է. «Մեկ մարդու դեմ մենամարտելիս նրանք (սպարտացիները) բոլորովին էլ վատ չեն մյուս ժողովուրդներից. իսկ բոլորը միասին մարտի մեջ ամենաարիներն են բոլորից: Նրանք թեև ազատ են, բայց ոչ ամեն ինչում: ՆՐԱՆՅ ՏԵՐԸ ՕՐԵՆՔՆ Է, որից նրանք առավել երկյուղում են, քան բո ժողովուրդը քեզանից: Նրանք կատարում են այն, ինչ օրենքը հրա-

մայրւմ է. իսկ օրենքի հրամանը միշտ մեկն է. այն արգելում է մարտում փախչել թշնամու որևէ բազմութեան առաջ, այն պատվիրում է մնալ շարքում և հաղթել կամ սպանվել» (104):

550 տարի հետո Հիսուսն աշակերտներին պատվիրել է միայն մի բանից վախենալ: 7 անգամ ասել է՝ մի՛ վախեցիր, մի՛ վախեցեք, միայն 1 կանգամանքի վերաբերմամբ է ասել՝ վախեցեք. «Մի՛ վախեցեք նրանցից, որ մարմինն են սպանում, բայց հոգին սպանել չեն կարող. դուք առավել վախեցեք նրանից, ով կարող է գեհենի մեջ կորստյան մատնել հոգին ու մարմինը» (Մատթեոս, 10.26-28, Դուկաս, 12.4-7):

Ասված է նաև. «Մի՛ ակնածիր հզորից, մինչև մահ պայքարի՛ր հանուն ճշմարտության, և Տեր Աստված կպայքարի քեզ հետ» (Աստվածաշունչ, Սիրաքի իմաստութիւնը, 4.33): «Աստժո տկարն ավելի զորեղ է, քան մարդկային զորությունը» (Ա Կորնթացիներին, 1.25): Ասված են բոլոր ժամանակների համար և վերաբերում են ամեն մարդու:

Տերը Հայաստանի վերաբերյալ առանձին խոստում ունի, որը տեսիլքով տվել է հայոց կաթողիկոս սուրբ Սահակ Պարթևին, երբ նա դեռ սարկավազ էր. «...Հաստատ իմացիր, որ անապատի պիղծի [սատանայի] երևալու մոտ դարձյալ պետք է թագավոր եյնի Արշակունյաց տոհմից, և պիտի նորոգվի հայրապետության աթոռը սուրբ Գրիգորի շատավրի կամից» (Դազար Փարպեցի, Հայոց պատմություն, էջ 79):

Արդ՝ չվախենանք ու հավատարիւմ մնանք Տիրոջը, որպեսզի իմաստուն ղեկավարի գլխավորությամբ լինի իրոք անկախ Հայաստան՝ իր լիիրավ, միաբան, բարեկեցիկ ու ազատ քաղաքացիներով, և ապա բացվեն նոր երկիւնքն ու նոր երկիրը (Հայտնություն, 21.1):

Ամեն:

Վարազդատ Ավագյան

300-Ի ԿՈՍԻՏԵՆ

Պատկերացրեք ազգային ոչ մի սահման չճանաչող և բանկային գործը, ապահովագրությունը, ածխահանությունը, դեղորայքի առևտուրը, նավթարդյունաբերությունն ընդգրկող մի ՀՉՈՐԱԳՈՒՅՆ ԽՈՒՄԲ, որի անդամները պատասխանատվություն են կրում բացառապես միայն այդ խմբի անդամների առաջ: Գ-ա 300-ի կոմիտեն է:

ԳԱՎԱԴԻՐՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ (հիերարխիան). 300-Ի ԿՈՍԻՏԵԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ԱՌԱՋԱԲԱՆ

Հետախուզության սպայի պաշտոնավարության ժամանակ բազմիցս թույլտվություն են ստացել օգտվելու խիստ գաղտնի փաստաթղթերից: Իսկ Անգոլայում որպես քաղաքաբան սպա ծառայելիս հնարավորություն են ունեցել ուսումնասիրելու մի շարք հույժ գաղտնի փաստաթղթեր, որոնց բովանդակությունը արտասովոր բացույտ էր: Տեսածս ինձ համակեց զայրայթով ու վրդովմունքով, և ես ոտք դրի մի ուլի, որից այլևս չթեքվեցի. իմ նպատակը դարձավ ամենքին ցույց սալ, թե ինչ ուժ է վերահսկում և ղեկավարում Մեծ Բրիտանիայի և Միացյալ Նահանգների կառավարությունները:

Քաջածանոթ էի հայտնի բոլոր գաղտնի ընկերություններին, ինչպիսիք են Միջազգային գործերի թագավորական ինստիտուտը (ՄԳԻԻ), «Միջազգային հարաբերությունների խորհուրդը», «Բիլդերբերգերյան ակումբը», «Եռակողմ հանձնաժողովը», սիոնիստները, ֆրանկմատնությունը, բոլշևիզմ-ռոզենկրեյցերիզմը, ինչպես նաև այդ թաքուն ընկերությունների բոլոր ճյուղավարումներին: Լինելով հետախուզական ծառայության սպա, և անգամ դրանից առաջ՝ ռուսաճական ջախելության շրջանում, ելք պարապում էի Լոնդոնի Բրիտանական թանգարանի գրադարանում, ծայրեծայր ուսումնասիրել էի ամբողջ մատչելի սեղեկանյութը այդ ընկերությունների, այլև ուրիշ շատ կազմակերպությունների մասին, որոնք, ըստ իս, պետք է հայտնի լինեին ամերիկացիներին:

Բայց երբ 1969 թ. Միացյալ Նահանգներ կա, պարզվեց, որ այնպիսի անվանումներ, ինչպիսիք են «Սբ. Հովհաննես Երուսաղեմացու ուխտը», «Հռոմեական ակումբը», «Մարշալի գերմանական հիմնադրամը», «Չինիի հիմնադրամը», «Կորս սեղանը», «Ֆարիտսական ընկերությունը», «Վենետիկի Սև ազնվականությունը», «Մոնտ Փելերին» ընկերությունը, «Բժոխքի կլասիկ ակումբը» և ուրիշ շատեր միանգամայն անհայտ էին այստեղ կամ,

լավագույն դեպքում, դրանց իսկական գործառույթները լավ չէին հասկացվում կամ ընդհանրապես չէին հասկացվում:

1969 - 70 թթ. ուրշեցի շտկել այդ վիճակը՝ լույս ընծայելով մի շարք մենագրություններ և ձայնագրչային գրանցումներ: Ի մեծ զարմանս ինձ՝ շուտով ի հայտ եկան բազմաթիվ անձինք, որոնք այնպիսի հաճույքով էին հիշատակում այդ անունները, կարծես դրանց մասին զիտեցել էին իրենց գրողական ողջ կյանքի ընթացքում: Ընդ որում նրանք բացարձակապես չէին ըմբռնում հարցի էությունը և չէին ցանկանում ցույց տալ վերջերս լույս աշխարհ եկած այդ տեղեկատվության աղբյուրը: Ես էլ ինձ մխլիթարում էի այն մտքով, որ նմանակումը շողոքորթության առավել անկեղծ ձևն է:

Նախկին եռանդով շարունակում էի հետաքննություններս՝ կանգնած լինելով մշտական վտանգի՝ իմ և կնոջս վրա հարձակումների, դրամական կորուստների, շարունակական ճնշման, սպառնալիքների ու գրայարտանքի առաջ: Այս ամենն ինձ վարկաբեկելու՝ հանգամանորեն մշակված և ուղղորդվող այն ծրագրի մի մասն էր, որն իրականացնում էին կառավարական գործակալներն ու լրտուները, որոնք բուն էին դրել «Քրիստոնեական աջեր» կոչեցյալ շարժման, «Հանուն անհատի կաստատման» շարժման և աջ «հայրենասիրական» խմբերի մեջ: Սույն լրտու գործակալները բանել են և շարունակում են բանել իբր թե իրենց գլխավոր թշնամուն՝ հրեականությանը, աներկյուղ և բացեիքաց դիմակայելու քողով և ջանում են դրանում համոզել մեզ: Այս լրտուները աշխատում են մի խումբ համասեռամուլների (հոմոսեքսուալիստների) ղեկավարությամբ և հսկողությամբ, որոնց շատ սիրում ու հարգում են Միացյալ Նահանգների ամբողջ տարածքում սփռված քաղաքական ու կրոնական պահպանողականները:

Ջրպարտության, ստի, ատելության, տարազեկման (դեզինֆորմացիայի) նրանց ծրագիրը, որը վերաբերում է իմ աշխատանքին, իսկ վերջերս էլ աշխատություններս ուրիշներին վերագրելուն, շարունակում է գործել նույն թափով, սակայն մինչև հիմա նրանց ցանկալի արդյունքը չի տվել:

Այսուհետ էլ պիտի կատարեմ իմ խնդիրը, մինչև որ լիովին դիմակազերծեմ բարձրագույն մակարդակով գործող գաղտնի զուգահեռ կառավարությանը, որը ղեկավարում է Մեծ Բրիտանիան և Ամերիկայի Միացյալ Նահանգները: Եվ այս գիրքը շարունակվող աշխատանքիս մի մասն է:

Դոկտոր Ջոն Բոլեման
1991 թ. նոյեմբեր

Անշուշտ շատերս գիտենք, որ մեր (ԱՄՆ-ի) կառավարությունում աշխատողները բնավ էլ այն մարդիկ չեն, որոնք ներքին կամ արտաքին քաղաքականության մեջ իրապես որոշումներ են ընդունում տնտեսական ու քաղաքական հարցերի առթիվ: Այս բանը շատերին դարձում է ճշմարտությունը փնտրել ոչ կառավարամետ մամուլում և մասնավոր տեղեկագրերի այն գրողների շրջանում, որոնք ինձ պես փնտրել են, բայց միշտ չէ, որ գտել են ԱՄՆ-ի մահացու հիվանդության արմատը: «Փնտրե՛ք և կգտնե՛ք» բանաձևը ոչ միշտ է պիտանի եղել այդ խմբին: Բայց մի բան յուր հայտնաբերվեց, այն է՝ մարդիկ ապրում են թանձր մթության մեջ՝ մեծավ մասամբ բոլորովին չանհանգստանալով, թե ուր է գնում իրենց երկիրը, և մնալով այն հաստատ համոզմանը, թե նրան երբեք ոչինչ չի պատահի: Հենց այսպիսի կենսահայացք է արմատավորվել, դաստիարակվել բնակչության մեծ մասի մեջ, և այս հայացքն ուղղակի ջուր է լցնում գաղտնի կառավարության ջրաղացին:

Հաճախ լսում ենք, որ «նրանք» արել են «այն» կամ «այս» բանը: Կարծես «նրանց» ներվում է ուղղակի ամեն ինչ, նույնիսկ՝ սպանությունը: «Նրանք» ավելացնում են հարկերը, «նրանք» մեր տուրաներին աղջիկներին ուղարկում են մեռնելու այնպիսի պատերազմներում, որոնք ոչ մի օգուտ չեն բերում մեր երկրին: Ասես «նրանք» միշտ դուրս են մեզ հասանելի սահմաններից, մեր տեսադաշտից: Եվ երբ «նրանց» դեմ վերջապես փորձում են որոշակի գործողություններ ձեռնարկել, «նրանք» ուրվականների պես չիք են դառնում՝ կորչում: Թվում է, թե ոչ ոք չի կարող ստույգ ասել «նրանց» ով լինելը: Այս վիճակը շարունակվում է արդեն մի քանի տասնամյակ: Շարադրանքի ընթացքում կորուչենք, թե ովքեր են այդ խորհրդավոր «նրանք»-ը, իսկ դրանից հետո ժողովուրդն ինքը կորոշի, թե ինչպես շտկի դրությունը:

1981 թ. ապրիլի 30-ին գրեցի «Հոռմեական ակումբի» գոյությունը բացահայտող հոդված՝ այն դիտելով որպես քայքայիչ գործունեությանը զբաղվող 300-ի կոմիտեի մարմին: ԱՄՆ-ում դա առաջին հրապարակումն էր այս երկու կազմակերպությունների մասին: Ընթերցողներին խնդրում էի թյուրիմացության մեջ չընկնել՝ կարծելով, թե հոդվածս կտրված է իրականությունից, և զուգահեռ էի անցկացնում իմ գրածի և այն նախագգուշացման միջև, որ արել էր Բավարիայի կառավարությունը, երբ ձեռքն էին ընկել «Լուսավորյալների» («Իլյումինա-

տուսների»)' գաղտնի ծրագրերը: Գրքում կանոյրադառնանք «Հոռմեական ակումբին» և ԱՄՆ-ի քաղաքականության մեջ 300-ի կոմիտեի կատարած դերին:

Այդ հոդվածում 1981 թ. արված շատ կանխագուշակումների արդեն կատարվել են. օրինակ, անուայտ քաղաքործիչ Ֆիլլիպե Գոնսալեսի՝ Իսպանիայի վարչապետի պաշտոնում նշանակվելը, Ֆրանսիայում Միտերանի՝ իշխանություն վերադառնալը, Ժիսկար դ'Էստենի և Հելմուտ Շմիդտի անկումը, շվեդ արիստոկրատ և 300-ի կոմիտեի անդամ Ուլոֆ Պալմեի² վերադարձը իշխանություն, Ռեյգանի նախագահության արդյունքների ոչնչացումը, այլև ԱՄՆ-ի արդյունաբերության այնպիսի ճյուղերի քայքայումը, ինչպիսիք են պողպատածուլությունը, ավտոմոբիլաշինությունն ու տնաշինարարությունը, որ իրականացվեց 300-ի կոմիտեի ցուցումով անցկացվող հետարդյունաբերական գրոյական աճի քաղաքականության շրջանակներում:

Պալմեի կարևոր դերն այն էր, որ «Հոռմեական ակումբը» նրան օգտագործում էր Խորհրդային Միությանը ճայտարարվեստի այնպիսի տեսակների (տեխնոլոգիաներ) մատակարարելու համար, որոնց արտահանումն արգելված էր ԱՄՆ-ի Մաքսային վարչության կողմից. նաև նրա՝ կապերի համաշխարհային ցանց ունենալն էր, որն օգտագործվում էր Իրանում պատանդների առթիվ շինված սուտ ճգնաժամի վրա հանյության ուշադրությունը կենտրոնացնելու համար այն ժամանակ, երբ Պալմեն երթևեկում էր Վաշինգտոնի ու Թեհրանի միջև՝ ջանալով խարխել ԱՄՆ-ի ինքնիշխանական (սուվերենային) միասնությունը և սուտ ճգնաժամը հանձնել 300-ի կոմիտեի հիմնադրիչներից մեկի, այն է՝ Հաագայի (Հոլանդիա) Հաշտարար դատարանի իրավասությանը:

Աստծու և մարդու դեմ այս ակնհայտ դավադրությունը, որի նպատակներից մեկն է պատերազմներից, աղետներից ու զանգվածային սպանություններից հետո հողազնդի վրա մնացած մարդկանց մեծ մասի ստրկացումը, գործում է առանձնապես թաք չկենալով: Հետախույզները մի կանոն ունեն. որևէ բան թաքցնելու լավագույն եղանակը այն դեպքն է, երևացող տեղում՝ աչքի առաջ: Օրինակ, երբ 1938 թ. Գերմանիան ուզում էր թաքուն պահել իր նոր գերկործանիչի՝ «Մետելիդուտի» մասին տեղեկույթը (ինֆորմացիան), ինքնաթիռը ցուցադրվեց Փարիզի

¹ 1776 թ. Բավարիայում հիմնված մատնական, սատանաուլաշուսկան կազմակերպության անդամներ: Նպատակը համաշխարհային նոր կարգ հաստատելն է՝ մարդկությանը մեկ իշխանության տակ դնելով: Հիմնադիրն է Ադամ Վեյսհաուպտը, որն ասում էր. «Պետք է մեր կարողացածն անենք, որ մեր անդամները բարձրագույն պաշտոնների հասնեն: Այդպիսով միայն կկարողանանք դեկավարել մարդկությանը» (Վ. Ա.):

² Պալմեն 1969-76 թթ. Շվեդիայի վարչապետն էր: Խփել են վտորցում (Վ. Ա.):

ավիացիոն ցուցահանդեսում: Այն ժամանակ, երբ գաղտնի գործակալներն ու լրտեսները հավաքում և տեղեկություններ էին փոխանցում ծանոթի փչակների և պատերի ծակերի մեջ սուրբած թւքստոցների միջոցով, նրանց որոնած տեղեկույթը ցցված էր քթների առաջ:

Բարձրագույն մակարդակով զուգահեռաբար գործող գաղտնի կառավարությունը բնավորված չէ մութ նկատներում և ստորերկրյա ծածուկ անձավներում: Նա աչքի առաջ է՝ Սպիտակ տանը, Կոնգրեսում, Դաունինգ ստրիտ 10-ում և Բոլիտանիայի Պառլամենտում: Նա սերյում է ճիվաղների մասին սոսկալի և դիտավորյալ մարդ զարգանդեցնող շարժանկարներից, որոնց մեջ հրեշք հայտնվում է ծոնոված դիմագծերով, երկար մազերով ու ավելի երկար ատամներով, մոնչալով և փայլնքի շարջբուրբը շաղ տալով: Բայց այդ նկարները սոսկ շեղում են ուշադրությունը. ԻՍԿԱԿԱՆ ՀՐԵՇՆԵՐԸ մարդամեջ են ելնում գործ անողի «կաստում-շլվարով» և Կապիտոլիումի բլուր՝ աշխատանքի են գնում լիմուզինով:

Այդ մարդիկ ԱՉՔԻ ԱՌԱՋ ԵՆ, երևացող անձինք են: Այդ մարդիկ Համաշխարհային կառավարության և Համաշխարհային նոր կարգի սպասավորներն են: Ինչպես որ մեքենա կանգնեցնող բոնաբարիչը, որն ապագա զուկին խնդրում է իրեն տեղ հասցնել, սա ևս ՀՐԵՇԻ ՏԵՍՔ ՉՈՒՆԻ, ինչպիսին է՝ իսկապես: Եթե այդպիսի տեսք ունենար, նրա աչքի տակ առած զոհը, սարսափից բղավելով, հեռու կփախչեր: Նույն բանն արդարացի է ասել նաև կառավարության բոլոր մակարդակների մասին: Նախագահ Բուշը՝ բարձրագույն մակարդակի զուգահեռ կառավարության նախանձախնդիր սպասավորի ՏԵՍՔ ՉՈՒՆԵՐ: Բայց հանկարծ մոլորված շիներ նրա վերաբերմամբ. նա նույնպիսի ՀՐԵՇ է, ինչպիսիք են սարսափազդու շարժանկարների ճիվաղները:

Մի պահ կանգ առնենք և քննության առնենք, թե նախագահ Բուշն ինչպես հրամայեց զագանաբար սպանել սպիտակ դրոշակների պարզած զինվորական մեքենաների շարասյան մեջ գտնվող 150.000 իրաքցի զինվորներին, որոնք հայրենիք էին վերադառնում «Զորքերի համաձայնեցված տարաբաժանման և մարտից նրանց դուրսբերման մասին» Ժնևի դաշնագրին համապատասխան: Պատկերացրեք իրաքցի զինվորների սարսափը, երբ նրանց, սպիտակ դրոշակները թափառարողներից, դիմահար գնդակածում էին ամերիկյան ինքնաթիռները: Ռազմաճակատի մի այլ տեղամասում 12.000 իրաքցի զինվորներն ողջ-ողջ թաղվեցին իրենց զբաղեցրած խրամատներում: ՀՐԵՇԱՎՈՐ բան չէ՞ սա՝ այս բառի բուն իմաստով: Նախագահ Բուշը այսպիսի ՀՐԵՇԱ-

¹ Նկատի ունի ԱՄՆ-ի նախկին նախագահին՝ ավագ Բուշին (Վ. Ա.):

ՎՈՐ ձևով գործելու կրամանների ուրաեղի՞ց էր ստացել: Նա դրանք ստացել էր Արտաքին գործուց թագավորական ինստիտուտից, որն էլ իր մանդատն ստացել էր 300-ի կոմիտեից, այն կազմակերպությունից, որը հայտնի է նաև «Օլիմպոսցիներ» անունով:

Ինչպես կտեսնենք, նույնիսկ «օլիմպոսցիք» չեն թաքցնում իրենց դեմքերը: Սրանք հաճախ մի ներկայացում են ցուցադրում (որը, թերևս, համեմատելի է վերը հիշատակված Փարիզի ավիացիոն ցուցահանդեսի հետ) այն ժամանակ, երբ դավադրությունների հույլի վրա խելքները թռցրած խելոքները ժամանակ են վատնում՝ դրանք փնտրելով ոչ այնտեղ, որտեղ նյութվում են, և ոչ այն ուղղությամբ, որը դրանց բույնն է տանում: Ուշադրություն դարձրե՞լ եք, թե թագուհի Եղիսաբեթ II-ն ինչպես է կատարում Անգլիայի Պառլամենտի բացման արարողությունը: Այնտեղ, ի տես բոլորի, գտնվում է 300-ի կոմիտեի ղեկավարը: Երբևիցե ականատես եղե՞լ եք ԱՄՆ-ի նախագահի երդմնակալության արարողությանը: Այնտեղ, ի տես բոլորի, գտնվում է 300-ի կոմիտեի մի ուրիշ անդամ: Ամբողջ խնդիրը լոկ մարդուս ընկալման մեջ է:

Իսկ ովքե՞ր են այդ դավադիրները, որ ծառայում են ամենագործ 300-ի կոմիտեին: Մեր կասարակության առավել իրագեկ մասը գիտակցում է, որ դավադրություն կա, և այն սքողվում է զանազան անուններով, ինչպիսիք են «Լուսավորյալները», մասոնությունը, «Կլոր սեղանը», «Միլների խամբը»: Իրագեկների համար «Միջազգային հարաբերությունների խորհուրդը» և «Եռակողմ հանձնաժողովը» զուգորդվում են այն ամենի հետ, ինչ իրենց դուր չի գալիս ներքին ու արտաքին քաղաքականության մեջ: Ոմանք նույնիսկ գիտեն, որ «Կլոր սեղանը» Վաշինգտոնում Անգլիայի դեսպանի միջոցով մեծ «ավանդ» է մուծել Միացյալ Նահանգների գործերի մեջ: Բայց խնդիրն այն է, որ աներևույթ կառավարության անդամների դավաճանական գործունեության մասին իրական տեղեկություն ստանալը շատ դժվար է:

Պիտի հիշատակեմ Աստվածաշնչի Օսեե մարգարեի աներեր պնդումը. «Իմ ժողովուրդը կրնաջնջվի իմացություն չունենալու համար» (4.6): Որոշ ընթերցողների գուցե արդեն տեղյակ են արտասահմանյան երկրներին ցույց տրվող օգնության այն խայտառակ պատմությանը, որ հրապարակել եմ: Հողվածում տվել եմ անունները մի քանի դավադիր կազմակերպությունների, սրոնց թիվը լեզեռն¹ է: Նրանց վերջնական նպատակն ԱՄՆ-ի Սահմանադրությունը վերացնելը և այս երկիրը, որ Աստված ընտրել էր իբրև ԻՐ երկիր, անաստված Համաշխարհային

¹ Արտահայտությունը վերցված է Մարկոսի Ավետարանի 5. 9-ից: Եվ պիղծ ոգին պատասխանեց Հիսուսին. «Իմ անունը Լեզեռն է, քանի որ քաղում եմք» (Վ. Ա.):

նոր կարգի մեջ մտցնելն է: Սա կղեկավարվի Համաշխարհային կառավարության կողմից, որն աշխարհը շուտ կտա շատ ավելի վատ պայմանների մեջ, քան գոյություն ունեին Խավար դարերում:

Բերենք պատմական փաստեր, օրինակ՝ Իտալիայի համայնացման (կոմունիզացիայի) և ապառքյունաբերականացման (դեխնոլոստրացման) փորձը: 300-ի կոմիտեն այսօր վաղուց ոլորել է, որ ապագայում աշխարհը պետք է լինի ավելի լավ ու սակավ, այսինքն՝ անհամեմատ սակավամարդ, քան հիմա է: Ահա որն է լավագույն աշխարհի նրանց գաղափարը: Միլիարդավոր անօգուտ հոսքակերներ՝ բնության սահմանափակ պաշարները սպառողներ, պետք է խոտանվեն և ոչնչացվեն: Եվ քանի որ արդյունաբերական առաջընթացը նպաստում է բնակչության աճին, ուստի Աստվածաշնչի Ծննդոց գրքի՝ բազմանալու և երկիրը մշակելու պատգամը պետք է այլափոխվի:

Սրա անխուսափելի հետևանքն է դառնում քրիստոնեության հիմքերի քայքայումը, արդյունաբերական ազգային պետությունների դանդաղ, բայց անշեղորեն քանդումը, հարյուր միլիոնավոր մարդկանց ոչնչացումը, որոնց 300-ի կոմիտեն դիտում է որպես «ավելորդ բնակչություն», ինչպես նաև ո՛րևէ առաջնորդի վերացումը, ով կհամարձակվի կանգնել 300-ի կոմիտեի՝ դեպի վերոնշյալ նպատակների տանող համընդհանուր ծրագրման ճանապարհին:

Կոմիտեի առաջին հարվածներից մի քանիսը հասցվեցին Իտալիային ու Պակիստանին: Իտալիայի վարչապետ Ալբո Մորոն այն առաջնորդներից մեկն էր, որը հանդես եկավ «գլոյալկան աճի» և բնակչության բվի կրճատման քաղաքականության դեմ, ինչը պատվիրված էր իր երկրին: Սրանով նա առաջացրեց «Հոռմեական ակումբի» գայրույթը, որին «Օլիմպոսցիները» հանձնարարել էին սույն քաղաքականության իրագործումը: 1982 թ. նոյեմբերի 10-ին Հոռմում սեղի ունեցած դատի ժամանակ Մորոյի մոտիկ ընկերը վկայություն է տվել, որ նախկին վարչապետին սպառնացել է Արտաքին գործոց թագավորական ինստիտուտի գործակալը, որը նաև 300-ի կոմիտեի անդամ է՝ միաժամանակ լինելով ԱՄՆ-ի պետական քարտուղարը: Վկայի ասած մարդը Հենրի Քլիսինջերն էր, որի սլոբնթաց բարձրացումը մանրամասն կոլխտարկենք հետո:

Հիշեցնենք, որ վարչապետ Մորոյին 1978 թ. գողացել էին «Կարմիր բրիգադները» ահաբեկիչները և հետո զազանաբար սպանել: Ելք դատում էին «Կարմիր բրիգադները» անդամներից, նրանցից մի քանիսը վկայություն են տվել, որ իրենք գիտեցել են Մորոյին սպանելու նպատակով կազմակերպված դավադրությանը ԱՄՆ-ի բարձրապաշտոն անձանց ունեցած մասնակցության մասին: Մորոյին սպաննալով՝ Քլիսինջերը, ինարկե, իրագործում էր ոչ թե ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը, այլ ավելի շուտ գործում էր «Հոռմեական ակումբի»՝ 300-ի կոմիտեի

արտաքին քաղաքական ստորաբաժանման հրահանգների համաձայն:

Այդ վիճակ, որի ցուցմունքները դատական բաց նիստերում սլայթաձևումների ազդեցություն ունեցան, Մորոյի մերձավոր զինակից Գորադո Գերցոնիին 1982 թ. նոյեմբերի 10-ին, ինչպես նաև տպագրվեցին խտրական մի քանի թերթերում, սակայն ԱՄՆ-ում այդ կարևորագույն տեղեկատվությունը պարզապես լռության մատնվեց: Ազատության այնպիսի հանրահռչակ ամբաստան (որոնք միշտ գիտեն ամեն ինչ ամենայնի մասին), ինչպիսիք են «Վաշինգտոն փոստը» և «Նյու Յորք թայմսը», դուրս իսկ նշանակություն չտվեցին դրան և լուր անգամ չհրատարակեցին Գերցոնիի վկայություններից:

1982 թ. հրապարակված հոդվածում, որտեղ մերկացրել էի այդ գազարելի իսնցագործությունը, ցույց էի տվել, որ քրիստոնեա-ժողովուրդական կուսակցության շեզոք անդամ Ալդո Մորոն սպանվել է մասոնական Փ-2 օբյեկտի հետ կապված վարձու մարդասպանների ձեռքով: Սպանության նպատակն էր Իտալիային ստիպել, որ ենթարկվի երկրի ապարդյունաբերականացման և նրա բնակչության զգալի նվազեցման վերաբերյալ «Հոմեոկան ակումբի» տված հրահանգներին: Իսկ լրիվ զբաղվածություն ապահովելու, քաղաքականության և տնտեսության մեջ յարվածությունը վերացնելու միջոցով Իտալիայի կայունացման Մորոյի ծրագրերը կոմեդիացնելին կոմունիստների հանդեպ կաթոլիկ ընդդիմությունը և զգալիորեն կոծվարացնելին Մերձավոր արևելքի ապակայունացումը, որը 300-ի կոմիտեի գլխավոր նպատակն էր:

Վերաբերյալից պարզ է դառնում, թե որքան հեռուցում են դավադիրների ծրագրերը: Նրանք բնավ էլ «հնգամյա պլանների» չափանիշներով չեն մտածում: Հարկ է հիշել Կաթոլիկ եկեղեցու վերաբերյալ Վեյսհաուպտի հայտարարությունները, որպեսզի հասկանալի լինի, թե ինչ ուժեր են խառնված եղել Ալդո Մորոյի սպանության մեջ: Մորոյի մահը վերացրեց Իտալիան ապակայունացնելու ծրագրի խաչքնդրոտները և, ինչպես հիմա գիտենք, հնարավորություն տվեց իրագործելու դավադիրների մերձավորարևելյան ծրագրերը 14 տարի անց Պարսից ծոցում սկսված սլատերազմի ժամանակ:

300-ի կոմիտեն Իտալիան ընտրել էր որպես զինափորձադաշտ: Դավադիրների ծրագրերի համար Իտալիան կարևորություն ունի, որովհետև եվրոպական երկրների մեջ նա բալորից ավելի մոտ է Մերձավոր արևելքի տարածաշրջանին: Նա Մերձավոր արևելքի հետ կապված է ինչպես տնտեսապես, այնպես էլ քաղաքականապես: Իտալիան սրատվարն է Կաթոլիկ եկեղեցու (որը Վեյսհաուպտը հրամայել էր ոչնչացնել), ինչպես նաև հայրենիքը Եվրոպայի խմբի խանական (օլիգարխիական) մի քանի ամենաազդեցիկ ընտանիքների, որոնք պատ-

կանում են հինավուրց «Սև արխատկրատիային»: Եթե Իտալիան թուլանալ Մոլոյի մահով, դա Մերձավոր արևելքում այնպիսի հետևանքների կունենար, որոնք կթուլացնեին ԱՄՆ-ի ազդեցությունն այդ տարածաշրջանում: Իտալիան կարևորություն ունի նաև այլ պատճառով. նա Եվրոպայի մուտքի դարպասն է Իրանից ու Լիբանանից թմրանյութերի փոխադրելու դեպքում: Մենք դեռ կանդորադառնանք այս առարկային:

Այն ժամանակվից ի վեր, երբ 1968 թ. ստեղծվեց «Հոռմեական ակումբը», քաղաքական տարբեր խմբավորումներ միավորվում էին սոցիալիզմի հովանու ներքո՝ նպատակ ունենալով ցրելու Իտալիայի մի քանի կառավարություն: Դրանց մեջ էին Վենետիկի և Գենուայի «Սև արխատկրատիան», մասոնական Փ-2 օթյակն ու «Կարմիր բրիգադները». և բոլորի նպատակն էլ նույն էր: «Կարմիր բրիգադներին» ձեռքով կատարված Ալբո Մոլոյի սպանության գործը հետաքննող Հռոմի ոստիկանության քննիչներն ընկնում են Իտալիայի մի քանի հույժ հայտնի ընտանիքների հետքի վրա, որոնք սերտորեն համագործակցել էին ահաբեկչական այդ խմբի հետ: Ոստիկանությունը նաև վկայություններ է ստանում, որ այդ հայտնի և ազդեցիկ ընտանիքներն իրենց տներն ու մյուս անշատ գույքը առնվազն 12 դեպքում տրամադրել են «Կարմիր բրիգադներին» բջիջների հենակետեր կազմակերպելու համար:

Ամերիկայի «արխատկրատիան» ևս իր լոման է մուծել Իտալիայի Հանրապետությունը քանդելու գործում, որտեղ առանձնապես ջանացել էր Ռիչարդ Գարդները, որն ԱՄՆ-ի նախագահ Քարտերի պաշտոնական դեսպանն էր Հռոմում: Այն ժամանակ Գարդները գործում էր «Հոռմեական ակումբի» կարևոր անդամ և ՆԱՏՕ-ի առանցքային ներկայացուցիչ Բետինո Կրաքսիի ուղղակի վերահսկողությամբ: Կրաքսին վճռորոշ դեմք էր Իտալիայի Հանրապետությունը կործանելու դավադիրների ձեռնարկումների մեջ: Ինչպես կտեսնենք, Կրաքսին համալայա հաջողության էր հասել Իտալիան ապակայունացնելու գործում և, լինելով գործող գլխավոր անձերից մեկը դավադիրների իշխանակարգության մեջ, կարողացել էր Իտալիայի Պառլամենտում մոնեցած իր կապերի շնորհիվ ընդունել տալ ամուսնավուծությունները և արհեստական վիժումները (աբորտները) թույլատրող օրենքները, ինչը հանգեցրեց սոցիալական ու կրոնական հեռագնա և ավերիչ հետևանքների: Սա պատմության մեջ Կաթոլիկ եկեղեցուն հասցված ամենաուժեղ հարվածներից մեկն էր, որը խարխալեց նրա հեղինակությունը, ինչի հետևանքով խարխալվեցին նաև Իտալիայի ժողովրդի բարոյական հիմքերը:

Ռուսալդ Ռեյգանին ԱՄՆ-ի նախագահ ընտրելուց հետո 1980 թ. դեկտեմբերին Վաշինգտոնում տեղի է ունենում կարևոր հանդիպում «Հոռմեական ակումբի» և Սոցիալիստական ինտերնացիոնալի հովանու ներքո: Այս երկու կազմակերպություններն էլ անմիջապա ենթարկվում են 300-ի

կոմիտեին: Օրակարգի գլխավոր հարցն էր. որոշել Ռեյգանի նախագահության արդյունավետությունը նվազագույնի հասցնելու ուղիներն ու միջոցները: Դավադիրներն լնդումում են համատեղ ծրագիր: Եթե հետ նայենք, սալա սլարգ կտեսնենք, ու այն կատարվել է մեծ հաջողությամբ:

Պատկերացնելու համար այդ դավադրության վիթխարիությունն ու համընդգրկունությունը, հարկավոր է այստեղ նշել այն նպատակները, որոնք 300-ի կոմիտեն դրել էր աշխարհն առաջիկայում նվաճելու և կառավարելու համար: Կա 300-ի կոմիտեի առնվազն 40 հայտնի «մասնաճյուղ», և մենք բոլորին կթվարկենք դրանց գործառույթների նկարագրությամբ հանդերձ: Հենց ուր այս բանը հայտնի դառնա, սալա հեշտ կլինի հասկանալը, թե ինչպես կարող է դավադիրների մեն մի կենտրոնական մարմինը գործել այդքան արդյունավետորեն, թե ինչու երկրի երեսին ոչ մի իշխանություն չի կարող դիմակայել նրա ձեռնարկած գրոհին քաղաքակիրթ ու առաջադեմ աշխարհի բուն իմաստների վրա, աշխարհ, որի իմաստն է դրված անձի ազատությունը, ինչպես ուր դա տարփոփվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների Սահմանադրությամբ:

Վկա Գերցոնիի ցուցմունքների շնորհիվ, որոնք նա տվել է երդմամբ, Իտալիայում ու Եվրոպայում (բայց ոչ ԱՄՆ-ում) մայրդիկ իմացան, որ Ալրո Մորոյի մահվան հետևում կանգնած է եղել Քիսինջերը: Այս ուղերգական պատմությունը ցուցադրում է 300-ի կոմիտեի ունակությունը՝ իր կամքը անբացատ փաթաթելու ուզած կառավարության վզին: Լինելով անդամը աշխարհի ամենահզոր գաղտնի ընկերության (այստեղ նկատի չունենմ մասնությունը), Քիսինջերը ոչ միայն սուկ սպառնացել է Մորոյին, այլև կենսագործել է Մորոյին «ոչնչացնելու» իր սպառնալիքները, բունի որ սա չի հրաժարվել Իտալիայի տնտեսական ու արդյունաբերական զարգացման ծրագրերից:

1982 թ. հունիսին և հուլիսին Ալրո Մորոյի կինը դատական բաց նիստում վկայել է, որ ամուսնու սպանությունը կատարվել է նրա կյանքի դեմ այն լուրջ սպառնալիքներից հետո, որոնք, ըստ կնոջ ասածի, տվել է «ԱՄՆ-ի մի բարձրաստիճան քաղաքական դեմք»: Տիկին Էլեոնորա Մորոն ճշտիվ կրկնել է նույն խոսքը, որը, ըստ Գերցոնիի վկայության, ասել էր Քիսինջերը. «Կում դուք կդադարեցնեք ձեր քաղաքականությունը, կամ թանկ կվճարեք դրա համար»: Դատավորը կրկին կանչում է Գերցոնիին և հարցնում, թե կարո՞ղ է տալ տիկին Մորոյի ասած անձի անունը: Գերցոնիին պատասխանում է, որ դա իրոք եղել է Հենրի Քիսինջերը, ինչն ինքը հայտարարել էր առաջ:

Գերցոնին այնուհետև դատարանին սլատմում է, որ Քիսինջերը Մորոյին սպառնացել է հյուսնացի նրա համարում, երբ Իտալիայի ղեկավարները սլաշտոնական այցով գտնվում էին ԱՄՆ-ում: Մորոն, լինելով Իտալիայի՝ ՆԱՏՕ-ի անդամ երկրի վարչապետը և Արտաքին գործոց

նախարարը, բարձրագույն կարգ ունեցող մարդ էր. այդպիսի մայրիկ երեք չպետք է ենթարկվեն ճնշման և մաֆիայի ոճի սպառնալիքների: Ինչպես այն ժամանակ, այնպես էլ այժմ Քիսինջերի Միջազգային գործերի թագավորական ինստիտուտի ծառայության մեջ գտնվող կարևոր գործակալ է, «Հռոմեական ակումբի» և «Միջազգային հարաբերությունների խորհրդի» անդամ:

Քիսինջերի դերը ԱՄՆ-ի սպախայունացման գործում (որ նա կատարել է՝ երկիրը ներքաշելով երեք պատերազմների մեջ՝ Մերձավոր արևելքում, Կորեայում և Վիետնամում) քաջ հայտնի է. ինչպես որ հայտնի է նրա դերը Պարսից ծոցի պատերազմում, որտեղ ԱՄՆ-ի բանակը գործում էր որպես 300-ի կոմիտեի վարձկանների գործ՝ Բուվեյթը նրա հսկողության տակ վերադարձնելու համար: Իրաքից ցուցադրական օրինակ սարքեցին, որպեսզի մյուս ոչ մեծ երկրները իրենց բախտը իրենք որոշելու փորձ իսկ չանեն:

Քիսինջերի սպառնացել է նաև Պակստանի ինքնիշխան պետության նախագահ Ալի Բհուտոյին: Բհուտոյի «հանցանքն» այն է եղել, որ նպաստել է իր երկրի համար ատոմային զենքի ձեռքբերմանը: Մուսուլմանական պետություն լինելով՝ Պակստանը մշտապես զգացել է Մերձավոր արևելքում Իսրայելի նախահարձակման մշտական սպառնալիքը: 1978 թ. Բհուտոյին սառնասրտորեն սպանում է գեներալ Զիյա Ուլ Հակը՝ Պակստանում «Միջազգային հարաբերությունների խորհրդի» (ՄՀԽ) ներկայացուցիչը:

Ծրագրված կերպով Պակստանի իշխանության գլուխ կանգնելիս Ուլ Հակը գժված ամբոխին դրդում է հրկիզելու Իսլամաբադում գտնվող ԱՄՆ-ի դեսպանատունը, դրանով ՄՀԽ-ին ուզելով բացահայտորեն ցույց տալ, որ ինքն անկախ առաջնորդ է, և այդպիսով ավելի շատ արտասահմանյան օգնություն ստանալ: Մի բանի տարի անց Ուլ Հակն իր կյանքն է վճարում Աֆղանստանի կռվին միջամտելու համար: Նրա «Հերկուլես C-130»-ը թռիչքից քիչ անց խոցվում է ԷՅՀ-ի (էլեկտրական ցածր հաճախության) ուղղորդված զարկով (խմպոլտով), որի հետևանքով ինքնաթիռը մի օդապտույտ է կատարում ու գահավիժում գետին:

«Հռոմեական ակումբը», գործելով գեներալ Ուլ Հակին մեջտեղից հանելու մասին 300-ի կոմիտեի հյրամանով, առանց խղճի խայթի զոհաբերում է ինքնաթիռում գտնվող ԱՄՆ-ի մի շարք զինծառայողների կյանքը, ներառյալ «Պաշտպանական հետախուզական գործակալության» խմբին, որը գլխավորում էր բրիգադային գեներալ Հերբեր Վաստմը: Ուլ Հակը նախազգուշացվել էր թրքական գաղտնի ծառայության կողմից, որ ինքնաթիռ չնստի, որովհետև հայտնի էր դարձել նրա ինքնաթիռը օդում սլայթեցնելու ծրագիրը: Այդ բանը հաշվի առնելով՝ Ուլ Հակը Միացյալ Նահանգների մի խումբ զինծառայողների իր հետ էր

վերցրել որպես «ապահովագրության վկայական» (ինչպես որ բացատրել էլ մերձավոր խորհրդականների նեղ շրջանակում):

1989 թ. գլածս «Ահաբեկչություն օդում» աշխատության մեջ տվել եմ տեղի ունեցածի հետևյալ նկարագրությունը. «Պակստանի ռազմականից Ուլ Հակի «C-130»-ը թռչելուց քիչ առաջ սրա հանգրվանած օդանավարանի մոտ մի կասկածելի բեռնատար են նկատում: Կարգավարական (դիսպետչերական) աշտարակից նախազգուշացում են անում պահակային ծառայությանը, բայց մինչ կհասցնեին որևէ բան ձեռնարկել, ինքնաթիռն օդ է բարձրանում, իսկ բեռնատարը՝ հեռանում: Մի քանի յուպե անց ինքնաթիռն անսպասելիորեն սկսում է Նեստերովի օդակն՝ անել, իսկ հետո խփվում է գետնին և պայթում:

«C-130»-ի այդօրինակ «գործելակերպին» բացատրություններ չկային. օդանավը թռիչքների անվտանգության գծով գերազանց համբավ ուներ, իսկ աղետը հետաքննող պակստանա-ամերիկյան համատեղ հանձնաժողովը չհայտնաբերեց օդաչուի սխալներ կամ մեխանիկական ու կառուցվածքային որևիցե անսարքություն»:

Նեստերովի անսպասելի օդակը, այսպես ասած, հայտնի «առևտրական մականիշն» էր այդ ինքնաթիռի, որ վնասվել էր E34-ի ազդակից:

Այն բանը, որ Խորհրդային Միությունը հնարավորություն է ունեցել արտադրելու բարձրալայնույթ ռադիոհաճախություններ առաջացնող սայքեր, Արևմուտքում հայտնի է եղել Կուրչատովի անվան ատոմային էներգիայի ինստիտուտի էլեկտրոնային ճառագայթման բաժանմունքում աշխատած խորհրդային գիտնականների հետազոտություններից: Այդ մասնագետների մեջ են եղել Յու. Ա. Վինոգրադովը և Ա. Ա. Ռոյխաձեն: Երկու գիտնականներն էլ աշխատել են էլեկտրոնային և ռենտգենյան լազերների գծով մասնագիտացող Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտում:

Այս տեղեկությունն ստանալով՝ սկսեցի սույնը հաստատող նյութեր փնտրել ուրիշ աղբյուրներում և գտա, որ Անգլիայում «էլեկտրոնիկայի միջազգային հանդեսը» մի քանի նյութ է հրապարակել, որոնք հաստատում էին տեղեկությունն այն միջոցի մասին, որով կարելի էր զցել գեներալ Ուլ Հակի «C-130» ինքնաթիռը: Բացի սրանից, այդ տեղեկանյութը հաստատվեց հետախուզության երկու աղբյուրով: Որոշ օգտակար տեղեկություններ ստացա խորհրդային գիտական մի թերթից, որն Անգլիայում լույս է տեսնում «Խորհրդային ռադիոէլեկտրոնիկան և կապի համակարգերը» անունով: Ոչ մի տարակույս չունեի, որ գեներալ Ուլ Հա-

¹ Նեստերովի օդակ կամ մահվան օդակ: Ռուս ռազմական օդաչու Նեստերովի անունից. բարձրագույն սավառնորդության դիրք (Վ. Ա.):

կին սպանել են: Օդանավարանի մոտ տեսնված բեռնատարում անկասկած եղել է այն տիպի ԷՅՀ-ի շարժական կայանք, որը, ինչպես հայտնի է, կա խորհրդային զինված ուժերում:

Բանտում եղած ժամանակ, Բեռնառնի տված գրավոր ցուցմունքների համաձայն (նրան զաղտնի դուրս էին բերել Պակստանից), Քիսինջերը լրջորեն սպառնացել էր նրան. «Ձեզ և մյուս բոլորիդ սոսկալի դաս կտամ, եթե շարունակեք երկիրն ամբասլնդելու ձեր քաղաքականությունը»: Բեռնառն ղիմակայել էր Քիսինջերին և «Հռոմեական ակումբին»՝ կոչ անելով իրագործելու միջուկային էներգետիկայի ծրագիրը: Մրանով Պակստանը կդառնար ժամանակակից արդյունաբերական պետություն, ինչը 300-ի կոմիտեի աչքին ուղղակի անհնազանդություն էր իր այն հրամաններին, որոնք Քեսինջերը փոխանցել էր Պակստանի կառավարությանը: Բեռնառնին Քեսինջերի կարդացած սպառնալիքները ԱՄՆ-ի սրաշտոնական քաղաքականության մասը չէին. դա արդի «Լուսավորյալների» քաղաքականությունն էր:

Անհրաժեշտ է հստակ հասկանալ, թե ինչու են միջուկային էներգետիկան այդպես ատում ամբողջ աշխարհում, և ինչու է միջուկային էներգետիկայի դեմ կովի համար օգտագործվում շինծու «բնապահպան» շարժումը, որն ստեղծել և դրամավորում է «Հռոմեական ակումբը»: Միջուկային էներգետիկայի օգնությամբ, որը հնարավորություն է տալիս արտադրելու հսկայական քանակությամբ էժան էլեկտրաէներգիա, երբորդ աշխարհի երկրները աստիճանաբար կանկախանային ԱՄՆ-ի դրամական օգնությունից և կսկսեին հաստատել իրենց ինքնիշխանությունը: Ատոմակայաններում արտադրված էլեկտրականությունը բանալի է նոր զարգացող երկրներին այն հետամնաց վիճակից դուրս բերելու համար, որը 300-ի կոմիտեն հրամայել է պահպանել:

Օտարերկրյա օգնության նվազումը կնշանակեր Միջազգային արժույթի հիմնադրամի (ՄԱՀ-ի) հսկողության նվազում նոր զարգացող երկրների բնական սրաշարների վրա: Այս երկրների իսկական ինքնուրույն զաղափարն իսկ նգովվել է ինչպես «Հռոմեական ակումբից», այնպես էլ նրա գլխին կանգնած 300-ի կոմիտեից: Տեսել ենք, թե ինչպես ԱՄՆ-ում միջուկային էներգիայի դեմ շարժումը հաջողությամբ օգտագործվեց երկրի արդյունաբերական զարգացումը կասեցնելու համար, ինչը համապատասխանում էր «հետարդյունաբերական գրայական ան» նախատեսող Ակումբի ծրագրին:

ԱՄՆ-ի դրամական օգնությունից կախված լինելը արտասահմանի երկրներին ստրուկ է պահում «Միջազգային հարաբերությունների խորհրդի» մոտ: Այդպիսի օգնություն ստացող երկրների բնակչությանը սոսկ խղճուկ փշրանքներ են հասնում, իսկ հիմնական մասը մտնում է պետական առաջնորդների գրայանը, որոնք ՄԱՀ-ին թույլ են տալիս

գլխատչությունն դուրս քաշել երկրի բնական պաշարները: Ջիմբաբվեի (նախկին Ռոդեզիայի) առաջնորդ Մուգաբեն ներկայացնում է վառ օրինակը այն բանի, թե ինչպես է իրականացվում արտասահմանի վերահսկողությունը երկրի հումքապաշարների, տվյալ դեպքում՝ բարձրորակ քրոմի հանքաքարի վրա: Ներկայումս Ջիմբաբվեի հումքապաշարներն ամբողջովին վերահսկում է մի վիթխարի խառնակույտ՝ «Լոնրեռ» ընկերությունը, որն իր զարմուխի Էդիսաբեթ II-ի անունից կառավարում է 300-ի կամիտեի կարևոր անդամ Անհուս Օհիլվին: Ընդամիս երկրի բնակչությունը գնալով ավելի է թաղվում թշվառության ու աղքատության մեջ, թեև ԱՄՆ-ը 300 միլիոն դոլարի օգնություն է հատկացնում:

«Լոնրեռ»-ին է պատկանում ռոդեզիական (զիմբաբվեական) քրոմի մենաշնորհը, և նա կարող է ուզած գինը դնել վրան, թեև Սմիթի վարչակարգի օրոք նման բան թույլ չէր տրվում: Գնեթի խելամիտ մակարդակը պահպանվում էր 20 տարի՝ մինչև Մուգաբեի իշխանության գլուխ անցնելը: Թեպետ Յան Սմիթի 14-ամյա կառավարման տարիներին էլ են երկրում խնդիրներ եղել, բայց նրա պաշտոնանկությունից հետո գործազրկությունն ավելացել է չորս անգամ, և Ջիմբաբվեն հիմա գտնվում է քառսի և փաստական սնանկության մեջ: Մուգաբեն բավականաչափ օգնություն է ստացել ԱՄՆ-ից (տարեկան մոտ 300 միլիոն դոլար), ինչը նրան հնարավորություն է տվել կառուցել երեք հյուրանոց՝ Ֆրանսիայի Էրկնագույն ափին, Կապ Ֆելլատում և Մոնտե Կառլոյում, մինչդեռ նրա ժողովուրդը տառապում էր հիվանդություններից, գործազրկությունից ու թերասնումից: Էլ չենք խոսում ամեն մի բողոք ճնշող բռնապետական դաժան կարգի մասին: Սա համեմատեք Սմիթի վարչակարգի հետ, որն ԱՄՆ-ից երբեք օգնություն չի խնդրել և ոչ մի ցեղաչի ստացել: Միանգամայն պարզ է, որ օտարերկրյա օգնությունը Ջիմբաբվեն և աֆրիկյան մյուս երկրները վերահսկելու գործադր միջոց է:

Սրանից բացի՝ օտարերկրյա օգնությունը ԱՄՆ-ի քաղաքացիներին պահում է ակամա կախյալ վիճակում. ուստի նրանք միանգամայն անկարող են լուրջ ընդդիմություն ստեղծել կառավարության հանդեպ: Դավիդ Ռոբֆելերը գիտեր իր արածը, երբ օտարերկրյա օգնության մասին նրա օրինագիծը օրենք դարձավ 1946-ին: Այդ ժամանակից ի վեր հիշյալ օրենքն ընկել է երկրի ամենաատելի օրենքների ցուցակի մեջ. հատկապես այն բանից հետո, երբ հրապարակորեն մերկացվեց պետական բռնաշորթունը (ռեկետը), որի համար պետք է վճարենք մենք՝ հասարակ ժողովուրդս:

Բայց ինչպե՞ս է դավադիրներին հաջողվում ամբողջ աշխարհի և հատկապես ԱՄՆ-ի ու Մեծ Բրիտանիայի կոկորդից բռնել: Ամենից շատ հետևյալ հարցն են տալիս. «Ինչպե՞ս կարող է մի առանձին կազմակերպություն ամեն պահ իմանալ աշխարհում կատարվող ամեն բան

և, առհասարակ, ինչպե՞ս է նա իրականացնում իր վերահսկողությունը»: Այս գրքում կփորձենք պատասխանել սրան և ուրիշ հարցերի: Դավադիրների առաջխաղացման դեմն իրապես առնելու միակ միջոցը հետևյալն է. հայտարարել նրանց անունները և բանավեճ ծավալել գաղտնի ընկերությունների, այլև դրանց համար վարագույր ծառայող կազմակերպությունների, կառավարական գործակալությունների, բանկերի, ապահովագրական ընկերությունների, անդրազգային միավորումների, նավթարդյունաբերության, ինչպես նաև հարյուր հազարավոր այլևայլ կազմակերպությունների շուրջը, որոնք թաքնվում են զանազան ցուցանակների տակ, բայց, այնուամենայնիվ, ենթակա են 300-ի կոմիտեին՝ վերահսկող ԳԵԲԱԳՈՒՅՆ մարմնին, որն առնվազն հարյուր տարի է, ինչ կառավարում է աշխարհը:

Քանի որ «Սիջազգային հարաբերությունների խորևրդի» և «Լոռակողմ հանձնաժողովի» մասին արդեն տասնյակ գրքեր են գրվել, ուղղակի անցնենք «Հռոմեական ակումբին» և «Մարշալի գերմանական հիմնադրամին»: Նախքան ԱՄՆ-ում այդ կազմակերպությունների վերաբերյալ տեղեկանյութ հրապարակելս, դրանց մասին շատ քչերն էին լսել: 1983 թ. հրապարակված առաջին աշխատությունս՝ «Հռոմեական ակումբը», գլեթե ոչ մի ուշադրություն չգրավեց: Անտեղյակ շատ մարդիկ կարծում էին, թե «Հռոմեական ակումբը» Կաթոլիկ եկեղեցուն վերաբերող ինչ-որ բան է, իսկ «Մարշալի գերմանական հիմնադրամը» կապված է «Մարշալի ծրագրի» հետ:

Կոմիտեն դիտավորյալ այնպիսի անվանումներ է ընտրում, որ խճճի իրավիճակը և ուշադրությունը շեղի իր այսօր գործերից: ԱՄՆ-ի կառավարությունը չի կարող սա չիմանալ, բայց քանի որ ինքն իսկ դավադրության բաղկացուցիչ մասն է, ուստի պետք է ըստ ամենայնի նպաստի տեղեկանյութը թաքցնելուն, որ ճշմարտությունը լույս աշխարհ չգա: Աշխատությունս հրապարակվելուց մի քանի տարի անց գտնվեցին գրուներ, որոնք դրա մեջ հանկարծ տեսան թարմ ու եզակի տեղեկատվության հարուստ աղբյուր և սկսեցին այդ նյութի շուրջը գրել ու խոսել այնպես, կարծես թե արդեն վաղուց և հիմնավորապես հաստ են եղել դրան:

Նրանց համար հայտնություն էլ ույն բանը, որ «Հռոմեական ակումբը» և նրա՝ «Մարշալի գերմանական հիմնադրամ» անունով ֆինանսական գրասենյակները դավադիրների լավ կազմակերպված մասնաճյուղեր են, որոնք գործում են ՆԱՏՕ-ի հովանու ներքո, և որ «Հռոմեական ակումբի» գործարարողների (ֆունկցիոներների) մեծ մասը ՆԱՏՕ-ից է այդ ակումբը եկել: ՆԱՏՕ-ի քաղաքականության բոլոր հիմնական դրույթները ձևակերպել է «Հռոմեական ակումբը», որը 300-ի կոմիտեի անդամ լորդ Քարինգտոնի գործունեության շնորհիվ կայողացել էր ՆԱՏՕ-ն պառակտել երկու թևի՝ իշխանության քաղաքական խմբի

(ձախեր) և բուն ռազմական կառույցի:

«Հռոմեական ակումբը» շարունակում է մնալ 300-ի կոմիտեի արտաքին քաղաքական գլխավոր ստորաբաժանումներից մեկը: Այդպիսի մի այլ ստորաբաժանում է «Բիդերբերգերյան ակումբը» (Բիդերբերգերներ): Սա ստեղծվել է 1968 թ., երբ Աուրելիո Պեչեին հեռախոսով անձամբ կապվել է սկզբնապես «Մարզեթաուի խմբի» հիմնականախըր կազմած անձանց հետ և նրանց կաշ է արել վերստին միավորվելու, որպեսզի նոր մղանք հաղորդեն ու արագացնեն Համաշխարհային միասնական կառավարություն ստեղծելու ծրագրերի իրագործումը, կառավարություն, որն այժմ կոչում են Համաշխարհային նոր կարգ, թեև ես գերադասում եմ առաջին անվանումը: Այն շատ ավելի լավ է պատկերում սույն բացառիկ երևույթի էությունը, քան Համաշխարհային նոր կարգ անվանումը, որը միայն խառնաշփոթություն է մտցնում, քանի որ պատմության մեջ արդեն եղել են մի քանի «համաշխարհային նոր կարգեր», բայց Համաշխարհային միասնական կառավարություն դեռ չի եղել:

Պեչեիի կոչին արձագանքում են ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Շվեդիայում, Մեծ Բրիտանիայում, Շվեյցարիայում և Գաբոնիայում բնակվող բոլոր առավել անցունկալի (օղիոզ) «ապագայի ճարտարապետները»: 1968-ից մինչև 1972 թվականն ընկած ժամանակաշրջանում «Հռոմեական ակումբը» վերածվում է «նոր գիտության» գիտնականներ, համաշխարհականներ (գյոբալիստներ), ապագագետներ (ֆուտուրոլոգներ) և տարբեր տեսակի ինտերնացիոնալիստներ միավորող կազմակերպության: Այս առթիվ նրա անդամներից մեկն այսպես է արտահայտվել. «Մենք նմանվել ենք Հովսեփի գույնզգույն պատմուճանին»¹: ՆԱՏՕ-ի քաղաքական թևի վարդապետության հիմքը դարձավ Պեչեիի «Մարդկային հասկություններ» գիրքը:

Այստեղ մի հատված է բերվում Պեչեիի գրքից.

«Այն ժամանակից ի վեր, երբ քրիստոնեական աշխարհը մոտեցավ առաջին հազարամյակի շեմին, մարդկանց հսկայական զանգվածները առաջին անգամ են գտնվում տազնապալի սպասման մեջ, թե անկասելիորեն ինչ-որ անհայտ բան է լինելու, որը կարող է լյովին փոխել իրենց բնդհանուր ճակատագիրը... Մարդս չգիտե, թե ինչ է նշանակում իսկական ժամանակակից մարդ լինելը... Նա հեքիաս է հորինել Չար Դևի մասին, բայց եթե ելքիցե գոյություն էլ ունեցել է չար դև, ապա ԱՅԴ-ՄԱՐԴՆ ԻՆՔՆ, Է... Այստեղ մարդկային հարակարծություն (պարա-

¹ Ակնարկվում է Աստվածաշնչի Հովսեփը, որը Եգիպտոսի կառավարիչ դարձավ: Հայրը՝ Հակոբը (Բսրայելը), որդիների մեջ ամենաշատը Հովսեփին էր սիրում և նրա համար մի բազմագույն պատմուճան էր կարել տվել, ինչը հարուցել էր եղբայրների նախանձը (Վ. Ա.):

դրքս) կա: Մարդս ընկել է իր բացառիկ ունակությունների ու ձեռքբերումների ծաղակը, որը սուրուն ավագի պես է. որքան շատ է ուժ գործադրում, այնքան շատ է այն պահանջվում: Մենք պետք է անդադար կրկենք, որ հիմար բան է մարդկության խորապես ախտաբանական ու հիվանդագին վիճակը բացատրել որևէ փուլաշրջանային (ցիկլային) ճգնաժամով կամ հանգամանքների պատահական զուգադիպմամբ: Այն ժամանակից սկսած, երբ մարդկությունը բացել է նոր ճարտարարվեստներով (տեխնոլոգիաներով) լցված «Պանդորայի արկղը», նատառապում է բնակչության չվերահսկվող աճից, բազմաճյուղ մոլագարությունից, էներգիական ճգնաժամերից, գոյապաշարների փաստական կամ հնարավոր պակասից, շրջակա միջավայրի աղտոտումից, միջուկային խելահեղությունից և բազում նման այլ աղետներից»:

Սա լիովին համապատասխանում է «կանաչների» շարժման ծրագրին: Շարժումը ծագել է «Հոռմեական ակումբի» աջակցությամբ, որի նպատակն է արգելակել և հետ շրջել արդյունաբերության զարգացումը:

«Հոռմեական ակումբի» ծրագիրը ներստում է «հետալույլունաբերական» գաղափարներ մշակելը և ԱՄՆ-ում տարածելը, սրա հետ մեկտեղ նաև արժարժեղն ու ծավալելը հակամշակութային այնպիսի շարժումներ ու սովորություններ, ինչպիսիք են թմրանյութեր գործածելը, ռոքը, տոփամոլությունը (սեքսը), հստոյապաշտությունը (գեյրնլիզմը), սատանասիրությունը, կախարչությունը և «կանաչների շարժումը»: Թավիստոկլի ինստիտուտը, Ստենֆորդի հետազոտական ինստիտուտը, Սոցիալական հարաբերությունների ինստիտուտը, ինչպես նաև կիրառական սոցիոգեոմոլոգիայի ոլորտի հետազոտական բազմատեսակ այլ կազմակերպություններ կան իրենց ներկայացուցիչներն են ունեցել «Հոռմեական ակումբում», կան էլ գործել են որպես նրա խորհրդականներ և առաջատար դեր են կատարել այն փորձերի մեջ, որ ՆԱՏՕ-ն իբրև հրահանգ ընդունի «Ջրիոսի դարաշրջանի դավադրության» գաղափարախոսությունը:

Համարվում է, թե «Համաշխարհային նոր կարգ» անվանումը գործածության մեջ է մտել Պարսից ծոցի 1991 թվականի պատերազմից հետո. մինչդեռ Համաշխարհային միասնական կառավարությունը (Համ-ՍիԿառ - Վ. Ա.) 100 տարուց ավելի է, ինչ գոյություն ունի: Համաշխարհային նոր կարգը (ՀամՆորԿարգ - Վ. Ա.) նոր չէ. գանազան կեյսերով այն եղել և զարգացել է արդեն վաղուց, բայց, այնուամենայնիվ, ընկալվում է որպես ԱՊԱԳԱ ՉԱՐԳ-ԱՑՄԱՆ ծրագիր, ինչը չի համապատասխանում իրականությանը: Համաշխարհային նոր կարգը ԱՆՑՅԱԼՆ Է ՈՒ ՆԵՐԿԱՆ: Ահա թե ինչու ավելի ճիշտ պետք է համարել «Համաշխարհային միասնական կառավարություն» (ՀամՍիԿառ) անվանումը: Աուրելիո Պեչեյին մի անգամ իր մոտիկ ընկեր Ալեքսանդր Հեյգին խոս-

տովանել է, որ իրեն զգում է որսյես վերամարմնավորված Ադամ Վեյս-
հաուսը: Պեչեին ուներ ժամանակակից «լուսավորյալների» կազմա-
կերպելու և կառավարելու Վեյսհոուսյտի փայլուն ընդունակությունը, և
դա դրսևորվում էր այն բանով, թե նա ինչպիսի հմտությամբ էր կառա-
վարում ՆԱՏՕ-ն և կերպաձևում սրա քաղաքականությունը համաշ-
խարհային չափանիշով:

Երեք տասնամյակ Պեչեին գլխավորում էր «Ատլանտյան ինստիտու-
տի տնտեսական խոլուպը»՝ միաժամանակ լինելով Ջովանի Ազնելիին
պատկանող «Ֆիատ մոթոր քոմպանի»-ի գործադիր տնօրենը: «Սև արխա-
տոկրատիայի» խոսլակյան հիմնավորց ընտանիքի անդամ Ազնելին 300-
ի կոմիտեի ամենակարևոր անդամներից մեկն է: Նա առաջատար դեր է
խաղացել Խորհրդային Միությունում նախագծեր մշակելու գործում:

«Հոմեակյան ակումբը» պաշտոնական ապաստանն է դավադիրնե-
րի կազմակերպության, որը անգլո-ամերիկյան ֆինանսիատների ու
Եվրոպայի «Սև արխատոկրատիայի», հատկապես Լոնդոնի, Վենետիկի
ու Գենուայի «արխատոկրատիա» կոչեցյալ հին ընտանիքների միու-
թյունն է: Իսկ ինչպե՞ս է սրանց հաջողվել իրենց ձեռքն առնել աշխարհի
կառավարումը: Գաղտնիքն այն է, որ նրանք ունակ են առաջացնելու
տնտեսական կառավարելի անկումներ, ճգնաժամեր ու լճացումներ:
300-ի կոմիտեն համընդհանուր սոցիալական հեղակործանումներն ու
տնտեսական ճգնաժամերը դիտում է որսյես նախապատրաստական
միջոց գալիք ավելի լուրջ իրադարձություններից առաջ և ամբողջ աշ-
խարհում մարդկանց այնպիսի զանգվածների ստեղծման հիմնական
եղանակ, որոնք ապագայում կդառնան իր «գործագրկության նպաստ-
ների» կուռնագանդ ստացողները:]

Մարդկության վերաբերյալ Կոմիտեի կարևոր ռոշումներից շատերն
ըստ երևույթին մշակվում են լեհ արխատոկրատ Ֆելիքս Չերժինսկու՝ փի-
լիսոփայության հիման վրա, որը համարում էր, թե մարդիկ զարգացման
աստիճանով անասունից մի քիչ են բարձր: Լինելով Բրիտանիայի հե-
տախույզ Սիդնեյ Ռեյլիի մերձավոր ընկերը (Ռեյլին փաստորեն վերահս-
կում էր Չերժինսկու գործողությունները բոլշևիկյան հեղափոխության
զարգացման շրջանում)՝ Չերժինսկին հաճախ էր նրա մոտ անկեղծանում
հարբելւշրջանների (գաւրյների) ժամանակ: Չերժինսկին հենց այն ճի-
վաղն է, որ գլխավարել է կարմիր տեռորի ապարատը: Մի անգամ, հերթա-
կան կոնժուրանության ժամանակ, նա Ռեյլիին ասել է հետևյալը. «Մար-
դը ոչ մի նշանակություն չունի: Նայեք, թե ինչ է կառարվում, երբ նրան սո-

¹ Հռչակավոր հեղափոխական, խոբիրդային երկրի քաղաքական ու պետական ամենա-
հայտնի գործիչներից մեկը, արտակարգ հանձնաժողովի (Չեկա, հետագայում պետանվ-
տանգորյան կոմիտե) նախագահը և ներքին գործերի ժողկոմը (նախարարը) (Վ. Ա.):

վատանջ եք անում: Սկսում է ուտել իր մեռած եղբայրակիցներին, որ ողջ մնա: Մարյա շահագրգռված է միայն ի՛ր գոյատևմամբ: Մյուսն սա՛ է իրականը: Սայլնոզայի ողջ փիլիսոփայությունը հնուտու կույտ է»:

«Հռոմեական ակումբն» ունի իր մասնավոր հետախուզական գործակալությունները և, բացի դրանից, տեղեկանյութեր է «փոխառնում» **Ինտերպոլից**¹, որը վերահսկվում է Դավիդ Ռոկֆելերի կողմից: Նրա հետ շատ սերտորեն համագործակցում են ԱՄՆ-ի բոլոր հետախուզական ծառայությունները, ինչպես նաև ՊԱԿ-ն ու Մոսսադը²: Մյուս կատուկ ծառայությունը, որ նրա ազդեցության տակ չի ընկել, ԳԴՀ-ի (Գերմանական Դեմոկրատական Հանրասյեւորթյան) հետախուզությունն է՝ «Շտազի»-ն:

«Հռոմեական ակումբն» ունի նաև լավ կազմակերպված քաղաքական ու տնտեսական սեփական գործակալություններ: Հենց սրանք են ԱՄՆ-ի նախագահ Ռեյգանին հրամայել, որ պաշտոնում պահի Փոլ Վոլքերին՝ 300-ի կոմիտեի ևս մի կարևոր անդամի: Վոլքերը մնաց ԱՄՆ-ի Դաշնային սլահուստի համակարգի նախագահի պաշտոնում, թեև Ռեյգանը նախագահի թեկնածու եղած ժամանակ հայտարարել էր, թե նրան պաշտոնանկ է անելու, հենց որ ինքը նախագահ ընտրվի:

Կարիբյան ճգնաժամում³ վճռորոշ դեր կատարելով՝ «Հռոմեական ակումբը» փորձ արեց նախագահ Քենեդիին ընդունել տալ «Ճգնաժամերի կառավարման» իր ծրագիրը (FEMA-ի՝ «Արտակարգ իրավիճակների դաշնային գործակալության» նախակարապետը): Թավիստոկյան մի քանի գիտնականներ այցելում են նախագահին, որ նրան բացատրեն ծրագրի էությունը, սակայն նախագահը մերժում է նրանց բոլոր խորհուրդները: Նույն թվականին, երբ Քենեդին սպանվել էր, Թավիստոկի ներկայացուցիչները Վաշինգտոնում սկսում են բանակցել ՆԱՍԱ-ի⁴ հետ: Այս անգամ բանակցությունները հաջող էին: ՆԱՍԱ-ն Թավիստոկի հետ պայմանագիր է կնքում ամերիկյան հատարակական կարծիքի վրա ունենալիք իր ապագա տիեզերական ծրագրի ազդեցության գնահատման վերաբերյալ:

Պայմանագրի կատարումը հանձնարարվում է Ստենֆորդի հետա-

¹ Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպություն (Վ. Ա.):

² ՊԱԿ - ԽՍՀՄ Պետանվտանգության կոմիտեն: Մոսադ - Իսրայելի հետախուզական ծառայությունը (Վ. Ա.):

³ Հեղափոխական Կուբայի սարածքում ԽՍՀՄ-ի կողմից հրթիռների տեղադրման անջուրյամբ 1962 թ. Կարիբյան ծովում ռազմական ընդհարում էր տեղի ունենալու խորհրդային և ամերիկյան ռազմանավերի միջև: Աշխարհի կանգնել էր միջուկային սրտակրակի շեմին (Վ. Ա.):

⁴ Օդանավորդության և տիեզերական տարածության ուսումնասիրման ազգային վարչություն. ԱՄՆ-ի կառավարության գերատեսչությունը (Վ. Ա.):

գոտական ինստիտուտին և «Ռենդ» կորպորացիային: Թավիատոկի, Ստենֆորդի ինստիտուտի և «Ռենդի» պատրաստած այդ նախագծի շատ նյութեր այդպես էլ լույս աշխարհ չելան և ցայսօր մնում են փակ: Սենատի մի քանի վերադիտող կոմիտեներ ու ենթակոմիտեներ, որոնց դիմեցի տեղեկություն ստանալու համար, ինձ հաղորդեցին, որ «երբեք չեն լսել այդ մասին» և չնչին իսկ պատկերացում չունեն, թե որտեղ կարող են գտնել փնտրածս: Այսպիսին են 300-ի կոմիտեի իշխանությունն ու հեղինակությունը:

1966 թ. հետախուզական աշխատանքի գործընկերներս ինձ խորհուրդ տվեցին դիմել դոկտոր Անատոլ Ռապոպորտին, ով, ինչպես ասացին, վարչակազմին հետաքրքրող մի նյութ է գրել, որի նպատակը ՆԱՍԱ-ի տիեզերական ծրագրին վերջ տալն է: Ռապոպորտը պնդում էր, որ այդ ծրագիրը վաղուց կորցրել է իր օգտավետությունը: Նա բավականությամբ ինձ արամադրեց պատճենը իր աշխատանքի, որի էությունը, եթե չմանրամասնենք, այն էր, որ ՆԱՍԱ-ի ողջ տիեզերական ծրագիրը պետք է ադրանոց նետվի: ՆԱՍԱ-ում կուտակվել են չափից շատ գիտնականներ, որոնք վատ ազդեցություն են գործում Ամերիկայի վրա, որովհետև դպրոցներում ու համալսարաններում միշտ հաճույքով դասախոսություններ են կարդում, թե ինչպե՞ս են աշխատում հրթիռները, ո՞րն է դրանց շարժման սկզբունքը և ի՞նչ մասերից են բաղկացած: Ռապոպորտը պնդում էր, թե այդ քանն ապագայում կհանգեցնի հասուն մարդկանց մի ամբողջ սերնդի գոյացմանը, որոնք կկանենան դառնալ տիեզերքի ուսումնասիրման գծով մասնագետներ: Եվ օրերից մի օր էլ դուրս կգա, որ նրանք «ավելորդ» են, քանի որ արդեն 2000 թվականի մոտերքին նրանց գիտելիքները ոչ մեկին պետք չեն լինի:

Հենց որ «Հոոմեական ակումբը» ՆԱՍՕ է ներկայացնում ՆԱՍԱ-ի մասին Ռապոպորտի սույն հակիրճ գեկուցումը, 300-ի կոմիտեն պահանջում է գործել: ՆԱՍՕ-ի գործարարների՝ «Հոոմեական ակումբի» անդամների (որոնց հանձնարարվել էր արշավ ձեռնարկել ՆԱՍԱ-ի դեմ) շարքում էին Հարլանո Բլիվենդը, Ջոզեֆ Սլեյտերը, Բլեյբորն Բ. Փեյլը, Վալտեր Զ.Լևին, Ջորջ Մաք-Ջին, Վիլյամ Վոթսը, Ռոբերտ Շտրաուս-Հուպեն (ԱՄՆ-ի դեսպանը ՆԱՍՕ-ում) և Դոնալդ Լեշը: 1967 թ. մայիսին «Հյուսիսատլանտյան ասամբլեայի գիտահետազոտական կոմիտեն» և Արտաքին քաղաքականության գիտատեխնիկական ինստիտուտը կազմակերպում են հանդիպում՝ այն հորջոջելով «Կոնֆերանս անդրատլանտյան հավասարակշռախախտման (դիսբալանսի) և համագործակցության առթիվ»: Հանդիպումը կայանում է Դեիլում (Ֆրանսիա) գտնվող Եղիաբեթ թագուհու պալատում:

Դեիլում կազմակերպված կոնֆերանսի գլխավոր նպատակը ԱՄՆ-ում ճարտարարվեստական (տեխնոլոգիական) և արդյունաբերական

սուսջընթացին վերջ տալն էր: Կոնֆերանսի նյութերը կիմք ծառայեցին երկու գրքի համար, որոնցից մեկը՝ Բժեզինսկու «Տեխնոտոմնային դարաշրջանը», արդեն հիշատակել ենք: Մյուսը, ուր գրել է կոնֆերանսի նախագահ Աուրելիա Պեչեին, կոչվում է «Անդունդի առաջ»: Պեչեին հիմնականում համաձայն է Բժեզինսկու հետ, բայց ավելացրել է, որ աշխարհն ասպագայում ընկներու է քառսի մեջ, ԵԹԵ ՉՂԵԿԱՎԱՐՎԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ: Այս տեսակետից Պեչեին պնդում էր, որ Խորհրդային Միությունը պետք է շարունակի «գուգամխտումը (կոնվերգենցիան) ՆԱՏՕ-ի հետ», և որ այդ գուգամխտումը կավարտվի Համաշխարհային նոր կարգում ԱՄՆ-ի հետ հավասար գուգրնկերությամբ: Երկու ազգերը պատասխանատու կլինեն ապագա «Ճգնաժամերի կառավարման և համընդհանուր (գլոբալ) ծրագրման» համար: «Հոռմեական ակումբը» համընդհանուր ծրագրման վերաբերյալ առաջին պայմանագրի նախագծի կազմումը հանձնարարում է Մասաչուսեթսի ճարտարաբանական ինստիտուտին՝ 300-ի կոմիտեի գլխավոր հետազոտական ինստիտուտներից մեկին: Նախագծի ղեկավարներ են կարգվում Ջեյ Ֆորեստորը և Դենիզ Մլաքուզը:

Ո՞րն էր նրանց զեկուցման իմաստը: Ըստ էության այն չէր տարբերվում քսիսնա Մաթուսի ու 'Ֆոն Հայելի քարոզներից, այսինքն՝ նորից հարուցվեց այն կին հարցը, թե բնական պաշարները բոլորին չեն բավականացնի: Ֆորեստոր-Մլաքուզի զեկուցումը բացահայտ խաբեություն էր: Դրա մեջ դիտավորյալ լռության էր մատնվում այն բանը, որ իր գործությունն ապացուցած մարդու ստեղծագործ կանոնարը ամեն դեպքում կգտնի պաշարների պակասի խնդրի լուծումը: Բնական պաշարներ ՍՏԵՂՃԵԼՈՒ ԽԱՄԱՐ կարող է օգտագործվել ջերմամիջուկային ստոր սինթեզի էներգիան, ինչը 300-ի կոմիտեի ՄԱՀԱՑՈՒ թշնամին է: Օրինակ, ջերմամիջուկային ստոր սինթեզի օգնությամբ կարելի է մեկ քառակուսի կիլոմետր դատարկ (անհանք) ապարից արտադրել այնքան այլումին, որը 4 տարի կբավարարի մեր պահանջմունքները:

Պեչեին երբեք չի դադարեցրել ազգային պետությունների դեմ իր քարոզությունը: Նա շարունակ պնդել է, թե դրանք մարդկության առաջընթացի արգելակ են, և «կոլեկտիվ պատասխանատվության» կոչ է արել: Ազգայնականությունը (նացիոնալիզմը) քաղցկեղի ուռուցք է մարդու վրա. ակոա Պեչեիի արտասանած մի քանի կարևոր ճառերի նյութը: Նրա մոտիկ ընկեր Էրվին Լասլոն 1977 թվականին նույն հայեցակետով մի հոդված գրեց «Մարդկության նպատակները» վերտառությամբ: Այդ աշխատանքը կարևոր ուղենիշ եղավ «Հոռմեական ակումբի» հետազոտությունների մեջ: Ամբողջ զեկուցումը, ըստ էության ծրագրային փաստաթուղթ լինելով, բաղկացած է արլյունաբերության

անի և քաղաքակենտրոնացման (ուրբանիզացիայի) դեմ խայթիչ հարձակումներից: Այդ բոլոր տարիների ընթացքում Բլիսինջերը, որպես Միջազգային գործերի թագավորական ինստիտուտի լիազոր ներկայացուցիչ, սերտ կապ է պահպանել Մոսկվայի հետ: Բլիսինջերի կրեմլյան բարեկամները կանոնավորապես զեկուցումներ են ստացել «համընդհանուր կաղապարավորման» մասին:

«Հոռմեական ակումբի» անդամ Հարլանդ Բլիվենդը երրորդ աշխարհի վերաբերյալ մի զեկուցում էր շարադրել, որն անամոթությամբ գազաթնակետն էր: Այն ժամանակ Բլիվենդը ԱՄՆ-ի դեսպանն էր ՆԱՏՕ-ում: Չեկուցման մեջ լատ էության խոսվում էր այն մասին, որ երրորդ աշխարհի երկրները պետք է իրենց մեջ որոշեն, թե սեփական բնակչության ո՞ր մասը պետք է ոչնչացվի: Հետագայում Պեչեին գրել է (Բլիվենդի զեկուցման հիման վրա). «Երեք խոշորագույն երկրների ու դաշինքների դիմակայման քաղաքականության հետևանքով խախտված գոյություն ունեցող միջազգային կարգը աչքիդ առաջ քայուքանդ է լինում... Փրկվելիք մարդկանց ջոկելու անհրաժեշտությունը հույժ մոռյլ ինտանկար է: Բայց եթե, ցավոք, իրադարձությունները ծավալվեն հենց այդ ստորությամբ, այդպիսի որոշումների ընդունելու իրավունքը չպետք է պատկանի լոկ մի քանի երկրի, քանի որ դա նրանց չարաշուք իշխանություն կտա ողջ աշխարհի սովյալների կյանքի վրա»:

Մրանից է բխում Կոմիտեի՝ աֆրիկյան ազգերին սովի միջոցով նպատակասլացորեն ոչնչացնելու քաղաքականությունը, ինչը երևում է Մահարայի անապատից հարավ ընկած երկրների օրինակից: Դա պարզապես նադկայի անպատկառություն էր, քանի որ 300-ի կոմիտեն այդտեղ սեփականել էր մարդկանց կյանքն ու մահը միանձնաբար տնօրինելու իրավունքը, և Պեչեին գլխեր ալո բանը: Դրանից առաջ նա այդ մատնանշել էր իր «Անի սահմանները» գրքում: Պեչեին լիովին բացատում էր արալունաբերության և գյուղատնտեսության առաջընթացը և դրա փոխարեն պահանջում էր, որ ամբողջ աշխարհը ենթարկվի մեկ համադասիչ (կաորդինացիոն) խորհրդի, նկատի ունենալով, բնականաբար, ՀամՄիԿաոր կազմող «Հոռմեական ակումբը» և ՆԱՏՕ-ի հիմնարկությունները:

Բնական պաշարները պետք է բաշխվեն համընդհանուր ծրագրման շրջանակներում: Ազգային պետությունները կան պետք է ընդունեն «Հոռմեական ակումբի» գլխավորությունը, կան էլ ապրեն ջանգյալների (ջունգլի) օրենքով և պայքարեն իրենց գոյատևման համար: Միդուզն ու Ֆորեստորը ծրագրել էին այնպես, որ առաջին «փորձնական դեպքում» 1973 թվականի արաբա-իսրայելական պատերազմը ողջ աշխարհին աներկբայորեն հասկացնի, որ բնական պաշարները, օրինակ՝ նավթը, հետագայում պետք է դրվեն համաշխարհային ծրագրիչների հսկողության տակ, նկատի ունենալով, իհայկե, 300-ի կոմիտեին:

Թավիստոկի ինստիտուտը կոչ արեց դիմելու Պեչեիին՝ խորհրդատվություններ ստանալու համար, որոնց մեջ ներգրավվել էին նաև Մաք-Ջորջ Բանդին, Հուսեֆ Փերլմուտերը և դոկտոր Ալեքսանդր Քլինգը: Լոնդոնից Պեչեին մեկնում է Սախաակ տուն, որտեղ հանդիպում է նախագահի և նրա աշխատակազմի հետ: Այնուհետև այցելում է ԱՄՆ-ի Պետդեպարտամենտ, որտեղ խորհրդակցում է պետական քարտուղալի¹, Պետդեպարտամենտի հետախուզական ծառայության ղեկավարների և քարտրակահան ծրագրման պետական խորհրդի հետ: Արդ՝ ԱՄՆ-ի կառավարությունն ի սկզբանե քաջատեղյակ է եղել իր երկրի վերաբերյալ 300-ի կոմիտեի ծրագրերին: Ահա և պատասխանը հաճախ տրվող հարցի. «Ինչու՞ է մեր կառավարությունը «Հռոմեական ակումբին» բույլ տալիս քայքայիչ գործունեություն ծավալել Միացյալ Նահանգներում»:

Վարքերի տնտեսական և դրամական քաղաքականությունը այստացումն էր Մեծ Բրիտանիայի ֆինանսների նախարար, 300-ի կոմիտեի անդամ սրբ Ջեֆրի Հուսի քաղաքականության: Սա մի օրինակն է այն բանի, թե ինչպես Բրիտանիան կառավարել է Միացյալ Նահանգները 1812 թ. պատերազմի ժամանակից և շարունակում է այդ երկիրը վերահսկել 300-ի կոմիտեի միջոցով:

Իսկ որո՞նք են նպատակները այդ ընտրյալ խմբի՝ լուսավորյալների («Մորիայի նվաճող քամին»)՝, Դիոնիսոսի՝ պաշտամունքի, Իսիսի՝ պաշտամունքի, կաթարների⁵, բոգոմիլների՝ ժառանգորդները: Այդ ընտրանու անդամները, որոնք իրենց նաև կոչում են «Օլիմպոսցիներ»

¹ Պետական քարտուղարը ղեկավարն է Պետական դեպարտամենտի, որը կատարում է արտաքին գործոց նախարարության գործառնություններ (Վ. Ա.):

² Մորիան այն բնույթն է, որտեղ հրեաների նախահայր Աբրահամը պետք է գոհեր իր որդի Իսահակին, և որտեղ կատուցվել էր Երուսաղեմի (Սողոմոնի) սաճարը (Վ. Ա.):

³ Գինու հեթանոսական աստվածը: Ըստ Հոմերոսի՝ մոլեգնուտ աստված: Ի պատիվ Դիոնիսոսի կամ Բաքոսի (Վակիսի) կատարվում էին զանազան սոնախմբություններ (վակիսանալիաներ), որոնք ուղեկցվում էին սանձարժակություններով, հարբեցողությամբ ու անառակությամբ (Վ. Ա.):

⁴ Իսիսը կամ Իսիդան (Իզիդան) հին եգիպտացիների կյանքի և առողջության աստվածուհին էր: Սրա պաշտամունքը նշվում էր անառակությամբ. ամուսնացած կանայք մի քանի գիշեր Իսիսի տաճարի շրջակայքում կենակցում էին այդց հետ: Իսիսի քրմերը հռչակված էին հեշտասիրությամբ, կսիսարդությամբ և գուշակություններ անելով (Վ. Ա.):

⁵ Կաթարները (հուն. մաքուրներ) 11-13-րդ դդ. Արևմտյան Եվրոպայում տարածված աղանդի հետևորդներ էին: Նրանք նյութական աշխարհը համարում էին ստատանայի ստեղծվածք, քննադատում էին կաթոլիկ հոգևորականությանը (Վ. Ա.):

⁶ Առաջնորդ Բոգոմիլի անունից: 10-14-րդ դդ. Բալկաններում տարածված հերետիկոսական շարժում: Բռնկվել է Թրակիա և Մակեդոնիա գաղթեցված պավլիկյանների ազդեցությամբ (Վ. Ա.):

(սրանք հիբուսվի հասվատում են, որ իրենց դիրքով ու գործությամբ հավասար են Օլիմպոսի առաուպելական աստվածներին, և իրենց, ինչպես որ նրանց աստված Լյուցիֆերը, մեր ճշմարիտ Աստծուց վեր են դրել), հաստատ հավատում են, թե իրենք, ըստ աստվածային իրավունքի, կոչված են իրագործելու հետևյալ բաները.

1. Հաստատել ՀամՄԻԿատի վարչաձև՝ Համաշխարհային նուրկարգ, իր միավորյալ եկեղեցով և փողային համակարգով, որոնք ենթակա կլինեն իրենց իրավասությանը: Քչերը գիտեն, որ ՀամՄԻԿատն իր «Եկեղեցին» սկսել է ստեղծել 1920-30-ական թվականներին, քանի որ հասկանում է կրոնական հավատի մեջ հոգու հանգստություն գտնելու մարդկության արևմտյանը, ուստի և հիմնել է «եկեղեցական» կազմակերպություն, որ այդ հավատը դնի իրեն ցանկալի հունի մեջ:

2. Լյուվին ավերել ազգային ինքնագիտակցությունը և ազգային արժանապատվությունը:

3. Կործանել կրոնները, հատկապես՝ քրիստոնեությունը, միակ բացառությամբ ՀամՄԻԿատի ստեղծած վերոհիշյալ կրոնի:

4. Հսկողություն հաստատել առանց բացառության յուրաքանչյուր մարդու վրա՝ գիտակցության կառավարման միջոցների օգտագործմամբ, ինչպես նաև Բժեզինսկու ասած «տեխնոտրոնիկայի» միջոցով, ուր կստեղծի մարդանման ոտքոտներ և ահաբեկման այնպիսի համակարգ, ինչի համեմատությամբ Ֆելիքս Չերժինսկու «կարմիր տեռորը» մանկական խաղ կերևա:

5. Լյուվին դադարեցնել ամեն տեսակ արդյունաբերության զարգացումը և միջուկային կայաններում էլեկտրաէներգիայի արտադրությունը այսպես կոչված «զույակաձև աճով հետադարձաբերական հասարակության» մեջ: Բացառություն կլինեն համակարգչային արդյունաբերությունը և սպասարկման ոլորտը: ԱՄՆ-ի պահպանված արդյունաբերությունը կփոխադրվի Մեքսիկայի պես երկրներ, որոնցում լիովի ստրկական աշխատուժ կա: Գոյծագորիկները, որոնք կհայտնվեն արդյունաբերության կործանումից հետո, կան կդառնան հելոին ու կոկաին գոյծածող թմրամուկներ, կան էլ կդառնան ոչնչացման գործընթացի վիճակագրության թվանշաններ, գործընթաց, որն այսօր հայտնի է «Գլոբալ-2000» անվամբ:

6. Օրինականացնել թմրանյութերն ու պոռնկագրությունը (պոռնոգրաֆիան):

7. Կրճատել մեծ քաղաքների բնակչությունը՝ ըստ Կամբոջայում Պոլ Պոտի բռնակարգի մշակած բեմաքքի (սցենարի): Հետաքրքրական է, որ ցեղասպանության ծրագրերը Պոլ Պոտի համար մշակվել են Միացյալ Նահանգներում՝ «Հոմեոնական ակումբի» հետազոտական կենտրոններից մեկում: Հետաքրքրական է նաև, որ Կոմիտեն ներկայումս ձգտում է Կամբոջայում իշխանության գլուխ կանգնեցնել այուպու-

տական մարտասպաններին:

8. Գաղարեցնել գլխահետազոտական բոլոր աշխատանքները, բացառությամբ Կոմիտեի օգտակար համարածների: Հիմնական ջանքերը պետք է ուղղված լինեն խաղաղ նպատակներով միջուկային էներգիայի օգտագործման դեմ: Առանձնակի ատելություն են հարուցում ջերմամիջուկային սառը սինթեզի փորձերը, որոնք ներկայումս ամեն ձևով փարկաբեկվում և ծաղրի են առնվում Կոմիտեի և նրան ենթարկյալ մամուլի կողմից: Ջերմամիջուկային սառը սինթեզի հիման վրա ռեակտորների ստեղծումը հիմնահատակ կաներ «բնական սահմանափակ պաշարների» մասին Կոմիտեի հայեցակարգը: Այդպիսի էներգիական կայանքների օգնությամբ (դրանց ճիշտ օգտագործման դեպքում) կարելի է ամենատնտեսական հանրապարից ստեղծել ուզածը և ունենալ: Ջերմամիջուկային սառը սինթեզի ռեակտորների հնարավորությունների հիրավի անսահման են, և դրանք կայտոլ են այնպիսի բարիքներ բերել, որոնց մասին մարդիկ դեռևս նույնիսկ աղոտ հասկացողություն չունեն:

9. Ջարգացած երկրներում՝ սահմանափակ պատերազմների, իսկ երրորդ աշխարհի երկրներում՝ սովի և հիվանդությունների միջոցով մինչև 2000 թ. իրագործել 3 միլիարդ այնպիսի մարդկանց ոչնչացումը, որոնց նրանք անվանում են «անօգուտ հացակերներ»: Այս կարգի կապակցությամբ 300-ի կոմիտեն Սայբուս Վենսից՝ հանձնարարել էր զեկուցում գրել այն մասին, թե ինչպես կարելի է լավագույնս իրագործել այդ ժողովրդասպանությունը: Գրվածքը, որի վերնագիրն էր «Հաշվետվություն՝ Գլխավ 2000», որպես գործողության ուղեցույց հավանության է արժանացել և ընդունվել ԱՄՆ-ի կառավարության կողմից՝ ի դեմս նախագահ Քարտերի, ինչպես նաև ԱՄՆ-ի Պետական դեպարտամենտի կողմից՝ ի դեմս այն ժամանակվա պետքարտուղար Էդվին Մասկիի: Ըստ «Գլխավ 2000»-ի դրույթների՝ ԱՄՆ-ի բնակչությունը մինչև 2050 թ. պետք է կրճատվի մոտ 100 միլիոն մարդով:

10. Թուլացնել ազգի բարոյական ոգին և բարոյալքման հասցնել բանվոր դասակարգին՝ զանգվածային գործազրկություն ստեղծելով: «Հռոմեական ակումբի» վարած արդյունաբերության գրոյական աճի քաղաքականության հետևանքով աշխատատեղերի կրճատման հետ բարոյալքվող և հիասթափվող բանվորները իրենց կտան խմիչքի ու բնրանյութերի: Ռոք երաժշտության և թմրանյութերի ազդեցությունից զրգռված երիտասարդությունը խռովություն կբարձրացնի գոյություն ունեցող կարգի դեմ, ինչի հետևանքով կխախտվեն և ի վերջո կբանդվեն ընտանիքի հիմքերը: 300-ի կոմիտեն Թավիստակի ինստիտուտին

¹ ԱՄՆ-ի նախագահի օգնականը (Վ. Ա.):

հանձնարարում է այդ նպատակներին հասնելու ծրագրի նախագիծ սրատրաստել: Թավիստոկն այդ աշխատանքը իր հերթին հանձնարարում է Ստենֆորդի համալսարանին, որտեղ պրոֆեսոր Ուիլիս Հարմոնի ղեկավարությամբ կազմվեց այդ ծրագիրը, ուր հետո հայտնի դարձավ «Ջրհուսի դարաշրջանի դավադրությունը» անվամբ:

11. Թույլ չտալ, ուր ժողովուրդներն իրենք որոշեն իրենց ճակատագիրը՝ դրա համար արևեստականորեն ստեղծելով զանազան ճգնաժամային իրավիճակներ՝ այդ ճգնաժամերի հետագա «կառավարման» լծակով: Սա այն աստիճան կթողացնի և կբարոյալքի բնակչությանը, որ ընտրության շափագանց լայն հնարավորությունների պայմաններում մարդկանց զանգվածները պարզապես անտարբերության մեջ կընկնեն: ԱՄՆ-ում արդեն ստեղծվել է Արտակարգ իրավիճակների կառավարման դաշնային գործակալություն (FEMA): Հետագա շարադրանքի ընթացքում ավելի ընդարձակ տեղեկույթ կտրվի սրա մասին:

12. Ստեղծել պաշտամունքի նոր առարկաներ և շարունակել սատարումը եղած պաշտամունքների, որոնք ներառում են ուրք երաժշտության այնպիսի գանգատերների, ինչպիսին է կեղտոտ այլասերունդ (դեգեներատ) Միք Ջագերի «Ռոլինգ Սթունգ» խումբը (որն առանձնահատուկ հարգանք է վայելում եվրոպական «Սև արիստոկրատիայի» շրջանում), ինչպես նաև Թավիստոկի ստեղծած բոլոր ռոքախմբերի՝ «Լ՛իթլզ»-ից սկսած:

13. Շարունակել քրիստոնեական հիմքայնության (ֆունդամենտալիզմի)¹ պաշտամունքի տարածումը, որը հիմնել է Բրիտանիայի «Օստինդական ընկերության» կամակատար Դարբին: Իրականում այդ պաշտամունքը կնպատակամղվի Իսրայելի սիոնիստական պետության ուժեղացմանը, որը կարվի «աստվածընտիր ժողովրդի» մասին առասպելի միջոցով պաշտամունքի հետևորդներին հրեաների հետ նույնականացնելով, ինչպես նաև մեծագումար դրամական նվիրատվություններով, ինչը պաշտամունքի հետևորդները սխալմամբ հավատքի բարի գույժ են համարում՝ կարծելով, թե դրանք ծառայելու են քրիստոնեության զույացմանը:

14. Նպատակել կրոնական այնպիսի պաշտամունքների տարածմանը, ինչպիսիք են «Մուսուլման եղբայրները», զանազան հոսանքների սրատկանող իսլամական հիմքայնականները (ֆունդամենտա-

¹ Հասկացությունը ձևականորեն նշանակում է վերադարձ դեպի սկզբնական ակունքները և ներկայիս բոլոր խնդիրների լուծման որոնում գուտ կրոնական հավատալիքների ոգով (Վ. Ա.):

լիստները), սիբիականությունը, ինչպես նաև աջակցել սպանությունների վերաբերյալ այնպիսի գիտափորձերի կատարմանը, որպիսիք նկարագրվում են Ջիմ Չոնսի «Մեմի որդիները» գրվածքում: Պետք է նշել, որ հանգուցյալ այսթուլա Հոմեյնին¹ Բրիտանիայի հետախուզական ծառայության զինվորական հետախուզության 6-րդ բաժնի (որը հայտնի է ՄԻ-6 անունով) դրածոն էլ, ինչի մասին 1985 թ. գրել են «Իսկապես ի՞նչ է տեղի ունեցել Իրանում» աշխատության մեջ:

15. Տարածել ամբողջ աշխարհում «կրոնական ազատագրման» գաղափարները՝ նախտակ ունենալով քայքայել գոյություն ունեցող կրոնները և հատկապես քրիստոնեությունը: Սա սկսվեց «ազատագրման ճիզվիտական աստվածաբանությունից», որը հանգեցրեց Նիկարագուայում Սամուսայի վարչակարգի անկմանը, իսկ այսօր կործանվում են Սալվադորը (որն արդեն 25 տարի է, ինչ «քաղաքացիական սլատերագմի» կացության մեջ է), Կոստա Ռիկան և Հունդուրասը: «Ազատագրման աստվածաբանություն» կոչվածը տարածող առավել գործուն կազմակերպություններից մեկն է համայնավարամետ (կոմունիստամետ) «Մարիա Քնոլի առաքելությունը (միսիան)»: Մրանով է բացատրվում գանգվածային լրատվության միջոցների սևեռուն ուշադրությունը «Մարիա Քնոլի միանձնուհիներ» անվանյալ 4 կանանց սպանության հանդեպ, որը մի քանի տարի առաջ կատարվել էր Սալվադորում:

Այդ չորս միանձնուհիները համայնավարների (կոմունիստների) ցուցումով քայքայիչ աշխատանք էին կատարում, և նրանց գործունեությունը մանրամասնորեն արտացոլված է Սալվադորի կառավարության փաստաթղթերում: Ամերիկյան լրատվական գործակալություններն ու մամուլը կտրականապես հրաժարվեցին հրապարակել կամ մեկնաբանել Սալվադորի կառավարության ունեցած բազմաթիվ փաստաթղթերը, որոնց մեջ կային այն բանի ապացույցները, թե իսկապես ինչով են այդ երկրում գրադվել «Մարիա Քնոլի առաքելության» միանձնուհիները: Մարիա Քնոլը գործում է շատ երկրներում. նա առաջատար դեր է կատարել Ռոդեզիայում, Մոզամբիկում, Անգոլայում և Հարավային Աֆրիկայում համայնավարության (կոմունիզմի) տարածման համար:

16. Ստեղծել համընդհանուր ճգնաժամ և հարյուցել համընդհանուր քաղաքական քաոս:

17. Հսկողության տակ առնել Միացյալ Նահանգների այտաքին ու

¹ 1979 թ. Հոմեյնին, տարագրությունից վերադառնալով Իրան, գլխավորեց ժողովրդական հեղափոխությունը: Շահը՝ Ռեզա Փեհլևին, փախավ արտասահման: Իրանը դարձավ իսլամական հանրապետություն, իսկ Հոմեյնին՝ նրա փաստական ղեկավարը: ԽՍՀՄ կենտրոնական հեռուստատեսության քաղաքական առաջատար մեկնաբան Բովինը նրան անվանեց «անցյալից արձակված և դեպի ապագան սլացող (հրագենի) ոսկե գնդակ»: Այսթուլան Իրանի շիաների հոգևոր բարձրագույն տիսոդոսն է (Վ. Ա):

ներքին ուղջ քաղաքականությունը:

18. Ըստ ամենայնի աջակցել վերագրային կազմակերպություններին, ինչպիսիք են Սիավորված ազգերի կազմակերպությունը, Միջազգային արժույթի հիմնադրամը, Միջազգային հաշվարկների քանկը, Հաշտարար դատարանը, այլև կարելվոյն չափ նվազեցնել տեղական հիմնարկների ազդեցությունը՝ աստիճանաբար ի չիք դարձնելով նրանց դերը կամ նրանց դնելով ՄԱԿ-ի հովանու ներքո:

19. Քայքայիչ գործակալներ բնավորել բոլոր կառավարությունների մեջ և դրանց ներսից վարել երկրների ինքնիշխան ամբողջականությունը քանդելու գործունեություն:

20. Կառուցել ահաբեկության համաշխարհային մեքենա և բա-նակցություններ վարել ահաբեկիչների հետ ամենուրեք, որտեղ որ ահաբեկչական գործողություններ են կատարվում: Պետք է հիշել, որ հենց Բենիտո Կրաքսին է Իտալիայի ու ԱՄՆ-ի կառավարություններին համոզել, որ բանակցեն «Կարմիր բրյուզազների» հետ, ուսմք փախցրին վարչապետ Մորոյին և գեներալ Դոցիերին: Ի դեպ ասենք, որ գեներալ Դոցիերը հրաման էր ստացել չիրապարակել գլխին եկածը: Եթե նա խախտի լուրջությունը, ապա նրանից, անտարակույս, սոսկալի «խրատական օրինակ» կշինեն՝ նման նրան, որ Քիսինջերը սարքեց Ալբո Մորոյից, Ալի Բուտոյից ու գեներալ Ջիյա Ռյ Հակից:

21. Վերահսկողություն հաստատել ԱՄՆ-ի կրթության ոլորտի վրա՝ լիովին ու վերջնականապես այն խորտակելու նպատակով:

Այս նպատակներից շատերը, որոնք առաջին անգամ թվարկել են 1969-ին, կան այլեւս կատարվել են, կան շուտով կկատարվեն: 300-ի կոմիտեի ծրագրում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում էությունը նրա տնտեսական քաղաքականության, որը, ամբողջությամբ վերցրած, հիմնված է անգլիացի գլուղական քահանայի որդի Մալթուսի ուսմունքի վրա: Նա առաջ գնաց և հայտնի դարձավ Բրիտանիայի Օստինդական ընկերության շնորհիվ, որը նախօրինակ է ծառայել 300-ի կոմիտեի ստեղծման համար:

Մալթուսը պնդում էր, որ մարդկության առաջընթացը որոշվում է տվյալ քանակությամբ մարդկանց գոյությունն ապահովելու երկրագնդի բնական կարողությամբ, իսկ այդ շեմն անցնելուց հետո երկրի բնական սահմանափակ պաշարները այրագորեն կսպառվեն: Եթե այդ բնական պաշարներն օգտագործվեն, ապա անհնար կլինի դրանք վտխարինել կամ վերականգնել: Ուստի, եզրակացնում է Մալթուսը, անհրաժեշտ է բնակչության անը սահմանափակել նվազող բնական պաշարների բավարարության համեմատ: Կարիք չկա խոսելու այն մասին, որ ընտրախավը թույլ չի տա իր գոյությունը դնել «անօգուտ հացակերների» թվի սրընթաց աճի վտանգի տակ և, հետևաբար, ձեռնամուխ կլինի մարդ-

կանց ջոկելու՝ մաղելու գործին: Ինչպես նշել են առջևում, «ջոկման» գործընթացն արդեն սկսվել է, և այն կատարվում է «Ջեկուցում՝ Գլոբալ 2000»-ի մեջ գրանցված եղանակներով:

Կոմիտեի տնտեսական ծրագրերի բոլոր ուղղությունների տանում են դեպի Մալթոսի և «Հռոմեական ակումբից» սնուցվող մոայլ տնտեսագետներից մեկի՝ Ֆրեդերիկ ֆոն Հայեկի խաչմերուկը: Ավստրիայում ծնված ֆոն Հայեկը երկար ժամանակ գտնվում էր Դեկո Թեկնիկերի հովանավորության տակ, և հիմա նրա տեսությունները բավականին լայն տարածում են գտել ԱՄՆ-ում: Ըստ ֆոն Հայեկի, ԱՄՆ-ի տնտեսության հիմքում պետք է դրվեն՝ ա) քաղաքային սև շուկաները, բ) հունկոնգյան տիպի արդյունաբերական ոչ մեծ ձեռնարկությունները, որոնցում կիրառվում է աշխատանքի քրտնաքամ եղանակը, գ) գրոսաշրջային առևտուրը, դ) սզատ ձեռնարկչության գոտիները, որանցում սպեկուլյանտներին տրված են գործողությունների լիակատար սզատություն, և որանցում կարող է ծաղկել թմրանյութերի վաճառքը, ե) արդյունաբերական արտադրության դադարեցումը, զ) ատոմային բոլոր էլեկտրակայանների փակումը:

Ֆոն Հայեկի գաղափարները լիովին համապատասխանում են «Հռոմեական ակումբի» գաղափարներին: Ըստ երևույթին այս է սլատճառը, որ Ամերիկայի աջ շրջաններում ջանադրաբար աջակցում են նրան: Ֆոն Հայեկի պատմուճանը հիմա չափափորձում է նոր, ավելի երիտասարդ տնտեսագետ Ջեֆրի Սաքսը, որը Լեհաստան ուղարկվեց ֆոն Հայեկի սկսած գործը շարունակելու համար: Հարկ է հիշել, որ «Հռոմեական ակումբը» տնտեսական ճգնաժամ նյութեց Լեհաստանում, ինչը հանգեցրեց երկրի քաղաքական ասրսկայունացմանը: Եիշտ նույնպիսի, թող թույլ տրվի ասել, տնտեսական պլանավորում կկապվի Ռուսաստանի վզին. բայց եթե դրան հակառակ կանգնի մի ուժեղ ընդդիմություն, ապա արագորեն կվերականգնվի գնային լրավճարների (դոտսցիաների) հին համակարգը:

Լ 300-ի կոմիտեն «Հռոմեական ակումբին» հրամայել է, որ լեհական սզզայնականությունն օգտագործի որպես Կաթոլիկ եկեղեցին քանդելու և խորհրդային զինագրավ (օկուպացիոն) գորքերի համար ճանապարհի հարթելու գործիք: «Համերաշխություն» շարժումը ստեղծել է 300-ի կոմիտեի անդամ Ջրիգն Բժեզինսկին¹, որն էլ դրել է այդ «արհմիության» անունը, ինչպես նաև նշանակել է նրա գործարարյնների ու կազմակերպիչներին: «Համերաշխությունը» արհմիութենական շար-

¹ 1977-81 թթ. ԱՄՆ-ի նախագահի օգնականը սզզային անվտանգության գծով (Վ. Ա.):

ժում չէ, թեև Գղանսկի նավաշինարանների բանվորներն օգտագործվել են դրան այդպիսի երևութականությամբ հարյուրկու համար: Սա, ավելի ճիշտ, բարձր մակարդակի ՔԱՂԱՔԱԿԱՆ կազմակերպություն է, որն ստեղծվել է ՀամՍԻԿառ-ի գալուստը նախապատրաստելու որոշակի միջոցառումների իրականացման համար:]

«Համերաշխության» առաջնորդների մեծ մասը Օդեսայի հրեա բոլշևիկների հետնորդներն էին և իրենց չէին դրսևորում որպես համայնավարության հակառակորդներ: Սույն վաաստր հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչու էին ամերիկյան զանգվածային յուստվամիջոցներն այդքան ուշադրություն նվիրում այդ շարժմանը: Պրոֆեսոր Սաքսը մի քայլ առաջ տարավ ողջ գործընթացը՝ ԽՍՀՄ-ի բելադրանքից նոր-նոր ազատագրված Լեհաստանի համար «ապահովելով» նոր տնտեսական ստրկացում: Այժմ Լեհաստանը կդառնա Միացյալ Նահանգների տնտեսական ստրուկը: Կատարվեց սուկ տիրոջ փոփոխություն:

Բժեզիսկին հեղինակ է մի գրքի, ինչը հարկ է, որ կարդա իր երկրի ապագայով մտախոգ ամեն ամերիկացի: Այն կոչվում է «Տեխնոտրոնային դարաշրջան» և գրվել է «Հոռմեական ակումբի» պատվերով: Գիրքը բաց շարադրանքն է այն միջոցների ու եղանակների, որոնք օգտագործվելու են Միացյալ Նահանգների կառավարելու համար: Սրա մեջ հիշատակվում է նաև կենսապատճենման (կլոնավորման) և «ոտրոտակերպների» (ոտրոտոլոների) մասին: Սրանք այնպիսի էակներ են, որոնք գործում են մարդու պես և արտաքուստ նման են մարդու, բայց մարդ չեն:

Բժեզիսկին 300-ի կոմիտեի անունից հայտարարում է, թե ԱՄՆ-ը մտնում է «մի դարաշրջան, որը նման չէ նախադրանքից ոչ մեկին. մենք ընթանում ենք դեպի տեխնոտրոնային դարաշրջան, սրբ կարող է հեշտությամբ տանել դեպի բռնապետություն»: 1981 թ. լիակատար հաշվետվություն են հրապարակել «Տեխնոտրոնային դարաշրջանի» մասին և այդ գիրքը քանիցս հիշատակել են իմ տեղեկագրերում:

Բժեզիսկին այնուհետև ասում է, որ մեր հասարակությունն «ընկել է զվարճությունների և զանգվածային ներկայացումների (մարզական մրցախաղերի մասին անվերջ հեռուստահաղադրումներ) վրա հիմնված լրատվական հեղափոխության հորձանուտը, որոնք թմրանյութերի և սմի տեսակ են գնալով ավելի անօգուտ դարձող զանգվածների համար»: Արդյո՞ք Բժեզիսկին մի հերթական կանխատես ու մարզարե էր: Կարյո՞ղ էր նա կանխատեսել ապագան: Իհարկե՝ ՈՉ: Այն, ինչ նա գրել է իր գրքում, սուկ պատճենն է 300-ի կոմիտեի ծրագրի, որը «Հոռմեական ակումբին» էր տրվել իրագործելու համար: Գլխտ չէ՞, որ 1991 թ. նոտերքին մենք այսին ունեինք «Բնակչության անօգուտ մի զանգված»: Կարելի է ասել, որ 30 միլիոն գործազուրկ և 4 միլիոն անտուն մարդիկ «անօգուտ զանգված» են կամ գոնե դրա միջուկն են:

Ի լրումն «ժողովրդի ավիոն» կրոնի¹, որը, ինչպես խոստովանել են Լ.Էնինն ու Մարքսը, անհրաժեշտ էր, հիմա բուսել են ավիոնի նոր կա-
կաչներ²՝ մարզական զանգվածային տեսարանների, սեռական անա-
ռակ հակումների և ոռք երաժշտության ձևերով ու կերպերով: Աճել է թմ-
րանույների մի ամբողջ սերունդ: Սանձարձակ սեքսի քարազուրյամբ և
թմրամոլության տարածմամբ ջանում են մարդկանց ուշադրությունը
շեղել իրականությունից: «Տեխնոտրոնային դարաշրջան»-ում Բժե-
զինակին մարդկային «զանգվածների» մասին խոսում է այնպես, ասես
նրանք անշունչ առարկաներ լինեն: Գուցե մենք հենց այդպես էլ երևում
ենք 300-ի կոմիտեի աչքին: Բժեզինակին շարունակ խոսում է մեզ՝
«զանգվածներիս» վրա հսկողություն հաստատելու անհրաժեշտության
մասին: Մի տեղ նա «բերանից թոցնում» է. «Այդ ժամանակ կմեծանան
անհատի վրա սոցիալական ու քաղաքական հսկողություն հաստատե-
լու հնարավորությունները: Շուտով հնարավոր կդառնան գրեթե անընդ-
մեջ հսկողություն իրականացնելը յուրաքանչյուր քաղաքացու վրա, և
համակարգչային մշտապես նորացվող անձնական թղթապսնակ-կայ-
քեր (ֆայլեր) կիրառելը, որոնք սովորական տեղեկանյութից բացի
կպարունակեն յուրաքանչյուր մարդու առողջության վիճակի ու վարքի
մասին ամենածածուկ մանրամասները»:

«Պետական համապատասխան մարմինները կկարողանան վայրկե-
նապես օգտվել այդ կայքերից: Իշխանությունը կկենտրոնացվի նրանց
ձեռքում, ովքեր վերահսկում են տեղեկանյութը: Իշխանության եղած մար-
մինները կփոխարինվեն նախաճգնաժամային իրավիճակների կառա-
վարման հիմնարկներով, սրոնց խնդիրը կլինի հնարավոր սոցիալական
ճգնաժամների նախականիսիչ հայտնաբերումը և այդ ճգնաժամերի կառա-
վարման ծրագրերի մշակումը»: (Այստեղ պարունակվում է Արտակարգ
իրավիճակների կառավարման դաշնային գործակալության կառուցված-
քի նկարագրությունը, մի գործակալություն, որ հայտնվեց շատ հետո:)

«Դա ծնունդ կտա հետագա մի քանի տասնամյակի միտումներին,
որոնք կհանգեցնեն ՏԵԽՆՈՏՐՈՆԱՅԻՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻՆ՝ ԳԻԿ-
ՏԱՏՈՒՐԱՅԻ, որի օլոք գրեթե յլովին կվերացվեն ներկայումս գոյու-
թյուն ունեցող քաղաքական ընթացակարգերը: Վերջապես, եթե նայենք
առաջ՝ մինչև դարի վերջը, ապա ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՔԻՍԻԱ-

¹ Գիտական կոմունիզմի հիմնադիր և պրոլետարիատի ուսուցիչ ստտանապաշտ
Մարքսի ասածն է. «Կրոնը ժողովրդի ավիոնն է», որն ընկնելով աստվածամերժների ու
համայնավարների բերանը՝ տարվոխվեց աշխարհով մեկ (Վ. Ա.):

² Կակաչի հյութից է պատրաստվում ավիոնը (օպիումը), որը ոչ միայն քնաբեր և
ցավամոք դեղ է, այլև թմրանյութ (Վ. Ա.):

ԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԳ-ԿԱՆՑ ՎՐԱ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԱՓՈՐՁԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ, ՆԵՐԱՌՅԱԼ ԱՅՆՊԻՍԻ ԷԱԿՆԵՐ ՍՏԵՂԾԵԼԸ, ՈՐՈՆՔ ՈՉ ՄԻ-ԱՅՆ ԿԳՈՐԾԵՆ, ԱՅԼԵՎ ՄԱՐԳԿԱՆՑ ՊԵՍ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՆԵՆ, ԿԱՐՈՂ ԵՆ ՄԻ ՇԱՐՔ ԼՈՒՐՉ ՀԱՐՑԵՐ ՀԱՐՈՒՅՅԵԼ»:

Բժեզիմակին այս ամենը գրել է ոչ թե որպես մասնավոր անձ, այլ որպես նախագահ Քարտերի՝ ազգային անվտանգության գծով խորհրդակցան, որպես «Հոռմենական ակումբի» առաջատար անդամ, 300-ի կոմիտեի և «Միջազգային հարաբերությունների խորհրդի» անդամ, ինչպես նաև լեհական հիմնավորց «Սև արխատկրատիայի» անդամ: Նրա գրքում բացատրվում է, թե Ամերիկյան ինչպես պետք է հրաժարվի իր արայունարերական հիմքից և ոտք դնի այնտեղ, որը Բժեզիմակին անվանել է «միանգամայն նոր պատմական դարաշրջան»:

«Ամերիկային եզակի դարձնողը ապագան իր վրա փորձելու նրա ձգտումն է՝ լինի փոփարվեստ՝ թե ԼՍԳ²: Այսօր Ամերիկյան ստեղծագործական հանրություն է, այն ժամանակ, երբ մյուսները, գիտակցաբար թե անգիտակցաբար, ընդօրինակողներն են»: Նա պետք է ասել, որ Ամերիկյան ըստ էության զինափորձարան է 300-ի կոմիտեի քաղաքականության և գործելաձևերի համար, որոնք ուղղակի տանում են դեպի գոյություն ունեցող կարգի վերացում և Համաշխարհային միասնական կառավարություն՝ Համաշխարհային նոր կարգի հաստատում:

«Տեխնոտրոնային դարաշրջանի» գլուխներից մեկում բացատրվում է, որ ճարտարարվեստի նոր ձևերի զարգացումը կհարուցի ուժգին առճակատում, ինչպես նաև սոցիալական ու միջազգային լարվածության սաստկացում: Որքան էլ տարօրինակ է, արդեն զգում ենք, որ մեզ մշտապես հետևում են, և դրանից խիստ լարվում ենք: Հսկման կենտրոններից մեկը Կուբայում հիմնված Լուրդեսի բազան է: Նման մի կենտրոն էլ Բոյուսելում (Բելգիա) գտնվող ՆԱՏՕ-ի կենտրոնակայանն է, ուր տեղակայված է «666» կողահամարը կրող մի վիթխարի համակարգիչ, որը կարող է պահել Բժեզիմակու գրքում հիշատակված բոլոր տեսակի տվյալները, ինչպես նաև կարողություն ունի անկրաժեշտության դեպքում տվյալների պահոցն ընդլայնելու ևս մի քանի միլիարդ մարդու համար: Բայց, հուշվի առնելով «Գլոբալ 2000»-ով նախատեսված ժողովրդասպանության քաղաքականությունը, ավելի հավանական է, որ այդ պաշարներն օգտագործելու անհրաժեշտություն չի առաջանա:

ԱՄՆ-ում տվյալների այդպիսի հիմնապահեստ օգտագործելը շատ

¹ Կերպարվեստի ուղղություն (Վ. Ա.):

² Թմրանյութի տեսակի հապավված անուն (Վ. Ա.):

հեշտ կլինի. բավական է «666» համակարգչի բերանը տալ վարորդական վկայականի կամ սոցիալական ապահովագրության քարտի համարը, և Բժեզինսկու ու 300-ի կոմիտեի նրա գործընկերների ասած հսկողությունն ապահովված կլինի: Դեռևս 1981 թ. Կոմիտեն բոլոր կառավարություններին, ներառյալ ԽՍՀՄ կառավարությունը, նախազգուշացրել էր, որ «Քանոս կսկսվի, եթե 300-ի կոմիտեն շտանձնի ՀամՆորԿարգ հաստատելու նախապատրաստման լիակատար վերահսկողությունը: Վերահսկողությունը կիրականացվի մեր Կոմիտեի ձեռքով, ինչպես նաև համընդհանուր ծրագրման և ճգնաժամերի կառավարման միջոցով»:

Ես այս փաստերի մասին հայտնել եմ մի քանի ամիս անց այն բանից հետո, երբ 1981 թ. դրանց վերաբերյալ տեղեկանյութ ստացա: Այն ժամանակ հայտնաձու փաստերից մեկն էլ այն էր, որ ՌՌԻՍԱՍՏԱՆԸ ՀՐԱՎԻՐՎԵԼ ԷՐ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄՄԻԿառ ՀԱՍՏԱՏԵԼՈՒՆԱ ԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ:

Երբ 1981 թ. գրում էի այս բոլոր բաների մասին, դավադիրների համընդգրկուն ծրագրերն արդեն պատրաստության նախնական փուլում էին: Հետադարձ հայացք նետելով անցած 10 տարուն՝ պարզ տեսնում ես, թե որքան արագորեն են իրականացվում այդ ծրագրերը: Եթե այդ տեղեկանյութը տազնապ առաջացրեց 1981-ին, ապա ավելի մեծ տազնապ է առաջացնում այսօր, երբ մոտենում ենք մեր այժմ սայրած Սիսցյալ Նահանգների քանդման ավարտական փուլերին: Եթե նկատի առնենք դրամավորման անսահմանափակ հնարավորությունները, մի քանի հարյուր խելքատրեստներն ու սոցիալական 5000 ճարտարագետներին, տվյալների տեղեկության շտեմարաններ ստեղծելը և աշխարհի կառավարությունների մեծ մասի վրա վերահսկողություն հաստատելը, ապա մեր առջև ուրվագծվում է շտեմնված չափերի մի հիմնախնդիր, որը ներկայումս չի կարող հաղթահարել առանձին վերցրած ոչ մի երկիր:

Ինչպես որ հաճախ պնդել եմ, մեզ բուրդիս հավատացրել են, թե այդ հիմնախնդրի արմատները Մոսկվայում են: Ուղեղներիս եռանդուն արդուկման հետևանքով իրաք հավատացել ենք, որ Ամերիկայի համար ամենամեծ վտանգը կոմունիզմն է: Բայց իրողությունը միանգամայն այլ է: Ամենամեծ սարսոնայիքը գալիս է մեր իսկ շարքերում գտնվող դավաճանների բազմությունից: Մեր Սահմանադրությունը մեզ կոչ է անում ի հայտ բերել մեր սեփական տան միջի թշնամիներին: Մեր թշնամիները 300-ի կոմիտեի սպասավորներն են, որոնք բարձր պաշտոններ են զբաղեցնում մեր կառավարման մարմիններում: Հենց Սիսցյալ Նահանգներում պետք է դիմակայենք այն խավարին, որն սպառնում է մեզ կուլ տալ: Հենց այստեղ պետք է հայտնաբերենք ու ջարդենք այդ ներքին դավադիրներին:

«Հոմեական ակումբը» նաև ուղղակիորեն մասնակցել է Սալվադորում 25-ամյա կովի սանձազերծմանը, կռիվ, որը ԱՄՆ-ի Պետդեպար-

տամենտի աշխատակից Էլիոտ Աբրամսի կազմած ավելի բնդարձակ ծրագրի անբաժանելի մասն էր: Սալվադորի ապստամբների «վերջին հարձակումը», որը, բարեբախտաբար, հաջողությամբ չպսակվեց, դրամավորել էր 300-ի կոմիտեի անդամ, Սոցիալիստական ինտերնացիոնալի առաջնորդ և Արևմտյան Գերմանիայի նախկին կանցլեր Վիլլի Բրանդը: Սալվադորը Կոմիտեի կողմից օգտագործվում էր Կենտրոնական Ամերիկան նոր Երեսնամյա պատերազմի գոտի դարձնելու համար: «Անդերի ծրագիր» անմեղ անվանումը կրող այդ խնդրի կատարումը հանձնարարվել էր Քիսինջերին:

Պետական սահմանները արգելք չեն դավադիրների համար: Օրինակ, Վիլլի Բրանդի ծրագրած «վերջին հարձակում» գործողությունը հնարավոր դարձավ այն բանից հետո, երբ նա այցելեց Ֆիլիպե Գոնսալեսին, որն այդ ժամանակ պատրաստվում էր «Հոմեական ակումբի» կողմից իրեն տրված Իսպանիայի վարչապետի դերի կատարմանը: Ինձնից ու մի քանի գործընկերներիցս բացի ոչ ոք ոչինչ չգիտեր Գոնսալեսի մասին մինչև Կուբայում նրա հայտնվելը: Գոնսալեսը Սալվադորում «Հոմեական ակումբի» կողմից օգտագործվել էր որպես հատուկ հանձնարարությունների գծով սպա և գեներալ Ֆրանկոյի մակից հետո Իսպանիայում դարձել քաղաքական իշխանության գլուխ կանգնած առաջին սոցիալիստը:

1980 թ. դեկտեմբերին Գոնսալեսը Վաշինգտոն է ժամանում սոցիալիստների հակառեյգանական (նախագահ Ռեյգանի դեմ-թարգմ.) հանդիպմանը մասնակցելու համար, որը կազմակերպել էր «Հոմեական ակումբը»: Կաստրոյի հետ Գոնսալեսի ունեցած հանդիպմանը մասնակցում էր Քաղաքական ուսումնասիրությունների ինստիտուտի խնամարկությամբ գործող ձախ ապստամբ Գիլիերմո Ունգուն: Սույն ինստիտուտն էլ, որը ձախ կողմնորոշման խելքատրեստների մեջ ամենախռտելիներից (օղիոգ) մեկն է, իր հերթին գործում է 300-ի կոմիտեի հովանու ներքո և գտնվում է Վաշինգտոնում: Ունգոյի գործողությունները անմիջաբար ղեկավարում էր հիշյալ ինստիտուտի աշխատակիցը, որը զոհվեց Կաստրոյի հետ հանդիպելու համար Վաշինգտոնից Հավանա թռչելիս տեղի ունեցած խորհրդավոր ավիաաղետի ժամանակ:

Մեզանից շատերը քաջ գիտեն, որ քաղաքական բոլոր ուղղությունները, ձախ լինեն, թե աջ, վերահսկվում են նույն մարդկանց կողմից, ինչն ապացուցում է այն փաստը, որ Ունգուն Սալվադորի աջերի առաջնորդ հանգուցյալ Նապոլեոն Գուարտեի վաղեմի բարեկամն էր: Սալվադորի ապստամբների «վերջին հարձակումը» տեղի ունեցավ Կուբայում կայացած հենց այդ հանդիպումից հետո:

Հարավային Ամերիկայի և Միացյալ Նահանգների բևեռացումը հատուկ առաջադրանք էր, որը 300-ի կոմիտեն հանձնարարել էր Քիսինջե-

րին: Մավվինյան (Ֆուլբենդյան) կղզիների համար կռիվը և դրան հաջորդած Արգենտինայի կառավարության տապալումը, ինչին հաջորդեցին տնտեսական քաոսն ու քաղաքական անկարգությունները, ծրագրել էին Քիսինջերի օգնականները, ոյտնք գործում էին 300-ի կոմիտեի առանցքային անդամ լորդ Քարինգտոնի հետ համատեղ:

ԱՄՆ-ում Կոմիտեի գլխավոր կենտրոններից մեկը՝ Կոլորադոյում գտնվող Ասպենի ինստիտուտը ևս օգնել էր նախապես ծրագրելու Արգենտինայի դեպքերը, ինչպես նաև Իրանի շահի գահընկեցությանը հանգեցրած իրադարձությունները: Լատինական Ամերիկյան ԱՄՆ-ի համար կարևորություն ունի ոչ լոկ այն պատճառով, որ մենք լատինամերիկյան երկրների հետ ռազմական բազմաթիվ պայմանագրեր ենք կնքել, այլև այն պատճառով, որ նա ամերիկյան ճարտարարվեստի և ծանր արդյունաբերական սարքավորանքի իրացման վիթխարի հնարավոր շուկա է, որը կարող էր նույն մղանք հաղորդել մեր թուլացող բազմաթիվ ընկերություններին և ստեղծել հազարավոր նոր աշխատատեղեր: Իսկ այս բանը անհրաժեշտ էր կանխել ամեն գնով, եթե դա նույնիսկ Երեսնամյա պատերազմ ծագեցներ:

Այս հսկայական կարողությունը, փոխանակ դրական լույսով դիտարկելու, 300-ի կոմիտեն ընկալեց որպես վտանգավոր սպառնալիք ԱՄՆ-ում հետարդյունաբերական զրոյական աճի ծրագրի հանդեպ և անհապաղ միջոցներ ձեռնարկեց, որպեսզի Արգենտինայից ցուցադրական օրինակ շինի լատինամերիկյան մյուս երկրների համար և նրանց ստիպի հրաժարվել ազգային ինքնագիտակցության զարգացման, անկախության և վիակատար ինքնիշխանության գաղափարներից: Սա պատճառ դարձավ, որ լատինամերիկյան շատ երկրներ ձեռնարկեցին թմրանյութերի արտադրությունը՝ որպես ապրուստ հայթայթելու միակ միջոց, ինչը միանգամայն կարող էր լինել դավալիթների գլխավոր նպատակը:

Ամերիկացիք առհասարակ քամահրանքով են նայում Մեքսիկային, և Կոմիտեն ջանում է, որ ԱՄՆ-ի բնակչությունը հենց այդպիսի վերաբերմունք ունենա այդ երկրի նկատմամբ: Մեզ համար չափազանց կարևոր է, որ փոխենք մեր պատկերացումը Մեքսիկայի և ամբողջությամբ վերցրած Հարավային Ամերիկայի մասին: Մեքսիկյան ամերիկյան բոլոր ապրանքների համար հսկայական հնարավոր շուկա է, որը կարող էր հազարավոր աշխատատեղեր ստեղծել ինչպես ամերիկացիների, այնպես էլ մեքսիկացիների համար: Մեր արտադրական կարողությունները «սահմանից հարավ» փոխադրելը և տեղի բանվորներին ստրկական աշխատավարձ վճարելը ձեռնտու չէ ո՛չ այս, ո՛չ էլ մյուս երկրին: Դա ձեռնտու է միայն «օլիմպոսցիներին»:

Մեքսիկյան իր միջուկային ճարտարարվեստի մեծ մասն ստանում էր Արգենտինայից, բայց Մավվինյան կռիվը դրան վերջ տվեց: «Հռոմեական

ակումբը» դեռ 1986 թ. որոշել էր, որ միջուկային ճարտարարվեստը զարգացող երկրներ արտահանելի դադարեցվելու է: Էժան էլեկտրատեներգիա արտադրող ատոմակայաններ ունենալով՝ Մեքսիկան կրտսնար «լատինամերիկյան Գերմանիա»: Իրադարձությունների այդպիսի զարգացումը աղետ կլիներ դավադիրների համար, որոնք 1991 թ. մոտերքին դադարեցրել էին միջուկային ճարտարարվեստի ամեն մի արտահանում, բացառությամբ Իսրայելի համար նախատեսվածների:

300-ի կոմիտեն ծրագրում է, որ Մեքսիկան մնա ավատական հողագործությամբ պարապող երկիր, ինչը հնարավորություն կտա դյուրությամբ վերահսկելու և հափշտակելու մեքսիկական նավթը: Կայուն ու բարգավաճուն Մեքսիկան ԱՄՆ-ին միայն ձեռնտու կլինի: Բայց դավադիրները հենց դրան էլ փորձում են հակազդել: Ուստի տասնամյակներ շարունակ հերյուրում են ամեն տեսակ ամբաստանություններ, տարածում են անվանարկիչ լուրեր և Մեքսիկայի դեմ վարում են ուղղակի տնտեսական պատերազմ: Մինչև նախկին նախագահ Լոպես Պոտիլյոյի լիշխանության գլուխ անցնելը և նրա կողմից բանկերի ազգայնացումը Մեքսիկան օրական 200 միլիոն դոլար էր կորցնում կապիտալի արտահոսման հետևանքով, որը կազմակերպել և կառավարում էին 300-ի կոմիտեի ներկայացուցիչները՝ Ուոլստրիտում՝ գտնվող բանկերի ու միջնորդատների ձեռքով:

Եթե ԱՄՆ-ում երկիրը կառավարեին ոչ թե քաղգործամուլները (պոլիտիկանները. անսկզբունք և զուտ անձնական շահերով առաջնորդվող քաղաքագետները-թարգմ.), այլ պետականամետ գործիչները, մենք կարող էինք աշխատել համատեղ և կարել ՀամՄիԿատի՝ Համաշխարհային նոր կարգի այն ծրագրերի ճանապարհը, որանց նպատակն է Մեքսիկան կրկին անօգնական կացության մեջ գցելը: Եթե կարողանայինք խորտակել Մեքսիկայի վերաբերյալ «Հռոմեական ակումբի» ծրագրերը, ապա դա 300-ի կոմիտեին հասցված այնպիսի շշմեցուցիչ հարված կլիներ, որ երկար ժամանակ ուշքի չէր գա: «Լուսավորյալների» ժառանգները լուրջ վտանգ են ոչ միայն Մեքսիկայի, այլև ԱՄՆ-ի համար: Մեքսիկայի հայրենասիրական շարժումների հետ ընդհանուր դիրք գտնելով՝ մենք ԱՄՆ-ում կրտսնայինք մի այնպիսի հզոր ուժ, որի հետ անհնար կլիներ հաշվի չնստել: Բայց դրա համար անհրաժեշտ են ուժեղ առաջնորդներ, իսկ հենց այդպիսիք էլ մեզ հիմա պակասում են:

300-ի կոմիտեն իր վերահսկմանը ենթակա կազմակերպությունների օգնությամբ կարողացավ ի չիք դարձնել Ռեյգանի նախագահության

¹ Փողոց է Նյու Յորքում (Մանհեթեն կղզում): Այստեղ են արժեթղթերի, խոշորագույն բանկերի վարչությունները: ԱՄՆ-ի դրամազվիսի հոմանիշն է (Վ. Ա.):

արդյունքները: Այդ մասին տես թե ինչ էր ասել «Ժառանգության հիմնադրամի» պաշտոնյա Ստյուարտ Բատլերը. «Աջերը կարծում էին, թե 1980 թ. իրենք հաղթել են, բայց իրականում տասնույ էին տվել»: Բատլերը խոսում էր այն իրավիճակի մասին, որի մեջ հայտնվեցին աջերը, երբ գլխի ընկան, որ Ռեյզանի վարչակազմում բոլոր կարևոր պաշտոնները գրավել են «Ժառանգության հիմնադրամի» հանձնարարականով «Ֆարխոսականների ընկերության»՝ նշանակած մարդիկ: Բատլերն այնուհետև ասել է, որ «Ժառանգության հիմնադրամը» աջերի գաղափարները կօգտագործի Միացյալ Նահանգների վզին ձախ արմատական սկզբունքներ փաթաթելու համար. այսինքն հենց այն արմատական գաղափարները, որոնք սրբ Փիթր Վիքերս-Հոլը՝ ԱՄՆ-ի գլխավոր ֆարխոսականը և «Ժառանգության հիմնադրամում» թիվ 1 մարդը, մի տարի շախունակ բացեիրաց քննարկում էր նախագահական ընտրություններից առաջ:

Սրբ Փիթր Վիքերս-Հոլը մնաց գործուն ֆարխոսական, թեև պահպանողական «խելքատրեստ» էր գլխավորում: Որպես զենքի արտադրության ձեռնարկությունների տեր եղող Վիքերսների՝ Բրիտանիայի խմբիշխանական (օլիգարխիական) ընտանիքի անդամ, նա ազդեցություն և իշխանություն ուներ: Վիքերսների ընտանիքը զենք էր մատակարարում կոփող երկու կողմերին Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, ինչպես նաև Հիտլերին՝ իշխանության գլուխ անցնելիս: Փիթր Վիքերս-Հոլի պաշտոնական քողարկազգեստն է Կալիֆորնիայի համալսարանին ստընթեր Քաղաքային և տարածաշրջանային զարգացման ինստիտուտը: Երկար ժամանակ նա եղել է Բրիտանիայի լեյբորիստական կուսակցության առաջնորդ և 300-ի կոմիտեի անդամ Էնտոնի Վեջևուդ Բենի հավատարմատարը:

Վիքերսն ու Բենը սերտ կապեր ունեն Թավիստոկի մարդկային հարաբերությունների ինստիտուտի՝ ուղեղաբլուկման գծով աշխարհի գլխավոր հիմնարկի հետ: Վիքերսը ճառ ասելիս արտակարգ արդյունավետորեն է օգտագործում իր թավիստոկյան պատրաստությունը: Առաջարկում ենք քննել հետևյալ օրինակը.

«Կա երկու Ամերիկա: Մեկը ծանր արդյունաբերության վրա հիմնված 19-րդ դարի հասարակությունն է: Մյուսը հին Ամերիկայի բեկորների վրա կառուցված հետարդյունաբերական աճող հասարակությունն է: Այս երկու աշխարհների միջև եղած հարաբերությունների ճգնաժամն

¹ Անգլիայի մտավորականության կազմակերպություն է: Ստեղծվել է 1884 թ.: Նպատակն էր աստիճանական բարենորոգումների միջոցով կապիտալիստական հասարակարգը վերափոխել սոցիալիստականի: Կոչվել է մ.թ.ա. 3-րդ դարի հռոմեացի գորավար Ֆարխո Սաքսիմոսի անունով, որը կիրառել է հակառակորդի բանակը հետգետե հյուծելու մարտավարություն և խուսափել է վճռական ճակատամարտից (Վ. Ա.):

էլ կծնի հաջորդ տասնամյակի տնտեսական ու սոցիալական աղետը: Այս երկու աշխարհների խոր դիմակայության մեջ են. նրանք չեն կարող գոյակցել: Հետարդյունաբերական աշխարհն ի վերջո երկրի երեսից կջնջի մյուսին»: Հիշեցնեմ, որ սույն ճառն արտասանվել է 1981-ին, և հիմա մեր տնտեսության ու արդյունաբերության վիճակից երևում է, թե որքան ճշգրիտ էր սրբ Փիթրի կանխասացությունը: Երբ մարդիկ ինձ հարցնում են, թե որքան կտևի 1991 թ. տնտեսական անկումը, ես հիշատակում եմ սրբ Փիթրի հայտարարությունները և ավելացնում եմ իմ սեփական կարծիքը, որ այդ անկումը կավարտվի 1995-96 թվականներից ոչ շուտ, ընդ որում երկիրն այլևս չի լինի 1960-70-ական թվականների մեր իմացած Ամերիկան: Այն Ամերիկան արդեն մեռել է:

Սրբ Փիթրի ճառը, արտասանվելուց անմիջապես հետո, հրապարակեցի իմ տեղեկագրում: Այդ ճառը մարգարեական էր: Բայց Ամերիկայի ապագան հեշտ էր կանխասել 300-ի կոմիտեի և նրա գործադիր մարմին «Հռոմեական ակումբի» արդեն գրած ծրագրերով: Իսկ ի՞նչ էր ասում սրբ Փիթրն իր մեղմասական (էվֆեմիստական) խոսելակերպով: Եթե վերարտադրենք մեր սովորական լեզվով, այն կնշանակի, որ ամերիկյան հին ապրելակերպը, մեր ճշմարիտ և համընդհանուր վստահություն վայելող սահմանադրական, հանրապետական կառավարման ձևը պետք է լուծարվի ՀամՆորԿարգի կողմից: Մեր իմացած Ամերիկան պետք է կամ ինքը հեռանա, կամ պետք է ոչնչացվի:

Ինչպես արդեն ասել եմ, 300-ի կոմիտեի անդամները հաճախ գործում են բոլորի աչքի առաջ: Եվ սրբ Փիթրը բացառություն չէ: Որպեսզի ամենքին հասկանալի լինի, թե ինքն «ուստից գուքա», նա ճառն ավարտել է հետևյալ արտահայտությամբ.

«Ես շատ երջանիկ եմ, որ աշխատել եմ «Ժառանգության հիմնադրամի» և նման մյուս խմբերի հետ: Իսկական ֆաբիոսականները հույս ունեն, որ «նոր աջերի» օգնությամբ կհաջողվի անցկացնել իրենց արմատական մի քանի գաղափարները: Ավելի քան տասը տարի քարոզությունը Բրիտանիայի հասարակությանը ներշնչել է, թե արդյունաբերությունը նրան դեպի անդունդն է քաշում: Այս ամենը ճիշտ է, բայց այդ քարոզության վերջնական արդյունքը եղավ բնակչության քարոյալքումը»: (Հենց այս էլ ծրագրել էին Թավիստոկի «նոր գիտության» մասնագետները):

«Այս բանը տեղի կունենա նաև Միացյալ Նահանգներում՝ տնտեսական իրավիճակը վատանալու համեմատ: Դա (քարոյալքման գործընթացը) անհրաժեշտ է մարդկանց ծանր ընտրություն անել տալու համար: Եթե ապագան ծրագրելը չլինի, կամ եթե ընտրողները խոչընդոտեն առաջընթացը, հասարակական այնպիսի քառս կսկսվի, որի չափերը հիմա դժվար է պատկերացնել: Շատ մտայլ եմ քաղաքային Ամերիկայի հեռանկարները: Դեռ հնարավորություն կա ինչ-որ բան անել

խոշոր քաղաքների համար, բայց քաղաքային բնակչությունը կկրճատվի, և արդյունաբերության հիմքը կհասնի անկման, որը կհարուցի սոցիալական ջղաձգություններ»:

Սլոբ Փիթրը ոգեկարգում էր, մեծ մո՞գ, թե՞ պարզապես մի խաբեբա բախտագուշակ, որին ուղեկցում էր բերմունքը: Անշուշտ՝ ոչ: Սլոբ Փիթրը պարզապես բայթրաձայն կարդացել էր 300-ի կոմիտեի և «Հոռմեական ակումբի» ծրագիրը, որը նախատեսում էր Միացյալ Նահանգների երբեմնի հզոր արդյունաբերության դանդաղ մահը: Սլոբ Փիթրի արած կանխասացությունների օրվանից տասը տարի հետ նայելով՝ կարող է մեկը կասկածել, որ ԱՄՆ-ի արդյունաբերությունը կործանելու 300-ի կոմիտեի ծրագրերը իրականություն են դարձել:

Ճիշտ չէ՞, որ սլոբ Փիթրի կանխասումները զարմանալիորեն ստույգ էին: Իրոք այդպես է, ընդհուպ՝ մինչև վերջին բառը: Հարկ է նշել, որ սլոբ Փիթր Վիքերսը (սլոբ Փիթր Վիքերս-Հոլի փեսան) աշխատել է Ստենֆորդի հետազոտական ինստիտուտի «Մարդու կերպարի փոխելու» գեկուցման վրա, որից վերցվել էր Ռեյզանի վարչակազմին հոված 3000 էջանոց առանցքային հանձնարարականների մեծ մասը: Ավելին, լինելով Բրիտանիայի հետախուզության Մի-6 բաժնի բայթրաստիճան սպա՝ սլոբ Փիթր Վիքերսը կարող էր «Ժառանգության հիմնադրամին» բազմաթիվ գաղտնի տեղեկանյութեր տալ: Որպես 300-ի կոմիտեի և ՆԱՏՕ-ի անդամ, սլոբ Փիթր Վիքերսն առնչություն ուներ այն բանի հետ, որ ՆԱՏՕ-ն «Հոռմեական ակումբին» հանձնարարել էր մշակել մի սոցիալական ծրագիր, որը պետք է արմատապես փոխեր Ամերիկայի զարգացման ուղղությունը: «Հոռմեական ակումբը» Թավիստոկի ցուցումով Ստենֆորդի հետազոտական ինստիտուտին հանձնարարում է այդպիսի ծրագիր մշակել ոչ միայն Ամերիկայի, այլև ատլանտյան դաշինքի բոլոր երկրների, ինչպես նաև Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության անդամ երկրների (ԵԱՀԿ) համար:

Սլոբ Փիթրի հովանավորյալ Սալյուարտ Բատլերը նախագահ Ռեյզանին է հանձնում 3000 էջանոց «հանձնարարականները», որոնք, անտարակույս, պարունակում էին Մեծ Բրիտանիայի Պառլամենտի պատգամավոր և 300-ի կոմիտեի անդամ Էնտոնի Վեջևոս Բենի արտահայտած որոշ կարծիքները: 1980 թ. դեկտեմբերի 8-ին Վաշինգտոնում հավաքված Սոցիալիստական ինտելեկտուալ անդամներին Բենը հայտարարել էր. «Վերջին վարկային անկման պայմաններում դուք կարող եք շահել, եթե Ռեյզանին օժանդակեք արագացնելու վարկային անկումը»:

Բաթլերի հանձնարարականները Ռեյզանի վարչակազմի կողմից քննարկված և օգտագործված լինելու փաստը հաստատվում է վարկախնայողական և բանկային ճյուղերի սնանկացմամբ, որը սաստկացավ Ռեյզանի տնտեսական քաղաքականության պայմաններում: Երբ

Բենն ասում էր «օժանդակել», իրականում նկատի ուներ Ռեյզանի ուղեղն արարելը: Պետք է նշել, որ ֆոն Հայելը՝ «ժառանգության հիմնադրամի» ստեղծողներից մեկը, իր աշակերտ Միլտոն Ֆրիդմանին կարգում է հետևյալ գործի գլուխ. սա պետք է ղեկավարեր «Հոմեական ակումբի»՝ Ամերիկայի ապարդյունաբերականացման ծրագրերի իրականացումը (ունդամին օգտագործելով Ռեյզանի վարչակազմի քաղաքականությունը), որպեսզի արագացնի նախ և առաջ պողպատածուլական ճյուղի, ինչպես նաև արդյունաբերության ավտոմոբիլային և շինարարական ճյուղերի անկումը:

Բացի սրանից՝ ԱՄՆ-ի պողպատածուլական արդյունաբերությունը քայքայելու խնդիրը դրվել էր նաև 300-ի կոմիտեի անդամ Էտիեն դ'Ավինյոնի առաջ, որը ևս Ֆրանսիայի «Մև արխատոկրատիայի» անդամ էր: Դ'Ավինյոնի մասին հազիվ թե լսած լինի թեկուզ մեկը այն հազարավոր մետաղագործներից ու նավաշինարարներից, որոնք կորցրել են իրենց աշխատանքը վերջին տասը տարում: Դ'Ավինյոնի ծրագիրը ամբողջությամբ կրասպարակել են Economic Review-ի 1981 թ. ապրիլյան համարում: 1980 թ. դեկտեմբերի 10-ին Վաշինգտոնում կայացած «Հոմեական ակումբի» բախտորոշ ժողովին մասնակցում էր Իրանից ժամանած մի խորհրդավոր մարդ: Պարզվեց, որ դա եղել է այաթոլլա Հոմեյնու հատուկ պատգամավոր Բանի Սադրը:

1980 թ. դեկտեմբերի 10-ին հնչած մի ճառ ուշադրությունս գրավեց գլխավորապես այն պատճառով, որ արտասանողը Ֆրանսուա Միտերանն էր, մի մարդ, որին ֆրանսիական տիրախավը մերժել և հաշվից հանել էր: Բայց հետախուզությունում ունեցածս մի աղբյուր իրանից առաջ ինձ հայտնել էր, որ արդեն աշխատանք է կատարվում Միտերանին քաղաքական խորդանուցից հանելու, վրայից փոշին թափ տալու և իշխանության ասպարեզ վերադարձնելու համար: Ուստի ինձ համար խիստ հետաքրքրական էին նրա հետևյալ խոսքերը.

«Կոալիտալիստական արդյունաբերության զարգացումը անհամաստեղելի է ազատության հետ: Մենք պետք է վերջ տանք դրան: XX և XXI դարերի տնտեսական համակարգերը մեքենաները կօգտագործեն մարդուն ճնշելու համար, ինչը կկատարվի ամենից առաջ ատոմային էներգետիկայի բնագավառում, որտեղ արդեն ձեռք են բերվել էական արդյունքներ»:

Միտերանի Ելիսեյան պալատ վերադառնալը դարձավ սոցիալիզմի մեծ հաղթահանդեսը: Այն ապացուցեց, որ 300-ի կոմիտեն այնքան ազդեցիկ է դարձել, որ կարող է սկզբում կանխասել իրադարձությունները, իսկ հետո դրանք իրականացնել կան ուժով, կան ուրիշ միջոցներով, որոնք կայսահանջվեն առաջադրված նպատակներին հասնելու համար, որ Կոմիտեն կարող է լնկճել ամեն դիմադրություն նույնիսկ այնպիսի դեպքում, ինչպիսին էր Միտերանինը, որին ամբողջովին մերժել էլ Փա-

ըիզի՝ իշխանության քաղաքական խումբը:

Վաշինգտոնում կայացած 1980 թ. դեկտեմբերյան հանդիպմանը «Գիտորդի իրավիճակով» ներկա էր ևս մի խմբի ներկայացուցիչ՝ Ջոն Գլենհենը, որը հայտնի է նաև որպես Հակավարկաբեկչական լիգայի (Անտի-դիֆֆամացիան լիգայի¹) (ADL) Հետաքննությունների կոմիտեի պետ Իրվին Մուալ: Այս կազմակերպությունը ուղղակիորեն վերահսկվում է Բրիտանիայի հետախուզության կողմից և կառավարվում է նրա MI-6 և JIO բաժինների միջոցով: Իր կեղտոտ հնարքների ընդարձակ հավաքածուն Մուալը քաշել է լոնդոնյան Իսթ-Էնդի կոյաջրերից: Մուալը ցայսօր գտնվում է Ջեյմս Բոնդի ոգով գարձառնություններ ձեռնարկող SIS հատուկ ստորաբաժանման գերզայտնի վարչության հաստիքում: Պետք չէ թերագնահատել ADL-ի ո՛չ գորությունը, ո՛չ էլ նրա երկար ձեռքերը:

Մուալն աշխատում է՝ սերտալեն համագործակցելով Հոլի և մյուս ֆարթուսականների հետ: Բրիտանիայի հետախուզությունը նրան աչքի տակ էր առել որպես իր համար հնարավոր գործակալի, երբ սա սովորում էր Օքսֆորդի համալսարանի Ruskir Labour քոլեջում, այն նույն համայնավարական կրթօջախում, որը մեզ տվել է Միլներին, Բյորջեսին, Մակ-Լիննին և Կիմ Ֆիլբիին: Օքսֆորդի ու Քեմբրիջի համալսարաններն արդեն վաղուց ուսումնական հաստատություններ են ընտրախավի ուսուրերի ու դուստրերի համար, որոնց ծնողները պատկանում են Բրիտանիայի բարձրագույն հասարակության «սերուցքին»: Օքսֆորդում Մուալը մտնում է «Երիտասարդների սոցիալիստական միության» մեջ և դրանից հետո շուտով հավաքագրվում է Բրիտանիայի հետախուզության կողմից:

Մուալն ուղարկվում է ԱՄՆ, որտեղ առնվում է երկրի առավել մերժելի ձախ գաղափարախոսներից մեկի՝ Ուոլտեր Լիպմանի հովանավարության տակ: Լիպմանը «Հանուն արդյունաբերական ժողովրդավարության միության», ինչպես նաև «Ուսանողները հանուն ժողովրդավարական հասարակության» կազմակերպության հիմնադիրն ու ղեկավարն է: Երկուսն էլ մարտնչող ձախ հոսանքի կազմակերպություններ են, որոնց նպատակն է առճակատում կարուցել մի կողմից՝ արդյունաբերական բանվորների, մյուս կողմից՝ այսպես կոչված «կապիտալիստական դասակարգի» ու կառավարիչների միջև: Լիպմանի երկու նախագծերը անբաժանելի մասն էին 300-ի կոմիտեի կառուցվածքի (որն ընդգրկեց ողջ Ամերիկան), իսկ Լիպմանն էլ Կոմիտեի ամենակարևոր անդամներից մեկն էր:

Մուալը սերտ կապեր ունի ԱՄՆ-ի Արդարադատության նախարար-

¹ Անտի (ուսկա) և դիֆֆամացիա (հայանի դարձնել, արատավորել, բարի անունից զրկել) բառերից: Դիֆֆամացիան այն երևույթն է, երբ լրատվության միջոցներով որևէ մեկին խայտառակող, վարկաբեկող (ճշմարիտ կամ հորինված) տեղեկություններ ևն հրապարակվում (Վ. Ա.):

բության հետ և կարող է Հետաքննությունների դաշնային բյուրոյից (FBI) ստանալ իրեն հետաքրքրող ամեն մարդու անձնական փաստապանակը (դոսիեն): Արդարադատության նախարարությունը կարգադրություն է արել, որ ամեն պահ Սուալին տրամադրեն այն ամենը, ինչ կցանկանա: Սուալի հիմնական գործունեությունը նպատակաուղղված է այն բանին, որ «տեսադաշտում պահի աջ հոսանքի յուրաքանչյուր խմբակցության և անձնավորության»: Հակավարկաբեկչական լիգայի համար բաց են Պետդեպարտամենտի դոնեյթը, որը նրա տրամադրության տակ է դրել իր ազդեցիկ հետախուզական վարչությունը:

Պետդեպարտամենտը աջ ճամբարում գործակալների մի ամբողջ խավ ունի, որոնք իրենց ներկայացնում են իբրև «անվախ հրեատյաց մարտիկներ»: Լյուտոների այդ խումբն ունի չորս պարագլուխ, որոնցից երեքը սովորական հրեա արվածույններ են: Խումբն արդեն քսան տարի է, ինչ գործում է: Այն հրատարակում է թունդ հակահրեական «թերթեր» և վաճառքում ունի հրեատեցական գրականության լայն տեսականի: Սրա գլխավոր բաժանմունքներից մեկը գտնվում է Լուիզիանայում: Այս խմբի անդամների մեջ կա մի գրող, որին ուղղակի պաշտում են քրիստոնեական աջ շրջաններում: Ամբողջ խումբը և սրան աջակցող անձնավորությունները գտնվում են Հակավարկաբեկչական լիգայի պաշտպանության տակ: Սուալը խորապես ներքաշված էր ABSCAM-ի (Հետաքննությունների դաշնային բյուրոյի՝ կաշառակերության և ծախվածության հայտնաբերման սադրանքային գաղտնի գործողությունների համակարգ) գործառնության մեջ և իրավապահ մարմինների կողմից հաճախ ներգրավվում էր հետաքննությունների անցկացմանն ու սադրանքային գաղտնի գործողությունների իրականացմանը օգնություն ցույց տալու համար:

Սուալին հանձնարարվել էր «շտկոտեր» Ռեյգանին, որ սա հանկարծ չշեղվի նորընտիր նախագահի համար «Ժառանգության հիմնադրամի» բացած չվուղուց. իսկ եթե Ռեյգանը սկսեր ուրիշ կողմ քաշել կամ փոխձեռ իր շուրջը քաշված շրջանից դուրս գալ, Սուալը պետք է մի քանի «նախազգուշական կրակոց» կատարեր: Սուալն օգնում էր ազատվելու Ռեյգանի վարչակազմում գտնվող աջ հոսանքի յուրաքանչյուր խորհրդականից, եթե սա անցանկալի էր «Ժառանգության հիմնադրամին»: Դրանց շարքն ընկավ Ռեյգանի կառավարության աշխատանքի նախարար Ռեյ Դոնովանը, որն ի վերջո պաշտոնաձև արվեց Հակավարկաբեկչական լիգայի «կեղտոտ գործառնությունների բաժնի» ջանքերով: Ջեյմս Բեյքեր III-ը, որի թեկնածությունը նույնպես կար «Ժառանգության հիմնադրամի» հանձնարարականների ցուցակում, այն միջնորդն էր, որը նախագահին էր փախանցում Դոնովանի մասին Սուալի գրած ատելությանը լի «թղթերը»:

Կարևոր դավադիրներից մեկն էլ Ֆիլիպ Էյջին էր՝ Հետախուզության

կենտրոնական վարչության (ՀԿՎ) «փախստուկ» անվանյալը: Կոմիտեի անդամ չլինելով՝ սա, այնուամենայնիվ, նրա հատուկ հանձնարարությունների գծով գործակալն էր Մեքսիկայում և աշխատում էր Միջազգային գործերի թագավորական ինստիտուտի (ՄԳԹԻ) և «Միջազգային հարաբերությունների խորհրդի» (ՄՀԽ) ղեկավարությամբ: Ի գիտություն. ԱՄՆ-ում կատարվող ամեն բան անպայման լինում է հիշյալ թագավորական ինստիտուտի հավանությամբ և թույլտվությամբ: ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի միջև գործում է 1938-ին Չերչիլի և Ռուզվելտի կնքած մի համաձայնագիր (բացվել է առաջին անգամ. մինչ այդ եղել են գաղտնի շատ համաձայնագրեր), որի պայմաններով ԱՄՆ-ի հետախուզական ծառայությունները սարտավորվում էին գաղտնի տվյալները հաղորդել Բրիտանիայի հետախուզությանը:

Այս է հիմքը երկու երկրների միջև հաստատված «հատուկ հարաբերություններ» կոչվածի, որոնցով պարծենում էին Չերչիլն ու լորդ Հալիֆաքսը, և հենց այդ «հատուկ հարաբերություններն» ԱՄՆ-ին ստիպեցին Պարսից ծոցում մարտնչել Իրաքի դեմ հանուն Բրիտանիայի շահերի, մանավանդ հանուն British Petroleum-ի՝ 300-ի կոմիտեի ամենակարևոր ընկերություններից մեկի շահերի, որտեղ Եղիսաբեթ թագուհու ընտանիքը կապիտալի մեծ բաժին ունի:

1938 թվականից սկսած հետախուզական ամբողջ գործունեությունն ընթացել է այդ թիմային համատեղ հատուկ կառույցի վերահսկողությամբ: Ֆիլիպ Էյջին Հետախուզության կենտրոնական վարչություն է ընդունվել Նոթր Դամն ավարտելուց հետո, որտեղ ընդգրկվել էր ճիզվիտական ֆրանկմաստնության մեջ: Էյջին ուշադրությունս առաջին անգամ գրավեց 1968 թվականին՝ իբրև հետախուզության մի սպա, որի մատը խառն էր Մեխիկոյի համալսարանի անկարգությունների մեջ: Մեքսիկայի ուսանողական անկարգությունների ամենակարևոր առանձնահատկություններից մեկն այն էր, որ դրանք տեղի ունեցան հենց նույն ժամանակ, ինչ որ Նյու Յորքի, Բոսնի, Պրահայի և Արևմտյան Բեռլինի ուսանողական անկարգությունները:

Ունենալով գործողությունների համաձայնեցման փորձ և հետախուզական հատուկ ցանց, որի բաղկացուցիչ մասն է Ինտերպոլը, Կոմիտեի համար ամենևին դժվար չէ, ինչպես կարող է թվալ առաջին հայացքից, հարուցել աշխարհի տարբեր վայրերում միաժամանակ կատարվող գործողություններ, լինեն դրանք ուսանողական անկարգություններ, թե ինքնիշխան (ինչպես շատերը կարծում են) պետությունների առաջնորդների տապալում:

Մեքսիկայից հետո Էյջին անցնում է մյուս առաջադրանքի կատարմանը, որի առարկան Պուերտո Ռիկոյի ահաբեկչական խմբերն էին: Այդ ժամանակ նա դառնում է Կուբայի դիկտատոր Ֆիլդել Կաստրոյի լի-

ագործված անձր: Պետք չէ ենթադրել, թե Լեյջին այդ բոլոր գործառնություններն իրականացրել է որպես «կարմիր» գործակալ: Ընդհակառակը, այդ ամբողջ ժամանակամիջոցում նա աշխատել է ՀԿՎ-ի օգտին: Խնդիրները ծագում են այն ժամանակ, երբ DGI-ն (Կուրբայի հետախուզական ծառայությունը) կարողանում է ջոկել նրա ով լինելը: Լեյջին շարունակում է աշխատել որպես ԿԿՀ-ի գործակալ, մինչև որ բացահայտվում է նրա երկակի դերը: Այստեղ իր լուսնային ունի Արևմուտքում «ականջ դնող» սովետական ամենամեծ պահակակետը, որը գտնվում է Լուրդեսում (Կուրբա): Հաղորդագրությունների որսման ու վերծանման 3000 սովետական մասնագետներով լրակազմված Լուրդեսի հիմնականյանն ի վիճակի է միաժամանակ հետևելու հազարավուր էլեկտրոնային ազդանշանների: Կոնգրեսի անդամների և նրանց սիրուհիների հեռախոսային մասնավոր շատ խոսակցություններ են որսացվել և արդյունավետորեն օգտագործվել:

Թեև այսօր՝ 1991 թվականին, մեզ ասում են, թե «կոմունիզմը մեռած է», Միացյալ Նահանգները ոչինչ չի անում ուղղակի մեր շենքին նստած լրտեսական վիթխարի կազմակերպությունը փակելու համար: Ի միջի այլոց, Լուրդեսի հիմնականյանն ունակ է որսալու նույնիսկ հեռապատճենիչի (ֆաքսի) կամ էլեկտրական գրամեքենայի ճառագայթած ամենաթույլ «կայծային» ազդանշանը. ընդ որում այդ ազդանշանի վերծանումը ցույց է տալիս այն ամենը, ինչ տպագրվում է գրամեքենայով կամ հաղորդվում հեռապատճենիչով: Լուրդեսի հիմնականյանը մնում է որպես Միացյալ Նահանգների սիրտը խրված դաշույն: Բացարձակապես ոչ մի պատճառ չկա այն պահելու համար: Եթե ԱՄՆ-ն ու ԽՍՀՄ-ը իրոք հաշտ են իրար հետ, ինչի՞՞ է պետք այդքան խաշոր լրտեսական կայանը: Ողջ ճշմարտությունն այն է, որ անձնակազմը կրճատելու փախարեն, ինչը մեզ փորձում են համոզել, ՊԱԿ-ը (ԽՍՀՄ Պետանվտանգության կոմիտեն-թարգմ.) 1990-1991 թթ. ծառայության է վերցրել լրացուցիչ աշխատակիցների:

Կուրտ Լևինի անունը, հավանաբար, քիչ է հայտնի Միացյալ Նահանգներում: Ի տարբերություն անկապաշտական (դեկադենտական) «փոփաստողելի» կամ հուլիվուդյան ողորմելի վերջին «հայտնությունների», գիտնականները կան հազվադեպ են գրավում հասարակության ուշադրությունը, կան էլ առհասարակ չեն գրավում: Միացյալ Նահանգներում «Հռոմեական ակումբի» վերահսկողության ներքո աշխատող հարյուրավոր գիտնականներից Լևինը հատուկ ուշադրության է արժանի այն դերակատարության համար, որ նա ունեցել է Իրանի, Ֆիլիպինների, Հարավային Աֆրիկայի, Նիկարագուայի և Հարավային Կորեայի դեմ ձեռնարկված քայքայիչ գործունեության մեջ: Իրանի շահի գահընկեցությունը կատարվել է Ռոբերտ Անդերսոնի դեկավարած Ասպենի ինստիտուտի վերահսկողությամբ Կուրտ Լևինի ու Ռիչարդ Ֆալկի

մշակած ծրագրով: Լևինը հեղինակն է «Հոռմեական ակումբի» հրապարակած «Ժամանակի հեռանկարները և բարոյական ոգին» աշխատության, որն ազգերի և առանձին առաջնորդների բարոյական ոգին ընկճելու ձեռնարկ է: Ահա մի քաղվածք այդ փաստաթղթից.

«Վախեցնելու ռազմավարության (ստրատեգիայի) միջոցով բարոյական ոգին ընկճելու գլխավոր եղանակներից մեկը ճշտիվ պահարանումն է հետևյալ մարտավարության (տակտիկայի). **հարկավոր է մարդուն պահել անորոշության մեջ թե՛ իր ներկա դրության, թե՛ առաջիկայում իրեն սպասվելիքի առումով:** Բացի դրանից, երբ կարգապահական խիստ տույժեր տալու և լավ վերաբերմունք խոստանալու միջև արվող հաճախակի տարութեումները հակասական լուրերի տարածման հետ մեկտեղ իրերի հասկանալի դասավորությունը դարձնում են անհասկանալի, այդժամ մարդս կորցնում է այն բանի պատկերացումն ու վստահությունը, որ իր որևիցե որոշակի ծրագիրը կհանգեցնի ցանկալի նպատակին, կամ էլ հակառակը՝ կհեռացնի դրանից: Նման պայմաններում նույնիսկ այն անձնավորությունները, որոնք հստակ նպատակներ ունեն և պատրաստ են ռիսկի դիմելու, կաթվածահար վիճակի մեջ են ընկնում իրենց անելիքը չիմանալուց առաջացած ուժեղ մտատուճությունից»:

«Հոռմեական ակումբի» սույն ծրագիրը կիրառվում է ինչպես ԵՐԿԲՆԵՐԻ, այնպես էլ առանձին անձնավորությունների, հատկապես այդ երկրների ղեկավարների նկատմամբ: ԱՄՆ-ում ապրողներս չպետք է մտածենք. «Բայց սա Ամերիկան է, և այդ տեսակ բաներ այստեղ չեն կարող կատարվել»: Թույլ տվեք ձեզ հավատացնել, որ դրանք ԱՄՆ-ում ԿԱՏԱՐՎՈՒՄ ԵՆ և, գուցե, ավելի հաճախ են կատարվում, քան ո՛րևէ երկրում:

Լևին - «Հոռմեական ակումբի» ծրագիրը նպատակ ունի բարոյալքման հասցնելու մեզ, որպեսզի մենք վերջիվերջո անմոռնչ ընդունենք մեզ համար ծրագրված ամեն ինչ: Մենք ոչխարների պես կհետևենք «Հոռմեական ակումբի» հրամաններին: Ուժեղ անձնավորության տպավորություն թողնող և ազգին «փրկելու» համար հանկարծակի հայտնվող յուրաքանչյուր առաջնորդի պետք է ընդունել ծայրահեղ կասկածանքով: Հիշենք, որ Բրիտանիայի հետախուզությունը Հոմեյնուն երկար տարիներ, հատկապես Փարիզում եղած ժամանակ, պատրաստել էր իր առաքելությանը՝ նախքան հանկարծակի նրա հայտնվելը որպես Իրանի փրկիչ: Բորիս Ելցինը այդ նույն ՄԻ-6 բաժնի ախտից է: «Հոռմեական ակումբը» համոզված է, որ կատարել է Միացյալ Նահանգներին «կակղեցնելու» 300-ի կոմիտեի հանձնարարությունը: Ո՞վ կկասկածի, որ նա, այս երկրի ժողովրդի դեմ 45 տարի պատերազմ վարելուց հետո, իրոք կատարել է իր խնդիրը: Նայեք կողքերդ և կտեսնեք, թե որքան անբարո ենք դարձել: Թմրամոլություն, պտոնկագրություն, ոո՛ք «երաժշտություն», սեռական ազատ հարաբերություններ, ընտանիքի

հիմքերի իրապես լիակատար ոչնչացում, լեսբիականություն, արվամուլություն և, վերջապես, միլիոնավոր անմեղ մանուկների սոսկալի սպանություն մայրերի կողմից: Կա՞ զանգվածային արհեստական վիժումներից առավել նույնպիսի հանցագործություն:

Ո՞վ կժխտի, որ ԱՄՆ-ը կանգնած է ներքին սնանկացման եզրին և պատրաստ է ընկնելու նոր Խավար դարերի Համաշխարհային միասնական կառավարության գիրկը. երբ ԱՄՆ-ը հոգեպես ու բարոյապես սնանկ է, երբ մեր արդյունաբերության հիմքը քանդված է, երբ երկրում 30 միլիոն գործազուրկ կա, երբ մեր քաղաքները ամեն տեսակ երևակայելի հանցագործությունների սոսկալի կոյանոց են, սրտեղ հանցանքների կատարման մակարդակը գրեթե երեք անգամ բարձր է, քան որևէ այլ երկրում, երբ մեզանում չոլս միլիոն տնանկ կա, երբ կառավարության մեջ ծախվածությունը (կոռուպցիան) հասել է չտեսնված չափերի՝ համակելով անխտիր բոլորին:

«Հոռմեական ակումբն» առաջ է գնացել քրիստոնեական եկեղեցիների պառակտման գործում, հաջողեցրել է ստեղծել առաջնորդի շնորհունեցող (խարլիզմատիկ) հիմքայնականների ու ավետարանականների բանակ, որը կմայրունջի Իսրայելի սիոնիստական պետության համար: Պարսից ծոցի ցեղասպան պատերազմի ժամանակ տասնյակ մամակներ էի ստանում, սլոնցով հարցնում էին, թե ինչպե՞ս կարող եմ հակառակ լինել «Իրաքի դեմ մղվող քրիստոնեական արդարացի պատերազմին»: Ինչպե՞ս կարող եմ տարակուսել, որ Իրաքի դեմ պատերազմին քրիստոնյա հիմքայնականների (300-ի կոմիտեի) թևակցությունը աստվածաշնչական չէ. մի՞թե Բիլլի Գրեհենը¹ նախագահ Բուշի հետ չի աղոթել կոիվն սկսվելուց առաջ: Մի՞թե Աստվածաշունչը չի ասում. «Լսելու եք պատերազմների ձայներ և պատերազմների յուրեր²»:

Այդ մամակները ցույց են տալիս, թե ուրբան լավ է իր գործն անում Թավիստոկլի ինստիտուտը: Ծրագրվածի պես քրիստոնյա հիմքայնականները կդառնան Իսրայելի պետությանն աջակցող զորեղ ուժ: Ի՞նչ ցավալի է, որ այդ կրաշալի մարդիկ չեն հասկանում, թե «Հոռմեական ակումբը» ՆՐԱՆՑ ԱՆԱՍՈԹԱՐԱՐ ԽԱԳԱՑՆՈՒՄ է իր նպատակների համար, որ նրանց կարծիքներն ու համոզմունքները ԻՐԵՆՑ ՍԵՓԱԿԱՆԸ ՉԵՆ, այլ նրանց համար ստեղծել են ԱՄՆ-ի տարածքով մեկ սփռված 300-ի կոմիտեի «խելքակենտրոնները»: Այլ կերպ ասած, Միացյալ Նահանգների բնակչության մյուս բոլոր խավերի պես, քրիստոնյա հիմքայնականներն ու ավետարանականները ենթարկվել են ու-

¹ Բիլլի Գրեհենը համաշխարհային հռչակ ունեցող քրիստոնեական քարոզիչ է:

² Սեջբերումը Հիսուսի ասածն է Սատրեոսի Ավետարանից (24.6) (Վ. Ա.):

դեղաձալքերի խնամքով արդու կման:

Մենք, որպես ազգ, պատրաստ ենք ընդունելու խորտակումը Ամերիկայի Միացյալ Նահանգների և ամերիկյան ապրելակերպի, որ մի ժամանակ բովանդակ աշխարհի նախանձի առարկան էր: Մի՛ կարծեք, թե դատելի է մենցել ինքն իրեն, մի՛ բռնվեք «ժամանակները փոխվում են...» հիմն համախոտանիշով: Ժամանակը ոչինչ չի փոխում: Այդ անում են ՄԱԲ-ԳԻՆ: Մոլորություն է կարծելը, թե 300-ի կոմիտեն և «Հոմեական ակումբը» զուտ եվրոպական կազմակերպություններ են: «Հոմեական ակումբը» վիթխարի ազդեցություն և իշխանություն ունի Միացյալ Նահանգներում. նա իր սեփական կապիտալումն՝ ունի Վաշինգտոնում: Նրա առաջնորդն է սենատոր Բլեյբլուն Փեյլը, իսկ անդամներից է Կոնգրեսի էներգետիկայի ենթահանձնաժողովի նախկին տնօրեն Ֆրենկ Մ. Փոթերը: Դժվար չէ տեսնելը, թե «Հոմեական ակումբն» ինչ կերպ է խիստ հսկողության տակ պահում էներգետիկայի ասպարեզում ԱՄՆ-ի վարած քաղաքականությունը, և որտեղից է ծագում միջուկային էներգետիկայի «կանաչ» ընդդիմությունը: Ակումբի ամենամեծ հաջալույթները, թեևս, Կոնգրեսին միջուկային էներգետիկայի հանդեպ չեզոք դիրքում պահելն է, որի հետևանքով ԱՄՆ-ը չի կարող XXI դար մտնել որպես այսլյունաբերական ուժեղ պետություն: Ակումբի հակամիջուկային քաղաքականության «արդյունավետությունը» կարելի է չափել հանգցված դոմնային վառարանների, լքված ելկաթուղային կայարանների, ժանգոտող մետաղաձուլական գործարանների, վաղուց ի վեր փակված նավաշինարանների քանակով, ինչպես նաև երկրով մեկ ցրված որակյալ բանվորական մեծաթեք ուժով, որը վերստին հավաքելն այլևս չի հաջողվի:

ԱՄՆ-ում «Հոմեական ակումբի» մյուս անդամներից են Կոնգրեսի հետազոտական ծառայության աշխատակից Վալտեր Ա. Հանը, ականավոր տնտեսագետներ Էնն Չիթենը և Դուգլաս Ռոսը: Ռոսի խնդիրը, ըստ իր իսկ ասածի, «Հոմեական ակումբի» հեռանկարները օրենսդրական ակտերի փոխակերպելն էր, որպեսզի դրանով երկրին օգնեք ազատվելու առատության պատրանքից: Էնն Չիթենը «Կոնգրեսի ապագայի հարցերի գծով քլիրինգապալատ²» անվամբ կազմակերպության տնօրենուհին էր:

Լ Չիթենի խնդիրը Կոնգրեսի այն անդամներին «մշակելն» էր, որոնք

¹ Թեմը կառավարող եպիսկոպոսին առընթեր հոգևորականների խորհուրդ: 2. Հոգևոր ապստոսական և վանական ուխտերի ղեկավար անձանց խորհուրդ (Վ. Ա.):

² Բիրինգ - անկանխիկ (առանց կանխիկ դրամի կատարվող) հաշվարկների համակարգ, որը հիմնվում է փոխադարձ պահանջների ու պարտավորությունների հաշվանցման վրա (Վ. Ա.):

բուլոբյուն ունեին աստղագուշակության և «Նոր դարի»¹ ամեն տեսակ դատարկաբանությունների հանդեպ: Մի ժամանակ նրա դասախոսություններին հաճախում էր հարյուրից ավելի կոնգրեսական: Էնն Չիթմն ամեն օր քննապարապմունքներ էր անցկացնում, որոնց ժամանակ աստղագուշական զանազան կանխատեսումներ էր հրամցնում՝ հիմնվելով իր «օկուլտային ընկալումների» վրա: Նրա քննապարապմունքներին, կոնգրեսականներից բացի, այցելում էին այլ կարևոր անձինք, ինչպիսիք են Մայքլ Ուոլշը, 300-ի կոմիտեի առաջատար անդամ Թոլմստոն Բրեդշոուն և «Օլստեյտ ինշուրանս քոմպանի» ապահովագրական ընկերության ավագ փոխնախագահ Դավիդ Ստերնլայտը:]

300-ի կոմիտեի ամենակարևոր անդամներից ոմանք՝ ՆԱՏՕ-ի անդամներ են. մի փաստ, որ հարկավոր է հիշել: 300-ի կոմիտեի սույն անդամները հաճախ միանգամից մի քանի պաշտոն են զբաղեցնում: Միաժամանակ ՆԱՏՕ-ի և «Հոռմեական ակումբի» անդամներ են ՆԱՏՕ-ում ԱՄՆ-ի նախկին դեսպան Հարյանդ Զլիվենդը, Ասպենի ինստիտուտի տնօրեն Ջոզեֆ Սլեյտերը, ԱՄՆ-ի Ազգային անվտանգության գործակալության նախկին աշխատակից Դոնալդ Լեշը, Ջորջ Մակ-Գիև և Զլեյբորն Փելը: Սա ընդամենը մի քանի օրինակ է:

Կարևորն այն է, որ այս անունները չնոռանաք, կամ էլ, եթե հարմար է, ձեռքի տակ ունենաք սրանց ցուցակը, որպեսզի հեռուստատեսային ծրագրերում և նորությունների հաղորդումներում այս անունները հայտնվելիս միշտ հիշեք, թե ովքեր են սրանք և ինչ են պաշտպանում: Հետևելով հետախուզության *modus vivendi*-ին²՝ Կոմիտեի պարագլուխները հաճախ են հեռուստատեսային հայտնվում ամենաանմեղ դիմակներ զգեցած: Բայց պետք է հիշել ու հաշվի առնել, որ դրանց բոլոր գործերը բնավ էլ անմեղ չեն:

300-ի կոմիտեն իր գործակալներին բնավորել է Միացյալ Նահանգների հենց սրտում՝ կառավարության մեջ, Կոնգրեսում, նախագահի խորհրդականների, դեսպանների ու պետական քարտուղարների պաշտոններում: Ժամանակ առ ժամանակ «Հոռմեական ակումբն» անցկացնում է ժողովներ ու կոնֆերանսներ, որոնք, չնայած իրենց «անշառ» անվանումներին, փաստորեն վերածվում են աշխատանքային

¹ «Նոր դար» շարժումն ընդգրկում է քրիստոնեությանը խորթ հավատալիքներ, որոնցից են օկուլտիզմը, թեոսոֆիայի դրույթները, արևելյան գուրուների ուսմունքը, քարմայի ու վերամարմնավորման օրենքը և այլն: Շարժումը միավորում է զանազան աղանդներ: Նրա գաղափարներն արսացողված են բազմաթիվ մուլտաշարերում, որոնց հերոսները պարսպում են մտասևեռմամբ (Վ. Ա.):

² Մոդուս վիվենդի - լատ. ապրելակերպ, գոյատևման՝ գոյությունը պահպանելու միջոց, եղանակ (Վ. Ա.):

հանձնաժողովների, որոնցից յուրաքանչյուրին հանձնարարվում է հատուկ առաջադրանք և սահմանվում է այն կատարելու ժամկետը: Այստակարգ հանգամանքների շլինելիս 300-ի կոմիտեն աշխատում է խիստ ճշգրիտ ժամանակացույցով:

Միացյալ Նահանգներում «Հոմեական ակումբի» առաջին կոնֆերանսը 300-ի կոմիտեն կրավիրել է 1969-ին՝ «Հոմեական ակումբի ասոցիացիա» անվամբ: Հաջորդ հանդիպումը, որը կայացել է 1970 թ., անվանադրել էին «Կրոնական հետազոտությունների Ռիվերդեյլի կենտրոն»: այն դեկավարում էր Թոմաս Բերնին: Սրան հաջորդել է 1971 թ. Հյուստոնում տեղի ունեցած Վուդլանդի կոնֆերանսը: Այդ ժամանակից սկսած Վուդլանդում ամեն տարի կանոնավորապես կոնֆերանսներ են գումարվում:

Նույնպես 1971-ին Միտչելի էներգետիկայի և շինարարության կորպորացիան «Հոմեական ակումբի» համար հանդիպում է կազմակերպում էներգետիկայի ասպարեզում ռազմավարություն մշակելու առթիվ, որի գերիշխող նյութն էր ԱՄՆ-ի ԱճԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿԵԼԸ: Այս ողջ գործունեության գագաթնակետը եղավ 1980 թ. հուլիսին կայացած «Ապագայի խնդիրների առաջին համընդհանրացնող կոնֆերանսը», որին մասնակցում էին սոցիալական հարցերի 4000 մասնագետներ և խելքակենտրոնների անդամներ. սրանք բոլորն էլ կա՛մ «Հոմեական ակումբի» հովանու ներքո աշխատող կազմակերպությունների անդամներ էին, կա՛մ սերտորեն համագործակցում էին նրանց հետ:

«Ապագայի խնդիրների առաջին համընդհանրացնող կոնֆերանսը» ստացավ Մալիտակ տան օրհնությունը, որը դրա սղագրությունների հիման վրա անցկացրեց «1980-ական թթ. հիմնախնդիրների Մալիտակ տան հանձնաժողով» անվանյալ սեփական կոնֆերանսը: Սա «Հոմեական ակումբի» քաղաքականությունը ՊԱՇՏՈՆԱՊԵՍ հանձնարարեց որպես «ԱՄՆ-ի ապագա քաղաքականության ուղղություն» և չափն այնքան անցավ, որ Միացյալ Նահանգների տնտեսությունը բնորոշեց որպես «արդյունաբերական փուլից դուրս եկող»: Սա ձայնակցում է սրբ Փիթր Վիքերս-Հոլի ու Ջրիզն Բժեզինսկու արծարծած նյութին և կրկին ապացուցում է, որ ԱՄՆ-ի ներքին ու արտաքին քաղաքականությունը 300-ի կոմիտեի վերահսկողության տակ է:

Ինչպես ասում էի 1981 թվականին, մենք քաղաքականապես, սոցիալապես ու տնտեսապես սեղմված ենք «Հոմեական ակումբի» արքանի մեջ: Ամեն ինչ ԴԱՍԱՎՈՐՎԱԾ Է ՍԵՐ ԴԵՍ: Եթե ուզում ենք ողջ մնալ, պետք է մեր կառավարությանն ազատենք 300-ի կոմիտեի մահացու գրկախառնությունից: 300-ի կոմիտեն կարողացել է յուրաքանչյուր ընտրությունից հետո իր գործակալներին բնավորել կառավարության բոլոր առանցքային պաշտոններում այն ժամանակից ի վեր, երբ Կալ-

վին Կուլրիջը Սայիտակ տան իր թեկնածությունն առաջադրեց: Այնպես որ այլևս ոչ մի տարբերություն չկար, թե ով կզբաղեցնի նախագահի պաշտոնը: Օրինակ, Ֆրանկլին Դ. Ռուզվելտի ժամանակից սկսած նախագահի բոլոր թեկնածուներին ջոկջոկել է Միջազգային գործերի թագավորական ինստիտուտի հրահանգներով գործող Միջազգային հարաբերությունների խորհուրդը (ՄՀԽ):

1980 թվականի ընտրություններում ԱՄՆ-ի պետական քարծրագույն պաշտոնի բոլոր թեկնածուներին ջոկել է ՄՀԽ-ն: Ուստի դավադիրների համար նշանակություն չունեի, թե ով կհաղթի նախագահական մրցարշավում: «Ժառանգության հիմնադրամի» և ՄՀԽ-ի պես «տրոյական ձիերի» շնորհիվ նոր վարչակազմի քաղաքական բոլոր առանցքային պաշտոնները զբաղեցրել են Միջազգային հարաբերությունների խորհրդի առաջադրած մարդիկ: Մինչ այդ էլ, 1960-ականներից սկսած, այդ պաշտոններից շատերը զբաղեցնում էին ՆԱՏՕ-ի և «Հռոմեական ակումբի» կողմնակիցները, ինչի հետևանքով քաղաքական բոլոր կարևոր որոշումները կրում են անջնջելի կնիքը «Հռոմեական ակումբի» և ՄՀԽ-ի, որոնք գործում են որպես 300-ի կոմիտեի գործադիր մարմիններ:

1984 և 1988 թթ. ընտրություններն անցան նույնպիսի վաղօրոք գրված բեմաքով (սցենարով): Պետքարտուղար Ջորջ Շուլցը լիավիճակում էր այդ պաշտոնի թեկնածուի հանդեպ 300-ի կոմիտեի ներկայացրած պահանջներին: Շուլցը միշտ եղել էր ՄՀԽ-ի առաջատար ղեկավար չենրի Քիսինջերի դրածոն: Դեռ ավելին, նրա դիրքը 300-ի կոմիտեի անդրազգային (միջազգային) կարևոր ընկերություններից մեկում՝ Bechtel-ում, նրան հնարավորություն էր տալիս «մուտք ունենալ» այնպիսի երկրներ, որոնք այլ դեպքում կարող էին կասկածել, որ նա կապ ունի Քիսինջերի հետ: Քարտերի վարչակազմն արագացրեց դավադիրների գործակալներին առանցքային պաշտոններում տեղավորելու գործընթացը: Նախքան Քարտերի ընտրվելը, ընտրարշավի նրա գլխավոր ռազմավար (ստրատեգ) Համիլտոն Ջորդանը նրան ասել է, որ, եթե Մայրուս Վենսը կամ Բեթգինսկին պաշտոններ ստանան Քարտերի կառավարությունում, ապա ինքը պաշտոնից կհրաժարվի: Նրանք նշանակվեցին, բայց Ջորդանը պաշտոնից չհրաժարվեց:

Փոլ Վոլքերին Քարտերի ընտրելը (իրականում Դավիդ Ռոքֆելլերն էր Քարտերին հրամայել, որ Փոլ Վոլքերին նշանակի) դարձավ ԱՄՆ-ի տնտեսության փլուզման սկիզբը, ինչպես որ «Հռոմեական ակումբն» էր ծրագրել: Մենք բախվեցինք Համաշխարհային միասնական կառավարության ձգտող հզոր ուժերի: Վերջին 45 տարվա ընթացքում մեր դեմ մղվում է ավերիչ և հյուծիչ մի պատերազմ, միայն թե մենք այդ չենք ընկալում որպես այդպիսին: Հետևողականորեն և կանոնավորապես արդուկում են մեր ուղեղը, իսկ մենք կասկած էլ չունենք այդ մասին: Թա-

վիստոկի ինստիտուտը դրա համար մի ամբողջ համակարգ էր ստեղծել, որը հետո գործարկեց:

Դիմադրելու միակ միջոցը դավադիրներին և նրանց համար քողարկիչ ցուցանակներ ծառայող բազմաթիվ կազմակերպություններին մերկացնելն է: Մեզ հարկավոր են փորձառու մարդիկ, որ կալադանան կերտել մեր անգին ժառանգության պաշտպանման ռազմավարությունը, որը եթե կորցնենք, անհնար կլինի վերականգնել: Մենք պետք է ուսումնասիրենք դավադիրների գործելակերպերը և դրանց դեմ հակամիջոցներ ձեռնարկենք: Միայն հակագործության խայտակիչ ծրագիրը կկատարի մեր երկիրը ներսից քայքայող փտությունը:

Ոմանք դժվարությամբ են ըմբռնում աշխարհաժամավալ դավադրության գաղափարը, որովհետև դրանով փող են շինում շատ գրողներ: Ուրիշները կասկածում են ելկրագնդի չափանիշով նման գործունեություն իրականացնելու կարելիությանը: Նրանք տեսնում են մեր կառավարության հրեշավոր բյուրոկրատիան և ասում են. «Լավ, մենք ինչո՞ւ պիտի հավատանք, որ առանձին մարդը կարող է ավելի շատ բան անել, քան կառավարությունը»: Ընդ որում **հաշվի չի առնվում այն փաստը, որ կառավարությունը դավադրության մասն է:** Նրանք ուզում են բացահայտ հանցանշաններ, իսկ դրանք ձեռք բերելը դժվար է:

Գտնվում են նաև այսպես ասողներ. «Հետո՞ ինչ: Ես ի՞նչ գործ ունեմ դավադրության հետ. ես նույնիսկ քվեարկելու չեմ գնում»: Դավադիրների ուզածն էլ հենց այդպիսի արձագանք հալաուցելն է Ամելիկայի բնակչության մեծ մասի մեջ: Մեր ժողովուրդն ախտահարված է հուլուժությամբ ու անտարբերությամբ: Դրանք մեր դեմ մղվող 45-ամյա պատերազմի արդյունքներն են: Կուրտ Լևինի գրքում հստակորեն ցույց է տրված, թե դա ինչպես է արվում, բայց շա՞տ մարդ կգտնվի, որ գիտական գրքի ընթերցանությունը գերադասի զվարճալի գրականությունից: **Մենք արձագանքում ենք ճիշտ այնպես, ինչպես մեզ ծրագրավորում են:** Բարոյալքված և անտարբերության մեջ ընկած մարդը միշտ պատրաստ է ողջունելու մեծ անձնավորության հանկարծակի հայտնվելը, որը խոստանում է լուծել բոլոր հիմնախնդիրները և հուսալի կարգ է երաշխավորում հասարակության մեջ, որտեղ մարդիկ լիովին ապահովված կլինեն աշխատանքով, իսկ ներքին հակասությունները հասցված կլինեն նվազագույնի: Այդպիսի դիկտատորին (իսկ դա հենց դիկտատոր էլ կլինի) բոլորը գրկաբաց կընդունեն:

Մեր թշնամուն ճանաչելը կենսական անհրաժեշտություն է: Անհնար է մարտնչել անհայտ թշնամու դեմ: Իսկ սույն գիրքը կարելի է օգտագործել որպես ռազմադաշտային կանոնագիրք: Ուսումնասիրե՛ք սրա բովանդակությունը և միտնե՛րդ պահեք բոլոր անունները:

Հաճախ հիշատակել եմ ըստ ձևանմուշի (շարլոնի) մշակման հնար-

քը: Ամենակարևոր եզրակացություններից մեկը, որը կարելի է անել «ձևանմուշով մշակելն» ուսումնասիրելիս, այն հարաբերական դյուրինությունն է, որով մշակումն իրագործվում է անձնավորության, կուսակցական խմբի, քաղաքական միավորման և այլոց մակարդակով: Հենց որ գիտակցենք այդ դյուրինությունը, դավադրությունը կդադարի մեր ըմբռնողության սահմաններից դուրս գտնվող ինչ-որ բան լինելուց: Մեզ համար դյուրին կլինի հասկանալ թե՛ նախագահ Քենեդիի սպանությունը, թե՛ նախագահ Ռեյգանի դեմ կատարված մահափորձը¹:

¹ Ռեյգանը վիրավորվեց, իսկ կրակողը առողմ ձերբակալվեց: Դեպքը ցուցադրվել է հեռուստատեսությամբ (Վ. Ա):

ԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ձևանմուշով մշակելը մի գործելակերպ է, որը 1922 թ. ստեղծվել է Միջազգային գործերի թագավորական ինստիտուտի հրամանով: Բրիտանացի զինվորական մասնագետ մայոր Ջոն Ռոուլինգս Ռիզն առաջադրանք է ստանում Սուսեկի համալսարանի կազմում գտնվող Թավիստոկի մարդկային հարաբերությունների ինստիտուտին առընթեր ստեղծելու ուղեղի արդուկման¹ աշխարհի ամենամեծ հիմնարկը: Այն դարձավ «Բրիտանիայի հոգեբանական պատերազմի բյուրոյի» միջուկը: Երբ 1970 թ. Միացյալ Նահանգներին առաջին անգամ ծանոթացրի Ռիզն ու Թավիստոկ անուններին, ընթերցողների մեջ գրեթե ոչ մի հետաքրքրություն չառաջացավ: Բայց անցյալ տարիների ընթացքում Թավիստոկի գործունեությունը և դավադրության մեջ նրա դեյակատարությունն ավելի ու ավելի բացահայտելուս հետ իմ նախկին հետազոտություններին նմանակելը մոդա ընկավ և դարձավ հանրածանոթ:

«Բրիտանիայի հոգեբանական պատերազմի բյուրոն» լայնորեն օգտագործել է Ռիզի այն աշխատանքի արդյունքները, որ նա կատարել էր բրիտանական բանակի 80.000 «փորձաճազարների» ու ռազմագերիների վրա, որոնց ենթարկել էին բազմատեսակ հարցախուզման (թեստավորման): Հենց Թավիստոկի մշակած գործելակերպերը ԱՄՆ-ին հարկադրեցին մտնել Երկրորդ համաշխարհային պատերազմի մեջ և Կուրա Լևինի դեկավարությամբ հիմնել հետախուզության և հետաքննության վարչությունը՝ նախակարապետը ԱՄՆ-ի Հետախուզության կենտրոնական վարչության (ՀԿՎ): Լևինը դարձավ Ռազմավարական ռմբակոծումների ծրագրման վարչության դեկավարը, սրի գործունեության արդյունքը եղավ թագավորական ռազմաօդային ուժերի համար

¹ Բնագրի ուղեղ(ներ)ի լվացում (промывание мозгов) անարևահայտիչ բառակապակցությունը փոխարինել են ուղեղի արդուկում (ուղեղ արդուկելը) արտահայտությամբ, որը վաղուց կա մեր լեզվում: Սովորաբար ասում ենք ուղեղս (զլուխս) մի՛ արդուկիր, այսինքն՝ մի՛ համոզիր, մի՛ մոլորեցրու, մի՛ խաբիր: Սա առավելագույնս է արտահայտում գաղափարական մշակման ենթարկելու հասկացության, երևույթի իմաստը: Մանավանդ որ մտավոր ունակությունները, խելքի չափը կախված են ոչ թե ուղեղի մեծությունից, այլ ծայրերի քանակից: Բայց մի՞թե վատ բան է լվալը, մաքրելը: «Փող լվալը» դեռ հասկանալի է. լվանում են, որ «կեղտից մաքրեն»՝ թարքնեն ապօրինի, հանցավոր ճանապարհով ձեռք բերված լինելը: Իսկ ուղեղն ինչու են լվանում. որ հանցավոր մտադրությունները ջնջեն, թե՞ մեղսավոր ցանկություններից մաքրեն (Վ. Ա):

այն ծրագրի մշակումը, ըստ որի Գերմանիայի բանվորական բնակելի թաղամասերը պետք է ենթարկվեին հոծ ոմբակոծումների, իսկ ռազմական գործարանները թողնվեին անվնաս: Կովոդ երկու կողմերի ռազմական գործարանները պատկանում էին միջազգային բանկատերերին, որոնք չէին ցանականում իրենց ունեցվածքի ավերումը:

Պատերազմից հետո ՆԱՏՕ-ն Սոսեկի համալսարանին հրամայեց կազմակերպել ուղեղի արդուկման միանգամայն նոր, հատուկ կենտրոն, որը դարձավ «Բրիտանիայի հազեբանական պատերազմի բյուրոյի» մի մասը. միայն թե հիմա նրա հետազոտությունների նպատակը ոչ թե ռազմական, այլ քաղաքացիական կիրառումն էր: Թմբանյութերի մասին հատվածներում մենք դեռ կանդիդատնանք սայն գերզադունի հիմնարկին, որը կոչվեց «Գիտական քաղաքականության հետազոտական ինստիտուտ» (ԳԶՀԻ):

Քաղաքացիական բնակելի թաղամասերի հոծ ոմբակոծումների նպատակն էր բեկտել գերմանացի բանվորների բարոյական ոգին: Այդ ոմբակոծումների նպատակը Գերմանիայի ռազմական մեքենայի խորտակումը չէր: Լևինը և սպահավագրույնների նրա թիմը արձանագրել են հետևյալ նպատակային ցուցանիշը. եթե գերմանացի բանվորների տների 65 տոկոսը քանդվի թագավորական ռազմաօդային ուժերի գիշերային ոմբակոծություններից, ապա քաղաքացիական բնակչության բարոյական ոգին կընկճվի: Այս հարցի վերաբերյալ իրական աշխատանքային փաստաթուղթը պատրաստել էր Prudential Assurance Company ապահովագրական ընկերությունը:

Թագավորական ՌՕՌ-ն «ոմբակոծիչ» Հարիսի հրամանատարությամբ իրականացրին Լևինի ծրագիրը, որի գազաթնակետը եղավ Գրեգորենի ահավոր ոմբակոծումը. զուկվեց ավելի քան 125.000 մարդ, գլխավորապես՝ ծեյ, կին, երեխա: Գերմանիայի քաղաքացիական բնակչության դեմ «ոմբակոծիչ» Հարիսի սարսափելի մարտարշավների մասին ճշմարտությունը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո էլ երկար ժամանակ խստիվ գաղտնիացված էր:

Թավիստոկը մշակել է այն մանրագնին ծրագրերի մեծ մասը, որոնց շնորհիվ ստեղծվեց Ռազմածովային հետախուզության վարչությունը՝ ԱՄՆ-ում թիվ 1 հետախուզական ծառայությունը, որի համեմատությամբ Հետախուզության կենտրոնական վարչությունն ուղղակի թզուկ է երևում: ԱՄՆ-ի կառավարությունը միլիարդանոց պայմանագրեր է կնքել Թավիստոկի հետ, որի ռազմավարական ծրագրման մասնագետները մշակել են այն բոլոր ծրագրերի մեծ մասը, որոնք Պենտագոնը հիմա էլ է շարունակում օգտագործել երկրի պատշպանությունը կազմակերպելու համար: Սա և՛ս մի ցայտուն ապացույցն է այն մահացու գրկախառնության, որով 300-ի կոմիտեն բռնած պահում է ԱՄՆ-ին և մեր

հիմնարկների մեծ մասին: ԱՄՆ-ում Թավիստոկը կառավարում է ավելի քան 30 հետազոտական ինստիտուտ (սրանք բոլորը կթվարկվեն գրքի վերջում գետեղված ցուցակներում):

Թավիստոկյան այդ ինստիտուտներից շատերը ԱՄՆ-ում վերածվել են ամենակույլ հրեշների. դրանց ազդեցությունը թափանցում է պետական հիմնարկների գործունեության բոլոր ասպարեզները և առաջատար ուժ դառնում ամեն քաղաքականություն որոշելիս: Մեր ապրելակերպի թավիստոկյան ավերիչներից մեկն էլ դոկտոր Ալեքսանդր Քինգն է՝ ՆԱՏՕ-ի հիմնադիր անդամը, 300-ի կոմիտեի սիրեցյալը, այլև կարկառուն անդամը «Հոռմեական ակումբի»: Վերջինս դոկտոր Քինգին հանձնարարել է քանդել կրթության ամերիկյան համակարգը՝ Ռուս-ցիչների ազգային միության վրա վերահսկողություն հաստատելու և որոշ օրենսդիրների ու դատավորների հետ սերտորեն համագործակցելու միջոցով: Եթե մինչև հիմա այնքան էլ հայտնի չի եղել 300-ի կոմիտեի ամենաթափանց ազդեցությունը, ապա սույն գիրքը կցրի այդ առթիվ եղած տարակույսների վերջին նշույլները:

«Հոռմեական ակումբի» կամուկատար ԱՄՆ-ի Արտակարգ իրավիճակների դաշնային գործակալության (FEMA) համար նմուշափորձ եղավ Փենսիլվանիայի նահանգի Հարիսբերգ քաղաքի Երեքմոլոնանոց Կղզու ատոմակայանի շուրջը ստեղծված դրությունը: Ճղճղան լրատվամիջոցները ձեռաց այն կնքեցին որպես «վթար», թեև ամենևին էլ վթար չէր, այլ FEMA-ի համար պիտավորյալ ստեղծված փորձնական իրավիճակ: Սրա հետևանքը եղան զանգվածային լրատվամիջոցների հայացած վախն ու խուճապը, ինչի պատճառով մայրիկ փախան շրջանից, թեև այդ ժամանակ նրանց փաստորեն ոչ մի բան չէր սպառնում:

Սա պիտվեց որպես FEMA-ի հաջողություն և շատ միավորներ պարզեց հակամիջուկային ուժերին: Երեքմոլոնանոց Կղզին ելակետ դարձավ այսպես կոչված «շրջակա միջավայրի պատշախանների»՝ առատորեն դրամավորվող շարժման համար, որին «Հոռմեական ակումբի» անունից ամբողջովին վերահսկում է Ասպենի ինստիտուտը: Զանգվածային լրատվամիջոցներով իրադարձությունների լուսաբանումն անվճար տրամադրել է Բրիտանիայի հետախուզության նախկին գործակալ, CBS հեռուստաընկերության պաշտոնյա Վիլյամ Փալեյը:

FEMA-ն Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակվա Ռազմավարական ուրակոծումների ծրագրման վարչության բնական ժառանգորդն է: Դոկտոր Կուրտ Լևինը, այն բանի տեսաբանը, որ թավիստոկյան դավադիրները կոչում են «ճգնաժամերի կառավարում», եռանդունորեն մասնակցել է այդ հետազոտություններին: Լևինի և Թավիստոկի միջև կա մի անխազելի կապ, որ 37 տարի է, ինչ շարունակվում է: Լևինը Ռազմավարական ուրակոծումների ծրագրման վարչության

գործելակերպը FEMA-ում արմատավարել է չնչին փոփոխություններով, որոնցից մեկը ներգործման ենթակա առարկայի փոխարինումն էր. **ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՓՈԽԱՐԵՆ ԱՅՆ ԴԱՐՁԵԼ Է ԱՄՆ-ը**: Երկարդ համաշխարհային պատերազմն ավարտվելուց 45 տարի հետո էլ Թավիստոկը շարունակում է մատը պահել ձգանի վրա, բայց զենքը հիմա ուղղված է Միացյալ Նահանգների կողմը:

Ներկայումս հանգուցյալ Մարգարետ Միդը Թավիստոկի հովանու ներքո ջանադրաբար ուսումնասիրել է Գերմանիայի և Ճապոնիայի բնակչության արձագանքումը օդային ոմբակոծությունների առաջացրած հոգետազնապին (սթրեսին): Նախագծի կազմմանը մասնակցել է դոկտոր Իրվինգ Յանուսը, իսկ դրա ընդհանուր ղեկավարությունն իրականացրել է բրիտանական բանակի բրիգադային գեներալի կոչման հասցված դոկտոր Ջոն Ռոուլինգս Ռիզը: Հետազոտությունների արդյունքները հանձնվել էին FEMA-ին: Իրվինգ Յանուսի զեկուցումը մեծ ազդեցություն է ունեցել FEMA-ի քաղաքականության վրա: Յանուսը հետագայում դրանք օգտագործել է իր «ՕԴԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀՈԳԵՏԱԳՆԱՊԸ» գրքում: ԵՐԵՐՄՂՈՆԱՆՈՅ ԿՂԶՈՒ «ՃԳՆԱԺԱՄԻ» ԸՆԹԱՑՔՈՒՄ FEMA-ն ՏԱՌԱՅԻՈՐԵՆ ՀԵՏԵՎՈՒՄ ԷՐ ԱՅԴ ԳՐՔԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻՆ: Յանուսի միտքն իրոք պարզ էր. արիեստականոթեն ստեղծել ճգնաժամերի շարք և բնակչության հետ աչքակապուկ խաղալ՝ հետևելով Լևինի առաջարկած ահաբեկման մարտավարությանը: Այդժամ մարդիկ կգործեն հենց պահանջվածի պես:

Այս փորձը կատարելիս Լևինը մի նոր բան է հայտնաբերում. լայնազանգված հանրության կառավարումը գլուխ է գալիս զանգվածային լրատվության միջոցների օգտագործմամբ, ընդ որում միջուկային պատերազմի սարսափները զանգվածների գիտակցությանն են հասնում հեռուստատեսության միջոցով: Պարզվում է նաև, որ միջուկային պատերազմի սարսափները դրամատիկացնելու համար շատ արդյունավետ են կանանց ամսագրերը: Յանուսը հարցախույզ (թեստ) է անցկացնում, որի ընթացքում սենատար Դեյլ Բամպերսի կին Բետի Բամպերսը առյժմ առարկայի առթիվ նյութ է «գրում» «Մակ-Քոլս» հանդեսի համար:

Հոդվածը հայտնվում է «Մակ-Քոլսի» 1983 թ. հունվարի համարում: Իրականում հոդվածը գրել էր ոչ թե միսիս Բամպերսը, այլ նրա համար պատրաստել էին քավիստակցի մի խումբ գրողներ¹, որոնք մասնագիտանում են նման տեսակի նյութեր թխելու ասպարեզում: Հրապարա-

¹ Գրող բառն այս գրքում հաճախ գործածվում է ո՛չ մեր հասկացած գեղարվեստական երկերի հեղինակի, այլ առհասարակ որևէ բան, հոդված գրողի իմաստով: Համապատասխանում է նախկինում մեզանում գործածվող, իսկ այժմ մոռացված իմաստով գրագետ հասկացությանը (Վ. Ա.):

կումք ստի, խեղաթյուրված փաստերի, զրպարտությունների, կեղծ նախադրյալների վրա անբողջովին հիմնված ենթադրությունների ու կռահումների մի խառնուրդ էր: Բամպերսի հողվածը բնորոշ օրինակն էր այն հոգեբանական ձեռնածության, որին այնպես լավ է տիրապետում Թավիստոկը: «Մակ-Քոլս» հանդեսը կարդացող լեդիներից ոչ մեկին չի հաջողվել գերծ մնալ այն սոսկալի պատմության տպավորություններից, քե ինչի է նման միջուկային պատերազմը:

300-ի կոմիտեն իր տրամադրության տակ ունի հարյուրավոր խելքակենտրոններ և պաշտոնական հիմնարկներ ընդգրկող բյուրակրատական վիթխարի մեքենա, որոնք ղեկավարում են ամենատարբեր անձանց և կազմակերպությունների՝ մասնավոր գործարարությունից սկսած մինչև կառավարական մարմիններն ու առաջնորդները: Ես կհիշատակեմ սրանցից մի քանիսը՝ սկսելով Մարշալի գերմանական հիմնադրամից: Սրա անդամների (նրանք նաև ՆԱՏՕ-ի և «Հռոմեական ակումբի» անդամներ են) թվի մեջ են մտնում այնպիսի անձինք, ինչպիսիք են Chase Manhattan Bank-ի Դևիդ Ռոքֆելերը, Hanover Trust and Finance Corporation-ի Գաբրիել Հեյզը, Ֆորդի հիմնադրամի Սիլտոն Քաքը: Սոցիալիստական ինտերնացիոնալի առաջնորդ, ԽՍՀՄ ՊԱԿ-ի գործակալ և 300-ի կոմիտեի անդամ Վիլլի Բրանդը, «Ավտոմոբիլային արդյունաբերության միավորված քանվորներ» (United Auto Workers) արհմիության գործադիր խորհրդի նախագահ Իրվինգ Բլուստոունը, արքայազն Ֆիլիպի և «Հռոմեական ակումբի» հովանավորությանը գործող Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի (World Wildlife Fond) ամերիկյան քաժանմունքի նախագահ Ռասել Թրեյնը, CBS-ի ծրագրերի կարգադիր տնօրեն Էլիզաբեթ Միջլին, Russel Sage Foundation հիմնադրամի տնօրեն Բ. Ռ. Գլիֆուրդը, Ասպենի ինստիտուտի Գվիլո Գոլդմանը, 300-ի կոմիտեի աչքի ընկնող անդամ, այժմ հանգուցյալ Ավերել Հարիմանը, Կառնեգիի հիմնադրամի Թոմաս Լ. Հյուզը, Մասաչուսեթսի ճարտարարվեստական ինստիտուտի «համաշխարհային դինամիկայի» Դենիզ Միդուզը և Ջեյ Ֆորեստորը:

Թեև 300-ի կոմիտեն արդեն ավելի քան 150 տարի է, ինչ զայություն ունի, իր ներկայիս կերպն առել է մոտ 1897-ին: Նա հրամանները միշտ տվել է Միջազգային գործերի թագավորական ինստիտուտի պես քող կազմակերպությունների միջոցով: Երբ որոշվում է, որ եվրոպական գործերը պետք է կառավարի մի գերկազմակերպություն, ՄԳԹԻ-ն հիմնում է Թավիստոկի ինստիտուտը, որն էլ իր հերթին ստեղծում է ՆԱՏՕ-ն: Հինգ տարի շարունակ ՆԱՏՕ-ն դրամավորվել է «Մարշալի գերմանական հիմնադրամից»:

300-ի կոմիտեի արտաքին քաղաքական մարմին «Բիլլեթերգերների ակումբի» ամենակարևոր անդամը Ջոզեֆ Ռետինգերն էր, որը,

ասում են, դրա հիմնադիրն ու կազմակերպիչն էր: «Բիլդերբերգերների ակումբի» անդամների ամենամյա հանդիպումները դավադրության որսկանների հիացմունքի առարկան են եղել մի քանի տասնամյակ:

Ռետիզները լավ ուսուցված ճիզվիտական քահանա էր և 33-րդ աստիճանի մասոն: Միսիս Քեթրին Մեյեր Գրեհենը, որը կասկածվում էր «Վաշինգտոնի փոստ» թերթի վերահսկողությունը ստանալու նպատակով ամուսնուն սպանելու մեջ, նույնպես «Հոմեական ակումբի» կարևոր անդամներից էր, ինչպես որ New York Life Insurance Company-ի («Նյու Յորքի կյանքի ապահովագրության ընկերություն») Փոլ Գ. Հոֆմանը: Սա ԱՄՆ-ի ապահովագրական ամենախոշոր ընկերություններից մեկն է, որը մտնում է «Ռեմկ» կորպորացիայի մեջ, իսկ վերջինս ուղղակիորեն կապված է Անգլիայի թագուհի Եղիսաբեթի ընտանիքի հետ: Բացի սրանից՝ «Բիլդերբերգերների ակումբի» և «Հոմեական ակումբի» հիմնադիր անդամներից էին Ջոն Ջ. Մակ-Քլոյը, մի մարդ, որը փորձել էր քաղաքական քարտեզից ջնջել հետպատերազմյան Գերմանիան, և «Կառնեգի կորպորացիայի» Ջեյմս Ա. Փերկինսը:

Ի՞նչ ընտրյալ կաստա... Եվ այնուամենայնիվ տարօրինակ է, որ, բացի իսկական հետախուզական ծառայությունների աշխատակիցներից, այդ կազմակերպության մասին մինչև վերջերս գիտեին լոկ հատուկ ենտ մարդիկ: Այն իշխանությունը, որ ունեն սույն կարևոր անձերն ու կորպորացիաները և սրանց ներկայացրած հեռուստակայանները, թերթերը, ապահովագրական ընկերությունները, բանկերը, համապատասխանում է եվրոպական առնվազն երկու երկրի իշխանությանն ու վարկին: Բայց և այնպես սա սոսկ փոքր մասնիկն է 300-ի կոմիտեի չափ չճանաչող, ամեն տեղ թափանցող և ամեն ինչ ընդգրկող շահերի:

Վերոթվարկյալների մեջ չի հիշատակվել Ռիչարդ Գարդները (թեև նա շատ վաղ է դարձել 300-ի կոմիտեի անդամ), որը Հոմ էր ուղարկվել հատուկ առաքելությամբ: Այնտեղ նա ամուսնանում է Վենետիկի «Սև արիստոկրատիայի» ամենահին ընտանիքներից մեկի ներկայացուցչուհու հետ՝ դրանով իսկ Վենետիկի արիստոկրատիայի համար ուղիղ մուտք ապահովելով Սպիտակ տուն: Հանգուցյալ Ավերել Հարիմանը ևս Կոմիտեի անմիջական բանագնացն էր Կրեմլի ու Սպիտակ տան միջև: Հարիմանի մահից հետո այս գործառույթը փոխանցվեց Քիսինգերին:

«Հոմեական ակումբն» իրոք 300-ի կոմիտեի չարաշուք և գորավոր հիմնարկն է: Թեպետ արտաքուստ սրա հիմնական նպատակակետը ԱՄՆ-ն է, այնուհանդերձ, այս խմբի գործունեությունը հանգուցվում է 300-ի կոմիտեի մյուս հիմնարկների հետ, իսկ նրա ամերիկյան անդամները հաճախ աշխատում են Ճապոնիայի ու Գերմանիայի «հիմնախնդիրների» վրա:

Ստորև բերվում է բնավ էլ ոչ լրիվ ցուցակը այն կազմակերպություն-

ների, որոնք վերահսկվում են 300-ի կոմիտեի կողմից.

«Արդյունաբերական ժողովրդավարության լիգա» (League of Industrial Democracy)

Պաշտոնատարներ՝ Մայքլ Նովակ (Michael Novak), Ջին Քիրկպատրիկ (Jean Kirkpatrick), Յուջին Ռոստոու (Eugene Rostow), Իրվին Սուալ (Irwin Suall), Լեյն Քիրկլանդ (Lane Kirkland), Ալբերտ Շենկեր (Albert Schenker):

Նպատակը. բանվորների և ձեռնարկատերերի աշխատանքային բնականոն հարաբերությունները խախտելն ու վատացնելը արհմիությունների առաջնորդների ու անդամների ուղեղներն արդուկելու միջոցով, որպեսզի սրանք առաջ չքաշեն ակնհայտորեն անիրագործելի պահանջներ: Ընդ որում՝ հատուկ ուշադրություն է դարձվում մետաղաձուլական, ավտոմոբիլային և շինարարական ճյուղերին:

«Ազատության տուն» (Freedom House)

Պաշտոնատարներ՝ Լեո Չերն (Leo Churn) և Կարլ Գերշման (Carl Gershman):

Նպատակները. սոցիալիստական տարագեղում սփռելը ամերիկյան բանվորների շրջանում, անմիաբանության և դժգոհության մթնոլորտ ստեղծելը: Հիմա, երբ այդ նպատակները հիմնականում կատարվել են, Լուուրենս Իլբերգերը Գերշմանին աշխատանքի է հրավիրել CEDC: Սա նոր կազմակերպություն է, որն ստեղծվել է միացյալ Գերմանիայի առևտրախուժումը (էքսպանսիան) դեպի Դանուբի ավազանի երկրներ կասեցնելու նպատակով:

«Հանուն ժողովրդավարական մեծամասնության կոմիտե» (Committee for a Democratic Majority)

Պաշտոնատարներ՝ Բեն Վատենբուրգ (Ben Wattenburg), Ջին Քիրկպատրիկ (Jean Kirkpatrick), Ելմո Ջումվա (Elmo Zumwa) և Միջի Դեկտոր (Midge Dector):

Նպատակը. սոցիալիստական ուսյալ դասի և փոքրամասնությունների [միասեռականների] խմբերի միջև կապեր հաստատելը՝ մի ծանրակշիռ ընտրադաշինք ստեղծելու համար, որի աջակցությանը կարելի կլինի ապավինել ձախ թեկնածուների ընտրությունների դեպքում: Սա հարյուր տոկոսանոց ֆարիտասական կազմակերպություն է:

Արտաքին քաղաքականության հետազոտական ինստիտուտ (Foreign Policy Research Institute)

Պաշտոնատար՝ Ռոբերտ Շտրաուս Հյուս (Robert Strausz Hupe):

Նպատակը. ՆԱՍԱ-ի [ԱՄՆ-ի Օդանավորդության և տիեզերական տարածության ուսումնասիրման ազգային վարչություն] տիեզերական ծրագիրը խափանելը և լրավին դադարեցնելը:

«ԱՄՆ-ի սոցիալ-դեմոկրատներ» (Social Democrats USA)

Պաշտոնատարներ՝ Բայարդ Ռաստին (Bayard Rustin), Լեյն Քիրկլանդ (Lane Kirkland), Ջեյ Լավստոուն (Jay Lovestone), Կարլ Գերշման (Carl Gershman), Հովարդ Սամուել (Howard Samuel), Սիդնի Հուկ (Sidney Hook):

Նպատակները. արմատական սոցիալիզմ տարածելը հատկապես փոքրամասնությունների մեջ. սոցիալիստական երկրների նմանօրինակ կազմակերպությունների հետ կապերն ամրապնդելը: Լավստոունը երկար ժամանակ եղել է ԱՄՆ-ի մի քանի նախագահների առաջատար խորհրդականը սովետական գործերի գծով և Մոսկվայի հետ կապերի անմիջական օղակը:

Սոցիալական հարաբերությունների ինստիտուտ (Institute for Social Relations)

Պաշտոնատարներ՝ Հարլանդ Բլիվլենդ (Harland Cleveland), Ուիլլիս Հարմոն (Willis Harmon):

Նպատակը. Ամերիկայի մտածելակերպը փոխելը:

«Քաղաքացիների լիգա» (The Citizens League)

Պաշտոնատար՝ Բարի Բոմոներ (Barry Commoner):

Նպատակը. «Ղնդիանոր» դատական գործեր հարուցելը կառավարական տարբեր գործակալությունների դեմ. սա անել հատկապես պաշտպանության և պաշտպանական արդյունաբերության բնագավառում:

«Պատերազմի հակառակորդների լիգա» (War Resisters League)

Պաշտոնատարներ՝ Նոամ Խոմսկի (Noam Chomsky) և Դավիդ Մակ-Ռեյնոլդս (David McReynolds):

Նպատակը. Վիետնամի պատերազմի դեմ պայքար կազմակերպելը ձախ խմբերի, ուսանողների և հոլիվուդյան արտիստախմբերի շրջանում:

«Հանուն ժողովրդավարական սոցիալիզմի հաստատույթի (ինստիտուտի) կազմակերպական կոմիտե» (The Democratic Socialist Organizing Committee of the Institute for Democratic Socialism)

Պաշտոնատարներ՝ Ֆրանկ Ջեյդեր (Frank Zejder), Արթուր Ռեդիեր (Arthur Redier) և Դավիդ Մակ-Ռեյնոլդս (David McReynolds):

Նպատակը. ձախ սոցիալիստական գործունեություն և գաղափարախոսություն տարածելը ԱՄՆ-ում ու Եվրոպայում:

«Հակավարկարեկչական լիգայի հետաքննությունների բաժանմունք» (Anti-Defamation League Fact Finding Division)

Պաշտոնատար՝ Իրվին Սուալ, որը հայտնի է նաև որպես Ջոն Գրեհեմ:

Նպատակը. այս կազմակերպությունը ԱՄՆ-ի Հետաքննությունների դաշնային բյուրոյի և Բրիտանիայի հետախուզության համատեղ ձեռնարկություն է, որը նախատեսված է աջ հոսանքի խմբեր ու առաջնորդներ հայտնաբերելու և դրանց նախօրոք չեզոքացնելու համար, քանի դեռ բավականաչափ խոշոր ու ազդեցիկ չեն դարձել:

«Մեքենավարների միջազգային միություն» (International Association of Machinists)

Նպատակը. Սոցիալիստական ինտերնացիոնալի գաղափարները պաշտպանող բանվորական ճակատ է, բուժարան՝ կազմակերպված անկարգությունների և բանվորների ու կառավարիչների միջև բախումների:

«Կարվածքեղենի արդյունաբերության միավորված բանվորներ» (Amalgamated Clothing Workers)

Պաշտոնատարներ՝ Մերեյ Ֆինդլի (Murray Findlay), Իրվին Սուալ և Ջեկոբ Շեյնկման (Jacob Scheinkman):

Նպատակները. շատ բաներով նման են «Մեքենավարների միության» նպատակներին, այն է՝ սոցիալիստական գաղափարներ տարածելը և կարվածքեղենի արդյունաբերության մեջ աշխատանքային բախումներ հարուցելը:

«Ա. Ֆիլիպ Ռենդոլֆի ինստիտուտ» (A. Philip Randolph Institute)

Պաշտոնատար՝ Բայարդ Ռաստին (Bayard Rustin):

Նպատակը. կազմակերպությունների գործողություններն ընդհանուր նպատակներին համաձայնեցնելը, օրինակ՝ ուսանողների և բանվորների մեջ սոցիալիստական գաղափարների տարածման գործողություններն իրար համաձայնեցնելը:

Քեմբրիջի քաղաքական հետազոտությունների ինստիտուտ (Cambridge Policy Studies Institute)

Պաշտոնատար՝ Գար Ապելրովից (Gar Apelrovitz):

Նպատակները. ինստիտուտի կատարած քաղաքական հետազոտություններն ընդլայնելն ու խորացնելը: Ինստիտուտը հիմնադրվել է 1969 թ. փետրվարին միջազգային սոցիալիստ, սենատոր Հեյլորդ Նելսոնի նախկին օգնական Գար Ապելրովիցի կողմից: Ապելրովիցը «Հոռմեական ակումբի» համար գրել է բավականաչափ վեճեր հարուցած

«Ատոմային դիվանագիտություն» գիրքը, որի հրատարակման ծախսերը հոգացել է «Մարշալի գերմանական հիմնադրամը»: Ինստիտուտի գործունեությունը կենտրոնացված է հետազոտական և գործնական այնպիսի նախագծերի վրա, որոնք նպատակ են հետապնդում արմատապես վերափոխելու Ամերիկայի հասարակությանը, այսինքն՝ Համ-ՄիԿառի նախապատրաստման ու գալստյան համար ստեղծելու ֆաբրիկական Միացյալ Նահանգներ:

**«Հյուսիսատլանտյան ինստիտուտի տնտեսական կոմիտե»
(Economic Committee of the North Atlantic Institute)**

Պաշտոնատար՝ Աուրելիո Պեչեյ:

Նպատակը. համաշխարհային տնտեսական խնդիրների լուծման ՆԱՏՕ-ի խելքակենտրոն հիմնելը:

«Ժողովրդավարական հաստատությունների (ինստիտուտների) ուսումնասիրման կենտրոն» (Center for the Study of Democratic Institutions)

Պաշտոնատարներ՝ հիմնադիր Ռոբերտ Հաթչինս (Robert Hutchins) (300-ի կոմիտեի գործիչ), Հարի Աշմոր (Harry Ashmore), Ֆրենկ Քելլի (Frank Kelly) և միավորված անդամների մի մեծ խումբ:

Նպատակները. այնպիսի գաղափարներ տարածելը, որոնք կհանգեցնեն լիբերալ սոցիալական նորոգումների: Սրանց խնդիրներից մեկը ԱՄՆ-ի այնպիսի նոր սահմանադրության նախագիծ մշակելն է, որը կլինի միաժամանակ խստիվ միապետական և սոցիալիստական, ինչպես Դանիայինն է:

Կենտրոնը «օլիմպոսցիների» պատվարներից մեկն է: Այն գտնվում է Սանտա Բարբարայում և տեղավորված է «Պարթենոն» ճոռոն անունը կրող շենքում: Ներկայացուցիչների պալատի նախկին անդամ Ջոն Ռեբիկը սույն կենտրոնը բնութագրել է որպես «մինչև առաստաղը համայնավարներով լցոնված գրասենյակ»: 1973 թ. մոտերքին արդեն մշակվել էր ԱՄՆ-ի նոր սահմանադրության 35 նախագիծ, ընդամենը դրանցից վերջինում առաջարկվում էր «բնապահպանական իրավունք» երաշխավորող մի ուղղում: Սրա նպատակն այն է, որ ԱՄՆ-ի արդյունաբերության հիմքը 1969 թվականի մակարդակի համեմատ ոչինչ բանի վերածի: Այլ խոսքով ասած՝ այս կազմակերպությունը վարում է 300-ի կոմիտեի հաստատած «Հռոմեական ակումբի» քաղաքականությունը, որը նախատեսում է հետարդյունաբերական գլոյական ան:

Կենտրոնի նպատակներն ու խնդիրները նաև ներառում են տնտեսական պարբերաշրջանների կառավարումը, գործազրկության նպաստների տրման համակարգի վերահսկողությունը, ազգային հասարակական աշխատանքների և գործարարության (բիզնեսի) կարգա-

վորումը, շրջակա միջավայրի աղտոտման հսկողությունը: Հանդես գալով 300-ի կոմիտեի անունից՝ Էշմորն ասել է, որ Կենտրոնի խնդիրն է մեր (ԱՄՆ-ի) քաղաքական համակարգի ավելի այսլյունավետ աշխատանքի համար գործելակերպեր ու միջոցներ գտնելը: «Մենք պետք է փոխենք կրթության համակարգը և մշակենք նոր սահմանադրություն ԱՄՆ-ի համար, ինչպես նաև միասնական սահմանադրության՝ ողջ աշխարհի համար», - հայտարարել է Էշմորը:

Այնուհետև Էշմորը հռչակում է հետևյալ նպատակները.

ՄԱԿ-ին անդամակցելը պետք է լինի համընդհանուր:

Անհրաժեշտ է ամրապնդել ՄԱԿ-ը:

Հարավ-արևելյան Ասիան պետք է չեզոքացվի: («Չեզոքացվի»-ի տեղը կարդա «համայնավարացվի» (կոմունիստականացվի):

Սառը պատերազմը պետք է ավարտվի:

Ցեղային խտրականությունը պետք է արգելվի:

Պետք է օգնություն ցույց տրվի զարգացող երկրներին: (Նկատի ունի օգնությունը տնտեսության քանդման գործում:)

Հրաժարվել խնդիրների ուղղման ուղիով լուծելուց: (Ափսոս, որ այս բանը Ջորջ Բուշին չեն ասել Պարսից ծոցի կռվից առաջ:)

Ազգային ոչ մի լուծում ընդունելի լինել չի կարող:

Անհրաժեշտ է գոյակցություն:

Հարվարդի հոգեբանական կլինիկա (Harvard Psychological Clinic)

Պաշտոնատար՝ դոկտոր Կուրտ Լևին, հաստիք՝ բաղկացած 20 զխոնականներից, որոնք «նոր գիտության» (աղանդ է - Վ. Ա.) հե-տևորդներ են:

Նպատակը. հասարակության մեջ այնպիսի մթնոլորտ ստեղծելը, որը 300-ի կոմիտեին հնարավորություն կտար ԱՄՆ-ում հասնելու անսահմանափակ իշխանության:

Գիտական քաղաքականության հետազոտական կենտրոն (Science Policy Research Unit)

Պաշտոնատարներ՝ Լիլանդ Բրեդֆորդ (Leland Bradford), Քենեթ Դեմ (Kenneth Dam), Ռոնալդ Լիպերտ (Ronald Lippert):

Նպատակը. քաղաքական համակարգի մեջ մտնող Սուսեկի համալսարանին (Անգլիա) առընթեր «գալիք ցնցումների» հետազոտական ինստիտուտ ստեղծելը:

Համակարգերի զարգացման կորպորացիա (Systems Development Corporation)

Պաշտոնատարներ՝ Շելդոն Արենբերգ (Sheldon Arenberg) և մի քանի հարյուր աշխատակիցներից բաղկացած հաստիք:

Նպատակը. ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի հետախուզական ծառայությունների բոլոր մասերի գործողությունները համաձայնեցնելը: Կորպորացիան որոշում է, թե այսինչ պետական ազգային կազմավորումը ո՞ր «խաղացույի» հովանու տակ պիտի լինի: Օրինակ, Իսպանիան պետք է գտնվի թուրսցած և ուժասլառ Կաթոլիկ եկեղեցու ազդեցության պորտում, ՄԱԿ-ը՝ գլխավոր քարտուղարի վերահսկողության տակ և այլն: Սա մշակել է «X-RAY 2» համակարգը, որի մեջ խելքակենտրոնների անձնակազմերը, զինվորական հիմնարկները և իրավապահ մարմինները հետատիպների ու համակարգիչների ազգային ցանցի միջոցով կապվում են Պենտագոնի՝ հետ, որպեսզի հետևելու (լրտեսելու) տեխնիկան կիրառեն ազգային մասշտաբով: Արենբերգն ասում է, թե իր գաղափարները չեն վերաբերում զինվորական ասպարեզին, բայց նրա գործելու բոլոր եղանակները փաստորեն առնված են զինվորական աղբյուրներից: Նա մշակողն է «Նյու Յորքի նահանգի հետևելու և անձի ով լինելը որոշելու համակարգի», որը Ջորջ Օրուելի «1984» գրքի ոգուն լիովին համապատասխան մի նախագիծ է: Իսկ ըստ մեր (ԱՄՆ-ի) Սահմանադրության՝ սույն նախագիծը միանգամայն անօրինական է: Արդեն գործի է զգվել այս «համակարգը» ազգային մասշտաբով արմատավորելու թափանիվը: Սա Բժեզինսկու հենց այն ասածն է, որ հնարավոր է դառնալու գրեթե վայրկենապես օգտվելը յուրաքանչյուր մարդու վերաբերյալ տվյալների համակարգչային կայքերից:

«Նյու Յորքի նահանգի հետևելու և անձի ով լինելը որոշելու համակարգը» տվյալներ է մատակարարում իրավապահ ու պետական բոլոր մարմիններին: Այն ապահովում է ինչպես քրեական, այնպես էլ սոցիալական անհատական տվյալների պահպանումը և դրանք շուտափույթ ստանալը: Սա ԻՍԿ ԵՎ ԻՍԿ 300-ի կամխտեի նախագիծ է: Ստիպողական անհրաժեշտություն է առաջացել տակից գլուխ քննելու սույն «Համակարգերի զարգացման կորպորացիայի» գործերը, բայց այդ չի մտնում մեր գրքի խնդիրների մեջ: Մի բան պարզ է. «կորպորացիան» իր առաջ նարտակ չի դնում պաշտարանելու ԱՄՆ-ի Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքներն ու ազատությունները: Իսկ ինքը հանգիստ ու լազատ «բազմել» է Սանտա Բարբայայում, Ռոբերտ Հաթչինսի «Պարթենոնի» հենց կողքին: Ահա «Հռոմեական ակումբի» այդ հիմնարկի կողմից յույս ընծայվող մի քանի հրատարակությունների ցուցակը.

Լ “Center Magazine” («Կենտրոն» հանդես), “Counterspy” («Հակալր-

¹ ԱՄՆ-ի զինվորական գերատեսչությունը: Այսպես է կոչվել այն շենքի հնգանկյուն (հունարեն պենտագոնոն՝ հնգանկյուն) ձևի պատճառով, որտեղ գտնվում է Պաշտպանության նախարարությունը (Վ. Ա.):

տես»), “Coventry” («Քովենտրի»), “Covert Action Information Bulletin” («Գաղտնի գործառնությունների տեղեկագիր»), “Dissent” («Հերձվածողություն»), «Այլախոսություն»), “Human Relations” («Մարդկային հարաբերություններ»), “Industrial Research” («Արդյունաբերական հետազոտություններ»), “Inquiry” («Հետաքննություն»), “Mother Jones” («Մայր Ջոուս»), “One” («Մեկ»), “Progressive” («Առաջադեմ»), “Raconteur” («Պատմող»), “The New Republic” («Նոր հանրապետություն»), “Working Papers for a New Society” («Աշխատանքային գրառումներ նոր հասարակության մասին»): 1

Ամերիկայի հասարակությունը կապշելու, եթե իմանար, թե բանակը որքան խորն է քաշված 300-ի կոմիտեի «խելքակենտրոնների» հետ համատեղ կատարվող «Նոր ռազմական մարտավարության» հետազոտությունների մեջ: Ամերիկացիք չգիտեն, որ 1946 թ. 300-ի կոմիտեն «Հոմնեական ակումբին» հրամայել է զարգացնել խելքակենտրոնները, որոնք **ինքնին նոր միջոց են Կոմիտեի փիլիսոփայությունը տարածելու համար**: Մեր զինվորականության վրա այդ խելքակենտրոնների ազդեցությունը (հատկապես 1959 թվականից սկսած, ելք դրանք սկսեցին բուռն կերպով բազմանալ) իրոք ապշեցուցիչ է: Կասկած չկա, որ XX դարի վերջերին դրանք ավելի մեծ դեր կկատարեն մեր երկրի ընթացիկ կառավարման գործում:

«Մոնտ Փելերին» ընկերություն (The Mont Pelerin Society)

Մոնտ Փելերինը տնտեսական հիմնադրամ է, որը նախատեսված է տնտեսական մոլոր տեսությունների տարածելու և արևմտյան աշխարհի տնտեսագետների վրա ազդելու համար, դրայեսզի սրանք հետևեն այն տիպարներին, որոնք այդ հիմնադրամը ժամանակ առ ժամանակ լայն աշխարհ է հանում: Սրա երևելի գործիչներն են ֆրանսիացի Էդուարդ Գաբրիելը և Միլտոն Ֆրիդմանը:

Հուվերի ինստիտուտ (The Hoover Institution)

Նախապես հիմնված լինելով կոմունիզմի դեմ պայքարելու համար՝ ինստիտուտը դանդաղորեն, բայց վստահաբար թերվեց սոցիալիզմի կողմը: Սրա տարեկան բյուջեն կազմում է 2 միլիոն դոլար, որը տրամադրում են 300-ի կոմիտեի հովանու ներքո գործող ընկերությունները: Ներկայումս նա սկեռվել է «խաղաղ փոփոխությունների» վրա՝ ուշադրությունը հիմնականում նվիրելով ԱՄՆ-ի սպառազինությունների վերահսկմանը և ներքին խնդիրներին: Չանգվածային լրատվամիջոցներով նա հաճախ մատուցվում է որպես «պահպանողական» կազմակերպություն, որի հայացքներն օգտագործվում են պահպանողական տեսակետի կարիք լինելու դեպքում: Հուվերի ինստիտուտը բնավ էլ այդպիսին չէ, և այն բանից հետո, երբ 1953 թ. ինստիտուտը վերահսկելու գործն անցավ «Հոմնեական ակումբին» սերտորեն կապված այլ խմբի

ձեռքը, նա դարձավ ՀամՄԻԿուռին՝ Համաշխարհային նոր կարգին «ցանկալի» քաղաքականության խոսափողը:

Լժառանգության հիմնադրամ (Heritage Foundation) 1

Գարեջրի մագնատ Ջոզեֆ Զուրսի (Joseph Coors) կողմից հիմնված լի-նեյթով ոլորտ պահպանողական խելքակենտրոն՝ հիմնադրամը շուտով մտնում է «Հռոմեական ակումբի» ղեկավարությամբ գործող ֆաբլոսականների սրբ Փիթր Վիքերս-Հոլի, Ստյուարտ Բատլերի (Stuart Butler), Ստիվեն Էյզլի (Steven Auzlei), Ռոբերտ Մոսի (Robert Moss) և Ֆրիսթրիխ Ժոն Հայելի վերահսկողության տակ: Այս հիմնարկը գլխավոր դեր է կատարել Մեծ Բրիտանիայի լեյբորիստների առաջնորդ Էնտանի Վեջևուդ Բենի «Ռեյգանին թեռչերացնելու՝» հրամանի կատարման գործում: «Լժառանգության հիմնադրամը», անշուշտ, պահպանողական կազմակերպություն չէ, թեև ժամանակ առ ժամանակ կարող է այդպիսին երևալ:

Մարդու հնարավորությունների հետազոտական վարչություն (Human Resources Research Office-Humro)

Սա «հոգեճարտարաբանություն» (սոսիոլոգիայի) ասպարեզում աշխատող զինվորական հետազոտական հիմնարկ է: Անձնակազմի մեծ մասը նախապատրաստվել է Թավրատկում: «Հոգեճարտարաբանություն» ընդգրկում է այնպիսի բնագավառներ, ինչպիսիք են զինվորներին որևէ քայլի դրդող շարժառիթները և նրանց պատճառարանումները, զորքերի մարտական ոգին և հակառակորդի կողմից օգտագործվող երաժշտությունը: Փաստորեն այն բանի մեծ մասը, որ Ջորջ Օլսերը նկարագրել է իր «1984» գրքում, գարմանալարեն նման է HUMRO-ի ուսուցածին: 1969 թ. 300-ի կամիտեն վերահսկողության տակ առավ այդ կարևոր հիմնարկը և այն դարձրեց «Հռոմեական ակումբի» հովանավորությամբ կառավարվող ոչ առևտրային մասնավոր կազմակերպություն: Սա մարդու վարքի հետազոտման ամենամեծ խումբն է, որ կա ԱՄՆ-ում:

Նրա գործունեության ասպարեզներից մեկն է հոգեազնապային (սթրեսային) իրավիճակում հայտնված փոքր խմբերի ուսումնասիրությունը: HUMRO-ն զինվորականներին ուսուցանում է, որ զինվորը պարզապես իր հանդերձանքի շարունակությունն է: Նա մեծ ազդեցություն է ունեցել ԱՄՆ-ի բանակում այնպես լայնորեն կիրառվող «զենք մարդ» և «մարդու հատկությունների կառավարման» համակարգերի մշակման գործում: HUMRO-ն հզոր ազդեցություն ունի բանակի վարքի վրա: Գի-

¹ ԱՄՆ-ի նախագահ Ռոնալդ Ռեյգանը և Մեծ Բրիտանիայի վարչապետ Մարգարետ Թեչչերը կառավարել են միաժամանակ (Վ. Ա.):

տակցությունն ընկճելու նրա գործելակերպերն ուղղակիորեն սկիզբ են առնում Թավիստոկից: Ենթադրվում է, որ HUMRO-ի կիրառական հոգեբանության դասընթացները զինվորական պետերին կառավորեցնեն, թե ինչպես պիտի մարտուն ստիպեն գործել որպես զենք: Դրա ցուցադրական օրինակն է այն փաստը, որ Իրաքի հետ կռվելիս ամերիկացի զինվորները հաժարակամորեն անտեսեցին իրենց դաշտային (զինվորական) կանոնագրքերը և ողջ-ողջ թաղեցին 12.000 իրաքցի զինվորների:

Ուղեղարդուկման այս տեսակը սարսափելի վտանգավոր է, քանի որ այսօր այն կիրառվում է բանակի հանդեպ, բանակն էլ այն կիրառում է, որպեսզի գազանաբար ոչնչացնի «թշնամու» հազարավոր զինվորների, իսկ վաղը բանակին կասվի, թե «թշնամիները» կառավարության քաղաքականության դեմ տրամադրված քաղաքացիական բնակչության խմբերն են: Մենք արդեն հիմա պատկերացնում ենք արդուկված ուղեղներով խոյերի անխորհուրդ հուտը: Բայց և այնպես դուրս է գալիս, որ HUMRO-ն կարող է գիտակցության ընկճումը և դրա կառավարումը մի քայլ առաջ տանել: HUMRO-ն Թավիստոկի արժեքավոր յուացումն է, և նրա շատ հանձնարարականներ օգտագործվել են Պալսից ծոցի պատերազմում: Սա զգալիորեն հեշտացնում է այն բանը հասկանալը, թե ինչու էին ԱՄՆ-ի զինվորներն իրենց պահում անգութ ու անսիրտ մարտասպանների պես՝ բացարձակապես չհամապատասխանելով ամերիկացի ռազմիկի ավանդական կերպարին:

«Հետազոտական և վերլուծական կորպորացիա» (Research Analysis Corporation)

Այս կազմակերպությունը, HUMRO-ի՝ «1984» գրքի ոգով երկվորյակը, գտնվում է Վիրջինիայի նահանգի Մակլին քաղաքում: Հիմնված լինելով 1948 թվականին՝ 1961-ին ընկել է 300-ի կոմիտեի վերահսկողության տակ, երբ դարձել է Ջոնս Հոպկինսի համալսարանի մի մասը: Կորպորացիան կազմել է ավելի քան 600 նախագիծ, ներառյալ նեգրերին ամերիկյան բանակին մերելը (ինտեգրելը), միջուկային զենքի մարտավարական օգտագործումը, հոգեբանական պատերազմների վարելու ծրագրերը և բնակչության զանգվածների կառավարումը:

Անշուշտ, ուրիշ բազմաթիվ խոշոր խելքակենտրոններ էլ կան, և դրանց մեծ մասը կղիտարկենք գրքի շարադրության ընթացքում: Մեր քննարկման առավել կարևոր նյութերից մեկը խելքակենտրոնների և հասարակական կարծիքի ուսումնասիրման ընկերությունների՝ «կարծուսների»՝ փոլստերների (pollsters) համագործակցությունն է, որի արդյունքներն էլ դառնում են պետական ու հասարակական քաղաքականության հիմքը: Հենց այս ընկերություններն են հասարակական կարծիքը կերտում դավադիրներին՝ պետք եղած կերպով: Ընտրողներին

շարունակ մշակում են CBS, NBC, ABC հեռուստաընկերությունները, «Նյա Յորք թայմս», «Վաշինգտոնի փոստ» թերթերը: Այդ ջանքերի մեծ մասը համակարգում է «Հասարակական կարծիքի ուսումնասիրման ազգային կենտրոնը», որտեղ, ի գարմանս մեզանից շատերի, **հոգեբանական ձևանմուշ (շարուն)** է մշակվել **ողջ ազգի համար**:

Ստացած տեղեկանյութը գեներովում է «Գելապ փոլ» (Gallup Poll) և «Յանկելովիչ, Սկելլի և Ուայտ» (Yankelovich, Skelley and White) բնկերությունների համակարգիչներում՝ համեմատական գնահատման համար: Թերթերում մեր կարդացած կամ հեռուստատեսությամբ դիտած բաներից շատերը նախօրոք գտվում են հասարակական կարծիքի ուսումնասիրման ընկերությունների կողմից: ՄԵՆՔ ՏԵՍՆՈՒՄ ԵՆՔ ՄԻԱՅՆ ԱՅՆ, ԻՆՉ «ԿԱՐԾՈՒՄՆԵՐԸ» (փոլսաերները) ՄԵՉ ԹՈՒՅԼ ԵՆ ՏԱԼԻՍ ՏԵՍՆԵԼ: Սա կոչվում է «հասարակական կարծիքի կերտում»: Այս սոցիալական մշակման միտքն այն է, որ իմանան, թե հասարակությունն ինչպես է արձագանքում 300-ի կոմիտեի տված ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՐԱՀԱՆՔՆԵՐԻՆ: Մեզ կոչում են «քնակչության նպատակային խմբեր», իսկ «կարծուսները» գնահատում են այն բանին դիմադրելու աստիճանը, ինչ որ հայտնվում է «Երեկոյան լուրեր»-ում: Քլիչ հետո ցույց կտանք, թե ինչպես է «հարդարվել» այս խաբեական գործը, և ով է դրա համար պատասխանատվություն կրում:

Այս ամենը հասարակական կարծիքի կերտման՝ Թավիստոկում կանգամանություն մշակված գործընթացի մի մասն է: Այսօր մարդիկ կարծում են, թե իրենք լավ են իրազեկված, սակայն չեն պատկերացնում, որ իրենցը կամարած կարծիքները փաստորեն ստեղծվել են Ամերիկայի հետազոտական ինստիտուտներում ու խելքակենտրոններում, և մեզնից ոչ մեկը չի կարող սեփական կարծիքը կազմել տեղեկությունների այն հեղեղաջրերից, որ վրաներս բացել են ՉԼՄ-ներն՝ ու «կարծուսները»:

Հասարակական կարծիք կերտելը նուրբ արվեստ դարձավ հենց այն ժամանակ, երբ ԱՄՆ-ը Երկրորդ համաշխարհային պատերազմի մեջ պիտի մտներ: Իսկի իրենք իրենց չճանաչող ամերիկացիներին համոզեցին Գերմանիային ու Վապոնիային նայել որպես վտանգավոր թշնամիներին, որոնց հարկավոր էր կանգնեցնել: Որոշ խմաստով այս ճիշտ էր, և սա կառավարելի մտածողությունն ավելի վտանգավոր է դարձնում, որովհետև մարդկանց մատուցված այդպիսի ՏԵՂԵԿԱՆՅՈՒԹԻ հետևանքով Գերմանիան ու Վապոնիան իրոք թշնամիներ դուրս եկան: Վերջերս տեսանք, թե ինչ լավ է ընթանում գիտակցությունը մշակելու գործը, երբ ամերիկացիներին համոզեցին, որ Իրաքն ընկալեն որպես սպառնալիք, իսկ Սադամ

¹ Չանգվածային լրատվության միջոցներ:

Հուսեյնին՝ իբրև Միացյալ Նահանգների անձնական թշնամու:

Գիտակցության մշակման այսպիսի ընթացքը տեխնիկապես նկարագրվում է որպես «այն մարդկանց ընկալման գործարաններին (օրգաններին) հասնող հաղորդագրություն, որոնց վրա հարկավոր է ազդել»:

Ամենապատվելի «կարծուսներից» մեկն է «Յանկելովիչ, Սկելլի և Ուայտ» ընկերության Դանիել Յանկելովիչը, որը 300-ի կոմիտեի անդամ է: Սա իր ուսանողներին հարատորեն հայտարարում է. «Հասարակական կարծիքի հարցումներ անցկացնելը հասարակությանը մոլորեցնելու աճաքարական գործիք է»: Բայց Յանկելովիչն այստեղ ինքնատիպ չէ. սույն գաղափարը նա թխել է Ջոն Նեյսբիտի (Naisbitt) «Ձեկուցում միտումների (տեղեկացների) մասին» գրքից, որը պատվիրել էր «Հռոմեական ակումբը»:

Իր գրքում Նեյսբիտը նկարագրում է այն բոլոր գործելակերպերը, որոնք կիրառվում են 300-ի կոմիտեին ցանկալի հասարակական կարծիք կերտելու համար: Հասարակական կարծիք կերտելը O.L.F.U.N.S.B.N.S.F. թագի ադամանդն է, որովհետև նրանց մոտ մանկլավիկություն անող հազարավոր հասարակագետների և «նոր գիտությունների» մասնագետների, այլև նրանց տրամադրության տակ գտնվող ՋԼՄ-ների միջոցով կարելի է հասարակական ՆՌԲ կարծիք ստեղծել բացարձակապես ուզածը հարցի շուրջը և աշխարհով մեկ տարածել ընդամենը երկու շաբաթում:

Հենց այս բանն էլ կատարվեց, երբ նրանց ծառա Ջորջ Բուշին¹ հիւսման տրվեց պատերազմ սկսել Իրաքի դեմ: Երկու շաբաթվա ընթացքում ոչ միայն ԱՄՆ-ը, այլև համարյա ողջ աշխարհը տրամադրվեց Իրաքի և նրա նախագահ Սադամ Հուսեյնի դեմ: Այդ նվազավարներն ու զանգվածային լրատվամիջոցների թիմի ձեռնածուները անմիջապես ենթարկվում են «Հռոմեական ակումբին», որն իր հերթին ենթարկվում է 300-ի կոմիտեին, որի գահին բազմած Անգլիայի թագուհին կառավարում է երբեք հարկեր չվճարող և ոչ մեկի առաջ հաշվետու չլինող, միմյանց հետ սերտորեն կապված կորպորացիաների վիթխարի ցանցը, որոնք իրենց հետազոտական հիմնարկները դրամավորում են մեր ամենօրյա կյանքը գրեթե ամբողջովին ղեկավարող հիմնադրամների միջոցով:

Այդ վիթխարի ցանցամեքենան իր փոխկապակցված ընկերությունների, ապահովագրական գործարարության, բանկերի, ֆինանսական կորպորացիաների, նավթային ընկերությունների, թերթերի, հանդեսների, ուղիայի և հեռուստատեսության հետ բառացիորեն համետ² է. դրել

¹ Խոսքը ԱՄՆ-ի նախագահ ավագ Բուշի մասին է, որը սկիզբ դրեց Իրաքի դեմ կռիվներին (Վ. Ա.):

² Բեռնակիր անասունի մեջքին դնելու հարմարանք՝ բեռ բարձելու և նստելու համար, փալան:

Միացյալ Նահանգների և մնացյալ ողջ աշխարհի վրա: Վաշինգտոնում չկա մի քաղաքագետ, որն այս կամ այն կերպ չպատկանի նրան: Չախերը հայտնում են նրան՝ կոչելով «խմպերիալիզմ» (և այդպես էլ է), բայց ձախերին կառավարում են հենց նույն մարդիկ, որոնք կառավարում են աջերին. այնպես որ ձախերը մեզնից ավելի ազատ չեն:

Գիտակցության մշակման գործընթացով զբաղվող գիտնականները, որոնք կոչվում են «սոցիալական ճարտարագետներ» կամ «սոցիալական նոր գիտությունների մասնագետներ», հույժ էական ազդեցություն են գործում մեր տեսածի, լսածի ու կարդացածի վրա: Սոցիալական ճարտարագետների հին դպրոցը ներկայացնում էին Կուրտ Լևինը, պրոֆեսոր Հեյլի Քանտրիլը (Hadley Cantril), Մարգարետ Միդը (Margaret Meade), պրոֆ. Դերվին Քարտրայթը (Derwin Cartwright) և պրոֆ. Լիփսիտը (Lipssitt), որանք Ջոն Ռոուլինզո Ռիզի հետ կազմել են Թավիստոկի ինստիտուտի «նոր գիտությունների մասնագետների» հիմնականախոր:

Երկրորդ աշխարհամարտի ժամանակ ավելի քան 100 հետազոտներ Կուրտ Լևինի ղեկավարությամբ ստրկաբար պատճենում էին էսեսական Ռեյնհարդ Հեյդրիխի գործելակերպերը (մեթոդները): ԱՄՆ-ի Հետախուզության և հետաքննության վարչությունը հիմնվել էր Հեյդրիխի գործելակերպի (մեթոդիկայի) վրա և, ինչպես գիտենք, նախակարապետն էր Հետախուզության կենտրոնական վարչության (ՀԿՎ): Այս ամբողջի էությունն այն է, որ Բրիտանիայի ու ԱՄՆ-ի կառավարություններն արդեն ունեն այն մեխանիզմը, որով կարող են մեզ դեպի Համաշխարհային նոր կարգ տանել առանց մեր կողմից մի առանձին դիմադրության հանդիպելու: Այդ մեխանիզմը գոյություն ունի դեռ 1946 թվականից, և ամեն տարի սոսկ նոր կատարելագործումներ են դրան ավելացվել:

Հենց 300-ի կոմիտեն է ստեղծել ցայժմ չտեսնված վերահսկողության մեխանիզմներ ու ցանցեր: Մեզ հնազանդ պահելու համար հարկավոր չեն շղթաներ ու պարաններ: Մեր վախն այն բանից, թե ինչ կարող է պատահել, անհամեմատ ավելի ազդու և արդյունավետ է, քան զսպման ո՛րևէ նյութերեն միջոց: Մեր ուղեղներն արդուկել են, որպեսզի հրաժարվենք [անձնական] զենք կրելու մեր սահմանադրական իրավունքից. որպեսզի դավաճանենք մեր բուն սահմանադրությանը. որպեսզի ՄԱԿ-ին թույլ տանք վերահսկողություն իրականացնել մեր արտաքին քաղաքականության վրա, իսկ ՄԱՀ-ին՝ կառավարել մեր հարկային ու դրամական քաղաքականությունը. որպեսզի նախագահին թույլ տանք անպատիժ կերպով խախտել օրենքը, ներխուժել ուրիշ երկիր և հափշտակել պետության ղեկավարին: Միով բանիվ, մեր ուղեղածալքերն այնպես են արդուկել՝ հարթեցրել, որ մենք, իբրև ազգ, կուլ կտանք մեր կառավարության յուրաքանչյուր ապօրինի գործողություն գուցե և առանց հարցեր տալու:

Ինչ վերաբերում է ինձ, ապա գիտեմ, որ շուտով հարկ կլինի մարտն-

չել մեր երկիրը Կոմիտեի մամլիչի տակից դուրս քաշելու համար, այլապես այն կկորցնենք ընդմիշտ: Բայց երբ բանը դրան հասնի, շատե՞րն արդյոք զենքի կղիմեն: 1776 թ. բնակչության միայն 3 տոկոսը զենք վերցրեց Գեորգ III թագավորի դեմ¹: Այսօր 3 տոկոսը խիստ անբավարար կլինի: Մենք չպետք է թույլ տանք, որ մեզ փակուղի քշեն, քանզի մեզ համար հենց այդ են ծրագրում մեր միտքը մոլորեցնողները՝ մեզ այնպիսի բարդ խնդիրների մեջ խճճելով, որ մենք պարզապես չենք դիմանում ու ընկրկում ենք ամենաթափանց ճնշման առաջ և ընդհանրապես մի կողմ ենք քաշվում կենսականորեն կարևոր շատ հարցերի լուծումից:

Մենք կտանք 300-ի կոմիտեի կազմի մեջ մտնող անձանց անունները, բայց նախքան այդ անհրաժեշտ է քննել Կոմիտեի վերահսկողության տակ եղած բոլոր կարևոր հիմնարկների, ընկերությունների և բանկերի սերտ ու փոխադարձ բարդ կապերը: Մենք պետք է հստակորեն մատնանշենք նրանց, որովհետև հենց այդ մարտիկ են որոշում, թե ով պետք է սպրի, ով պետք է ոչնչացվի որպես «անօգուտ հացակեր», թե որտեղ պետք է աղոթենք Աստծուն, ինչ պետք է հագնենք և, նույնիսկ, ինչ պետք է ուտենք: Ըստ Բժեղիմակու, մենք տարվա 365 օրվա ընթացքում ամեն ժամ պետք է լինենք աշարոք հսկողության տակ՝ այրուհետև և ընդմիշտ:

Տարեցտարի գնալով ավելի շատ մարդիկ են հասկանում, որ մեզ ծախել են ներսից, և լավ է, որ հասկանում են, որովհետև ինացության և ՀԱՎԱՏԻ շնորհիվ միայն կարող ենք պարտության մատնել մարդկության թշնամուն: Մինչ մեր միտքը շեղում էին կրենլական ուրվականներով, «տրայական ձին» դիրք գրավեց Վաշինգտոնում: Այսօր ամենամեծ փոսնգը ազատ մարդկանց սպառնում է ոչ թե Մոսկվայից, այլ Վաշինգտոնից: Մենք սկզբում պետք է ջախջախենք ՆՆԲԶԻՆ ԹՇՆԱՍՈՒՆ. միայն դրանից հետո բավականաչափ ուժեղ կլինենք, որ հարձակում կազմակերպենք կոմունիզմը և սրան ուղեկցող բոլոր «իզմերը» երկրի երեսից ջնջելու նպատակով:

Քարտերի վարչակազմն արագացրեց մեր տնտեսության և մեր զինուժի խորտակումը. զինուժինն սկսել էր «Հոռմեական ակումբի» և «Լյուցիս Թրաստի» (Lucis Trust) անդամ Ռոբերտ Ս. Մակնամարան: Հակառակ իր խոստումներին, Ռեյզանը շարունակեց մեր արդյունաբերական հիմնախարսխի (բազայի) ավերումը՝ սկսելով այնտեղից, որտեղ ավարտել էր Քարտերը: Թեև անհրաժեշտ է մեր պաշտպանական ներուժը պահել պատշաճ մակարդակի վրա, մենք այդ չենք կարող անել արդյունաբերության թույլ հիմքի պատճառով. առանց լավ զարգացած ռազ-

¹ Նկատի ունի Հյուսիսային Ամերիկայում անգլիական 13 գաղութների ազատագրական կռիվը Մեծ Բրիտանիայի հետ, որի ընթացքում ստեղծվեց ԱՄՆ-ի անկախ պետությունը: 1776 թ. ընդունվեց ԱՄՆ-ի Անկախության հռչակագիրը (Վ. Ա.):

մարչունաբերական համալիրի չենք կարող ունենալ պաշտպանության կենսունակ համակարգ: 300-ի կոմիտեն, այս բանը հասկանալով, 1953 թվականից «աշխատեցնում» է գրոյական աճի հետարդյունաբերական քաղաքականությունը, որն այժմ լիակատար ծաղկունքի մեջ է:

«Հոռմեական ակումբի» «շնորհիվ» մեր ճարտարարվեստի ներուժը նվազել է Ճապոնիայի ու Գերմանիայի ունեցածի համեմատ. այն երկրների, որոնց ոնց որ թե հաղթել էինք Երկարդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Իսկ այդ ինչպե՞ս եղավ: Դոկտոր Ալեքսանդր Զինգի տեսակ մարդկանց և մեր մտքի կուրացած վիճակի պատճառով մենք գոյու չեղանք ժամանակին գիտակցելու մեր կրթության և ուսուցման համակարգի ավերվելը: Մեր կուրության հետևանքով մենք այլևս բավարար քանակությամբ ճարտարագետներ ու գիտնականներ չենք կրթում, որպեսզի մնանք աշխարհի արդյունաբերական երկրների շարքում: «Շնորհիվ» դ-ր Զինգի, մի հոգու, որին Ամերիկայում շատ քիչ մարդ է ճանաչում, ԱՄՆ-ում կրթությունն ամենացածր մակարդակի վրա է. 1786 թվականից մինչև հիմա այդպիսի վիճակ չէր եղել: Բարձրագույն կրթության վիճակագրությունը ցույց է տալիս, որ ԱՄՆ-ի բարձր դասարանների աշակերտների կարդալու և գրելու հմտությունները հիմա ավելի ՆՎԱԶ ԵՆ, քան 1786 թվականի երեխաներինը:

Մենք հիմա կանգնած ենք ոչ միայն մեր անկախությունը և մեր ազգի բուն հիմքերը կորցնելու առաջ, այլև, որ շատ ավելի վատ է, **մեր հոգին կորցնելու** վտանգի առաջ: Այն հիմքերը հետևողաբար քանդելը, որոնց վրա խարսխվում է մեր հանրապետությունը, ստեղծում է դատարկություն, որն իրենց հոգևոր փոխարինիչներով լցնելու փութացին ամեն տեսակ օկուլտիստներ ու աստանիստներ: **Սույն ճշմարտությունը դժվար է ընկալել և գնահատել, որովհետև այս բաները ՀԱՆԿԱՐԾԱԿԻ չեղան:** Եթե մեզ հարվածեին հանկարծական արևտը, մշակութային ու կրոնական ցնցումները, մենք վրաներիցս կթոթափեինք մեր անտարբերությունը:

Սակայն աստիճանականությունը (առանց կտրուկ փոփոխությունների՝ հետզհետե կատարվելը - Վ. Ա.), և **Ֆաբիոսականության էությունն էլ դա է**, տագնապ հնչեցնելու հնարավորություն չի տալիս: Այն բանի հետևանքով, որ ամերիկացիների մեծ մասը չի կարող նկարագրաձս բաների ՊԱՏՃԱՌ-ԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ տեսնել, ուստի և չի կարող դրանք ընկալել. այդ պատճառով էլ դավադրությանը նայում են արհամարհանքով և հաճախ էլ՝ ծաղրանքով: Երկրում խճճված իրավիճակ է ստեղծվել մարդկանց ամեն օր հարյուրավոր հնարավորություններ ներկայացնելու միջոցով, որոնցից նրանք պետք է ընտրեն իրենց համար ամենաձեռնտուն: Մենք հասել ենք այնպիսի իրադրության, որ պատճառաբանությունը բավականաչափ պարզ արտահայտված չլինելու դեպքում յուրաքանչյուր տեղեկատվություն կներժվի:

Սա դավադրական շղթայի միաժամանակ և՛ թույլ, և՛ ամուր օղակն է: Մարդկանց մեծ մասը մերժում է այն ամենը, ինչում հասկանալի պատճառաբանություններ չի տեսնում: Ուստի դավադիրներն իրենց զգում են լիակատար անվտանգության մեջ և ծաղրի առարկա են դարձնում նրանց, ովքեր ցույց են տալիս մեր քաղաքական և մասնավոր կյանքում գալիք ճգնաժամը: Սակայն եթե մենք կարողանանք ճշմարտությունը հասցնել բավական մեծ թվով մարդկանց, ապա գիտակցության մեջ պատճառախնդրական շրջափակումը կսկսի թուլանալ, մինչև որ ի վերջո դեն կշարտվի, որովհետև ավելի շատ մարդիկ հաղորդակից կլինեն ճշմարտությանը: Իսկ այն սովորական վերապահությունը, թե «Ամերիկայում այդպիսի բանն անհնար է», իր ուժը կկորցնի:

300-ի կոմիտեն հույսը դնում է մեր «ծանրաշարժ» հակազդեցության վրա, այն նպատակաուղղում է դեպի իր իսկ ստեղծած իրադարձությունները և հուսախաբ չի լինի այնքան ժամանակ, քանի դեռ մենք, որպես ազգ, դրան կհակազդենք նույն կերպ, ինչպես հիմա: Ճգնաժամերի հանդեպ մեր հակազդեցությունը մենք պետք է ՀԱՄԱՐԺԵՔ պատասխաններ դարձնենք՝ դավադիրներին հայտնաբերելով և նրանց ծրագրերը մերկացնելով այնպես, որ այդ ամենը հայտնի լինի կանխությանը: «Հոռմեական ակումբն» ԱՐԴԵՆ ԱՆՑՈՒՄ Է ԿԱՏԱՐԵԼ ԳԵՊԻ ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹՅՈՒՆ: Սպասելու փոխարեն, մինչ մեզ «երկինք կհամբարձեն», մենք պետք է կանգնեցնենք 300-կոմիտեին՝ նախքան նա կհասնի մեզ «Նոր խավար դարի» կալանավորներ դարձնելու նպատակին: ԱՊԱՎԻՆԵՆՔ ՍԵՐ ՈՒԺԵՐԻՆ: Մենք պետք է անհրաժեշտ գործողություններ ձեռնարկենք:

Սույն գրքում ներկայացրածս ամբողջ իրազեկումը հետախուզական անբասիր աղբյուրների վրա հիմնված բազմամյա հետազոտությունների արգասիք է: Այստեղ սչ մի բան չափազանցված չէ: Ամեն ինչ բացարձակապես ստույգ է և փաստելով հաստատված. ուստի չենթարկվեք թշնամու զրպարտությունների ազդեցությանը, թե՛ այս ամբողջը «տարագեկում» է: Վերջին երկու տասնամյակի լնթացքում ներկայացրել են այնպիսի իրազեկում, որը դուրս էր գալիս ամբողջովին ճիշտ, և որը բացատրում էր առեղծվածային շատ իրադարձություններ: Հուսով եմ, որ այս գրքի շնորհիվ մարդիկ ավելի լավ, ավելի պարզ և համակողմանիորեն կգիտակցեն դավադիր ուժերի գործունեությունը, որոնց թիրախն այս (Ամերիկայի) ազգն է: Եվ իմ հույսն իրականանում է, քանի որ ավելի և ավելի շատ երիտասարդներ են սկսում հարցեր տալ և փնտրել ճշմարտությունն այն մասին, թե ԻՍԿԱՊԵՍ ինչ է տեղի ունենում:

Մարդիկ դժվարանում են գիտակցել, որ այդ դավադիրներն իրական են և ունեն այն իշխանությունը, ինչ ես և ուրիշ շատեր վերագրում ենք նրանց: Շատերը գրում էին և հարցնում, թե մեր կառավարությունն

ինչո՞ւ ոչինչ չի անում, որ վերացնի քաղաքակրթությանն սպառնացող այդ սոսկալի վտանգը: Գժվարությունն էլ հենց այն է, որ մեր կառավարությունն է հիմնախնդրի ՄԻ ՄԱՍԸ, դավադրության մասը, և ոչ մի տեղ ու երբեք այդ բանն այդպես պարզ չի եղել, ինչպես Բուշի նախագահության ժամանակ: Անշուշտ, նախագահ Բուշը ճշտիվ գիտե, թե 300-ի կոմիտեն ինչ է անում մեզ համար: ԲՈՒՇԸ ԲԱՆՈՒՄ Է ՆՐԱՍՕԳՏԻՆ:

Ուրիշները գրում էին. «Մենք կարծում էինք, թե պայքարում ենք կառավարության դեմ»: Իհարկե այդպես է, բայց կառավարության հետևում մի այնպիսի մեծագոր և համընդգրկուն ուժ է կանգնած, որ հետախուզական ծառայությունները վախենում են անգամ «օլիմպոսցիների» անունը տալ:

300-ի կոմիտեի գոյության ապացույցը հսկայական քանակն է այն հզոր կազմակերպությունների, որոնք պատկանում են նրան և կառավարվում են նրա կողմից: Այստեղ թվարկվում են ամենակարևորներից մի քանիսը, որոնց գլուխ է կանգնած մայրը բոլոր խելքակենտրոնների ու հետազոտական ինստիտուտների՝ Թավիստոկի մարդկային հարաբերությունների ինստիտուտը՝ յուր հարյուրավոր «մասնաճյուղերից» հյուսված լայն ցանցով:

Ստենֆորդի հետազոտական ինստիտուտ (STANFORD RESEARCH INSTITUTE, ՍՀԻ)

ՍՀԻ-ն 1946 թվականին հիմնվել է Թավիստոկի մարդկային հարաբերությունների ինստիտուտի կողմից: Ստենֆորդի կենտրոնը ստեղծվել էր Ռոբերտ Օ. Անդերսոնին և նրա ARCO նավթային ընկերությանն օգնելու համար: Իսկ Անդերսոնը 300-ի կոմիտեի համար իրավունքներ էր ապահովել Ալյասկայի հյուսիսի նավթի նկատմամբ: Իրականում այդ աշխատանքը չափազանց մեծ էր Անդերսոնի Ասպենի ինստիտուտի համար, ուստի նոր կենտրոն ստեղծելու անհրաժեշտություն ծագեց, և այն ստեղծվեց: Այդ նոր կենտրոնը ՍՀԻ-ն էր: Ալյասկան իր իրավունքները վաճառում է 900 միլիոն դոլարով, որը հարաբերականորեն փոքր գումար էր 300-ի կոմիտեի համար: Ալյասկայի նահանգապետին հրապուրելով՝ ՍՀԻ-ի «գիրկն» են գցում օգնություն և խորհրդատվություններ ստանալու համար: Սա պատահականություն չէր, այլ մանրագին ծրագրման և խոր մշակման արդյունք:

Արձագանքելով նահանգապետի օգնության կանչին՝ Ստենֆորդի ինստիտուտի երեք աշխատակից Ալյասկայում մի խորհուրդ են գումարում, որտեղ հանդիպում են Ալյասկայի նահանգի քարտուղարի և նահանգի ճրագրման վարչության ղեկավարի հետ: ՍՀԻ-ի թիմը գլխավորող Ֆրենսիս Գրիհանը (Francis Greehan) նահանգապետին վստահեցնում է, որ նրան հուզող նավթի հարուստ հանքավայրի շահագործման խնդիրը հուսալիորեն լուծված է ՍՀԻ-ի կողմից: Գրիհանը, բնականաբար, չի հիշ-

ատակում 300-ի կոմիտեի և «Հոռմեական ակումբի» անունները: Մեկ ամսից էլ պակաս ժամանակամիջոցում Գրիհանը հավաքում է տնտեսագետների, գիտնական նավթագործների և «նոր գիտությունների» մասնագետների մի թիւմ, որի անդամների թիվը հարյուրների էր հասնում: Նահանգապետին ուղղված ՍՀԻ-ի գեկուցումը բաղկացած էր 88 էջից:

Այդ առաջարկությունը Այլասկայի օրենսդրական ժողովն ընդունում է առանց որևիցե փոփոխման: Գրիհանն իրոք ուշագրավ շատ բաներ է արել 300-ի կոմիտեի համար: Գործն սկսելով որպես փոքր գրասենյակ՝ ՍՀԻ-ն աճում ու դառնում է ավելի քան 160 միլիոն դոլար բյուջե և 4.000-անոց հաստիք ունեցող հիմնարկություն: Այդ աճի վկան են եղել ՍՀԻ-ի նախագահ Չարլզ Ա. Անդերսոնն իր պաշտոնավարության ընթացքում, այլև պրոֆեսոր Ռիլիս Հարմոնը՝ տնօրենը սույն ինստիտուտի սոցիալական քաղաքականության ուսումնասիրման կենտրոնի, որտեղ ջանք են թափում «նոր գիտությունների» հարյուրավոր մասնագետներ: Ի դեպ՝ առանցքային աշխատակիցների մեծ մասն այդտեղ էր փոխադրվել Թավիստոկի լոնդոնյան մասնաճյուղից: Դրանցից մեկն էր Բիտանիայի հետախուզության նախկին գործակալ Դավիդ Սարնոֆը (David Sarnoff), որը 25 տարի շարունակ սերտորեն կապված էր Հարմոնի և նրա թիւմի հետ: Սարնոֆը Սուսեկի գլխավորող ինստիտուտը հսկալ «պահակաշան» պես մի բան էր:

Ստենֆորդի ինստիտուտը պնդում է, որ բարոյական գնահատական չի տալիս այն նախագծերին, որոնք ինքը մշակում է Իսրայելի և արաբների, Հարավային Աֆրիկայի և Լիբիայի պատվերներով: Եվ, ինչպես որ դժվար չէ պատկերացնել, նման վերաբերմունքը նրան հնարավորություն է տալիս հաջողությամբ գաղտնի և կայուն կապեր հաստատելու օտարերկրյա կառավարությունների հետ, ինչը ԱՄՆ-ի Հետախուզության կենտրոնական վարչությունը հույժ օգտակար է համարում: Ջիմ Ռիջուեյի «Փակ կորպորացիա» գրքում ՍՀԻ-ի ներկայացուցիչ Գիբսոնը պարծենում է իր հիմնարկի ոչ խտրական դիրքորոշմամբ: Մտցված շիճերով «Դաշնային հետազոտական պայմանագրային կենտրոնի» (Federal Contract Research Center) ցուցակների մեջ՝ ՍՀԻ-ն այսօր մի վիթխարահսկա զինվորական խելքակենտրոն է, որը հետևում է թողել «Հուդզոնի ինստիտուտ» (Hudson Institute) կորպորացիաները և «Ռենդ» (Rand Corporation) կորպորացիան: ՍՀԻ-ի հատուկ բաժանմունքների մեջ կան քիմիական ու կենսաբանական պատերազմներ վարելու փորձարարական կենտրոններ:

Ստենֆորդի գործունեության ամենավտանգավոր տեսակներից մեկը քաղաքացիական բնակչության ընդվզումները ճնշելու գործառնություններ մշակելն է: «1984» գրքի ոգով արված հենց այդպիսի մշակումներ է կառավարությունն արդեն կիրառում իր քաղաքացիների դեմ: ԱՄՆ-ի

կատավարությունը ՍՀԻ-ին ամեն տարի միլիոնավոր դոլարներ է վճարում այդ տեսակի խիստ վիճելի «հետազոտությունների» համար: ՍՀԻ-ում կատարվող քիմիական զենքի փորձարկումների դեմ ուսանողական բուրքի ցույցերից հետո Ստենֆորդը 25 միլիան դոլարով իրեն «վաճառեց» մի մասնավոր խմբի: Անշուշտ, իրապես ոչինչ չփոխվեց. ՍՀԻ-ն մնաց որպես թավիստոկյան նախագիծ, և 300-ի կոմիտեն դեռևս տիրում է դրան: Սակայն դյուրահավատ մարդիկ կարծես թե բավարարվել են ոչինչ չնշանակող այդ նրբահարդար (կոսմետիկական) փոխարինմամբ:

1958 թվականին մեջտեղ եկավ միանգամայն մի նոր բան: «Նորագույն հետազոտությունների և արտադրանքների վարչությունը» (Advanced Research Product Agency (ARPA))՝ Պաշտպանության նախարարության սրայմանագրային պատվերները կատարող գործակալությունը, ՍՀԻ-ին է դիմում հույժ գաղտնի ստաջարկությամբ: Պենտագոնի պաշտոնյա Ջոն Ֆոստերն ասել էր, որ ՍՀԻ-ն պետք է մշակի «ճարտարավետական անակնկալներից» ԱՄՆ-ին պաշտպանելու ծրագիր: Ֆոստերն ուզում էր այնպիսի պայմաններ ստեղծել, որ **չրջակա միջավայրն ինքը վերածվեր զենքի**, այսինքն՝ ուզում էր ունենալ հրաբխի ժայթքումներ կամ երկրաշարժեր ստաջացնող հատուկ առմբեր: Բացի սրանից՝ նա ծրագրել էր նաև ուսումնասիրել հնարավոր թշնամիների վարքի կադապարները (մոդելները), ինչպես նաև ստեղծել նոր միներալներ ու մետաղներ՝ զենքի նոր տեսակների մեջ օգտագործելու համար: ՍՀԻ-ն նախագիծն ընդունեց «Շեյկի» (Shaky)¹ կրճատագիր անունով:

Էլեկտրոնային հսկայական ուղեղ «Շեյկի»-ն ունակ էր կատարելու բազմաթիվ հրամաններ: Սրա համակարգիչները ՍՀԻ-ի համար հորինել էր IBM ընկերությունը: 28 գիտնականների աշխատության արդյունքը եղավ այն բանը, որը կոչվեց «Մարդու ընդլայնում» (“Human Augmentation”): IBM-ի համակարգիչը կարող էր լուծել նույնիսկ մմանական (անալոգային) խնդիրներ. սա ճանաչում էր իր հետ աշխատող գիտնականներին և որոշում նրանց նույնությունը: Այս մեքենայի «հատուկ կիրառումները» ավելի հեշտ է պատկերացնել, քան նկարագրել: Բժեզինսկին գիտեր իր ասածը, երբ գրում էր «Տեխնոտրոնային դարաշրջանը»:

ՍՀԻ-ն սերտորեն համագործակցում է քաղաքացիական տասնյակ խորհրդատվական ֆիրմաների հետ՝ փորձելով ոսպնական ճարտարավետները (տեխնոլոգիաները) կիրառել երկրի ներսում ծագող իրավիճակների համար: Դա միշտ չէ, որ հաջողվում է, բայց ճարտարավետների կատարելագործման հետ՝ Բժեզինսկու նկարագրած ամենաթափանց հսկայության հեռանկարները դառնում են իրական: ԱՅՆ ԱՐ-

¹ Անգլերեն դող, դողերոցք. երերում, ցնցվող. կասկածելի:

ԳԵՆ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԵՎ ԲԱՆԵՑՎՈՒՄ Է, ԹԵԵՎ ԺԱՍԱՆԱԿ ԱՌ ԺԱՍԱՆԱԿ ՀԱՐԿ Է ԼԻՆՈՒՄ ՇՏԿԵԼ ՈՉ ՄԵԾ ԽԱՓԱՆՈՒՄՆԵՐԸ: Խորհրդատվական այդպիսի ֆիրմաներից մեկն էր Վիրջինիայի նահանգի «Շրիվեր Մակ-Քի աստղիեյթս օֆ Մակ-Լին» ֆիրման, որը ղեկավարում էր պաշտոնաթող գեներալ Բեռնարդ Ա. Շրիվերը: Սա եղել էր պետը Ռազմաօդային ուժերի համակարգերի վարչության, որը պատրաստել է «Տիտան», «Թոր», «Ատլաս» և «Մինիտման» հրթիռները:

Շրիվերն ստեղծում է «URBAN SYSTEM ASSOCIATES, INC» («Բարաքային համակարգերի գծով գործընկերներ») անունը կրող ընկերակցությունը (կոնսորցիումը), որի մեջ են մտնում «Լոքհիդ» (Lockheed), «Էմերսոն էլեկտրիկ» (Emmerson Electric), «Նորթրոպ» (Northrop), «Կոնտրոլ դեյտա» (Control Data), «Ռեյթոն» (Raytheon) և TRW ընկերությունները: Ի՞նչն էր այս ընկերակցության նպատակը: Սրա նպատակն էր սոցիալական և հոգեբանական «քաղաքային խնդիրները» լուծել ռազմական ճարտարարվեստների միջոցով՝ օգտագործելով էլեկտրոնային արդի համակարգերը: Ուշագրավ է, որ «URBAN SYSTEM ASSOCIATES»-ի հետ աշխատելու շնորհիվ TRW-ն դարձավ վարկային տեղեկություններ հավաքող խոշորագույն ընկերությունը:

Այս ամենը ցույց է տալիս, որ մեր երկիրն արդեն ապրում է ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ պայմաններում, ինչը 300-ի կոմիտեի առաջին պահանջն է: Ոչ մի դիկտատուրա, հատկապես համաշխարհային առումով, չի կարող գործել առանց յուրաքանչյուր անհատի վրա համընդհանուր հսկողություն իրականացնելու: ՍՀԻ-ն իրապես պատրաստվում է դառնալու 300-ի կոմիտեի առանցքային հետազոտական կազմակերպությունը:

80-ական թթ. ՍՀԻ-ի կնքած պայմանագրերի 60 տոկոսը նվիրված էր «ապագային». դրանք վերաբերում էին ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքացիական ոլորտներին: ՍՀԻ-ի գլխավոր պատվիրատուներն էին ԱՄՆ-ի Պաշտպանության նախարարության «Պաշտպանական հետազոտությունների և տեխնիկայի տնօրենությունը» (Directorate of Defense Research and Engineering), «Օդատիեզերական հետազոտությունների վարչությունը» (Office of Aerospace Research), «Նախագահի գործադիր վարչությունը», «Գիտության և ճարտարարվեստի վարչությունը» (Office of Science and Technology), ԱՄՆ-ի Առողջապահության նախարարությունը: Առողջապահության նախարարության անունից ՍՀԻ-ն վարում էր «ESDEA-ի մնուշները: Հատված I, ընթերցանությունը կատարելագործելու հարցախույզեր» (Pattern in ESDEA Title I Reading Achievement Tests) ծրագիրը: Մյուս պատվիրատուներն էին ԱՄՆ-ի Էներգետիկայի նախարարությունը, ԱՄՆ-ի Աշխատանքի նախարարությունը, Տրանսպորտի նախարարությունը և Ազգային գիտական հիմնադրամը (ԱԳՀ) (National

Science Foundation (NSF)): Հատուկ կարևորություն էր ներկայացնում ԱԳՀ-ի համար մշակված հարվածը, սրի վերնագիրն էր «Ապագայի գնահատանքը և միջազգային հիմնախնդիրները»:

Ստենֆորդի կենտրոնը Թավիստուկի ինստիտուտի ղեկավարությամբ մշակել է համապարփակ ու չարագուշակ մի համակարգ, որին տրվեց «Գործարարության (բիզնեսի) մեջ լրատեսության ծրագիրը» («Business Intelligenc System») անվանումը: Սրա բաժանորդները դարձան ԱՄՆ-ի և արտասահմանի ավելի քան 600 ընկերություններ: Ծրագիրն ընդգրկում է հետազոտական այնպիսի նյութեր, ինչպիսիք են «Ճապոնիայի միջազգային գործարար հարաբերությունները», «Սպառման շուկայագիտությունը (մարկետինգը) անկայունության շրջանում», «Միջազգային ահաբեկչության աճող սպառնալիքը», «Սպառման ապրանքների զգայարանային գնահատումը», «Դրամափոխանցումների էլեկտրոնային համակարգը», «Էլեկտրոնաօպտիկական տվիչներ», «Հետազոտությունների ծրագրման եղանակները», «ԱՄՆ-ի պաշտպանական արդյունաբերությունը և կապիտալի աղբյուրները» (U.S. Defense Industry and Capital Availability): 300-ի կոմիտեի առանցքային ընկերությունները, որոնք այս ծրագրի պատվիրատուներից են, ընդգրկում են «Բեյտել քորպորեյշն» (Bechtel Corporation) (Ջորջ Շուլցը¹ մտնում էր սրա տնօրենների խորհրդի կազմի մեջ), «Հյուլետ Փակարդ» (Hewlett Packard), TRW, «Բենկ օֆ Ամերիկա» (Bank of America), «Շելլ», RCA, «Բլիթ» (Blyth), «Էստման Դիլոն» (Estman Dillon), «Սագա Ֆուդս քորպորեյշն» (Saga Foods Corporation), «Մակ-Դոնել Դուգլաս» (McDonnell Douglas), «Բրոուն Չելերբախ» (Crown Zellerbach), «Ուելս Ֆարգո բանկ» (Wells Fargo Bank) և «Էայզեր ինդաստրիզ» (Kaiser Industries) հիմնարկները:

Սակայն ԱՀԻ-ի ամենաչարագույժ ծրագրերից մեկը, որը կարող է Սիացյալ Նահանգների զարգացման ուղղությունը փոխելու ճանապարհով սոցիալական, բարոյական ու կրոնական մեծամեծ վնասներ հասցնել, Ստենֆորդի «Չարլզ Ֆ. Քեթերինգի հիմնադրամի» «ՍԱՐԴՈՒ ԿԵՐՊԱՐԱՓՈՒՆԻՄՆԸ» (“CHANGING IMAGES OF MAN”) ծրագիրն էր: Սրա ստենֆորդյան պաշտոնական անվանումն է «Պայմանագիր N URN (489)-2150, Չեկուցում քաղաքական հետազոտությունների մասին N 4/4/74» պատրաստել է ԱՀԻ-ի «Սոցիալական քաղաքականության ուսումնասիրման կենտրոնը, ղեկավար՝ Ուիլյա Հարմոն» («Contract Number URN (489)-2150 Policy Research Report Number 4/4/74, Prepared

¹ ԱՄՆ-ի պետքարտուղարը (Վ. Ա.):

by SRI Center for the Study of Social Policy, Director Willis Harmon»):

319 էջանոց հիշյալ զեկուցումը գրել են նոր գիտությունների 14 մասնագետներ՝ Թավիստոկի և 23 բարձրագույն հսկիչների ղեկավարությամբ, ներառյալ Բ.Ֆ. Սկինները, Մարգարետ Միդը, Էրվին Լասլոն և Բրիտանիայի հետախուզության ՄԻ-6 բաժնի բարձրապաշտան սպա սրբ Ջեֆրի Վիքերսը: Հարկ է հիշեցնել, որ սրա փեսան՝ սրբ Փիթր Վիքերս-Հոլը, եղել է պահպանողական կոչված «Ժառանգության կիմնադրամի» հիմնադիր անդամը: 1981 թ. հունվարին Ռեյգանի վարչակազմին հանձնված 3000 էջանոց հանձնարարականների մեծ մասը հիմնված է եղել Ուիլիս Հարմոնի «ՄԱՐԴՈՒ ԿԵՐՊԱՐԱՓՈՒՈՒՄԸ» ծրագրից վերցված նյութի վրա:

«ՄԱՐԴՈՒ ԿԵՐՊԱՐԱՓՈՒՈՒՄԸ» զեկուցման պատճենն ստանալու «առանձնաշնորհմանն» արժանացա հետախույզ գործընկերօջիս 5 օր անց այն բանից հետո, երբ զեկուցումն ընդունվել էր ԱՄՆ-ի կառավարության կողմից: Կարդացածիցս ցնցվեցի, քանզի հասկացա, որ նայում եմ մի ապագա Ամերիկայի, որը ցայժմ հայտնի ոչ մի բանի նման չէ: Ազգը կենթարկվի կերպարափոխվելու ծրագրավորման և հետզհետե այնքան կվարժվի ծրագրված փոփոխումներին, որ իրոք խալը փոփոխությունները հազիվ նկատելի կլինեն: Մենք այնպես սրբնթացուրեն ենք ներքև գլորվում «Ջրիոսի դավադրությունը» («THE AQUARIAN CONSPIRACY»)՝ Ուիլիս Հարմոնի տեխնիկական աշխատության գեղարվեստական անվանումը) գրվելու ժամանակից սկսած, որ այսօր ամուսնալուծությունը կշտամբանք չի հարուցում, ինքնասպանությունների թիվը շեշտակիորեն աճում է, և դրանք գրեթե ոչ մեկին չեն զարմացնում, սոցիալական կանոններից շեղումները և սեռական խաթարված հակումները, որոնց մասին հիշատակելը գոեհկություն էր համարվում կարգին միջավայրում, սովորական երևույթ են դարձել և առանձնապես որևէ բողոք չեն առաջացնում:

Իբրև ազգ՝ չնկատեցինք, որ «Մարդու կերպարափոխման» ծրագիրն արմատապես փոխել է ամերիկյան մեր ապրելակերպը: «Ուտերգեյտյան համախտանիշն»¹ (սինդրոմ) ընկճել էր մեզ: Որոշ ժամանակ մենք նյարդացնցման (շոկի) և հուսահատության մեջ էինք ընկել՝ իմա-

¹ Կապված է «Ուտերգեյտի գործի» հետաքննության հետ: 1972 թ. ԱՄՆ-ի նախագահի ընտրարշավի ժամանակ Վաշինգտոնի «Ուտերգեյտ» հյուրանոցում գտնվող ժողովրդավարական կուսակցության կենտրոնակայանում հանրապետական կուսակցությունը փորձել է լսասարք դնել: Նաև բացահայտվել են Սպիտակ տան պաշտոնատար անձանց կատարած օրինականության խախտումներ (կաշառատվություն, սպառնալիքներ, սուտ վկայություն և այլն): ԱՄՆ-ի նախագահ Ռիչարդ Նիքսոնը «Ուտերգեյտի գործին» մասնակցության մեջ մեղադրվելու և հետկանչի (իմպիչմենտի) ենթարկվելու սպառնալիքի տակ 1974 թ. օգոստոսին պաշտոնաթող է եղել (Վ. Ա.):

նալով, որ Նիքսոնը դուրս է եկել փուչու խարդախ մեկը, որը շփվել է Էրլ Ռոբերտի մաֆիազի բնկերների հետ այն գեղեցիկ տան մեջ, որ դրանք նրա համար կառուցել էին իր կալվածքի կողքին: Երբ մեր գիտակցության վրա չափից ավելի «գալիք ցնցումներ» և յուրերի չարագույժ վերնագրեր են տեղում, մենք մոլորվում-մնում ենք. կամ, ավելի շուտ, ընտրելու հնարավորությունների հսկայածավալ երանգանին (սպեկտր), որին ամեն օր դեմ ենք առնում. մեզ այնպիսի շփոթմունքի մեջ է գցում, որ այլևս ի վիճակի չենք լինում ճիշտ ընտրություն կատարելու:

Ամենից վատն այն է, որ բարձրաստիճան սրաշտոնատար անձանց հանցագործությունների և Վիետնամի պատերազմի ողբերգության նյարդացնցող փաստերի հեղեղից հետո մեր հասարակությունը, ըստ երևույթին, այլևս չի ցանկանում ճշմարտությունն իմանալ: Այսօրինակ հակազդեցությունը մանրամասնորեն նկարագրված է Ուիլիս Հարմոնի աշխատության մեջ: Կարճ ասած, Ամերիկայի ժողովուրդն արձագանքել է ճիշտ այնպես, ինչպես որ ծրագրավորված էր: Է՛լ ավելի վատն այն է, որ, ճշմարտությունն ընդունել չցանկանալով, մենք ավելի ենք խարանում փոսի մեջ. ուզում ենք, որ կառավարությունը մեզ գերժ պահի ճշմարտությունից:

Մենք կուզենայինք Ռեյզանի և Բուշի վարչակազմերի ծախվածության (կոռուպցիոն) զարշահոտությունը թաղել գերեզմանաքմբի տակ: Մենք նախագահին թույլ ենք տալիս, որ մեզ սուտ ասի 1980 թվականի ևսկտեմբերի 20-23-ին իր գտնվելու տեղի մասին: Բայց և այնպես, այդ հանցագործություններն իրենց թափով մեծապես գերազանցել են նախագահի պաշտոնում եղած ժամանակ Նիքսոնի բոլոր արածները: Մենք՝ որպես ազգ, հասկանում ենք արդյոք, որ բարձունքից սրբնթացներք ենք իջնում փչացած արգելակներով:

Ո՛չ, մենք այդ չենք հասկանում: Հենց այն մարդիկ, որոնք պարզապես պարտավոր են Ամերիկայի ժողովրդին հասցնել այն ճշմարտությունը, որ Սպիտակ տանը մասնավոր, լավ կազմակերպված մի «պստիկ կառավարություն» իրար հետևից հանցագործություններ է կատարում (հանցագործություններ, որոնք խոցում են ազգի բուն հոգին և քայքայում ազգի խարիսխը հանդիսացող հանրապետական հիմքերը), հենց այդ մարդիկ էլ մեզ ասում են, թե հանրությանը նման բաներով չանհանգստացնենք: «Մենք իսկապես չենք ուզում լսել ու իմանալ այդ բոլոր հերյուրանքները». ահա՛ կաղապարային պատասխանը:

Երբ երկրի ընտրովի բարձրագույն պաշտոնյան ՄԱԿ-ի կանոնները բացելիքաց վեր է դասում Ամերիկայի Միացյալ Նահանգների Սահմանադրությունից (հետկանչի արժանի խախտում), մեծամասնությունն այդ ընկալում է որպես «բնականոն երևույթ»: Երբ երկրի բարձրագույն պաշտոնյան պատերազմ է սկսում առանց Կոնգրեսի կողմից սրատեղազմ հայտարարվելու (սա զգուցել են զանգվածային լրատվամիջոց-

ները), մենք դարձյալ գլուխներս կախ ընդունում ենք այդ, փոխանակ համարձակորեն նայելու ճշմարտության երեսին:

Երբ Պալսից ծոցի պատերազմը (որ նյութել ու ծրագրել էր մեր նախագահը) սկսվեց, մենք ոչ միայն երջանիկ էինք, որ լուրերը խտրազույն գրաքննվում են, այլև այն ընդունում էինք ամբողջ սրտով՝ անկեղծորեն համարելով, որ դա «պատերազմ վարելուն օգուտ» է: Ստու՛մ էր մեր նախագահը, ստու՛մ էր Էյպրիլ Գլասպիկ (April Glaspic), ստու՛մ էր Պետդեպարտամենտը: Նրանք ասում էին, թե պատերազմն արդարացի է, թե նախագահ Հուսեյնին նախագգուշացրել էին, որ նա Քուվեյթին հանգիստ թողնի: Երբ Գլասպիի Պետդեպարտամենտ հղած հեռագրերը վերջապես հրապարակվեցին, Միացյալ Նահանգների սենատորները մեկը մյուսի հետևից ելույթ ունեցան՝ պահանջելով պաշտպանել պուռնիկ (մարմնավաճառ) Գլասպիին: Նշանակություն չունի, որ սյանք և՛ ժողովրդավարներ էին, և՛ հանրապետականներ: Մենք՝ ժողովուրդս, թույլ սովինք, որ նրանք խույս տան իրենց նույկալի ստի համար կրելիք պատժից:

Ամերիկայի ժողովրդի այսպիսի վերաբերմունքի պարագայում Ուիլիս Հարմոնի և գլխավորների նրա թիմի ամենավայրի երազանքներն իրականություն են դառնում: Թավիստուկի ինստիտուտը ցնծում էր՝ տոնելով իր հաջողությունը այս երբեմնի մեծ ազգի ինքնահարգումն ու ինքնագնահատումը խորտակելու գործում: Մեզ ասացին, թե հարթել ենք Ծոցի կովում: Սակայն ամերիկացիների մեծ մասը դեռ չի զգացել, որ այդ հաղթանակով տանուլ է տվել ինքնահարգանքն ու ազգի պատիվը: Նրանք ընկած փտում են Քուվեյթի և Իրաքի անապատային ավազների մեջ՝ իրաքցի զինվորների ղյակների հետ միասին, որոնց անխիղճ ու անիմաստ կերպով սպանեցինք Քուվեյթից ու Բասրայից նրանց համաձայնեցված նահանջի ժամանակ. մենք չկայությանք մեր խոսքը պահել, որին պետք է հավատարիմ մնայինք ըստ Ժնևի համաձայնագրի, և չպետք է գլուխները նրանց վրա: «Ձեր ուզածն ի՞նչ է, հարցնում էին մեզ հսկիչները, հաղթանա՞կ, թե՞ ինքնահարգանք: Դուք չեք կարող միաժամանակ ունենալ և՛ մեկը, և՛ մյուսը»:

Հարյուր տարի առաջ այդպիսի բան լինել չէր կարող, իսկ հիմա եղել է և ողեկցվում է լիակատար անտարբերությամբ: Մենք չլիմացանք այդ լայնածավալ ու ամենաթափանց պատերազմում, որ մեր ազգի դեմ վարում էր Թավիստուկը: Ինչպես որ Ռազմավարական ոմբակոծումների ծրագրման վարչության գործողություններից ընկճված գերմանացիները, մեզանից շատերը ևս չլիմացան, ու մեր ազգը վերածվեց մի բանի, ինչը անցյալի ամբողջատիրական (տոտալիտար) վարչակարգերը միայն երազել կարող էին: «Ահա, - կասեին նրանք, - աշխարհի ամենամեծ ազգերից մեկը չի ուզում ճշմարտությունն իմանալ: Մեզ այլևս հարկավոր չեն քարոզչության գերատեսչություններ: Եվ հարկ չկա, որ ջա-

նանք այս ազգից թաքցնել ճշմարտությունը. նա ի՛նքն է հոժարակամորեն մերժում այն: Հեչ ազգ է»:

Մեր երբեմնի հպարտ Ամերիկայի Միացյալ Նահանգների Հանրապետությունը վերածվել է հանցավոր կազմակերպությունների խառնաժողովի. պատմությունը ցույց է տալիս, որ սրանք ամբողջատիրություն սկսվելու նախանշաններն են: Այսպիսին է մշտական փոփոխությունների այն ասպարեզը, որտեղ գտնվում է Ամերիկան 1991 թվականի վերջին: Մենք ապրում ենք ի մահ ծրագրավորված փտո՛ղ հասարակության մեջ, անապագա՝ հասարակության մեջ: Մենք նույնիսկ չսարսուցիմք ո՛չ 4 միլիոն անօթևանների, ո՛չ 30 միլիոն գործազուրկների, ո՛չ էլ անգամ 15 միլիոն սպանված մանուկների՝ մասին տեղեկությունից: Նրանք «ջրիոսի դարաշրջանի թափոններն» են: Այս դավադրությունն այնքան զագրելի է, որ դրան դեմառդեմ հանդիսյելիս մարդկանց մեծամասնությունը չի ընդունում դրա գոյությունը՝ սույն իրողությունները բանականորեն բացատրելով այն բանով, թե, իբր, «ժամանակները փոխվում են...»:

Մեր մեջ հենց այսպիսի՝ հակազդություն են ծրագրավորում Թավիստոկի ինստիտուտը և Ուիլիս Հարմոնը: Մեր լողեալների կործանումը բողոք չի՛ հարուցում: Մեր ժողովրդի հոգեմտավոր ներուժը քայքայվել է: 1991 թ. մայիսի 27-ին նախագահ Բուշը մի շատ խորաբովանդակ հայտարարություն արեց, որի էությունը միանգամայն սխալ բացատրեցին մեր քաղաքական մեկնաբանները.

«Ամերիկյան քաղաքականության բարոյական կողմը մեզնից պահանջում է հետևել այնպիսի աշխարհի բռնած բարոյական ուղղությանը, որտեղ ընտրվում է չարյաց փոքրագույնը: Սա սևի ու սպիտակի չբաժանված իրական աշխարհն է: Այստեղ բարոյական շատ քիչ բացարձակներ կան²»:

Էլ ի՞նչ կարելի է սպասել մի նախագահից, որը, երևի, Սպիտակ տունն զբաղեցրած ամենաչարագույժ մարդն է:

Խորհե՛ք սրա շուրջը՝ հիշելով իրաքցի 12.000 զինվորներին ողջ-ողջ թաղելու նրա տված հրամանը: Խորհե՛ք սրա շուրջը՝ հիշելով շարունակվող պատերազմի և Իրաքի ժողովրդի ցեղասպանության մասին³: Նախագահ Բուշը նախագահ Սադամ Հուսեյնին ախորժանքով բնութագրեց որպես «մեր ժամանակի Հիտլերի»: Նա դույզն ինչ ճշմարտան-

¹ Նկատի ունի արհեստական վիժմամբ սպանված երեխաներին (Վ. Ա.):

² Բացարձակ (արսույրտ) - հավերժական, անփոփոխ, կատարյալ (Վ. Ա.):

³ Սադամ Հուսեյնի հրամանով Իրաքի զորքը գրավում է սահմանակից Զուվեյբը: Բուշ Ավագի հրամանով Ամերիկայի զորքը հարձակվում է Իրաքի վրա: «Փոթորիկ անապատում» ծածկանվամբ մարտական գործողությունների ընթացքում իրաքցիները ջախջախվում և դուրս են գալիս Զուվեյբից (Վ. Ա.):

ման գեթ մի ապացույց չներկայացրեց իր պնդման համար: Դրա անհրաժեշտությունը պարզապես չկար: Նախագահ Բուշը հայտարարություն արեց, մենք էլ այն ընդունեցինք առանց հարցեր տալու: Խորհե՛ք այս մասին՝ նայելով ճշմարտության երեսին. չէ՞ որ նա այդ ամենն անում էր Ամերիկայի ժողովրդի անունից, թեև հրամանները գաղտնի ստանում էր 300-ի կոմիտեից:

Եվ ամենագլխավորը՝ ահա թե ինչին ուշադրություն դարձրեք. նախագահ Բուշն ու նրա հովանավորներն այնքան անպատժելի են զգում, որ այլևս հարկ չեն համարում թաքցնել Ամերիկայի ժողովրդի վրա իրենց հաստատած չարաշուք վերահսկողությունը կամ էլ այդ մասին մի սուտ բան ասել: Նրա հայտարարությունից ուղղակի եզրակացվում է, որ նա, որպես մեր առաջնորդ, ամեն տեսակ փոխզիջման գործարքներ է կնքելու՝ ի հաշիվ ճշմարտության, պատվի և արժանապատվության, եթե նրա (և մեր) պետերը դա անհրաժեշտ համարեն: 1991 թ. մայիսի 27-ին Միացյալ Նահանգների նախագահը չեղյալ հայտարարեց մեր Սահմանադրության բոլոր սկզբունքները և համարձակորեն ազդարարեց, որ ինքն այլևս կապկաված չէ դրանով: Սա Թավիստոկի ինստիտուտի և Ռեզնավարական ոմբակոծումների ծրագրման վարչության մեծ հաղթանակն է. վարչություն, որի նշանակետը 1945-ին գերմանացի բանվորների բնակելի թաղամասերն էին, ոչնչացնելու նշանակետ է դարձրել Ամերիկայի ժողովրդի հոգին մի այլ պատերազմում, որն սկսվել է 1946-ին և շարունակվում է մինչև օրս:

Մեր ազգի բնույթը փոխելու նպատակով Ստենֆորդի հետազոտական ինստիտուտը նրա վրա ճնշումն սկսել է ուժեղացնել վաթսուական թվականների սկզբից: ՍՀԻ-ի հարձակումը ուժ ու թափ էր առնում: Միացրեք ձեր հեռուստացույցը և ՍՀԻ-ի հաղթանակը աչքով կտեսնեք. գրուցահանդեսներ (թոք-շոու), որոնց նյութը սեռական ամենաձածուկ հարաբերությունների բաց մանրամասներն են, հատուկ տեսալիքներ, սրունցում ամբողջովին իշխում են այլասերվածությունը, ոոք-ն-ոոյն ու թմրանյութերը: Այն տեղում, ուր մի ժամանակ կուռքը Ջոն Ուեյնն էր, հիմա ունենք արևեստական ներբողաբանումը Մայքլ Չեքսոն անունով մի մարդու (բայց արդյո՞ք մարդու)՝ մարդ արարածի ծաղրանմանության, որին պատվում են որպես հերոսի, իսկ նա հենց այդ ժամանակ ֆռռում է, քացի-քացի անում, մոթմոթում ու ճղավում է ամերիկյան միլիոնավոր տների հեռուստատեկրաններին:

Չանգվածային լրատվամիջոցները ամուսնությունների և ամուսնալուծությունների մի ամբողջ հերթաշարի միջով անցած կնոջ մասին փողհարում են երկրով մեկ: Ամբողջ եթերաժամեր են նվիրում այս ու այն թմրադեղային ու անկապաշտական (դեկադենտական) անլվա ուրախմբերին, դրանց խելացնոր ձայներին, գծական ծեքծեքումներին, հագուստին

ու լեզվական աղավաղումներին: «Լացացնող» (փուչիկ) օպերաները, որոնց որոշ տեսարաններ մոտենում են պոռնկագրականին, արդեն մեկնաբանությունների կարիք չունեն: Վարսունական թվականներին այսպիսի բան չէինք հանդուրժի, իսկ հիմա սա համարվում է նույնա: Մեզ մշակել են մի բանով, որը Թավիստոկի ինստիտուտը կաշում է «գալիք նյարդացնցումներ (շոկեր)», ընդ որում՝ այդ գալիքն ԱՐԴԵՆ ԵԿԵԼ Է, և մենք այնպես ենք շշմել ու թմրել այդ մշակութային մշտական նյարդացնցումներից, որ յուրաքանչյուր բողոք թվում է անօգուտ մի շարժումնք, ուստի տրամաբանորեն մտածում ենք, որ բողոքելը ոչ մի իմաստ չունի:

1986 թ. 300-ի կոմիտեն հրամայեց ճնշումն ուժեղացնել. քանզի ԱՄՆ-ի անկումը բավարար չափով արագ չէր: Նախ՝ ԱՄՆ-ը սկսեց Կամբոջայի մաագործների՝ Պոլ Պոտի հանցավոր վարչակարգի «ճանաչման» գործընթացը, որոնք իրենք իսկ խոստովանել էին Կամբոջայի 2 միլիան քաղաքացիների սպանությունը: Ապա՝ 1991 թվականին Կոմիտեի հրամանի անիվը լրիվ պտույտ կատարեց: Միացյալ Նահանգները կոխվ գնացին բարեկամ ազգի վրա, որը «ծրագրավորված» էր հավատալու վաշինգտոնյան դավաճաններին: Մենք Իրաքի փոքր ազգի նախագահին ամբաստանեցինք բոլոր մեղքերի մեջ, ՈՐՈՆՑԻՑ ՈՉ ՄԵԿԸ ՆՈՒՅՆԻՍԿ ՄՈՏԱՎՈՐԱՊԵՍ ԴԻՇՏ ՉԷՐ: Մենք սպանում ու խեղամորթ էինք դարձնում նրանց երեխաներին, թողնում էինք, որ քաղցեն ու մեռնեն բազմատեսակ կիվանդություններից:

Այդ նույն ժամանակ մենք Բուշի կոմիտեական առաքելավորներին (եմիսարներին) Կամբոջա ուղարկեցինք, որ **ՃԱՆԱՉԵՆ (ԸՆԴՈՒՆԵՆ) ՋԱՆԳՎԱԾԱԲԱՐ 2 ՄԻԼԻՈՆ ԿԱՄԲՈՋԱՑԻ ՍՊԱՆԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ**, որը մարդկանց զոհաբերել էր 300-ի կոմիտեի՝ քաղաքների բնակչության շեշտակի կրճատման «գիտափորձին»: Նույն բանը, արդեն ոչ այնքան հեռու ապագայում, կկատարվի Միացյալ Նահանգների մեծ քաղաքներում: Հիմա նախագահ Բուշը և 300-ի կոմիտեին ենթակա նրա վարչակազմը փաստորեն ասում են հետևյալը. «Լսեք, մարդիկ, ի՞նչ եք ուզում ինձնից: Ես ձեզ ասել եմ, որ պետք եղած տեղում փոխզիջումներ եմ անելու, եթե հարկ լինի, նույնիսկ պառկելու եմ պոպոտական մարդասպանների հետ: ԱՅՆՊԵՍ ՈՐ՝ ՊԱՉԵՔ ԲԳՆԵՐՍ¹»:

¹ Ռուսաստանում ԱՄՆ-ից ներմուծվող հավի ազդրերին ասում էին «пожки Буша» (Բուշի ստափկներ): Այս ազդրերը՝ բղերը քաղաքականության առարկա էին դարձել: Բուշը, Ամերիկայի իերմերներին աջակցելու համար, դրանք ներմուծել էր տալիս այլևս գյուղմերը չարսաղողող Ռուսաստան: Վերջինիս հարկավոր որոշ պայմանագրերի կնքման բախտը կախված էր ԱՄՆ-ից բղեր գնելուց (Վ. Ա.):

Հանրությանը փոխելու նպատակով նրա վրա ճնշման գործադրումը զագաթնակետին կհասնի 1993 թվականին, և մենք ականատես կլինենք այնպիսի խայտառակությունների, որոնք առաջ անհնար կհամարեինք: Ապշահար Ամերիկյան կապիտալի դրանց, բայց շատ թույլ կերպով: Մեզ չի անհուսնգտուացնում՝ մեր ազատության գլխին կախված անգամ ամենավերջին սպառնալիքը՝ անհատական համակարգչային քարտերը: Ուիլյա Հարմոնի «Մարդու կերպարավորման» գրքի գաղափարները չափազանց բարդ են մեծամասնության հասկացողության համար, ուստի դիմեցին Մերիլին Ֆերգյուսոնի ծառայությանը, ոյ դրանք ավելի հասկանալի անեն: Բենեթի վրա «Ջրնոսի դարաշրջանը» ցուցանակով անցկացվում են տկորվելու ցույցեր (ստրիպտիզ-շոուներ՝ մերկահանդեսներ), իսկ «Ջրնոսի դարաշրջանի արշալույսը» երգը գրավել է ջերմերգի շքերթների (հիփ-պարադների)¹ վերին տողերը և սփռվել աշխարհով մեկ:

Անհատական համակարգչային քարտերը (երբ դրանք ամբողջապես կտարածեն) մեզ կզրկեն մեր սովորական միջավայրից, իսկ, ինչպես կտեսնենք, միջավայրը ավելի շատ բան է նշանակում, քան այլ բանի հանրածանոթ իմաստն է: ԱՄՆ-ը ստացել է ամենասատիկ բարույական վնասվածքը, որպեսին չի ստացել աշխարհի ոչ մի ազգ: Իսկ ամենավատը դեռ առջևում է:

Ամեն ինչ կատարվում է Թրավիստոկի տնօրինածի և ստենֆորդյան «սոցիոլոգների» ծրագրածի պես: Ժամանակները չեն փոխվում: Դրանց փոխում են: Բոլոր փոփոխությունները նախօրոք ծրագրված են և կատարվում են հանգամանորեն հաշվարկված գործողությունների հետևանքով: Սկզբում մենք փոխվում էինք դանդաղորեն, իսկ հիմա փոփոխությունների արագությունն ավելանում է: Մյացյալ Նահանգները «մի Աստված ունեցող մեկ ազգից» վերածվում են զանազան աստվածների ունեցող բազմալեզու խառնակույտի: ԱՄՆ-ն այլևս «մի Աստված ունեցող մեկ ազգ» չէ: Սահմանադրության հիմունքները «պարտություն են կրել»:

Մեր նախնիները խոսում էին մի լեզվով, դավանում էին մի կրոն՝ քրիստոնեությունը, և ունեին ընդհանուր իդեալներ: Մեր միջավայրում չկային օտարներ: Սա եղավ հետո՝ որպես միտումնավոր արած փորձ՝ մեր երկիրը մի շարք առանձին ազգությունների, մշակույթների ու հավատքների բաժանելու համար: Եթե այս բանում կասկած ունեք, շաբաթ օրն անցեք Նյու Յորքի Իստ Մայրով կամ Լոս Անջելեսի Վեստ Մայրով և կողքերդ նայեք: ԱՄՆ-ը դարձել է մի քանի ազգ, որոնք փորձում են գույակցել կառավարության ընդհանուր համակարգի ներքո: Երբ ներգաղթի ջրարգե-

¹ Հիփ՝ ջերմերգ, ջերմորեն սիրված ու լայնորեն տարածված երգ, և պարադ՝ շքերթ, կրթ: Մրա կատարողն էլ կլինի ջերմերգիչ (Վ. Ա.):

լակները լայնորեն բացվեցին 300-ի կոմիտեի ղեկավարի հարաբրոջ տղա Ֆրանկլին Դ. Ռուզվելտի կողմից, մշակութային ցնցումը մեծ խառնաշփոթություն և խճճվածություն առաջացրեց, որի հետևանքով «միասնական ազգի» հայեցակարգը դադարեց գործելուց: «Հռոմեական ակումբը» և ՆԱՏՕ-ն ավելի լարեցին իրավիճակը: «Սիրիյ մերձավորիդ» բանաձևը չի գործում, եթե ձեր մերձավորը ձեզ պես չէ:

Մեր Սահմանադրությունը ստեղծողների համար ինքնին ակներև էին այն ճշմարտությունները, որոնք ավանդել էին ապագա սերունդներին: Վատահ չլինելով, որ եկող սերունդները ևս կատարման համար պարտադիր այդ ճշմարտությունները ինքնին ակներև կհամարեն, նրանք ձեռնամուխ եղան դրանք մանրամասնորեն մեկնաբանելու գործին: Ըստ երևույթին նրանք երկյուղում էին, որ կգա ժամանակ, երբ իրենց դավանած ճշմարտությունները կդադարեն ինքնին ակներև լինելուց: Թավիստուկի մարդկային հարաբերությունների ինստիտուտն ամեն ինչ արեց, որ լինի այն, ինչից այնպես վախենում էին ԱՄՆ-ի Սահմանադրությունն ստեղծողները: Այդ ժամանակը եկավ Բուշի ու նրա «բարոյական բացարձակների բացակայության» և 300-ի կոմիտեի Համաշխարհային նոր կարգի գալստյամբ:

Սա Ամերիկայի վզին փաթաթած սոցիալական փոփոխությունների հայեցակարգի մի մասն է: Այս հայեցակարգը, ըստ Հարմոնի ու «Հռոմեական ակումբի» ասածի, ամերիկացիների համար ունենալու է հոգեբանական լուրջ ցնցումների և հարաճուն ճնշման նշանակություն: Թավիստուկի, «Հռոմեական ակումբի» ու ՆԱՏՕ-ի ստեղծման ժամանակներից սկսված հասարակական անկարգությունները ԱՄՆ-ում շարունակվելու են այնքան, մինչև որ այդ փոփոխությունները հասնեն վերջնասահմանին: Ազգերը բաղկացած են անհատներից և անհատների պես իրենք էլ ունեն հոգեբանական վերջնասահման, որից հետո փոփոխություններն անհնար են՝ անկախ անհատի կամ ազգի գոյությունից:

Այս հոգեբանական ճշմարտությունը հաստատուն կերպով վավերացրել էր Ռազմավարական ոմբակոծումների ծրագրման վարչությունը, որը հանձնարարել էր գերմանացի բանվորների բնակելի թաղամասերը ոմբակոծել մինչև «հագեցման վերջնակետը»: Ինչպես հիշատակվել է առջևում, այդ նախագիծը մշակվել էր «Փրոդենշիալ ինշուրանս քոմպանի» (Prudential Insurance Company) ապահովագրական ընկերության հովանու ներքո: Սույն նախագծի վրա աշխատած շատ գիտնականներ կա՛ն շարունակում են «մինչև հագեցման վերջնակետը» Ամերիկյան «ոմբակոծելու» աշխատանքները, կա՛ն էլ իրենց նյութահնար գործելակերպերը փոխանցել են հետևորդներին:

Նրանց թողած ժառանգությունը դրսևորվում է այն փաստով, որ մենք չենք մեր ճանապարհը կորցրել որպես ազգ, այլ մե՛զ են դիտավոր-

յալ շեղել այն ճանապարհից, որով ավելի քան երկու հարյուր տարի մեզ առաջնորդում էին Անկախության հռչակագրի հեղինակները: Կարճ ասած, մենք կորցրել ենք կապը մեր պատմական արմատների հետ, կորցրել ենք այն հավատը, որն ամերիկացիների շատ սերունդների ոգեշնչել է ազգն առաջ տանելու զարգացման անշեղ ուղիով՝ օգտագործելով Միացյալ Նահանգների Անկախության հռչակագիրը և Մահմանադրությունն ստեղծողների ժառանգությունը: Այն բանը, որ մենք կորցրել ենք ճանապարհը, հասկանալի է բոլորին, ովքեր փնտրում են ճշմարտությունը, որքան էլ սա դառը լինի:

Առաջնորդվելով Բուշով ու նրա «քառյակյակ բացարձակների բացակայությամբ»՝ մենք չգիտես ուր ենք սողում որպես կորուսյալ ազգ, և այդ երևում է անհատների արամադրությունից: Մենք համագործակցում ենք 300-ի կոմիտեի հետ մեր իսկ կործանման ու ստրկացման համար: Ոմանք զգում են այս և սաստիկ անհանգստություն են ապրում: Դավադրության նրանց ծանոթ զանազան տեսություններն ըստ երևույթին չեն կարողանում ամեն ինչ բացահայտել միևնույն վերջ: Մրա պատճառն այն է, որ նրանք ոչինչ չգիտեն դավադիրների իշխանակարգության՝ 300-ի կոմիտեի մասին:

Այս հոգիները, ոյանք խոր անհանգստություն են ապրում, ոյանք զգում են, սր կատարվում է մի շլիներիք բան, այնուամենայնիվ չեն կարողանում իրենց ուժերը բռունցք դարձնել խնդիրները լուծելու համար և դեգերում են մթության մեջ: Նրանք փորձում են պատկերացնել ապագան, որ խույս է տալիս իրենցից: Ամերիկյան երազանքը դառնում է օդատեսիլ (միրաժ): Նրանք իրենց հավատը դնում են կրոնի մեջ, բայց ոչ մի քայլ չեն անում այդ հավատը գործողությամբ գորացնելու համար: Ամերիկացիք վերածնունդը երբեք այնպես չեն ապրել, ինչպես եվրոպացիք են այն ապրել Խավար դարերի ամենամռայլ պահին՝ վճռական գործողությամբ իրենց մեջ արթնացնելով պայծառակերպվելու ոգին, որի արդյունքը եղավ փառավոր Վերածնունդը:

Նրանց դեպի խավարը քշող թշնամին որոշում է 1980 թվականին Միացյալ Նահանգներին այնպիսի գորեղ հարված հասցնել, որ նրա վերածնվելն անհնար դառնար: Իսկ ո՞վ է այդ թշնամին: Այդ թշնամին անդեմ «նրանք»-ը չեն: Թշնամին հստակորեն որոշված է, որ են՝ 300-ի կոմիտեն, «Հռոմեական ակումբը», ՆԱՏՕ-ն և սրանց բոլոր մասնաճյուղերը, խելքակենտրոններն ու հետազոտական կազմակերպությունները, որոնց կառավարում է Թավիստոկը: Անհրաժեշտություն չկա գործածելու «նրանք» կամ «թշնամի» բառերը. դրանք հարմար է գործածել միայն որպես կրճատագիր: ՄԵՆՔ ԳԻՏԵՆՔ՝ ՈՎՔԵՐ ԵՆ «ՆՐԱՆՔ», ՈՎ Է ԹՇՆԱՄԻՆ: 300-ի կոմիտեն և ԱՄՆ-ի արևելյան ափի նրա ազատական տիրախավի «արխատկրատիան», նրա բանկե-

րը, ապահովագրական ընկերությունները, վիթխարի կորստրացիաները, հիմնադրամները, հաղորդակցության ցանցերը, որոնց գլխավորում է ԴԱՎԱԴԻՐՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ. ԱՀԱ՝ ԹՇՆԱՍԻՆ:

Այս ուժն է բուշևիկյան հեղափոխությունն իրականացրել և ահաբեկության (տեռորի) թագավորություն հաստատել Ռուսաստանում, սանձազերծել Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմները, Կորեայի պատերազմը, Վիետնամի պատերազմը, ճգնաժամեր կազմակերպել Ռուդեզիայում, Հարավային Աֆրիկայում, Նիկարագուայում և Ֆիլիպիններում: Մա գաղտնի գերկառավարությունն է, որն իրականացրել է ԱՄՆ-ի տնտեսության ուղղորդված փլուզումը և վերջնական ապարդյունաբերականացումը մի երկրի, որն առաջ աշխարհի արդյունաբերական մեծագույն տերությունն էր:

Ամերիկային այսօր կարելի է համեմատել մարտի թունդ պահին հանկարծ բուն մտած գինվորի հետ: Ամերիկացիներս պարզապես բուն ենք մտել և թույլ տվել մեզ զցելու անտարբերության մեջ, որն առաջացել է ընտրության չափից ավելի հնարավորություններ ունենալուց: Այդ փոփոխություններն այլակերպում են մեր շրջակա միջավայրը, մեզ զրկում են դիմադրելու կամքից, և մենք դառնում ենք ալարկոտ, անտարբեր ու վերջ ի վերջո ննջում ենք ճակատամարտի թեժ պահին:

Այս վիճակի համար տեխնիկական մի եզր (տերմին) կա. կոչվում է «խորամուխ երկարատև լարում»: Մարդկանց մեծ խմբերի վրա խորամուխ երկարատև լարման միջոցով ազդեցություն գործելու արվեստը մշակել են Թավիստոկի ինստիտուտը և ԱՄՆ-ում գտնվող սրա դուստր կազմակերպությունները՝ Ստենֆորդի ինտագրտական ինստիտուտը, «Ռենդ բորայրեյչն»-ը և առնվազն էլի 150 հետազոտական հիմնարկ (ԱՄՆ):

Դ-ր Կուրտ Լևինը՝ պատերազմ վարելու այս դիվական միջոցները մշակած գիտնականը, Ամերիկայի միջին հայրենասերին ցնդեցրել է դավադրության զանազան տեսություններով՝ նրա մեջ հայուցելով անվստահության, վտանգի, մենակության և նույնիսկ վախի զգացումներ: Սրանք մարդու մեջ ծագում ու զարգանում են այն բանի համեմատ, երբ նա փնտրում, բայց ոչ մի կերպ չի կարողանում գտնել անկման ու փտության պատճառը, որոնց ծնողը «մարդու կերպարափոխման» հայեցակարգն է: Նա անկարող է կռահելու, առավել ևս՝ դիմակայելու սոցիալական, բարոյական, տնտեսական ու քաղաքական այն փոփոխություններին, որոնք համարում է անցանկալի և անթույլատրելի, բայց որոնք, այնուամենայնիվ, զնալով ուժգնանում են:

Դ-ր Լևինի անունը չկա մեր տիրախավի պատմության գրքերից որևէ մեկում, որոնք, վերջին հաշվով, իրադարձությունների գրառումներ են՝ արված գլխավորապես տիրող դասակարգի կամ պատերազմում հաղթածների տեսակետից: Ուստի ես հայարտությամբ եմ այս

անունը ձեզ ներկայացնում: Ինչպես հիշատակվեց վերը, դ-ը Լևինը կազմակերպել է Հարվարդի Հոգեբանական կլինիկան և Սոցիալական հետազոտությունների ինստիտուտը Թավիստոկի ինստիտուտի հովանու ներքո: Այս երկու կազմակերպությունների անունները ցույց չեն տալիս դրանց իսկական նպատակները:

Սա ինձ հիշեցնում է դրամանիշերի և դրամահատարանի մասին 1827 թ. ընդունված օրենսդրության բարեփոխման վերաբերյալ ամոթալի օրինագիծը (քիլը): Օրինագծի անվանումը բավականին անմեղ էր կամ հնչում էր անմեղ, ինչը դիտավորյալ արել էին դրա ստեղծողները: Սույն օրինագծի միջոցով սենատոր Ջոն Շերմանը ազգին մատնեց միջազգային բանկատերերի ձեռքը: Ենթադրվում է, որ Շերմանը օրինագիծն անց է կացրել «տանց այն կարդալու»: Ինչպես գիտենք, օրինագծի իսկական նպատակն այն էր, որ թույլատրվի ոչ միայն արծաթե, այլ ցանկացած այլ դրամանիշերի ու մետաղադրամների շրջանառությունը, և այդպիսով անազնիվ բանկատերերին անսահմանափակ իշխանություն տրվի մեր ազգի տրամադրած վալյուի վրա: Իսկ այդ իշխանությունից բանկատերերը պարզ ու հստակ կերպով զրկվում էին ԱՄՆ-ի Սահմանադրության աներկյիմաստ ձևակերպումներով:

Կուրտ Լևինը Թավիստոկի ինստիտուտին, «Հռոմեական ակումբին» և ՆԱՏՕ-ին Ամերիկայի վրա այնպիսի անսահմանափակ իշխանություն տվեց, որպիսի իրավունք չպետք է ունենա ոչ մի կազմակերպություն, միավորում կամ ընկերություն: Այս հիմնարկները գավթված իշխանությունն օգտագործեցին, որ խորտակեն դավադիրների ծրագրերին ու դիտավորություններին դիմադրելու ազգի կամքը, մեզ զրկեն Ամերիկայի հեղափոխության պտուղներից և մեզ դնեն մի ճանապարհի վրա, որն ուղիղ տանում է Նոր խավար դարեր՝ ՀամԿառլի իշխանության տակ:

Այս հեռագնա նպատակի իրականացման գործում Լևինի օգնականներն էին Ռիչարդ Քրոսմանը, Էրիկ Թրիստը, Հ. Վ. Գիքսը, Ուիլյա Հարմոնը, Չարլզ Անդերսոնը, Գարներ Լինդսեյը, Ռիչարդ Փրայսը և Ու. Ռ. Բայոնը: Ուշադրություն դարձրեք. սույն անունները երբեք չեն հայտնվել երեկոյան լուրերում, այլ երևան են եկել միայն գլխտական ամսագրերում, ուստի այդքան քիչ ամերիկացիներ գիտեն սրանց և չեն պատկերացնում, թե սրանք ինչ են արդեն արել և շարունակում անել ԱՄՆ-ի «ժամար»:

Նախագահ Ջեֆերսոնը մի անգամ ասել է, որ ինքը խղճում է նրանց, ովքեր կարծում են, թե լրագիր կարդալով ամեն ինչ գիտեն տեղի ունեցող իրադարձությունների մասին: Բրիտանիայի վարչապետ Դիլլոայելին ևս համարյա նույն բանն է ասել: Իրոք, դարեր շարունակ տիրակալները բավականությունն են ստացել անդաբեմի (կուլիսի) հետևից կառավարելուց: Մարդս միշտ ունեցել է իշխելու ցանկությունը, և ոչ մի տեղ ու ոչ մի ժամանակ այդ ցանկությունն այնքան տիրապետող չի եղել, ինչպես մեր օրերում:

Եթե այսպես չլիներ, ապա ինչո՞ւ պիտի հարկավոր լինեին գաղտնի ընկերությունները: Եթե մեզ ղեկավարեր ժողովրդավարներն ընտրված պաշտոնյաներով կառավարվող բաց համակարգը, ապա ինչո՞ւ պիտի մասոնական գաղտնի օբյակների կարիք լիներ ԱՄՆ-ի ամեն գյուղում, գյուղաքաղաքում ու քաղաքում: Ինչպե՞ս կարող էր սլատահել, որ ֆրանկմասոնությունը գործեր այդպես բացահայտուն և միևնույն ժամանակ այդքան լավ թաքցներ իր գաղտնիքները: Մենք չենք կարող այս հարցը տալ ո՛չ Ինը քույրերի օբյակի (Nine Sisters Lodge) Ինը անհայտներին, որ Փալիզում են, ոչ էլ Չորս թագերի օբյակի (Quatuor Coronati) նրանց ինը գործընկերներին, որ Լոնդոնում են: Բայց և այնպես այս 18 հոգին կազմում են մի ավելի գաղտնի կառավարության՝ Միջազգային գործերի թագավորական ինստիտուտի և ապա՝ 300-ի կոմիտեի մասը:

Ինչպե՞ս եղավ, որ շոտլանդական ծեսի ֆրանկմասոնությունը կարողացավ գաղափարապես այնպես մշակել Ջոն Հինկլիին, որ սա կրակի նախագահ Ռեյգանի վրա: Ինչների՞ս են պետք այնպիսի գաղտնի ուխտերը, ինչպիսիք են «Սբ. Հովհաննես Երուսաղեմացու ասպետները», «Կլոր սեղանը», «Միլների խումբը» և նման մյուս գաղտնի ընկերությունները: Սրանք «Հոմեական ակումբից» ու Միջազգային գործերի թագավորական ինստիտուտից և, վերջապես, հենց դավադիրների իշխանակարգության՝ 300-ի կոմիտեի կողմից անմիջաբար իրականացվող կառավարման ու վերահսկողության համաշխարհային շրթայի մի մասն են: Այս գաղտնի ընկերությունները հարկավոր են այն պատճառով, որ նրանց գործերը հանցավոր են, և դրանք պետք է թաքցվեն: Չարը չի կարող դիմանալ ճշմարտության լույտին:

Սույն գլխում կգտնենք դավադիրների, սրանց հիմնարկների, քողարկիչ կազմակերպությունների ու հրատարակչությունների համարյա լրիվ ցուցակը: 1980 թ. «Ջրիուսի դավադրությունը» (Aquarian Conspiracy) ծաղկունք էր ապրում, ինչը կարելի էր տեսնել մեր մասնավոր ու ազգային կյանքի ողջ գունապնակում: Անիմաստ բռնությունների, հաջորդական սպանությունների, դեռահասների ինքնասպանությունների շճեցուցիչ աճը, որոնք քնախտի («խորամուխ երկարատև լարում») աներկբայելի նշաններն են, դարձել է մեր նոր միջավայրի մի մասը, որը նույնքան վտանգավոր է, որքան մեր շնչած թունավոր օդը:

Վրա տված «ջրիուսի դարաշրջանը» հանկարծակիի բերեց Ամերիկային: Իբրև ազգ մենք պատրաստ չէինք մեր վզին փաթաթած փոփոխություններին: Ո՞վ էր գոնե մի անգամ լսել Թավիստոկի, Կուրտ Լեինի, Ռոլիս Հարմոնի ու Ջոն Ռոուլինգս Ռիզի անունները: Սրանք նույնիսկ չեն եղել Ամերիկայի քաղաքական թատերաբեմում: Այն ամենը, ինչ մենք կկարողանայինք տեսնել (եթե ընդհանրապես նեղություն քաշեինք աչքներս բացելու), կլիներ գալիք ցնցումներին դիմակայելու մեր ունա-

կության անկումը, որովհետև դարձել ենք ավելի հոգնած, ուժասպառ և, ի վերջո, մտել ենք հոգեբանական մի ցնցաշրջանի մեջ, որից հետո գալիս է համընդհանուր անտարբերությունը՝ որպես «համակողմանի խորը ներթափանցման» կիրառմամբ մղվող պատերազմի հետևանք:

«Ջրուսի դարաշրջանը», որպես անկայունություն սփռելու միջոց, լավագույնս նկարագրել է Թավիստոկի ինստիտուտը. «Հագետագնապին (սթրեսին) արձագանքելու և հակազդելու գործընթացում կան երեք հատակ փուլեր, որոնք դրսևորվում են սոցիալական մեծ խմբերի մեջ: Առաջին փուլը մակերեսային է. ներազդման ենթարկված բնակչությունն իրեն կապաշտպանի կարգախոսներով (լոզունգներով): Սա չի բացահայտում ճգնաժամի ակունքը, և գործնական դիմակայություն տեղի չի ունենում. հետևաբար ճգնաժամը կշարունակվի: Երկրորդ փուլը բեկորատվելն է, տրոհվելը: Սա տեղի է ունենում, երբ ճգնաժամը շարունակվում է, և հասարակական կարգը թուլանում ու քանդվում է: Ապա գալիս է երրորդ փուլը, երբ բնակչության մի խումբ վերջապես մտնում է «ինքնահաստատման» վիճակի մեջ և կոնակ է դարձնում հրահրված ճգնաժամին: Այնուհետև հաջորդում է թույլ հակազդեցությունը, որն ուղեկցվում է գործուն կանխագուշակական իդեալիզմով ու ինքնամեկուսացմամբ»:

Ո՞վ կժխտի՝ թմրանյութերի գործածության ահռելի աճը (ամեն օր սկսում են «քրեք» գործածել հազարավոր նոր թմրամոլներ). մանուկների սպանությունների (արորտիցիդ՝ վիժասպանություն) սարսռեցուցիչ շատացումը, որն անհամեմատ ավելի է երկու համաշխարհային, այլև կորեական ու վիետնամական պատերազմներում միասին վերցրած մեր զինված ուժերի զոհերի թվից. բացեիքաց քաջալերելը արվամոլներին ու լեսբոհիներին, որոնց «իրավունքների» պաշտպանության համար ամեն տարի նորանոր օրենքներ են ընդունվում. մեր քաղաքները ախտահարած ՉԻԱՀ-ի (ՄՊԻԴ) սուկալի մահտարածամը. մեր կրթության համակարգի լիակատար փլուզումը. ամուսնալուծությունների թվի սարսափեցնող աճը. մարդասպանությունների բարձրացող մակարդակը, որն ահուսարսափի ու անվստահության մեջ է գցում մնացյալ աշխարհին. սատանապաշտական իրարահաջորդ (սերիական) սպանությունները. հազարավոր փոքրահասակ երեխաների անհետացումը, որոնց փողոցներում առևանգում են սեռական այլանդակները. պոռնկագրության ահագնացող ձնահյուսը, որին ուղեկցում է հեռուստատեսությամբ ցուցադրելու «թույլատրելիությունը»: Այս բոլորից հետո ո՞վ կժխտի մեր երկրի՝ ճգնաժամի մեջ լինելը, որին չենք փորձում դիմակայել և կոնակ ենք դարձնում:

Լավագույն մղումներով գործող և այս խնդիրների պարտներում մասնագիտացող մալալիկ մեղքի զգալի բաժինը վերագրում են կրթության (ավելի ճիշտ՝ ԱՄՆ-ում այդպիսի անուն կրող) համակարգի թերություն-

ներին: Հիմա հանցագործները շատ են 9-15 տարեկանների հասակային խմբերում: Բռնություն կատարելը սովորական երևույթ է 10 տարեկանների շրջանում: Մեր մասնագետները, մեր ուսուցիչների միությունները, մեր եկեղեցիները ասում են, որ այս ամենը կրթության անկատար համակարգի արդյունք է: Այս մասին է վկայում գնահատականների ցուցանիշների անկումը: Մասնագետներն ախուվախ են անում, որ ԱՄՆ-ը կրթության մակարդակով աշխարհում հիմա 39-րդ տեղն է զբաղեցնում:

Ինչու՞ ենք հիմա լաց լինում մի բանի վրա, որը վաղուց ակնհայտ էր: Մեր կրթության համակարգը ծրագրավորել էին այնպես, որ ինքն իրեն փրկվի: Հենց սրա համար էր ՆԱՏՕ-ն ԱՄՆ ուղարկել դ-ր Ալեքսանդր Քինգին: Հենց այս էին Ջաստիս Հուգո Բլեկին հրամայել, որ իրագործի: Իրողությունն այս է՝ 300-ի կոմիտեն, մեր կառավարության հավանությունը, ուզում է, որ ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՄԲՂՆԵՐԸ ՊԱՏՇԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՉՍՏԱՆԱՆ: Այն կրթության էությունը, որ ֆրանկմասոն Ջաստիս Հուգո Բլեկը (Justice Hygo Blach), Ալեքսանդր Քինգը, Գունար Մերդալը (Gunnar Myrdal) և նրա կինը մտադիր են հաղորդել ԱՄՆ-ի երեխաներին, հետևյալն է. հանցագործությունը փոխհատուցվում է, իսկ նպատակահարմարությունը վեր է ամեն ինչից:

Նրանք մեր երեխաներին սովորեցնում են, թե Միացյալ Նահանգների օրենքները արդարորեն չեն կիրառվում, և հենց այդպես էլ պետք է լինի: Մեր երեխաները տասնյակ տարիներ դաստիարակվում են այդ ոգով՝ աչքի առաջ ունենալով ծախվածության օրինակները. Ռոնալդ Ռեյգանն ու Ջորջ Բուշն ընկել են ընչաքաղցության ցանցը, որը լիովին ախրել է նրանց: Մեր կրթության համակարգը անկման չի հասել. Քինգի, Բլեկի ու Մերդալների ղեկավարությամբ այն փաստորեն հասել է մեծ հաջողությունների, բայց ամեն ինչ կախված է այն տեսակետից, որից նայում ենք համակարգին: 300-ի կոմիտեն ՀԻԱՑԱԾ է՝ մեր կրթության համակարգով. նա թույլ չի տա նշանախեց անգամ փոխել դրա մեջ:

Ըստ Ստենֆորդի ինստիտուտի և Ուիլիս Հարմոնի՝ խոր ու համակողմանի ներթափանցմամբ մակաժված (ինդուկցված) հոգեկան վնասվածքը, որի մի մասը մեր կրթությունն է, մեզ հասցվում է արդեն 45 տարի շարունակ: Բայց քանի՞ հոգի են գիտակցում մեր հասարակության վրա գործադրվող այդ նենգավոր ճնշումը, մշտական գաղափարախոսական մշակումը և ուսելի ամենօրյա արդուկումը: 1950-ական թթ. Նյու Յորքի փողոցներում բռնկված փողոցային հյուսակախմբերի առեղծվածային կոիվները ցույց են տալիս, որ դավադիրները կարող են ստեղծել ամեն տեսակ քայքայիչ տարրեր և կառավարել դրանց: Թե որտեղի՞ց էին ծագել հրոսակների այդ կոիվները, ոչ ոք չգիտեր մինչև 1980-ական թթ., քանի դեռ ուսումնասիրողները չէին մերկացրել այդ «սոցիալական արտասովոր երևույթ (ֆենոմեն)» կոչեցյալը կառավարող գաղտնի ղեկավարներին:

Փողոցային հրոսակախմբերի կոիվները հանգամանորեն ծրագրել էր Ստենֆորդը, որպեսզի դիտավորյալ շփոթահար անի մեր հասարակությանը և հուզմունք ու անհանգստություն առաջացնի: 1958-ի մոտերքին արդեն 200-ից ավելի հրոսակախումբ կար: Նրանց հանրաճանաչ դարձրին «Վեստսայդյան պատմություն» անունով երաժշտական կատակերգությունը և Հովիվուդի ֆիլմը: Մի ամբողջ տասնամյակ լուրերի վերնագրերում թառելուց հետո այդ հրոսակախմբերը 1966 թվականին անսպասելիորեն չքվեցին Նյու Յորքի, Լոս Անջելեսի, Նյու Ջերսիի, Ֆիլադելֆիայի ու Չիկագոյի փողոցներից:

Փողոցային հրոսակախմբերի տասնամյա կոիվների ընթացքում հասարակությունը դրանց արձագանքում էր Ստենֆորդի ինստիտուտի կազմած ծրագրին համապատասխան. հասարակությունն ընդհանուր առմամբ չէր կարողանում հասկանալ հրոսակների այդ կոիվը և արձագանքում էր ոչ համարժեքորեն: Եթե գտնվեին իմաստուն մարդիկ, ովքեր կկռահեին, որ փողոցային այդ կոիվները Ստենֆորդի ինստիտուտի սոցիալական ճարտարագիտության և ուղեղարդուկման կենտրոնի «գիտափորձն» են, ապա դավադրությունը կբացվեր: Կամ մեզանում չկան որակյալ մասնագետներ (ինչի հավանականությունը շատ քիչ է), որոնք ունակ են իսկապես գնահատելու կատարվածը, կամ էլ սպառնալիքներով լռեցրել են նրանց: Ստենֆորդի ինստիտուտի հետ զանգվածային լրատվամիջոցների համագործակցությունը հանգեցրել է մեր սպրեյակերպի վրա «նոր դարաշրջանի» («նյու էջ») հայեցակարգի ձևով նոր գրոհ տալուն, որը կանխասել էին սոցիալական ճարտարագետները և Թավիստոկլի «նոր գիտությունների» մասնագետները:

1989 թ. Լոս Անջելեսի փողոցներում վերստին սադրվեցին փողոցային հրոսակախմբերի կոիվներ՝ սրպես սոցիալական փոփոխությունների համար պայմաններ ստեղծելու միջոց: Առաջին միջադեպերի մի քանի ամսվա ընթացքում հրոսակախմբերն սկսեցին բազմանալ (սկզբում՝ տասնյակներով, ապա՝ հարյուրներով) Լոս Անջելեսի Իստ Սայդի փողոցներում: Ծլեցին նորանոր թմրաորջեր, և տարածվեց անսանձ մարմնավաճառությունը: Թմրադեղավաճառներն իշխում էին փողոցներում: Բոլոր դեմ կանգնողներին գնդակահար էին անում: Մամուլում հնչող ողբերը բարձրադասակ էին ու երկարատև: Ստենֆորդի ջոկած բնակչության նպատակային մի մեծ խումբ սկսեց իրեն պաշտպանել կարգախոսներով: Թավիստոկլը սա կոչեց առաջին փուլ, այսինքն՝ երբ նպատակային խումբը չի կարողանում որոշել ճգնաժամի ակունքը:

Գանգստերական կովի երկրորդ փուլը եղավ «բեկորատումը» (ֆրագմենտացիա): Փողոցային հրոսակախմբերի «գործողության» վայրերում չբնակվողներն ասում էին. «Փա՛ռք Աստծուն, դրանք մեզ ձեռք չեն տալիս»: Այնուամենայնիվ ճգնաժամը շարունակվում էր՝ ընդունելի այն, թե

չընդունեին: Իսկ Լոս Անջելեսի հասարակական կարգն այդ նույն ժամանակ սկսել էր խախտվել: Ինչպես որ ծրագրավորել էր Թավիստոկը, հրոսակների կոիվներից վնաս չկրած բնակչության խմբերը «լրենց պաշտպանելու համար առանձնացան», որովհետև ճգնաժամի ակունքը չէր որոշվել: Սկսվեց այսպես կոչված «ոչ համարժեքորեն հարմարվելու» և սահմանազատվելու ու մեկուսանալու գործընթացի շրջանը:

Ի՞նչն էր փողոցային կոիվների հրահրման նպատակը (բացի թմրանյութեր տարածելուց): Նախ՝ նպատակային խմբին ցույց տալը, որ նրանք ապահով վիճակում չեն, այսինքն՝ վտանգի զգացում ստեղծելը: Երկրորդ՝ ցույց տալը, որ կազմակերպված հասարակությունն անօգնական է նման բռնության դեմ, և երրորդ՝ այն փաստն ընդունել տալը, որ մեր սոցիալական կարգը քանդվում է: Փողոցային բռնության ներկայիս ալիքը կանցնի նույնքան արագորեն, ինչպես ծագել էր, հենց որ ավարտվեն Ստենֆորդի ինստիտուտի ծրագրի երեք փուլերը:

Հասարակության մշակման ցայտուն օրինակ է (որպեսզի նա փոփոխությունն ընդունի նույնիսկ այն դեպքում, երբ այդպիսի փոփոխությունն անցանկալի է համարում բնակչության մեծ խումբը) «ԲԻԹԼՁ»-ի «ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ»: «Բիթլզ» խումբն ԱՄՆ բերեցին որպես մի մաս այն սոցիալական գիտափորձի, որով բնակչության մեծ խմբերը պետք է ենթարկվեին ուղեղարդուկման, ինչը նրանք գլխի էլ չընկան:

Երբ Թավիստոկը «Բիթլզ»-ն ԱՄՆ հասցրեց, ոչ մեկը չէր կարող պատկերացնել թափը այն մշակութային աղետի, որն սկսվելու էր դրանից հետո: «Բիթլզ» խումբը բաղկացուցիչ մասն էր «ՋՐՀՈՍԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ», մի կենդանի օրգանիզմի, որն առաջացել էր «ՄԱՐԴՈՒԿԵՐՊԱՐԱՓՈՒՈՒՄԻՑ» («Պայմանագիր URH (489)-2150, Չեկուցում քաղաքական հետազոտությունների մասին 4/4/74», պատրաստել է ՍՀԻ-ի «Սոցիալական քաղաքականության ուսումնասիրման կենտրոնը», ղեկավար՝ Ուիլիս Հարմոն»):

«Բիթլզ»-ի երևույթը երիտասարդական ինքնաբուխ ու հախտոն ընդվզում չէր սոցիալական հին համակարգի դեմ: Ընդհակառակը, դա անորսալի դավադիրների հանգամանորեն մշակած ծրագիրն էր՝ արտակարգ ավերիչ տարր մտցնելու բնակչության նպատակային մեծ խմբի մեջ, որի գիտակցությունը, հակառակ նրա կամքի, ծրագրված էր փոխել:

«Բիթլզ»-ի հետ շրջանառության մեջ մտցվեցին նոր բառեր ու արտահայտություններ, որոնք հնարել էր Թավիստոկը: Այնպիսի բառեր, ինչպիսիք են «ոռք», որ որոշակի հնչյունների իմաստ ունի, «թինեյջեր» (դեռահաս, «խակ»), «քուլ» (cool՝ «զիլ»), discovered («բաց», «տկլոր») և «փոփ երաժշտություն», կազմում էին թմրանյութ վերցնելն ու գործածելը նշանակող կրճատագիր (կոդային) բառապաշարի մի մասը: Այս բառերը եկան «Բիթլզ»-ի հետ և մեջտեղ էին գալիս այն բոլոր տեղերում,

ուր խումբն էր ժամանում. լնդսմին «թինեյջերները» սրանց առաջին «հայտնաբերողներն» էին: Ի դեպ, «թինեյջեր» բառը ոչ մի տեղ չի գուր-ծածվել մինչև Թավիստոկի մարդկային հարաբերությունների ինստի-տուտի շնորհիվ «Բիթլզ»-ի հայտնվելը:

Ինչպես որ փողոցային կոիվների դեպքում, այդ խնդիրն էլ անհնար էր լուծել առանց զանգվածային լրատվամիջոցների, նախ և առաջ առանց էլեկտրոնային լրատվամիջոցների հետ համագործակցելու: Առանձնակի դերակատարություն ունեք գոեիլկ անձնավորություն էդ Սալիվանը, որին դավադիրները հատուկ պատրաստել էին այն դերի համար, որը նա պետք է խաղար: Ոչ ոք ուշադրություն չէր դարձնի լի-վերպուլցի խեղկատակային խմբին և սրանց «երաժշտության» տաս-ներկու ապատոնային (անտոն՝ ատոնալ) համակարգին, եթե մամուլը նրանց շուրջն իսկական փոթորիկ չբարձրացներ: Տասներկու ապատո-նային համակարգը բաղկացած էր կրկնփող ծանր հնչյուններից, որոնք առնվել էին 'Դ-լոնիսոսի ու Բահալի' պաշտամունքների քլմերի երաժշ-տությունից և «այսլիականացվել» Անգլիայի թագուհու և, հետևաբար, 300-ի կոմիտեի մերձավոր բարեկամ Ադոլֆուսի կողմից:

Թավիստոկը և նրա Ստենֆորդի Հետազոտական կենտրոնը կերտել էին հատուկ բառեր, որոնք հետո գործածական դարձան «ուր երաժշտու-թյան» մեջ և սրա սիրահարների միջավայրում: Այդ մոդայական ու առանցքային բառերն էլ «կերտեցին» հանրությունից զատված երիտա-սարդների մի մեծ խմբի, որին սոցիալական ճարտարագիտության և մշակման միջոցով հավատացրին, թե «Բիթլզ»-ը նրանց իրոք սիրած խումբն է: «Ռոք երաժշտության» համատեքստում շինված առանցքային բոլոր բառերը նախատեսված էին նպատակային նոր խմբին, այսինքն՝ ամերիկյան երիտասալարությանը զանգվածաբար կառավարելու համար:

«Բիթլ»-երը լիանալի աշխատեցին, ավելի ճիշտ՝ Թավիստոկն ու Ստենֆորդը սքանչելի աշխատանք կատարեցին, իսկ «բիթլ»-երը պար-զապես արձագանքում էին ծրագրավորված ոտքոտների պես՝ «մի փոքր օգնությամբ իրենց բարեկամների» («with a little help from their friends»)՝ թմրանյութեր գործածելու և «գիլ» վիճակի հասցնելու համար ստեղծված կողաբառերի: «Բիթլզ» քառյակը դարձավ աչքի զարնող «նոր տիպ»՝ ևս մի գոհար թավիստոկյան ծեքալեզվի² (ժարգոնի) քայ-

¹ Բահադը հեթանոսական կուրք է. որպես արեգակի աստված պաշտվել է Փյունիկայում, Սիրիայում, Բաբելոնում և Արևելքի այլ երկրներում: Բաբելոնում այն կոչվում էր Բել: Բահադի սոները կատարվել են մեծ շուքով: Նրան մարդագոհ են մատուցել (Վ. Ա.):

² Ծեքել - հնչյունը ծոմնել, իմաստը խեղաթյուրել, համեմատել՝ ծեքծեքել, կոտրատվել, սեթևեթել:

ռամանյակից¹: Դա հայտնվել էր այն բանից քիչ առաջ, երբ «բիթլ»-երը ստեղծել էին նոր ոճ (արտասովոր հանդերձանք, սանրվածք ու խոսվածք), որը հարուցել էր ավագ սերնդի վրդովմունքը, ինչն էլ ծրագրված էր: Սա Ուիլիս Հարմոնի և գլխնական սոցիալոգների ու գեներային ճարտարագիտության մասնագետների նրա թիմի մշակած և կիրարկած «բեկորատման՝ ոչ համարժեք հարմարման» գործընթացի մի մասն էր:

Մեր հասարակության մեջ բնակչության մեծ խմբերի ուղեղն արդյունավետորեն արբույկելու գործում վճուռական դերը պատկանում է զանգվածային լրատվության տպագիր և էլեկտրոնային միջոցներին: Փողոցային հրասակախմբերի կոիվները Լոս Անջելեսում վերջացան 1966-ին՝ հենց որ զանգվածային լրատվամիջոցները դադարեցին դուսնք մեկնաբանելուց: Փողոցային հրոսակախմբերն սկսում են ցրվել իրենց հանդեպ լրատվամիջոցների ուշադրությունը թուլանալու հետ, իսկ իետո անհետ չքվում են: 1966 թվականին էլ այդպես եղավ. խնդրի լիցքը պարզապես «պարպվել» էր: Փողոցային հրասակախմբերը կատարել էին անկայունության ու անապահովության մթնոլորտ ստեղծելու առաջադրանքը: Ճիշտ նույնաման բեմարք (սցենար) է սպասում նաև ոոք «երաժշտությանը»: Չանգվածային լրատվամիջոցների ուշադրությունից զրկվելով՝ այն կամացուկ իր տեղը կգբադեցնի պատմության մեջ:

«Բիթլ»-երից անմիջապես հետո, որոնց, ի միջի այլոց, մեկտեղ էր հավաքել Թավիստոկի ինստիտուտը, ժամանեցին «Made in England» (անգլիական արտադրության) այլ ոոքախմբեր, որոնց (լինչպես որ «Բիթլզ»-ի) համար Թեո Ադորնոն էր գրել ամբողջ պաշտամունքային «լիրիկան» և հորինել ոոջ «երաժշտությունը»: Իսկ ինձ համար տհաճ է այս գեղեցիկ բառերը գործածելը «բիթլագարության» համատեքստում. դա ինձ հիշեցնում է, թե ոոքան սխալ է կիրառվում «սիրեցյալ» բառը, երբ վերաբերում է խոզային տոփանքից գալարվող համաստեռամոլների կեղտոտ կապին: «Ռոքը» երաժշտություն կոչելը նույնսլիսի անարգանք է երաժշտության հանդեպ, ինչպես «ոոք լիրիկան»՝ լեզվի:

Այնուհետև Թավիստոկն ու Ստենֆորդը ձեռնամուխ եղան 300-ի կոմիտեի պատվիրած աշխատանքի երկրորդ փուլն իրագործելուն: Նոր փուլը խթանեց ԱՄՆ-ում սոցիալական փոփոխությունները: Նույնքան արագ, ինչպես «Բիթլզ»-ն էր հայտնվել ամերիկյան բեմում, մեջտեղ եկան նաև հասարակական խմբերը բաժանելու և մեկուսացնելու համար նախատեսված «խփնված սերունդ» (beat generation) կոդաբառերը: Հիմա լրատվամիջոցներն իրենց ուշադրությունը բեռեցին «խփն-

¹ Զայռամանյակ կամ բայո - կանանց պարանոցի գոհարագարդ մանյակ:

ված սերնդի» վրա: Թավիստոկյան ծագում ունեցող նոր բառերն ասես առնվեցին չեղած տեղից. «բիթնիկներ»¹, «հիպիներ», «ծաղկորդիներ» բառերը հաստատունորեն մտան Ամերիկայի լեզվի մեջ: Հանրաճանաչ դարձավ հանրության կենսաձևից շեղվելը՝ «հասարակությունից պոկվելը» (drop out), կեղտոտ ջինս հագնելը, անվա երկար մազ պահելը: «Խփնված սերնդի» ներկայացուցիչներն իրենց կտրեցին մնացյալ Ամերիկայից: Նրանք վաստակեցին նույնպիսի վատ համբավ, ինչպիսին ունեին նրանցից ավելի մաքրասեր «բիթլ»-երը:

Նոր ստեղծված սոցիալական խումբը և սրա «կենսաառճը» ամերիկացի միլիոնավոր երիտասարդների ներքաշեց իր պաշտամունքի մեջ: Ամերիկայի երիտասարդությունը արմատապես հեղափոխվեց (նույնիսկ չգիտակցելով դա) այն ժամանակ, երբ ավագ սերունդը կողքին անճար նստել էր՝ ի վիճակի շիներով պարզելու ճգնաժամի ակունքը և, հետևաբար, ոչ համարժեքորեն հակադրելով դրա դրսևորումներին, որոնք էին՝ բազմապիսի թմրանյութերը, մարիխուանան, իսկ այնուհետև՝ լիզերգինաթթուն (LՄԴ-ն): Վերջինս «խսկը ժամանակին» նրանց համար տեղ հասցրեց շվեյցարական SANDOZ դեղագործական ընկերությունը, հենց որ սրա քիմիկոս Ալբերտ Հուֆմանը հայտնագործեց էրգոտամինի՝ գիտակցությունը փոխող ամենագորեղ թմրադեղերից մեկի սինթեզը: Այս նախագիծը 300-ի կոմիտեն էր դրամավորել իր բանկերից մեկի՝ S. C. Warburg-ի միջոցով, իսկ թմրանյութը Ամերիկա էր կրել փիլիսոփա Օլդոս Հաքսլին:

Նոր «հրաշք թմրանյութն» սկսեցին արագորեն տարածել «նմուշածրարներով»՝ անվճար բաժանելով քուլեջներում ու «ռոքի» համերգներում Միացյալ Նահանգների տարածքով մեկ: Դրա հետևանքով հենց LՄԴ-ն դարձավ թմրանյութերի սփռման արագացուցիչը: Այստեղ իսկույն մի համառ հարց է հառնում. իսկ ի՞նչ էր այդ ժամանակ անում Թմրանյութերի դեմ պայքարի վարչությունը (ԹՊՎ) (Drug Enforcement Agency (DEA)): Կան անվիճարկելի կողմնակի ապացույցներ, որոնք ցույց են տալիս, որ ԹՊՎ-ն գիտեր, թե ինչ է կատարվում, բայց նրան հրամայել էին չխառնվել:

Որքան շատ էին բրիտանական ոտքախմբերն ԱՄՆ, ժամանում, այնքան «ռոքի» համերգները դառնում էին ամերիկացի երիտասարդների ամենօրյա կյանքի պարտադիր տարրը: Այս «համերգների» հաճախա-

¹ Անգլերեն beat խփել, ջարդել բառից: XX դարի 50-60 ական թթ. Ամերիկայում ծագած երիտասարդների անհիշխանական (անարխիստական) շարժման ներկայացուցիչներ: Ըմբոստանում էին մարդկային համակեցության կանոնների դեմ. բողոքն արտահայտվում էր կսմավոր աղբատությամբ, թափառաշրջությամբ, սեռական հարաբերությունների ազատությամբ և այլն (Վ. Ա.):

կանոթյան համեմատ ավելանում էր երիտասարդների թմրանյութ գործածելը: Հարվածային ծանր ձայների դիվական ժխտը այն աստիճանի էր բթացնում լսողների գիտակցությունը, որ նրանցից յուրաքանչյուրին կարելի էր հեշտությամբ համոզել նոր թմրանյութը «համտեսել» թեկուզև հենց այն բանի համար, թե «բոլորն են անում»: Շրջապատող հասակակիցների օրինակը շատ գորավոր գեներ է: «Նոր մշակույթը» հնարավոր ատավելագույն լուսաբանման արժանուցավ գանգվածային լրատվամիջոցներում, ընդամին դա մի սենթ էլ չնստեց դավադիրների վրա:

Նոր սլաշտամունքի առթիվ մի շարք քաղաքացիական առաջնորդների ու եկեղեցական գործիչների բուռն վրդովմունքն ուղղված էր դրա ՀԵՏԵՎԱՆԶՆԵՐԻ, այլ ոչ թե ՊԱՏՃԱՌՆԵՐԻ դեմ: Ռոքի սլաշտամունքի քննադատները գործեցին այն նույն սխալները, որոնք արվել էին «չոր օրենքի»¹ ժամանակամիջոցում. նրանք քննադատում էին իրավապահ մարմիններին, ասուցիչներին, ծնողներին, ում ասես՝ բացի դավադիրներից:

Քանի որ ինձ համակում է ցասման ու վրդովմունքի զգացումը այդ մեծ թմրածանուսխառի վերաբերմամբ, ես ընթերցողից ներառություն չեմ խնդրում այն բառերի գործածության համար, որոնք բնավ բնորոշ չեն ինձ: Ամբողջ Ամերիկայում թմրանյութային սողունների մեջ ամենուզագիրներից մեկը Ալան Գինզբերգն է (Alan Ginsberg). այս Գինզբերգը, ոչ մի ցենս չժախսելով, ԼՍԴ-ն գովազդեց երկրով մեկ, թեև սովորական հանգամանքներում հեռուստատեսությամբ այդօրինակ գովազդումը միլիոնավոր դրախտներ կարժենար: Թմրանյութերի, նախ և առաջ ԼՍԴ-ի, անվճար գովազդումն իր գագաթնակետին հասավ 60-ական թթ. վերջին բացարձակապես ՁԼՄ-ների հոժարական աջակցության շնորհիվ: Գինզբերգի ծավալած գանգվածային գովազդարշավի ազդեցությունը սահմուկեցուցիչ էր. Ամերիկայի հասարակայնությունը միանգամից գնդակոծվեց «ապագայի մշակութային նյարդացնցումների» մի ամբողջ հերքագարկով:

Ենթարկվելով տեղակատվության հեղեղանման հոսքի և չափից ավելի խթանման ազդեցությանը (ուզում եմ նորից հիշեցնել, որ սա թավիստուկյան գոլոմակական ձեռնարկներից քաղված թավիստուկյան ծե-

¹ Խմիչքի արտադրությունն ու վաճառքը արգելելու օրենքը: «1920 թ. ԱՄՆ-ում մտցված «չոր օրենքի» գործողության ընթացքում ծաղկեց մաքսանենգ ու ինքնաթոր ոգելից խմիչքների ընդհատակյա առևտուրը: Ոստիկանության և խմիչքի արտադրությամբ ու իրացմամբ զբաղվողների բախումների ժամանակ գոհվում էին հազարավոր մարդիկ, բանտերը լցվում էին օրինախախտներով, դժբախտանում էին սրանց ընտանիքները, գաղանի տեղափոխումը դյուրացնելու նպատակով (որ խմիչքի տարողությունները քիչ տեղ զբաղեցնեն) սլաշտատվող չափից թունդ սպիրտային խմիչքներն արագորեն խարխլում էին մարդկանց առողջությունը: Այս ամենի պատճառով 1933 թ. «չոր օրենքը» վերացվեց» (Վարազդաստ Ավագյան, «Խմիչքն ընդդեմ խղճի», Առագաստ, 1991, NN 29, 30):

քալեգու (ժարգոն) է.)՝ մենք կլանվեցինք այդ հեղեղից, ապա, հասնելով բեկունճային ոլորտակի փուլի, մեր գիտակցությունն սկսեց պարզապես ընկնել անտարբերության մեջ, այլևս ունակ չլինելով մարսելու տեղեկատվական այդ գերբաժնաչափերը. այսինքն՝ «համակողմանի խոր ներթափանցումը» բռնեց մեզ: Գինգբերգը բանաստեղծի կոչման հավակնություն ուներ, բայց բանաստեղծ դառնալ ջանացողներից ոչ մեկը նրա պես ու չափ անհեթեթություններ ու բարբաջանքներ չի գրել: Գինգբերգի առաջ զրկված խնդիրը գրեթե ոչ մի առնչություն չուներ բանաստեղծության հետ. նրա գլխավոր խնդիրը բնակչության նպատակային խմբի վզին նոր ենթամշակույթ փաթաթելն էր:

Գինգբերգին օգնելու համար նրան կցեցին ժամանակը կանոնավորապես գծանոցներում անցկացնող մարդկանց տեսակի գլուղ Նորման Մեյլերին: Սա հուլիվուդյան ձախ թեքման հավաքույթի սիրելին էր, ուստի որևիցե դժվարություն չուներ Գինգբերգի համար հեռուստատեսային առավելագույն ժամանակ ստանալու խնդրում: Բնականաբար Մեյլերը պետք է պատշաճ պատրվակ ունենար. նույնիսկ նա՝ չէր կայտոլ բացեփրաց քարոզել Գինգբերգի իսկական դիտավորությունները: Ուստի դիմեցին հետևյալ հնարքին. Մեյլերը հեռուստախցիկի առաջ Գինգբերգի հետ «լույջ» զրայցներ էր վարում բանաստեղծության ու գրականության մասին:

Լայնասփյուռ ու անվճար հեռուստագովազդ ստանալու սույն գործելակերպն սկսեցին օգտագործել Գինգբերգի օրինակին հետևած բոլոր ուրբախմբերն ու համերգակարգադիրները: Էլեկտրանային միջոցների տիրակալները շոայություն էին դրսևորում, երբ պետք էր լինում անվճար եթերաժամ տալ այս կեղտակուղ, ճիճվանման արարածներին և սրանց է՛լ ավելի կեղտոտ «ստեղծագործություններին» ու նողկալի գաղափարներին: Առանց այդ սոսկալի աղտեղալեգու «ալբոմների» գովազդման, առանց զանգվածային լրատվության տպագիր և էլեկտրոնային միջոցների շոայլ օգնության՝ թմրանյութերի առևտուրը չէր կայտոլ այդքան արագորեն տարածվել, ինչպես որ եղավ 60-ականների վերջին ու 70-ականների սկզբին և, հավանաբար, կսահմանափակվեր տեղական մի քանի փոքր շրջաններով:

Գինգբերգը հաջողեց ելույթ ունենալ ելկյուվ մեկ հեռարձակված մի քանի հեռուստահաղորդումներում, որոնց մեջ ԼՄԴ-ի ու պլանի (մարիխուանայի) արժանիքների գուլքն արեց՝ քողարկվելով աշխարհում զարգացող արվեստի ու երաժշտության «նոր գաղափարներով» ու «նոր մշակույթով»: Չզիջելով էլեկտրոնային ՁԼՄ-ին՝ Գինգբերգի երկրպագուներն «այս վատ մայրու» մասին կրակոտ հողվածներ էին թխում Ամերիկայի ամենախոշոր թերթերի և հանդեսների արվեստին ու բարձրաշխարհիկ կյանքին հատկացված սյունակներում: Թերթերի, ուղիտյի ու հեռուստատեսության պատմության մեջ դեռ երբեք չէր եղել այդպիսի լայնասփյուռ

գովազդայւշավ, որի վրա դրա ոգեշնչողները, որոնք «Ջրիուսի դավադրութեան», ՆԱՏՕ-ի ու «Հոմերական ակումբի» մարդիկ էին, մի ցննտ անգամ չծախսեին: Դա ԼՍԳ-ի միանգամայն անվճար գովազդ էր՝ միայն թե թեթևակիորեն սքողված «այլմետի» ու «գրականության» թգատերևով:

Գլինգբերգի ամենամոտիկ ընկերներից մեկը՝ Քենի Լավր (Kenny Love), «Նյու Յորք թայմս»-ում 5 էջանոց մի հոդված հրատարակեց: Թավիստոկի ու Ստենֆորդի գործելակարգն (մեթոդիկան) ասում է հետևյալը. եթե անհրաժեշտ է գովազդել մի այնպիսի բան, որ հասարակությունը դեռ չի կախող ամբողջովին ընդունել ուղեղը բավարար չափով արդուկված չլինելու պատճառով, ապա հարկավոր է պատվիրել տվյալ հարցի հանդեպ բոլոր հայեցակետերը ցույց տվող հոդված: Մյուս գործելակարգը ուղիղ եթերում հեռուստատեսային այնպիսի գրուցահանդեսներ (թուք-շոուներ) կազմակերպելն է, որոնց ժամանակ փորձագետների խումբը գովազդում է որոշ արտադրանքներ կամ գաղափարներ՝ դրանք «քննարկելու» պատրվակով: Հանդեսի մասնակիցները հայտնում են զանազան տեսակետներ, իսկ կողմնակիցները և հակառակույդները արտահայտվում են կողմ և դեմ: Եվ երբ ամեն ինչ ավարտվում է, քննարկված հարցը պինդ նստում է հասարակության գիտակցության մեջ: 70-ական թթ. սկզբին դա նորույթ էր, իսկ այսօր ծաղկող բոլոր գրուցահանդեսների համօրինակային (ստանդարտային) գործելաձևն է:

ԼՍԳ-ի ու Գլինգբերգի գովքն անող Լավր 5 էջանոց հոդվածը «Նյու Յորք թայմս»-ում տպվել էր անհապաղ: Եթե այս Գլինգբերգը փորձել այդ չափի տարածություն գնել թերթի գովազդասյունակում, դա նրա վրա առնվազն 50.000 դոլար կնստեր: Սակայն Գլինգբերգն անհանգստանալու չնչինագույն իսկ առիթ չուներ. իր ընկեր Լավր Քենու շնորհիվ նա լայնասփյուռ գովազդ ստացավ միանգամայն անվճար: Այնպիսի թերթերի օգնությամբ, որպիսիք են 300-ի կոմիտեի վերահսկողության տակ գտնվող «Նյու Յորք թայմսն» ու «Վաշինգտոնի փոստը», անվճար գովազդի այս ձևը կիրառվում է յուրաքանչյուր այն հարցի համար, երբ պետք է հասարակության մեջ արմատավորել անկապաշտական (դեկադենտական) կենսաոճ՝ քնրանյութեր, հաճույապաշտություն (գեդոնիզմ) և այն ամենը, ինչը կարող է Ամերիկայի ժողովրդին շեղել ճշմարիտ ճանապարհից: Գլինգբերգի և ԼՍԳ-ի առթիվ կատարած նմուշավորձից հետո 300-ի կոմիտեի համօրինակ գործելաձևը դարձավ ԱՄՆ-ի գլխավոր թերթերին դիմելը՝ պահանջելով անվճար գովազդ տրամադրել այն մարդկանց ու գաղափարների համար, որոնք ինքն է արմատավորում հասարակության մեջ:

Ավելի վաղ, կամ լավ (սա կախված է տեսակետից), այն է, որ «Յունայթեդ փրես» գործակալությունն իսկույն հարում է Գլինգբերգի և ԼՍԳ-ի օգտին Լավր Քենու ձեռնարկած անվճար գովազդին և սա «գու-

րերի» անվան տակ հեռագրացանցով (տելեքսով) հաղորդում է ողջ երկրի ՀԱՐՅՈՒՐԱՎՈՐ թերթերին ու հանդեսներին: Անգամ այնպիսի պատկանելի հանդեսներ, ինչպիսիք են «Հասփերս բազարը» և «ԹԱՅ-ՄԸ», Գինգբերգին ներկայացնում են որպես ուշադրության ու հարգանքի արժանի մարդու: Եթե ԼՍԳ տարածողներին ու Գինգբերգին նմանօրինակ համազգային գովազդ տրամադրեին գործակալությունները, ապա դրա ընդհանուր ծախսերը առնվազն մեկ միլիոն դոլար կկազմեին 1970 թ. գներով: Իսկ այսօր (1990 թ.) այդ գինը 15-16 միլիան դոլարից պակաս չէր լինի: Չարմանալի չէ, որ զանգվածային լրատվամիջոցներին ես «շնագայլեր» եմ կոչում:

Չեզ առաջարկում եմ, որ փորձեք զանգվածային լրատվության միալիք գտնել, որի միջոցով կարելի կլինի հռչակել ԱՄՆ-ի Դաշնային պահուստի համակարգի (ԴՊՀ)¹ մասին նյութեր: Ժամանակին ես այդ փորձն արել եմ: Աշխարհի մեծագույն խարդախությունը համոզորեն մերկացնող հողվածս առաջարկում էի բոլոր խոշոր թերթերին, հեռուստալիքներին, ուղիակայաններին, հանդեսներին, այլև մի քանի գրուցահանդես վարողների: Սրանցից ոմանք արել են հուսադրող խոստումներ. «Մոտ մի շաբաթ ժամանակ տվեք, և մենք ձեզ հետ կկապվենք»: Բնականաբար ոչ ոք ինձ հետ չկապվեց, իսկ հողվածս այդպես էլ չհայտնվեց թերթերի ու հանդեսների էջերում: Այնպիսի զգացում ունեի, թե ինձ և իմ լուսաբանելիք խնդրի վրա լռության ծածկոց է գցված: Եվ այդպես էլ կար:

Առանց զանգվածային լրատվամիջոցների հիացական ճիչերի և շուրջօրյա գովազդի՝ ոոքի ու թմրանյութի հիպաբիթնիկական (հիպինների ու բիթնիկների) պաշտամունքը հասարակության մեջ երբեք արմատ չէր բռնի. այն այդպես էլ կմնար հիմարական գառանցանքի մակարդակի վրա: «Բիթլզ»-ն իր ճնգճնգոց հանուլ կիթառներով, ապուշ արտահայտություններով, թմրածարգունով ու անհեթեթ շորերով երբեք փողոցային խեղկատակների մակարդակից վեր չէր բարձրանա: Բայց դրա փոխարեն զանգվածային լրատվամիջոցներում «Բիթլզ»-ին պրուպագանդելը հասնում էր «հագեցման վերջնակետին», որի հետևանքով ԱՄՆ-ը մեկը մյուսի հետևից մշակութային նյարդացանցում էր ստանում:

Խելքակենտրոններում և հետազոտական ինստիտուտներում թաքնված մարդիկ, որոնց անունն ու երեսը միայն շատ նեղ շրջանի են հայտնի, հոգացել են, որ մամուլն իր դերը կատարի: Եվ հակառակը. գալիք մշակութային ցնցումների հետևում կանգնած ուժերին

¹ 12 մասնավոր բանկերից բաղկացած համակարգ, որն ունի դրամ թողարկելու և դրամական շրջանառությունը վերահսկելու լիազորություն: ԴՊՀ-ն կատարում է ԱՄՆ-ի Կենտրոնական բանկի դերը:

թաքցնելու գործում զանգվածային լրատվամիջոցների ունեցած կարևոր դերը երաշխավորում է, որ ճգնաժամի ակունքը երբեք չի հայտնաբերվելու: Այսպիսաբար նյարդացնցումների ու հոգետազ-նապաների միջոցով մեր հասարակությունը հասցվել է խելագար վիճակի: «Խելագարության հասցվածները» թավիստոկյան գործնա-կան ձեռնարկից առնված արտահայտություն է: Համեստ կերպով սկսելով 1921 թվականին՝ Թավիստոկը 1966-ին արդեն պատրաստ էր Ամերիկայում սկսելու հզոր և անդառնալի մշակութային հեղա-փոխություն, որը մինչև հիմա չի ավարտվել: «Ջրիոսի դավադրու-թյունը» դրա բաղկացուցիչ մասն է:

Կայծվում էր, որ այդպիսի մշակումից հետո երկիրը միանգամայն հասունացած կլինի այնպիսի ծավալով թմրանյութի տարածման հա-մար, որպիսին էր «չոր օրենքի» շրջանում հոսած խմիչքինը, ընդ որում ծրագրվել էր դրանով լեռնակուտակ փող շինել: Սա ևս «Ջրիոսի դա-վադրության» անկապտելի մասն էր: Թմրանյութերի տարածումը այն խնդիրներից մեկն էր, որոնք ուսումնասիրվում էին Թավիստոկում գտն-վող Սուսեկի համալսարանին առընթեր «Գիտական քաղաքականու-թյան հետազոտական կենտրոնում»:

Այն հայտնի էր որպես «ապագայի նյարդացնցումների» կենտրոն: Սա անվանումն է. հատուկ «ապագայամետ հոգեբանության», որը նախա-տեսված է բնակչության մեծամեծ խմբերին մուլտիցենելու միջոցով նրանց մեջ «ապագայի նյարդացնցումներ» հարուցելու համար: Այն Թավիստոկի ստեղծած նմանօրինակ մի քանի հիմնարկներից առաջինն էր:

«Ապագայի նյարդացնցումներն» այնպիսի արագությամբ տեղի ու-նեցող իրադարձությունների շարան են, որ մարդուս ուղեղը գորու չի լի-նում իմաստավորելու՝ ըմբռնելու և մեկնաբանելու տեղեկանյութը: Ինչ-պես նշել են առջևում, գիտությունը ցույց է տվել, որ գիտակցությունն ու-նի իմաստավորելու հատակ սահմաններ թե՛ փոփոխությունների քանա-կի, թե՛ դրանց բնույթի վերաբերմամբ: Անընդհատ նյարդացնցումների շարանից հետո նպատակային խումբը հասնում է այնպիսի վիճակի, երբ նրա անդամներն այլևս չեն ցանկանում ընտրություն կատարել փոփոխ-վող պայմաններում: Նրանց պատում է անտարբերությունը, որին հա-ճախ նախորդած են լինում այնպիսի անիմաստ բռնություններ, ինչպի-սիք են լոսանջլոսյան փողոցային հյոսակախմբերի կոիվները, հաջոր-դական մարդասպանությունները, երեխաներ բռնաբարելն ու գողանալը:

Այդօրինակ խումբը դառնում է հեշտ կատավարելի. նա առանց դի-մադրելու կենթարկվի ցանկացածը հրամանին, ինչն էլ սույն մշակման նպատակն է: «Ապագայի նյարդացնցումները», ըստ Գիտական քաղա-քականության հետազոտական կենտրոնի սահմանման, «մարմնական ու հոգեկան» ջլատվածություն են, ինչն առաջանում է մարդու գիտակ-

ցության այն մասի գերլարվածության հետևանքով, որը պատասխանատու է իմաստավորված որոշումներ ընդունելու համար»: Մա ևս թավիստոկյան ժարգոն է՝ անմիջաբար առնված թավիստոկյան գործնական ձեռնարկներից, որոնք ստացել են առանց նրանց խնաց տալու:

Ինչպես որ գերբեռնված էլեկտրացանցում է այրվում ապահովիչը, ճիշտ այդպես էլ մարդկանց «ապահովիչներն» են այրվում: Բժշկագիտությունը նոր-նոր է սկսում մոտենալ այդ համախտանիշը (սինդրոմը) հասկանալուն, թեև Ջոն Ռոուլինգս Ռիզն այդ ասպարեզում գիտափորձեր էր կատարել դեռ 20-ական թթ.: Հաստատված է, որ մշակման ենթարկված նպատակային խմբի «ապահովիչներն այրվելու» վրա են լինում, և նրա անդամներն սկսում են թմրանյութ գործածել որպես միջոց՝ խույս տալու համար շարունակ իմաստավորված ընտրություն կատարելու անհրաժեշտությունից: Ահա թե ինչու թմրանյութերի գործածությունն այդքան արագորեն տարածվեց ամերիկյան «բիթ սերնդի» մեջ. և «Բիթլզ»-ի ու ԼՄԴ-ի անվճար նմուշաբաժիններից սկսված ակթները վերածվեցին Ամերիկային տակն առած թմրանյութային ցունամիլի:

Թմրանյութերի առևտուրը վերահսկվում է 300-ի կոմիտեի իշխանակարգության ամենավերին մակարդակներից: Այն սկսվել էր Բրիտանիայի Օստինդական ընկերությունից, որի օրինակին իսկույն հետևել էլ Նուրանդիայի Օստինդական ընկերությունը: Այս երկու ընկերություններին էլ վերահսկել է «300-ի խորհուրդը»: Օստինդական ընկերության անդամների ու բաժնետերերի անունների ցուցակը ջրի երկու կաթիլի պես նման է Դեբբեթսի պերերի ցուցակին: Ընկերությունը հիմնել է «Չինաստանի ներքին ներկայացուցչությունը», որի խնդիրն էլ չին գյուղացիների կամ կուլիների՝ մեջ ափիռնիլ հակում առաջացնելը: Այս բանը ստեղծեց ափիռնի շուկա, որն էլ լցվեց Բրիտանիայի Օստինդական ընկերության կողմից:

Նմանապես՝ 300-ի կոմիտեն «Բիթլզ»-ն օգտագործեց «սոցիալական թմրանյութերը» Ամերիկայի երիտասարդության և հոլիվուդյան հավաքույթի շրջանում հանրասիրված դարձնելու համար: Էդ Մալլվանին Անգլիա ուղարկեցին Թավիստոկի ինստիտուտի առաջին «ռոքախմբի» հետ ծանոթանալու համար, որն էլ այցի եկավ ԱՄՆ: Այնուհետև Մալլվանն Ամերիկա վերադարձավ, որպեսզի խմբին «փաթեթավորելու» և «մատուցելու» ռազմավարություն մշակի զանգվածային լրատվության էլեկտրոնային միջոցների համար: Առանց էլեկտրանային ՋԼՄ-ի ու Էդ Մալլվանի լիակատար լազակցության՝ «Բիթլզ»-ի և

¹ Ասիայի մի քանի երկրներում այսպես են ասում բեռնակիրներին, սայլակ բշտղներին, սևագործ բանվորներին (համբալ) (Վ. Ա.):

սրանց «երաժշտության» վրա հասարակությունը ոչ մի ուշադրություն չէր դարձնի: Ի տրիտուր՝ անդառնալիորեն փոխվեցին մեր ազգային կյանքը և Միացյալ Նահանգների բուն ոգին:

Հիմա, երբ արդեն շատ բան գիտենք, հասկանալի է դառնում, թե որքան «հաջող» էր կազմակերպված «Բիթլզ»-ի՝ թմրանյութեր տարածելու գովազդային շարժումը: Ժողովրդից զգուշությամբ թաքցվում էր այն փաստը, որ «Բիթլզ»-ի համար երաժշտությունն ու խոսքը գրել է Թեո Ալյուրնոն: «Բիթլզ»-ի հիմնական գործն այն էր, որ իրենց «հայտնաբերված» «թինեյջերները» (դեռահասները), ոլանց վրա հետո սկսեց տեղիս «բիթլական երաժշտության» անընդմեջ հեղեղը այնքան ժամանակ, մինչև որ նրանց մեջ համոզմունք գոյացավ, թե այդ ձայններն իրենց դուր են գալիս: Եվ արդյունքը եղավ այն, ու նրանք ընդունեցին թե՛ այդ «երաժշտությունը», թե՛ դրա հետ կապված ամեն ինչ: Լիվերպուլցի խումբը լիովին արդարացրեց սպասելիքները նաև «մի փոքր օգնությամբ իրենց բարեկամների» (արտահայտություն է նրանց երգից), այսինքն՝ այն նյութերի օգնությամբ, որոնք մենք թմրանյութ ենք ասում, և ամերիկյան երիտասարդների մի վիթխարի նոր դաս ստեղծեց Թավիստոկի ինստիտուտի պատվիրած պատկերքին իսկը համապատասխան:

Թավիստոկը կերտեց հստակորեն ճանաչելի «նոր տիպար», որի պետք է գործեր որպես թմրանյութերի տարածիչ: «Քրիստոնյա քայազիչների» «Չինաստանի ներքին ներկայացուցչությունն» այլևս պիտանի չէր 1960-ական թվականների պայմաններում: «Նոր տիպարը» սոցիոլոգիական ժարգոնի արտահայտություն է. այն նշանակում է, որ «Բիթլզ» խումբը ստեղծել է սոցիալական նոր մոդելներ, որոնց նպատակն էր ժողովրդականացնել և սովորական դարձնել թմրանյութի գործածությունը, հագուստի ու սանրվածքի նոր ոճերը, ոլանք երիտասարդներին արմատապես զատում էին ավագ սերնդի միջավայրից, ինչպես որ նախատեսել էր Թավիստոկը:

Անհրաժեշտ է մատնանշել դիտումնավոր բաժանում առաջացնող այն լեզուն, որ նրանց բերանն էր դրել Թավիստոկը: «Թինեյջերներով» մտքով իսկ չէր կարող անցնել, թե այդ բոլոր «ոչ ավանդական» արժեքները, որոնց իրենք ձգտում են, Անգլիայի ու Ստենֆորդի խելքակենտրոններում ջանադրաբար մշակել են տարեց մարդիկ: Նրանք կշշմեին, եթե իմանային, որ իրենց ջահելական «գիլ» սովորություններն ու արտահայտությունները հատուկ շինել են մի խումբ ահել սոցիոլոգներ:

Չանգվածային լրատվամիջոցների դերը ազգով մեկ թմրանյութ տարածելու գործում եղել և մնում է չափազանց կարևոր: Երբ սրանք հանկարծակի դադարեցրին փողոցային հրոսակախմբերի կոիվները լուսաբանումը, հրոսակները պարզապես չքվեցին որպես սոցիալական երևույթ, որին հաջողվեց նորը՝ «թմրանյութերի դարաշրջանը»: Լրատ-

վամիջոցները, որ միշտ հանդես են եկել որպես «նոր հովերի» արագացուցիչներ (կատալիզատորներ), այդ ժամանակ էլ ուշադրությունը բևեռեցին թմրանյութերի ու սրանց տարածողների վրա: «Բիթնիկների սեյունյու» ևս մի արտահայտություն է, որ Թավիստոկը հորինել է ԱՄՆ-ում սոցիալական փոփոխությունների իրագործման ջանքերի ծիրում:

Թմրանյութերի գործածությունը դարձավ Ամերիկայի առօրյա կյանքի բաղկացուցիչ մասը: Թավիստոկի մշակած սույն ծրագիրն իսկույն յուրացրին միլիոնավոր երիտասարդ ամերիկացիներ, և ավագ սերունդն սկսեց մտածել, թե Ամերիկան ենթարկվել է բնական սոցիալական հեղաշրջման, հաստի չիներով ըմբռնելու, որ իրենց զավակների մեջ տեղի ունեցող փոփոխությունները ոչ թե ինքնաբերական գործընթաց են, այլ զուտ արհեստական ներգործությունների այլյունք, որոնց նպատակը Ամերիկայի սոցիալական ու քաղաքական կյանքը փոխելն է:

Բրիտանիայի Օստինդական ընկերության ժառանգորդները հիացած էին թմրանյութերի տարածման իրենց ծրագրի հաջողությամբ: Նյուանց «խնամքի տակ գտնվողները» պինդ «նստել» էին լիզերգինաթթվի (L.S.G.-ի) գրկում, որը սիրալիքորեն բացել էին թմրավաճառության պետերը, այն է՝ Օլդոս Հաքսլին և Վալթերգների բանկատիրական մեծ տոհմից դրամավորվող շվեյցարական հարգարժան Sandoz ընկերությունը: Նոր «կրաշք թմրանյութը» նմուշածրարներով արձակ ու անվճար տարածվում էր ոոթի բոլոր համերգատեղեյում և քոլեջներում: Ինքնաբերաբար հարց է ծագում. «Իսկ ինչո՞վ էր այդ ժամանակ զբաղված Հետաքննությունների դաշնային բյուրոն»:

«Բիթլզ»-ի նպատակը միանգամայն պարզ դարձավ: Բրիտանիայի Օստինդական ընկերության ժառանգորդները հավանաբար իրենց կրաշալի էին զգում Լոնդոնի բարձր հասարակության մեջ, երբ ունեցած սրամագլուխների վրա նորանոր միլիարդներ էին հոսում: Ռոքի (այսուհետև սույն բառը կգործածենք Ադրինայի սատանայական չարանենգ երաժշտությունը կակիլիւճ սահմանելու համար) գալու հետ նկատվեց թմրանյութերի, կատկապես կանեփաբույի (մարիխուանայի՝ պլանի) գործածության ահռելի աճ: Ողջ թմրաբիզնեսը ծավալվել էր «Գիտական քաղաքականության հետազոտական կենտրոնի» վերահսկողությամբ ու կառավարմամբ:

Սույն կենտրոնը գլխավորում էին Լիլանդ Բրեդֆորդը (Leland Bradford), Քենեթ Դամը (Kenneth Damm) և Ռոնալդ Լիպերտը (Ronald Lippert), որի բարձորակ ու բանիմաց ղեկավարությամբ «նոր գիտությունների» գծով բավականաչափ մասնագետներ էին պատրաստվել մարդկանց մեջ «ասպագայի նյարդացնցումներ» առաջացնելու համար: Այդպիսի հիմնական «նյարդացնցումներից» մեկն էլ ամերիկացի թինեյջերների (դեռահասների) թմրանյութեր գործածելու շեշտակի

աճն է: «Գիտական քաղաքականության հետազոտական կենտրոնի» հայեցակարգային երկերը, որոնք, իբրև ոչ պաշտոնական աշխատանքային հրահանգներ, փաթաթել են կառավարական զանազան գործակալությունների վզերին (ներառյալ Թմրանյութերի դեմ պայքարի գործակալության վիզը), նրանց թելադրում են «թմրանյութերի դեմ պատերազմելու» կարգը, պատերազմ, որն իբր թե վարում են Ռեյգանի կամ Բուշի վարչակազմերը:

Սա նախերգանքն էր այն գործելակերպերի, որոնք այսօր կիրառում են թավիատոկյան հայեցակարգերով սնված զանազան կոմիտեներն ու խորհուրդները, ինչպես նաև թաքուն «ներքին կառավարությունը»՝ Միացյալ Նահանգներին ղեկավարելու համար: Եվ սրանք անկեղծորեն հավատացած են, թե այդ հայեցակարգերն իրենց սեփական խելքի արգասիքն են: Այդ «անհայտներն» ընդունում են այնպիսի որոշումներ, որոնք ընդմիջտ կփոխեն պետական կառավարման մեր ձևերը և ԱՄՆ-ի կյանքի որակը: «Ճգնաժամային հարմարման» միջոցով մենք այնքան ենք փոխվել, որ այդեն համարյա ոչ մի ընդհանուր բան չի մնացել ժամանակակից հասարակության և կիսնական թվականների ամերիկացիների միջև: Սրանից բացի փոխվել է մեր շրջակա միջավայրը:

Մեր օրերում շատ են խոսում շրջակա միջավայրի մասին՝ գլխավորապես նկատի ունենալով կանաչ անտառները, մաքուր գետերը և թարմ օդը: Սակայն գոյություն ունի մի այլ, ոչ պակաս կարևոր շրջակա միջավայր, որ է՝ թմրանյութային շրջակա միջավայրը: Մեր ապրելաճի շրջակա միջավայրը թունավորված է: Մեր մտածողությունը թունավորված է: Սեփական ճակատագիրը կառավարելու մեր ունակությունը թունավորված է: Մենք դեմ ենք առել մի շարք փոփոխությունների, որոնք մեր մտածողությունն այն աստիճան են թունավորել, որ չգիտենք առհասարակ ինչ անենք: «Փոփոխությունների միջավայրն» այլանդակում է ազգին: Մենք բնավ չենք վերահսկում իրավիճակը, և սա անհանգստություն ու շփոթություն է առաջացնում:

Մեր խնդիրների անհատական լուծումների փոխարեն մենք հիմա դրանց խմբական լուծումներն ենք փնտրում: Մենք սեփական պաշարներիս չենք օգտագործում խնդիրները լուծելու համար: Դրա գլխավոր պատճառը թմրանյութերի գործածության կտրուկ աճն է: Այս ամենը արդյունքն է «նոր գիտությունների» մասնագետների ու «սոցիալական ճարտարագետների» մշակած դիտումնավոր ուղղվածության, որը նշան է բռնել ամենախոցելի տեղին՝ մեր մասին մեր ունեցած պատկերացման վրա, այն բանի վրա, թե ինչպես ենք ընկալում մենք մե՛զ: Գիտակցության նմանօրինակ մշակումը հանգեցնում է այն բանին, որ մենք դառնում ենք մոթեփելու տարվող ոչխարի հոտի պես: Մեր կողմն մաշվել է առաջարկվող բազում տարբերակների միջև ընտրություն կատարելու անհրաժեշ-

տությունից, և մենք ի վերջո ընկել ենք լիակատար անտարբերության մեջ:

Մեզ խաղացնելով՝ մոլորեցնում են **նենգամիտ** մարդիկ, իսկ մենք այդ գլխի էլ չենք ընկնում: Սա մանավանդ ճիշտ է թմրանյութերի առևտրի վերաբերմամբ, և հիմա մենք գտնվում ենք անցումային այնպիսի վիճակում, երբ մեզ կստիպեն հրաժարվել պետական կառավարման գործող սահմանադրական ձևից: Բուշի վարչակազմն այդ ուղղությամբ արդեն հսկայի քայլ է գցել: Թեև դեռ կան մարդիկ, որոնք, չնայած հակառակն ապացուցող բոլոր վկայություններին, համատորեն պնդում են, թե «Ամերիկայում դա հնարավոր չէ», բայց փաստն այն է, որ **ԴԱ ԱՐԴԵՆ ԿԱՏԱՐՎԵԼ** է: Անդադար ճնշման հետևանքով մենք վերջնականապես զրկվել ենք դիմադրելու կամքից: «Մենք կդիմադրենք», - ասում են մեզնից ոմանք: Բայց այդ բանն իսկապես կանեն շատ քչերը, և մենք միշտ կմնանք այդ փոքրաթիվ մարդկանց մեջ:

Թմրանյութերի առևտուրը նենգավորաբար փոխեց մեր շրջակա միջավայրը: «Թմրանյութերի դեմ պատերազմ» կոչեցյալը զավեշտախաղ է. պայքարն այնքան սակավագուր է, որ Բրիտանիայի Օստինդական ընկերության ժառանգորդներն իսկի չեն էլ նկատում այն: Ի լրումն համակարգչայնացման, մենք դրվել ենք գրեթե համապարփակ «ուլեդալուկման» տակ, այն է՝ լիովին զրկվել ենք պարտադրվող փոփոխություններին դիմադրելու ունակությունից: Այս ամենը նշանակում է, որ ստեղծվում է ևս մի «շրջակա միջավայր»՝ **ԱՆՁԻ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ**, ինչը հայտնի է նաև որպես **անձնական տեղեկանյութի հսկողություն**, առանց որի կառավարությունները չեն կարող իրենց խաղերն անել:

Գործն այնպես է դասավորված, որ մենք՝ ժողովուրդս, ոչ մի հնարավորություն չունենք իմանալու, թե մեր մասին ինչ տեղեկանյութ կա կառավարության տրամադրության տակ: Կառավարական համակարգչային կայքերը բացարձակապես անմատչելի են հասարակական հսկողության համար: Մի՞թե մենք դեռ բթամտորեն հավատում ենք, թե մեր անձին վերաբերող տեղեկություններն անձեռնմխելի են: Հիշե՛ք. յուրաքանչյուր հասարակության մեջ կան հայուստ և հզոր ընտանիքներ, որոնք վերահսկում են իրավապահ մարմիններին: Չկարծեք, թե այդ ընտանիքները եթե ուզենան որևէ բան իմանալ մեր մասին, չեն կարող այդ անել: Այդ ընտանիքները սովորաբար պատկանում են 300-ի կոմիտեին:

Վերցրեք, օրինակ, Քիսինջերին, որը ոչ միայն ԱՄՆ-ում, այլև ամբողջ աշխարհում ապրող հարյուրավոր ու հազարավոր մարդկանց անձնական գործերի սեփական շտեմարան ունի: Գուցե մե՞նք էլ կանք Քիսինջերի թշնամիների ցուցակում: Կարծում եք ասածս անհիմն, թքով կպցրած բա՞ն է: Բնավ: Վերցրեք Մասոնական Փ-2 օթյակը և «Մոնտե Կառլոյի կոմիտեն», որոնք հազարավոր անուններ պարունակող այդպիսի ցուցակներ ունեն: Ի դեպ, Քիսինջերը դրանց մեջ էր: Կան նաև

«մասնավոր» այլ հետախուզական ծառայություններ, օրինակ՝ ԻՆՏԵՆ-ը, որոնց հետ կհանդիպենք հետո:

Եվ յուրա մտ ծվող հերոսինի ուղիներից մեկն անցնում է Մոնակոյի իշխանապետության միջով: Հերոսնը Կորսիկայից կրվում է լաստանավերով, որոնք ամուսնը մեծաթիվ ուղեորներ են կատարում Կորսիկայի ու Մոնտե Կառլոյի միջև: Ընդ որում ո՛չ բեռները, ո՛չ էլ ուղևորները բացարձակապես ստուգման չեն ենթարկվում: Քանի որ Ֆրանսիայի ու Մոնակոյի արանքում պահպանվող սահման չկա, թմրանյութերը, հատկապես հերոինը կամ մասնակիորեն մշակված ափիոնը, Մոնակոյի բաց սահմանի միջով հեղեղի պես հոսում են Ֆրանսիայի թմրամշակարանները: Եթե գուտ հերոին է ներկրվում, ապա ուղղակի առարկում է ցրիչներին:

Գրիմալդիների բնտանիքը մի քանի հարյուրամյակ է, ինչ զբաղվում է թմրանյութերի մաքսանենգությամբ: Ահա մի դրվագ բնտանիքի պատմության մոտանցյալից: Իշխան Ռանիեի ազախությունը բռնում է, և նա սկսում է թմրանյութի մաքսանենգներից չափազանց մեծ «տուրք» վերցնել և երեք յուրջ զգուշացումից հետո էլ ձեռք չի քաշում դրանից: Դուս համար նրա կլինը՝ իշխանուհի Գրեյսը, սպանվում է «ավտոաղետից»: Իշխանուհու «ռոպեր» մակնիշի ավոտներենայի արգելակահեղուկի տարողությունն այնպես էին կարգավորել, որ ամեն անգամ արգելակին սեղմելիս դուրս էր հոսել ուրշակի չափաբաժին հեղուկ, և երբ մեքենան հասել էր գաղիբալի ուղիաններով լեռնային ճանապարհի ամենավտանգավոր հատվածին, արգելակն այդեն չէր գործել, ու մեքենան լրիվ արագությամբ գալուսվածել էր անդունդ:

300-ի կոմիտեի անդամներն ամեն ինչ արեցին, որ իշխանուհի Գրեյսի սպանության մասին ճշմարտությունը թաքուն մնա: Նրա մեքենան մինչև օրս գտնվում է Ֆրանսիայի ոստիկանության մոտ. այն վրանաձածկի տակ կանգնած է քարշակի վրա, որին մոտենալն իսկ արգելված է:

300-ի կոմիտեի կողմից վերահսկվող թմրանյութերի առևտուրը հանցագործություն է մարդկայնության դեմ, սակայն մենք, տարիներ շարունակ մշակված ու թուլացած լինելով Խոսվիստոկի ինստիտուտի անդադար «ռմբակոծումներից», շատ թե քիչ բնորոնել ենք մեր փոխված շրջակա միջավայրը և համարում ենք, որ թմրանյութերի առևտուրը «չավազանց մեծ» հիմնախնդիր է, ուստի չենք կարող դրան վերջ տալ: Այդպես չէ: Եթե մենք կարողացանք համախմբել ամբողջ ազգը, կանդերձավորել ու Եվրոպա ուղարկել ամերիկացի միլիոնավոր զինվորների՝ մարտնչելու մի պատերազմում, որին մենք չպետք է խառնվեինք, երե կայողացանք պարտության մատնել խոշոր տերությունը, նշանակում է, որ կարող ենք վերացնել նաև թմրանյութերի առևտուրը՝ կիրառելով Երկրորդ համաշխարհային պատերազմի մարտավարությունը:

Մատակարարման ու ենթակառուցվածքի այն խնդիրները, որանք

անհրաժեշտ էր լուծել Երկրորդ աշխարհամարտի մեջ մտնելիս, նույնիսկ այսօր էլ ապշեցնում են մարդու երևակայությունը:

Եվ մենք հուզողությամբ լուծեցինք բոլոր հիմնախնդիրները: Ուրեմն ինչո՞ւ չի կարելի հաղթել ստույգ հայտնի թշնամուն (որը ‘Գերմանիայից անհամեմատ փոքր է և շատ ավելի բույլ)’ ունենալով անհամեմատ ավելի կատարյալ զենք՝ ու տեխնիկա: Թմրատերի ծաղկման իսկահան որստճատն այն է, որ սա վերահսկում են աշխարհում բարձրագույն դիրք գրավող ընտանիքները՝ որպես մի մասն այն փոխկապակցված վիթխարի մեքենայի, որի միջոցով փող է շինվում:

1930 թ. Հարավային Ամերիկայում ներդրված բրիտանական կապիտալի գերազանցել է բրիտանական «դոմինիոններում» կատարված ներդրումները: Մեծ Բրիտանիայի արտասահմանյան ներդրումների գծով ականավոր մասնագետ Գրեհեմը պնդում էր, որ Հարավային Ամերիկայում Անգլիայի կատարած ներդրումները «մեկ տրիլիոն ֆունտ ստեռլինգից ավելի են» եղել: Հիշե՛ք, դա 1930 թվականն էր, և այդ ժամանակ մեկ տրիլիոն ֆունտը ցնցող գումար էր: Ի՞նչն էր Հարավային Ամերիկայում այդպիսի վիթխարի ներդրումներ անելու պատճառը: Եթե ստելյու լինենք մեկ բառով, ապա՝ թմրանյութերը:

Բրիտանիայի բանկերը վերահսկող պլուտոկրատիան¹, որն իր ձեռքում էր պահում դրամական տանձերը այն ժամանակ, ինչպես որ հիմա, հուսալի քողարկում էր կազմակերպել իր կեղտոտ գործարարության (բիզնեսի) համար: Ոչ մեկը ոչ մի անգամ չի կայսրացել դրանց կեղտոտ ձեռքը բռնել այդ թունավոր գործի վրա: Նրանք միշտ ունեցել են և ունեն գործը ծախ գնալիս հոսնցանքն իրենց վրա առնող մարդիկ: Թե՛ այն ժամանակ, թե՛ հիմա թմրանյութի առևտրի հետ կապերը ծածուկ են եղել: Ոչ ոք երբեք չի կայսրող անգամ թեթևակի ստվեր ձգել Բրիտանիայի «ազնվագայր» ընտանիքների վրա, որանց անդամները 300-ի կոմիտեի կազմում են:

Մեծ նշանակություն ունի այն բանը, որ Պառլամենտի միայն 15 անդամ է վերահսկել այդ վիթխարի կայսրությանը: Սրանցից ամենաակա-

¹ Պլուտոկրատիա (հունարեն պլուտոս՝ հարստություն + կրատոս՝ իշխանություն, գորություն), Հարուսանների իշխանություն, փողի տիրապետություն: Պետության բողոքական կառուցվածք, որի ժամանակ պետությունը կառավարում է տիրող դուստակարգին պատկանող մի խումբ՝ աշխատավորության լրիվ իրափսգրկության պայմաններում: Մեծ երգիծարան Հ. Պարոնյանը պլուտոկրատիան ձևակերպել է հարստապետություն (բառարաններում չկա): Այսպես է կոչել Ազգային երեսփոխանական ժողովի հարուստ անդամների կազմած միությունը՝ այն որակելով որպես «երկաթապետական, կտավապետական, բրդսպետական»: Ուստի «գերլորդերի» սիրությունն էլ կարող ենք կոչել թմրապետական, իրենց էլ՝ թմրապետեր: (Վ. Ա.):

նավորներն էին սրբ Չարլզ Բարիի ու Չեմբերլենի ընտանիքները: Ֆինանսական այս գերլորդերը գործառնություններ էին վարում այնպիսի վայրերում, ինչպիսիք են Արգենտինան, Ճամայկան ու Տրինիդադը, որոնք թմրանյութերի առևտրի շնորհիվ նրանց համար դարձել էին փողի անհատնում աղբյուրներ: Սույն երկրներում Բրիտանիայի պլուտոկրատները՝ բնիկներին աշխատեցնում էին ստրկականից հազիվ տարբերվող խղճուկ օրապահիկով: Կարիբյան ավազանի երկրներում թմրառևտրի միջոցով նրանք վիթխարի հարստություններ են դիզել:

Պլուտոկրատները թաքնվում էին դեմք ու անուն ունեցող այնպիսի ընկերությունների հետևում, որոնցից է Trinidad Leaseholds Limited-ը, սակայն նրանց ԻՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ միշտ եղել ու մնում է թմրանյութը: Դա հիմա էլ ենք տեսնում թեկուզ հենց այն փաստից, որ Ճամայկայի ազգային համախառն արտադրանքը գրեթե ամբողջովին կազմում է գանջայի (մարիխուանայի թունդ տեսակի) վաճառքը: Գանջայի առևտրի դեկավարման կառուցվածքը ստեղծել են Դավիդ Ռոքֆելերն ու Հենրի Բիսինջերը՝ անունը դնելով «Կարիբյան ավազանի նախաձեռնություն»:

Մինչև վերջերս Չինաստանում արված ափիոնի առևտրի ճշմարիտ պատմությունը բնավ հայտնի չէր. այն միշտ, սրբան հնարավոր է, ծածկված է եղել գաղտնիության թանձր քողով: Նախկին ուսանողներիցս շատերն ինձ հարցնում էին, թե ինչն¹ են չինացիք այդքան շատ սիրում ափիոն ծխել: Հակասական մատչելի աղբյուրների տված տեղեկություններից նրանք ամենևին չէին կարող հասկանալ, թե իրաք ի՞նչ է կատարվել Չինաստանում: Նրանց մեծ մասը կարծում էր, թե չինացի բանվորները պարզապես շուկայում ափիոն են առնում և ծխում, կամ գնում են հազարավոր ափիոնաորջերից մեկը և առժամանակ մոռացության տալիս իրենց սոսկալի գոյավիճակը:

Ճշմարտությունն այն է, որ Բրիտանիան Չինաստանին ափիոն մատակարարելու մենաշնորհն ուներ: Դա Բրիտանիայի կառավարության ՊԱՇՏՈՆԱԿԱՆ մենաշնորհն էր և Բրիտանիայի պաշտոնական քա-

¹ Պլուտոկրատ, Տիրող դասակարգի առավել ազդեցիկ վերնախավին պատկանող մարդ, որ իշխանության և մեծ ազդեցության է հասել իր հարստության շնորհիվ: Չարմանալի գուգադիպությամբ պլուտ հայերեն բառը նշանակում է անբարոյական, փչացած վարքի տեր. այլև՝ մի տեսակ բույսի սերմը, որ պարունակում է ստրիխնին բույնը: Իսկ ուսերեն այդ –ը նշանակում է խաբերա, խարդախ, սրիկա, նենգամիտ, խորամանկ անձ: Էլ ի՞նչ անուն կտաս մանվան վաճառականներին, ովքեր, փողի և իշխանության համար թունավորելով անհամար մարդկանց մարմինն ու հոգին, դժոխք են վառում նրանց գլխներին թե՛ այս կյանքում, թե՛ հանդերձյալում: Ուստի պլուտոկրատ և պլուտոկրատիա բառերը բողնում են նույնությամբ, թեև կարող էի թարգմանել փողիշխան և փողիշխանություն կամ հարստապետ և հարստապետություն:

ղաքականությունը: Չինաստանում հնդկա-բրիտանական ափիոնի առևտուրը ամենախիստ զաղտնիքներից մեկն էր, որի շուրջն աճել են փուչ առասպելներ ու հեքիաթներ «Հնդկաստանի գանձերի», ի փառս «Կայսրության» բրիտանական բանակի ցուցաբերած անձնուրաց քաջության վերաբերյալ, որոնք այնպես լավ նկարագրել է Ռեդյարդ Կլայվինգը, ինչպես նաև նաղլեր «Յեյակլիպերների»¹ մասին, որոնք օվկիանոսներով սլանում են չինական թեյ հասցնելու վիկտորիական Անգլիայի բարձր հասարակության հյուրասենյակներ: Իսկ իրականում Բրիտանիայի կողմից Հնդկաստանի զինագրավումը (օկուպացիան) և Չինաստանում Բրիտանիայի վարած «ափիոնապատերազմները» Արևմուտքի քաղաքակրթության պատմության ամենասև էջերից են:

Հնդկաստանի եկամուտների համարյա 13%-ը Բրիտանիայի տիրապետության օրոք ստացվում էր Չինաստանում բենգալական բարձրորակ ափիոնը վաճառելուց: Ժամանակակից «Բիթլզ»-ի պես «Չինաստանի ներքին ներկայացուցչությունը» վիթխարի աշխատանք էր կատարել չինացի աղքատ բանվորների (անգլիացիների ասածով՝ կուլինների) շրջանում ափիոնի գործածությունը տարածելու համար: Այս թմրամուլները, ինչպես և ԱՄՆ-ի դեռահաս թմրամուլները, իրենք իրենց չէին ծլել: ՀԻՇԵՔ. ԵՎ ՍՐԱՆՑ, ԵՎ ՆՐԱՆՑ ՆՊԱՏԱԿԱԳՐՈՐԵՆ ՎԱՐԺԵՑՐԵԼ ԷԻՆ: Չինաստանում նախ ստեղծվեց ափիոնի շուկան, իսկ հետո լցվեց Բենգալիայից կրված ափիոնով: Նմանապես՝ վերսուիշյալ գործելակերպերի կիրառմամբ ԱՄՆ-ում կանեփաբույյի՝ մարիխուանայի և ԼՍԳ-ի համար սկզբում ստեղծվեց շուկա, որն այնուհետև Բրիտանիայի բանկային վերնախավի գերլորդերի օգնությամբ լցրին բրիտանացի պլուտոկրատները և սրանց ամերիկացի ազգականները:

Շահութաբեր թմրառևտուրը մարդկանց դժբախտությունների միջոցով փող շինելու ամենագիշատչական օրինակներից է: Մյուս օրինակը թույլատրված թմրավաճառությունն է, որ Ռոքֆելերին պատկանող դեղագործական ձեռնարկույթները (ֆիրմաները) վարում են գլխավորապես ԱՄՆ-ում, բայց հիմնական ընկերությունները գործում են Շվեյցարիայում, Ֆրանսիայում ու Բրիտանիայում և լիովին աջակցվում են Ամերիկայի բժշկական միության (ԱԲՄ) կողմից: Խթանիչների (դուպլինգների) ու թմրանյութերի կեղտոտ գործարքները և դրանց տված փողերը գալիս են լոնդոնյան Սիտիով, ինչպես նաև Հոնկոնգով, Դուբա-

¹ Կլիպեր - արագընթաց եռակայն առագաստանավ (Վ. Ա.):

յով և վերջերս էլ Լիբանանով, որն այդպիսի խողովակ դարձավ այդ երկիր Իսրայելի ներխուժման «շնորհիվ»:

Կլինեն այս ամենը կասկածի տակ դնողներ: «Նայե՛ք «Ֆայնենշլ քայմսի» գործնական հաղվածներին, - կառարկեն նրանք, - և մի՛ ասեք, թե այս ամենն առնչություն ունի քնրափողի հետ»: ԻՀԱՐԿԵ՛ ՈՒՆԻ. սակայն չկարծեք, թե Անգլիայի ազնվագալսմ լորդերն ու լեդիները մտադիր են գովազդել այդ փաստը: Հիշո՞ւմ եք Բրիտանիայի Օստինդական ընկերությունը: Պաշտոնապես դրա ողջ գործունեությունը թեյի՝ առևտուրն էր:

Լոնդոնյան «Թայմսը» երբեք չի համարձակվել Բրիտանիայի հասարակությանն ասել, որ թեյ ծախելով հնարավոր չէ ՎԻԹԽԱՐԻ ՇԱՀՈՒՅԹ շինել: Այդ փայլուն թերթը չի կարողացել նույնիսկ ակնարկել ափիոնի առևտրի մասին, որ եռանդով վարում էին լոնդոնյան շքեղաշուք ակումբներում ժամանակ անցկացնողները և «Վինձորի թագավորական ակումբում» գնդակ խաղացողները, կամ մի ծայուտ հասնել, որ Կայսրությանը ծառայելու համար Հնդկաստան մեկնող ջենտլմեն սպաները ոտնիկ են ստացել ԲԱՅԱՌԱՊԵՍ այն վիթխարի եկամուտներից, որոնք հնձվում էին ափիոն ծխելու վարժեցված չինացի միլիոնավոր կուլիների դժբախտություններից:

Առևտուրը վարում էր Բրիտանիայի նշանավոր Օստինդական ընկերությունը (այսուհետև՝ «ԲՕԻՂՆԿ»), որի 200 տարի տևած պնդերես միջամտությունը ԱՄՆ-ի քաղաքական, կրոնական ու տնտեսական գործերին թանկ նստեց վրաներս: Ընկերության 300 անդամները մի աստիճանով բարձր էին կանգնած մնացյալ ողջ մարդկությունից: Նրանց հզորությունն այնքան մեծ էր, որ լորդ Բերտրան Ռասելը¹ մի անգամ բարբառել է. «Նրանք կարող էին խորհուրդներ տալ Աստծուն, երբ Նա խնդիրներ ունենար երկնքում»: Չարժե կարծել, թե անցած տարիների ընթացքում որևէ բան է փոխվել: 300-ի կոմիտեի անդամներն այսօր ՃԻՇՏ ՆՈՒՅՆ ԴԻՐՋՆ ԵՆ ԲՈՆԵԼ. ակա թե ինչու են նրանք հաճախ իրենց «օլիմպոսցիներ» կոչում:

Հետագայում Բրիտանիայի Օստինդական ընկերության առևտրական գործերին միացել է բրիտանական թագը, այսինքն՝ թագավորական ընտանիքը, որն Ընկերությանն օգտագործում էր Բենգալիայում և Հնդկաստանի այլ վայրերում ափիոն արտադրելու համար՝ դրա ար-

¹ Անգլիացի փիլիսոփա, մաթեմատիկոս, Նոբելյան մրցանակակիր: Թունդ աստվածամերժ էր (Վ. Ա):

տահանումը վերահսկելով այսպես կոչված «փոխադրատուրքերի» միջոցով, այն է՝ թագը հարկեր էր գանձում բոլոր ափիոն արտադրողներից ու Չինաստան անաքողներից, որոնց պատշաճ կերպով գրանցել էին պետական մարմինները:

Մինչև 1896 թ., երբ առևտուրը դեռ «ընդհատակյա» էր (այս բառը գործածվում էր ափիոն արտադրողներից ավելի շատ փող պլոկելու համար), դրան վերջ տալու չնչին իսկ փորձ չի արվել: Հնդկաստանից հսկայական չափերով ափիոն է դուրս բերվել արագասուլյա «թեյակլիպերներով», որոնց մասին լեգենդներն ու ավանդություններ են հյուսվել, թե իբր դրանք Հնդկաստանից ու Չինաստանից թեյ են փոխադրել Լոնդոնի սակարաններ (բորսաներ):

Ընկերության լուրերն ու լեղիները այնքան էին անպատկառացել, որ ԱՄՆ-ի Քաղաքացիական պատերազմի ժամանակ փորձում էին այդ մահաբեր նյութը Միության և Կոնֆեդերացիայի բանակներին վաճառել որպես ցավամոք դեղ: Դժվար չէ պատկերացնել, թե ինչ կլիներ, եթե նրանց ծրագիրը գլուխ գար: Հարյուր հազարավոր զինվորներ կլքեին մարտադաշտերը՝ տրվելով ափիոնի թմբիրին: Հետագայում «Բիթլ»-երն ավելի ճարտար եղան միլիոնավոր դեռահասների ու երիտասարդների թմրամոլ դարձնելու գործում:

Բենգալացի առևտրականները և սրանց բրիտանացի հսկիչներն ու բանկատերերը տոգել ու լալիչացել էին փողի այն հսկայական գումարներից, որ Բրիտանիայի Օստինդական ընկերության դրամապահարաններն էին հորդում չին դժբախտ կուլիներին ափիոն վաճառելուց զույսցած ակունքներից: ԲՕԻՂՆԿ-ի եկամուտները, նույնիսկ այն տարիներին, մեծապես գերազանցում էին «Ձեներլլ մոթորս», «Ֆորդ» և «Բրայսլեր» ընկերությունների բարգավաճման շրջանի միագումար տարեկան եկամուտները: Թմրանյութերի արտադրությունից վիթխարի եկամուտներ քաղելը 1960-ական թթ. շարունակեցին թմրամահի այնպիսի «օրինականացված» առևտրականներ, ինչպիսիք են «Սանդոզ» (Sandoz) ֆիրման՝ ԼՍԴ արտադրողը, և «Հոֆման լա ռոշը» (Hoffman la Roche)՝ վալիում արտադրողը: Վալիումի հումքի և արտադրության արժեքը «Հոֆման լա ռոշի» համար մեկ կիլոգրամի հաշվով կազմում է 3 դոլար: Ընկերությունը բաշխարդներին (դիստրիբյուտորներին) 1 կիլոգրամը վաճառում է 20.000 դոլարով: Երբ վալիումը հասնում է վերջնական սպառողին, կիլոգրամի գինը դառնում է 50.000 դոլար: Հսկայական բանակությանը վալիում է գործածվում Եվրասայում և ԱՄՆ-ում: Թերևս սա նման տեսակի ամենատարածված թմրանյութն է աշխարհում:

«Հոֆման լա ռոշը» նույն բանն անում է Շ վիտամինի գործում, որի 1 կիլոգրամի արտադրության ծախսերը 1 սենթից էլ պակաս են: Այն վաճառվում է 10.000% շահույթով: Երբ ընկերս տազնապ հնչեցրեց սույն

հանցավոր ընկերության մասին, որը, ի խախտումն Եվրոպական տնտեսական միավորման օրենքների, մենաշնորհային համաձայնություն էլ կապել մյուս արտադրողների հետ, նրան բռնեցին շվեյցարա-իտալական սահմանում և ծակը կոխեցին: Շվեյցարիայի ոստիկանությունն էլ, ահ տալով, ինքնասպանության հասցրեց նրա կնոջը: Որպես բրիտանահայատակ, ընկերս փրկվեց Բեռնում Բրիտանիայի հյուպատոսի միջոցով՝ հենց որ տեղեկություն ստացվեց նրա դրության մասին: Նրան բանտից ազատեցին ու երկրից քշեցին: Նա կորցրեց իր կնոջն ու կենսաթոշակը, որովհետև համարձակվել էր բացահայտել «Հոֆման լառու»-ի գաղտնիքները: Շվեյցարացիք շատ խիստ են պահպանում արդյունաբերական լրտեսության մասին իրենց օրենքը:

Հիշե՛ք այս մասին, երբ վառ գովազդացուցակներում տեսնեք Շվեյցարիայի կուսական լեռները, դահուկաստիքի համար բացված դրանց լանջերը, գեղեցիկ պահակախմբին և միջից կկու դուրս եկող ժամացույցները: Իսկական Շվեյցարիան դա չէ: Իսկական Շվեյցարիան բազմամիլիարդ կեղտոտ դոլարների լվացքն է, որ անում են նրա խոշորագույն բանկերը, թմրանյութերի «օրինական» արտադրությունն է, որ կատարվում է 300-ի կոմիտեի հովանու ներքո: Շվեյցարիան նրանց փողերի ու մարմինների գլխավոր պատասպարանն է համաշխարհային աղետների ժամանակ:

Ձեզ զգուշացնում եմ. Շվեյցարիայի իշխանությունները կարող են գլխներիդ մեծ փորձանք բերել այդ զագրելի գործունեության մասին ո՛րևէ տեղեկույթ բացահայտելու համար: Շվեյցարիան այդ բանը «արդյունաբերական լրտեսություն» է համարում, ինչի համար հինգ տարի բանտ է հասնում: Շառից հեռու կմնաք, եթե ցույց տաք, որ Շվեյցարիան սիրուն-մաքուր երկիր է, քան թե փորձ անեք տեսնելու նրա բանկային խոհանոցի կեղտերը:

1931 թ. Բրիտանիայի «մեծ հնգյակ» կոչեցյալ բանկային ընկերությունների տնօրեն կառավարիչները թմրափողի լվացման գործում ունեցած ծառայությունների համար արժանացան Անգլիայի պերերի կոչման: Ո՞վ կայացրեց այդ որոշումը և այդպիսի պատիվ արեց նրանց: Ինքը՝ Անգլիայի թագուհին պատիվներ մատուցանեց համաշխարհային թմրատեղում առանցքային դիրք գրավող անձանց: Այդ սոսկայի գործարարությանը մասնակցող Բրիտանիայի բանկերի ցուցակը չափազանց մեծ է, ուստի չենք կարող լլիվ բերել, բայց ամենագլխավորներից մի քանիսի անունը կտանք.

The British Bank of the Middle East («Բրիտիշ բանկ օֆ թը Միդլ Իստ») - «Մերձավոր արևելքի բրիտանական բանկ»),

Midland Bank («Միդլանդ բանկ»),

National Westminster Bank («Նեշնլ Վեստմինստեր բանկ»),

Barclays Bank (Բարկլայզ բանկ),

Royal Bank of Canada («Ռոյալ բանկ օֆ Կանադա») - «Կանադայի

թագավորական բանկ»),

Hong Kong and Shanghai Banking Corporation (HSBC) («Հոնկոնգի և Շանհայի բանկատիրական ընկերություն»),

Baring Brother Bank («Բերինգ բրազերս բանկ» - «Բերինգ եղբայրների բանկ»):

Առևտրային շատ բանկեր, գործօրինակ սըր Ջոսելին Համբրոյի (Jocelyn Hambro) ղեկավարած Hambros-ը, մինչև զագաթները թաթախված են թմրառևտրից ծծած հասույթների կեղտով: Չինաստանում կատարված ափիոնի առևտրի իրոք հետաքրքրական ու հանգամանալի ուսումնասիրության համար անհրաժեշտ է Լոնդոնում գտնվող «Հնդկաստանի գրասենյակ» մտնելու թույլտվություն ստանալ: Ինձ հաջողվեց այնտեղ ընկնել և ետախուզությունում ծառայելուս շնորհիվ և մեծ օգնություն ստանալ վատահյալ փաստաթղթապահ հանգուցյալ պրոֆեսոր Ֆրեդերիկ Ուելս Ուիլյամսոնից, ոյն ինձ շատ տեղեկանյութ տվեց Հնդկաստանում և Չինաստանում 18-19-րդ դդ. Օստինդական ընկերության վարած ափիոնի առևտրի մասին: Եթե այդ փաստաթղթերը կարելի լիներ հրապարակել, ապա ի՞նչ փոթորիկ կպայթեր Եվրոպայի թագակիր իժերի գլխին:

Ներկայումս թմրառևտուրը սրոշ չափով փոխվել է այն առումով, որ հյուսիսամերիկյան շուկայի զգալի մասը գրավված է ոչ այնքան բանկ կոկաինով: 60-ական թվականներին Հոնկոնգից, Լիբանանից ու Կուբայից խուժած հերոինի հորձանքը սպառնում էր տակն առնել ԱՄՆ-ը և Արևմտյան Եվրոպան: Երբ պահանջարկը գերազանցեց առաջարկը, սրոշվեց անցնել կոկաինի: Սակայն հիմա, 1991-ի վերջերին, հակառակ միտում է նկատվում. այսօր առաջին տեղում նորից հերոինն է, թեև բնակչության սակավ ապահով շերտերի մեջ կոկաինը շարունակում է թունդ «ժողովրդականություն» վայելել:

Ինչպես ասում են, հերոինը առավել է բավարարում թմրամոլներին. սրա ազդեցությունն ավելի ուժեղ է և ավելի տևական, քան կոկաինինը, և միջազգային ուշադրություն էլ հերոին արտադրողների նկատմամբ այնքան մեծ չէ, ինչպես է Կոլումբիայի կոկաինակարտելների հանդեպ: Նաև քիչ հավանական է, որ ԱՄՆ-ը յուրական ջանքեր կգործադրի վերջ տալու ափիոնի արտադրությանը «ոսկե եռանկյունի»-ում, որը գտնվում է չինական բանակի հսկողության տակ. լուրջ պատերազմ կբռնկվի, եթե որևիցե երկիր փորձի խոչընդոտել ափիոնի առևտուրը: Այս առևտրի վրա վճռական գրու կատարելը Չինաստանի ռազմական միջամտությունը կհարուցեր:

Սա բրիտանացիք գիտեն. նրանք Չինաստանի հետ երբեք չեն գժտվի, եթե չհաշվենք «գաթայի» ավելի մեծ կտոր ճանկելու շուրջը ծագած պատահական խոսքակոխիների դեպքերը: Բրիտանիան արդեն երկու դարից ավելի է, ինչ մասնակցում է չինական ափիոնառևտրին: Ոչ մեկն

այնքան տիամար չի լինի, որ կտրի իր նստած ծառի ճյուղը, ինչն այս պեպքում բրիտանացի խմբիչխանների (օլիգարխների¹) բանկային հաշիվների վրա հոսող բյուր միլիոնավոր դոլարներն են, և այն բանը, որ Հոնկոնգի շուկայում ավելի շատ է ոսկի վաճառվում, քան Լոնդոնի ու Նյու Յորքի շուկաներում միասին առած²:

Ովքեր անկեղծորեն կարծում են, թե կարող են «ոսկե եռանկյանում» անկյուններից մեկում որևէ համաձայնության գալ չինացի կամ բիրմա-ցի որևիցե պատիկ թմրաբալանի հետ, ըստ երևույթին իսկի չեն պատկերացնում, թե այդ ամենի հետևում ինչ կա նստած: Եթե իմանային, ապա ծպտուն իսկ չէին հանի ավիոնի առևտուրը դադարեցնելու մասին: Այս նյութի շուրջը խոսակցությունները միայն ցույց են տալիս չինական ավիանառևտրի չափերին ու բարդ բնույթին տեղյակ չլինելը:

Բրիտանիայի պլուտոկրատները (փաղիչխանները), Խորհրդային Միության ՊԱԿ-ը, Ամերիկայի ՀԿՎ-ն ու բանկատերերը ձեռք ձեռքի սոված աշխատում են Չինաստանի հետ: Կարո՞ղ է մի մարդ վերջ կամ չնչին վնաս տալ այդ առևտրին: Անհեթեթ կլիներ պատկերացնելը:

Ի՞նչ է հերոինը, և ինչո՞ւ են այսօր այն գերադասում կոկաինից: Ըստ այս հարցում հայտնի հեղինակություն պլաֆեսոր Գալենի՝ ավիոնի ածանցյալ հերոինը մի թմրանյութ է, որը բացնում է զգացումները և բերում է երկարատև քուն: Հենց այս էլ սիրում է թմրամոլների մեծ մասը. սրան «Մորփեոսի»³ գրկում լինելը են ասում: Ավիոնը մարդուն հայտնի բուրբ թմրանյութերի մեջ ամենաշուտն է սովորություն ու կախվածություն առաջացնում: Շատ դեղամիջոցներ այս կամ այն չափով ավիոն են պարունակում, և կարծիք կա, որ ծխախոտի արտադրության մեջ գործածվող թուղթը նախապես տոգորում են ավիոնով: Ահա թե ինչու են ծխողներն այդպես ամուր կապված իրենց սովորությանը:

Խաշխաշը (կակաչը), որից ստանում են ավիոնը, շատ վաղուց հայտնի էր Հնդկաստանի Մոդոլներին. նրանք դրա սերմերը խառնում էին թեյին և հրամցնում փակբերան գրուցակիցներին: Այն նաև օգտագործվում էր որպես ցավամոք միջոց, որը լայնորեն փոխարինեց քլորոֆորմին և

¹ Օլիգարխիա (հունարեն օլիգո՝ սակավ, քիչ + առխի՝ իշխանություն), Կառավարման ձև, որի դեպքում պետական իշխանությունը տնօրինում է մարդկանց փոքր, տնտեսապես հզոր խումբ: Արիստոտելը, Պլուրիբոսը և այլք պետական կառուցվածքի այդ ձևը համարել են արիստոկրատիայի այլասերման արդյունք (Վ. Ա.):

² Սրա պատճառը ավիոնն այդտեղ ոսկով վաճառելը կամ ոսկու հետ փոխանակելն է (Վ. Ա.):

³ Զնի ու երազների աստվածը՝ հունական դիցաբանության մեջ: Սրա անունից է ավիոնի գլխավոր բաղադրիչ մորփինը՝ ընաբեր ու ցավամոք դեղը (Վ. Ա.):

անցյալ տարիների մյուս անգգայացուցիչներին: Ափիոնը հանրասիրված էր վիկտորիական Լոնդոնի բոլոր շքեղաշուք ակումբներում, և գաղտնիք չէ, որ Հաքսլի եղբայրներն այն գործածել են թափով: Հելլադայի Օրփեոս-Դիանիսոսի և պտղոմեոսյան Եգիպտոսի Օսիրիս-Դառի պաշտամունքների անդամները, որոնք վիկտորիական հասարակությանն էին պատկանում, բոլորն էլ ափիոն ծխող էին, որովհետև «այդպես էր ընդունված»:

Նույն բանն էին անում նաև նրանք, ովքեր 1903 թ. հավաքվել էին սբ. Էրմինի հյուրանոցում, որպեսզի վճռեն, թե ինչպիսի աշխարհում պիտի ապրենք մենք: Սբ. Էրմինի հյուրանոցի խառնածոդովի մասնակիցների ժառանգներին այսօր կարելի է գտնել 300-ի կոմիտեում: Հենց սույն առաջնորդ կոչեցյալներն են հարուցիչը շրջակա միջավայրի այն փոփոխությունների, որոնք հանգեցրին թմրանյութերի այնպիսի խորագնաց տարածման, որ այլևս հնարավոր չէ դրանց դեմն առնել իրավապահ և ուժային մարմինների սովորական գործելակերպերի միջոցով: Սա վերաբերում է հատկապես խոշոր քաղաքներին, որոնց մեծաթիվ բնակչության մեջ հեշտ է թաքցնել կատարվող բաները:

Թագավորական շրջանակներում շատերն էին կանոնավորապես ափիոն գործածում: Նրանց սիրեցյալներից մեկը գրող Քուդենհոուվ-Քալերգին էր, որը 1932 թ. «Հեղափոխություն՝ տեխնոլոգիայով» վերտառությամբ մի գիրք է գրել, ինչը միջնադարյան հասարակության աշխարհը վերադառնալու ծրագիր էր: Այս գիրքը փաստորեն աշխատանքային նյութ դարձավ 300-ի կոմիտեի՝ աշխարհը, առաջին հերթին ԱՄՆ-ը ապարդյունաբերականացնելու ծրագրի համար: Պնդելով, թե գերբնակեցումը լուրջ խնդիր է, Քալերգին խորհուրդ է տալիս վերադառնալ մի տեղ, որը նա «բաց տարածություններ» է կոչում: Սա չի՞ հնչում այն բանի պես, ինչն ազդարարում էին «կարմիր քներներն» ու Պոլ Պոտը: Ահա այդ գրքից մի քաղվածք.

«Էր ենթակառուցվածքով ապագայի քաղաքը հիշեցնելու է միջին դարերի քաղաք..., և ով իր մասնագիտության պատճառով դատապարտված չէ ապրելու քաղաքում, կտեղափոխվի բնակվելու գյուղական վայրում: Մեր քաղաքակրթությունը մեծ քաղաքի մշակույթ է: Ուստի այդ քաղաքակրթությունը մի «ճահիճ» է, որ ծնունդ է առել այլասերված, հիվանդոտ ու անկումային մարդկանցից, որոնք կամա թե ականա հայտնվել են կյանքի այս փակուղում»:

Ափիանի առաջին հակերը 1683 թ. Բենգալիայից Անգլիա են ներկրվել Օստինդական ընկերության «թեյակլիպերներով»: Ափիոնն Անգլիա էին բերել փորձի համար, որ տեսնեն, թե կարելի՞ է այդ թմրանյութի հանդեպ հակում առաջացնել հասարակ ժողովրդի՝ գյուղացիների ու ստորին դասերի մեջ: Այսօր դա կոչվում է նոր արտադրանքի «փորձնական շուկայագիտություն (մարկետինգ)»: Սակայն Անգլիայի գյուղացի-

ները և վերինների ասած «ստորին դասերը» կոու պոպոկ դուրս եկան՝ չկոտրվեցին, և շուկայագիտության «գիտափորձն» ավարտվեց լիակատար ձախողմամբ: Բրիտանիայի հասարակության «ստորին դասերը» կտրականապես հրաժարվեցին ավիան ծխելուց:

Լոնդոնի բարձր հասարակության փողիշխաններն ու խմբիշխանները սկսեցին վաճառահանման այնպիսի շուկա փնտրել, որն ավելի դյուրավիշուր ու դյուրորս կլինի: Այդպիսի շուկա նրանք գտան Չինաստանում: «Հնդկաստանի գրասենյակի» ուսումնասիրած փաստաթղթերի «Այլ հին գրառումներ» բաժնում ես գտա այն բանի բոլոր ապացույցները, որ ավիանի առևտուրը Չինաստանում սկսվել է Բրիտանիայի Օստինդական ընկերության դրամավորած «Չինաստանի ներքին ներկայացուցչության» ստեղծմամբ: Սույն ներկայացուցչությունը արտաքուստ քրիստոնյա քարոզիչների ընկերություն էր, սակայն դրա ծառայողներն իրականում «գովազդագործակալներ» էին, որոնք զբաղվում էին նոր արտադրանքի, այսինքն՝ ԱՓԻՈՆԻ համար շուկայում ճամփա բացելով:

Հետագայում այս մեկ անգամ ևս հաստատվեց, երբ թույլտվություն ստացա «Հնդկաստանի գրասենյակում» ծանոթանալու սրբ Ջորջ Բերդվուդի փաստաթղթերին: Շուտով, այն բանից հետո, երբ «Չինաստանի ներքին ներկայացուցչության» քարոզիչները նմուշածրարներ էին բաժանել և կուլիներին ցույց տվել ավիան ծխելու ձևը, սկսում են Չինաստան բերվել այդ թմրանյութի հսկայական խմբաքանակներ: «Բիթլ»-երն անգամ չէին կարող այդ խնդիրն ավելի լավ լուծել: (Երկու դեպքում էլ թմրառևտուրը կատարվել է Բրիտանիայի թագավորական ընտանիքի հավանությամբ, որը բացեիքաց աջակցել է «Բիթլզ»-ին:) Թեև Օստինդական ընկերության ծրագիրը տապալվեց Անգլիայում, բայց կատարյալ հաջողությամբ պսակվեց Չինաստանում, որտեղ բյուր չքավորներ ավիանի ծխի մեջ գտնում էին անելանելի թշվառությունից կարճ ժամանակով փախչելու ճարը:

Ավիանաորջերն սկսում են սնկի պես աճել Չինաստանով մեկ՝ բուսներով նաև Շանհայի կամ Կանտոնի նման խոշոր քաղաքներում: Հարյուր հազարավոր թշվառ չինացիների համար կյանքն ավելի տանելի էր թվում մի ծխամորճ ավիանից հետո: Բրիտանիայի Օստինդական ընկերությունն ավելի քան 100 տարի գործողությունների լիակատար ազատություն ուներ, մինչև որ Չինաստանի կառավարությունը սկսեց հասկանալ, թե ինչ է կատարվում: 1729 թվականին միայն ընդունվեցին ավիան ծխելու դեմ առաջին օրենքները: ԲՕԻՂՆԿ-ի վարչության 300 անդամներին դա, ինչպես, հիացմունք չպատճառեց, և Ընկերությունը շուտով բացահայտ առճակատում սկսեց Չինաստանի կառավարության հետ:

Ընկերությունը բարձրագույն որակի ավիան տվող խաշխաշի (կակաչի) տեսակներ էր աճեցրել, որոնք բուծվում էին բրիտանացիների

կողմից լիովին վերահսկվող Հնդկաստանի Գանգեսի ավազանի Բենարես ու Բիհար նահանգներում փոխած խաշխաշի տնկաստաններում (պլանտացիաներում): Այս ավիոնը վաճառվում էր ամենաբարձր գնով, մինչդեռ Հնդկաստանի այլ մարզերի ավելի ցածր որակի ավիոնը էժան էր: Փորձելով պակասել այդ գերշահութաբեր շուկան՝ բրիտանական թագը ռազմական գործողություններ սկսեց չինական գույքերի դեմ և պարտության մատնեց նրանց: Համանմանորեն՝ Ամերիկայի կառավարությունն է իբր անընդմեջ պատերազմ մղում ժամանակակից թմրաբարոնների դեմ և չինացիների պես շարունակ պարտություն կլում: Բայց այստեղ էական տարբերություն կա. Չինաստանի կառավարությունը պայքարում էր հաղթանակ տանելու նպատակով, այնինչ ԱՄՆ-ի կառավարությունը բնավ հաղթանակ չի ցանկանում: Հասկանալի է դառնում, թե ինչու ԱՄՆ-ի Թմրանյութերի դեմ պայքարի գործակալությունում այդքան բարձր է կադրերի հոսունությունը:

Հետագայում մեծապես զտված ավիոնը սկսում է գալ Պակստանից՝ Մակրայի վրայով հասցվելով երկրի անմարդաբնակ ավերը, որտեղից նավերը բեռը վախադրում էին Դուբայ, որտեղ այն փոխանակում էին ոսկու հետ: Սա մասնակիորեն բացատրում է հերոինը կոկաինից հիմա ավելի տարածված լինելու փաստը: Հերոինի առևտուրն ավելի «քաղաքավարի» գործարարություն է. սրա ժամանակ չեն սպանում պետական բարձրաստիճան գործիչներին, ինչը գրեթե սովորական բան է Կոլումբիայում: Պակստանյան ավիոնը վաճառվում է անհամեմատ էժան, քան «ոսկե եռանկյունու» կամ «ոսկե մահիկի» (Իրան) ավիոնը: Սրա հետևանքով կտրուկ աճել են հերոինի արտադրությունն ու վաճառքը, և այն սկսել է կոկաինը դուրս մղել գլխավորող դիրքերից:

Բրիտանիայի բարձր հասարակության շրջաններում ավիոնի կեղտոտ առևտրի վերաբերյալ բազում տարիներ խոսել են որպես «կայսրության խայտառակության» մասին: Սակայն Հիբերի լեռնանցքում գինվորների ցուցաբերած արիության մասին հեքիաթները տեսադաշտից հեռացրել էին ավիոնի լայնածավալ առևտուրը: Բրիտանական բանակի զորամասերը Հիբերի լեռնանցքում էին տեղաբաշխվել անմշակ ավիոնի քարավանները տեղի լեռնական ցեղերի հարձակումներից պաշտպանելու համար: Թագավորական ընտանիքը գիտե՞ր այդ մասին: Անշուշտ գիտեր. այլապես ի՞նչը կարող էր թագին ստիպել, որ բանակ պահի այդ տարածաշրջանում, որը ոչինչ չէր կարող տալ, բացի գերշահութաբեր ավիոնի առևտրից: Հեռավոր երկրում բանակ պահելը շատ թանկ նստող բան է: Նորին մեծություն թագուհին անշուշտ հարցրել է, թե ինչո՞ւ են այնտեղ գույքեր ուղարկվել: Իհարկե ո՛չ այն բանի համար, որ այնտեղ գնդակ ու բլիլարդ խաղան:

Բրիտանիայի Օստինդական ընկերությունը հույժ խանդոտորեն է

պահպանել ավիոնի իր մենատիրությունը: Հնարավոր մրցակիցների դատաստանը կարճ էր տևում: 1791 թ. մի ուշագրավ դատավարության ժամանակ մեն Ուարեն Հաստինգսի մեղադրանք էր առաջադրվել, որ նա իր բարեկամին օգնել է զբաղվելու ավիոնի առևտրով՝ ի վնաս Ընկերության: Դատավճռի բնագիրը, որը գտա «Հնդկաստանի գրասենյակում» պահվող նյութերի մեջ, որոշ պատկերացում է տալիս ավիոնի առևտրի հսկայական ծավալների մասին. «Մեղադրանքն այն է, որ Հաստինգսը չորս տարի ավիոն մատակարարելու պայմանագիր է կնքել Ստիվեն Սուլիվանի հետ, այդ մասին բացեիքաց շիտարարելով, բացարձակաբար ակներև և անըրդապատճառ ճոխ պայմաններով՝ նպատակ ունենալով կիշյալ Ստիվեն Սուլիվանի **անմիջապես և արագ հարստացումը**» (ընդգծումը գրքի հեղինակինն է):

Քանի որ Օստինդական ընկերությունն ու Բրիտանիայի կառավարությունը ավիոնի առևտրի մենատերերն էին, ուստի ակնթարթաբար մեծ գումարներ վաստակելը թույլատրված էր միայն «երևելիների դասին» ու «արխատկրատներին»՝ Անգլիայի փողիշխաններին (պրատոկրատներին) ու խմբիշխանական ընտանիքներին, որոնց շատ ժառանգներ մտնում են 300-ի կամիտեի կազմի մեջ, ինչպես որ իրենց նախնիներն էին բազմում Բրիտանիայի Օստինդական ընկերությունը կառավարող Երեք հարյուրի խորհրդում: Պատահական մարդիկ, ինչպիսին պրն Սուլիվանն էր, շուտով «գործ» էին ունենում թագի շահերի պահապանների հետ, եթե համարձակվում էին ոտք դնել միլիարդավար ֆունտ ստեռլինգ աճեցնող ավիոնագործի մեջ:

300 կողմնոց ԲՕԻ-ընկ-ի խորհրդի պատվարժան պարոնները Լոնդոնի բոլոր հայտնի ջենտլմենական ակումբների, այլև մեծավ մասամբ Պատլամենտի անդամներ էին, մինչդեռ ուրիշները ինչպես Հնդկաստանում, այնպես էլ Անգլիայում զբաղեցնում էին դատավորի ու մագիստրատի՝ պաշտաններ: Չինաստան մտնելու համար պահանջվում էին Ընկերության անձնագրեր: Երբ Չինաստան էին ժամանում մի քանի «հաստակող» պարոններ՝ հետաքննելու բրիտանական թագի մասնակցությունը գերշահութաբեր առևտրին, ԲՕԻ-ընկ-ի վերահսկողությանը ենթակա մագիստրատներն անհապաղ չելլյալ էին դարձնում նրանց անձնագրերը, և սրանք այդպես էլ չէին կարողանում Չինաստան մտնել:

Չինաստանի իշխանությունների հետ գծադրությունները սովորական բան էին: 1729 թ. չինացիներն ընդունում են ավիոնի ներմուծումն արգելող «Յունգ Չինի հրամանագիրը» օլենքը, սակայն, այդու-

¹ Դատական կամ ոստիկանական ցածրաստիճան պաշտոնյա, այլև դատական կամ վարչական լիազորություններով օժտված աստիճանավոր (Վ. Ա.):

հանդերձ, Բնկերությունը հաջողում է Չինաստանի մաքսացուցակներում ափիոնի տեղը պահել մինչև 1753 թ., ընդ որում՝ ափիոնի չափորոշված մեկ այլդի (սովորաբար 108 ֆունտ) համար տույքը կազմել է 3 տաել (լյան): Բրիտանիայի հատուկ գաղտնի ծառայությունը (այն ժամանակվա «007 գործակալները») հոգում էր, որ չինացի «անհաջող» պաշտոնյաները կաշառվեն, իսկ եթե այդ չէր հաջողվում, նրանց պարզապես սպանում էին:

Բրիտանիայի ամեն միապետ, 1729 թվականից սկսած, հսկայական օգուտներ է ստացել թմրառևտրից. նույնը իրավամբ ասում ենք ներկայիս թագակրուհու մասին: Նրանց նախարարները հետևում էին, որ հարստությունը գետի պես հոսի միապետների տոհմական գանձարանները: Վիկտորիա թագուհու այդպիսի նախարարներից էր լորդ Փալմերստոնը: Սա այն անսասան կարծիքին էր, թե չի կարելի չնչին իսկ հնարավորությունն թույլ տալ, որ Չինաստանում դադարի բրիտանական ափիոնառևտուրը: Փալմերստոնի ծրագիրն այս էր. Չինաստանի կառավարող շրջաններին այնքան ափիոն մատակարարել, որ չին կառավարության առանձին անդամներ անձամբ շահագրգռված լինեն առևտրի ընդլայնմամբ: Այնուհետև նախատեսվում էր դադարեցնել մատակարարումները. և երբ չին կառավարությունը ծնկի բերված կլիներ, ափիոնամատակարարումը կվերսկսեին, բայց արդեն զգալիորեն ավելի բարձր գնով՝ այդպիսով մենաշնորհը պահպանելով նույն կառավարության օգնությամբ: Սակայն այս ծրագիրը տապալվում է:

Չինաստանի կառավարությունը խաղին պատասխանում է այն քայլով, որ ոչնչացնում է Բնկերության պահեստներում եղած ափիոնը, իսկ անգլիացի վաճառականներից պահանջում են ԱՆՀԱՏԱԿԱՆ պայմանագրեր ստորագրել Կանտոն (Հոնկոնգ) կատարվող ափիոնամատակարարումները դադարեցնելու մասին: Ի պատասխան՝ Օստինդական ընկերությունը բերնեբերան ափիոն բարձած նավերի մի ամբողջ տորմիդ է կանգնեցնում Մակաոյի խարսխակայանում: Այնուհետև այդ ափիոնն սկսում են վաճառել ԲՕԻՂՆԿ-ի վերահսկմանը ենթակա ընկերությունները, այլ ոչ թե անհատ առևտրականները: Չինաստանի լիազոր կոմիսար Լինը հայտարարել է. «Հսկայաքանակ ափիոն է կուտակվել Մակաոյի խարսխակայանում գտնվող անգլիական նավերում, և այդ ափիոնն այլևս չի վերադարձվի այնտեղ, որտեղից եկել է: Ես չեմ զարմանա, եթե սկսվի դրա մաքսանենգ մուտքը Չինաստան, բայց արդեն ամերիկյան դաշին ներքո»: Լինի մարգարեությունը զարմանալիորեն ճշգրիտ է դուրս գալիս:

Չինաստանի դեմ վարվող «ափիոնապատերազմների» նպատակը, ըստ լորդ Փալմերստանի արտահայտության, «չինացիներին իրենց սեղը ցույց տալն» էր, և բրիտանական բանակն այդ արեց: Ամենևին հնա-

րավար չէր կասեցնել լայնորեն ծավալված գերշահութաբեր առևտուրը, որը Բրիտանիայի խմբիշխանային ավատատիրական լորդերին չլսված միլիարդներ էր տալիս այն ժամանակ, եյր Չինաստանում բազմաճանաչում էր ափիոնամուլների թիվը: Հետագա տարիներին Չինաստանը դիմել է Բրիտանիային իր վիթխարի խնդիրների լուծման հարցով և ստացել է նրա օգնությունը: Դրանից հետո չինաց կառավարությունները գիտակցեցին Բրիտանիայի դեմ պայքարելու փոխարեն նրա հետ համագործակցելու օգուտը (և այդ միտումը պահպանվեց նաև Մաո Յզե Դունի արյունոտ կառավարման ժամանակներում), այնպես որ այսօր, ինչպես ասացի, եթե նրանց միջև ինչ-ինչ տարաձայնություններ էլ ծագում են, ապա դրանք միայն վերաբերում են ափիոնի առևտրի մեջ կողմերից յուրաքանչյուրի բաժնեչափին:

Արդի փուլում չին-բրիտանական գործակցությունն ամրապնդվել է հունկոնգյան պայմանագրով, որը հավասար գործընկերություն է սահմանել ափիոնի առևտրում: Սույն գործընկերությունն ընթացում է հարթ՝ թեթևակիորեն կնճռոտվելով աննշան միջադեպերից, այնինչ կուկաինի կոլումբիական առևտուրն ակեղծվում է բռնություններից ու մահերից, կողպայուտներից ու սպանություններից: Նմանօրինակ վարճողություններ թույլ չէին տրվում հեյտինի առևտրում, որը, ինչպես նշել եմ առջևում, մեծ թափ առավ 1991 թ. վերջերին:

Չին-բրիտանական հարաբերությունների վերջին 60 տարվա գլխավոր խնդիրն այն էր, որ Չինաստանն ավելի մեծ բաժին էր պահանջում ափիոնահերոինից թիվող գաթայից: Հարցը կարգավորվում է, երբ Բրիտանիան համաձայնում է Հոնկոնգը հանձնել Չինաստանի կառավարության լիակատար վերահսկողությանը, որը պետք է իրականանա 1997 թ.: Մնացյալում գործընկերները պահպանել են իրենց ստացած հավասար բաժինները ափիոնի շահութաբեր առևտրից, ուրի կենտրոնը Հոնկոնգն է:

300-ի կոմիտեի բրիտանացի խմբիշխանական ընտանիքները, որոնք ժամանակին, ափիոնի առևտրի ծաղկման շրջանում հաստատվել էին Կանտոնում, իրենց դիրքերը հանձնել են ժառանգներին: Նայե՛ք Չինաստանում ապրող բրիտանացի հայտնի քաղաքացիների ցուցակը և նրանց մեջ կտեսնեք 300-ի կոմիտեի անդամների անունները: Նույնը վերաբերում է նաև Հոնկոնգին: Ավատական դարաշրջանի այդ պլուտոկրատները (փառիշխանները), որոնք ջանում են դեպի այդ դարը քարշ տալ ողջ աշխարհը, վերահսկում են ոսկու և ափիոնի առևտուրը, ուրի ԿԵՆՏՐՈՆԸ Հոնկոնգն է: Բիրմացի ու չինացի կակաչագործները վարձը վերցնում են ոսկով: Նրանք չեն վստահում ԱՄՆ-ի 100-դոլարանոց թղթադրամներին: Սա բացատրություն է տալիս Հոնկոնգի բուրսայում ոսկու հսկայածավալ առևտրի փաստին:

«Ոսկե եռանկյունին» այլևս ափիոնի ամենախոշոր արտադրողը չէ:

1987 թվականից այդ կասկածելի տիտղոսի անվանակիցներն են «ոսկե մահիկը» (Իրան), Պակստանն ու Լիբանանը: Սրանք ափիոնի գլխավոր արտադրողներն են: Ժամանակ առ ժամանակ այս թմրանյութի ավելի փոքր մասնակներ (պարտիաներ) են հայտնվում Աֆղանստանից ու Թուրքիայից: Թմրանյութերի, հատկապես ափիոնի առևտուրը չէր կարող գոյություն ունենալ առանց բանկերի օգնության, ինչն էլ ցույց կտանք հետագա շարադրանքի ընթացքում:

Ինչպե՞ս է լինում, որ ակնածելի վարկ մոնեթող բանկերը ներքաշվում են թմրանյութերի առևտրի մեջ, ինչի անբաժան ուղեկիցը կեղտն է: Սա շատ երկար ու բարդ պատմություն է, որը կարող էր առանձին գրքի նյութ լինել: Բանկերի մասնակցության եղանակներից մեկը այն ընկերություններին դրամավորելն է, որոնք արտահանում են ափիոնից հերոին կորզելու համար անհրաժեշտ քիմիական պատրաստուկներ: «Հոնկոնգ էնդ Շանհայ բանկինգ քորպորեյշն»-ը (HSBC), Լոնդոնում ունեցած իր մասնաճյուղով հանդերձ, հենց այդպիսի առևտրի մեջտեղում է հայտնվել TEJAPAIIBUL կոչվող ընկերության միջոցով, որը սույն բանկի հաճախորդն է: Ինչո՞վ է զբաղվում այս ընկերությունը: Սա Հոնկոնգ է արտահանում հերոինի մաքրման գործընթացին անհրաժեշտ քիմիական պատրաստուկների մեծ մասը: Ընկերությունը քաջախի անհիյրիդի գլխավոր մատակարարն է «ոսկե մահիկի» և «ոսկե եռանկյունու», Պակստանի, Թուրքիայի ու Լիբանանի համար:

Այս առևտրի փաստական դրամավորումը հանձնարարված է «Բանգկոկ մետրոպոլիտեն բանկ»-ին: Այսպիսով, ափիոնի արտադրության հետ կապված կողմնակի գործունեությունը, որն անմիջաբար չի առնչվում ափիոնի առևտրին, այնուամենայնիվ, էական շահույթ է տալիս բանկերին: Սակայն «Հոնկոնգ էնդ Շանհայ բանկինգ քորպորեյշն»-ի, այլև մնացած բոլոր բանկերի գլխավոր շահույթը գայանում է անմիջականորեն ափիոնի առևտուրը դրամավորելուց:

Ես ծավալուն ուսումնասիրություններ եմ կատարել ոսկու և ափիոնի գների կապը պարզելու համար: Ինձ լսել ցանկացողներին ասում էի. «Եթե ուզում եք ոսկու գինն իմանալ, իմացեք, թե որքա՞ն է մի ֆունտ կամ մի կիլոգրամ ափիոնի գինը Հոնկոնգում»: Իմ քննադատներին պատասխանում էի. «Դուք նայեք, թե ինչ կատարվեց 1977-ին՝ ոսկու գների համար բեկումնային թվականին»: «Չինաստանի բանկը» շվարեցրեց ոսկու շուկայի «գիտուններին» և խելքի տոպրակ այն կանխագուշակներին, որոնց անհամար քանակությամբ կարելի է գտնել Ամերիկայում, հանկարծակի և առանց նախագուշացման՝ ցածր գնով շուկա նետելով 80 տոննա ոսկի:

Դրա հետևանքով ոսկու գինը կտրուկ ընկավ: Փորձագետները կարող էին միայն հետևյալն ասել. «Մենք չգիտեինք, որ Չինաստանն այդքան ոսկի ունի. որտեղի՞ց այն ծլեց»: Դա Հոնկոնգի ոսկու շուկայում

ափիոնի խոշոր մասնակների (խմբաքանակների) դիմաց Չինաստանին վճարված ոսկին էր: Այսօր Անգլիայի հանդեպ Չինաստանի կառավարության վարած քաղաքականությունը նույնն է, ինչ որ XVIII և XIX դարերում էր: Հոնկոնգի հետ կապված չինական տնտեսությունը (ես նկատի չունեմ հեռուստացույցները, մանածագործվածքը, ռադիոապրանքները, ժամացույցները, ընդհատակյա արտադրության ձայներիգներն ու տեսերիզները, ես նկատի ունեմ ափիոնն ու հերոինը) ծանրածանր հարվածների տակ կընկներ, եթե հիմնված չլիներ ափիոնի առևտրի վրա, որը Չինաստանը կհարար վարում է Բրիտանիայի հետ: ԲՕԻ-ընկ-ը դադարել է գոյություն ունենալուց, սակայն «300-ի խորհրդում» բազմույների ժառանգներն այսօր 300-ի կոմիտեի անդամներն են:

Բրիտանիայի խմբիշխանական հնագույն ընտանիքները, սրունք վերջին 200 տարիներից ափիոնի առևտրի պարագլուխներն էին, այսօր էլ դրա մեջ են: Վերցրեք, օրինակ, Մաթեսոններին (Mathesons): Սույն «ազնվագարմ» ընտանիքը ափիոնի առևտրի սյուներից մեկն է: Մի քանի տարի առաջ, երբ Չինաստանի դրությունը խախտու էր, Մաթեսոնները մեջ ընկան և Չինաստանին 300 միլիոն դոլար փոխառություն տվին անշարժ գույքի ասպարեզում ներդրումներ անելու համար: Փաստորեն դա ձևակերպվեց որպես «Չինաստանի Ժողովրդական Հանրապետության և Matheson Bank-ի համատեղ ձեռնարկություն»: «Հնդկաստանի գրասենյակի» 1700-ական թթ. փաստաթղթերն ուսումնասիրելիս հանդիպում էի Մաթեսոն անվանը. այն հայտնվում էր ամեն տեղ՝ Լոնդոն, Պեկին, Գուրալ, Հոնկոնգ, ամենուրեք, սրտեղ որ ափիոնի առևտուր է եղել:

Թմրառևտրի խնդրի ահագնությունը դրա սպառնալիք դառնալն է ազգային ինքնիշխանության համար: Այս մասին անհա թե ինչ է ասել Վենեսուելայի՝ ՄԱԿ-ին առընթեր դեսպանը. «Թմրանյութերի խնդիրն այդքան դադարել է սոսկ հասարակության առողջության կամ սոցիալական խնդիր լինելուց: Այն դարձել է հեռագնա հետևանքներով իրի շատ ավելի լուրջ երևույթ, որն սպառնում է մեր ազգային անվտանգությանը, որովհետև խորտակում է ազգի անկախությունը: Թմրանյութերն իրենց բոլոր դրսևորումներով, լինի արտադրություն, վաճառք թե գործածություն, այլասերում են մեզ՝ քայքայելով մեր բարոյական, կրոնական ու քաղաքական կյանքը, մեր պատմական, տնտեսական ու հանրապետական արժեքները»:

Այս իսկ դիրքից էլ գալիս են «Միջազգային հաշվարկների բանկը» (ՄՀԲ) (Bank of International Settlements) և «Միջազգային արժույթի հիմնադրամը» (ՄԱՀ): Թույլ տվեք անվարան ասել, որ սույն երկու հիմնարկներն էլ ոչ այլ ինչ են, եթե ոչ թմրառևտրին սպասարկող քլիրինգապալատներ: ՄԱՀ-ի ցուցումով ՄՀԲ-ն կարող է քայքայել յուրաքանչյուր երկրի տնտեսությունը՝ արհեստականորեն պայմաններ ու միջոցներ ստեղծելով «ցնդող» կապիտալների արագ արտահոսքի համար: ՄՀԲ-

ն ոչ մի տարբերություն չի տեսնում ու չի դնում «ցնդող կապիտալների» և լվացված թմրափաղերի միջև:

ՄՀԲ-ն գործում է գանգատերավարի: Նրե երկիրը չի ենթարկվում ՄԱՀ-ի կողոպտչական քաղաքականությանը, նա փաստորեն ասում է հետևյալը. «Լավ, այդ դեպքում մենք ձեզ կկզացնենք մեզ մոտ եղած հսկայաքանակ թմրադոլարների միջոցով»: Հեշտ է հասկանալը, թե ինչու ոսկին այլևս չի շրջանառվում մետաղադրամի ձևով և փոխարինվել է թղթադոլարով՝ որպես միջազգային պահուստի արժույթ: Անհամեմատ հեշտ է վախեցնել անկանխիկ կամ թղթադոլարի ձևով պահուստներ ունեցող երկրին, քան այն երկրին, որը պահուստներ ունի ոսկով:

Մի քանի տարի առաջ ՄԱՀ-ը Հոնկոնգում հանդիպում էր կազմակերպել, որին մասնակցել էր պաշտոնակիցներիցս մեկը: Նա ինձ ասաց, որ սեմինարը նվիրված էր հենց այս հարցին, և հայտնեց, որ ՄԱՀ-ի գործակալները հավաքվածներին ասել են, թե իրենք, բանեցնելով թմրափաղերը, կարող են ցանկացած երկրի արժույթի մոլեզին պահանջարկ առաջացնել, ինչը կապիտալի կտրուկ արտահասք կհրահարի: Credit Swiss բանկի ներկայացուցիչ և 300-ի կոմիտեի անդամ Ռայներ-Գուտն ասել է, թե ինքը կանխատեսում է այնպիսի իյուսվիճակ, որի ժամանակ ազգային վարկավորումն ու ազգային դրամավորումը դարավերջին կլինեն մեկ կազմակերպության վերահսկողության տակ: Թեև Ռայներ-Գուտը մամրամասն բացատրություններ չի տվել, սակայն սեմինարին բալյու ներկա եղողներն էլ շատ լավ գիտեին, թե խոսքն ինչի մասին է:

Կոլումբիայից Մայամի, «ոսկե եռանկյունուց» «ոսկե մահիկ», Բոգոտայից Ֆրանկֆուրտ ձգվող թմրառևտուրը, հատկապես հերոինի առևտուրը ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ է, և այն վերից վար լիովին վերահսկվում է աշխարհի մի քանի «ամենաանձեռնմխելի» ընտանիքների կողմից, որոնցից յուրաքանչյուրը գոնե մի անդամ ունի 300-ի կոմիտեում: Դա պուճախներում կատարվող մանր առևտուր չէ. այս գործն ապահովված է փողաբլուրներով ու փարձագետներով, որ ընթանա հարթ ու անարգել: 300-ի կոմիտեի վերահսկողության տակ գտնվող համակարգը լիովին ապահովում է այդ բանը:

Այդպիսի տաղանդավոր առևտրականներ անկարելի է գտնել Նյու Յորքի ծակուծուկերում ու ստորգետնյա անցուղիներում: Իհարկե, փողոցային փերեզակները այս գործարարության անքակտելի մասն են, բայց միայն որպես ժամանակավոր վաճառողներ: Ժամանակավոր են, որովհետև նրանց երբեմն բռնում է ոստիկանությունը, ոմանց էլ երբեմն սպանում են մրցակիցները: Բայց դրանից ի՞նչ է փոխվում: Այս գործում փոխարինողներ միշտ կան ու կան:

Սա «Փոքր գործարարության հարցերի կառավարչությանը» հետաքրքրույ նյութ չէ: ՄԱ ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ է. վիթխարի

կայսրությունն է այս կեղտոտ թմրագործարարությունը: Ըստ անհրաժեշտության՝ յուրաքանչյուր երկրում այն ղեկավարում են իշխանության ամենավերին շարակարգերից (էշելոններից): Այսօր սա փաստորեն աշխարհում ամենամեծ առանձին ձեռնարկությունն է, որը գերազանցում է մյուս բոլորին: Վերևից ներքև սրա պաշտպանված լինելն ապացուցում է այն փաստը, որ միջազգային ահաբեկչության պես սա ևս անհնար է արմատախիլ անել: Յուրաքանչյուր խելամիտ մարդու պարզ է դառնում, որ այս ձեռնարկությունը կառավարում են թագավորական շրջապատի երևելիների և խմբիշխանների ու փողիշխանների (պլուտոկրատների) միջի ամենաազդեցիկ անձինք, եթե նույնիսկ գոյժն իրականացվում է միջնորդների ձեռքով:

Ափիոնի կակաչ և կոկայի սերև աճեցնող գլխավոր երկրներն են Բիրման, Հարավային Չինաստանը, Աֆղանստանը, Իրանը, Պակստանը, Թաիլանդը, Լիբանանը, Թուրքիան, Պերուն, Էկվադորը, Բոլիվիան: Կոլումբիան կոկայի տերև չի աճեցնում. կողքին՝ Բոլիվիայում է գտնվում կոկաինի գտման գլխավոր ձեռնարկությունը և կոկաինի առևտրի ֆինանսական գլխավոր կենտրոնը, որի հետ (նախագահ Բուշի՝ զեներալ Նորիեգային փախցնելուց ու քանտ նստեցնելուց հետո) Պանաման է մրցակցում փող լվալու և կոկաինի առևտուրը դրամավարելու գործում:

Հերոինի առևտուրը դրամավարում են Հանկոնգի ու Լոնդոնի բանկերը և մերձավարարկելյան մի քանի բանկեր, որոնցից է, օրինակ, «Մերձավոր արևելքի Բրիտանական բանկը» (British Bank of the Middle East): Լիբանանն արագորեն վերածվում է «Մերձավոր արևելքի Շվեյցարիայի»: Հերոին սփռելու և տեղ հասցնելու գործի մեջ ներգրավված երկրներն են Հանկոնգը, Թուրքիան, Բուլղարիան, Իտալիան, Մանակոն, Ֆրանսիան (Կորսիկան ու Մարսելը), Լիբանանը, Պակստանը: Իսկ թմրանյութերի ամենամեծ սպառողը Միացյալ Նահանգներն է, որտեղ առաջին դիրքում է կոկաինը, ինչի հետ մրցակցում է հերոինը: Արևմտյան Եվրոպայի և Հարավարևելյան Ասիայի երկրները հերոինի լայնեռախ սպառողներ են: Իրանը հսկայաքանակ թմրամուլներ ունի. 1991-ին դրանց թիվը 2 միլիանից անցնում էր:

Չկա մի կառավարություն, որ ճշտիվ տեղեկացված չլինի այն ամենի մասին, թե ինչ է կատարվում թմրառևտրի ասպարեզում, սակայն կառավարության կարևոր պաշտոններ զրավող առանձին անդամներ կաշառված են 300-ի կոմիտեից՝ սրա վերահսկողությանը ենթակա ընկերությունների համաշխարհային ցանցի միջոցով: Եթե կառավարության որևիցե անդամ «ձարմար» չի գալիս, վերացնում են, ինչպես արեցին Ալի Բաուտոյին՝ Պակստանում և Ալլա Մորոյին՝ Իտալիայում: Ոչ մեկը չի կարողանում դուրս պրծնել այս ամենագուր Կոմիտեի ազդեցության տակից, թեև Մալայզիային դեռևս հաջողվում է գերծ մնալ դրա-

նից: Մալայզիան աշխարհի ամենախիստ օրենքներն ունի թմրանյութերի վերաբերյալ: Անգամ պուճուր բաժնաչափ (դուզա) թմրանյութ ունենալու համար մահապատժում են:

Փոքր երկրների մեծ մասը անմիջականորեն մասնակցում է այդ հանցավոր ձեռնարկումներին: [Օրինակ, Բուլղարիայի Kintex ընկերությունը Արևմտյան Եվրոպային կանոնավորապես հերոին է մատակարարում իր բեռնավտոներով, որոնց վրա տպված է Եվրոպական տնտեսական միավորման նշանը՝ TIR (Triangle Internationale Routier՝ «Միջազգային եռանկյուն երթուղի»): Սույն նշանը և ԵՏՄ-ի գրանցահամարներն ունեցող ավտոֆուրգոնները չպետք է կանգնեցվեն սահմանային մաքսակետերում: TIR-ի ավտոֆուրգոններին թույլատրվում է փոխադրել միայն շոտ փչացող ապրանքներ: Ենթադրվում է, որ մեքենաները լրիվ ստուգվում են այն երկրում, որտեղից կրում են բեռը, և, ինչպես ենթադրվում է, ստուգման մասին վկայաթուղթն էլ յուրաքանչյուր ֆուրգոնավարի մոտ կա:]

Միջազգային պայմանագրային պարտավորությունների շնորհիվ այնպես է դասավորվել, որ Kintex-ի ֆուրգոնները կարելի է բարձել հերոին, այն հավաստագրել իբրև «թարմ միրգ ու քանջարեղեն», իսկ այնուհետև փոխադրել Արևմտյան Եվրոպայի ցանկացած վայր՝ մտնելով նույնիսկ Իտալիայի հյուսիսում գտնվող ՆԱՏՕ-ի հույժ գաղտնի հանգրվանները: Այսպիսով, Բուլղարիան դարձել է հերոինի մատակարարման գլխավոր տարանցիկ խողովակներից մեկը:

Եվրոպայի շուկային հերոինի ու կոկաինի հսկայաքանակ մատակարարումը դադարեցնելու միակ միջոցը TIR-ի համակարգը լուծարելն է: Բայց այս բանը երբեք չի լինի: 300-ի կոմիտեն, օգտագործելով կառավարման իր ապշեցուցիչ ցանցերն ու լծակները, կարգել է քիչ առաջ հիշատակածս միջազգային պայմանագրային պարտավորությունները, որպեսզի հեշտացնի ամեն ատեսակ թմրանյութի մուտքը Արևմտյան Եվրոպա: Մոռացե՛ք «շոտ փչացող» մթերքը: Իտալիայում ԱՄՆ-ի թմրանյութերի դեմ պայքարի գործակալության նախկին լիազոր ներկայացուցիչն ինձ ասաց. «TIR-ը ԹՄՐԱՆՅՈՒԹ Է»:

Հիշե՛ք այս, երբ թերթերում մյուս անգամ կարդաք, որ Քենեդիի օդնավակայանում մեծ քանակությամբ հերոին են գտել մի երկտակ ճամպուրկի մեջ, և ոմն ձախարդ «ջուրի» պատժվել է իր հանցավոր գործունեության համար: Սա ընդամենը «մանրուք» է, հասարակության աչքին փչած «թոզ», որ մեզ կարծել տան, թե մեր կառավարությունն իրոք գործ է անում թմրանյութի վտանգի դեմ: Վերցրեք, օրինակ, «Ֆրանսիական հետք»-ը՝ Նիքսոնի ծրագիրը, որն սկսվել էր առանց 300-ի կոմիտեի գիտության ու համաձայնության:

Վլախարի ջանքերի շնորհիվ առգրավված ափիոնի ու հերոինի ընդհա-

նույն քանակը մեկ քարտրոլից էլ պակաս է TIR-ի մեկ ֆուրգոնի կրածից: 300-ի կոմիտեն «հոգ տարավ», որ Նիքսոնը մեծ զին վճարի հարաբերականորեն փոքրաքանակ հերոինի բռնագրավման համար: Բանը հերոինի քանակը չէր, այլ այն, որ նա, ում նրանք օգնել էին զբաղեցնելու Սպիտակ տունը, սկսել էր կարծել, թե ինքը կարող է գործել առանց նրանց օգնության ու աջակցության և նույնիսկ անտեսել վերից եկած ուղղակի հրամանները:

Հերոինի առևտուրը կառուցված է հետևյալ կերպ. լեոնական վայրի ցեղերը Թաիլանդում ու Բիրմայում ափիոնի կակաչ (խաշխաշ) են աճեցնում: Բերքը հավաքելիս դրա սերմնատուփերը մակահերձվում են ածելիով կամ սուր դանակով: Խեժանյութը ծորում է կտրվածքից և սկսում թանձրանալ: Սա հում ափիոնն է, որի կաշուն ու կլորավուն կնձիկներն էլ ափիոնի բերքն են: Վայրի ցեղերի ներկայացուցիչները վարձն ստանում են 1 կիլոգրամանոց ոսկու ձուլուկների ձևով, որոնք հայտնի են 4/10-անոց անունով: Դրանք ձուլում է Շվեյցարիայի Credit Suisse բանկը: Այս փոքրիկ ձուլուկները պատրաստվում են ՄԵՆ ՄԻ նպատակով, այն է՝ վայրի ցեղերին ափիոնի դիմաց վճարելու համար: Համօրինակ ոսկե ձուլուկներ Հոնկոնգի շուկայում վաճառում են հում ափիոնի կամ կիսամշակ հերոինի մեծագնորդները: Նույն եղանակն է կիրառվում Հնդկաստանի լեոնաբնակ «բալուչի» կոչվող ցեղերին վճարելու համար, որոնք այս գործով զբաղվել են դեռ Մողոլների ժամանակներից: «Թմրանյութերի սեզոնը», ինչպես որ այն կոչում են, համընկնում է Հոնկոնգի շուկայում ոսկու առևտրի շեշտակի աշխուժացման շրջանին:

Մեքսիկան սկսել է արտադրել հարաբերաբար փաքաքանակ հերոին, որին «մեքսիկական դարչնագույն» են ասում: Սա մեծ պահանջարկ ունի հայրվուդյան «ժողովարանում»: Մեքսիկայում հերոինի առևտուրը վայում են նաև պետական ամենաբարձր աստիճանավորները, որոնց թևակցում են զինվորականները: «Մեքսիկական դարչնագույնի» որոշ արտադրողներ ամսական մեկ միլիոն դոլար են վաստակում՝ մատակարարելով ԱՄՆ-ում ապրող իրենց գնորդներին: Դեպքեր են լինում, որ երբ Մեքսիկայի դաշնային որոշ ոստիկաններ փորձում են միջոցներ ձեռնարկել հերոին արտադրողների դեմ, նրանց «չեզոքացնում» են զինվորական ստորաբաժանումները՝ ասես բուսնելով գետնի տակից:

Նմանօրինակ միջադեպ է պատահել 1991-ի նոյեմբերի 3-ին Մեքսիկայի ափիոնային տարածաշրջանի օդանավակայանում: Թմրանյութերի դեմ պայքարի դաշնային գործակալները շրջապատում են օդանավակայանը, որպեսզի ձերբակալեն հերոինն ինքնաթիռների բարձու մարդկանց: Այդ պահին «բուսնում» է զինվորական ստորաբաժանումը, և զինվորները, կալմեջ անելով դաշնային ոստիկանության գործակալներին, բալոբին՝ մինչև վերջին մարդը, գնդակահար են անում: Այս ելույթը լուրջ վտանգ դարձավ Մեքսիկայի նախագահ Գոլտարինի համար,

որից համառորեն պահանջում են սպանության սպառիչ հետաքննություն անցկացնել: Գուտարինն անելանելի վիճակի մեջ է ընկել. մի կողմից՝ նա չի կարող անտեսել հետաքննության վերաբերյալ պահանջները, իսկ մյուս կողմից՝ չի համարձակվում մեղադրել զինվորականներին: Սա նմանօրինակ առաջին խափանումն է Մեքսիկան կառավարելու ամուր շղթայում, որի ծայրը 300- ի կոմիտեի տակն է:

Հում ափիոնը «ոսկե եռանկյունուց» առաքվում է Միցիլիայի մաֆիային և Ֆրանսիայում գտնվող վերջնամշակիչներին, որոնք հերոինի գտումն ավարտում են Մարսելից մինչև Մոնտե Կառլո սփռված ծովափնյա լաբորատորիաներում: Ներկայումս Լիբանանն ու Թուրքիան թափով ավելացնում են գտված հերոինի արտադրությունը, և վերջին չարս տարիներին այդ երկու երկրներում հայտնվել են մեծ թվով հերոինալաբորատորիաներ: Պակստանը ևս մի քանի լաբորատորիա ունի, սակայն դրանք որակով ավելի ցածրակարգ են, քան, օրինակ, ֆրանսիականները:

«Ոսկե եռանկյունու» տարածաշրջանից հում ափիոնի փոխադրության երթուղին անցնում է Իրանի, Թուրքիայի ու Լիբանանի միջով: Երբ Իրանի շահը երկիրը վերահսկողության տակ էր պահում, արգելել էր հերոինի առևտուրը շարունակելը, և այն ստիպված էին դադարեցնել այնքան ժամանակ, մինչև որ հարցը «կարգավորվեց» 300-ի կոմիտեի կողմից: Հում ափիոնը Թուրքիայից ու Լիբանանից հասցվում է Կորսիկա, որտեղից նավերով Մոնտե Կառլո է փոխադրվում Գլխամաղիների ընտանիքի լոելայն համաձայնությամբ: Պակստանի «զինվորական պաշտպանական լաբորատորիաներ» անունով քողարկված ափիոնագտարանները հերոինը հասցնում են ավելի բարձր աստիճանի մաքրության, քան երկու տարի առաջ էր: Սակայն մաքրման ամենաբարձր աստիճանին առայժմ հասնում են Միջերկրական ծովի ֆրանսիական ափի և Թուրքիայի լաբորատորիաները: Այստեղ էլ են բանկերը վճռական դեր կատարում նմանօրինակ գործառնությունները դրամավորելու մեջ:

Եկեք այստեղ մի րոպե կանգ առնենք: Կարելի⁹ է հավատալ, թե դիտելու, հետևելու և հսկելու ժամանակակից, մեծապես կատարելագործված միջոցների առկայությամբ, ներառյալ արբանյակային հետախուզումը, որք ունեն հիշյալ երկրների իրավապահ մարմինները, այդ նույնպի առևտուրը չի կարող բացահայտվել ու դադարեցվել: Ինչո՞ւ իրավապահ և ուժային գերատեսչությունները չեն կարողանում միջամտել ու ոչնչացնել այդ լաբորատորիաները հատնաբերվելուն պես: Եթե բանը հենց այդպես է, և մենք դեռ ի վիճակի չենք վերջ տալու հերոինի առևտրին, ապա հակաթմրանյութային մեր ծառայությունները պետք է կոչել «ծերանոցային», այլ ոչ թե թմրանյութերի դեմ պայքարի գործակալություններ:

Մեր «թմրամարտիկներին» երեխան էլ կարող է ասել, թե ինչ պետք է անեն: Անհրաժեշտ է պարզապես հսկողության տակ առնել բոլոր այն

գործարանները (մալո դնել, որ նախ սրանց դարպասից դուրս եկող մեքենաներին), որոնք արտադրում են քացախի անհիդրիդ: Մա հում ափիոնից հերմին արտադրելու գործընթացին անհրաժեշտ ԱՍԵՆԱ-ԿԱՐԵՎՈՐ քլորիական բաղադրամասն է: ԱՅՆՈՒՂԵՏԵՎ ՀԵՏՔԸ ԲՈՆԱՍ ԳՆԱՑԵՔ: Ամեն ինչ պա՛րզ ու հասարա՛կ է: Ես հիշեցի «Վարդագույն հովազը» կինոնկարաշարի Փիթր Սիլերսին, երբ մտածում էի հեյուինի մաքրման լաբորատորիաները հատնաբերելու համար իրավապահ մարմինների թափած ջանքերի մասին: Նույնիսկ մոգոնովի տեսուչի պես շշկված մեկը առանձին դժվարության չէր հանդիպի, եթե ուզենար որոշել քացախի անհիդրիդի փոխադրման երթուղին և իմանալ, թե վերջը ո՞ւր են հասցնելու այն:

Պետական մարմինները կայաղ էին ընդունել այնպիսի օրենքներ, որոնք քացախի անհիդրիդ արտադրողներին կպարտավորեցնեին ճշգրիտ հուշվառում կատարել, թե ովքե՞ր են իրենց այդ պատրաստուկը գնում և ի՞նչ նպատակով են գործածում: Սակայն չպիտի սահմանափակվել միայն դրանով: Հիշե՛ք. թմրանյութը Մեծ գործ է, և այն վարում են Եվրոպայի ու ԱՄՆ-ի «արևելյան ազատական տիրախավի» խմբիշխանական ընտանիքները: Թմրագործարարությունը մաֆիական գործառնություն չէ, և այն արվում է ոչ միայն Կոլումբիայի կակաինակարտելների հետ: Բրիտանիայի և Ամերիկայի վերին շերտերի ազնվագարն ընտանիքները միտք չունեն ամեն գովազդավախճանակի վրա հայտարարություն գետեղել այդ գործում իրենց ունեցած դերի մասին. նրանք իրենց քաղաքկող մարդկանց մի միջնաշերտ ունեն, որն էլ կատարում է կեղտոտ գործը:

Հիշե՛ք. Բրիտանիայի և Ամերիկայի «արխատկրատիան» իր ձեռքերը երբեք չի ադտոտել չինական ափիոնառևտրով: Լարդերն ու լեդիները և նրանց զուգընկեր ամերիկյան ընտրախավը այնքան խելք ունեն, որ այդ բանը չանեն: Դիլոններ, Ֆոյբսեր, Էսլետուններ, Բեյկոններ, Բոյեստուններ, Փերկինսներ, Ռասելներ, Քանինգհեմներ, Եռուներ, Բոլիջներ, Փարկմաններ, Ռանետելներ, Քերոտներ և Բոդմաններ. սա բնավ էլ լրիվ ցուցակը չէ. Ամերիկայի այն ընտանիքների, որոնք ահռելի հարստություն են ձեռք գցել չինական ափիոնառևտրի շնորհիվ:

Քանի որ սույն գիրքը թմրանյութերի առևտրի մասին չէ, ես չեմ կարող տալ այդ հարցի համակողմանի լուսաբանությունը: Սակայն 300-ի կոմիտեի համար դրա կարևորությունը հարկավոր է շեշտել: Ամերիկյան կառավարում են ոչ թե 60, այլ 300 ընտանիքներ, իսկ Անգլիան՝ 100 և, ինչպես կտեսնենք, այդ ընտանիքներն իրար հետ կապված են ամուսնություններով, բանկերով, ընկերություններով, էլ չասած Սև արխատկրատիայի, ֆարմաստոնության (մասոնության), Սբ. Հովհաննես Երուսաղեմացու ուխտի և այլ գծերով ունեցած կապերը: Այս մարդիկ փոխանձերի [իրենց դրած անձանց] միջոցով ինար են գտնում պաշտպանելու

Հոնկոնգից, Թուրքիայից, Իրանից ու Պակստանից կատարվող հսկայական քանակությամբ հերոինի բեռնափոխադրումները և նվազագույն ծախսերով ապահովելու դրանց մատակարարումը ԱՄՆ-ի ու Արևմտյան Եվրոպայի շուկաներին:

Ելքեմն կոկաինի խմբաքանակները (մասնակները) կալանադրվում և բռնագրավվում են: Դրանք սովորական թատերախաղեր են: Բռնագրավված խմբաքանակներն առավելապես պատկանում են նոր կազմակերպություններին, որոնք փորձում են գոռով մտնել այդ գործի մեջ: Այսպիսի մրցակցությունը չեզոքացվում է իշխանություններին ճշգրիտ տեղեկություն տալով, թե ոյտե՞ղ է գալու բեռը, և ո՞վ է դրա տերը: Ու Մեծ գործը մնում է անձեռնմխելի. հերոինը շա՛տ է թանկ: Արժե նշել, որ ԱՄՆ-ի Թմրանյութերի դեմ պայքարի գործակալության (ԹՊԳ) օպերատիվ աշխատակիցներին արգելված է Հոնկոնգ մտնելը: Նրանք չեն կարող ստուգել նավերի բեռնախառնարարությունները, մինչև որ բեռները չհեռանան նավահանգստից: Մարդու զարմանք է գալիս, թե այսքան զարգացած «միջազգային համագործակցության» պայմաններում ինչու՞ են զանգվածային լրատվամիջոցները մի գլուխ կրկնում «թմրատևտուրը ջախջախելու» անհրաժեշտության մասին: Պարզ է, որ հերոինի առևտրաթուղիները պաշտպանված են «բարձր իշխանություններին» կողմից:

Հարավային Ամերիկայում ամենուրեք իշխում է կոկաինը: Սրա արտադրությունը, ի տարբերություն հերոինի, շատ պարզ է, և վիթխարի գումարներ են դիզում նրանք, ովքեր ցանկանում են ռիսկի դիմել «բարձրագույն բռնգերի՛» համար և անունից: Ինչպես որ հերոինի առևտրի ասպարեզում է, այստեղ էլ կողմնակի անձանց չեն ողջունում, և նրանք հաճախ դառնում են դժբախտ պատահարների կամ «ընտանեկան վեճերի» գոհեր: Կոլումբիայում թմրամաֆիան մի ընտանիք է, որի անդամները սերտորեն կապված են իրար հետ: Սակայն MI9-ի զինյալների (սա կոկաինաբարյունների մասնավոր բանակն է) հարձակումը Կոլումբիայի Արդարադատության նախարարության վրա և հայտնի դատախոսը ու դատավոր Ռոդրիգո Լարա Բոնիլայի սպանությունը այնպիսի բացասական լայն արձագանք առաջացրին, որ «բարձրագույն իշխանությունները» ստիպված եղան փոխել Կոլումբիայում գործառնությունների կատարման կառուցվածքը:

Դրա հետևանքով Մեդելլին քաղաքի թմրակարտելի Օչոա եղբայրները կամավոր հանձնվում են իշխանություններին՝ հավաստիացումներ ստանալով, որ իրենց հարստությունները կմնան անձեռնմխելի, որ անձամբ իրենց ոչ մի վնաս չի հասցվի, և որ իրենց չեն հանձնի ԱՄՆ-ին:

¹ 1. Քուրմ: 2. Ամբարտավան, գոռոզ պաշտոնյա (Վ. Ա):

Կնքվում է այն գործարքը, որ եթե նրանք իրենց թմրադուրաների հիմնական զանգվածը վերադարձնեն հայրենիք՝ կոլումբիական բանկեր, նրանց դեմ ոչ մի պատժիչ գործողություն չի ձեռնարկվի: Եղբայրներ Խորխե ու Ֆաբիո Օչոաները և նրանց պարագլուխ Պարլու Էսկոբարը պետք է պահվեին մասնավոր բանտերում (որոնք ավելի շատ բարձրակարգ հյուրանոցների նմանություն են տալիս, քան արգելարանի), իսկ այնուհետև դատապարտվեին երկու տարուց ոչ ավելի ժամանակով ազատագրվման՝ պատիժը կրելով նույն շքեղ՝ լյուքս կարգի բանտերում: Սույն գործարքը մինչև հիմա էլ շարունակվում է: Բացի սրանից՝ Օչոաներին երաշխավորվել էր, որ իրավունք կունենան իրենց «գործարարության» կառավարումը շարունակելու հյուրանոց-բանտերից:

Բայց այս չէր նշանակում, թե կոկաինի առևտրի վերջը եկել էր: Ընդհակառակը. այն պարզապես անցել էր Կալի քաղաքի կրկնօրինակ կարտելի ձեռքը, և «գործարարության» էությունը դրանից չէր փոխվել: Թմրանյութերի դեմ պայքարի գործակալությունը ինչ-որ տարօրինակ պատճառով, համենայն դեպս մինչև վերջերս, ուղղակի անտեսում էր Կալիի կարտելը, որն իր չափերով հավասար է Մեդելլինի կարտելին: Կալիի կարտելը սրանից տարբերվում է նրանով, որ կառավարվում է այնպիսի գործարարների կողմից, որոնք խուսափում են բռնության ամեն ձևից ու երբեք չեն խախտում պայմանավորվածությունները:

Առավել կարևոր է այն բանը, որ Կալին գործեր չի վարում Ֆլորիդայում: Աղբյուրներիցս մեկն ինձ հայտնեց, որ Կալիի կարտելը կառավարում են գործնական մարդիկ, որոնք նման չեն կոկաինաբիզնեսի մյուս «հեղինակություններին»: Նա կարծում է, որ սրանց «հատուկ նպատակով են նշանակել», բայց չգիտի թե՛ ովքեր: «Սրանք երբեք ուշադրություն չեն հրավիրում իրենց վրա, - ասաց նա: - Խորխե Օչոայի պես չեն ֆոռում արտասահմանյան կարմիր «ֆեռարիներով», ինչն իսկույն ուշադրություն է գրավում, որովհետև Կոլումբիայում արգելված է այդպիսի ավտոմեքենաներ ներմուծելը»:

Կալիի կարտելի շուկաներն են Լոս Անջելեսը, Նյու Յորքը և Հյուստոնը, որոնք զուգահեռաբար հերոինի շուկաներ են: Կալին Ֆլորիդա ներխուժելու ոչ մի նշան ցույց չի տալիս: ԹՊԳ-ի նախկին օպերաշխատակից գործընկերս վերջերս ասաց. «Կալիի այդ տղերքը շատ խելոք են: Օչոաների «ցեղից» չեն: Աշխատում են արհեստավարժ գործարարների պես: Սրանք ավելի թափով են, քան Մեդելլինի կարտելը, և մենք կտեսնենք, որ ավելի շատ կոկաին կմտնի ԱՄՆ, քան երբևէ մտել է առաջ: Մանուել Նուրիեգային փախցնելը հեշտացրել է Պանամայով և սրա բազմաթիվ բանկերի միջոցով փող ու կոկաին փոխադրելը: Ահա և Ջորջ Բուշի «ճշմարիտ բան» գործառնության ամբողջ արդյունքը: Այս մարտական գործողության շնորհիվ թեթևացել է կյանքը Նիկոլաս Ար-

դիզո Բառլետի, որին առաջ վերահսկում էին Օչոաները, և որը հիմա զբաղվում է Կալիի կարտելի գործառնություններն ապահովելով»:

Հիմնվելով հերոինի առևտրի առնչությամբ ունեցածս փորձի վրա, ենթադրում եմ, որ 300-ի կամիտեն է մեջտեղ ընկել և իր ձեռքն առել Հարավային Ամերիկայում կոկաինի արտադրության լիակատար վերահսկողությունը: Կալիի կարտելի ազդեցությունն աճելուն և գեներալ Նորիեգային փախցնելուն ուրիշ բացատրություն պարզապես չկա: Բուշը Լոնդոնից Նորիեգայի վերաբերյալ հրամաններ ստացե՞լ էր: Բոլոր նշանները կան, որ նրան բառացիորեն ՄՏԻՊԵԼ ԵՆ ներխուժել Պանամա և փախցնել Նորիեգային, որը Պանամայում լուրջ խաչընդոտ էր դարձել «թմրառևտրի» առաջ և խուժ էր հատկապես բանկային գործում:

Հետախուզության նախկին մի քանի գործակալներ ինձ ասել են իրենց կարծիքները, որոնք համընկել են իմին: Ինչպես որ եղել էր Պարսից ծոցի պատերազմի առնչությամբ, որը հաջորդել էր Պանամայի գործառնությանը, Վաշինգտոնում Բրիտանիայի դեսպանի մի քանի համառ հետախուսազանգերից հետո է միայն Բուշը վերջապես սիրտ արել միանգամայն ապօրինի գործողություն ձեռնարկել գեներալ Նորիեգայի դեմ: Բրիտանական մամուլի և Բրիտանիայի հետախուզության ղեկավարած «Նյու Յորք թայմս» թերթի՝ Բուշին պաշտպանելու փաստն ինքնին խոսուն է:

Նորիեգան մի ժամանակ վաշինգտոնյան տիրախավի սխյելին էր: Ընկերություն էր անում Վիլյամ Քեյսիի և Օլիվեր Նորտոնի հետ, հանդիպել է անգամ նախագահ Ջորջ Բուշի հետ (առնվազն երկու անգամ): Նորիեգային հաճախ տեսնում էին Պենտագոնում, որտեղ նրա հետ վերաբերվում էին այնպես, ասես արաբստանի տիրակալներից լինի, իսկ Վիրջինիայի նահանգի Լենգլի քաղաքում գտնվող Հետախուզության կենտրոնական վարչության շտաբ-կացարանում նրա առաջ միշտ կարմիր գորգ էին փռում: Փաստագրական վկայություններ կան, որ ԱՄՆ-ի բանակի հետախուզությունը և ՀԿՎ-ն նրան 320.000 դոլար են վճարել:

Հորիզոնում սկսում են ամպեր կուտակվել մոտավորապես այն ժամանակ, երբ կոկաինի հիմնական առևտուրը Օչոաների ու Պարլո Էսկոբարի ձեռքից անցնում էր Կալիի կարտելին: Միանգամայն անսպասելիորեն Նորիեգայի դեմ քարոզարշավ է սկսվում, որը գլխավորում էր Արիել Շարոնին և Իսրայելի «Հիստրադոտ» կուսակցությանը 1985 թվականին ծախված սենատոր Ջեսի Հելմսը: Ջեսի Հելմսն ու նրա կողմնակիցները աջակցություն են ստանում Բրիտանիայի հետախուզության գործակալ Սայմոն Հերշից, որն աշխատում էր «Նյու Յորք թայմսի» համար: Այս թերթն էլ ԱՄՆ-ում Բրիտանիայի հետախուզության ձայնափողն է եղել այն ժամանակից ի վեր, երբ ՄԻ-6-ի պետ սրբ Վիլյամ Ստեֆենսոնը զբաղեցրել է Նյու Յորքում գտնվող RCA-ի ընկերության շենքը:

Ցուցանշական է, որ հենց Հելմսին էր հանձնարարվել վարելու Նորիեգայի դեմ արշավը: Հելմսը Վաշինգտոնում Շարոնի կուսակցախմբի սիրելին էր, իսկ Շարոնը գենքի գլխավոր առևտրականն էր Կենտրոնական Ամերիկայում և Կոլումբիայում: Ավելին, Հելմսին հարգում են քրիստոնեական հիմքայնականները (ֆունդամենտալիստները), որոնք դավանում են «Իսրայելն իմ երկիրն է՝ ճիշտ է նա, թե ոչ» սկզբունքը: Այսպիսով հասարակության մեջ «Նորիեգային քշելու» ուժգին տրամադրություն էր ստեղծվել: Ըստերևույթին Նորիեգան կարող էր լուրջ խոչընդոտներ հարուցել բնրանյութի միջազգային առևտրականների և 300-ի կոմիտեի նրանց բանկատերերի առաջ, ուստի անհրաժեշտ էր նրան մեջտեղից հանել, քանի դեռ լուրջ վնաս չէր տվել:

Բրիտանացի տերերը Բուշին ստիպեցին ռազմական անօրեն գործողություն ձեռնարկել Պանամայում, որի հետևանքով անիմաստ կերպով սպանվեց յոթ հազարից ոչ պակաս պանամացի և ոչնչացվեց շատ գույք: Ոչ մի ապացույց չկար, որ Նորիեգան «թմրառևտրական» է, ուստի նրան հափշտակեցին ու բերեցին ԱՄՆ: Սա միջազգային ավազակության ամենաաղաղակող օրինակներից մեկն է պատմության մեջ: Այս ապօրինի գործողությունը թերևս առավել ճշտությամբ է համապատասխանում Բուշի փիլիսոփայությանը. «Ամերիկայի (ինձ՝ Բրիտանիայի թագավորական ընտանիքի ու 300-ի կոմիտեի) քաղաքականության բարոյական կողմը մեզանից պահանջում է հետևել այնպիսի աշխարհի բարոյական ուղղությանը, որտեղ ընտրվում է չարյաց փոքրագույնը: Հենց այն է սևի ու սպիտակի չբաժանված իրական աշխարհը: Այստեղ շատ քիչ բարոյական բացարձակներ կան»:

Ավելի լավ էր ընտրել «չարյաց փոքրագույնը» և գողանալ Նորիեգային, քան նրան թողնել, որ խիստ միջոցներ ձեռք առնի 300-ի կոմիտեի համար աշխատող Պանամայի բանկերի դեմ: Նորիեգայի դեպքը հրեշավոր ՀամՄիԿառի ապագա գործողությունների նախապատկերն է: Համարձակություն առած Բուշը ելույթ ունեցավ բացեփրաց, անվախորեն, որովհետև մենք՝ ժողովուրդս, զգեցել ենք մի հուզեր պարեգոտ, որը խրախուսում է ՍՈՒՏԸ և մերժում է ՃՇՍԱԲՏՈՒԹՅԱՆ նույնիսկ նվազագույն նշույլը: Ահա՛ այն աշխարհը, որն ընդունել և որի հետ համաձայնություն ենք կնքել: Եթե այսպես չլիներ, Պանամա ներխուժելու պատճառով Միացյալ Նահանգներով մեկ կթավալվեր գայրույթի վիթխարի ալիքը և կանգ չէր առնի, մինչև որ Բուշը ցած չչայրավեր իր պաշտոնապատվանդանից: Նիքսոնի ուստերգեյտյան հանցագործությունները մանկական չարաճճիություններ են թվում նախագահ Բուշի կատարած բազմաթիվ օրինախախտումների համեմատությամբ, երբ նա Նորիեգային գողանալու նպատակով հրամայեց Պանամա ներխուժել: Իսկ սրանք պառլամենտի դատին ենթակա բաներ են:

Նորիեգայի դեմ կառավարության հարուցած գործը հիմնված է մի խումբ անձանց սուտ վկայությունների վրա, որոնք մեծավ մասամբ արդեն դատի են տրվել և սուտ ցուցմունքներ են տալիս իրենց դատավճիռները մեղմացնելու համար: Հիլբերտն ու Սալիվանը կլիանային սույն գործողություններով, եթե կլիմա ողջ լինեին: «Նրանք սրանց ԹՊԳ-ի գլուխ էին կարգել»-ը անհամեմատ ավելի տեղին կհնչեր, քան «նրանք սրանց թագավորական նավատորմի գլուխ էին կարգել»-ը (մեջբերում է «Թագավորական տորմիդի «Փինաֆոր» նավը»-ից): Այս դերասան գողավագակների արածներն ուղղակի կապիկություն են, վատ վարժեցված փոկերի տված ներկայացում՝ ԱՄՆ-ի Արդարադատության նախարարության համար, եթե միայն կարելի է մտովի թույլ տալ, որ այս գեղեցիկ ու մաքուր կենդանին գայրծածվի նման կեղտառ համեմատության համար:

Դրանց տված վկայություններում առանցքային ամսաթվերը բացարձակապես չեն բռնում իրար, բանալի մանրամասնությունները լիավին բացակայում են, մի շարք կարևոր հանգամանքների վերաբերյալ կան հիշողության «կոյուստներ»: Այս բոլորը ցուցահանում են այն ակնհայտ փաստը, որ կառավարությունը ոչ մի բան չունի Նորիեգայի դեմ, սակայն սա ոչ մեկին չի շփոթեցնում, քանզի Միջազգային գործերի թագավորական ինստիտուտն ասում է. «Մեկ է, նրան պետք է դատել»:

Եվ միայն այս կարող է սպասել խեղճ Նորիեգային:

Սույն գործի գլխավոր վկաներից է Ֆլոյդ Կարլտոն Կասերես անունով մեկը, որը Օչոա եղբայրների նախկին օդաչուն էր: 1986 թ. ձերբակալվելուց հետո այս Կարլտոնը փորձում էր իր վիճակը թեթևացնել Նորիեգայի հաշվին: Սա ԹՊԳ-ի գործակալներին պատմել էր, թե Օչոաները Նորիեգային 600.000 դոլար են վճարել կոկաին բարձած երեք ինքնաթիռի՝ Պանամայում իջնելու և լցավորվելու թույլտվության համար: Սակայն Մայամիի դատարանում շատ արագ ակնհայտ դարձավ, որ բոլոր «բանալի վկայությունները» լավագույն դեպքում ախմախ հանաքներ են: Խաչածե հարցաքննությունը բացահայտեց ճշմարտությունը. ոչ ոք մտադիր չի եղել փող տալ թոհչքների թույլտվություն ստանալու համար, Օչոաները չեն էլ դիմել Նորիեգային: Ավելին, 1983 թ. դեկտեմբերին Նորիեգան արգելել է Մեդելլինից Պանամա կատարվող բոլոր ուղերթերը: Եվ Կարլտոնը միակ վարկաբեկված վկան չէր:

Կարլտոնից ավելի նողկալի ստախոս է Կարլոս Լեդերը, որը Մեդելլինի կարտելի գլխավոր դեմքերից մեկն էր, մինչև որ ձերբակալեցին ու ԱՄՆ-ին հանձնեցին: Ո՞վ էր ԹՊԳ-ին այն կարևոր տեղեկությունը տվել, որ Լեդերը Մայրիդում է: Թմրադեղերի դեմ պայքարի գործակարությունը մեծ դժկամությամբ համաձայնվեց, որ այդ կարևոր գործառնության հաջողության համար ինքը պարտական է Նորիեգային: Բայց հիմա ԱՄՆ-ի Արդարադատության նախարարությունը Լեդերին իբրև վկա է օգտագործում Նորի-

եգայի դեմ: Արդեն այս մի վկան ցուցադրում է ԱՄՆ-ի կառավարության «ձախուրդ» գործի ողջ նենգամտությունը Մանուել Նորիեգայի դեմ:

Մատուցած ծառայությունների դիմաց մեղմացրին Լեդերի դատավճիռը և տրամադրեցին «նստելու» (կամ «պառկելու») լավագույն պայմաններ. պատուհանի դիմաց լավ տեսարանով սենյակ, հեռուստացույց, իսկ ընտանիքին ԱՄՆ-ում մշտապես բնակվելու իրավունք տրվեց: ԱՄՆ-ի նախկին դատախազ Ռոբերտ Մերկելը, որը 1988 թ. Լեդերի մեղադրանքն էր, «Վաշինգտոնի փոստին» հայտարարեց. «Չեմ կարծում, որ կառավարությանը պետք է գործարքներ կնքել Կարլոս Լեդերի հետ... Այդ տղան անուղղա ստախոս է»:

Արդարադատության նախարարությունը (որի անվանումը բոլորովին չի համապատասխանում այն բանին, թե ինչի համար է իրապես հանդես գալիս) Նորիեգայի դեմ օգտագործեց իր կելտոտ հնարքների լրիվ հավաքածուն, այն է՝ իր փաստաբանի հետ նրա հեռախոսային գրույցները ապօրինաբար լսելը. այնպիսի պետական փաստաբան նշանակելը, որը ձևացնում էր, թե պաշտպանում է Նորիեգայի շահերը, իսկ գործի ամենաթեժ պահին ուղղակի դադարեց նրան պաշտպանելուց. Նորիեգայի բանկային հնաշիվները սառեցնելը, սրբազանի որակյալ փաստաբաններ վարձելու հնարավորություն չունենալ. նրան փախցնելը. ապօրինի ռազմական գործողությունը և այլն: Լոկ այս մի դեպքում կառավարությունն ավելի շատ օրենքներ է խախտել, քան Նորիեգան իր ողջ կյանքում, եթե նա առհասարակ երբևիցե օրենք է խախտել:

Հենց ԱՄՆ-ի Արդարադատության նախարարությանը, այլ ոչ թե Նորիեգային, պետք էր արդեն տասն անգամ դատի տալ: Նրա գործը ցույց տվեց, որ «արդարադատության» փոխարեն այս երկրում բացեիքաց գործում է մի հանցավոր ու արատավոր համակարգ: Դատաստանի առաջ պետք է կանգնեցվի ԱՄՆ-ում «մղվող» հենց «թմրանյութերի դեմ պատերազմը», ինչպես նաև թմրանյութերի վերաբերյալ Բուշի վարչակազմի վարած քաղաքականությունն կոչեցյալը: Նորիեգայի դատավարությունը, թեև այն ավարտվեց արդարության բիրտ և աղադակալ ոտնահարմամբ, այնուամենայնիվ, որու շնորհիվ փոխհատուցում է տալիս նրանց, ովքեր կույր, խուլ ու համր չեն: Այն սկզբից և մինչև վերջ ապացուցեց, որ Բրիտանիան իշխում է մեր կառավարության վրա, և բացահայտեց լիակատար սնանկությունը Բուշի վարչակազմի գաղափարախոսության, որի զինարանի նշանաբանն է. «Ամեն դեպքում նպատակը միշտ արդարացնում է միջոցները: Կան բարոյական շատ սակավ բացարձակներ»: Բուշի, ինչպես նաև քաղաքագետների մեծ մասի համար ԲԱՑԱՐՉԱԿ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ չափանիշով գործելը ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ կլինեք: Միայն այսպիսի մթնոլորտում մենք կարող էինք նախագահ Բուշին թողնել, որ խախտի ԱՄՆ-ի գոնե վեց օրենք և ՏԱՄՆՅԱԿ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ Իրաքի դեմ պատերազմ սանձագերծելիս:

Հիմա մենք վկաներն ենք այն բանի, թե ինչպես է Կոլումբիայում և Վաշինգտոնում կատարվում կոկաինի առևտրի կառավարման մեխանիզմի արմատական վերակառուցումն առանց բռնության և հրսձգության: Թող Կայիի կայստելի կուստյումավուր ջենտլմեններն իրենց գործարարությունը վարեն ջենտլմենավարի: Կարճ ասած՝ 300-ի կոմիտեն ուղղակի իր ձեռքն է վերցրել կառավարումը կոկաինի առևտրի, որն այս պահից սկսած կզնա այնպես լեշտ ու հանգիստ, ինչպես ուր հերոինինն է: Կոլումբիայի նոր կառավարությանը կար-գաղթում են փոխել մարտավարությունն ու գործողությունների ուղղությունը: Նա պետք է ենթարկվի՝ Կոմիտեի խաղի կանոններին:

Հարկ է հիշատակել ԱՄՆ-ի մասնակցությունը Չինաստանի հետ կատարված ափիոնի առևտրին, որը Միացյալ Նահանգների հարավում սկսվել էր նախքան Քաղաքացիական կռիվները: Ի՞նչ կապ կարող էր լինել չինաստանյան ափիոնի առևտրի և ԱՄՆ-ի հարավի վիթխարածավալ բամբակատանների միջև: Սրա ծայրը գտնելու համար պետք է ուղևորվենք Բենգալիա՝ Հնդկաստան, որտեղ ար-տադրվում էր ամենաբարձրորակ (եթե միայն կարելի է «բարձրորակ» կոչել այս գարշելի նյութը) ափիոնը, որի պահանջարկը միշտ էլ մեծ է եղել: Բամբակն Անգլիայում ամենակարևոր ապրանքն էր ափիոնից հետո, որի առուծախով զբաղվում էր ԲՕԻՂՆԿ-ը:

ԱՄՆ-ի հարավում զնված բամբակի մեծ մասը վերամշակվում էր Հյուսիսային Անգլիայի ստրկական ֆաբրիկաներում, որոնցում կանայք ու երեխաները չնչին սննդադրամ էին վաստակում 16-ժամյա աշխատանքային օրվա մեջ: Մանածագործական ֆաբրիկաները պատկանում էին Լոնդոնի բարձր հասարակության հարուստ մարդկանց՝ Փարմերստոններին, Բերինգներին, Բետտիկներին և գլխավորապես Ջարդին Մաթեսոնին, որին պատկանող «Երկնագույն աստղ» ընկերության նավերը Հնդկաստան էին փոխադրում բամբակե գործվածքեղենը: Նրանք կարող էին հոգս չքաշել այն սոսկալի պայմանների մասին, որոնց մեջ էին Նորին մեծության հպատակները: Ի վերջո հենց դրանց հաշվին էլ իրենք կային, իսկ այրերն ու ուղիները արգասավոր աշխատանք էին կատարում մարտադաշտերում՝ պահպանելով Նորին մեծության անձայրածիր կայսրությունը, ինչը արել են դարեր շարունակ, իսկ այնուհետև՝ բուրերի դեմ վարած արյունալի պատերազմում: Սա բրիտանական ավանդույթ էր: Այդպես չէ՞:

Հնդկաստան արտահանվող բամբակե գործվածքեղենը սնանկացնում էր սերնդեսերունդ բամբակեղեն արտադրող հնդիկ գործատերերին: Սարսափելի կարիքի էին մատնվում հազարավոր հնդիկներ, որոնք աշխատանքից դուրս էին շարտվում այն բանի հետևանքով, որ շուկան

զավթում էին բրիտանական ավելի էժան ապրանքները: Հնդկաստանը ծայրաստիճան կախման մեջ ընկավ Բրիտանիայից, սրովետև նրան արժույթ էր հարկավոր, որ վճարի իր երկաթուղիների և անգլիական բամբակե մանածագործվածքի համար: Հնդկաստանի տնտեսական խնդիրները լուծելու միակ միջոցն այն էր, որ արտադրի ավելի շատ ափիոն և չնչին գնով վաճառի Բրիտանիայի Օստինդական ընկերությանը: Սա այն հիմքն էր, որի վրա աճեց ու բարգավաճեց Բրիտանիայի առևտուրը: Առանց ափիոնի առևտրի Բրիտանիան սնանկ կլիներ:

ԱՄՆ-ի հարավի տնկաստանատերերը (այլանտատորները) գիտե-ի՞ն իրենց բամբակե ափիոնի հետ փոխանակելու նողկալի գաղտնիքը: Քիչ հավանական է, որ ոմանք չիմանային, թե ինչ է կատարվում: Վերցրեք, օրինակ, բամբակի հարավային տնկաստանների տեր Սազերլենդի (Sutherland) ընտանիքը: Սազերլենդներն ազգակցական սերտ կապեր ունեին Մաթեսոնների (Չարլին Մաթեսոն) ընտանիքի հետ, որի անդամները իրենց հերթին գործընկերներն էին Baring Brothers («Բերինգ եղբայրներ») բանկի, որը հիմնել էր նշանավոր Peninsula and Orient Navigation Line-ն՝ Բրիտանիայի առևտրական բազմաթիվ նավարկությունների մեջ խոշորագույնը:

Բերինգ եղբայրները դրամական խոշոր ներդրումներ էին կատարում հարավային տնկաստաններում, ինչպես նաև ԱՄՆ-ի նավարկություններում, որոնց նավերն ակոսում էին Չինաստանի նավահանգիստների և ԱՄՆ-ի կարևորագույն բոլոր նավահանգիստների միջև ընկած ծովերը: Այսօր Բերինգ եղբայրների բանկը կատարում է ԱՄՆ-ի մի շարք ֆինանսական խոշոր ընկերություններն ու բանկերը: Այս ընտանիքների բոլոր ներկայացուցիչները եղել և մնում են 300-ի կոմիտեի անդամները:

Այսպես կաշված «Արևելյան ազատական տիրախավը» (այստեղ են մտնում ԱՄՆ-ի ամենահարուստ տոհմերը) կազմող ընտանիքների մեծ մասն իր գանձերը դիզել է կա՛մ բամբակի, կա՛մ ափիոնի առուծախով, իսկ ուրաշ դեպքերում էլ՝ թե՛ մեկով, թե՛ մյուսով: Լեհրմանները սրա կարկառուն օրինակն են: Երբ խոսք է բացվում այն հարստությունների մասին, որոնք կուտակվել են Չինաստանի հետ լուկ ափիոնի առևտուր վարելու շնորհիվ, միտքս եկած առաջին անուններն են լինում Աստորներն ու Դելանոները: ԱՄՆ-ի նախագահ Ֆրանկլին Դ. Ռուզվելտի կինը Դելանոների ընտանիքից էր:

Չոն Ջեկոբ Աստուրը վիթխարի կարողություն է դիզել Չինաստանի հետ ափիոնի առևտուր անելով, որից հետո սկսել է պատկանեցուցիչ կյանք վարել՝ իր կեղտոտ փողով հողամասեր գնելով Մանհեթենում: Յուր ողջ կյանքում Աստուրը մեծ դերակատարություն է ունեցել 300-ի կոմիտեի ծրագրերի մշակման գործում: Փաստորեն հենց 300-ի կոմիտեն էր որոշում, թե ո՞վ պիտի իր մենաշնորհատեր ԲՕԻ-ընկ-ի միջոցով մասնակ-

ցի հեքիաթային շահույթ բերող շինաստանյան ավիոնի առևտրին: Իսկ այդ առատությամբ բարերարվածները մնում էին ընդմիշտ նվիրված՝

300-ի կոմիտեին:

Ահա թե ինչու է (ինչպես կտեսնեք) Մանհեթենի անշարժ գույքի մեծ մասը պատկանում 300-ի կոմիտեի զանազան անդամներին, ինչպես որ եղել է դեռ այն ժամանակներից, երբ այդ «անշարժությունը» սկսել էր գնել Աստորը: Ես իրավունք եմ ունեցել օգտվելու այնպիսի գրանցումներից, որոնք փակ են Բրիտանիայի հետախուզության կազմից չեղող անձանց առաջ: Հայտնաբերել եմ, որ Աստորը երկար ժամանակ ԱՄՆ-ում եղել է Բրիտանիայի հետախուզության կարևոր գործակալը: Այն փաստը, որ Աստորը դրամավորել է Ալեքսանդր Համիլտոնին սպանող Ահարոն Բերին, աներկբայորեն ապացուցում է ասածս: Ջոն Գ. Աստորի տղա Ուոլդորֆ Աստորն արժանացել է Միջազգային գործերի թագավորական ինստիտուտի անդամը դառնալու պատվին. մի հիմնարկ, այլև միջոցով 300-ի կոմիտեն ԱՄՆ-ում իրապես կառավարում է մեր կյանքի բոլոր ծիրերը: Համարվում է, որ Աստորների ընտանիքը Օուեն Լատիմորին ընտրել էր շարունակելու համար իր կապերը ավիոնի առևտրի հետ, ինչը սա իրագործում էր Լատուա Մայելմանի կողմից դրամավորվող Խաղաղօվկիանոսյան հարաբերությունների ինստիտուտի (APR, ԽՀԻ) միջոցով: Հենց ԽՀԻ-ն էր իրականացրել այն բանի վերահսկողությունը, որ Չինաստանն ավիոնի առևտրի մեջ մտնի իբրև իրավահավասար գույքընկեր, այլ ոչ թե սոսկ որպես մատակարար: Հենց ԽՀԻ-ն է ճապոնացիների համար ճանապարհ բացել, որ հարձակվեն Փիոլ Հարբորի վրա¹: Իսկ ճապոնացիներին ավիոնամուլ դարձնելու փորձերը հիմնովին ձախողվել են:

19-րդ հարյուրամյակի վերջերին բրիտանիայի խմբիշխանական պլուտոկրատները (փողիշխանները) նմանվել էին Սերենգետիի հարթավայրում ամենամյա գաղթի ժամանակ վիթերի լեշերով հագեցող ճարպակալած գիշանգոլների: Չինաստանի հետ կատարվող ավիոնի առևտրից ստացած նրանց եկամուտը Դավիդ Ռոքֆելերի եկամտից ավելի էր ՏԱՐԵԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՄԻՒԻԱՐԴ ԳՈՒԱՐՈՎ: Բրիտանական քանգարանում և «Հնդկաստանի գրասենյակում» ինձ մատչելի եղած, այլև պատասխանատու պաշտոններում աշխատած նախկին գործընկերներինս տված

¹ 1941-ի դեկտեմբերի 7-ին ճապոնիայի ավիացիան հանկարծակի հարձակվել է Հավայան կղզիներում տեղակայված ԱՄՆ-ի ռազմածովային բազայի վրա և շարքից հանել նրա խաղաղօվկիանոսյան նավատորմի հիմնական ուժերը (Վ. Ա.):

պատմական գրառումները այս բանն ապացուցել են լիովին:

Ափիան ծխողների թվի աճից խարապես անհանգստացած Չինաստանի կառավարությունը 1905 թ. փորձում է օգնություն ստանալ միջազգային ընկերակցությունից: Բրիտանիան ձևացնում է, թե ուզում է համագործակցել, բայց ոչինչ չի անում (որպեսզի պահպանած լինի 1905 թ. իր ստորագրած արձանագրությունները): Իսկ որոշ ժամանակ անց Նորին մեծությունը բացահայտորեն հակառակ դիրք է բռնում՝ Չինաստանին ցույց տալով, որ նրա համար ավելի լավ կլինի, եթե միանա ափիոնագործարարությանը, քան թե փորձի դրան վերջ տալ:

Բրիտանիան խնչած ուներ նույնիսկ Հաագայի պայմանագրի վրա: Պայմանագրի պատվիրակները պայմանավորվել էին, որ Բրիտանիան հաստատաբար պահպանելու է իր ստորագրած արձանագրությունները, ինչը զգալիորեն կնվազեցներ Չինաստանում և այլուր վաճառվող ափիոնի քանակը: Բրիտանացիք, խոսքով պաշտպանելով այս բանը, մտադրություն չունեին դադարեցնելու մարդկային վշտի իրենց առածախր:

Նյուսնց ծառա նախագահ Բուշը, Իրաքի ժողովրդի դեմ ԲԱՑԱՌԱՊԵՍ Բրիտանիայի շահերի համար դաժան պատերազմ ու ցեղասպանություն վարելիս, նույնպես լալիքշորեն ոտնահարեց միջազգային իրավունքի նորմաները՝ խախտելով «Հաագայի օղային ռմբակոծությունների վերաբերյալ համաձայնագիրը» և ԱՄՆ-ի ստորագրած միջազգային բազմաթիվ համաձայնագրերը, ներառյալ Ժնևի ԲՈԼՈՐ պայմանագրերը:

Երբ ճապոնացիները, խիստ անհանգստացած իրենց երկրում կատարվող ափիոնի բրիտանական մաքսանենգությունից, ապացույցներ են ներկայացնում, որ ափիոնի առևտուրը ոչ միայն չի նվազել, այլ, ընդհակառակը, ավելացել է, Նորին մեծության պատվիրակը Հաագայի հինգերորդ պայմանագրի կոնֆերանսում ներկայացնում է ճապոնացիների բերած փաստերին հակասող վիճակագրություն: Բրիտանիայի պատվիրակն ամեն ինչ գլխիվայր շուռ է տալիս՝ հայտարարելով, որ հասել է ափիոնի առևտուրն օրինականացնելու ամենահարմար պահը, ինչը հնարավորություն կտա վերացնելու իր ասած «սև շուկան»:

Նորին մեծության կառավարության անունից նա վստահացնում է, որ ճապոնիայի կառավարությունն այնժամ մենաշնորհ կունենա և կկարողանա վերահսկել առևտուրը:

ՃԻՇՏ ՀԱՄԱՆՄԱՆ ՓԱՍՏԱՐԿ ԵՆ ԲԵՐԵԼ ԲՐՈՆՖՄԱՆԻ ԵՎ ՄՅՈՒՍ ԽՈՇՈՐ ԹՄՐԱԳՈՐԾԱՄՈԼՆԵՐԻ ՓՈԽԱՆՁԵՐԸ, ԱՅՆ Է՝ ՕՐԻՆԱԿԱՆԱՅՆԵԼ ԿՈԿԱԻՆԸ, ՄԱՐԻԽՈՒԱՆԱՆ ՈՒ ՀԵՐՈՒՆԸ. ԹՈՂ ԱՄՆ-Ի ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՆԱՇՆՈՐՀ ՈՒՆԵՆԱ, ԻՆՉԸ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿՏԱ ՏՆՏԵՍԵԼՈՒ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ՄԻԼԻԱՐԳԱՎՈՐ ԳՈԼԱՐՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԾԱԽՍՎՈՒՄ ԵՆ ԹՄՐԱ-

ՄՈՒՆԵՐԻ ԳԵՄ ՍՈՒՏ ՊԱՏԵՐԱԶՄ ՄՂԵԼՈՒ ՎՐԱ:

1791-ից մինչև 1894 թ. ընկած ժամանակամիջոցում Շանհայի արտոնագրված ափիոնաձխարանների թիվը 87-ից հասել էր 663-ի: Միացյալ Նահանգներ մտնող ափիոնի հոսանքը նույնպես մեծացել էր: Կանխագգալով, որ Չինաստանում կարող են ծագել այնպիսի խնդիրներ, որոնք կգրավեն համաշխարհային հանրության ուշա-դրությունը, «Մբ. Հովհաննու ասպետների ուխտի» և «Գուլպակայի ուխտի» պրոտոկոլատներն իրենց գործառնությունների մի մասը փոխադրում են Պարսկաստան: Լորդ Ինչկեյալը՝ հիմնադիրը շոգենավերի խոշոր ընկերության, որը 19-րդ դարի վերջին դարձավ աշխարհի ամենախոշոր ու հռչակավոր ընկերությունը՝ «Peninsula and Orient Steam Navigation Company»-ն, գլխավոր նախաձեռնողն էր «Հոնկոնգ էնդ Շանհայ բանկինգ քորպորեյշն» (HSBC)-ի ստեղծման: Սա մնում է որպես ափիոնի առևտրի ամենախոշոր և ամենաթիչ վերահսկելի հաշվարկային բանկը:

Բրիտանացիք մի գործարք են սարքում, որի հետևանքով չինացի «կուլիները» ԱՄՆ են ուղարկվում որպես պայմանագրով աշխատողներ: Հարիմանների անկուշտ ընտանիքը «կուլիների» կարիք ուներ իր երկաթուղազիծը մինչև արևմուտք՝ Կալիֆորնիայի ծովափի հասցնելու համար: Շատ տարօրինակ է այն հանգամանքը, որ այդ ժամանակ շատ քիչ թվով նեգրերի են ձեռքի ծանր աշխատանք տվել, որին նրանք սովոր էին և կարող էին ավելի լավ կատարել, քան Չինաստանի կալից ընկած ափիոնամուլները:

Խնդիրն այն էր, որ նեգրերի շրջանում ափիոնի շուկա չկար և, բացի սրանից, Peninsula and Orient-ի հիմնադրի զավակ յորդ Ինչկեյային «կուլիներ» էին հարկավոր, որպեսզի մաքսանենգորեն հագարավոր ֆունտ հում ափիոն ներկրի Հյուսիսային Ամերիկա, ինչի համար նեգրերը պետք չէին կարող գալ: Սա այն նույն յորդ Ինչկեյայն է, որը 1923 թ. ելույթ էր ունենում Բենգալիայում ափիոնի կակաչ անեցները կրճատելու դեմ: «Եկամտի այս ամենակարևոր աղբյուրը անհրաժեշտ է խնամքով պահպանել», - հայտարարել էր նա այն հանձնաժողովին, որն իբր ուսումնասիրում էր Հնդկաստանում ափիոնի արտադրության գործը:

1846 թ. մոտերքին արդեն 120.000 «կուլի» էր եկել Ամերիկա, որ աշխատի արևմտյան ուղղությամբ կառուցվող Հարիմանի երկաթգծի վրա: ԱՄՆ-ի կառավարության հաշվարկներով եկածներից 115 հազարը ափիոն ծխողներ էին: Երբ երկաթգծի կառուցումն ավարտվում է, չինացիները հայրենիք չեն վերադառնում, այլ ցրվելով բնավորվում են Սան Խրանցիսկոյում, Լոս Անջելեսում, Վանկուվերում և Փորտլենդում: Նրանք մշակութային մեծ խնդիր են ստեղծում, որը ցայժմ լուծված չէ:

Հետաքրքրական է, որ 300-ի կոմիտեի անդամ Սեսիլ Ջոն Ռոդսը, որը Հարավային Աֆրիկայում ներկայացնում էր Ռոթշիլդների շահերը,

հետևել է Ինչկեյայի օրինակին՝ հարյուր հազարավոր հնդիկ «կուլիներ» բերելով, ու աշխատեցնի Նատալի ծայրագավառի շաքարեղեգնի տնկաստաններում: Կրանց մեջ է եղել կոմունիստական ազիտատոր ու խոռվարար Մահաթմա Գանդին: Չինացի կուլիների պես հնդիկներն էլ հայրենիք չեն վերադառնում պայմանագրերի ժամկետները լրանալուց հետո: Սրանք էլ են սոցիալական խոշոր խնդիրներ ծնեցնում, իսկ ժառանգները դառնում են փաստաբաններ, որոնք կազմում են գլխավորող ջոկատը նրանց, ովքեր Աֆրիկայի Ազգային կոնգրեսից թափանցել են կառավարության մեջ:

Սան Ֆրանցիսկոյի չինացի «կուլիները» մինչև 1875 թ. ստեղծել էին ափիանի մատակարարման խողովակ, ինչի հետևանքով 129.000 ամերիկացի ափիոնասեր էր դարձել: Արդեն եղած 115.000 չինացի թմրամոլների հետ նրանք գոյացրել էին մատակարարման այնպիսի շուկա, որը յուր Ինչկեյային հնարավորություն էր տվել միայն այդ աղբյուրից տարեկան կթելու հարյուր հազարավոր դոլարներ, իսկ սա ներկայիս (մինչև 1990 թ.) գներով անում է տարեկան առնվազն 100 միլիոն դոլար:

Բրիտանացի ու ամերիկացի այդ նույն ընտանիքները, որոնք ափիոնի առևտրին նպաստելու համար սարքել էին Հնդկաստանի մանածագործական արդյունաբերության փլուզումը և Աֆրիկայի նեգրերին ԱՄՆ էին բերել ու ստրուկ դարձրել, որոշ ժամանակ հետո սկսում են քաղաքական այնպիսի խաղեր սարքել, որոնց հետևանքով նահանգների մեջ կռիվ է ընկնում, որը հայտնի է Ամերիկայի Քաղաքացիական պատերազմ անունով:

Իրար հետ դիվական զուգընկերությամբ կապված, մինչև ծուծը ծախվածությամբ (կոռուպցիայով) ներծծված և կեղտոտ ճոխության մեջ թավալ տվող ամերիկյան փտած ընտանիքները դարձել են ներկայումս հայտնի «արևելյան ազատական տիրախավ», որի անդամները բրիտանական թագի, իսկ հետագայում նրա արտաքին քաղաքական գործադիր մարմին Միջազգային գործերի թագավորական ինստիտուտի (ՄԳԹԻ) մշտաբնակ ղեկավարության ու կառավարման ներքո կառավարել են և շարունակում են այս երկիրը (ԱՄՆ-ը) վերից վար կառավարել բարձրագույն մակարդակի իրենց գուգահեռ գաղտնի կառավարության միջոցով, որը սերտագույնս կապված է 300-ի կոմիտեի՝ ԲԱՅԱՐՉԱԿԱՊԵՍ գաղտնի ընկերության հետ:

1923 թ. սկսում են գնալով ավելի շատ ձայներ հնչել այս սպառնալիքի (ափիոնի) դեմ, որը մինչ այդ միանգամայն ազատ-արձակ թափանցում էր ԱՄՆ: Կարծելով, թե Միացյալ Նահանգները ազատ ու ինքնիշխան ազգի պետություն է, կոնգրեսական Ստիվեն Փորտերը՝ Ներկայացուցիչների պալատի արտաքին գործոց կոմիտեի նախագահը, քննարկման է ներկայացնում մի բանաձև, որը Բրիտանիային պարտավորեց-

նում էր հաշիվ տալ յուրաքանչյուր երկրի հետ իր կատարած արտահան-
նա-ներմուծական ավիանագործարարության մասին: Բանաձևը բաժնե-
մասեր էր սահմանում ամեն երկրի համար, ինչը 10 տոկոսով կկրճատեր
արտադրվող ավիոնի քանակը: Սույն բանաձևն անցել էր որպես
օրենսդրական ակտ, և ԱՄՆ-ի Կոնգրեսը հավանություն էր տվել այդ
օրինագծին:

Սակայն Միջազգային գործերի քաղաքական ինստիտուտը միան-
գամայն այլ գաղափարներ ուներ: Սա, որ հիմնադրվել է 1919 թվակա-
նին՝ Վերսալում տեղի ունեցած Փարիզի խաղաղության կոնֆերանսի
նախօրյակին, 300-ի կոմիտեի կամքի ամենաստուգիչ կատարողներից
մեկն էր արտաքին քաղաքականության ասպարեզում: ԱՄՆ-ի Կոնգրե-
սի ներկայացուցիչների պալատի արձանագրությունների ուսումնասի-
րություններս ցույց տվեցին, որ Փորտերը բնավ տեղյակ չի եղել այն հզոր
ուժերի մասին, որոնց դեմ հանդես էր եկել: Փորտերը նույնիսկ չի իմացել
ՄԳԹԻ-ի գոյության, առավել ևս՝ Միացյալ Նահանգների կյանքի յուրա-
քանչյուր նիստը վերահսկելու նրա հատուկ խնդրի մասին:

Ըստ երևույթին, կոնգրեսական Փորտերին Ուոլստրիտի Մորգանի
բանկից փորձել են հասկացնել, որ այդ գործից ձեռք քաշի: Սակայն գա-
զազած Փորտերը դրա փոխարեն իր պայքարը փոխադրել է Ազգերի լի-
գայի «Ափիոնի կոմիտե»: Փորտերի բացարձակ անտեղյակությունը, թե
ուլքեր են իր դեմ եղողները, երևում է նրա մի քանի նամակներից, պահք
պալատի արտաքին գործոց կոմիտեի պաշտոնակիցներին էլ հղել իր
առաջարկությունները բացահայտորեն մերժող բրիտանական ընդդի-
մության առնչությամբ: Նորին մեծության ներկայացուցիչը նախատում է
Փորտերին, ապա, վարվելով անառակ որդու հոր պես, ՄԳԹԻ-ի տված
կրահանգի համաձայն՝ ներկայացնում է ավիոնի բաժնեմասերն ԱՎԵ-
ԼԱՅՆԵԼՈՒ մասին Նորին մեծության առաջարկությունները, որոնք
պատճառաբանվում էին բժշկական նպատակներով ավիոնի գործածու-
թյան ավելացմամբ: Հաագայում գտածս փաստաթղթերից երևում է, որ
Փորտերը սկզբում շփոթվել է, հետո՝ զարմացել, իսկ այնուհետև՝ գազա-
գել: Չինաստանի պատվիրակի հետ նա ցուցադրաբար լքել է կոմիտեի
լիազոր նիստը՝ մարտադաշտը թողնելով Բրիտանիային:

Նրա բացակայության ժամանակ Բրիտանիայի պատվիրակին հա-
ջողվում է Ազգերի լիգային համոզել, որ հավանություն տա «ձեռնասուն
վագր»՝ «Թմրանյութերի կենտրոնական խորհուրդ», ստեղծելու մասին
Նորին մեծության առաջարկություններին: Սույն խորհրդի գլխավոր
գործառույթը դիտավորյալ մշուշապատ ու սքողված բովանդակու-
թյամբ տեղեկանյութ հավաքելն էր: Իսկ թե ի՞նչ պիտի անեին այդ «տե-
ղեկանյութը», ոչ ոք չգիտեր: Ցնցված Փորտերը ԱՄՆ է վերադառնում
իրև ավելի իմաստնացած մարդ:

Բրիտանիայի հետախուզության գանձերից մեկն էր առասպելական հարստության տեր Վիլյամ Բինգհենը, որի ընտանիքի ներկայացուցչուհիներից մեկի լեռ ամուսնացել էր Բերինգ եղբայրներից մեկը: Տեսածս գրություններում ու փաստաթղթերում հաստատվում էր, որ Բերինգ եղբայրները կառավարել են «Ֆիլադելֆիայի քվակերներ» ընկերությունը և տիրել այդ քաղաքի անշարժ գույքի կեսին, ինչը հնարավոր էր դարձել Չինաստանում ափիոնի առևտրից Բերինգների կուտակած հարստության շնորհիվ: Մյուս հոգին, ում առատաձեռնորեն բարերարել է 300-ի կոմիտեն, Ստեֆան Ժիրարն էր, որի սերունդները ժառանգել են «Ժիրար բանկ և քրաստ»-ը:

Այն ընտանիքները, որոնց պատմությունը հյուսված է Բոստոնի պատմությանը, և որոնք երբեք չեն շփվի սովորական մարդկանցս հետ, սերտորեն կապված էին 300-ի կոմիտեի և Չինաստանում սրա արած գերշահութաբեր ափիոնի առևտրին: Բազում հայտնի ընտանիքների անունները գուգորդվում են տխրահռչակ «Հոնկոնգ էնդ Շանհայ բանկինգ քորպորեյշն» (HSBC) բանկի հետ, որը շարունակում է մնալ Չինաստանում ափիոնի առևտրից ստացվող միլիարդավոր դոլարների կլիրինգապալատը:

Բրիտանիայի Օստինդական ընկերության փաստաթղթերում հիշատակվում են այնպիսի նշանավոր անուններ, ինչպիսիք են Ֆորբսերը, Փերկինսները ու Հաթուեյները: Ամերիկական իսկական «կապույտ արյունի» սույն ներկայացուցիչները ստեղծել են «Ռասել ու Կ»-ն, որի հիմնական գործունեությունը ափիոնի առևտուրն էր: Սրանից բացի՝ նրանք վերահսկում էին Չինաստանից մինչև Աֆրիկա ձգվող թմրամատակարարման մյուս խողովակները, ինչպես նաև միջանկյալ բոլոր կետերը: Բրիտանիայի թագին ու ԲՕԻ՝ ընկ-ին մատուցած ծառայության համար 300-ի կոմիտեն 1833 թ. նրանց պարգևատրում է ստրկավաճառության մեղաշնորհով:

Բոստոնն իր մեծաշուք անցյալով պարտական է բամբակի, ափիոնի և ստրուկների առևտրին, որի իրավունքը 300-ի կոմիտեն էր շնորհել: Լոնդոնում արտոնության արժանացա ուսումնասիրելու որոշ փաստաթղթեր, որոնցից եզրակացվում է, որ Բոստոնի առևտրաընտանիքները ԱՄՆ-ում եղել են բրիտանական թագի գլխավոր հենարանը: «Հնդկաստանի գրասենյակի» փաստաթղթերում և Հոնկոնգի բանկային գրություններում Չոն Սերեյ Ֆորբսը հիշատակվում է որպես «Բոստոնի կապույտ արյունների» («Boston Blue Bloods») գլուխ:

Ֆորբսի տղան առաջին ամերիկացին էր, որին 300-ի կոմիտեն թույլ է տվել մասնակցելու «Հոնկոնգ էնդ Շանհայ բանկինգ քորպորեյշն» (HSBC)-ի խորհրդի նիստերին: Սա այսօր էլ աշխարհի ամենահարգի թմրաբանկն է: 1960-ական թթ. սկզբին, երբ Հոնկոնգ էի գնացել որպես Բրիտանիայի Օստինդական ընկերությանը հետաքրքրվող պատմա-

բան, ինձ ցույց տվին հին փաստաթղթեր, ներառյալ այդ նշանավոր բանկի անցյալի տնօրենների խորհուրդների անդամների ցուցակները. Ֆորբսի անունը, իհարկե՛, դրանց մեջ էր:

Այնքա՛ն հոչակավոր Փերկինսների ընտանիքը (որոնց անունները դեռևս ակնածալի շշուկով են արտասանվում) խորապես ներքաշված էր Չինաստանում արվող ափիոնի ստար ու կեդոտտ առևտրի մեջ: Փաստորեն ավագ Փերկինսը 300-ի կոմիտեում ընտրված առաջին ամերիկացիներից էր: Նրա տղա Թոմաս Նելսոնը Բոստոնում Մորգանի մարդն էր և, ըստ էության, նաև Բրիտանիայի հետախուզության գործակալը: Նրա անդուր, ես կասեի՝ գարշ անցյալով ոչ մեկը չհետաքրքրվեց, երբ նա շոայլ նվիրատվություն արեց Հարվարդի համալսարանին: Ի վերջո, Կանտանն ու Յյանցիկը Բոստոնից հեռու էին, և ո՞վ էր հետաքրքրվելու այնտեղ կատարվածով:

Փերկինսներին մեծապես օգնել է այն բանը, որ Մորգանը 300-ի կոմիտեի կզոր անդամ էր, ինչը Թոմաս Ն. Փերկինսին հնարավորություն էր տվել սրբնթացորեն մեծ հաջողության հասնելու Չինաստանում արվող ափիոնի առևտրի մեջ: Բոլոր Մորգաններն ու Փերկինսները Ֆարմասուցներ էին (ինչը նրանց կապող ևս մի թել էր), քանզի միայն քարձրաստիճան մատնը կարող էր 300-ի կոմիտեի կողմից ընտրված լինելու որևէ հույս ունենալ: Սրբ Ռոբերտ Հարտը, որը գրեթե 3 տասնամյակ եղել էր «Չինաստանի կայսերապետական մաքսային ծառայության» ղեկավարը (իմա՝ բրիտանական թագի N 1 գործակալը Չինաստանի ափիոնի առևտրի մեջ), հետագայում նշանակվել է Morgan Guarantee Bank-ի հեռավորարևելյան բաժանմունքի տնօրենների խորհրդի անդամ:

Լոնդոնում և Հոնկոնգում սլատակյան գրանցումներից օգտվելու իրավունքիս շնորհիվ կարողացա իմանալ, որ սրբ Բոբերտը մոտիկ հարաբերություններ է հաստատել Մորգանի՝ ԱՄՆ-ում գտնվող ընկերությունների հետ: Անհրաժեշտ է նշել, որ ափիոնի և հերոինի առևտրում Մորգանի ունեցած շահերը շարունակում են մնալ անփոփոխ: Սրա մասին է վկայում այն փաստը, որ Դավիդ Նյուրիզիկը Մորգանի հոնկոնգյան ընկերության խորհրդատվական մարմնի անդամ է, իսկ ընկերությունն էլ համատեղ ձեռնարկություն է, որի կեսը Ջարդին Մաթեսոնինն է:

Հոնկոնգը ճանաչողներին Նյուրիզիկի անունը ծանոթ է որպես Հոնկոնգի ամենաազդեցիկ անձի անուն: Բացի Մորգանի ընտրախավային բանկի տնօրենների խորհրդի անդամը լինելուց, Նյուրիզիկը Չինաստանի կառավարության խորհրդական է: Նյուրիզիկի համար մեկ է, թե ափիոնն ինչի՞՞ հետ է փոխանակվում՝ հրթիռային ճարտարարվեստի՞, ոսկո՞ւ, թե՞ արդի համակարգիչների: Բանկերի, ֆինանսական ու առևտրական ընկերությունների և դրանք կառավարող ընտանիքների կապերն այնքան միահյուսված ու խճճված են, որ Շերլոկ

Հովնսին էլ կշփոթեցնեին: Բայց և այնպես անհրաժեշտ է դրանք արձակել ու ծայրերը բռնած գնալ, եթե ուզում ենք հասկանալ նրանց կապերը թմրանյութերի առևտրի և 300-ի կամիտեի անդամ լինելու հետ:

Միացյալ Նահանգներ ուղեկից խմիչք ու թմրանյութ ներկրվելը այս իսկ «կապտարյուն Խովատակների» զբաղեցրած հենց նույն «ախառի» գործունեության արդյունքն էր: Նախ և առաջ հարկավոր էր ԱՄՆ-ում արգելել ուղեկից խմիչքները: Այս բանն անում են Բրիտանիայի Օստինդական ընկերության ժառանգորդները, որոնք գործում էին «Չինաստանի ներքին ներկայացուցչության» խնամքով կազմած ու պահած փաստաթղթերից (այժմ «Հնդկաստանի գրասենյակում» են) քաղած փորձի հիման վրա: Նրանք հիմնում են «Կանանց՝ չափավորության քրիստոնեական միությունը», որը պետք է խոչընդոտեր Ամերիկայում խմիչքի գործածությունը:

Ասում ենք, թե պատմությունը կրկնվում է, և որոշ իմաստով դա ճիշտ է. բայց այն կրկնվում է վերընթաց պարուրագծով: Այսօր իմանում ենք, որ հողագունդն աղտոտող ամենամեծ ընկերություններից ոմանք բնապառնական շարժման ամենամեծ հովանավորներն են: Եվ «մեծանուններն» իրենց «ուղերձն» են հղում: Արքայազն Ֆիլիպը սրանց հերոսներից մեկն է, սակայն նրա տղա Չարլզ արքայազնի Ուելսում ունեցած միլիոնավոր ակրանոց անտառներում կանոնավորապես արդյունաբերական հատումներ են կատարվում, և, սրանից բացի, արքայազն Չարլզը ամենախոշոր տերերից մեկն է Լոնդոնի ետնախորշային քաղերի, որտեղ աղտոտման մակարդակն ուղղակի սոսկալի է: 》

Իսկ «հարբեցողության արատի» դեմ բողոքողների վերաբերյալ իմանում ենք, որ նրանց դրամավորել են Աստորները, Ռոքֆելերները, Վանդերբիլտները, Սպելմաններն ու Վարբուրգները, որոնք խոշոր բաժին ունեին խմիչքի առևտրում: Բրիտանական թագի ցուցումով լարդ Բիվերբրուկը Անգլիայից գալիս է Ամերիկայի այդ հարուստ ընտանիքներին ասելու, որ նրանք պետք է «մոծվեն»՝ փող տան «Կանանց՝ չափավորության քրիստոնեական միությանը»: (Սա այն նույն լարդ Բիվերբրուկն է, որը 1940 թ. Վաշինգտոն էր եկել և Ռուզվելտին հրամայել մտնելու մի կովի մեջ, որն ըստ էության Բրիտանիայինն էր:)

Ռուզվելտը հրամանը կատարում է՝ Գրենլանդիայում տեղաբաշխելով ԱՄՆ-ի նավատորմը, որը Փիոլ Հարբորի դեպքից 9 ամիս առաջ հետևում էր գերմանական սուզանավերին և գրոհում դրանց վրա: Ռուզվելտը (ինչպես որ նրա հետևորդ Չորջ Բուշը) Կոնգրեսին նայում էր որպես զահլատար ճանճի և գործում էր թագավորի պես. և ուժգին էր նրա մեջ սույն զգացումը, քանզի ազգակցական հարաբերություններ ուներ թագավորական ընտանիքի հետ: Ֆ. Դ. Ռուզվելտը Կոնգրեսից երբեք թույլտվություն չի խնդրել իր ապօրինի գործողությունների համար: Բրիտանիան հենց սա՛նկատի ունի, երբ խոսում է «Ամերիկայի հետ ու-

նեցած առանձնահատուկ հարաբերությունների» մասին:

Թմրառևտուրը կապ ունի նախագահ Ջոն Բ. Քենեդիի սպանության հետ: Այս նողկալի գործը խայտառակ է անում ազգին և կշարունակի անել, քանի դեռ արդարադատությունը տնօրինում են հանցագործները: Ապացույցներ կան, որ սրան ՀԿՎ-ի միջոցով մասնակցել է մաֆիան՝ հիշեցնելով, որ այդ ամենն սկսվել է Մեյեր Լանսկիի հին ցանցից: Մեծանալով ցանցը դառնում է «Իրգուն» կոչվող ահաբեկչական կազմակերպությունը, իսկ Լանսկին էլ՝ Արևմուտքի դեմ մշակութային պատերազմ վարելու գծով լավագույն գործակալներից մեկը:

Ավելի պատկառելի միջնորդների օգնությամբ Լանսկին Բրիտանիայի բարձր խավերի հետ կապված էր իր և Բրիտանիայի ՄԻ-6 հետախուզական ծառայության համատեղ առևտրային ձեռնարկություն The Mary Carter Paint Company-ի քողարկացուցանակի ներքո Դրախտակոզում (Բահամյան կղզիներ) թմրանյութեր տարածելու և մոլախաղեր զարգացնելու գործով: Ձեռնարկության տնօրեն լուրջ Սեսոնը հետազայում սպանվում է, որովհետև քաշում էր եկամուտների սերը և սպառնում բողոքին մատնել, եթե իրեն ձեռք տան: Ռեյ Վոլֆը, որը ներկայացնում էր Բրոնֆմաններին, ավելի լուրջ մարդ էր: Թեև Բրոնֆմանները չեն մասնակցել Չերչիլի «Nova Scotia Project» խոշորածավալ ձեռնարկությանը, սակայն եղել և մնում են Բրիտանիայի թագավորական ընտանիքի կարևոր գործակալները թմրանյութերի առևտրի ասպարեզում:

Մեյեր Լանսկիի մերձավոր զինակից Սեմ Ռոթբերգն աշխատել է նաև Թիբոր Ռոզենբաումի և Փինչաս Սապիլիի հետ. երեքն էլ առանցքային դեմքեր էին Լանսկիի թմրագործարարության մեջ: Ռոզենբաումը Շվեյցարիայում վարում էր փողավացքի գործառնությունները Bangué du Crédit International-ի միջոցով, որը հիմնել էր հենց այդ նպատակով: Մա արագորեն ընդլայնում է իր գործունեությունը և դառնում Լանսկիի ու նրա օգնական զանգստերների գլխավոր բանկը՝ մարմնավաճառությունից, թմրանյութերից և մաֆիայի բռնաշորթումներից ստացված փողերը լվալու համար:

Հարկավոր է նշել, որ Թիբոր Ռոզենբաումի բանկն օգտագործվել է Բրիտանիայի հետախուզության սովերային պետ սրբ Վիլյամ Ստեֆենսոնի կողմից, որի աջ ձեռքը՝ Կանադայի քաղաքացի մայր Ջոն Մորիտիմեր Բլումֆիլդը, Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ գլխավորել է Հետաքննությունների դաշնային բյուրոյի 5-րդ բաժինը: Ստեֆենսոնն այն առաջիններից էր, որոնք XX դարում դարձան 300-ի կոմիտեի անդամներ. իսկ Բլումֆիլդն այդպես էլ դրան չհասավ: Ինչպես ցույց են տվել Քենեդիի սպանության մասին իմ հոդվածաշարում, հենց Ստեֆենսոնն է գաղտնի դեկավարել այդ գործառնությունը, որը մշակվել էր Բլումֆիլդի դեկավարությամբ: Քենեդիին սպանելու գործառնության քողարկումն իրագործել է թմրանյութերի

հետ կապված մի այլ կազմակերպություն՝ «Արդյունաբերական մշտական ցուցահանդեսը» (PERMINDEX), որն ստեղծվել էր 1957 թ. և տեղավորվել Նոր Օռլեանի կենտրոնում գտնվող «Համաշխարհային առևտրական շուկա» (World Trad Mart) ընկերության շենքում:

Բլումֆիլդը նաև Բրոնֆմանների ընտանիքի փաստաբանն էր: «Համաշխարհային առևտրական շուկա» ընկերությունը ստեղծել են գնդապետ Էլեյ Շոուն և Նոր Օռլեանի ՀԴԲ-ի (FBI) 5-րդ բաժնի պետ Գի Բանիստերը: Շոուն և Բանիստերը մոտիկից ծանոթ էին Քենեդիի սպանության մեջ մեղադրվող Լի Հարվի Օսվալդի հետ, որին սպանեց ՀԿՎ-ի վարձու գործակալ Ջեյ Ռուֆին՝ մինչ Օսվալդը կհասցներ ապացուցել, որ Քենեդիի վրա կրակողը ինքը չի եղել: Հակառակ Ուորենի հանձնաժողովի կարծիքի և պաշտոնական բազմաթիվ զեկուցումների, ԱՅԴՊԵՍ ԷԼ ՉԻ ՀԱՍՏԱՍՎԵԼ ոչ այն բանը, թե Օսվալդն է «Մանլիհեր» հրացանի՝ սպանության ենթադրյալ գործիքի (ինչը չի համապատասխանում իրականությանը) տերը, ոչ էլ այն բանը, թե նա է դրանով կրակել: Թմրանյութերի առևտրի, Շոուի, Բանիստերի ու Բլումֆիլդի կապը հաստատվել է բազմիցս, և ոչ մի անհրաժեշտություն չկա այստեղ նորից շոշափելու այդ հարցը:

Երկրորդ աշխարհամարտից անմիջապես հետո փողավացքի ամենատարածված գործելակերպերից մեկը, որ կիրառում էին Resorts International-ը և քնրառևտրի հետ կապված մյուս ընկերությունները, կանխիկ գումարը սուրհանդակի միջոցով կեղտոտ փող լվալու մեջ վարպետացած բանկ ուղարկելն էր: Հիմա ամեն ինչ փոխվել է: Միայն մանրմունը ձկներն են դեռևս այդ փտանգավոր գործելակերպին դիմում: Խոշոր ձկները իրենց փողերն անցկացնում են CHIPS-ով (հապավումն է Clearing House International Payment System-ի՝ Միջազգային վճարումների համակարգի հաշվարկապալատի), որն ստեղծվել է Նյու Յորքում գտնվող «Բերրոուզ» (Berroughs) համակարգչային կառույցի հիման վրա: Սույն կառույցն օգտագործում են 12 խոշորագույն բանկեր: Դրացից մեկը HSBC-ն է, մյուսը՝ Credit Suisse-ը («Շվեյցարական վարկը»), որն առաջին հայացքից օրինավորության տիպար է բանկային գործում, եթե չխորանանք նրա գործառնությունների իսկության մեջ:

Վերոհիշյալների և Վիրջինիայի նահանգում խարսխված SWIFT-ի («Society for World Interanational Financial Transfers»-Միջժողովրդական համաշխարհային ֆինանսափոխանցումների ընկերություն) համակարգի զուգակցության շնորհիվ կեղտոտ փողերը դառնում են անտեսանելի: Միայն բացահայտ անփութությունն է ժամանակ առ ժամանակ ՀԴԲ-ի (FBI) ձեռքը սրս գցում. բայց սա միայն այն դեպքում, եթե նրան չեն հրամայում չտեսնելու տալ: Փաստական ապացույցների հիման վրա բռնագրավում են միայն ցածր շարակարգի (եշելոնի) քնրագործիչների փողը: Իսկ վերնախավը՝ Drexel Burnham-ը, Credit Suisse-ն,

HSBC-ն, խույս է տալիս մերկացումից: Բայց այս իրավիճակը հնարավոր է, որ փոխվի Banc of Credit and Commerce International (BCCI)-ի փլուզումով, որի հետևանքով կարող են թմրառևտրի մասին շատ փաստեր մեջտեղ գալ, եթե, իհարկե, պատշաճ հետաքննություն կատարվի:

300-ի կոմիտեի ամենաարժեքավոր ունեցվածքներից մեկը American Express (AMEX) ընկերությունն է: Սրա նախագահները կանոնավորապես տեղեր են ունենում 300-ի կոմիտեում: AMEX-ով առաջին անգամ հետաքրքրվեցի մի գործ քննելիս, որն ինձ տարավ Ժնևում գտնվող Trade Development Bank («Առևտրի զարգացման բանկ»): Հետագայում սա մի ամբողջ կույտ տիաճություններ պատճառեց ինձ: Հայտնաբերել էի, որ այս «Առևտրի զարգացման բանկը», որի գլխավորն այն ժամանակ Էդմունդ Սաֆրան էր՝ «ուսկի - ափիոն» տեսակի առևտրական գործառնությունների մեջ առանցքային մի անձ, տոննաներով ոսկի է մատակարարում Հոնկոնգի շուկային:

Շվեյցարիա ուղևորվելուց առաջ Պրետորիա (Հարավ-Աֆրիկյան Հանրապետության մայրաքաղաքը) մեկնեցի, որտեղ հանդիպումներ ունեցա դոկտոր Զրիս Ստալսի հետ, որն այդ ժամանակ «Հարավաֆրիկյան պահուստային բանկի» կառավարչի տեղակալն էր: Բանկը վերահսկում էր Հարավային Աֆրիկայի ոսկուն վերաբերյալ բոլոր մեծածախ գործարքները: Շաբաթվա ընթացքում մեր ունեցած մի քանի խոսակցությունից հետո ինձ ասվեց, որ բանկը չի կարող ինձ վաճառել 10 տոննա ոսկի, որը լիազորված էի գնելու ներկայացրածս ենթադրյալ գնորդների անունից: Համապատասխան տեղերում աշխատող բարեկամներս գիտելին ինչպես պատրաստել կասկած չհարուցող փաստաթղթեր:

Պահուստաբանկն ինձ ուղարկեց Շվեյցարական մի ընկերություն, որի անունը տալ չեմ կարող քուլարկման պայմանները չխախտելու համար: Ինձ տվեցին նաև Ժնևի «Առևտրի զարգացման բանկի» հասցեն: Փորձիս նպատակը այն մեխանիզմը բացահայտելն էր, թե ինչպես է վաճառվում և տեղափոխվում ոսկին, և, երկրորդ, ստուգել այն կեղծ փաստաթղթերը, որոնք ինձ համար պատրաստել էին նման գործերի մեջ մասնագիտացած նախկին հետախույզ բարեկամներս: Հիշո՞ւմ եք «Ջեյմս Բոնդ» նկարաչարի «Մ»-ին: Թույլ տվեք ձեզ հավատացնել, որ «Մ»-ն իրոք կա, միայն թե նրա իսկական անվանատառը «Մ» է: Մոսիս փաստաթղթերը բաղկացած էին Լիխտենշտեյնյի ընկերությունների «տված» «գնման օրդերներից» և սրանք հաստատող համապատասխան թղթերից:

Երբ դիմեցի «Առևտրի զարգացման բանկ» (Trade Development Bank), այդտեղ ինձ սկզբում սրտանց ողջունեցին, սակայն բանակցությունների առաջխաղացման հետ կասկածոտությունն սկսեց մեծանալ, և ես, զգալով, որ ինձ համար արդեն անվտանգ չէ բանկ այցելելը, առանց բանկում բան ասելու, հեռացա Ժնևից: Հետագայում այս բան-

կը վաճառեցին American Express ընկերությանը: Սա կարճատև ստուգման ենթարկվեց ԱՄՆ-ի նախկին գլխավոր դատախազ Էդվին Միզի կողմից, որից հետո նա պաշտոնից արագորեն հեռացվեց և «ծախված» (կոռուպցիոներ) հայտարարվեց: Ես պարզեցի, որ American Express-ը միշտ եղել է թմրափող վալու խողովակ, և ո՛չ մեկը չկարողացավ ինձ բացատրել, թե այս մասնավոր ընկերությունն ինչու՞ դուրս տպելու իրավունք ունի: Դուրսներից չե՞ն կարվել այս Express - ճեպընթացի ուղեգորգերը: Հետագայում ես մերկացրի Սաֆրայի և American Express-ի միջև եղած կապն ու նրանց մասնակցությունը թմրառևտրին: Այս բանը շատերին վշտացրեց, ինչպես որ կարելի էր ենթադրել: 300-ի կոմիտեի անդամ Ջեֆետը կատավարում է Charterhouse Japhet ընկերությունը, որն իր հերթին վերահսկում է Jardine Matheson ընկերությանը, որովհետև սա աղյու էր է դեպի Հոնկոնգի թմրառևտուր: Ջեֆետները, ինչպես ասում են, անգլիական քվակերներ են: Մաթեանների ընտանիքը, որի անդամները նաև 300-ի կոմիտեի անդամներ են, Չինաստանի ափիոնի առևտրի բեմում գլխավոր դերակատարն էր համենայն դեպս մինչև 1943 թ.: XIX հարյուրամյակի սկզբից սկսած Մաթեանները մշտապես նշվել են Անգլիայի թագուհու Պատվո ցուցակում:

300-ի կոմիտեի բարձրագույն կարգադրիչներին խիղճը չի տանջում, որ ամեն տարի բյուրավոր մարդկանց կյանք են խորտակում: Նրանք գնոստիկներ են, կաթարներ, Դիոնիսոսի, Օսիրիսի կամ սրանցից վատթար պաշտամունքների անդամներ: Սրանց համար «սովորական» մարդիկ գոյություն ունեն սոսկ որպես իրենց նպատակներին հասնելու միջոց: Սրանց քահանայապետեր Բուլվեր-Լիտտոնը և Օլդոս Հաքսլին թմրանյութերի ավետարան են քարոզում՝ դրանք ներկայացնելով իբրև օգտակար բաներ: Միջաբերենք Հաքսլիի՝ ասածը.

«Իսկ ամենօրյա անձնական օգտագործման համար միշտ էլ եղել են քիմիական թունավորիչներ: Բուսական բոլոր սեղատիվները (հանգստացնող դարմանները) և քնաբերները (ցավամոքիչները), ծառերի վրա աճող էյֆորիկները (արբեցանյութերը), հատապտուղներում հասանացող պատրանքածինները (հայուցինոզենները) մայրիկ գործածել են անհիշելի ժամանակներից: Եվ գիտակցությունը փոխող այդ դեղամիջոցներին ժամանակակից գիտությունն ավելացրել է սինթետիկ նյութերի իր գունաշարը (գամման): Արևմուտքն անսահմանափակ գործածության համար թույլ է տվել միայն ոգելից խմիչքն ու ծխախոտը: Այս Պատի մյուս բոլոր քիմիական դոզներին փակցված է ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐՐ հայտարարությանը»:

¹ Անգլիացի գրող (1894-1963). արձածել է կրոնաբարոյական խնդիրներ: Առջևում հիշատակված փիլիսոփա Հաքսլին է, որը Ըվեյցարիայից թմրանյութ էր կրել Ամերիկա (Վ. Ա.):

300-ի կոմիտեի խմբիչխանների ու փողիչխանների համար թմրանյութերը լուծում են երկու խնդիր. նախ՝ բերում են վիթխարագումար փող, ապա՝ ժողովրդին վերջնականապես դարձնում են անխտի թմրագոմբիների՝ զանգված, որին ավելի հեշտ կլինի կառավարել, քան թմրանյութի կարիք չզգացող մարդկանց, որովհետև ընդվզելու դեպքում կպատժեն՝ պարզապես դադարեցնելով հերոինի, կոկաինի, մարիխուանայի և մյուս թմրամիջոցների մատակարարումը:

Սրան հասնելու համար անհրաժեշտ է օրինականացնել թմրանյութերի վաճառքը, որովհետև ՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ կլիրարկվի՝ հենց որ տնտեսական բարդ պայմանները (որոնց նախանշանը 1991 թ. ճգնաժամն է.) թմրանյութերի կտրուկ պահանջարկ հարուցեն այն բանին համապատասխան, երբ հազարավոր մշտական գործազուրկներ սկսեն թմրանյութ գործածել մխիթարվելու համար:

Միջազգային գործերի թագավորական ինստիտուտի հույժ գաղտնի հողվածներից մեկում այս բեմարքը (սցենարը) շարադրված է հետևյալ կերպ.

«...Չգոհանալով քրիստոնեությունից և ապրելով լայնասփյուռ գործազրկության պայմաններում՝ հինգ ու ավելի տարի անգործ մնացածները երես կթեքեն եկեղեցուց և մխիթարություն կփնտրեն թմրանյութերի մեջ: Հենց այդ ժամանակ պետք է լիակատար վերահսկողություն հաստատվի թմրանյութերի առևտրի վրա, որպեսզի մեր իրավասության ներքո գտնվող բոլոր երկրների կառավարությունները ՄԵՆԱՇՆՈՐՀ ունենան, ինչը մենք կկառավարենք մատակարարման միջոցով... Թմրանյութի բարերը կհոգան անհնազանդների ու դժգոհների մասին, հեղափոխական ոգի ունեցողները կվերածվեն սեփական կամք չունեցող անվնաս թմրամուկների...»:

Բովականաչափ ապացույցներ կան, որ ԱՄՆ-ի Հետախուզության կենտրոնական վարչությունը և Բրիտանիայի հետախուզությունը, հատկապես ՄԻ-6-ը, առնվազն 10 տարի է, ինչ աշխատում են, որ իրականացնեն այդ նպատակը:

Միջազգային գործերի թագավորական ինստիտուտը Օլդոս Հաքսլիի և Բուլվեր-Լիտտոնի² կյանքի ողջ աշխատանքն օգտագործել է որպես

¹ Թմրանյութի ազդեցությանը գոմբիի վերածված մարդ: Չոմբին գուրկ է անցյալի հիշողություններից ու սեփական կամքից և ենթարկվում է ուրիշի կամքի իշխանությանը: Նման է Չինգիզ Այթմատովի մանկությունին (Վ. Ա.):

² Անգլիացի գրող (1803-73), փիլիսոփա, պատմաբան բարոյագետ, քաղաքական գործիչ: Եղել է Անգլիայի Պառլամենտի անդամ, նախարար: Գեղարվեստական երկերից լավագույնը «Պոմպեյի վերջին օրերը» պատմավեպն է: Հայտնի է լորդ Լիտտոն անունով (Վ. Ա.):

ծրագիր՝ մարդկությանն այնպիսի փճակի հասցնելու համար, երբ անձն այլևս սեփական կամք չի ունենա Համաշխարհային նոր կարգի և արագորեն մոտեցող Խավար նոր դարի պայմաններում: Եկեք սեսնենք, թե այդ մասին ինչ է ասում «քահանայապետ» Օլդոս Հաքսլին.

«Քաղաքակրթության զանազան մակարդակների վրա գտնվող բազում հանրություններում փորձեր են արվել համատեղելու թմրամիջոցներով արբենալն ու աստվածային արբեցումը: Հին Հունաստանում, օրինակ, էթիլասպիրտն իր տեղն ուներ պաշտոնական կրոնում: Դիոնիսոսը, որին հաճախ Բաքոս ենք կոչում, իսկական աստվածություն էր: Քիմիական միջոցներով գիտակցության փոփոխումն իսպառ արգելելը կարող է ամրագրվել օրենսդրաբար, բայց անկարելի է մարդկանց վզին փաթաթել ստիպողաբար»: (ԿԱՊԻՏՈԼԻՈՒՄԻ ԲԼՐԻ [ԱՄՆ-ի Կոնգրեսի] ԹՄՐԱՆՅՈՒԹԱՅԻՆ ԱՌԳՈՐԾՉԱՆՈՒ (լոբբի) ԼԵԶՈՒՆ Է):

«Եկեք հիմա քննության առնենք թմրանյութի մի այլ տեսակ, - շարունակում է Հաքսլին, - որը դեռևս չի հայտնագործվել, բայց գուցե արդեն հայտնագործվելու շեմին է: Այս թմրատեսակը մարդկանց երջանիկ է դարձնում այնպիսի իրավիճակներում, որոնց մեջ նրանք սովորաբար դժբախտ են լինում: (Կարո՞ղ է լինել աշխատանք փնտրող, բայց չգտնող մարդուց ավելի դժբախտը:) Այսպիսի թմրատեսակը կլինեք օրինություն, սակայն սոցիալական ու քաղաքական լուրջ վտանգներով հղի օրինություն: Անվնաս արբեցանյութերը [էյֆորիա՝ իրականությամբ չարդարացված անխտով, արտասովոր լավ տրամադրություն հարուցող նյութերը - Վ. Ա.] մատչելի դարձնելով՝ որևիցե դիկտատոր (իմա՝ 300-ի կոմիտեն) կկարողանա ողջ բնակչությանը համակերպել այնպիսի կացության, որին իրեն հարգող մարդը չպետք է համակերպվի»:

Միանգամայն տրամախոսական գլուխգործոց է: Այս բանը, որ պաշտպանում է Հաքսլին, և որը 300-ի կոմիտեի ու նրա փոխարինիչ (սուռոզատ) ՄԳԹԻ-ի պաշտոնական քաղաքականությունն է, կարելի է պարզապես բնորոշել որպես զանգվածների գիտակցության վերահսկողություն և կառավարում: Ինչպես հաճախ ասել են, **բոլոր պատերազմները մարդկանց հոգիները խլելու՝ կործանելու համար են մղվում:** Չենք գիտակցում, որ թմրանյութերի առևտուրը համայն մարդկության դեմ ոչ սովորական գործելակերպերով մղվող մարմանդ, անթեղված պատերազմ է: Այս անսովոր պատերազմը ամենավտանգավոր ձևն է

¹ Թմրանյութերի ազատ վաճառքն իրականացնելու համար գործող խմբեր: Առգործչանին՝ լոբբին (անգլերեն lobby կուլուարներ՝ կողասրահներ), օրենսդրական մարմնին առընթեր գրասենյակների ու գործակալությունների համակարգ է, որը զանազան միջոցներով, այլև կաշառքով ներսզդում է օրենսդիրների և պետական աստիճանավորների վրա՝ եօգուտ որևէ որոշման կամ օրենքի ընդունման (Վ. Ա.):

կովի, ինչը մի անգամ որ սկսվեց, այլևս չի ավարտվի:

Ոմանք կարող են կասկածելի համարել թագավորական ընտանիքի մասնակից լինելը թմրանյութերի առևտրին: Այս բանը թերթերում տպված տեսնելը անհեթեթ կերևար, և մեր օրերում այն հաճախ ներ-կայացվում է հենց այդպես՝ անհեթեթ: Հետախուզության մի շատ հին կանոն ասում է. «Եթե ուզում եք մի բան թաքցնել, դրեք ամենաաչքի ընկնող տեղում»:

1876 թվականին հրապարակված Ֆ.Ս.Թյորնթերի «ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԱՓԻՈՆԱՅԻՆ ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ» (F.S. Turner, British Opium Policy) գիրքը ցույց է տալիս, որ Բրիտանիայի միապետությունը և թագավորական ընտանիքի հացկատակ ազգականները շատ խոր են մտած եղել ափիոնի առևտրի մեջ: Թյորնթերը «Ափիոնի առևտուրը դադարեցնելու անգլա-արևելյան ընկերության» քարտուղարն էր: Նա մերժում էր թագի ներկայացուցիչ սըր Ռ. Թեմպլի առաջադրած լուելու պահանջը: Թյորնթերը պնդում էր, որ կառավարությունը, հետևաբար նաև թագը պետք է հրաժարվեն ափիոնի մենաշնորհից, և եթե ինչ-ինչ եկամուտներ էլ ընդհանրապես ստանալու լինեն, ապա պիտի ստանան միայն այն, ինչ բխում է հարկերից, որոնք ազնվորեն պետք է օգտագործվեն որպես գալիչ ուժ:

Թյորնթերին պատասխանել է միապետության ներկայացուցիչ լորդ Լոուրենսը, որը պայքարում էր ԲՕԻՂԿ-ի մենաշնորհը կորցնելու դեմ. «Ցանկալի կլիներ ազատվել մենաշնորհից, բայց անձամբ ես հակված չեմ փոփոխություններ նախաձեռնողը լինելու: Եթե դա լուկ համեստ վնասներ կրելու հարց լիներ, սրունք կարող ենք մեզ թույլ տալ, ապա ես առանց տատանվելու անհրաժեշտ միջոցներ կձեռնարկեի»: (Վերցվել է Կալկաթայի 1870 թ. թերթերից:)

1874 թ. սկսվում է թեժանալ պայքարը Չինաստանում ափիոնի առևտրի մեջ Բրիտանիայի միապետության և արխատկրատիայի մխրճված լինելու դեմ: «Ափիոնի առևտուրը դադարեցնելու անգլա-արևելյան ընկերությունը» հաստատակամորեն հարձակվում էր այն ժամանակվա արխատկրատիայի վրա և անվեհերաբար ուժգնացնում իր գրոհները. մի օրինակ, ինչին անհրաժեշտ է, որ հետևենք: Ընկերությունը համարում էր, որ Տյանցինի պայմանագիրը, ինչը Չինաստանին ստիպել էր համաձայնելու հսկայական քանակությամբ ափիոն ներմուծելուն, ստոր հանցագործություն էր չին ժողովրդի դեմ:

Ասպարեզ է գալիս մի հզոր ռազմիկ՝ մասնագիտությամբ փաստաբան Ջոզեֆ Գրանդի Ալեքսանդերը, որը 1866 թ. գլխավորել էր Չինաստանում բրիտանական թագի վարած ափիոնաքաղաքականության դեմ ուժգին գրոհը: Սրա ընթացքում նա բացեփրաց հիշատակել էր թագավորական ընտանիքի և արխատկրատիայի մասնակցությունը ափիոնի առևտրին: Ալեքսանդերն առաջին անգամ ի լուր ամենքի բացա-

հայտել էր «Քազի գանձի»՝ Հնդկաստանի իսկական դերը այդ ամբողջ գործում: Նա մեղադրել էր հենց նրանց, ում պետք էր, այն է՝ միապետությանը, այսպես կոչված արիստոկրատիային և Բրիտանիայի կառավարության միջի նրանց ծառաներին:

Ալեքսանդերի ազդեցությամբ հասարակությունը պարտավորություն է ստանձնում դադարեցնելու Բենգալիայի (Հնդկաստան) ափիոնակակաչի մշակությունը: Նա անձնվեր մարդ էր, անվախ ու անբասիր ուսման: Պայքարի մեջ նրա առաջնորդ լինելու շնորհիվ թմրախստության գործառնությունները դառնում են անվճռական. Ալեքսանդերը բացարձակորեն էր դիմակազերծում թագավորական ընտանիքին ու նրա հացկատակներին: Պառլամենտի՝ պահպանողականներից, տրեյդունիստներից ու լեյբորիստներից ընտրված մի քանի անդամներ սկսում են հանդես գալ ի պաշտպանություն Ալեքսանդերի:

Լորդ Քիմբերլին՝ թագավորական ընտանիքի ներկայացուցիչը և ամենագորեղ խմբիչխանը, սպառնում է, որ «ազգային առևտրին» դիպչելու յուրաքանչյուր փորձ կբախվի կառավարության լուրջ հակազործությանը: Ալեքսանդերն ու նրա ընկերությունը, հակառակ անհամար սպառնալիքներին, շարունակում են իրենց գործունեությունը: Պառլամենտը վերջապես համաձայնում է «Ափիոնի առևտուրը հետաքննող թագավորական հանձնաժողով» կարգել, որի ղեկավարը պիտի լիներ Հնդկաստանի գործերի նախարար լորդ Քիմբերլին: Դժվար թե ճարվեր ավելի անհամապատասխան անձնավորություն այդ հանձնաժողովի գլուխ կանգնեցնելու համար:

Իր առաջին հայտարարության մեջ լորդ Քիմբերլին հասկացնում է, որ ավելի կնախընտրի թողնել իր բարձր պաշտոնը, քան կհամաձայնի «հնդկական ափիոնի եկամուտներից» հրաժարվելու բանաձևին: Պետք է նշել, որ «հնդկական ափիոնի եկամուտներ» ասելով՝ հասկանում էին այն փողերը, որոնք իբրև թե օգտագործվում էին Անգլիայի ողջ ժողովրդի բարօրության համար: Սա նույնպիսի սուտ է, ինչպիսի սուտ է այն բանը, թե ոսկու և ադամանդի վաճառքից գոյացող վիթխարի շահույթներից Հարավային Աֆրիկայի ժողովուրդը բաժին ունի: Հնդկական ափիոնից ստացված եկամուտը մտնում էր ուղիղ արիստոկրատների, խմբիչխանների և պյուտոկրատների (փողիչխանների) գանձապահարաններն ու գրպանները և նրանց դարձնում միլիարդատերեր:

Ռոունտրիի «ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐԻ ԿԱՅՍԵՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ» գիրքը մի ուշագրավ հաշվետվություն է այն մասին, թե Անգլիայի վարչապետ Գլադստոնը և նրա համախոհ պյուտոկրատները ինչպես են ստել, խարդախել, աղվեսություն արել, սուտմեռուկի տվել [հիշեք պլուտ բառի բացատրությունը - Վ. Ա.], որ հասարակությունից թաքցնեն ափիոնի առևտրի մեջ Բրիտանիայի միապետության խրված

լինելը: Ռոուներիի գիրքը տեղեկությունների հանք է Անգլիայի թագավորական ընտանիքի և արիստոկրատիայի՝ ափիսոսի առևտրի մեջ մխրճված լինելու, այլև այն վիթխարի հարստությունների մասին, որ նրանք դիզել են ափիսոս ծխող շինացիների տառապանքների հաշվին:

Հետաքննիչ հանձնաժողովի քարտուղար լորդ Քիմբերլին անձամբ խորը մխված էր ափիսոսի առևտրի մեջ, ուստի ձեռքից եկածն անում էր, որ հետաքննություն չլինի ճշմարտությունը փնտրողների համար: Ի վերջո, ընկնելով հանրության ուժգին ճնշման տակ, թագավորական հանձնաժողովը հարկադրվում է դուռը փոքր-ինչ բացել այդ հետաքննության առաջ: Այդպիսով հայտնի է դառնում, որ երկրի ամենաբարձրաստիճան դեմքերը ափիսոսի առևտուր են անում և հսկայական շահույթներ ստանում: Բայց այդ դուռը շուտ փակում են, և թագավորական հանձնաժողովը ոչ մի փորձագետ չի կանչում որպես վկայի: Դրանից հետո հանձնաժողովն աշխատում է մի անհեթեթորեն կարճ ժամանակ, ապա իսպառ դադարեցնում է իր գործունեությունը: Այդ հանձնաժողովն այլ բան չէր, եթե ոչ զավեշտախաղ ու քողարկացուցանակ, ինչին արդեն վարժվել ենք 20-րդ դարի Ամերիկայում:

ԱՄՆ-ի «արևելյան ազատական տիրախավի» ընտանիքները ճիշտ նույն կերպ, ինչպես բրիտանացիք, խոր արմատներ էին գցել Չինաստանում կազմակերպված ափիսոսի առևտրի մեջ: Այդ դյուրությունն այսօր էլ պահպանվում է: Սրա վկայությունը մոտանցյալ այն պատմությունն է, երբ ԱՄՆ-ի նախագահ Ջեյմս Էրլ Քարտերը գահից գցեց Իրանի շահին: Ինչո՞ւ համար ԱՄՆ-ի կառավարությունը շահին ասպարեզից հեռացրեց և հետո սպանեց: Պատասխանը մի բառ է՝ ԹՄԲԱՆՅՈՒԹԵՐԻ: Շահը սահմանափակել էր դրանց շրջանառությունը և վերջ էր տվել անչափ շահութաբեր ափիսոսի առևտրին, որն Իրանում վալում էին բրիտանացիները: (Այն ժամանակ, երբ շահն իր հսկողության տակ առավ Իրանը, երկրում արդեն մեկ միլիոն ափիսոսամուլ ու հերոինամուլ կար:)

Այս բանը բրիտանացիք հանդուրժել չէին կարող, ուստի Միացյալ Նահանգներին մղեցին իրենց փոխարեն անելու կեղտոտ աշխատանքը՝ հանուն երկու երկրների միջև եղած «առանձնահատուկ հարաբերությունների»: Երբ Հոմեյնին գրավեց Թեհրանում գտնվող ԱՄՆ-ի դեսպանատունը, ԱՄՆ-ից կատարվող զինամատակարարումները, որոնք սկսվել էին դեռևս շահի օրոք, չդադարեցվեցին: Ինչո՞ւ: Եթե ԱՄՆ-ն այդ աներ, Հոմեյնին կարգելեր իր երկրում Բրիտանիայի ունեցած ափիսոսի առևտրի մենաշնորհը: Այս տեսակետը հաստատելու համար մատնանշենք հետևյալ փաստը. 1984 թվականից հետո ափիսոսի առևտրի հանդեպ Հոմեյնիի անհարկի ներողամտությունը հանգեցրեց այն բանին, որ թմրամուլների թիվը հասավ 2 միլիոնի (ըստ ՄԱԿ-ի և Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների):

Ինչպես նախագահ Քարտերը, այնպես էլ նրա հետևորդ Ռոնալդ Ռեյգանը, գիտակցաբար և լիովին պատկերացնելով, թե ինչ է բախտախաղի դրվում, շարունակում են Իրանին գենք մատակարարել նույնիսկ այն ժամանակ, երբ ամերիկացի պատանդները տատապում էին գերության մեջ: 1980-ին «Ի՞նչ է իրոք տեղի ունեցել Իրանում» վերնագրով մի հետազոտություն գրեցի, որը շարադրված է փաստերի հիման վրա: Իրանի հետ կատարվող գենքի առևտրի պայմանագիրը ձևակերպվել է 300-ի կոմիտեի ծառա Սայրուս Վենսի և դոկտոր Հաշեմիի հանդիպման ժամանակ, որից հետո ԱՄՆ-ի ռազմաօդային ուժերն անհապաղ սկսում են գենք փոխադրել Իրան, ինչը չի դադարեցվում պատանդների [ԱՄՆ-ի դեսպանատան աշխատակիցների] առնչությամբ ծագած ճգնաժամի անգամ թեժ պահին: Չենքը կրվում էր Գերմանիայում ԱՄՆ-ի ունեցած պաշարներից, իսկ որոշ մասնակներ (պարտիաներ) էլ ինքնաթիռներով առաքվում էին անմիջաբար Սիացյալ Նահանգներից. ընդամին փոխադրանին լրացավորվում էր Ազորյան կղզիներում:

300-ի կոմիտեի կողմից Իրանի իշխանության գլուխ կարգված Հոմեյնիի օրոք ավիանի արտադրությունը շեշտակիորեն ավելանում է: Առ 1984 թ. Իրանում տարեկան արտադրվում էր ավելի քան 650 տոննա ավիան: Քարտերն ու Ռեյգանը ամեն ինչ արել էին, որ ավիանի առևտրի մեջ հետագա խաչընդդուտներ չլինեն, և կատարել էին Բրիտանիայի խմբիշխանական ընտանիքների կողմից այդ առթիվ իրենց տրված հանձնարարությունը: Շատ չանցած Իրանը արտադրվող ավիանի քանակով սկսեց մրցակցել «ուկե եռանկյունու» հետ:

Շահը 300-ի կոմիտեի միակ գոհը չէր: ԱՄՆ-ի Հետախուզության կենտրոնական վարչության Բեյրութի բաժնի պետ Վիլյամ Բաքլին, լավատեղյակ չլինելով, թե ովքեր են կանգնած ավիանի առևտրի թիկունքին, սկսում է հետաքննություն կատարել Իրանում, Լիբանանում և նույնիսկ Պակստանում: Այս «ուկե եռանկյունու» շրջանում և Պակստանում ավիանի ուճացող առևտրի մասին մերկացուցիչ գեկուցագրեր է ուղարկում Լենգլի: Իսլամաբադում գտնվող ԱՄՆ-ի դեսպանատունը հրկիզում են, քայց Բաքլին հաջողում է խույս տալ ամբոխի ձեռքից և վերադառնում է Վաշինգտոն, քանի որ նրա քողարկացուցանակը բացահայտվել էր անհայտ ուժերի կողմից:

Այնուհետև մի շատ տարօրինակ բան է կատարվում: Հակառակ բուլլի այն կանոնների, որոնք ՀԿՎ-ն սահմանել էր իր գործակալի քողարկացուցանակը բացվելու դեպքերի համար, Բաքլին նորից Բեյրութ են ուղարկում: Դրանով ՀԿՎ-ն նրան փաստորեն մահվան է դատապարտում, որ ձայնը կտրի: Եվ դատավճիռն այս անգամ ի կատար է ածվում: Բաքլին փախցնում են 300-ի կոմիտեի գործակալները: Գազանական հարցաքննությունների ժամանակ, որոնք վարում էր Սիլիայի հետախու-

գության գեներալ Մոհամմեդ էլ Հուսիլին՝ իմանալու համար այդ երկրներում DEA-ի բոլոր գործակալների անունները, Բաքլին տանջամահ է արվում: Պակստանի, Լիբանանի և Իրանի արած ափիանի լայնածավալ առևտուրը բացահայտելու փորձի համար Բաքլին կյանքով վճարեց:

Եթե այս աշխարհում դեռևս ազատ մնացած մարդիկ կարծում են, թե կարող են միայնակ կամ փոքր խմբերով խոչընդոտել թմրանյութերի առևտուրը, ապա չարաչար սխալվում են: Նրանք կարող են կտրել կոկաինի կամ հերոինի առևտրի ինչ-ինչ շոշափուկներ, իսկ գլուխը՝ երբե՛ք. Եվրոպայի թագակիր կորյաները և «արևելյան ազատական տիրախավը» չեն թողնի: «Թմրանյութերի դեմ կռիվը», որն իբր տալիս է Բուշի վարչակազմը, ծառայում է դրանց բոլոր տեսակների ու ձևերի ՀԱՄԱՏԱՐԱԾ օրինականացման գործին: Թմրանյութերի գործածությունը սոսկ սոցիալական արատ չէ: Դրանց տարածումը մեր մոլորակի մարդկանց գիտակցության վրա հսկողություն հաստատելու համաձավալ (լիամասշտաբ) փորձ է կամ, ինչպես այդ մասին ասում են «Ջրհոսի դավադրության» հեղինակները, «Միացյալ Նահանգներում արմատական փոփոխություններ հարուցելու միջոց»: ՄԱ 300-ի ԿՈՄԻՏԵԻ՝ ԲԱՅԱՐՉԱԿԱՊԵՍ ԳԱՂՏՆԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍԿՁԲՈՒՆՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆ Է:

Ոչ մի բան չի փախվել ափիոնի, հերոինի ու կոկաինի առևտրի մեջ. այն միշտ վարում են Բրիտանիայի և ԱՄՆ-ի «վերին դասի» քնտանիքները: Սա դեռևս առասպելական եկամուտներ բերող առևտուր է: Այստեղ մեծ թվացող այն վնասները, որ իշխանությունները տալիս են թմրանյութերը բռնագրավելով, դուրս են գրվում Նյու Յորքի, Հոնկոնգի ու Լոնդոնի նիստերի դահլիճներում կամ պորտվեյն խմելու և սիգար ծխելու արանքում՝ որպես «վերադիր ծախսեր»:

Բրիտանիայի գաղութային կապիտալիզմը միշտ եղել է Անգլիայում արտոնությունների խմբիշխանային ավատատիրական համակարգի հենարանը և այդպիսին է մնում ցայսօր: 1899 թ., երբ Հարավային Աֆրիկայի աղքատ, պարզասիրտ ու աստվածավախ ժողովուրդը, որը ճանաչվեց բուրերի անունով, ընկավ բրիտանական արխատկրատիայի արյունահոտ ձեռքը, չէր կարող պատկերացնել, թե Վիկտորիա թագուհու վարած քստմնեցուցիչ պատերազմը սնուցվում է այն լեռնակուտակ փողերով, որոնք հոսում էին Չինաստանում ԲՕԻ-ընկ-ի ափիոնավաճառության ծլեցրած «հանկարծազուտ հարստություններից»:

300-ի կոմիտեի անդամներ Սեսիլ Չոն Ռոդսը, Բարնեյ Բարնատոն և Ալֆրեդ Բեյտոն էին հրահրել ու կազմակերպել պատերազմը: Ռոդսը գլխավոր գործակալն էր Ռոթշիլդների, որոնք փողն առաջին հերթին դիզում էին ափիոնի առևտրի միջոցով: Ռոդս, Բարնատոն, Օպենհեյմեր, Չոել ու Բեյտոն կոչվող կողոպտիչները, խարդախներն ու ստախոսները

բուրերին գրկել են ի բնե նրանց պատկանող ոսկուց և ադամանդներից, որ պարունակել է նրանց հողը: Հարավաֆրիկյան բուրերը ոչ մի բան չեն ստացել այն ԲՅՈՒՐ ՄԻԼԻԱՐԴԱՎՈՐ դոլարներից, որոնք ստացվել են ԻՐԵՆՑ ոսկու և ադամանդների վաճառքից:

300-ի կոմիտեն արագորեն ճանկում է այլ վիթխարի գանձերի վերահսկողությունը, որը հիմա էլ է պահպանում իր անդամ Հարի Օպենհեյմերի ձեռքով: Հարավաֆրիկացին ոսկու և ադամանդների հանույթից միջին հաշվով տարեկան ստանում է 100 դոլար: Իսկ ՄԻԼԻԱՐԴՆԵՐԸ հոսում են կոմիտեի բանկատերերի մոտ: Սա ազգի ընչաքաղցության, կատարած կողոպուտների ու սպանությունների ստորագույն և ամենանողկալի պատմություններից մեկն է, որ պարունակում են տարեգրությունները:

Ինչպե՞ս է կարողացել բրիտանական թագն իրագործել այս շշմեցուցիչ և ընդամին վիթխարածավալ խաբեությունը: Այս «հերկուլեսյան» խնդրի լուծման համար հարկավոր է տեղում այնպիսի հավատարիմ գործակալների ճարտար կազմակերպություն ունենալ, որոնք ունակ են կատարելու դավադիրների իշխանակարգության տված ամենօրյա հրահանգները: Առաջին քայլն այն քարոզարշավն էր, որը բուրերին պատկերում էր իբրև մարդու հեռավոր նմանությունն ունեցող անքաղաքակիրթ բարբայրսների, որոնք Բրիտանիայի քաղաքացիներին գրկում են Բուրական Հանրապետությունում քվեարկելու իրավունքից: Այնուհետև Տրանսվաալի Հանրապետության առաջնորդ Փոլ Բոյուգերին ներկայացվում են ակնհայտորեն անիրագործելի պահանջներ: Ապա հաջորդում են մի շարք սարքովի միջադեպեր, որոնք բուրերին պետք է որ դրդեին վրեժխնդրության, սակայն սա ևս փուստ է անցնում: Այնուհետև կազմակերպվում է մի խայտառակ մարտարշավ. ոմն Ջեյմսոն մի քանի հարյուր զինված հրոսակների գրոհի է տանում Տրանսվաալի վրա: Սրանից հետո իսկույն պատերազմ է բռնկվում:

Վիկտորիա թագուհին սպառազինում է այն ժամանակվա (1898 թ.) ամենամեծ և լավագույնս հանդեծավորված բանակը: Վիկտորիան կարծում էր, թե պատերազմը կավարտվի երկու շաբաթից, որովհետև բուրերը մշտական բանակ և վարժեցված աշխարհագոր չունեին և չափտի կարողանային դիմակայել Բրիտանիայի ստորին դասակարգերից ժողոված 400.000 զինվորներին: Բուրերի գոյակոչային տարիքի բնակչությունը, ազարակատերերով ու նրանց որդիներով հանդերձ, 80.000 հոգուց ավելի չէր, որոնցից ոմանք տասնչորս տարեկան էին: Ռեյյարդ Կիպլինգն էլ կարծում էր, թե պատերազմն ընդամենը մի շաբաթ կտևի:

Բայց 1-2 շաբաթի փոխարեն բուրերը, մի ձեռքով՝ հրացանը, մյուսով Աստվածաշունչը բռնած, երեք տարի դիմադրեցին: «Մենք Հարավային Աֆրիկա մեկնեցինք կարծելով, թե պատերազմը կավարտվի մի շաբաթվա մեջ, - ասում է Կիպլինգը: - Իսկ բուրերը մեզ

մի լավ դաս տվին»։ Նմանօրինակ դաս այսօր էլ կարելի էր տալ 300-ի կոմիտեին, եթե կարողանայինք շարքի կանգնեցնել 10.000 առաջնորդների՝ լավ ու նվիրված մարդկանց, որպեսզի մեր ժողովրդին ղեկավարեն այն վիթխարի հրեշի դեմ պայքարելիս, որն սպառնում է ոչնչացնել մեր Սահմանադրության պաշտպանած ամենայն բան։

1902 թ. պատերազմն ավարտվելուց հետո բրիտանական թագր պետք է անրապնդեր իր վերահսկողությունը բուրերի Տրանսվաալ և Օրանժի հանրապետությունների անստուղ տափաստանների հողում գտնվող ոսկու և ադամանդների աներևակայելի հարստության վրա։ Այս անում են Արթուր թագավորի և նրա ասպետների լեգենդում պատմվող «Կլոր սեղանի» օգնությամբ։ «Կլոր սեղանը», ըստ էության, Բրիտանիայի հետախուզության ՄԻ-6 բաժնի գործառնությունն էր, որը մշակել էր 300-ի կոմիտեն։ «Կլոր սեղանն» ու Ռոդսի կրթաթոշակների ծրագիրը Ամերիկայի սիրտը խրած դաշույն են։

«Կլոր սեղանը» Հարավային Աֆրիկայում հիմնվել է Սեսիլ Ռոդսի և դրամավորվել է Ռոթշիլդների անգլիական ճյուղի կողմից։ Մյուս նպատակն էր այնպիսի գործարար առաջնորդներ պատրաստելը, որոնք հաշտ կլինեին բրիտանական թագի հետ և նրան կապահովեին ոսկու և ադամանդի վիթխարի գանձերից ստացվող եկամուտների հոսանքով։ Հարավաֆրիկացիներին այնքան արագորեն ու հնարամտորեն էին զրկել ի ծնե և ժառանգման իրավունքով նրանց պատկանող ամեն ինչից, որ ակներև էր դարձել մի բան. սա կարող էր անել միայն կենտրոնացված կերպով կառավարվող թիմը։ Այդ կենտրոնացված թիմը 300-ի կոմիտեն էր։

1930 - ական թվականների սկզբին բրիտանական թագն իր անքակելի ճանկերի մեջ էր պահում աշխարհի ոսկու և ադամանդների խոշորագույն պաշարները։ 300-ի ԿՈՄԻՏԵՆ ՏՆՕՐԻՆՈՒՄ ԷՐ ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐԻ ԱՌԵՎՏՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՎԻԹԵԱՐԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՍՐԱՆՑԻՑ ՈՉ ՊԱԿԱՍ ՎԻԹԵԱՐԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԵՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՖՐԻԿԱՅԻ ՍԵՏԱՂՆԵՐԻ ՈՒ ՀԱՆՔԱՀՈՒՄՔԵՐԻ ՊԱՇԱՐՆԵՐԸ։ Ամբողջ աշխարհի վրա դրամական լիակատար վերահսկողություն էր հաստատվել։

«Կլոր սեղանն» առանցքային դեր էր կատարել այս գործում։ Հարավային Աֆրիկան կլանելուց հետո «Կլոր սեղանի» բացահայտորեն ելևացող խնդիրն էր ի չիք դարձնել այն առավելությունները, որոնք ԱՄՆ-ն ստացել էր անկախության համար մղած պատերազմի շնորհիվ, և նրան նորից դնել Բրիտանիայի վերահսկողության տակ։ Այս նպատակը հաջողեցնելու խնդրում մեծ նշանակություն ունեին լոնդոնյան Ռոթշիլդների ընտանիքի հովանավորյալ Ալֆրեդ Միլների կազմակերպչական ընդունակությունները։ Շոտլանդական ծեսի մասոնության սկզբունքներով կատարված «Կլոր սեղանի» անդամների ընտրության

ընթացակարգն ավարտվելուց հետո ընտիրներից ընտրյալները Զեմբրիջի և Օքսֆորդի համալսարաններում փութեռանդորեն ուսում էին առնում Ջոն Ռասկինի՝ «հին դպրոցի կոմունիստի» (ինչպես ինքն էր խոստովանում) և ՄԻ-6 բաժնի օպերատիվ աշխատակից Թ. Գրինի աչալուրջ հսկողության ներքո:

Ավետարանական եկեղեցու սպասավորի որսի Գրինն է աճեցրել Ռոդսին, Միլներին, Ջոն Ուիլեր Բենետին, Ա.Դ. Լինսդեյին, Ջորջ Բեռնարդ Շոուին և Հիտլերի ֆինանսների նախարար Յալմար Շախտին: Այստեղ կանգ կառնեմ ընթերցողներին հիշեցնելու համար, որ «Կլոր սեղանը» վիթխարահսկա և համապարփակ 300-ի կոմիտեի սոսկ ՄԻ ԵՆ-ԹԱՍԱՄԵ Է: «Կլոր սեղանն» էլ իր հերթին ընկերությունների, հիմնարկների, բանկերի այնպիսի հյուսվածք է, որը քակելու համար ապահովագրական ընկերությունների նույնիսկ որակյալ հաշվետարին (ակտուարիուսին) առնվազն մի տարի է պետք:

«Կլոր սեղանի» անդամները սողոսկել են աշխարհի բոլոր երկրները, որ իրենց ձեռքն առնեն դրանց ֆինանսական քաղաքականության և քաղաքական առաջնորդների վերահսկումը: Այսպես՝ Հարավային Աֆրիկա. գեներալ Սմաթսը, որն Անգլա-բուրական պատերազմում մարտնչել էր բրիտանացիների դեմ, «դարձի է բերվում» ու վերածվում բրիտանական թագի շահերը պաշտպանող հետախուզական, զինվորական և քաղաքական առաջատար գործակալի: ԱՄՆ. մեր երկիրը խաղից հանելու խնդիրը վիճակվում է Վիլյամ Յանդել Էլիոտին, որը դաստիարակել էր Հենրի Բիսինջերին և կազմակերպել նրա՝ օրպես 300-ի կոմիտեի ԱՄՆ-ի գծով գլխավոր խորհրդականի կայծակնային վերելքը դեպի իշխանություն: 1917 թ. Վանդերբիլտի համալսարանն ավարտելուց հետո Էլիոտն ընտրվում է «Ռոքշիլդներ-Վարբուրգներ» բանկային ցանցում աշխատելու համար: Այնուհետև նա աշխատում է «Սան Ֆրանցիսկոյի համապետական պահուստային բանկում» և հասնում տնօրենի պաշտոնի: Էլիոտն այստեղ գործում է որպես «Ռոքշիլդներ-Վարբուրգների» հետախուզության սպա՝ տեղեկություններ հայտնելով ԱՄՆ-ի կարևոր բնագավառների մասին, ոյունք հետազոտում էր: Մասոնական դիտորդները նկատում են Էլիոտի ձիրքերը և միջնորդում են, որ նրան Ռոդսի կրթաթոշակ նշանակեն: 1923 թ. նա մեկնում է Օքսֆորդի համալսարանի Բալիոլի քոլեջը, որի «խաղաղ» հարկի տակ հյուսվում էր խարդավանքների ցանցը, և թաքնվել էին Արևմուտքի ապագա դավաճանները:

Բալիոլի քոլեջը հիմա էլ է «Կլոր սեղանի» համար թեկնածուներ հավաքագրելու կենտրոնը: Այստեղ Թավիատոկի մարդկային հարաբերությունների ինստիտուտի ներկայացուցիչ Ա. Գ. Լինսդեյը, սրը փոխարինել էր քոլեջի ոեկտոր Թ. Հ. Գրինին, հիմնովին արդուկում է Էլիոտի ու-

դեղը: Էլիոտին ընդունում են «Կլոր սեղան» և ուղարկում ՄԳԹԻ, որտեղ ԱՄՆ վերադառնալու և ակադեմիական շրջաններում առաջնորդ դառնալու հանձնարարություն է ստանում:

«Կլոր սեղանի» անելիքը իր անդամներին այնպիսի պաշտոնների նշանակել տալն էր, որոնք հնարավորություն էին ընձեռում սոցիալական քաղաքականություն կերտելու և կենսագործելու սոցիալական այն հաստատույթների միջոցով, որոնց օգնությամբ կարելի էր մոլորեցնել զանգվածներին: «Կլոր սեղանի» անդամները բանկային ասպարեզի բարձրագույն դիրքերն էին թափանցում Թավիստոկի ինստիտուտում մի դասընթաց անցնելուց հետո, որը կազմել էր լորդ Լեյոնաֆիլդը՝ Բիրտանիայի թագավորական ընտանիքի մերձավորը: Նրանից հետո դասընթացը վարում էր Ռոբերտ Բրանդը, որը հետագայում գլխավորեց ֆրանսիական Lazard Freres խոշոր բանկը: ՄԳԹԻ-ն եղել և մնում է Բրիտանիայի միապետության հետ սերտագույնս կապված հաստատություն:

«Կլոր սեղանն» ունի մի շարք դուստր կազմակերպություններ: Դրանցից են «Բիլդերբերգերյան ակումբը» (Բիլդերբերգերներ), որի հիմնադիրն ու ղեկավարն է հանգուցյալ Ուինստոն Չերչիլի փեսա և ականավոր քաղաքագետ Դունկան Սենդիսը, «Դիտչիլի հիմնադրամը»՝ բանկիրների գաղտնի ակումբը, որը դիմակազերծել են 1983 թ. գրած «Բանկիրների միջազգային դավադրությունը» աշխատության մեջ, «Եռակողմ հանձնաժողովը», «Միացյալ Նահանգների ատլանտյան խորհուրդը» և Ասպենի հումանիտար հետազոտությունների ինստիտուտը, որոնց անդրաբեմային (անդրկուլիսյան) ստեղծողն է ՄԳԹԻ-ի աշխատակից լորդ Բալոկը:

ԱՄՆ-ում ՄԳԹԻ-ի գլխավոր գործակալ Հենրի Քիսինջերի իշխանության հասնելու ուղին Ամերիկայի Միացյալ Նահանգների Հանրապետության դեմ Բրիտանիայի միապետության տարած հաղթանակի պատմությունն է, մի զարհուրելի պատմություն, որն այստեղ չենք կարող շարադրել չափազանց երկար լինելու պատճառով: Այնուամենայնիվ իմ կողմից անփութություն կլինի, եթե գո՛նե մի քանի փաստ չհիշատակեն Քիսինջերի՝ դեպի փառք, հարստություն և իշխանություն կատարած թոխքի մասին:

ԱՄՆ-ի բանակում պարտադիր ծառայությունն անցնելուց հետո, որտեղ եղել է Ֆրից Կրեմերի վարույդը և սլոտվել պատերազմից ավերված ամբողջ Գերմանիայում, Քիսինջերը Օպենհեյմերների ընտանիքի շնորհիվ ընտրվում է Ուիլտոն պարկում սովորելու համար: Այդ ժամանակ նա շարքայինի կոչում ուներ: 1952 թ. Քիսինջերին ուղարկում են Թավիստոկի ինստիտուտ, որտեղ նրա մշակմամբ զբաղվում է Ռ. Վ. Դիքսը, որը շարքայինիս գաղափարները գլխավայր շուտ է տալիս: Դրանից հետո այլևս ոչ մի բան չէր կայաղ կանգնեցնել Քիսինջերին: Նրան ուղարկում

են ծառայելու Չորջ Ֆրանկլինի և Համիլտոն Ֆիշի «Միջազգային հա-
յարքերությունների խորհրդի» նյույորքյան բաժանմունքում:

Կարծիք կա, որ ԱՄՆ-ի միջուկային պաշտոնական քաղաքականու-
թյունը Քիսինջերին ներկայացվել է Թավիստոկում նրա եղած ժամանակ:
Քիսինջերն այդ նախագծի հետագա ձևակերպման գործում անմիջական
մասնակցություն է ունեցել «Կլոր սեղանի» «Միջուկային զենքը և արտա-
քին քաղաքականությունը» սեմինարի ժամանակ: Սա առաջադրել էր
«Ճկուն պատասխան» հորջորջվող կատարելապես վերբանական (լուս-
ցիոնալ) ուսմունքը, որ հայտնի էր MAD («խելակորույս») հապավյալ
անունով: Հետախուզական ծառայությունների գծով «Կլոր սեղանի» գլ-
խավոր տնօրեն և ԱՄՆ-ում ՄԻ-6 բաժնի դաշտային գործառնություննե-
րի ղեկավար Ջոն Ուիլեր Բենետի հովանավորության շնորհիվ Քիսինջե-
րը դառնում է Էլիասի «սիրելի ուղի», ինչի մասին գրել է իր «Պրագմա-
տիկական հեղաշրջում քաղաքականության մեջ» գրքում: Առանց ընտ-
րություն անցկացնելու Քիսինջերին «Կլոր սեղանի» անդամ են դարձնում՝
առաջ մղելու համար այն դրամական քաղաքականությունը, որ նա ու-
սումնասիրել էր «Հարվարդի միջազգային սեմինարների» ընթացքում:

Քիսինջերն ազահարեն կրանում էր Էլիասի քարոզները: Նա այլևս
նման չէր այն մարդուն, որին զեներալ Կրեմերը մի ժամանակ նկարագ-
րում էր՝ ասելով. «Իմ փոքրիկ վարորդ հրեայիկը»} Քիսինջերը համակ-
վել էր մագիստրոս Բալիլի ոգով և դարձել Բրիտանիայի փոստ արխի-
տոկրատիայի ժրագան աշակերտը: Ընդունելով ՄԻ-6 բաժնի հետա-
խուզության գծով ՄԳԹԻ-ի գլխավոր տնօրեն Թոյնբիի փիլիսոփայու-
թյունը՝ Քիսինջերը սրա դրույթներն օգտագործում է իր վկայագրային
(դիպլոմային) «աստենախոսության» համար:

60-ական թթ. կեսին Քիսինջերն ապացուցում է իր օգտակար լինելը
«Կլոր սեղանին» և ՄԳԹԻ-ն, այսինքն՝ Բրիտանիայի միապետությանը:
Խրախուսելու և միաժամանակ ստուգելու համար նրան աշխատանք են
տալիս մի փոքր խմբում, որի մեջ էին Ջեյմս Շլեզինգերը, Ալեքսանդր
Հեյզը և Դանիել Էլսբերգը: Փորձաշարք անցկացնելը «Կլոր սեղանի»
սովորությունն էր: Այս խմբի հետ գործակցում էր Զաղաքական հետա-
գոտությունների ինստիտուտի գլխավոր տեսաբան Նոամ Հոմսկին:

Քիսինջերի պես Հեյզն էլ էր աշխատել զեներալ Կրեմերի մոտ, բայց
ոչ որպես վարորդ, և զեներալը ԱՄՆ-ի Պաշտպանության նախարա-
րությունում իր հովանավորյալների համար թափուր պաշտոններ էր
գտել: Հենց որ Քիսինջերին ազգային անվտանգության գծով խորհրդա-
կան դարձրին, Կրեմերը Հեյզին նրա տեղակալ նշանակել տվեց: Էլս-
բերգը, Հեյզը և Քիսինջերը հետագայում գործի զցեցին ՄԳԹԻ-ի ուո-
տերգեյտյան ծրագիրը, որ Նիքսոնը պաշտոնաձև արվի 300-ի կոմիտե-
ի ուղղակի կարգադրություններին չենթարկվելու համար: Հեյզը գլխա-

վոր դերն է կատարել նախագահ Նիքսոնին հոգեբանորեն մշակելու և նրա վրա ճնշում գործադրելու խնդրում: Նախագահի «կամքը կակդեցնելու» այս աշխատանքի հետևանքով Սպիտակ տան փաստական կառավարումն անցնում է Քիսինջերի ձեռքը: Ինչպես կիշատակել են 1984 թ., Հեյզը, լինելով Սպիտակ տան միջնորդը, հայտնի էր «ծակ բերան» մականվամբ. նա՝ էր տեղեկություններ հաղարթում «Վաշինգտոնի փոստ» օրաթերթի աշխատակիցների Վուվարդի և Բեռնշտեյնի թիմին:

Նիքսոնի ուտտերգեյտյան հետապնդումը այն ժամանակվա ամենամեծ հեղաշրջումն էր, որ կատարել է «Կլոր սեղանը»՝ ՄԳԹԻ-ի գործիքն ու գործակալությունը: Այս գործի բոլար խճճված թելերը տանում էին դեպի «Կլոր սեղան», սրանից էլ՝ ՄԳԹԻ և անմիջաբար Անգլիոթազուհու մոտ: Նիքսոնին նվաստացնելը առարկայական դաս և նախագգուշացում էր Միացյալ Նահանգների հետագա նախագահների համար, որ նրանց մտքով չանցնի, թե կարող են 300-ի կոմիտեի դեմ դուրս գալ և հաղթել: Ամերիկայի ողջ ժողովրդի աչքի առաջ Քենեդիին անգթորեն սպանեցին հենց դրա համար, իսկ Նիքսոնն այնքան երևելի դեմք չէր համարվում, որ Ջոն Բ. Քենեդիի բախտին արժանացնեին:

Եվ ինչ գործելակերպ էլ ընտրում են, 300-ի կոմիտեն միջոցներ է ձեռք առնում, որ Սպիտակ տան յուրաքանչյուր հավակնոյալի գլուխը մտնի սույն նախագգուշացումը. «Չկա՝ մեկը, որ կարողանա դուրս գալ մեր տիրույթի սահմաններից»: Այս նախագգուշացումը ուժի մեջ լինելու մասին է վկայում (ինչպես որ Քենեդիի սպանության և Նիքսոնի պաշտոնանկության ժամանակներում էր) նախագահի Ջորջ Բուշի վարքը: Իր տերերին գոհացնելու նրա ջանադրությունը պետք է լրջորեն մտահոգի նրանց, ովքեր անտարբեր չեն ԱՄՆ-ի ապագայի նկատմամբ:

Կոմիտեի այս գործողությունների նպատակը պարզ դարձավ «Պենտագոնի փաստաթղթերի» հետ կապված դեպքից և Շլեզինգերին Նիքսոնի վարչակազմի մեջ մտցնելու փաստից: Սրան այդպեղ դրել էին, որ արգելակի պաշտպանական գերատեսչությունների աշխատանքը և հակազդի ստոմային էներգետիկայի զարգացմանը: Շլեզինգերն այդ գործն անում էր՝ պատասխանատու պաշտոն ունենալով «Ատոմային էներգետիկայի հանձնաժողովում», որը կարևոր դեր է կատարում Միացյալ Նահանգներն ապարդյունաբերականացնելու համար «Հոմի ակումբի» ծրագրած կետարդյունաբերական գրոյական ոագմավարության ծիրում: Այս պահից սկսած կարող ենք հետևել ու գտնել արմատը 1991 թվականի տնտեսական ճգնաժամի, որը գործազուրկ դարձրեց 30 միլիոն ամերիկացու:

300-ի կոմիտե և այն կազմող խմբիչխանական ընտանիքների թափանցելն իրապես անհնար է, իսկ նրանց դիմակազերծելը՝ շատ դժվար: Յուրաքանչյուր ազատասեր ամերիկացի պետք է իմանա հետևյալը. արդեն ավելի քան 200 տարի է, ինչ 300-ի կոմիտեն է թելադ-

րում Միացյալ Նահանգների արտաքին ու ներքին ողջ քաղաքականությունը: Այս բանն առավել ակնհայտ դարձավ, երբ մեջտեղ եկավ այսպես կոչված «Տրումենի ուսմունքը՝ (դոկտրինան)», որը, բառիս բուն իմաստով, Չերչիլն էր խցկել Միտուրիի Նահանգի Ինդեպենդենս ավանում ծնված այդ փոքրիկ մարդու գլուխը:

Ահա 300-ի կոմիտեի նախկին անդամներից մի քանիսը, որոնց ժառանգները նրանց մահից հետո զբաղեցրել են քափուր տեղերը, ինչպես նաև ներկայիս անդամները. սրբ Մարկ Թյորներ, Ջերալդ Վիլիերս, Սամուիլ Մոնտեգյու, Ինչկեյսյաներ, Քեսուիկներ, Փիզեր, Շրյոդերներ, Արլիներ, Չերչիլներ, Ֆրեզերներ, Լազարներ և Ջարդին Մաթեսոններ (Կոմիտեի անդամների լրիվ ցուցակը տրված է գրքի վերջում): Այս մարդիկ նախագահ Վիլսոնին ՀՐԱՄԱՅԵՑԻՆ Գերմանիայի դեմ ելնել Առաջին աշխարհամարտի ժամանակ: Այս Կոմիտեն Ռուզվելտին հրամայեց, որ ճապոնացիներին հրահրի գրոհելու Փիու Հարբորի վրա՝ նպատակ ունենալով ԱՄՆ-ին այդպիսով մտցնելու Երկրորդ աշխարհամարտի մեջ:

Այս մարդիկ, այս Կոմիտեն մեր ազգին հրամայեցին կռվել Կորեայում, Վիետնամում և Պարսից ծոցում: Չուտ ճշմարտությունն այն է, որ Միացյալ Նահանգները մեր հարյուրամյակի 5 պատերազմներում մարտնչել է հանուն զազրելի 300-ի կոմիտեի: Այնպես է երևում, թե ոչ մեկը, բացառյալ սակավները, չի կանգնի ու չի հաբցնի. «ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ ԵՆՔ ՄԱՐՏՆՉԵԼ ԱՅԳ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒՄ»: «Հայրենասիրության» մեծ թմբուկը, ռազմաշունչ երաժշտությունը, փողփողացող դրոշակներն ու դեղին ժապավենները մեծ ազգին ասես զրկել են բանականությունից:

Փիու Հարբորի 50-յո՞ տարելիցի շեմին «Ճապոնիայի հանդեպ ատելության» նոր արշավ է կազմակերպվում, որն ամենաուղղակի և ամենաանպատկառ կերպով դեկավարվում է ոչ թե Խաղաղօվկիանոսյան հարաբերությունների ինստիտուտի, այլ Բուշի վարչակազմի ու Կոնգրեսի կողմից: Նպատակը նույնն է, ինչին հետամուտ էր Ռուզվելտը՝ Փիու Հարբորի վրա գրոհ հրահրելով, այն է՝ ճապոնացիներին պատկերել որպես նախահարձակների (ազրեսորների) և տնտեսական պատերազմ սանձազերծել, իսկ հետո մեր ուժերը միավորել հաջորդ փուլի՝ Ճապոնիայի վրա զինված նախահարձակում (ազրեսիա) սկսելու համար:

Այս ծրագիրն արդեն գործի է գցվել. մնում է որոշել ժամանակը, թե մեր ուսուրերին ու դուստրերին ե՞րբ մեռնելու կուղարկեն 300-կոմիտեի

¹ ԱՄՆ-ի կառավարության արտաքին քաղաքական ծրագիրը, որ շարադրել է ԱՄՆ-ի նախագահ Տրումենը (1945-53): Սրա հրամանով 1945-ի օգոստոսին Ճապոնիայի Հիրոսիմա և Նագասակի քաղաքները ենթարկվել են ատոմային ռմբակոծության (Վ. Ա.):

ավատատիրական լորդերին գոհացնելու համար: Մենք պետք է ի լուր ամենքի հայտարարենք. «Մեզ մտադիր են գոհաբերել ո՛չ հանուն ազատության, ո՛չ էլ ի սեր հայրենիքի, այլ բռնապետության համակարգի համար, որը շուտով կրնդգրկի ամբողջ աշխարհը»:

Այս կազմակերպությունն իր մագիլներով այնպես է բռնել Անգլիայի ազգային հարստությունը, որ, 1700 թվականից սկսած, երկրի քաղաքացիների 95 տոկոսին դրա 20 տոկոսն էլ բաժին չի հասնում: Հենց այս բանն էլ Անգլիայի ավատատիրական լորդերը սիրում են «ժողովրդավայրություն» կոչել: Այդ նրբակիրթ, վայելչատես, իսկական անգլիացի ջենտլմենները իրականում չափազանց անողորմ են: Հնդկաստանում, Սուդանում, Եգիպտոսում, Իրաքում, Իրանում և Թուրքիայում նրանց արածները Համաշխարհային նոր կարգի՝ Համաշխարհային միասնական կառավարության օրաք կրկնվելու են յուրաքանչյուր երկրում: Սրանք ամեն ազգի և նրա հարստությունները կօգտագործեն իրենց արտոնյալ կենսաձևն ապահովելու համար: Բրիտանական արխատկրատիայի հենց այս դասի հարստությունները կապված և միահյուսված են քմրանյութերի, ոսկու, ադամանդների ու գենքի առևտրի, արդյունաբերության, նավթի, լրատվամիջոցների ու զվարճանքի ոլորտի հետ:

Բացառյալ շարքային լեյբորիստներին (բայց ոչ նրանց առաջնորդներին), Բրիտանիայի քաղաքական գործիչների մեծ մասը սերում է տխուրսավոր ընտանիքներից: Նրանց տխուրսները ժառանգական են և հորից փոխանցվում են ավագ որդուն: Այս համակարգը երաշխավորում է, որ ոչ մի «կողմնակի անձ» երազել իսկ չի կարող Անգլիայում քաղաքական իշխանություն ունենալու մասին: Այնուամենայնիվ որոշ «անհարազատներ» հաջողվում է ճեղքել պատնեշն ու մտնել ընտրախափի շարքերը:

Վերջրեք, օրինակ, լորդ Հալիֆարսին՝ Վաշինգտոնում Բրիտանիայի դեսպանին, որը Երկրորդ աշխարհամարտի ժամանակ 300-ի կոմիտեի հրամանները փոխանցում էր մեր կառավարությանը: Հալիֆարսի որդի Չարլզ Վուդն ամուսնացել է լորդ Ռոքշիլլի արյունակից ազգականուհի միսս Փրիմրուզի հետ: Սուետլինգ անվան ներքո թաքնվում է Մոնտեգյուն՝ Անգլիայի բանկի տնօրենը, վստահյալ անձն ու խորհրդականը Լոյլսարթ II թագուհու, որի ձեռքում է «Շելլ» նավթային ընկերության արժեթղթերի վերահսկիչ փաթեթը: Սրանք բոլորն էլ 300-ի կոմիտեի անդամներ են: Որոշ հին անջրպետներ այսօր արդեն քանդված են: Տխուրսն այսօր միակ չափանիշը չէ «Հոմի ակումբի» անդամ դառնալու համար:

Նախքան 300-ի կոմիտեի հսկայաքանակ, լայնասփյուռ և փոխկապակցված բանկերի, ապահովագրական ընկերությունների, կորպորացիաների և այլ կառույցների հյուսվածքին անցնելը, տեղին կլինի ամփոփագրել, թե նա ինչի հասնելու հույս ունի, և որոնք են նրա նպատակներն ու խնդիրները: Ներքոբերյալ տեղեկանյութը պատրաստելու հա-

մար ելկար տարիներ որոնումներ ու հետազոտություններ են կատարել: Այդ ընթացքում համապրել են հարյուրավոր փաստաթղթերի, այլև իմ անձնական կապերի շնորհիվ ձեռք բերված տվյալները, որոնք ինձ հնարավորություն են տվել զննելու կարևոր մանրամասնություններ պարունակող շատ թղթեր:

300-ի կոմիտեն բաղկացած է բազմազան բնագավառների մասնագետներից, որոնց մեջ կան սատանայի պաշտամունքի (cultus diabolici), քիմիական նյութերով գիտակցությունը փոփոխելու, զանազան թույներով մարդ սպանելու, հետախուզական գործի մասնագետներ, բանկային գործի և սոստրային գործունեության բուրբ ասպարեզների փորձագետներ: Պետք է հիշատակել Կոմիտեի նախկին անդամներին՝ հաշվի առնելով անցյալում նրանց կատարած կարևոր դերը, ինչպես նաև այն փաստը, որ նրանց տեղերն զբաղեցրել են իրենց ընտանիքների այն անդամները, ովքեր ապացուցել են, որ արժանի են այդ պատվին:

Կոմիտեի անդամների թվում են Եվրոպայի «Սև արխատոկրատիայի», Ամերիկայի «Արևելյան ազատական տիրախավի» հին ընտանիքները (մտնում են մասոնների և «Գանգի ու ոսկորների ուխտի» կազմի մեջ), լուսավարչայնները (որոնք Կոմիտեում կոչվում են «ՄՈՐԻԱՅԻ ՀՆԱԶԱՆԴԵՑՆՈՂ ԲԱՄԻ»), «Մումի խումբը», «Եկեղեցիների ազգային խորհուրդը», «Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը», «Ինը անհայտները», «Լուկուս թրաստը», «Ազատագրության ճիզվիտական աստվածաբանները», «Միոնի ծերերի ուխտը», «Նազի իշխանները», «Միջազգային արժույթի հիմնադրամը» (ՄԱՀ), «Միջազգային հաշվարկների բանկը» (ՄՀԲ), «Միավորված ազգերի կազմակերպությունը» (ՄԱԿ), «Յենտրալը», Բրիտանիայի «Զվատոր քորոնատի» մասոնական օթյակը, Իտալիայի «Փ-2» մասոնական օթյակը» (հատկապես Վատիկանի նվիրապետության մեջ մտնող նրա անդամները), ԱՄՆ-ի Հետախուզության կենտրոնական վարչությունը, Թավիստոկի ինստիտուտի Ընտրյալ անձնակազմը, «Հոնկոնգ Էնդ Շանհայ բանկինգ քորպորեյշնը» (HSBC), «Միլների խումբ» - «Կոոր սեղանը», «Չինիի հիմնադրամը», «Մարշալի գերմանական հիմնադրամը», «Բիտչիի հիմնադրամը», առաջատար ապահովագրական ընկերությունների ու հիմնադրամների որոշ անդամներ, ՆԱՏՕ-ն, «Հոռմեական ակումբը», կանաչների շարժումները, «Սուրբ Հովհաննես Երուսաղեմացու ուխտը», «Համաշխարհային միասնական կառավարության եկեղեցին», Սոցիալիստական ինտերնացիոնալը, Սև ուխտը, Թուլեի ընկերությունը, «Անեներթե-Ռոզենկրեյցերները», «Բարձրագույն մեծերը» և ՀԱՐՅՈՒՐԱՎՈՐ այլ կազմակերպություններ:]

Ի՞նչ ենք տեսնում: Տարօրինակ գաղափարներ ունեցող մարդկանց խախուտ միավորում: Իհարկե ո՛չ: 150 տարվա պատմություն ունեցող

300-ի կոմիտեի կազմում կան ամենավառ խելքի տեր մարդիկ, որոնք մեկտեղ են հավաքվել լիովին ամբողջատիրական (տոտալիտար) և բացարձակապես կառավարելի «նոր» հասարակություն ստեղծելու համար: Իրականում այդպիսի հասարակարգ հիմնարկելու գաղափարները նոր չեն. 300-ի կոմիտեն **այդ ամենը քաղում է սատանայական պաշտամունքներից:** Նրա նպատակը Համաշխարհային միասնական կառավարությունն է, որը բավականին լավ նկարագրել է Կոմիտեի հանգուցյալ անդամ Հերբերտ Ուելսն իր «**Քացահայտ դավադրություն: Համաշխարհային հեղափոխության ծրագրերը**» աշխատության մեջ:

Ինչպես որ Ջորջ Օրուելի «1984» գիրքը, այնպես էլ Կոմիտեի պատվերով Ուելսի գրած աշխատությունը զանգվածներին հղված քարոզություն է հոգուտ Համաշխարհային միասնական կառավարության: Եթե ամփոփենք, ապա 300-ի կոմիտեի մտադրություններն ու նպատակները կարելի է հանգեցնել հետևյալին.

Համաշխարհային միասնական կառավարություն [ՀամՄԻԿառ, ՀամԿառ - Վ. Ա.] և փողի միատեսակ համակարգ, որի ժամանակ մշտական ու չընտրովի ժառանգական խմբիշխաններն իրենց միջից առաջնորդներ են ընտրում ավատական այն համակարգի ձևով, որ կար միջին դարերում: Այդ Միասնական աշխարհում բնակչության թիվը կսահմանափակվի երեխաների թվի կրճատմամբ՝ ընտանիքում 1 երեխա թողնելով, ինչը կկատարվի հիվանդությունների, պատերազմների ու սովի սփռման միջոցով, մինչև որ աշխարհի ողջ բնակչությունից կմնան 1 միլիարդ այնպիսի մարդիկ, որոնք տիրող դասակարգին օգուտ կբերեն գործունեության խստիվ ու հստակ որոշված ոլորտներում:

Չի՛ լինի միջին դաս. միայն տերեր ու ծառաներ: Բոլոր օրենքները կմիասնականացվեն հաշտարար դատարանների իրավաբանական համակարգի շրջանակում, որոնք կօգտագործեն միևնույն օրենսգիրքը, որի կատարմանը կհետևի ՀամՄԻԿառի ոստիկանությունը: Իսկ Միասնական աշխարհի միավորյալ զինված ուժերն օրենքները բռնի կերպով կարմատավորեն բոլոր նախկին երկրներում, որոնք իրարից այլևս բաժանված չեն լինի սահմաններով: Համակարգը խարսխված կլինի «բարենպաստող» պետության հիմքի վրա. ով հնազանդվել ու ծառայում է ՀամՄԻԿառին, կվարձատրվի կենսամիջոցներով, իսկ ով կըմբոստանա, պարզապես սովամահ կարվի կամ օրենքից դուրս կհայտարարվի՝ թիրախ դառնալով ամեն մեկի համար, ում մտքով կանցնի նրան սպանել: Կարգելվի հրազեն կամ սառը զենք ունենալը:

Կթույլատրվի միայն մեկ կրոն՝ ՀամՄԻԿառի եկեղեցու ձևով, որը գոյություն ունի 1920 թվականից սկսած: *Սատանապաշտությունը, լյուցիֆերականությունն ու սև մոգությունը կճանաչվեն ուսուցման օրինական առարկաներ, կարգելվեն մասնավոր ու եկեղեցական դպրոցները:*

Քրիստոնեական բոլոր եկեղեցիները կրանդվեն, իսկ բուն քրիստոնեությունը պատմության գիրկը կանցնի ՀամՄԻԿառի օրոք:

Այնպիսի դրություն մտցնելու համար, որի ժամանակ չմնա անձի ոչ մի ազատություն և ազատության ոչ մի հայեցակարգ, ի չիք կոարձվեն կառավարման հանրապետական ձև և ժողովրդի իրավունքների անկապտելի ինքնիշխանություն (սուվերենիտետ) հասկացությունները: Արմատախիլ կարվեն ազգային հպարտությունը և ցեղային (ոսասայական) պատկանելությունը, իսկ անցումային շրջանում ցեղային ծագման հիշատակությունն անգամ կդառնա խստագույն պատիժների հիմք:

Յուրաքանչյուր մարդու կներշնչվի, թե ինքը ՀամՄԻԿառի ստեղծվածքն է: Բոլոր մարդկանց վրա կդրոշմվեն յուրաքանչյուրի ով լինելը որոշող համարներ, որոնց առկայությունը կարելի կլինի հեշտությամբ ստուգել: Այդ որոշիչ համարները կմուծվեն ՆԱՏՕ-ի՝ Բոյուսելում (Բելգիա) գտնվող համակարգչի համահավաք կայք (Ֆայլ), որից ուզած ժամանակ վայրկենապես կարող են օգտվել ՀամՄԻԿառի բոլոր հիմնարկները: ԱՄՆ-ի Հետախուզության կենտրոնական վարչության, Հետաքննությունների դաշնային բյուրոյի, նահանգների ու տեղական ոստիկանության, Հարկային վարչության, Արտակարգ իրավիճակների, Սոցիալական ապահովագրության գործակալությունների համահավաք կայքերը զգալիորեն կընդարձակվեն և կդառնան ԱՄՆ-ի յուրաքանչյուր բնակչի անձնական գործի (դոսիեի) տվյալների հիմնապահեստի հիմքը:

Անուսնությունները կդրվեն օրենքից դուրս, և մեր իմացածի պես ընտանեկան կյանք չի լինի: Երեխաներին ծնողներից կխլեն վաղ հասակում և նրանց, որպես պետական ունեցվածքի, դաստիարակելու կհանձնեն վերակացուներին: Այսպիսի փորձ անցկացվել է Արևելյան Գերմանիայում Է.րլիս Հոներկերի՝ օրոք, երբ երեխաներին խլում էին անբարեկույս համարվող ծնողներից: Կանայք կբարոյագրվեն «կանանց ազատագրության (Էմանսիպացիայի)» մշտական գործընթացով: Ազատ սեռական հարաբերությունը (սեքսը) կլինի ստիպողական:

Խստորեն կպատժվի 20 տարեկանից բարձր այն կինը, սրը կխախտի սահմանված կանոնները: Երկու երեխա ծնելուց հետո կանանց կսովորեցնեն ինքնուրույն վիժում կատարել: Համապատասխան տվյալները կպահվեն ՀամԿառի տարածքային համակարգիչներում

¹ Միջազգային կոմունիստական շարժման գործիչ, Գերմանիայի սոցիալիստական կոսակցության Կենսկոմի առաջին քարտուղար (1971 - 76 թթ.), Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության Պետխորհրդի նախագահ, Պաշտպանության խորհրդի նախագահ (Վ. Ա.):

գրանցված յուրաքանչյուր կնոջ անձնական գործում: Եթե կինը հանկարծ հղիանա երկու երեխա ծնելուց հետո, նրան բռնի կուղարկեն բուժհիմնարկ՝ վիժել տալու համար, որից հետո կամյացնեն:

Լայնորեն կտարածվի պոռնկագրությունը (պոռնոգրաֆիան). ամեն կինոթատրոնում պարտադիր կցուցադրվեն պոռնոֆիլմեր, ներառյալ արվամուլական ու լեսբիական պոռնկագրությունը: Պարտադիր կլինի «ուժավերականգնիչ» թմրանյութերի գործածությունը. ամեն մարդու կհատկացվի թմրանյութերի բաժնեմաս (քվոտա), որոնք կարելի կլինի գնել ՀամԿառի աշխարհով մեկ սփռված խանութներում: Ամենուրեք կմատուցվեն գիտակցությունը փոխող թմրանյութեր, և դրանք օգտագործելը պարտադիր կլինի: Գիտակցափոխիչ թմրանյութեր կխառնվեն սննդամթերքին ու խմելու ջրին՝ առանց մարդկանց գիտության կամ համաձայնության: Բոլոր բնակավայրերում կստեղծվեն ՀամԿառի գործակալներից կառավարվող թմրանյութի բարեր, որանցում ստրկամարդիկ կանցկացնեն իրենց ազատ ժամանակը: Այսպիսով վերնախավից դուրս մնացած մարդկային զանգվածները կցածրացվեն՝ վերածվելով սեփական կամքից զուրկ, հեշտ ենթարկվող ու կառավարվող վարժեցրած կենդանիների մակարդակով ու վարքով էակների:

Տնտեսական համակարգը հիմնված կլինի խմբիշխանական դասի վարչության վրա, որը թույլ կտա արտադրել այնքան սննդամթերք և կատարել այնպիսի ծառայություն, ինչը անհրաժեշտ է զանգվածային ստրկական աշխատանքի ճամբարների գործառնման համար: Բոլոր հարստությունները կենտրոնացված կլինեն 300-ի կոմիտեի սերմանդամների՝ ձեռքում: Ամեն մարդու կներշնչվի, թե իր գոյատևումը լիովին կախված է պետությունից: Աշխարհը կկառավարվի 300-ի կոմիտեի կատարողական որոշումներով, որոնք անհապաղ օրենքի ուժ կստանան: Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը 300-ի կոմիտեի որոշումները կօգտագործի, որպեսզի փորձի կարգով Ռուսաստանի վզին փա-

¹ Այսինքն՝ սերմացու անդամներ (элитные члены): Էլիտա նշանակում է բնտիր սերմեր՝ սերմացու, հետագա բազմացման և բուծման համար որոշված բույսեր կամ կենդանիներ. ուստի էլիտային անդամ կլինի սերմացու անդամ՝ սերմանդամ: Քանի որ լինելու են միայն տերեր ու ծառաներ, հետևաբար կստեղծվի տերերի՝ կառավարողների մի փակ բնտանիք, որը կվերարտադրի ինքն իրեն՝ գոյացնելով նոր սերմացուներ՝ սերմանդամներ: Էլիտա՝ ընտրանի բառի իմաստը համապատասխանում է եբրայերեն փարիսեցիին, որ նշանակում է գատել, ջոկել, ընտրել. ընտրյալ: Փարիսեցիներն աղանդ էին, որի անդամներն իրենց բարձր էին դասում մյուս բոլոր մարդկանցից: Հիսուսի ամենակատաղի հարսածիչներն էին: Որքան նմանություններ կան սրանց և 24 դար հետո իրենց էլիտա և «օլիմպոսցիներ» հորջորջածների միջև (Վ. Ա.):

Քաթի կոմիտեի կամքը:

Արդյունաբերությունը լավին կոչնչացվի ատոմային էներգիական համակարգերով հանդերձ: Միայն 300-ի կոմիտեի անդամները և նրանց ընտրյալները իրավունք կունենան տնօրինելու երկրի պաշարները: Գյուղատնտեսությունը կլինի բացառապես 300-ի կոմիտեի ձեռքում, իսկ սննդամթերքի արտադրությունը խստիվ կվերահսկվի:

Երբ որ այս միջոցառումները սկսեն պտղաբերել, մեծ քաղաքների բնակչությունը բռնությամբ կտարվի հեռավար շրջաններ, իսկ գնալուց հրաժարվողները կոչնչացվեն ՀամԿառի այն փորձարարական եղանակով, որ Կամբոջայում իրագործեց Պոլ Պոտոյ: Քաղաքների բնակչությունը չի գերազանցի նախօրոք որոշված մակարդակը: Որակյալ բանվորները կտեղափոխվեն ուրիշ քաղաքներ, եթե նրանց ապրած քաղաքը գերբնակեցված լինի: Ոչ որակյալ բանվորները բախտաբերի կջոկվեն և կուղարկվեն թերբնակեցված քաղաքները, որպեսզի լրացնեն դրանց «բաժնեմասը»: Մահացու հիվանդներին և զառամյալներին անցավ մեռցնելը (էվտանազիա) պարտադիր կլինի:

Մինչև 2050 թվականը մոտ 4 միլիարդ «անօգուտ հացակեր» կոչնչացվի սահմանափակ պատերազմների, կազմակերպված արագահաս մահառիթ հիվանդությունների համաճարակների ու սովի միջոցով: Էլեկտրաէներգիայի, սննդի ու ջրի քանակը կպահպանվի այն մակարդակի վրա, որը բավարար է միայն չընտրանու, նախ և առաջ՝ Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի սպիտակ բնակչության կյանքը, իսկ այնուհետև մյուս ցեղերի (ռասաների) կյանքը պահպանելու համար: Կանադայի, Արևմտյան Եվրոպայի և ԱՄՆ-ի բնակչությունը կնվազեցվի ավելի արագորեն, քան մյուս մայրցամաքներից, մինչև որ աշխարհի բնակչությունը հասնի կառավարելի 1 միլիարդի մակարդակի, որից 500 միլիանը կլինեն չինացիներ ու ճապոնացիներ: Սրանց թիվն ավելի կթողնվի այն պատճառով, որ բազում դարերի ընթացքում ենթարկվել են խիստ կանոնակարգման և վարժվել են անառարկելիորեն հնազանդվելու իշխանություններին:

Ժամանակ առ ժամանակ արհեստականորեն կստեղծվի սննդի, ջրի և բուժօգնության պակասուրդ (դեֆիցիտ), որպեսզի զանգվածներին հիշեցվի, որ նրանց գոյությունը ամբողջովին կախված է 300-ի կոմիտեի բարի կամքից:

Արդյունաբերության այնպիսի ճյուղեր ոչնչացնելուց հետո, ինչպիսիք են շինարարականը, ավտոշինականը, մետալուրգիականն ու ծանր մեքենաշինականը, կսահմանափակվի բնակարանային շինարարությունը, իսկ արդյունաբերության պահպանված ճյուղերը կդրվեն նատուրալ «Հոմեական ակումբի» հսկողության տակ, սրանց հետ մաս՝ գիտական և տիեզերական բոլոր հետազոտությունները, որոնք կսահ-

մանափակվեն և ամբողջովին ենթակա կլինեն 300-ի կամիտեին: Նախ-
կին երկրների տիեզերական զենքը կոչնչացվի միջուկային զենքի հետ:

Դեղագործական օժանդակ և հիմնական բոլոր արտադրանքները, բժիշկները, ատամնաբույժները և մյուս բուժաշխատողները կգրանց-
վեն տվյալների կենտրոնական համակարգչային շտեմարանում: Դե-
ղոլայք կամ բուժօգնություն չի մատուցվի առանց տարածքային հսկիչ-
ների հատուկ թույլտվության, որոնք պատասխանատու են ամեն քա-
ղաքի, ավանի ու գյուղի համար:

Ամերիկայի Միացյալ Նահագներ կլցվեն օտար մշակույթի տեր
մարդիկ, որոնք վերջնականապես կճզմեն Մպիտակ Ամերիկան. մար-
դիկ, որոնք ոչ մի հասկացողություն չունեն, թե ինչ է պաշտպանում
ԱՄՆ-ի Սահմանադրությունը, և որոնց գլխում ազատության և արդա-
բության գաղափարներն այնքան նվազ են, որ դրանց ոչ մի նշանակու-
թյուն չի տրվում: ՈՒՏԵԼԻԻՔՆ ու տանիքը կլինեն գլխավոր հոգսերը:

Կարգելվի բոլոր կենտրոնական բանկերի գործունեությունը, բա-
ցառյալ Միջազգային հաշվարկների բանկը և Համաշխարհային բան-
կը: Մասնավոր բանկերը կհայտարարվեն օրենքից դուրս:

Արած աշխատանքի վարձատրումը կկատարվի ըստ ՀամԿառի մի-
ասնականացրած և նախօրոք սահմանած սանդղակի: Կուրգելվեն աշ-
խատավարձի բարձրացման ո՛րևէ պահանջ, ինչպես նաև ամեն մի շեղում
աշխատավարձի չափոյոշիչ, միասնականացված սանդղակից, որ սահ-
մանած կլինի ՀամԿառը: Օրենքը խախտողներն անհապաղ կպատժվեն:

Չընտրանու ձեռքին ոչ մի թղթադրամ կամ մետաղադրամ չի լինի: Բո-
լոր հաշվարկները կկատարվեն ծախսաքարտի միջոցով, որի վրա դրոշմ-
ված կլինի քարտատիրոջ ով լինելը ցույց տվող համարը: 300-ի կամիտե-
ի որաշած կարգն ու կանոնները խախտած յուրաքանչյուր անձ կպատժ-
վի քարտի գործողության առժամանակ դադարեցմամբ, ինչը կախված
կլինի զանցանքի բնույթից ու ծանրությունից: Երբ այդ մարդիկ գնումներ
անելու գնան, մեկ էլ կտեսնեն, որ իրենց քարտերը սև ցուցակ են լնկել, և
իրենք չեն կարող որևիցե մթերք կամ սպասարկում ստանալ:

Հնամյա մետաղադրամ, այսինքն՝ հինավուրց կամ պատմության
ասպարեզից դուրս եկած ժողովուրդների արժաթադրամ վաճառելու
փորձը կղիտվի որպես ծանր հանցագործություն, որ պատժելի է մահ-
վամբ: Բոլոր հնամյա դրամները, ատրճանակները, հրացանները, պայ-
թուցիկ նյութերը և ավտոմեքենաները կպահանջեն հանձնել որոշված
ժամկետում: Միայն ընտրանուն և ՀամԿառի բարձրաստիճան գործա-
րորդներին (ֆունկցիոներներին) թույլ կտրվի ունենալ անձնական զենք,
փող և ավտոմոբիլ:

Եթե մեկը յուրջ հանցանք է կատարել, նրա քարտը ձեռքից կվերցնեն
այն հսկիչ կետում, որտեղ որ կներկայացնի: Դրանից հետո այդ մարդը

չի կարող ստանալ սնունդ, ջուր, կացարան ու որակյալ բուժօգնություն և պաշտոնապես կհամարվի արտաքսված: Այսպիսով կգոյանան հասարակությունից վտարվածների մեծ հանցախմբեր, որոնք կապրեն այնպիսի վայրերում, որտեղ որ հնարավոր է ապրուստի միջոցներ հայթայթել: Նրանց հետևից կընկնեն և կապանեն առաջին իսկ հնարավորության դեպքում: Որևիցե ձեռվ սրանց օգնողները նույնպես կապանվեն: Որոշյալ ժամանակահատվածում ոստիկաններին ու զինվորներին չհանձնված հանցագործների փոխարեն բանտային պատժաժամկետը կկրեն իրավապահների ձեռքն ընկած նրանց հարազատները:

Հակասություններ կհրահրվեն մրցակցող կուսակցախմբերի ու խմբերի միջև, ինչպիսիք են, օրինակ, արաբներն ու հյւեաները, աֆրիկյան ցեղերը. նրանց թույլ կտան փոխադարձ բնաջնջման կոիվներ մղել ՆԱՏՕ-ի և ՄԱԿ-ի դիտորդների հսկողության տակ: Նույնպիսի մարտավարություն կկիրառվի Կենտրոնական ու Հարավային Աֆրիկայում: Փոխբնաջնջման այդ կոիվները տեղի կունենան նախքան ՀամԿառի հաստատվելը, և դրանք կկազմակերպվեն բոլոր այն մայրցամաքներում, որտեղ ապրում են ցեղային ու կրոնական տարբերություններ ունեցող մարդկանց մեծ խմբեր, ինչպիսիք են սիբիրը, պակաստանցի մուսուլմանները և հնդիկ հնդուականները (ինդուիստները): Տեղային և կրոնական հակասությունները կսաստկացվեն ու կսրվեն, իսկ որպես այդ հակասությունների «կարգավորման» միջոցներ՝ կստորվեն ու կխրախուսվեն դաժան ընդհարումները:

Բոլոր տեղեկատվական ծառայությունները և մամուլի միջոցները կլինեն ՀամԿառի հսկողության տակ: «Զվարճությունների» քողով ու պատրվակով պարբերաբար կկազմակերպվի ուղեդարձություն, ինչն արդեն կիրառվում է ԱՄՆ-ում, որտեղ այն արվեստ է դարձել: «Ոչ օրինապահ ծնողներից» խլված երեխաները կստանան հատուկ դաստիարակություն, որի նպատակը նրանց դաժանացնելն է: Երկու սեռերի երիտասարդներին կսովորեցնեն պահնորդություն անել ՀամԿառի աշխատանքային ճամբարների համակարգի կալանավայրերում:

Առջևում ասվածից ակնհայտորեն երևում է, որ դեռ բազում անելիքներ կան նախքան Համաշխարհային նոր կարգ հաստատվելը: Դրանից շատ առաջ 300-ի կոմիտեն կատարելագործում էր մեր քաղաքակրթությունը քանդելու ծրագրերը, որոնցից մի քանիսը հայտնի են Չբիզնև Բժեզինսկու «Տեխնոտրոնային դարաշրջան» դասական գրքից և «Հոմեոկան ակումբի» հիմնադիր Աուրելիո Պեչեի աշխատություններից, հատկապես սրա «Անդունդի առաջ» գրքից: *Այստեղ Պեչեին, մարդուն ԹՇՆԱՄԻ անվանելով, ցույց է տալիս նրան հնազանդեցնելու մասին 300-ի կոմիտեի ծրագիրը: Պեչեին միջաբերել է Ֆելիքս Չերժինսկու խոսքը, որ նա Սիդնեյ Ռեյլիին ասել էր Կարմիր ահաբեկչության թեժ*

պահին, երբ արդեն միլիոնավոր ոռոսներ¹ էին սպանվել. «Ինչո՞ւ պիտի ինձ անհանգստացնի այն, թե քանի մարդ է մեռնում: Անգամ քրիստոնեական Աստվածաշունչն է ասում, որ մարդու մասին Աստված կհոգա: Ինձ համար մարդիկ ոչ այլ ինչ են, եթե ոչ մի բան, որի մի կողմը ուղեղ է, մյուս կողմը՝ կղկղանքի գործարան»:

Մարդու նկատմամբ հենց այսպիսի գազանական վերաբերմունքի՛ց աշխարհը փրկելու եկավ Էմմանուել Քրիստոսը: Միայնեյ Ռեյլին Մյ-6 բաժնի օպերատիվ աշխատող էր, որին ուղարկել էին հետևելու Չերժինսկու գործունեությանը: Ենթադրում են, որ Ռեյլին գնդակահար է արել հենց իր բնկեր Ֆելվքսը, երբ նա փորձել է փախչել Ռուսաստանից:

Հանգամանորեն մշակված մի բեմարք է հորինվում, երբ Բրիտանիայի Պառլամենտի անդամները աղմուկ են բարձրացնում՝ հաշվետվություն պահանջելով Ռուսաստանում Ռեյլի ծավալած գործունեության մասին: Ռեյլին սպառնացել էր բացահայտել 300-ի կոմիտեի դերը Բաքվի նավթահանքերի վրա վերահսկողություն հաստատելու գործում և նրա վճռորոշ դերակատարությունը բուլշևիկյան հեղափոխության ժամանակ Լենինին ու Տրոցկուն օգնելու հարցում: Մյ-6 բաժինը նպատակահարմար է համարում կեղծ փաստաթղթեր թխել Ռեյլի մահվան մասին, որպեսզի որևէ մեկը չփորձեր նրան ոլոնել ու կորզել ճշմարտությունը: Ռուսաստանում եղած ժամանակ Ռեյլին ապրել է բուլշևիկյան ընտրանու համար նախատեսված շքեղ ամառանոցում:

Ապացուցելով, որ քառս կսկսվի, եթե հետարդյունաբերական Ամերիկյան չկառավարվի «Ատլանտյան դաշինքի» (անվանում 300-ի կոմիտեի համար) կողմից, Պեչեին առաջարկում էր աշխարհի բնակչության մայրուսական տեսակավորում կատարել: Նա կանխատեսում էր Խորհրդային Միության գինվորական գլխատեխնիկական կառույցի և Արևմուտքի բախումը: Ուստի Վարշավայի պայմանագրի մասնակից երկրներին² առաջարկվում էր համերաշխվել Արևմուտքի հետ՝ ճգնաժամերի կառավարման և համընդգրկուն ծրագրման կիման վրա աշխարհի գործերը վարելու համար:

ԽՍՀՄ-ի տեղում ծավալված իրադարձությունները և մի քանի ան-

¹ Արտասահմանում ոռոս էին ասում Ռուսաստանի կամ Խորհրդային Միության բոլոր քաղաքացիներին՝ անկախ նրանց ազգային պատկանելությունից (Վ. Ա.):

² Վարշավայի պայմանագիրը կամ Վարշավայի պայմանագրի կազմակերպությունը. սոցիալիստական երկրների պաշտպանական դաշինքն էր՝ ի հակակշիռ ՆԱՏՕ-ի: Մասնակիցներն էին Բուլղարիան, ԳՂՀ-ն, Լեհաստանը, Հունգարիան, Չեխոսլովակիան և ԽՍՀՄ-ը: Ստեղծվել է 1955թ. (Վ. Ա.):

կախ պետությունների առաջացումը ճշտիվ համապատասխանում են Պեչելի և «Հռոմեական ակումբի» կանխատեսումներին և հստակորեն նկարագրվել են հիշատակածս երկու գլոբում: Այսպես մասնատված տերությունը ավելի հեշտ կլինի հաղթել, քան մյուսնական և ուժեղ խորհրդային ժողովրդին: Աշխարհի կառավարման համար 300-ի կոմիտեի կազմած ծրագրերը, որոնք ներառում էին Ռուսաստանի մասնատումը, հիմա սկսել են լարագործն *իրականում*: 1991-ի վերջերին Ռուսաստանում տեղի ունեցած իրադարձությունները շատ ավելի դրամատիկական են երևում, երբ դրանք դիտարկում ենք դեռևս 60-ական թվականներին 300-ի կոմիտեի մշակած երկարաժամկետ ծրագրի տեսակետից:

Արևմտյան Եվրոպայի ժողովուրդներին մղում են դեպի միասնական արժույթ ունեցող մեկ կառավարության շրջանակում գործող պետությունների դաշնություն, որից Եվրոպական տնտեսական միավորման [ընդհանուր շուկայի-թարգմ.] համակարգն աստիճանաբար կփոխանցվի Միացյալ Նահանգներին ու Կանադային: ՄԱԿ-ը դանդաղորեն, բայց հաստատուսպես կփոխակերպվի ՀամԿառի գործադիր մարմնի: ՄԱԿ-ի քաղաքականությունը կթելադրվի Միացյալ Նահանգների կողմից, ինչպես ոչ այդ տեսել ենք Պարսից ծոցի պատերազմի պարագայում:

Իսկը նույնանման քան եղավ Բրիտանիայի Պառլամենտում: Պարսից ծոցի պատերազմին Բրիտանիայի մասնակցելու հարցի քննարկումը ծիծաղելիորեն կարճ տևեց. դրա վրա ծախսվեց այնքան ժամանակ, որքան ծախսվում է պալատի նիստերի ընդմիջման առաջարկություն անելու վրա: Պառլամենտի երկար պատմության ընթացքում սա առաջին դեպքն էր, երբ այդպիսի կարևոր սրաշում ընդունելու համար այդքան քիչ ժամանակ էր հատկացվում: Պառլամենտական պատմության մեջ ամենանշանակալի իրադարձությունները մեկը փաստորեն աննկատ անցավ:

Արդեն մոտ ենք այն բանին, որ ԱՄՆ-ը սկսի իր գինված ուժերն ուղարկել կարգավորելու համար Միավորված ազգերի կազմակերպության քննարկմանը ներկայացվող յուրաքանչյուր վեճ: Բազում կաշառք առած և սլաշտոնից արվեն հեռացող գլխավոր քարտուղար Պերես դե Կուելյարը ՄԱԿ-ի պատմության մեջ ամենազիջող առաջնորդն էր, որը Միացյալ Նահանգների բոլոր սլահանջները կատարում էր առանց քննարկելու: Նրա հաջորդը է՛լ ավելի պատրաստակամորեն կկատարի ԱՄՆ-ի կառավարության կարգադրությունները: Սա կարևոր քայլ է դեպի ՀամԿառ տանող ճանապարհին:

Բազմապիսի վեճերի կարգավորման համար հաջողակ երկու տարին կօգտագործվի Հասգայի Միջազգային դատարանը: Սա, անշուշտ, նախատիպն է ՀամԿառի իրավաբանական համակարգի, որը դուրս կմղի մյուս բոլորին: Ինչ վերաբերում է կենտրոնական բանկերին, որոնք էական դեր կկատարեն Համաշխարհային նոր կարգում, ապա այս խն-

ղիրն արդեն գրեթե լուծված է: 1991 թ. վերջին աշխարհի ֆինանսների սասպարեզում գերիշխող դերը կատարում է Միջազգային հաշվարկների բանկը: Մասնավոր բանկերն արագորեն անհետանում են բանկերի «մեծ տասնյակի» ստեղծման ընթացքում, որը կվերահսկի ողջ աշխարհի բանկային գործը ՄՀԲ-ի ու ՄԱՀ-ի ղեկավարությամբ:

Եվրոպայում լրավճարատու (լուտացիոն) շատ պետություններ կան, ԱՄՆ-ն էլ արագորեն դառնում է աշխարհի ամենախոշոր լրավճարատու պետությունը: Եւր մարդիկ պետությունից կախում են ունենում կենսապահովման ոլորտում, նրանց շատ դժվար է հետ սովորեցնել դրանից: Այս բանը նկատվեց նաև ԱՄՆ-ում տեղի ունեցած վերջին ընտրություններից հետո, երբ պետական ընտրովի պաշտոններ զբաղեցնող անձանց 98 տոկոսը Վաշինգտոն վերադարձավ քաղցր կյանք վայելելու, չնայած իրենց ծայրաստիճան ընկած անվանը:

Անձնական հրազեն ունենալն արդեն արգելված է երկրագնդի տարածքի երեք քառորդ մասում: Միայն ԱՄՆ-ում է, որ բնակչությունը դեռևս կարող է ամեն տեսակ զենք ունենալ, սակայն այդ օրինական իրավունքն արագաթափ սահմանափակվում է տեղական և նահանգային օրենքներով, ինչը խախտում է բոլոր քաղաքացիների զենք կրելու սահմանադրական իրավունքը: Առ 2010 թվականը անձնական զենք ունենալն ԱՄՆ-ում կդառնա անցած-գնացած բան:

Նմանապես տազնապահարույց արագությամբ ավերվում է կրթությունը: Իրավաբանական այլևայլ խժբժանքների և փողի պակասի պատճառով մասնավոր դպրոցները ստիպված են փակվել: ԱՄՆ-ում կրթության չափուլաշիջներն այնպիսի ցածր մակարդակի են հասել, որ այն այլևս հազիվ թե կարելի լինի կրթություն կոչել: Սա համապատասխանում է առջևում նկարագրած ծրագրին: ՀամԿառը չի կամենում, որ ձեր ելեխաները լավ կրթություն ստանան:

Արագորեն խարխլվում է ազգային ինքնագիտակցությունը: Հայրենասիրությունն այլևս չի խրախուսվում: Այն արժարժվում է միայն ՀամԿառի ծրագրած ժողովրդասպան պատերազմների դեպքում, որոնք մղվում են այնպիսի երկրների դեմ, ինչպիսիք են Իրաքը կամ Լիբիան: Ցեղային հարստությունն այժմ դատապարտվում է, և դրա դրսևորումներն սպօրինի գործողություններ են համարվում աշխարհի շատ երկրներում, ներառյալ Միացյալ Նահանգները, Բրիտանիան, Արևմտյան Եվրոպան ու Կանադան, որոնցում մեծ է սպիտակ ցեղի խտությունը:

Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո գաղտնի ընկերությունների ղեկավարությամբ արագ թափով խորտակվում են կառավարման հանրապետական ձևերը: Շատ երկար է այն կառավարությունների ցուցակը, որոնց տապալմանը գործակցել է ԱՄՆ-ը: Անիրագեկ մարդը դժվարանում է հավատալ, որ կառավարման հանրապետական ձևին

նվիրված (ինչպես որ համարվում է) երկրի կառավարությունը, այս արտակարգ Սահմանադրությունն ունենալով հանդերձ, կարող է այդպիսի գործողությունների կատարել. քայց փաստերն ինքնին խոսում են:

Այս բանը հարյուր տարի առաջ նպատակադրել էր 300-ի կոմիտեն: ԱՄՆ-ը գրոհել է նմանօրինակ կառավարությունների վրա և շարունակում է գլխիել անգամ այն պարագայում, երբ քայքայվում է իր իսկ հանրապետական հիմքը: Շայունակելով նախագահ Ջեյմս Քարտերի իրավաբանության գծով խորհրդական Լլոյդ Քատլերի սկսած գործը՝ սահմանադրական իրավաբանների մի ամբողջ կոմիտե աշխատում է ԱՄՆ-ի Կոնգրեսը վերածել ժողովրդի ներկայացուցչությունը չսպառնալով պառլամենտական համակարգի: Աշխատանքը կատարվում է 1979 թվականից սկսած՝ այդ վերափոխման ծրագրին համապատասխան: Սույն գործին նվիրված լինելու համար Քատլերին դարձրին 300-ի կոմիտեի անդամ: Կառավարման պառլամենտական ձևի վերջնական նախագիծը 300-ի կոմիտեին պետք է ներկայացվի մինչև 1993 թ. վերջը:

Պառլամենտական նոր համակարգ հաստատվելու դեպքում պառլամենտի անդամները պատասխանատու չեն լինի իրենց ընտրողների առաջ, այլ կենթարկվեն պառլամենտական ղեկավարներին և կրվեարկեն այնպես, ինչպես որ նրանց կիրամայեն: Այսպիսով բյուրոկրատական և իրավաբանական քայքայիչ գործունեության արդյունքը կլինի այն, որ սահմանադրությունն ու անձի ազատությունը ի չիք կդառնան: **Մտորո՞վ վաղորոք ծրագրված աստիճանական վատասերումը (դեգրադացիան) կարագացվի սեռական սանձարձակ հարաբերություններ սերմանելով:** Բրիտանական թագը SIS-ի և Մյ-6-ի միջոցով արդեն հիմա ստեղծում է սեռական այլասերման նոր պաշտամունքներ: Ինչպես իմացանք, այսօր գոյություն ունեցող բոլոր պաշտամունքները ստեղծել է խմբիշխանական տիրակալների համար աշխատող Բրիտանիայի հետախուզությունը:

Կարող ենք կարծել, թե միանգամայն նոր սեռական այլասերված պաշտամունքի ստեղծումը հեռավոր ապագայի բան է, սակայն, ունեցածս տեղեկանյութի համաձայն, այն պետք է ավարտվի մինչև 1992 թվականը: 1994-ին սեռական հարաբերությունների «կենդանի ցուցաբերքը (շոուն)» սովորական ներկայացում կդառնա ամենահարգի զվարճացուցիչ ակումբներում: Հիմա աշխատում են «զվարճանքի» այդ տեսակի համար պատկատելի դիմակ շինել: Շուտով Հոլիվուդի և աշխարհի տեսլարանների նշանավոր դեմքերը կսկսեն ասել, որ ուղղակի անհրաժեշտ է «կենդանի սեքսացուցարքներ» (սեքս-շոուներ) կազմակերպել այս կամ այն ակումբում: Լեսբիական և արվամուլական հարաբերություններ չեն ցուցադրվի: Հասարակության համար ընդունելի նոր «զվարճությունը» կլինի տղամարդու և կնոջ սեռական գործողությունների հրապարակային ցուցադրումը, որոնց մասին մամուլում մեկնաբանություններ կտ-

պագրվեն, ինչպես որ արվում են նոր կինոնկարների առթիվ:

Բարայական արժեքների վրա կատարվող աննախադեպ հարձակումները գազաթնակետին կհասնեն 1992-ին: Պոռնկագրությունն այլևս այդպես չի անվանվի, այլ կհորջորջվի «սեռական զվարճություն մեծերի համար»: Կտարածվեն այսօրինակ կոչեր. «Ինչո՞ւ թաքցնենք մի բան, որը բոլորս ենք անում», «Մի կողմ նետենք այն նախասպաշարմունքը, թե սեռական գործողության հրապարակային ցուցադրամը կեղտոտ ու նողկալի բան է»: Մանձարձակ վավաշտության այդ ձևի սիրահարն այլևս ստիպված չի լինի գնալ հետնախորշերում գտնվող խոճուկ պոռնասրահները: Դրանց փոխարեն կհաճախի հարուստ ու հայտնի մարդկանց այցելած բարձր դասի պերճաշուք ակումբները, որոնցում հրապարակային սեռահարաբերությունները կներկայացվեն «գեղարվեստական» ձևավորմամբ: Ավելի վատն այն է, որ եկեղեցու ոլաշ «առաջնորդներ» սա լավ բան կհամարեն և կառաջարկեն մեզ:

Թավիստոկի ինստիտուտի ստեղծած սոցիալական հոգեբանության վիթխարի, ամենաթափանց, հրեշավոր կառույցը և դրա մասնաճյուղերի լայն ցանցը մեկ մարմնի իշխանության տակ են: Այդ միասնական մարմնի՝ դավադիրների իշխանակարգության անունը 300-ի ԿՈՄԻՏԵ է: Մա մի տիրական կառույց է և իշխանության կենտրոն, որն անհամեմատ գերազանցում է յուրաքանչյուր առանձին առաջնորդի կամ որևիցե կառավարության իշխանությունը, ներառյալ ԱՄՆ-ի կառավարությունը և նրա նախագահները: Ջենեդիի սպանության կազմակերպիչը 300-ի կոմիտեն է, և մենք դրան կանդրադառնանք:

300-ի կոմիտեն բացարձակապես գաղտնի ընկերություն է: Այն կազմված է անձեռնմխելի տիրող դասակարգի ներկայացուցիչներից, որոնց թվում են Անգլիայի թագուհին, Նիդերլանդների թագուհին, Դանիայի թագուհին ու Եվրոպայի թագավորական ընտանիքները:

Հետախուզությունում աշխատելուս շնորհիվ գիտեմ, որ օտարերկրյա պետությունների ղեկավարներն այս ամենագոր խմբին «Մեզեր» են կոչում: Ստալինը նրանց «մութ ուժեր» էր ասում, իսկ ԱՄՆ-ի նախագահ Էյզենհաուերը, որը «պալատական հրեայի» աստիճանից երբեք վեր չբարձրացավ, թերագնահատում էր այդ ուժերին՝ նրանց անվանելով «ոսպարդյունաբերական համալիր»:

Չանգվածային զվարճամիջոցները, հատկապես կինոն, օգտագործվել են այն անձանց վարկաբեկելու համար, ովքեր փորձել են նախագգուշացնել անհատի կամ մարդկության ազատությանը սպառնացող ահռելի վտանգի մասին: Ազատությունը Աստծուց տրված օրենք է, որն իշխանավորները միշտ ջանացել են խախտել կամ վերացնել: Բայց մարդու ազատության տենչն այնքան ուժգին է, որ ոչ մի համակարգ գայժմ չի կարողացել այդ զգացումը պոկել նրա սրտից: Ազատության

ձգտումը բթացնելու և թուլացնելու համար ԽՍՀՄ-ում, Բրիտանիայում և ԱՄՆ-ում կատարված փորձերն այդպես էլ ի դերս ելան:

Համաշխարհային կառավարության և Համաշխարհային նոր կարգի հաստատման դեպքում լայնածավալ գիտափորձեր կարվեն Աստծու տված ազատության ձգտումը մարդու մտքից, մարմնից ու հոգուց արմատախիլ անելու համար: Այն, ինչ մենք արդեն ճաշակում ենք, դատարկ բան է նրա համեմատությամբ, ինչ դեռ լինելու է: **Հոգու վրա կատարված հարձակումները նախապատրաստվող գիտափորձերի հիմքն են, և ես ցավով պիտի ասեմ, որ ԱՄՆ-ի հիմնարկներն առաջատար դեր են խաղալու այն սոսկալի փորձերի ոլորտում, որոնք փոքր չափերով արդեն ոլրվել են Բեռլինի ռազմածովային հոսպիտալում և Վակավիլի (Կալիֆորնիա) բանտում:**

Լայնորեն ցուցադրվում էին Ջեյմս Բոնդի մասին կինոնկարները, ինչպիսիք են «Մպանությունների բյուրոն», «Մատարեզեի շրջանը» և այլն: Դրանք ֆանտաստիկ պատմություններ են, որոնք հատուկ ստեղծվել են այն ճշմարտությունը թաքցնելու համար, որ այդպիսի կազմակերպություններ իրոք կան, և դրանց գործունեության ասպարեզն այնքան մեծ է, որ անսանձ երևակայության տեր հոլիվուդյան գրչակներն իսկ չեն կարող պատկերացնել:

«Մպանությունների բյուրոն» միանգամայն իրական բան է. գործում է Եվրոպայում և ԱՄՆ-ում մեկ նպատակով, այն է՝ 300-ի կոմիտեի կարգադրությամբ սպանել բարձրաստիճան անձանց, երբ նրանց վրա ազդելու բոլոր միջոցները ապարդյուն և սպառված են լինում: Քենեդիի սպանությունը հենց PERMINDEX-ն է կատարել սրբ Վիլյամ Ստեֆենսոնի ղեկավարությամբ, որը երկար տարիներ եղել է Անգլիայի թագուհու գլխավոր գործակալը «վնասարարների դեմ պայքարի» գծով:

ԱՄՆ-ի Հետախուզության կենտրոնական վարչության վարձու գործակալ Զլեյ Շոուն PERMINDEX ընկերությունը կառավարում էր Նոր Օռլեանի «Առևտրի կենտրոնից»: Նոր Օռլեանի նախկին դատախազ Ջիմ Հարիսոնը բացահայտելու վրա էր Բենեդիին սպանելու նպատակով կազմակերպված դավադրությունը և արդեն բռնել էր Զլեյ Շոուի հետքը, երբ նրա հետ «լուրջ խոսակցություն են ունենում», և Շոուն դավադրության մասնակից չի համարվում: Այն փաստը, որ Շոուին վերացրել են նույն ձևով, ինչ որ Ջեյ Ռոբինսոն՝ ՀԿՎ-ի մյուս վարձու գործակալին (երկուսն էլ մահացել են քաղցկեղի սրընթաց տեսակով վարակվելու հետևանքով), խոսում է Հարիսոնի ճիշտ ուղու վրա լինելու մասին:

Երկրորդ «սպանությունների բյուրոն» գտնվում է Շվեյցարիայում: Սինչև վերջերս այն ղեկավարում էր մի մութ անձնավորություն (ի դեպ ասենք, որ սա 1941 թվականից հետո հանված լուսանկար չունի): Այս բյուրոյի գործառնությունները դրամավարվել են և ըստ երևույթին հիմա

Էլ դրամավորվում են Օլտրամարների ընտանիքի՝ Շվեյցարիայի Սև արխատոկրատների կողմից, որոնք 300-ի կոմիտեի գործառնական (օպերատիվ) կազմակերպության՝ «Ժնևի Լամբարդ Օդիեր բանկի» տերն են: Ըստ ԱՄՆ-ի բանակի հետախուզության «G-2» բաժնի փաստաթղթապանակի (դոսիեի)՝ բյուրոյի գլխավոր հաղորդակցային (կոնտակտային) անձը եղել է Ժակ Սուստելը:

Այս խումբը՝ «բյուրոն», սերտորեն կապված էր նաև Ալեն Գալեսի և 300-ի կոմիտեի կարևոր անդամ ու Տեխասի խոշոր նավթարդյունաբերող Ժան դը Մենիլի հետ: «G-2»-ի տվյալները ցույց են տալիս, որ խումբը եռանդուն մասնակցություն է ունեցել Մերձավոր արևելքում կատարվող գեների առևտրին և, բացի դրանից, գեներալ դը Գոլին սպանելու առնվազն 30 փորձ է կատարել, որոնց անմիջականորեն մասնակցել է Ժակ Սուստելը: Սա եղել է հաղորդակցային անձը «Մեղդերա լումինատ» (իսպ. լուսավոր ուղի) ապստամբ խմբի, որը պաշտպանում էր 300-ի կոմիտեի համար Պերուի կոկաին արտադրողներին:

Երբ «սպանությունների բյուրոյի» հիմնական բոլոր ծրագրերը տապալվում են DGSE-ի (Ֆրանսիայի հետախուզության՝ նախկին SDECE-ի) գերազանց աշխատանքի շնորհիվ, գործը հանձնարարվում է ՄԻ-6-ին (զինվորական հետախուզության 6-րդ բաժնին), որը հայտնի է նաև որպես «Գաղտնի հետախուզական ծառայություն» (Secret Intelligence Service) (CPC=SIS)՝ «Շնագայլ» (շակալ) կոդանունով: SDECE-ն գործի էր ընդունում բարձրագույն ուսումնական հաստատությունների խելացի ու երիտասարդ շրջանավարտներին, որոնց ճարտար աշխատանքի շնորհիվ ՄԻ-6-ի և ԽՍՀՄ ՊԱԿ-ի գործակալները չէին կարողանում թափանցել Ֆրանսիայի հետախուզություն: Օտարերկրյա գործակալներին հայտնաբերելու նրա հմտությունը նախանձի առարկա էր դարձել բոլոր երկրների գաղտնի ծառայությունների համար: Հենց այս խումբն է «Շնագայլին» հասցրել մինչև նրա նպատակակետը, իսկ հետո սպանել, նախքան նա կկարողանար կրակ բացել դր Գոլի ավտոթափորի (կորտեժի) վրա:

Հենց SDECE-ն է դր Գոլի կառավարական առանձնատեսչակում դիմակազերծել խորհրդային «խլուրդին», որը, ինչպես պարզվեց, նաև ՀԿՎ-ի ու ՊԱԿ-ի կապավորն էր: Ալեն Գալեսը, որն ատում էր դր Գոլին (սա էլ նրան), SDECE-ին վարկաբեկելու համար նրա գործակալներից մեկին՝ Ռոժե դը Լուետին, կալանավորում է 12 միլիոն ֆրանք արժեքով ինքուինի բեռով «հանդերձ»: Լուրջ ու հմուտ «հարցաքննությունից» հետո դր Լուետը «խոստովանում է», բայց չի կարողանում ասել, թե ինչու է թմրանյութերի մաքսանենգությանը զբաղվել հենց ԱՄՆ-ում: Այս գործի սարքված լինելը ակնբախ էր:

Ուսումնասիրելով SDECE-ի գործելակերպը, թե նա ինչպես է դր Գո-

լին պաշտպանում հատկապես ավտոթափորի մեջ, Հետաքննությունների դաշնային բյուրոն, «Գաղտնի ծառայությունը» և Հետախուզության կենտրոնական վարչությունը ճշտիվ գիտելին ինչպես չեզոքացնել Քենեդիի պահակախմբին և PERMINDEX-ի ելեք հյրաձիգների համար դյուրացնել Դիլի Պլազայում նրա սպանությունը:

ՄՕՍՍԱԳ-ը հայտնի է նաև «Ինստիտուտ» անունով: Մի շարք հավակնոտ գրողներ, հատկապես մեկը, որ շատ հարգված է աջ քրիստոնեական շրջանակներում, այս կառույցի մասին անհեթեթ հայտարարություններ են անում, որոնք որպես ճշմարտություն են ընդունվում: Սա կարելի է վերագրել հիշյալ գրողի անփորձությանը, քանի որ նա հետախուզական հատուկ պատրաստություն չի անցել: Սակայն այս բանը նրան չի խանգարում, որ գրվածքով մեկ «մոսսադական անուններ» շող տա:

Տարագեկման (դեզինֆորմացիայի) այսպիսի արտանետումները սովորաբար գործադրվում են ամերիկյան աջ հայրենասիրական խմբերի դեմ: ՄՕՍՍԱԳ-ը սկզբնապես բաղկացած էր 3 խմբից, որոնք էին Ջինվուրական հետախուզության բյուրոն, Արտաքին գործերի նախարարության քաղաքական դեպարտամենտը և Անվտանգության վարչությունը: 300-ի կոմիտեի անդամ Դավիդ Բեն Գուրիոնը ՄԻ-6-ից զգալի օգնություն է ստանում դրանք միավորելու համար: Սակայն գործը չի հաջողվում, և ՄԻ-6-ի պաշտոնյա սըր Վիլյամ Ստեֆենսոնը 1951 թ. ՄՕՍՍԱԳ-ը դալձնում է մեկ ծառայություն՝ Իսրայելի Արտաքին գործերի քաղաքական դեպարտամենտի բաժանմունք, որը հատուկ խումբ ուներ լրտեսություն և «սև աշխատանք» կատարելու համար:

Բրիտանիայի հետախուզությունն օգնել է «Մարայետ մակտալ» ծառայության հետագա ուսուցման ու հանդերձավորման գործին: Սա հայտնի է նաև Գլխավոր շտաբի հետախուզության բաժանմունք անունով, որն ստեղծվել է Բրիտանիայի «Օդային հատուկ ծառայության» (CBC) (Britain's Special Air Service-SAS) նմանությամբ: ՄՕՍՍԱԳ-ի այս ստորաբաժանումը երբեք չի հիշատակվում իր անունով. նրա մասին ուղղակի ասում են՝ «այդ տղերքը»:

«Այդ տղերքը» պարզապես մասնաճյուղն էն Բրիտանիայի CBC հետախուզական ծառայության, որը մշտապես մարզում է նրանց և սովորեցնում գործելու նոր եղանակներ: Հենց «տղերքն» են սպանել Պաղեստինի ազատագրման կազմակերպության առաջնորդներին և փախցրել Ադուֆ Էյխմանին: [Պետք է լինի Կարլ. հրեաների դահիճը II աշխարհամարտում - Վ. Ա.:] ՄՕՍՍԱԳ-ը մյուս հետախուզական ծառայությունների համեմատությամբ հսկայական առավելություններ ունի այն պատճառով, որ աշխարհի ամեն երկրում հրեական համայնք կա:

Անձի քրեական ու սոցիալական փաստապանակն ուսումնասիրելով՝ ՄՕՍՍԱԳ-ն ունակ է գործակալներ հավաքագրելու տեղի այն հրեաների

միջից, որոնց դեմ որևիցե վարկաբեկիչ նյութ կա, և ՆՐԱՆՑ ՍՏԻՊԵԼՈՒ, ՈՐ ԱՆՎՃԱՐ ԿԱՏԱՐԵՆ ԻՐ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՄՕՍՍԱԳ-ն ունի նաև այն առավելությունը, որ կալուղ է օգտվել իրավապահ մարմինների և հետախուզական ծառայությունների արխիվներից: ԱՄՆ-ի Ռ-ազմածովային հետախուզության վարչությունը սպասարկում է ՄՕՍՍԱԳ-ին, ընդ որում Իսրայելը դրա համար ոչ մի ծախս չի անում: Միացյալ Նահանգների քաղաքացիները կշփոթահարվելին, կգայրանային ու կվախենային, եթե մի օր հայտնի դառնար, որ ՄՕՍՍԱԳ-ն ինչքան շատ բան գիտե միլիոնավոր ամերիկացիների, նույնիսկ քաղաքականության հետ ոչ մի կապ չունեցողների կյանքի բոլոր կողմերի մասին:

ՄՕՍՍԱԳ-ի առաջին ղեկավար Ռուբին Շիրախին դարձրել էին 300-ի կոմիտեի անդամ, սակայն հայտնի չէ, թե նրա հաջորդին արժանացրե՞լ են այդ առանձնաշնորհին: Բայց շանսերը շատ են, որ նա ստացած լինի այն: ՄՕՍՍԱԳ-ն ունի տարազեկման որակյալ ծառայություն: Ամերիկյան «շուկային» նրա տված ապակողմնադրիչ տեղեկությունների քանակն անհանգստություն է առաջացնում, բայց է՛լ ավելի անհանգստություն է առաջացնում այն բանը, որ այդ հասարակությունն ամբողջովին կլանում ու մարսում է այդ տարազեկումը: Ի դեմս ՄՕՍՍԱԳ-ի «մանրաշխարհի» (միկրոկոսմոսի)՝ հստակորեն տեսնում ենք այն լայնածավալ վերահսկողությունը, որ «օլիմպոսցիներն» աշխարհով մեկ իրականացնում են հետախուզական ծառայությունների, զվարճանքների արվյունաբերության, հրատարակչական գործի, հասարակական կարծիքի ստեղծման և «նորությունների» (լուրերի Վ. Ա.) հեռուստամիջոցների վրա: Թեղ Թյուրները վերջերս որպես պարզև 300-ի կոմիտեում տեղ ստացավ CNN-ի «նորությունների» (ավելի ճիշտ՝ նորությունների [լուրերի] հերյուրման ու տարածման) ծրագրերի ստեղծելու համար: Կոմիտեն իշխանություն, հնարավորություն և միջոցներ ունի ողջ աշխարհի մարդկությանն ասելու ՑԱՆԿԱՑԱԾ ԲԱՆԸ, և հսկայական մեծամասնությունը դրան կհավատա:

Ամեն անգամ, երբ որևէ հետազոտ դեմ է առնում այս շշմեցուցիչ կառավարման կենտրոնական խմբին, կա՛մ հաշտ ու խաղաղ կերպով գնվում է վերջինիս կողմից, կա՛մ էլ «հատուկ մշակման» է ենթարկվում թավախտոկի ինստիտուտում, որից հետո սկսում է Ջեյմս Բոնդի պատմությունների պես երևակայական (ֆանտաստիկ) բաներ գրել: Այսինքն՝ մարդու եռանդին իրենց հարկավոր ուղղությունն են տալիս, իսկ նրան էլ՝ առատորեն վարձատրում: Իսկ երբ Ջոն Քենեդիի պես մեկը բախվում է այն ճշմարտությանը, թե ով է ուղղություն տալիս աշխարհի իրադարձություններին, և անկաշառելի է մնում, նրան սպանում են:

Քենեդիի սպանությունը կատարվեց բոլորի աչքի առաջ, մարդկանց ստվար բազմության առկայությամբ և չափազանց դաժան կերպով: Սա

սկնհայտ նախազգուշացում էր աշխարհի բոլոր առաջնորդներին, որ հնազանդ մնան: Հովհաննես Պողոս Ա պապը սպանվեց կամացուկ, սուսուփուս, սրովհետև նա 300-ի կոմիտեին մերձ էր մասունների և Վատիկանի նվիրապետության միջոցով: Նրա հաջորդը՝ Հովհաննես Պողոս Բ-ն, որպէս նախազգուշացում, ենթարկվեց հրապարակային նվաստացման[†], որպեսզի անցանկալի գործունեությունը դադարեցնի: Ինչպես կտեսնենք, Վատիկանի որոշ առաջնորդներ այսօր մասնակցում են 300-ի կոմիտեի նիստերին:

Անգամ լուրջ հետազոտին հեշտ է շեղել 300-ի կոմիտեի հետքից, քանի որ Բրիտանիայի ՄԻ-6-ը (CBC-ն) նպաստում է լայն երանգանու այնպիսի «հոգևոր խաղերի» տարածմանը, ինչպիսիք են «Նոր դարը», յագությունը, մոգությունը, ձեն-բուդդայականությունը, «Ապոլոնի դեփիասկան քահանայությունը» (Արիստոտելը եղել է սրա անդամը) և հարյուրավոր մանր-մունր «պաշտամունքներ»: Բրիտանիայի հետախուզության մի խումբ «պաշտոնաթող» գործակալներ դավադիրների լիջխանակարգությունը նշանակել են «Իքս ուժ» (Force X) եզրով և հայտարարել են, որ այն ունի հետախուզական գերիզոր ծառայություն, որը թափանցել է ԽՍՀՄ Պետանվտանգության կոմիտե, Վատիկանի հետախուզություն, ԱՄՆ-ի Հետախուզության կենտրոնական վարչություն, ONI, DGSE, ԱՄՆ-ի Զինվորական հետախուզություն, Պետդեպարտամենտի հետախուզական ծառայություն և նույնիսկ ԱՄՆ-ի հետախուզական վարչություններից ամենագաղտնին՝ Ազգային հետախուզության վարչություն (ԱՀՎ):

300-ի կոմիտեից բացի, ԱՀՎ-ի գոյության մասին գիտեին լոկ մի բուռ մարդիկ, մինչև որ սրան միանգամայն պատահաբար չի բախվում նախագահ Տրումենը: Չերչիլը, որի մատը խառն էր ԱՀՎ-ի կիմնադրման մեջ, զազազում է, երբ Տրումենը բացահայտում է դրա գոյությունը: Չերչիլը Տրումենին համարում էր «ոչ մի անկախություն չունեցող իր փոքրիկ մարդը, որ եկել էր Ինդեպենդենս (= անկախություն) ավանից»: Այսպես կար-

† Հավանաբար ակնարկում է 1981 թ. նրա դեմ կատարված մահափորձը: Արհեստավարժ թուրք մարդասպանը կրակել էր Հովհաննես Պողոս Բ-ի վրա, բայց կարողացել էր միայն վիրավորել: Պապը բանտում այցելել է բրքին և ներել: Հովհաննես Պողոս Բ-ն (1978-2005) Հռոմի պապերից միակն է, որին ննջումից ընդամենը 2 տարի անց եկեղեցին սուրբ է հռչակել: Պատճառը գերեզմանի մոտ նրա բարեխոսությունը խնդրած անբուժելի հիվանդների բժշկվելն էր: Հռոմի պապերից միակն է, որ եկել է Հայաստան (քրիստոնեությունը պետական կրոն ընդունվելու 1700-ամյակի առթիվ): Գրիգոր Լուսավորչի՝ դարերով օտարության մեջ գտնվող մասունքը այս Պապի թույլտվությամբ Հայաստան բերվեց: Այս Պապը Վատիկանի տաճարում կանգնեցնել տվեց համաքրիստոնեական սուրբ Գրիգոր Լուսավորչի արձանը (Վ. Ա.):

ծելու պատճառն այն էր, որ Տրումենի ամեն շարժումը վերահսկվում էր մասուններից: Նույնիսկ այսօր ԱՀՎ-ի ամենամյա բյուջեն հայտնի չէ ԱՄՆ-ի Կոնգրեսին: Իսկ ԱՀՎ-ն անառարկելիորեն ենթարկվում էր 300-ի կոմիտեին, որտեղ մի քանի ժամը մեկ ստացվում են նրա հաղորդումները:

Կոմիտեի գանազան բաժանմունքներում և կառավարման մարմիններում մոլորեցնող կեղծիքներ են թխվում՝ վերացնելու համար այն կասկածը, թե 300-ի կոմիտե կա: Բայց մենք ոչ մի դեպքում չպետք է տարակուսենք, որ նա գոյություն ունի: Մի օրինակ էլ բերեմ, թե ինչը նկատի ունեմ. դա «ՇՆԱԳԱՅԼԻ ՕՐԸ» գիրքն է, որի հիման վրա մի հանրաճանաչ ֆիլմ է նկարահանվել:

Գրքում իրական դեպքեր են նկարագրվում: Թեև գործող անձանց և վայրերի անունները հասկանալի պատճառներով փոխված են, բայց այն պատմությունը, որ ՄԻ-6-ի գործակալներից մեկին զեներալ ղը Գոլին վերացնելու հրաման է տրված եղել, բացարձակապես ճիշտ է: Գեներալն «անկառավարելի» էր դարձել՝ հրաժարվելով Կոմիտեի հետ համագործակցելուց: Իսկ սրա գոյության մասին նա շատ լավ գիտեր, քանի որ նրա անդամը դառնալու հրավեր էր ստացել: Բախումը գազաթնակետին է հասնում, երբ ղը Գոլը հայտարարում է ՆԱՏՕ-ից Ֆրանսիայի դուրս գալու մասին և անհապաղ սկսում է ստեղծել սեփական միջուկային ուժերը՝ այսպես կոչված «հարվածային ուժերը»:

Այս բանն այնպես է կատաղեցնում Կոմիտեին, որ հրամայում են ղը Գոլին սպանել: Բայց Ֆրանսիայի հետախուզական գաղտնի ծառայությունը կարողանում է բացահայտել «Շնագայլի» պլանները և վտանգագերծել ղը Գոլին: ՄԻ-6-ի (որը, կարող եմ ավելացնել, 300-ի կոմիտեի գլխավոր մարմինն է) հաշվետվությունների լույսի տակ Ֆրանսիայի հետախուզության աշխատանքն արտացոլվում է որպես հրաշքի պես մի բան:

«Զինվորական հետախուզության վեցերորդ բաժնի» (ՄԻ-6-ի) ստեղծումը կապված է սրբ Ֆրենսիս Ուոլսինգհեմի անվան հետ, որը եղել է Եղիսաբեթ I-ի [1533-1603 թթ.] օգնականը ամեն տեսակ կեղտոտ գործառնությունների գծով: Իր գոյության հարյուրավոր տարիների ընթացքում ՄԻ-6-ն այնպիսի հսկայական փորձ է կուտակել, որի նույնիսկ հեռավոր համադրելին չունի աշխարհի և ոչ մի հետախուզություն: ՄԻ-6-ի գործակալները տեղեկություններ են հավաքել մոլորակի բոլոր անկյուններում և այնպիսի գաղտնի գործառնություններ են կատարել, որոնք կգարմացնեին անգամ ամենախրազեկ մարդուն, եթե հրապարակվեին: Ահա թե ինչու է այս բաժինը համարվում 300-ի կոմիտեի առանցքային ծառայությունը:

ՄԻ-6-ը պաշտոնապես գոյություն չունի. նրա բյուջեն լրացվում է թագուհու անձնական դրամագլուխներից ու «մասնավոր դրամագլուխներից» և, ինչպես հաղորդում են, կազմում է տարեկան 350-500 մի-

լիոն դուլար: Մակայն դրա ճշգրիտ գումարը ոչ մեկը չգիտե: Իր ներկայիս ձևով ՄԻ-6-ը գոյություն ունի 1911 թվականից, երբ այն դեկավարում էր թագավորական նավատորմի պետ սըր Մենսֆիլդ Քամինգզը, որի անունը միշտ նշանակում էին «Զ» տառով: Մրանից էլ սկիզբ է առել ջեյմսբոնդական «M»-ի փառքը:

Մի-6-ի գործունեության մասին պաշտոնական ոչ մի պատմություն չկա. դա խիստ գաղտնիք է, թեև Բերջեսի, Մակլինի, Բլեյկի, Բլանտի ձախողումները մեծ վնաս են հասցրել ՄԻ-6-ի սպաների բարոյական ոգուն: Ի տարբերություն մյուս ծառայությունների, ՄԻ-6-ի ապագա աշխատողներին համալսարաններից ու մյուս ուսումնական հաստատություններից ընտրում են բարձր որակավորում ունեցող «տաղանդորսները»: Ընտրվածները Ռոյսի կրթաթոշակառուներ են, որոնց դարձրել են «Կլոբ սեղանի» անդամներ: Թեկնածուներին ներկայացվող պահանջներից մեկը օտար լեզուների տիրապետելն է: Թեկնածուները ենթարկվում են «արյան մաքրության» խիստ ստուգման:

Այսպիսի ակեղ ուժն իրեն սատար ունենալով՝ 300-ի կոմիտեն կալուղ է չեղկյաղել մերկացվելուց, և սա կշարունակվի ևս տասնյակ տարիներ: Կոմիտեի գոյությանը հավատարմություն խանգարում է այն անհավատալի գաղտնիությունը, որով նա պարտրված է: Չանգվածային լրատվամիջոցներից ոչ մեկը երբևիցե չի հիշատակել այս դավադիր կազմակերպության մասին. ուստի միանգամայն բնական է, որ մարդիկ կասկածում են նրա գոյությանը:

300-ի կոմիտեն մեծ մասամբ գտնվում է Բրիտանիայի միապետի, տվյալ դեպքում՝ Եղիսաբեթ II-ի վերահսկողության ներքո: Վիկտորիա՝ թագուհին, ինչպես կարծում են, տառապել է Կոմիտեի կառավարման գաղտնիքը պահպանելու մոլուցքից՝ խելացնորությունից (պարանոյա) և բոլոր ջանքերը գործադրել է թաքցնելու համար «փոքր թափող Ջեկի»¹ հանցագործությունների տեղերում թողնվող ՄԱՍՈՆԱԿԱՆ գրությունների փաստը, ինչն ակնարկում էր 300-ի կոմիտեի առնչությունն այն «գիտափորձերին», որոնք կատարում էր Շոտլանդական ծեսի բարձրաստիճան մի մասոն: 300-ի կոմիտեն լցոնված է բրիտանացի արիստոկրատներով, որոնք իրենց խմբակային շահերն ու գործակիցներն ունեն աշխարհի ամեն երկրում, այլև ԽՍՀՄ-ում:

¹ Անգլիայի թագուհին 1837-1901 թթ. (Վ. Ա.):

² Այս թագուհու օրոք լույս ընկած անորսալի մարդասպան, որը գիշերները մորթոտում էր անցորդներին: Պայմանական անունն է (Վ. Ա.):

300-ի կոմիտեն ունի հետևյալ կառուցվածքը.

Սուսեկի համալսարանին առընթեր Թավիատոկի ինստիտուտը և նրա լոնդոնյան մասնաճյուղը պատկանում են Միջազգային գործերի քաղաքական ինստիտուտին և կառավարվում են սյրա կոդմից, որի «պալատական հրեան» Ամերիկայում Հենրի Քիսինջերն է: «ԱՐԾՎԻ ԵՎ ԱՍՏՂԻ ԽՈՒՄԲԸ», որը Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո վերանվանվեց «ԱՍՏՂԻ ԽՈՒՄԲ», ընդգրկում է մի խումբ միջազգային խոշոր ընկերությունների, որոնք գործում են հետևյալ ասպարեզներում՝ 1) ապահովագրություն, 2) բանկային գործ, 3) անշարժ գույք, 4) զվարճություններ, 5) բարձր ճարտարարվեստներ (տեխնոլոգիաներ), ներառյալ կիրեռնետիկան, էլեկտրոնային կապի միջոցները և այլն:

Բանկային գործարարությունը կենսականորեն կախույր դեր է կատարում հատկապես այն շրջաններում, որտեղ բանկերն աշխատում են որպես քլիրինգապալատներ և թմրափող լվալու միջոցներ: Բանկային ոլորտում ամենաբարձրադորոշ անուններն են «Անգլիայի բանկը», «Դաշնային պահուստի համակարգը¹», Միջազգային հաշվարկների բանկը, Համաշխարհային բանկը և «Հոնկոնգ Էնդ Շանհայ բանկինգ քորպորեյշն»-ը (HSBC): «Ամերիկան Էքսպրեսս բանկը» թմրադուլար լվալու միջոց է: Այս բանկերից յուրաքանչյուրը մասնաճյուղեր ունի և վերահսկում է աշխարհով մեկ ցրված հարյուրավոր և հազարավոր մեծ ու փոքր բանկեր:

300-ի կոմիտեի ցանցի մեջ հազարավոր մեծ ու փոքր բանկեր կան, որոնցից են Banca Commerciale Italiana-ն, Banca Privata-ն, Banco Ambrosiano-ն, The Netherlands Bank-ը, Barclays Banc-ը, Banco del Colombia-ն, Banco del Ibero-America-ն: Հատուկ ուշադրության է արժանի Banca del la Svizzera Italiana (BSI)-ն, քանի որ սա զբաղվում է Վենետիկի Սև արխատկրատիայի «ցնդող կապիտալի» կենտրոն Լուզանոյից ԱՄՆ-ում «ցնդող կապիտալներ» ներդնելով, ինչն անում է գլխավորապես ԱՄՆ-ի դոլարով ու փոխառության պարտատոմսերով: Լուզանոն ո՛չ Իտալիայում է գտնվում, ո՛չ Շվեյցարիայում. այն ստվերային գոտի է ստվերային «ցնդող կապիտալով» գործառնություններ կատարելու համար: ԱՄՆ-ի բանկի ազդեցիկ «ինսայդեր» (կազմակերպության գաղտնիքներն իմացող) ու ներկայացուցիչ Ջորջ Բոլլը վերոհիշյալ

¹ Սա ոչ թե կառավարական հաստատություն է, այլ բաժնետերերի առևտրական ընկերություն (Վ. Ա.):

բանկում մեծ բաժնետոմսավաթեր ունի:

Ահա ևս մի բանիսը «մասնագիտացված» բանկերի հսկայական ցուցակից. Bank of Credit and Commerce International (BCCI), Banca Nazionale Del Lavoro (BNL), Banco Mercantil de Mexico, Banco Nacional de Panama, Bank Leumi (Իսրայել), Bank Hapoalim (Իսրայել), Standard Bank, Bank of Geneva, Bank of Ireland, Bank of Scotland, Bank of Montreal, Bank of Nova Scotia, Banque Paris et Pays Bas, British Bank of the Middle East, the Royal Bank of Canada.

Հարավային Աֆրիկայի Օպեմհեյմերները հանդես են գալիս անհամեմատ ավելի «ծանր քաշակարգում», քան Ռոքֆելերները: Օրինակ, ամբողջ աշխարհում ոսկու և ադամանդի հանույթն ու իրացումը վերահսկող վիթխարի Anglo American Corporation-ի նախագահ Հարի Օպեմհեյմերը 1981 թ. հայտարարում է, որ մտադիր է մտնել հյուսիսամերիկյան բանկային շուկա: Նա շտապ 10 միլիարդ դոլար է հատկացնում հատուկ ստեղծված ընկերությանը, որպեսզի սրա միջոցով ԱՄՆ-ի խոշոր բանկերի բաժնետոմսավաթերն զնլի: Այդ բանկերից մեկը Citicorp-ն էր: Օպեմհեյմերի Minorco կոչված ներդրումային ընկերությունը մասնաճյուղ է ստեղծում Բերմուդյան կղզիներում՝ Բրիտանիայի թագավորական ընտանիքի տոհմական արգելոցում: Minorco-ի տնօրենների խորհրդի կազմի մեջ առնվում են Citicorp-ի Ուոլտեր Վրիստոնը և դրա գլխավոր իրավախորհրդատու Ռութերտ Քլերը:

Թանկարժեք մետաղների ու հանքանյութերի ասպարեզում Օպեմհեյմերի հետ մրցակցող միակ ընկերությունը Consolidated Gold Fields of South Africa-ն էր, բայց Օպեմհեյմերը, որպես ամենախոշոր բաժնետեր, նրա վրա վերահսկողություն է հաստատում: Այդպիսով, ոսկին, ադամանդը, պլատինը, տիտանը, տանտալը, պղինձը, երկաթաքարը և 52 այլ մետաղներ ու հանքանյութեր, որոնցից շատերը ԱՄՆ-ի համար կենսականորեն կարևոր ռազմավարական արժեք ունեն, անցնում են 300-ի կոմիտեի ձեռքը:

Այս էր 300-ի կոմիտեի հարավաֆրիկյան հին անդամներից մեկի՝ Սեսիլ Չոն Ռոդսի ծրագիրը, որն այժմ կենսագործվել է: Դրա իրականացումն սկսվել է Հարավային Աֆրիկայի այն հազար-հազար սպիտակամորթ ֆերմերների և նրանց ընտանիքների արյան հեղմամբ, որոնք պատմություն մտան «բուրեր» անունով: Այն ժամանակ, երբ Միացյալ Նահանգներն ու ամբողջ աշխարհը ձեռքերը ծալած նստել էին, այս փոքր ժողովուրդը ենթարկվում էր պատմության մեջ ամենադաժան ռազմական ցեղասպանությանը: 300-ի կոմիտեն Միացյալ Նահանգների համար նույն բախտն է որոշել, և այն յոթ սարի հետևում չէ:

Ապահովագրական ընկերություններն առանցքային դեր են կատարում 300-ի կոմիտեի գործարարության ասպարեզում: Դրանց մեջ են

ապահովագրական այնպիսի գլխավոր ընկերություններ, ինչպիսիք են Assicurazioni Generali-ն (Վենետիկ) և Riunione Adriatica di Sicurta-ն: Այս ընկերությունները մեծությամբ աշխարհում գրավում են կամապատասխանաբար I և II տեղերը: Իրենց բանկային հաշիվները սրանք շվեյցարական ոսկե ֆրանկով պահում են Միջազգային հաշվարկների բանկում: Երկուսն էլ վերահսկում են ներդրումային բազմաթիվ բանկեր, որոնց բաժնետոմսերի շրջանառությունը Ուոլստրիտում երկու անգամ ավելի է, քան ԱՄՆ-ի ներդրողներինը: Ապահովագրական այս երկու հսկաների տնօրենների խորհուրդներում առանցքային դերը կատարում են 300-ի կոմիտեի հետևյալ անդամները. Հոմնի ու Վենետիկի Սև արխատոկրատիային պատկանող Ջուստինիանիների ընտանիքը, որի ազգաբանությունն սկսվում է Հուստինիանոս կայսրից, Hambros (Merchant) Bank-ի Ջոսեֆին Համբրոն, Պիեռպաոլո Լուզաաի Ֆեկիզը, որի ազգաբանությունը վեց դարի պատմություն ունի և սկիզբ է առնում ամենահին Լուզաաիներից՝ Վենետիկի Սև արխատոկրատիայից, և նույն տոհմի Սև արխատոկրատիայի հինավուրց ընտանիքից սերած Ումբերտո Օրտոլանին:

Ահա 300-ի կոմիտեի՝ վենետիկյան Սև արխատոկրատիայի հին ընտանիքներից սերած այլ անդամներ և Assicurazioni Generali-ի և Riunione Adriatica di Sicurta-ի վարչությունների անդամներ. Գորլյաների ընտանիքը (Իսպանիայի Հաբսբուրգների ֆինանսագետներ), Էլի դը Ռոթշիլդը, բարոն Ավգուստ ֆոն Ֆինկը՝ Գերմանիայի երկրորդ ամենահայտատմարդը (այժմ հանգուցյալ), Ֆրանկո Օրսինի Բոնակասին՝ Սև արխատոկրատիայի այն հին Օրսինիներից մեկը, որոնց ազգաբանությունն սկսվում է հին Հոմնի նույն ազգանունն ունեցող սենատորից, Ալբաների ընտանիքը, որի ազգաբանությունը սկիզբ է առնում մեծ դուքս դը Ալբայից, և բարոն Պիեռ Լամբերը՝ Բելգիայի Ռոթշիլդների ընտանիքի ազգականը:

Բրիտանիայի թագավորական ընտանիքի կողմից վերահսկվող անգլիական ընկերությունների մեջ առավել հիշարժան են Eagle Star-ը («Արծվի աստղ»), Prudential Assurance Company-ն, Prudential Insurance Company-ն, որը վերահսկում և տիրում է Ամերիկայի ապահովագրական ընկերությունների մեծ մասին, որոնց մեջ է Allstat Insurance-ն: Այդ ցուցակում առաջինը Eagle Star-ն է, որը հավանաբար ՄԻ-6-ի ամենահզոր ու ապահով «ապաստարանն» է: Թեև Eagle Star-ն իր մեծությամբ չի կարող մրցել Assicurazioni Generali-ի հետ, սակայն նա, ըստ երևույթին, պակաս կարևոր հիմնարկ չէ, քանի որ իբրև տեր ունենալով թագավորական ընտանիքին և լինելով 300-ի կոմիտեի անվանական ղեկավարը՝ հսկայական ազդեցություն ունի:

Eagle Star-ը «ապաստարան» է նաև Բրիտանիայի խոշորագույն բանկերի համար, որոնցից են Hill-Samuels-ը, N.M. Rothschild and Sons-ը (ամեն օր Լոնդոնում հանդիպող ոսկու գնի «սկեռիչներից» մեկը) և

Barclays Bank-ը (Աֆրիկայի Ազգային կոնգրեսի դրամավորման աղբյուրներից մեկը): Վստահարար կարելի է ասել, որ Բրիտանիայի խմբիչխասնական ամենաազդեցիկ ընտանիքներն են ստեղծել Eagle Star-ը՝ որպես «սև գործառնությունների» կատարման միջոց 300-ի կոմիտեի քաղաքականությանը հսկառակողների դեմ:

ՄԻ-6-ի բարձրագույն ղեկավարների անունների հրապարակումը լուրջ կանցազորություն է համարվում Բրիտանիայի օրենքներով, ուստի ստորև կտրվի ՄԻ-6-ի ղեկավար վերնախավի միայն մասնակի ցուցակը: Դրանք նաև 300-ի կոմիտեի ներկայիս կամ նախկին անդամներ են. այդ՝ լորդ Հարթլի Շոուկրոս, սրբեր Բրայան Էդվարդ Մաունտին, Քենեթ Քեյթ, Քենեթ Ստրոնգ, Վիլյամ Ստեֆենսոն, Վիլյամ Վալսման:

Վերոհիշյալ բոլոր անձինք ընդգրկված են (կամ նախկինում ընդգրկված են եղել) 300-ի կոմիտեի այն առանցքային ընկերությունների գործերի մեջ, որոնք կապված են գործունեության բոլոր ոլորտներում աշխատող բառացիորեն հազարավոր ընկերությունների հետ, ինչը կտեսնենք առջևում: Ահա այդ ընկերություններից մի քանիսի ցուցակը. Rank Organization, Xerox Corporation, ITT, IBM, RCA, CBS, NBC, BBC and CBC (հեռուստահաղորդակցումների ասպարեզում), Raytheon, Textron, Bendix, Atlantic Richfield, British Petroleum, Royal Dutch Shell, Marine Midland Bank, Lehrman Brothers, Kuhn Loeb, General Electric, Westinghouse Corporation, United Fruit Company և այլն:

ՄԻ-6-ն այս ընկերությունների մի մեծաթիվ խմբի ղեկավարում է Բրիտանիայի հետախուզության գործակալանոցի միջոցով, որը «պատասպարվել է» Նյու Յորքում գտնվող RCA ընկերության շենքում: Սա եղել էր ՄԻ-6-ի ղեկավար սրբ Վիլյամ Ստեֆենսոնի շտաբ-կացարանը: Radio Corporation of America-ն (RCA) դեռևս 1919-ին հիմնադրել են General Electric, Westinghouse, Morgan Guarantee and Trust և United Fruit ընկերությունները՝ որպես Բրիտանիայի հետախուզության կենտրոն: RCA-ի առաջին նախագահը Ջ. Մորգանի մարդն էր՝ Օուեն Յանգը, որի անունով է կոչվել «Յանգի պլանը»: 1929 թ. RCA-ի ղեկավար է նշանակվել Դավիդ Սարնոֆը, որը Յանգի օգնականն էր եղել 1919 թ. Փարիզի խաղաղության կոնֆերանսում, որտեղ հաղթանակած «դաշնակիցները» պարտված Գերմանիայի թիկունքից դանակ էին զարկել:

300-ի կոմիտեի օգտին Ուոլստրիտում արժեթղթերի գործառնություններով է զբաղվում բանկերի և առևտրամիջնորդ (բյուքերական) գրասենյակների մի ամբողջ ցանց: Դրանցից առավել կարևորներն են Blyth-ը, Eastman Dillon-ը, the Morgan groups-ը, Lazard Freres-ը և Kuhn Loeb Rhodes-ը: Ուոլստրիտում բացարձակապես ամեն ինչ կատարվում է Անգլիայի բանկի հսկողության ներքո, որի հրահանգները փոխանցվում են Մորգանի խմբերի միջոցով և ապա կիրարկվում են գլխավոր առևտրամիջնորդ տնե-

րի կողմից, որոնց գործադիր պետերը լիովին պատասխանատու են այդ ղեկավար ցուցումների կատարման համար: Drexel Burnham Lambert ընկերությունը 300-ի կոմիտեի սիրելին էր, քանի դեռ չէր գերազանցել Morgan Guarantee ընկերության սահմանած չափաքանակները (լիմիտները): 1981 թ. գրեթե բոլոր գլխավոր առևտրամիջնորդական տները վաճառվում են Կոմիտեին, իսկ Phibro-ն («Ֆիբրո») ձուլվում է Salomon Brothers-ին: Phibro-ն Օպեհեյմերների Anglo American Corporation-ի գործադար լծակն է: Կառավարման այս մեխանիզմի շնորհիվ 300-ի կոմիտեն իր անդամների և նրանց ճյուղավորված կորպորացիաների համար ներպրումների շրջանառության այնպիսի արագություն է ապահովում, որը երկու անգամ գերազանցում է «գաղտնագետ» (ինսայդեր) չեղող արտասահմանցիների ներդրումների շրջանառության արագությունը:

Հիշենք, որ աշխարհի ամենահարուստ ընտանիքներից մի քանիսն ապրում են Եվրոպայում, ուստի բնական է, որ նրանք գերազանցություն ունենան Կոմիտեի անդամների մեջ: Ֆոն Թուռն և Թաքսիս ընտանիքի համեմատությամբ (որը մի ժամանակ Գեյմանիայի փոստային ամբողջ համակարգի տերն էր) Դավիդ Ռոքֆելերը աղքատ ազգական է երևում: Ֆոն Թուռն և Թաքսիս տոհմը 300-ամյա հասակ ունի, և այդ ընտանիքի անդամները Կոմիտեում սերնդե-սերունդ տեղեր են ունեցել, ոլոնք այսօր էլ զբաղեցնում են: Արդեն հիշատակել ենք 300-ի կոմիտեի վեներտիկյան Սև արխատկրատիայի ամենահարուստ անդամներից շատերի անունները, իսկ մյուս անունները կտանք հետո, երբ դրանց հանդիպենք գործունեության զանազան ասպարեզներում: Այնուհետև կնշենք 300-ի կոմիտեի ամերիկացի մի քանի անդամների և կփորձենք ի հայտ բերել բրիտանական թագի հետ նրանց ունեցած կապերը:

Ինչպե՞ս կարելի է հաստատել այս բոլոր փաստերը: Սրանցից շատերն իրապես հնարավոր չէ հաստատել, որովհետև ամբողջ տեղեկանյութը վերցվել է ուղղակի հետախուզական ծառայությունների փաստապանակներից (դոսիեներից): Բայց ջանադիր լինելու դեպքում կարելի է գտնել սույն փաստերի գոնե մի մասը հաստատող աղբյուրներ: Այդ ջանադրությունը նշանակում է՝ քրտնաջանորեն պրայտել «Դան և Բրոդստրիտ կորպորացիաների տեղեկատուն», Standard and Poor's վարկանիշային գործակալության նյութերը, բրիտանական և ամերիկյան «Ով ով է» ամանախաները, ինչպես նաև բազմաժամյա լարված աշխատանք կատարել՝ վերլուծելով անունների և դրանց խմբակային կապերի խաչաձև վկայակոչումները՝ հղումները:

300-ի կոմիտեի կորպորացիաները, բանկերն ու ապահովագրական ընկերությունները գործում են մի կառավարման և վերահսկողության ներքո: Կոմիտեն աշխարհի տիրական ՄԻԱԿ կազմակերպված իշխանակարգությունն է, որը գերազանցում է բոլոր կառավարություններին և

անձնավորություններին, որքան էլ սրանք ուժեղ ու ապահով զգան իրենց: Այն ընդգրկում է ֆինանսները, պաշտպանությունը, ինչպես նաև ամեն գույնի ու տեսակի քաղաքական կուսակցություններին:

Չկա՝ այնպիսի կազմակերպություն, որի վրա Կոմիտեն չկարողանա վերահսկողություն հաստատել, ընդ որում այս բանը վերաբերում է նաև կազմակերպված համաշխարհային կրաններին: Այդ ամենագոր ՕԼԻՄ-ՊՈՍՑԻՆԵԲԻ ԽՄԲԻ իշխանության կենտրոնը խարսխվում է Լոնդոնում և լոնդոնյան Սյուրիլի ֆինանսական կենտրոններում: Նրանք ունեն բոլոր հանքատեսակները, մետաղներն ու թանկագին քարերը, ունեն կոկաին, ափիոն ու դեղագործական թմրանյութեր, բանկեր, նրանք վերահսկում են բազմապիսի պաշտամունքների և ոռք ելաժշտության վրա: Բրիտանական թագը վերահսկողության կենտրոնն է, որից ծագում է ամեն ինչ:

Կասկած չկա, որ կապի և հեռուստահաղորդակցման ոլորտը խստիվ վերահսկվում է: Անդրադառնալով RCA-ին, տեսնում ենք, որ նրա վարչանին կազմված է բրիտանա-ամերիկյան պետական ու հասարակական գործիչներից, որանք կարևոր պաշտոններ են զբաղեցնում նաև այլ կազմակերպություններում, ինչպիսիք են «Միջազգային հարաբերությունների խորհուրդը» (CFR), ՆԱՏՕ-ն, «Հոմեոթեկան ակումբը», «Եռակողմ հանձնաժողովը», ֆարմաստությունը, «Գանգ և ոսկորները», «Բիդերբերգերները», «Կլար սեղանը», «Միլների ընկերությունը» և «Ճիզվիտա-արիստոտելյան ընկերությունը» (Jesuits-Aristotele Society): Նրանց մեջ էր Դավիդ Սարնոֆը, որը Լոնդոն է տեղափոխվել այն ժամանակ, երբ սրբ Վիլյամ Ստեֆենսոնը տեղափոխվել է Նյու Յորքում գտնվող RCA-ի շենքը:

Ամերիկայի բոլոր երեք գլխավոր հեռուստաընկերությունները գոյացել են RCA-ի հիման վրա, մասնավորապես National Broadcasting Company-ն (NBC) («Ազգային հաղորդումների ընկերություն»), որն առաջինն էր: Սրանից անմիջապես հետո՝ 1951-ին, մեջտեղ եկավ «American Broadcasting Company»-ն (ABC) («Ամերիկայի հաղորդումների ընկերություն»): Երրորդ մեծ հեռուստաընկերությունը եղավ Columbia Broadcasting System-ը (CBS), որտեղ, ինչպես որ նրա երկու քույր ընկերություններում, տիրություն է արել և անում Բրիտանիայի հետախուզությունը: Վիլյամ Փեյլիին CBS-ի ղեկավարի պաշտոնի համար պիտանի ճանաչեցին այն բանից հետո, երբ նա Թավիստոկի ինստիտուտում սովորեց զանգվածային ուղեղարդուկման տեխնիկան:

Եթե Միացյալ Նահանգների ժողովուրդը միայն իմանա՞ր, որ մեր գլխավոր հեռուստաընկերությունների բոլոր հաղորդումները բրիտանական գրաքննության են ենթարկվում, իսկ հաղորդվելիք ամբողջ տեղեկանյութը նախապես Լոնդոն է ուղարկվում թույլտվություն ստանալու համար... Հետաքրքրական է իմանալը, որ Ստենֆորդի հետազոտական

ինստիտուտի գրած «Ջրիոսի դավադրությունը» հետախուզական զեկուցման մշակումը որամավորել են սույն երեք հեռուստաընկերությունները:

Երեք գլխավոր հեռուստաընկերություններն էլ ներկայացվել են Կոմիտեում և սերտորեն կապված են զանգվածային հաղորդակցումների ասպարեզում գործադարության հսկայի՝ Xerox Corporation-ի («Քսերոքս» կորպորացիայի) հետ, որի ներկայացուցիչ Ռոբերտ Մ. Բեկը Կոմիտեի անդամ է: Բեկը նաև Prudential Life Insurance Company-ի տնօրեններից մեկն է: «Քսերոքս»-ի վարչության կազմի մեջ են American Express Company-ի ներկայացուցիչ Հովարդ Քլարկը, որի ընկերությունը «ճանապարհի վճարագրերի» միջոցով թմրափող լվալու գլխավոր խողովակներից մեկն է, ԱՄՆ-ի ֆինանսների նախկին նախարար Վիլյամ Սայմոնը, Սոլ Լինոլփիցը, որը Կոմիտեի համար բանակցություններ է վարել Պանամայի ջրանցքի մասին պայմանագրեր կնքելու առթիվ: Լինոլփիցը Կոմիտեի համար արժեքավոր է, որովհետև Marine Midland Bank-ի և HSBC-ի միջոցով թմրափող լվալու հսկայական փորձ ունի:

«Քսերոքսի» տնօրենների խորհրդի Ռոբերտ Սպրոուլ անունով անդամն էլ շատ հետաքրքիր է այն հանգամանքով, որ, լինելով Ռոչեստերի համալսարանի նախագահը, Թավիստոկի ինստիտուտին թույլ է տվել համալսարանի սենյակներն ու սարքավորանքն օգտագործել ԼՍԴ [թմրանյութի] հետ կապված գիտափորձերի՝ «ՄԿ-ուլտրա» կոչվող 20-ամյա ծրագիրն իրականացնելու համար: ԱՄՆ-ի 85 համալսարաններ նույնպես իրենց շենքերն ու սարքավորանքը տրամադրել են այդ նույն նպատակով օգտագործման համար: Չնայած իր վիթխարի չափերին, «Քսերոքսը» թզուկ է ելևում Լոնդոնում գտնվող և Եղիսաբեթ թագուհու ընտանիքի անդամների կողմից ամբողջովին վերահսկվող Rank Organization-ի՝ ընկերությունների այդ բուրգի համեմատությամբ:

Ստորև կներկայացվեն Rank Organization-ի տնօրենների խորհրդի առավել կարևոր անդամները, որոնք նաև 300-ի կոմիտեի անդամներ են.

Լորդ Հելսթի - թմրափողի քլիբինգապալատի՝ Midland Bank-ի նախագահ: Հելսթին պաշտոններ ունի նաև Imperial Group վիթխարի խմբի և Commercial Finance Corporation-ի տնօրենների խորհուրդներում:

Սըր Առնոլդ Ֆրանս - Լոնդոնի մետրոպոլիտենը ղեկավարող Tube Investments ընկերության տնօրեն: Ֆրանսը նաև տնօրեններից մեկն է ԱՆԳԼԻԱՅԻ ԲԱՆԿԻ, որը խիստ վերահսկողության տակ է պահում ԱՄՆ-ի «Դաշնային պահուստի համակարգի» մեջ մտնող բանկերը:

Սըր Դենիս Սաունտեն - Eagle Star հզոր խմբի նախագահ և տնօրեններից մեկը English Property Corp-ի, որը Բրիտանիայի թագավորական ընտանիքի ֆինանսական ընկերություններից է:

Rank Organization-ի տնօրենների խորհրդի անդամներից մեկն է հարգարժան Անգուս Օգիլվին՝ «ընկերությունների իշխանը», ամուսինը

նորին թագավորական մեծություն արքայադուստր Ալեքսանդրայի, որ քույրն է Քենտլի դքսի, որը դեկավարն է Շոտլանդական ծեսի մասոնության, որ մնում է թագուհու տեղը, երբ սա լքում է Բրիտանիայի ափերը: Օգիլվին նաև «Անգլիայի բանկի» տնօրեններից մեկն է և նախագահը LONRHO վիթխարի բուրգի (կոնգլոմերատի): Հենց այս LONRHO-ն է Ռոդեզիայում քանդել Յան Սմիթի վարչակարգը, որպեսզի նրա տեղը նստի Ռոբերտ Մուգաբեն: Խաղաղումարը Ռոդեզիայի քրոմի հանքերն էին, որոնք տալիս են աշխարհի ամենաբարձրորակ քրոմի հանքաքարը:

Միրիլ Համիլտոն - Standard and Chartered Bank-ի (յուրդ Միլների և Սեսիլ Ռոդսի հին բանկը) նախագահ և «Անգլիայի բանկի» վարչության անդամ: Համիլտոնը նաև Xerox Corporation-ի և Malta International Banking Corporation-ի (Մալթայի ասպետների բանկը) տնօրենների խորհուրդների անդամ է, Հարավային Աֆրիկայի ամենախոշոր բանկի՝ Standard Bank-ի տնօրեններից մեկը, այլև անդամը Banque Belge d’Afrique-ի տնօրենների խորհրդի:

Լորդ Օ’Բրիեն - British Bankers Association-ի («Բանկիրների բրիտանական միության») նախկին նախագահ, Morgan Grenfell ներդրումային ազդեցիկ բանկի տնօրեն, Prudential Assurance-ի տնօրենների խորհրդի անդամ, J. P. Morgan բանկի, «Անգլիայի բանկի», Միջազգային հաշվարկների բանկի տնօրենների խորհուրդների անդամ, այլև անդամը Unilever հսկայաձավալ բուրգի տնօրենների խորհրդի:

Սըր Ռեյ Ջեյս - Dunlop-ի և Pirelli-ի՝ ավտոդղերի արտադրության վիթխարահսկա ընկերությունների տնօրենների խորհուրդների նախագահ, Midland Bank-ի և International Bank-ի տնօրենների խորհուրդների անդամ, այլև անդամը «Անգլիայի բանկի» տնօրենների խորհրդի:

Ուշադրություն դարձրեք, թե այս ազդեցիկ մարդկանցից քանիսն են «Անգլիայի բանկի» տնօրեն: Մեծ մասը: Իսկ սա հնարավորություն է տալիս հեշտ ու հանգիստ վերահսկելու Ամերիկայի տնտեսական քաղաքականությունը:

Այս կազմակերպություններից ու հիմնարկներից, ընկերություններից ու բանկերից շատերն այնքան սերտորեն են փոխկապակցված, որ նրանց գրեթե անհնայ է իրարից զատել: RCA-ի տնօրենների խորհրդի նիստերին մասնակցում են Atlantik Richfield ընկերության նախագահ Թորնտոն Բրեդշոուն, որը նաև ՆԱՏՕ-ի, «Վայրի բնության համաշխարհային հիմնադրամի», «Հոմեոստատիկ ակումբի», «Ասպենի հասարակագիտական հետազոտությունների ինստիտուտի» և «Միջազգային կարաբերությունների խորհրդի» անդամ է: Բրեդշոուն նաև NBC հեռուստաընկերության նախագահն է: Իսկ RKA-ի ամենակարևոր գործը Բրիտանիայի հետախուզությանը ծառայելն է:

Լայն զանգվածներին հայտնի չէ, որ 300-ի կոմիտեն վճռական դեր

է կատարել Հետախուզության կենտրոնական վարչության աշխատանքի քննությունը դադարեցնելու մեջ, որը նոր էր սկսել սենատոր Մակարտին: Եթե նա հաջողեցներ սկսած գործը, ապա շատ հավանական է, որ նախագահ Քենեդին այսօր էլ կենդանի լիներ:

Երբ Մակարտին ասում է, որ մտադիր է Վիլյամ Բանդիին հետաքննության հանձնաժողով կանչել, Վաշինգտոնն ու Լոնդոնը խուճապի են մատնվում: Եթե Բանդիին ստիպեին երդմամբ վկայություն տալ, միանգամայն հավանական է, որ նա «կոտրվեր» ու բաց աներ այն «առանձնահատուկ հարաբերությունները», որոնք գոյություն ունեին Բրիտանիայի խմբիշխանական շրջանակների և ԱՄՆ-ի կառավարության մեջ բույն դրած նրանց հորաքրոջ-մորաքրոջ ուղիների միջև:

Դա չէր կարելի թույլ տալ: Միջազգային գործերի թագավորական ինստիտուտին հանձնարարվում է Մակարտիի հարցը լուծել: ՄԳԹԻ-ն Մակարտիի վրա գրոհի կազմակերպիչ է ընտրում Ալեն Դալեսին, մի մարդու, որն ուղղակի զմայված էր Բրիտանիայի անկապաշտ (դեկադենտական) հասարակությամբ: Դալեսը գործը հանձնարարում է Պատրիկ Լյունանին և Ռիչարդ Հելմսին: Մակարտիի դեմ ծավալած իր գործունեության համար Հելմսը հետագայում որպես պարզ և ստանում Հետախուզության կենտրոնական վարչության (ՀԿՎ /ՃՀՃ/) տնօրենի պաշտոնը:

Նախագահ Էյզենհաուերն էլ գեներալ Մարկ Քլարկին՝ «Միջազգային հարաբերությունների խորհրդի» անդամին և Լոնդոնի հասարակության սիրելիին է հանձնարարում վանել ՀԿՎ-ի վրա Մակարտիի տված հուժկու գրոհը: Մակարտիից նախաձեռնությունը խլվում է, երբ Քլարկը հայտարարում է, որ անհրաժեշտ է հատուկ կոմիտե նշանակել ՀԿՎ-ի գործունեությունը հետաքննելու համար: Քլարկը, հետևելով ՄԳԹԻ-ի հրահանգներին, կոնգրեսի վերահսկիչ կոմիտեին հանձնարարում է «պարբերաբար ստուգել կառավարության հետախուզական գործակալությունների աշխատանքը»: Ամբողջ գործը վերածվում է՝ Ամերիկայի համար՝ խոր ուղբերգության, իսկ բրիտանացիների համար՝ հաղթանակի, որոնք երկյուղում էին, թե Մակարտին կարող է պատահաբար դեմ առնել 300-ի կոմիտեին և հայտնաբերել, որ նա է կառավարում Միացյալ Նահանգների կյանքի բոլոր մարզերը:

Lehrman Brothers և Kuhn Loeb's բանկերի նախկին նախագահ Փետեր Փետերսոնը ծառայել է ՄԻ-6-ի նախկին պետ Վիլյամ Վայսմանի մոտ և օտար մարդ չէր Բրիտանիայի թագավորական շրջանակներում: Փետերսոնը կապված է Ասպենի ինստիտուտի՝ Բրիտանիայի հետախուզության ևս մի մասնաճյուղի հետ:

Չոն Փետին Marine Midland Bank-ի պրեզիդենտն է և նրա տնօրենների խորհրդի նախագահը: Թմրանյութերի առևտրի հետ այս բանկի կապը հաստատվել է նախքան նրա վրա վերահսկողություն հաստատ-

վեր «Հոնկոնգ Էնդ Շանհայ բանկինգ քորպորեյշն» (HSBC)-ի կողմից, որը, ամենայն հավանականությամբ, ավիոնի ստևորի ասպարեզում համար 1 բանկն է 1914 թվականից սկսած:

Բայց 300-ի կոմիտեի գոյության լավագույն ապացույցը, որ կարող են առաջարկել, Rank Organization-ն է, որը Eagle Star-ի հետ ըստ էության նույն բանն է, ինչ որ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԹԱԳԸ: Սա նաև ՄԻ-6-ի (CPC-ի) սև գործառնությունների կենտրոնն է: 300-ի կոմիտեի այս երկու ընկերությունները լիովին վերահսկում են Նորին մեծության լոնդոնյան Կանադային՝ իրենց ղեկավար ցուցումների իրականացման համար օգտագործելով «պալատական հրեաներ» Բյունֆմանների ընտանիքին:

Trizec Holdings ընկերությունը, որի անվանական տերը Բյունֆմանների ընտանիքն է, իրականում Անգլիայի թագուհու՝ Կանադայում ունեցած սեփականությունն է: Հարավարևելյան Ասիայում կատարվող ավիոնի ողջ առևտուրը այս կամ այն կերպով կապված է Բյունֆմանների կայսրության հետ, որը հերոինն Ամերիկա հասցնելու խողովակներից մեկն է: Որոշ առումով Կանադան նման է Շվեյցարիային. մաքուր, անարատ ձյունն բնապատկերներ, մեծ քաղաքներ, չքնադատեսիլ վայրեր, սակայն այդ ամենի տակ՝ հեյոինի լայնածավալ առևտրի պլոնի ռու կեղտի հաստ շերտ:

Բյունֆմանների ընտանիքի անդամները յուրատեսակ «Էլեկտրացանցի ապահովիչներ» են, որոնց ՄԻ-6-ում կոչում են «առաջին շարակարգի մարդիկ»: Լոնդոնից նրանց վերահսկում են «կաբինետային մարդիկ» (բառացի՝ «գրասեղանի մարդիկ»: ՄԻ-6-ի հետախույզներն այսպես են ասում կենտրոնակայանի հսկիչներին): Էդգար Բյունֆմանը բազմիցս մեկնել է «Մոսկովյան կենտրոն» (ՄԻ-6-ի տված անունը Չերժինսկու հրապարակում գտնվող ՊԱԿ-ի գլխավոր վարչությանը): Բյունֆմանը շատ օգտակար մարդ էր Մոսկվայի հետ կապ պահպանելու համար, սակայն նա երբեք ՄԻ-6-ի հաստիքային գործակալ չի եղել:

Eagle Star-ի երկու տնօրենները, որոնք նաև ՄԻ-6-ի առանցքային աշխատակիցներ էին, Բյունֆմանների ընտանիքին հսկողության տակ են առնում պատերազմի ավարտից վեց ամիս անց: Սլյեր Բենեթ Բեյթն ու Բենեթ Ստրոնգը, որոնց այդեն հանդիպել ենք, «օրինականացում» են Բյունֆմանների ընտանիքին՝ հիմնելով Trizec Holdings ընկերությունը: Աշխարհիս երեսին ՄԻ-6-ին հավասարը չկա առևտրային ընկերությունների միջոցով իր «առաջին շարակարգի» աշխատանքը կազմակերպելու գործում:

Կանադան Շվեյցարիայի պես իր կեղտոտ կողմն ունի, ինչը 300-ի կոմիտեն կողմնակի հայացքներից լավ ծածկել է «Պաշտոնական գաղտնիքների մասին ակտի» պատճենով:

Այն բառ առ բառ արտագրվել է 1913 թ. ընդունված Բրիտանիայի

օրենքից: Թմրանյութ, կեղտոտ փողի լվացում, հանցագործություն, բռնաշորթում. ամեն ինչ սքողվում է այս խայտառակ ակտով:

Շատերին հայտնի չէ, որ «Պաշտոնական գաղտնիքների մասին ակտով» մեղադրվողները (որը կարող է մեկնաբանվել ցանկացած կերպ, ինչպես այդ կկամենան Թագի գործակալները) կարող են մահվան դատապարտվել, ինչի մասին բազմիցս ասել են 1980 թվականից սկսած:

Կանադայի բնակչությունը ազգ չէ, ինչպես որ են Հարավային Աֆրիկայինը, Հոլանդիայինը կամ Բելգիայինը: Նա միշտ կարված է եղել Անգլիայի թագուհու փեշին: Մենք պարզել ենք, որ Կանադան միշտ բոլորից առաջ է ընկնում Եղիսաբեթ թագուհու ցանկությունները կատարելու գործում: Կանադայի գորքերը մարտնչել են Նորին մեծության բոլոր պատերազմներում, այդ թվում՝ 1899-1903 թթ. Բուրական պատերազմում:

Ամերիկայի իր նմանօրինակի պես Կանադայի Սիջազգային գործերի ինստիտուտն էլ ՄԳԹԻ-ի դրածոն է և կառավարում է Կանադայի քաղաքականությունը: Ինստիտուտի անդամները 1925 թ. նրա հիմնադրման օրվանից զբաղեցնում են պետական քարտուղարի պաշտոնը: Խաղաղօվկիանոսյան հարաբերությունների ինստիտուտը, որը նպաստել էր Փիռլ Հարբորի վրա հարձակմանը, Կանադայում հավանությամբ է ընդունվել այն բանից հետո, երբ Օուեն Լատիմորն ու նրա աշխատակիցները 1947 թ. մեղադրվել են պետական դավաճանության մեջ և Սիւսգյալ Նահանգներից հեռացել նախքան դատարանի առաջ կանգնելը:

Կանադայի Սիջազգային գործերի ինստիտուտը Rank Organization-ի հետ կապված է սրբ Զենեթ Ստրոնգի միջոցով, որը ՄԻ-6-ում երկրորդ մարդն էր Երկրորդ աշխարհամարտի վերջին: Որպես «Մբ. Հովհաննես Երուսաղեմացու ուխտի» անդամ՝ Ստրոնգը Կանադայում երկրորդ մարդն է Rank Organization-ի և բրիտանական թագի առևտրային շահերի ասպարեզում: Նա Bank of Nova Scotia-ի («Նոր Շոտլանդիայի բանկ») տնօրենների խորհրդի անդամ է, որը HSBC-ից հետո աշխարհի ամենազարգացած թմրաբանկերից (նարկոբանկերից) մեկն է: Այս բանկի միջոցով լվացվում են հերոինի կանադական առևտրից ստացված եկամուտները:

Համար 1-ը սրբ Բրայան Էդվարդ Մաունտինն է՝ «Մբ. Հովհաննես Երուսաղեմացու ուխտի» բարձրաստիճան անդամը: Տեղին է հիշատակել հետևյալ փաստը. երբ բրիտանական թագը կամեցել է, որ ԱՄՆ-ը Երկրորդ համաշխարհային պատերազմի մեջ մտնի, լոյդ Բիվերբուրկին և սրբ Բրայան Մաունտինին ուղարկել է հանդիպելու նախագահ Ռուզվելտի հետ, որպեսզի համապատասխան հրաման հաղորդի: Ռուզվելտը ենթարկվել է՝ ԱՄՆ-ի Ռազմածովային նավատորմին հրամայելով մարտական գործողություններ սկսել Գրենլանդիայի ռազմահանգրվանից: Փիռլ Հարբորի ոլբերգությունից ինր ամիս առաջ այդտեղից սկսել են գրոհել գերմանական սուզանավերի վրա: Սա արվել է

առանց Կոնգրեսին տեղեկացնելու և առանց նրա համաձայնության:

Կանադայի և Rank Organization-ի փոխհարաբերությունների ոլորտում ևս մի նշանավոր անուն էր սրբ Քենեթ Քեյթը, որը «Հոնկոնգ Էնդ Շանհայ բանկինգ քորպորեյշն»-ի (HSBC-ի) կանադական «համարժեքի»՝ թմրավաղորդի լվացքաջրի մեջ լնկղմված Bank of Nova Scotia-ի տնօրենների խորհրդի անդամ էր: Սրբը նաև մտնում էր Բրիտանիայի հնագույն թերթերի՝ Լոնդոնի «Թայմսի» և «Մանդի թայմսի» տնօրենների խորհուրդների կազմի մեջ: Արդեն ավելի քան 100 տարի է, ինչ «Թայմսը» թագավորական խասափող է Անգլիայի արտաքին քաղաքականության, ֆինանսական գործերի ու քաղաքական կյանքի ասպարեզներում:

300-ի կոմիտեի շատ անդամների պես սրբ Քենեթը շրջանառում էր ՄԻ-6-ի և Հոնկոնգում ու Չինաստանում ափիոնի մատակարարումների վարչության ստորակարգության միջև՝ հանդես գալով Կանադայի Միջազգային գործերի ինստիտուտի անունից, որի անդամն էր: Ավելին, քանի որ նա Hill Samuel բանկատան տնօրենների խորհրդի անդամ էր, Հոնկոնգում և Չինաստանում նրա ներկայությունը կարելի է բացատրել առանց դժվարության: ՄԻ-6-ի շրջանակից դուրս նրա մերձավորագույն աշխատակիցներից մեկը՝ սրբ Ֆիլիպ դր Ջուլետան, Բրիտանիայի բոլոր վարչապետների (ինչպես սրահպանողականների, այնպես էլ լեյբորիստների) անմիջական վերահսկիչն էր 300-ի կոմիտեի կողմից: Սրբ Քենեթ Ստրոնգն առնչվում է այն ամենին, ինչը կապված է թմրանյութերի, այլև ահաբեկչության, ափիոնի արտադրության, ոսկու շուկաների, կեղտոտ փողի լվացման և համայն թմրագործարարության կենտրոնի՝ բրիտանական թագի բանկային գործառնությունների հետ:

Կանադայի վրա բրիտանական թագի վերահսկողությունն իրականացվում էր սրբ Վալտեր Գորդոնի ղեկավարությամբ: Թագուհու անձնական վերահսկիչ կոմիտեի (սա հայտնի է նաև «Գաղտնի խորհուրդ» անվամբ) նախկին անդամ Գորդոնը Խաղաղօվկիանոսյան հարաբերությունների ինստիտուտին աջակցում էր Կանադայի Միջազգային գործերի ինստիտուտի միջոցով: Որպես ֆինանսների նախկին նախարար, Գորդոնը կարող էր 300-ի կոմիտեի ընտրած հաշվապահներին ու փաստաբաններին տեղավորել երկրի բոլոր երեք գլխավոր բանկերում, որոնք են՝ Bank of Nova Scotia-ն, Canadian Imperial Bank-ը և Toronto Dominion Bank-ը:

300-ի կոմիտեի՝ Գորդոնին ենթակա գործակալների ցանցը այս երեք «թագի բանկերի» միջոցով համակարգում էր կեղտոտ թմրավաղորդի լվացման՝ իր մեծությամբ 2-րդ գործառնությունը, ընդամին թմրանյութի ուղիղ խողովակ ապահովելով դեպի Չինաստան: Գորդոնը մինչև կյանքի վերջը վերահսկում էր Ջեյմս Էնդիկոտին, Չեստեր Ռոնինգհին և Փոլ Լիննին, որոնց ՄԻ-6-ը բնութագրել էր որպես կանադական լավագույն «մասնագետների» Չինաստանի գծով»: Երեքն էլ սերտորեն աշ-

խատել են Չժոու Էն Լայի¹ հետ, ով Գամալ Արդել Նասերին² ասել է, որ ինքը Բրիտանիային և ԱՄՆ-ին այն կաներ, ինչ նրանք Չինաստանին են արել, այսինքն՝ նրանց հեյտինամուլների ազգ կդարձներ: Չժոու Էն Լայը համարյա կատարում է իր խոստումը՝ սկսելով Վիետնամում գտնվող ամերիկացի զինվորներից: Կանադայի հերոինա-թմրանյութային օդակլի մյուս գործուն աշխատակիցներն են եղել Ջոն Ջիլմերը և Ջոն Ռոբերտ Նիկոլսոնը. երկուսն էլ «Սբ. Հովհաննես Երուսաղեմացու ասպետների ուխտի» անդամ են:

Լորդ Հարալդ Ծոուկոտը, որը, ինչպես կարծում են, ենթարկվել է անմիջաբար Լոլիսաբեթ II թագուհուն, ՄԳԹԻ-ի տնօրենների խորհրդի անդամ էր և պատվավոր ռեկտորը Սուսեկի համալսարանի (որտեղ է տիրաառչակ Թավիստոկի մայրկային հարաբերությունների ինստիտուտը), սերտորեն կապված էր Կանադայի հետ:

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ում Rank Organization-ի կատարած գործառնություններին, ապա առավել հաջողը պետք է համարել Carning Group ընկերության աշխատանքը, որը տերն է Metropolitan Life Insurance Company և New York Life Insurance Company ապահովագրական ընկերությունների: 300-ի կոմիտեի անդամներ Ամորի Հոուտոնը և նրա եղբայր Ջեյմս Հոուտոնը երկար ժամանակ է, ինչ բրիտանական քաղին ծառայում են նշված ապահովագրական ընկերությունների, այլև Corning Glass-ի, Dow Corning-ի և Corning International-ի միջոցով: Երկուսն էլ IBM-ի և Citicorp-ի տնօրենների խորհրդի անդամներ են: Ջեյմս Հոուտոնը Փրինստոնի Նարագոյն հետազոտությունների ինստիտուտի և ՄԳԹԻ-ի պատվար «Ջ. Փիերպոնտ Մորգանի գրադարանի» տնօրենների խորհրդի անդամ է, այլև CBS հեռուստաընկերության տնօրեններից մեկը:

Հենց Հոուտոն եղբայրներից մեկն է բրիտանական քաղի Ասպենի ինստիտուտին նվիրել Մերիլենդի նահանգում գտնվող հարյուրավոր ակրանոց հայտնի «Ուայիի տնկաստանը»: Corning Class ընկերության վարչությունում է նստում նաև Բոստոնի անգլիկան եկեղեցու եպիսկոպոսը: Այս ամենը սույն խմբին տալիս է պատկանելիության այն սնուպարձ տեսքը, որպիսին պետք է ունենան ապահովագրական ընկերությունների գործադիր պաշտոնյաները: Ինչպես կտեսնենք, Ջեյմս Հոուտոնից բացի, Corning Class-ի վարչության Քեյթ Ֆաստոնն ու Ջոն Հարպերն էլ են ղեկավարում Metropolitan Life Insurance Company-ն:

300-ի կոմիտեի միայն այս կառույցի վոխներթափանցվածությունն

¹ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Պետական խորհրդի սրենիեր և կոմկուսի Կենտկոմի նախագահի տեղակալ 1957-76-ին (Վ. Ա.):

² Եգիպտոսի նախագահ 1956-70-ին (Վ. Ա.):

ու փոխգործողությունը մեզ լավ պատկերացում են տալիս դավադիրների ստորակարգության ունեցած հսկայական իշխանության մասին, որի առաջ բոլորը ծնկի են գալիս, այդ թվում՝ նաև Միացյալ Նահանգների նախագահը՝ ով էլ նա լինի:

Հարկավոր է ցույց տալ, թե ամերիկյան այս ընկերությունը, ՀԱՐՅՈՒՐՆԵՐԻՅ մեկը, աշխատակցելով Բրիտանիայի հետախուզության հետ, ինչպես է վարում գործերը Կանադայի, Հեռավոր արևելքի և Հարավային Աֆրիկայի հետ, էլ չխոսելով ընկերության այն գործարարների ու ղեկավարների ամբողջական ցանցի մասին, որոնք ձգտում են թափանցել Միացյալ Նահանգների գործարարության ու քաղաքականության բոլոր շերտերը:

Թեև Metropolitan Life Insurance Company-ն չի համեմատվի 300-ի կոմիտեի հսկայի՝ Assicurazioni Generale-ի հետ, այնուամենայնիվ, նա ցայտունորեն ցույց է տալիս, թե Հոուտոնի իշխանությունն ինչպես է տարածվում ԱՄՆ-ի և Կանադայի ամբողջ գործարար դաշտի վրա: Հոուտոնի ազդեցության ոլորտն ընդգրկում է այնպիսի ընկերություններ, ինչպիսիք են R.H.Macy-ն (սրա շարքային աշխատողները կրծքներին այլևս կարմիր վարդակապեր չեն փակցնում՝ ի նշան ընկերության՝ կոմունիզմին նվիրված լինելու), The Royal Bank of Canada-ն, National and Westminster Bank-ը, Intertel-ը (ստոր ու չար մասնավոր հետախուզական գործակալություն), Canadian Pacific-ը, The Reader's Digest-ը (աշխարհիկ հանդես), RCA-ն, AT&T-ը, The Harvard Business School-ը (Հարվարդի գործարարության դպրոց), W.R.Grace Shipping Company-ն, Ralston Purina Company-ն, U.S.Steel-ը, Irving Trust-ը, Consolidated Edison of New York and ABC-ն, և այնուհետև սփռվում է մինչև HSBC:

ԱՄՆ-ում Rank-ի հաջողակ ընկերություններից մեկն էլ Reliance Insurance Group-ն է: Լինելով Ռ-ազմավարական ոմբակոծումների ծրագրման փարչության բաղկացուցիչ մասը, Reliance-ն կազմում է ուղեղի արդուկման, հասարակական կարծիքի կերպաձևման, դիտարկման, ընտրությունների կազմակերպման ու համակարգային վերլուծման սկզբնական կառուցվածքային հիմքը: Reliance Insurance Company-ն, կենտրոնակայան ունենալով Ֆիլադելֆիայում, ստեղծել է մեկուսախմբային (կորպորատիվ) մի կառույց, որը Ռ-ազմավարական ոմբակոծումների ծրագրման վարչությանը հնարավորություն է տվել քայքայիչ գործունեություն սկսելու Միացյալ Նահանգներում, որի ժողովուրդը կասկած չի տանում, թե արդեն 45 տարի իր դեմ հոգեբանական անողորմ պատերազմ է մղվում:

ԱՄՆ-ի դեմ այս պատերազմում գործող առանցքային անձանցից մեկը 300-ի կոմիտեի Wilkie, Farr and Gallagher իրավաբանական ձեռնարկույթի (ֆիրմայի) ներկայացուցիչ Դավիդ Բյակինն էր, որը երկար տարի-

ներ դեկավարել է «Հակավարկաբեկչական լիգան»: Սա Բրիտանիայի հետախուզության կառույցն է, որը ՄԻ-6-ն է հիմնել ԱՄՆ-ում, որտեղ այն դեկավարել են Սաուլ Շտեյնբերգը և Էրիկ Թրիստը: Սաուլ Շտեյնբերգը Ջեյկոբ Ռոթշիլդի լոնդոնյան ընտանիքի ներկայացուցիչն ու գործընկերն է:

Reliance Corporation-ը հարազատ տունն է Կարլ Լինդերի, սրն զբաղեցրել է Էլի Բլեյկի տեղը, երբ սա «ընկել է» նյույորքյան երկնաքերի 44-րդ հարկի լուսամուտից: Reliance Corporation-ը գործակցում է Բոստոնի և Նոր Օռլեանի United Fruit Company-ի հետ, որը դեկավարում է Մաքս Ֆիսբերը: Սրա վրայի կեղտը ստիպված են եղել բառիս բուն իմաստով լվալ, երբ պեղել են Գետրոյտի ստորգետնյա աշխարհից, որտեղ նա հայտնի դեմք էր: United Fruit Company-ն արդեն երկար ժամանակ ԱՄՆ-ին հերոին ու կոկաին մատուցող խողովակ է: Սրա սնուցումն ապահովում է փորձառու Միսբուլամ Ռիքսլին՝ ներկայացուցիչը Rapid American Corporation-ի, որը դեկավարում է Կանադայից ԱՄՆ կատարվող թմրամատակարարումները: Հարկ է հիշեցնել, որ այս ամենն արվում է մեկ ընկերության հովանու ներքո, որը սերտորեն կապված է համեմատաբար փոքր բազմաթիվ ընկերությունների ու կազմակերպությունների հետ, որոնք միասին բաղկացնում են 300-ի կոմիտեի վերահսկմանը ենթակա խնամքով հյուսված միասնական ցանցը:

Reliance Group-ը բաժանմունքն է մի մայր ընկերության, որի հիմնական խնդիրը Ամերիկայի ժողովրդի ուղեղը արդուկելն է Թավիստոկի ինստիտուտի հետ անմիջաբար կապված «հասարակական կարծիքի ձեռնածուների» ցանցի միջոցով: Միացյալ ընկերության անդամներից մեկն էլ Leasco-ն է, որը սերտորեն գործակցում է AT&T (American Telephon & Telegraph), Disclosure Incorporated, Western Union International, Imbucon Ltd. և Yankelovich, Skelly and White ընկերությունների հետ:

Դանիել Յանկելովիչը (Daniel Yankelovich) կայսրն է հասարակական կարծիք կերպաձևելու և ընտրություններ անցկացնելու մեկուսախմբային հսկայական կառույցի, որը, եթե միջաբերենք Էդվարդ Բերնեյսի ասածը, «կարծիքներ է ստեղծում սոցիալական, տնտեսական ու քաղաքական կյանքի խնդիրների վերաբերյալ»: Սա այն հսկայական կառույցն է, որն ամերիկացիների մեծամասնությանը (որը մինչ այդ երբեք չէր լսել Սադամ Հուսեյնի մասին և աղոտակի գիտեր Իրաքի տեղը Սերձավոր արևելքում) դարձրեց Սադամի արյանը ծարավ և Իրաքը ջնջել պահանջող զանգված:

Յանկելովիչն ամբողջովին օգտագործեց այն բոլոր գիտելիքները, որոնք ամբարել էր Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Յուր գործի մեջ Յանկելովիչն իրեն հավասարը չունի. ահա թե ինչու են ABC ընկերության անցկացրած հասարակական կարծիքի հարցումների արդյունքները միշտ ընթանում որպես «հասարակական

կարծիքի» առաջապահ: Միացյալ Նահանգների բնակչությունը դարձել է նույնպիսի թիրախ, ինչպիսին գերմանացիների բնակելի թաղամասերն էին, միայն թե հիմա գրոհի է ենթարկվում նրա առողջ դատորությունն ու իրականության զգացումը:

Յանկեյվոյի խնդիրը Ամերիկայի ազգային արժեքները խորտակելն էր և դրանք «Նոր դարաշրջանի»՝ «Ջրհոսի դարաշրջանի» արժեքներով փոխարինելը: Եվ քանի որ Յանկեյվոյին է 300-ի կոմիտեի համար հասարակական կարծիքի ամենագլխավոր ստեղծիչը, ուստի սույն աշխատանքը կատարվում է փայլուն կերպով:

Ջոն Նեյսբիտի «Չեկուցում միտումների (տեղեկությունների) մասին» աշխատությունից բերվող քաղվածքը հստակորեն ցույց է տալիս, թե ինչ եղանակներ են կիրառվում և ինչ արդյունքներ են սպասվում սույն գործունեությունից: Նեյսբիտը եղել է խորհրդականը ԱՄՆ-ի նախագահ Լինդոն Ջոնսոնի, Eastman Kogak, IBM, American Express ընկերությունների, «Քաղաքական հետազոտությունների կենտրոնի», Chase Manhattan բանկի, General Motors ընկերության, Louis Harris Polls-ի, Սպիտակ տան, Կյանքի ապահովագրության ինստիտուտի, Ամերիկայի Կարմիր աչի, Mobil Oil-ի, British Petroleum-ի և 300-ի կոմիտեի բազում այլ ընկերությունների ու հիմնարկների: ՄԻ-6-ի թավիստոկյան ընթացակարգերից թխված նրա գործելակարգը, անշուշտ, մի եզակի բան չէ: Ահա այն.

«Համառոտակի նկարագրեմ մեր գործելակարգը: Մեր հաճախորդների համար «Չեկուցում միտումների մասին»-ը մշակելիս ապավինում էինք գլխավորապես տեղային (լոկալ) իրադարձությունների ու վարքի դիտագնման (մոնիտորինգի) համակարգին: Մեզ սաստիկ ապշեցրեց այն, թե ինչ աստիճանի «գլխավայր» է կառուցված մեր հասարակությունը: Ուստի հետևում էինք ոչ թե Վաշինգտոնում կամ Նյու Յորքում լինող իրադարձություններին, այլ տեղերում լինողներին: Իրադարձություններն սկսվում են Լոս Անջելեսում, Թամպում, Հարտֆորդում, Վիջիտայում, Պորտլենդում, Սան Դիեգոյում և Գենվերում: Սա շատ կարևոր է «գլխավայր» շուրջ եկած հա-սարակության տեսակետից:

Հետևելու հայեցակարգը, որն օգտագործվել է այդ միտումները որոշելիս, սկիզբ է առնում Երկրորդ համաշխարհային պատերազմի շրջանից: Այդ ժամանակ հետախուզության փորձագետները ջանում էին գտնել թշնամի երկրների մասին այնպիսի տեղեկություն ստանալու եղանակը, որպիսին սովորաբար ստանում են հասարակական կարծիքի հարցումներ կատարելիս: Փոլ Լազարֆելդի և Հարոլդ Լասվելի ղեկավարությամբ մշակվեց այդ հանրություններում տեղի ունեցածի դիտագնության եղանակը, որը ներառում էր ամենօրյա մամուլի բովանդակությունը:

Թեև հասարակության գիտակցության վիճակի դիտագնման սույն

եղանակը հետախուզական ծառայությունների նախասիրած գործելակերպն է, երկիրն ամեն տարի միլիոնավոր դոլարներ է ծախսում ամբողջ աշխարհի մամուլի վերլուծության վրա...: Հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունների դիտագնման համակարգի լավ աշխատելու պատճառն այն է, որ թերթերի լուրաբաժինը չփոխվող ու փակ համակարգ է: Տնտեսողական նկատառումներով թերթերի լուրաբաժինները մշտապես անփոփոխ չափեր են ունենում:

Ուստի, երբ լուրաբաժնում մի նոր բան է հայտնվում, համապատասխանաբար, մի հին բան էլ չքվում կամ փոխվում է: Այստեղ գործում է փակ համակարգի ներսում ստիպված ընտրություն կատարելու սկզբունքը: Այդպիսի իրավիճակում հասարակական գիտակցությունը շարունակ բևեռվում է մեջտեղ նետվող նոր «հիմնախնդիրների» վրա և արագորեն մոռանում է հները: Մենք հետևում ենք ինչպես նոր, այնպես էլ այն «հիմնախնդիրներին», որոնց հանդեպ հասարակությունն արդեն կորցրել է հետաքրքրությունը:

Ակնհայտ է, որ հանրությունները նման են մարդկային ան-հատներին: Ես չգիտեմ ճշգրիտ թիվը, բայց մարդս միաժամանակ կա-յող է գիտակցության մեջ պահել միայն որոշակի քանակությամբ խնդիրներ ու հոգսեր: Եթե նոր խնդիրներ կամ հոգսեր են ավելանում, ապա հները պարզապես դուրս են մղվում գիտակցությունից: Մենք հետևում ենք այն բանին, թե ամերիկացիների համար տվյալ պահին ինչն է հրատապ, և ինչից են նրանք հրաժարվում:

ԱՄՆ-ն արագորեն անցում է կատարում արդյունաբերական հասարակությունից դեպի տեղեկությանին (ինֆորմացիոն) հասարակություն, ինչի հետևանքներն ավելի խորը կլինեն, քան 19-րդ դարում գյուղատնտեսական հասարակությունից արդյունաբերականին անցնելու հետևանքներն էին: 1979-ից սկսած ԱՄՆ-ում հիմնական մասնագիտությունը դարձել է բանվորին ու ֆերմերին փոխարինած գործավարի (կլերկի) աշխատանքը: Այս վերջին իրողությունը պարունակում է Միացյալ Նահանգների համառոտ պատմությունը»:

Պատահական չէ, որ Նեյսբիտը «Հոսմեական ակումբի» անդամ է և 300-ի կոմիտեի «բարձրագույն գործարարողներից» մեկը. նաև մտնում է Yankelovich, Skelly and White ընկերության ավագ փոխնախագահների թվի մեջ: Նեյսբիտի արհեստը ոչ թե միտումների կանխագուշակումն է, այլ դրանց ՍՏԵՂՈՒՄԸ: Արդեն տեսանք, թե ինչպես են քանդել Միացյալ Նահանգների արդյունաբերական հիմքը՝ սկսելով մետաղագործական արդյունաբերությունից: 1982-ին «Պողպատի արդյունաբերության մահը» վերնագրով մի հոդված էի գրել, որտեղ ապացուցում էի, որ 1990-ական թթ. ԱՄՆ-ում պողպատի արտադրությունը կնվազի մինչև անհատույց մնալու կետը [այսինքն՝ շահույթ չի լինի - Վ. Ա.], և որ ավ-

տոմոբիլաշինությունն ու տնաշինությունը կզնան նույն ճանապարհով:

Այս ամենն արդեն կատարվել է, և այն, ինչի վկաներն ենք այսօր, տնտեսական ապիկար քաղաքականության հետևանքով առաջացած ժամանակավոր անկում չէ, այլ դիտավորյալ ավերումն է մեր արդյունաբերության հիմքի և ոչնչացումը Ամերիկայի եզակի միջին դասակարգի՝ երկրի ողնաշարի, որը կախված է արդյունաբերության շարունակական աճից և կայուն զբաղվածությունից:

Այս է այն բանի պատճառներից մեկը, թե ինչու 1991 թ. հունվարից լրջորեն սկսված տնտեսական անկումը վերածվեց ճգնաժամի, ինչի հետևանքով կարող է այլևս երբեք չտեսնենք այն Միացյալ Նահանգները, որին աշխարհը գիտեր վաթսուհինյակի և յոթանասնյակի թվականներից: Տնտեսությունը 1991 թվականի ճգնաժամից դուրս չի գա առավագն մինչև 1995-96 թվականը, երբ ԱՄՆ-ը կդառնա միանգամայն այլ հասարակություն, քան էր նախքան անկումն սկսվելը:

Հասարակական կարծիք ստեղծողները քիչ դեր չեն կատարում Միացյալ Նահանգների դեմ մղվող այս պատերազմի մեջ: Մենք պետք է հետազոտենք 300-ի կոմիտեի դերակատարությունը սույն հեռագնա փոփոխությունների իրականացման գործում, այլև այն, թե սոցիալական ճարտարագետները ինչպես են օգտագործում համակարգային վերլուծությունը, որ հասարակական կարծիքը միշտ արտահայտի միայն Աներևույթ կառավարության քաղաքականությունը: Ինչպե՞ս և որտե՞ղ է սկսվել այս ամենը:

Առաջին համաշխարհային պատերազմին վերաբեյաղ փաստաթղթերից, սրունք կարողացել են հավաքել և ուսումնասիրել Լոնդոնի Ուայտհոլ փողոցում գտնվող Մեծ Բրիտանիայի Պաշտպանության նախարարությունում, երևում է, որ 300-ի կոմիտեն Միջազգային գործերի թագավորական ինստիտուտին հանձնարարել է ուսում-նասիրել զինվորական լրատվությանը ձեռնածություն անելը [ապակողմնաբռնչելը], ինչը պատվիրում են յորդեր Նորտկլիֆին ու Ռոտմերին և ՄԳԹԻ-ում ՄԻ-6-ի գործակալ Առնոլդ Թոյնթին: Լորդ Ռոտմերի ընտանիքը տերն էր մի թերթի, որն օգտագործվում էր կառավարության զանազան մտադրություններին թևակցելու համար: Ուստի համարվում էր, որ այդ թերթը կարող է հասարակական կարծիքը փոխել հատկապես պատերազմի հակառակորդների աճող շարքերի մեջ:

Նախագիծը հանձնվում է Վեյլնգտոն Հաուզ: Ռոտմերին ու Նարտկլիֆին օգնելու համար տրամադրվում են ամերիկացի մասնագետներ, որոնց մեջ էին Էդուարդ Բերնեյսը և Վալտեր Լիպմանը: Պատերազմի զանգվածային պաշտպանության միջոցներ մշակելու համար խումբը «տղեղագրոհներ» է անցկացնում հատկապես բանվորների շրջանում, որոնց որդիները զանգվածաբար պիտի զսկվեին Ֆլանդրիայի սպանդի դաշտերում:

Օգտագործելով լորդ Ռոտմերի թերթը՝ փորձառվում են հասարակության գիտակցությունն «արդուկելու» նոր եղանակներ, և մոտավորապես վեց ամիս հետո պարզ է դառնում, որ դրանք հույժ արդյունավետ են: Հետագոտները հայտնաբերում են, որ բնակչության սոսկ փոքր մասն է ընկալում դատողությունները և կարողանում հասկանալ հիմնախնդիրը: Մեծ մասն ըմբռնում է միայն դրա մասին հայտնված կարծիքը: Ռոտմերի ասածի համաձայն՝ հենց այսպիսին է եղել պատերազմի հանդեպ Բրիտանիայի բնակչության 87 տոկոսի վերաբերմունքը, և այս փաստը ճիշտ է ոչ միայն պատերազմի, այլև հասարակության մեջ հնարավոր յուրաքանչյուր հիմնախնդրի վերաբերմամբ:

Այսպիսով վերբանականությունը (իռացիոնալությունը) հասցվել էր հասարակական կարծիքի բարձրագույն մակարդակի: Մոլորեցնողները (մանիպուլյատորները) սկսում են սրանով ձեռնածություններ անել, որպեսզի մարդկանց մեջ թուլացնեն յուրաքանչյուր վիճակում նրանց գործողությունները որոշող իրականության զգացումը և դրան այլ ապրուքյուն տան: Ուրբան բարդանում էին ժամանակակից արդյունաբերական հասարակության խնդիրները, այնքան հեշտանում էր մարդկանց գիտակցությունն ավելի մեծ աստիճանով շեղելն ու մոլորեցնողների ուզած հունի մեջ դնելը: Սրա հետևանքով մենք հայտնվեցինք այնպիսի իրավիճակի մեջ, երբ մարդկային զանգվածների բացարձակապես չհիմնավորված կարծիքները, որոնք ստեղծել էին հնարամիտ մոլորեցնողները, սկսեցին ընկալվել որպես գիտական օբյեկտիվ փաստեր:

Միանգամայն անսպասելիորեն այսքան խոր եզրակացության հանգելով՝ մոլորեցուցիչ ձեռնածուներն սկսում են պարբերաբար այն ստուգել պատերազմի ընթացքում: Դուրս է գալիս, որ, չնայած Ֆրանսիայի ռազմադաշտերում հարյուր հազարավոր պատանիների զոհվելուն, արյունահեղ պատերազմի դեմն առնելու գործողություն չէր ձեռնարկվում: Այդ ժամանակվա գրառումները ցույց են տալիս, որ առ 1917 թվականը, երբ ԱՄՆ-ը շուտով կռվի մեջ էր մտնելու, պատերազմի զլխավոր դժվարությունները կրող բրիտանացի բանվորների 94 տոկոսը ոչ մի, գոնե ամենաաղոտ իսկ պատկերացում չունեի, թե իրոք ինչի համար է կռվում, բացի ձեռնածուների ստեղծած այն հասկացողությունից, թե գերմանացին մի սոսկալի ցեղ է, որը մտքին դրել է ոչնչացնել նրանց միայն տեղին ու երկիրը, ուստի հարկավոր է նրան ջնջել երկրի երեսից:

Այդ ժամանակից ի վեր ոչինչ չի փոխվել, քանի որ 1991 թ. հայտնվեցինք զանգվածային լրատվության միջոցների ստեղծած այն նույն իրադրության մեջ, ինչը նախագահ Բուշին հնարավորություն էր ընձեռել անպատկառաբեն խախտելու Մահմանադրությունը՝ Իրաքի ժողովրդի դեմ ցեղասպան պատերազմ սանձազերծելով Ամերիկայի ժողովրդի 87 տոկոսի լիակատար համաձայնությամբ: Վուդրո Վիլսոնին

կարելի է գովել (եթե սույն բառը պատշաճի նրա արածին), որ խաղացել է հասարակությանը մոլորեցնողների թխմի հետ և կիրառել է նրանց գործելակերպերը, որպեսզի իրականացնի այն, ինչ իր ականջին փսիսացել էր վերահսկիչը՝ գնդապետ Հաուսը:

Նախագահ Վիլսոնի (կամ, ավելի ճիշտ, գնդապետ Հաուսի) ցուցումով ստեղծվում է այսպես կոչված «Բրիլի հանձնաժողովը» (Creel Commission): Ուրբան հայտնի է, սա ԱՄՆ-ում եղած առաջին հանձնաժողովն է, որն ընտրությունների և զանգվածային քարոզչության համար կիրառել է ՄԳԹԻ-ի գործելակարգն ու եղանակները: Հոգեբանական պատերազմ վարելու փորձերը, որոնք կատարելագործվել էին Վելինգտոն Հաուզում, նույն հաջողությամբ օգտագործվել են Երկրորդ աշխարհամարտի ժամանակ: Դրանք մշտապես օգտագործվել են նաև ԱՄՆ-ի դեմ լայնածավալ հոգեբանական պատերազմ վարելիս, որն սկսվել է 1946 թ.: Գործելակերպերը չեն փոխվել. փոխվել է միայն թիրախը: Գրոհների նշանակետն արդեն ոչ թե Գերմանիայի բնակելի թաղամասերն են, այլ Միացյալ Նահանգների միջին դասակարգը:

Ինչպես որ հաճախ է պատահում, դավադիրները չեն կարողանում զսպել իրենց ցնծությունը: Առաջին աշխարհամարտից հետո, ավելի ճիշտ՝ 1922 թվականին, Լիպմանը ՄԳԹԻ-ի կատարած աշխատանքը մանրամասնորեն նկարագրել է «ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ» գրքում.

«Հասարակական կարծիքը գործ ունի անուղղակի, անտեսանելի և հանելուկային փաստերի հետ, որոնց մեջ ոչ մի ակնհայտ ու հասկանալի բան չկա: Հասարակական կարծիքին առնչվող իրավիճակները մարդու գիտակցության մեջ արտացոլվող սոսկ գաղափարներ, պատկերներ են: Դրանք մարդուս պատկերացումներն են իր և այլոց մասին, նրանց կարծիքների, նպատակների ու հարաբերությունների մասին: Այս ամենն էլ հենց հասարակական կարծիքն է: Այդ պատկերները կամ պատկերացումները, ոլանց վրա ազդում են մարդկանց խմբեր կամ հօգուտ այդ խմբերի գործող առանձին մարդիկ, գլխատառով գրվող ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔՆ ԵՆ: Մարդկանց գիտակցության մեջ հառնող պատկերները նրանց հաճախ մոլորեցնում են իրական կյանքի այն փաստերի վերաբերմամբ, որանց հետ գործ ունենալու կարիք է լինում»:

Չարմանալի չէ, որ Լիպմանը ԱՄՆ-ի ժողովրդին «սիրել» տվեց «Բիթլ»-երին, երբ դրանք սատանի քամու պես արշավեցին ոչ մի փորձանք չսպասող մեր երկրի վրա: Ռադիոյով և հեռուստատեսությամբ արվող շուրջօրյա քարոզչության շնորհիվ «Բիթլ»-երը համեմատաբար կարճ ժամանակի ընթացքում «հանրասիրված» դարձան: «Բիթլզ»-ի երաժշտության հաղորդումների մասին երևակայական ունկնդիրներից հարյուրավոր խնդրանքներ ստացող ռադիոկայանների գործելակերպն ու հնարքներն ընդգրկում էին սկզբում «լավագույն երգերի տասնյակի»,

այնուհետև «լավագույն երգերի քառասնյակի» համար «ջերմերգի երթեր» (հիթ-պարադներ) սարքելը:

Լիպմանի հայրենակից Էդուարդ Բերնեյսը 1928-ին գրում է «ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՑՈՒՄԸ» (Crystallizing public opinion) գիրքը: Նույն թվականին լույս է տեսնում նրա երկրորդ գիրքը, որն ուղղակի վերնագրված էր՝ «ՊՐՈՊԱԳԱՆԴԱ»: Սրա մեջ նա նկարագրել է Վելլինգտոն Հաուզում ձեռք բերած իր փորձը: Բերնեյսը մտիկ բարեկամն էր «վարպետ ձեռնածու (մանիպուլյատոր)» Հերբերտ Ռելսի, որի բազմաթիվ կեղծավեպերը Բերնեյսը որպես ձեռնարկ էր օգտագործել զանգվածային գիտակցության կառավարման եղանակներն ավելի ճշգրտորեն ձևակերպելու համար:

Ռելսը հասարակության ստորին դասերի [գիտակցության] փոփոխման գործում ունեցած առաջնորդի իր դերից չէր ամաչում գլխավորապես այն պատճառով, որ Բրիտանիայի թագավորական ընտանիքի անդամների մերձավոր բարեկամն էր և շատ ժամանակ էր անցկացնում ամենաբարձրաստիճան քաղաքագետներից ոմանց և այնպիսի մարդկանց հետ, ինչպիսիք էին սըր Էդուարդ Գրեյը, լորդ Հուլեյնը, Ռոբերտ Մեսիլը՝ անդամը Մեսիլների հրեական ընտանիքի, որը վերահսկում էր բրիտանական միապետությանը այն ժամանակից սկսած, երբ Մեսիլը դարձել էր թագուհի Եղիզարեթ I-ի անձնական քարտուղարն ու սիրելիանը, Լեո Էյմերին, ՄԻ-6-ի Հելֆորդ Մակինդերը (սա հետո եղավ Լոնդոնի տնտեսագիտության դպրոցի ղեկավարը), որի աշակերտ Բրյուս Լոքհարտը բուլշևիկյան հեղափոխության ժամանակ եղել է Լենինի և Տրոցկու վերահսկիչը (կոնտրոլյորը) և նույնիսկ այնպիսի մեծ մարդու վերահսկիչը, ինչպիսին յուր Ալֆրեդ Միլներն էր:

Ռելսի ժամանցի սիրած տեղերից մեկը մեծ հարգ ունեցող «Սենտ Էրմինս» հյուրանոցն էր՝ «Coefficient Club»-ի (Գործակցի ակումբի) հանդիպատեղը, ուր կարող էին մտնել միայն ընտրյալ ջեռլմենները: Այստեղ նրանք հանդիպում էին ամիսը մի անգամ: Վերը հիշված բոլոր անձինք սրա, ինչպես նաև «Souls Club»-ի (Սոուլսի ակումբի) անդամներ էին: Ռելսը պնդում էր, որ կարելի է պարտության մատնել յուրաքանչյուր երկրի, ընդ որում՝ ոչ թե ուղղակի առնակատման միջոցով, այլ մարդկային գիտակցությունը հասկանալու օգնությամբ, գիտակցություն, ինչը նա կոչում էր «անձնավորության մեջ թաքնված հոգեբանական խորքեր»:

Այսպիսի գորեղ աջակցություն ունենալով՝ Բերնեյսն իրեն բավական վստահ էր զգում իր «ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆ» հրապարակելու համար:

«Քաղաքակրթությունը բարդանալուն և ԱՆԵՐԵՎՈՒՅԹ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԻ ԱԿՆՀԱՅՏ ԴԱՌՆԱԼՈՒՆ համապատասխան հնարվում և զարգացվում են տեխնիկական այնպիսի միջոցներ, ՈՐՈՆՑ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՐԿԼԻ Է ՎԵ-

ԲԱԶՍԿԵԼ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ (ընդգծումը «Պրոպագանդայի» հեղինակինն է): Չեոքի տակ ունենալով մամուլ, հեռախոս, հեռագիր, ուղիտ և սավառակներ (սերոպլաններ)՝ ուզածը գաղափարը կարելի է արագորեն, նույնիսկ ակնթարթաբար տարածել Ամերիկայով մեկ»: (Բերնեյսը չգիտեր, թե այդ բանը ուրբան ավելի լավ կանի հեռուստատեսությունը, որի գյուտը դեռ պետք է արվեր:)

«Չանգվածների սովորություններն ու կարծիքները մտածված և խելացի ձևով խաղարկելը ժողովրդավարական հասարակության կարևոր տարրն է: Հառարակության այդ անտեսանելի մեխանիզմն աշխատեցնողները կազմում են ԱՆԵՐԵՎՈՅԹ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԸ ՄԵՐ ԵՐԿԻՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՂ ԻՍԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է»: Իր դիրքորոշումը հիմնավորելու համար Բերնեյսը քաղվածել է «Նյու Յորք թայմս»-ում հրատարակված Հերբերտ Ուելսի ևողվածը, որի մեջ գրալոր խանդավառությամբ պաշտպանում էր կապի ժամանակակից միջոցները. «Մյուսնք քաղաքական այնպիսի գործընթացների նոր աշխարհ են հույտնագործում, որոնք հնարավորություն են ընձեռում կազմավորելու [աներևույթ կառավարության] ընդհանուր կառուցվածքը և այն պաշտպանելու խաթարումներից»:

Շարունակենք «Պրոպագանդայի» պարունակած հայտնագործությունները.

«Մեզ կառավարում են, մեր գիտակցությունը նպատակամետ կերպով կաղապարում են, մեր ճաշակները միատեսակ են դարձրել, մեր գյուլիսը գաղափարներ են խցկում այնպիսի մարդիկ, որոնց մասին երբեք չենք լսել: Ինչպես էլ այս բանին վերաբերվենք, փաստն այն է մնում, որ մեր կյանքի գրեթե ամեն դրվագում, քաղաքականության կամ գործարարության մեջ, մեր հասարակական վարքի կամ բարոյական մտածողության ոլորտում մեզ վրա իշխում են հարաբերաբար փոքրաթիվ անձինք՝ մեր 120 միլիոնի մի պատիկ մասը, որոնք հասկանում են զանգվածային վիտակցության գործընթացները և զանգվածների վարքի սոցիալական կաղապարները: Հենց նրանք են իրենց ձեռքի մեջ պահում հասարակական գիտակցությունը կառավարող և սոցիալական հին ուժերին զսպող սանձերը, ինչպես նաև հնարում ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱ ՎԵՐԱԶՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՆՈՐ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ»: (Ընդգծումը հատվածի հեղինակինն է:)

Բերնեյսը չհամարձակվեց աշխարհին ասել, թե ովքեր են «ՆՐԱՆՔ»-ը, որ «իրենց ձեռքի մեջ են պահում հասարակական գիտակցությունը կառավարող... սանձերը»: Բայց այս գրքի մեջ կշտկենք նրա դիտավորյալ բացթողումը՝ ի հայտ բերելով այդ «հարաբերաբար փոքրաթիվ անձանց»՝ 300-ի կոմիտեի գոյությունը: Իր աշխատության համար Բերնեյսն արժանացել է «Միջազգային հարաբերությունների

խորհրդի» անդամների միահամուռ ծափահարությանը, ովքեր իրենց ձայնը տվեցին, որ նա գլխավորի CBS հեռուստաընկերությունը: Վիլյամ Փալեյը Բերնեյսի «աշակերտն» է դառնում և ի վերջո փոխարինում է նրան՝ յուրացնելով հասարակական կարծիք կերպաձևելու «նոր գիտության» ողջ իմացությունը, ինչը CBS-ին առաջնորդ դարձրեց գործունեության սույն բնագավառում, և այդ առաջատար դերը CBS-ի ռադիոն ու հեռուստատեսությունը այլևս ոչ մեկին չզիջեցին:

«Հարաբերաբար փոքրաթիվ անձանց» քաղաքական ու ֆինանսական վերահսկողությունն իրականացվում է մի շարք գաղտնի ընկերությունների միջոցով, գլխավորապես Շոտլանդական ծեսի մասննների և, հնարավոր է, ավելի նշանակալի «Սբ. Հովհաննես Երուսաղեմացու ասպետների պատվելի ուխտի» միջոցով: Այս հին ախտը կազմված է Բրիտանիայի միապետի ընտրած անդամներից, որոնք այդ պատվին են արժանացել կենսականորեն կարևոր ոլորտներում իրենց ունեցած փորձի շնորհիվ, ինչը հարկավոր է դրանց վրա 300-ի կոմիտեի մշտական վերահսկողության համար:

1986 թ. հրապարակված «Սբ. Հովհաննես Երուսաղեմացու ուխտը» աշխատությանն մեջ Ուխտը նկարագրել են հետևյալ կերպ.

«... Այսպիսով՝ նա գաղտնի ընկերություն չէ, եթե հաշվի չառնենք այն դեպքերը, երբ նրա նպատակներն աղավաղվում են իր իսկ ներքին մարմինների կողմից, որոնցից է «Գուլյակալի՝ ուխտը»: Սա Բրիտանիայի թագավորական ընտանիքի խմբիշխանական պոռնկացված դրածոն է, որն ի չիք է դարձնում այն, ինչի համար հանդես է գալիս ինքնիշխան «Սբ. Հովհաննես Երուսաղեմացու ուխտը»»:

Օրինակի համար վերցնենք աստվածամերժ լարդ Փիտեր Քարինգտոնին, որն Անգլիկան եկեղեցու հետևորդ է ձևանում, բայց անդամ է «Օսիրիսի ուխտի» և դիվանական այլ պաշտամունքների, մասն լինելն էլ հետը: Վինձորի դոյակի սբ. Գևորգի մատուռում նրան պաշտոնապես ասպետի կոչում է շնորհել Անգլիայի թագուհի Եղիսաբեթ II-ը, որը սերել է գվելֆների Սև արիստոկրատիայից, պետն է նաև Անգլիկան եկեղեցու, որին խորապես արհամարհում է:

300-ի կոմիտեն Քարինգտոնին հանձնարարում է տապալել Ռոդեզիայի կառավարությունը, Անգոլայի և Հարավային Աֆրիկայի հանքային հարստությունները դնել լոնդոնյան Միտիի վերահսկողության տակ, կործանել Արգենտինան և ՆԱՏՕ-ն դարձնել 300-ի կոմիտեին պատկանող ձախ հոսանքի քաղաքական կազմակերպություն:

¹ Գուլյան պահող՝ ցած իջնել չթողնող կապ՝ շորից կամ ուետիմից, գուլյայի կապ:

Սույր քրիստոնեական «Մր. Հովհաննես Երուսաղեմացու ուխտին» փակչած ևս մի օտարածին դեմք ենք տեսնում («օտարածին» [կամ այլազգի - Վ. Ա.] բառը գրում են այն իմաստով, որով հրեական Հին ուխտի բնագրում գործածվել է մեկի օտար ծագումը նշելու համար). դա մայր Լուի Մոլտիմերն է, որն օգնել է իրականացնելու Ջոն Քենեդիի սպանության ծրագիրը: Տեսնում ենք Մալթայի խաչը հպարտորեն ցուցադրած այդ օտարի լուսանկարը. սա այն խաչն է, որն իրենց թեզանիքներին կայցրած ունեն «Գուլյակալի ուխտի» ասպետները:

Մեր ուղեղածալքերն այնպես ջանադրաբար են արդուկում, որ հավատում ենք, թե Բրիտանիայի թագավորական ընտանիքն ընդամենը հաճելի, անվնաս, փափկամազիկ ու գունեղ հասարակական հաստատույթ (ինստիտուտ) է, և չենք էլ պատկերացնում, թե որքան ծախված ու կաշառված, ուստի և չափազանց վտանգավոր է բրիտանական միապետություն կոչվող այդ հաստատույթը: Իսկ «Գուլյակալի ուխտի» ասպետներն ԱՄՆՆԱՄԵՐԶԱՎՈՐ ՆԵՐՔԻՆ ՇՐՋԱՆԱԿՆ ԵՆ առավել ծախված ու կտշառված հասարակական գործիչների, որոնք ուտնակոխ են արել իրենց հանդեպ երկրի ու ժողովրդի ցուցաբերած վստահությունը:

«Գուլյակալի ուխտի» ասպետները 300-ի կոմիտեի առաջնորդներն են և Եղիաաբեթ II թագուհու «Գաղտնի խորհրդի» ամենավստահելի անդամները: Մի քանի տարի առաջ, երբ «Մր. Հովհաննես Երուսաղեմացու ուխտի» մասին նյութեր էի փնտրում, Օքսֆորդ մեկնեցի խոսելու նրա մազլիստրոսներից մեկի հետ, որը բրիտանական հին և ժամանակակից ավանդույթների մասնագետ է: Նա ինձ պատմեց, որ «Գուլյակալի ասպետները» Նորին մեծության և գերամեծար «Մր. Հովհաննես Երուսաղեմացու ուխտի» սրբությունների սրբությունն են, ընտրանու ընտրանին: Ինձ բույլ տվեք ասել, որ սա այն սկզբնական ուխտը չէ, որ հիմնել էր իսկական քրիստոնյա ուղմիկ Պիեռ Ժերարը, այլ այն նախկին հրաշալի բազում ընկերություններից մեկն է, որոնք զավթվել և քանդվել են ներսից, թեև անիրագեկ մարդկանց համար դեռևս պահպանում են սկզբնական տեսքը:

Օքսֆորդից գնացի «Վիկտորիայի և Ալբերտի թանգարանը», որտեղ թույլտվություն ստացա ուսումնասիրելու Չինաստանում «ափիոնային արքայատոհմի» (դինաստիայի) հիմնադիրներից մեկի՝ լորդ Փալմերստոնի թղթերը: Փալմերստոնը, ինչպես որ նրա նման շատերը, ոչ միայն մասն էր, այլև գնոստիկության մվիրյալ սպասավորը: Ներկայիս «թագավորական ընտանիքի» պես Փալմերստոնը քրիստոնյա էր ձևանում, բայց փաստորեն սատանայի ծառան էր: Բազում սատանապաշտներ Բրիտանիայի արիստոկրատիայի առաջնորդներ են դարձել և հսկայական հարստություններ դիզել Չինաստանում ափիոն ծախելով:

Վիկտորիայի թանգարանի փաստաթղթերից իմացա, որ թագուհին 1885 թվականին փոխել է «Սբ. Հովհաննես Երուսաղեմացու ուխտի» անունը, որպեսզի սրանից խզի Ուխտի հիմնադիր Պիեռ Ժերարի կաթողիկական կապը, և այն կոչել է «Երուսաղեմի բողոքական վերապատվելի ուխտ» («Protestant Most Venerable Order of Jerusalem»): Սրան անդամակցելը բաց է եղել խմբիչխանական ամեն ընտանիքի համար, որն իր կարողությունը շինել էր Չինաստանում ամփոփ ծախսելով, և լիովին անկապաշտ (դեկադենտական) յուրաքանչյուր ընտանիք կարող էր տեղ ստանալ «նոր ուխտի» մեջ:

Այս պատվարժան ջենտլմեններից շատերը «չոր օրենքի» ժամանակ Կանադայից վիսկիի խոշոր մասնակներ էին առաքում ԱՄՆ: Սրանց խմբի մեջ ամենանշանավորը 300-ի կոմիտեի անդամ կոմս Հեյզն էր, որը հետագայում իր խմբիչքազործարարությունը փոխանցեց ծեր Ջո Բեննեդիին: Թե՛ «չոր օրենքը», թե՛ վիսկի արտադրողները շինածոներն էին բրիտանական թագի, որը գործում էր 300-ի կոմիտեի անդամների ձեռքով: Դա թմրանյութերի այժմյան առևտրին նախորդած փորձ էր, և «չոր օրենքի» շրջանում առած դասերը ներկայումս օգտագործվում են թմրառևտրի մեջ, որը շուտով կօրինականացվի:

Կանադական երթուղին առավել հաճախ օգտագործում են Հեռավոր արևելքից հերոին մատակարարողները: Բրիտանական միապետությունը բոլոր ջանքերը գործադրում է, որ այս տեղեկությունը չիրապարակվի: Օգտագործելով իր իշխանությունը՝ Եղիաաբեթ թագուհին Կանադան կառավարում է ԱՆՁՆԱԿԱՆ ներկայացուցիչ գեներալ-նահանգապետի միջոցով (հետաքրքիր է, թե այսօրյա կանադացիներն ինչպես են հանդուրժում կառավարման այսքան հնօրյա ձևը), իսկ վայրընթաց գծով՝ «Գաղտնի խորհրդի» (գաղութային դարաշրջանի ևս մի հնօրյա վերապրուկ) և «Սբ. Հովհաննես Երուսաղեմացու ասպետների» միջոցով, որոնք վերահսկում են Կանադայի գործարարության բոլոր ոլորտները:

Կանադայում բրիտանացիների իշխանությանը դեմ կացողներին լնկնել են: Այս երկիրն աշխարհի ամենախիստ սահմանափակիչ օրենքներն ունի, ներառյալ այսպես կոչված «ատելության հանցագործությունների» մասին օրենքները, որոնք այս երկրի վիզն են գցել Անգլիայի Լորդերի պալատի հրեա անդամները: Ներկայումս Կանադայում չորս խոշոր դատավարություններ են ընթանում «ատելության հանցագործությունների» մեջ մեղադրվող մարդկանց դեմ: Բնվում են Ֆինտայի (Finta), Բեգստրայի (Keegstra), Յունդելի (Zundel) և Ռոսսի (Ross) գործերը: Յուրաքանչյուր ոք, ով կհանդգնի Կանադայի վրա հրեաների վերահսկողության ապացույցներ գտնել ու բացահայտել, անհապաղ կձերբակալվի և կմեղադրվի «ատելության հանցագործություններ» հորջորջվածը կատարելու մեջ: Այս բանը որոշ պատկերացում է տալիս

300-ի կոմիտեի իշխանության չափերի մասին, մի կազմակերպություն, որն ուղղակի թառել է մեր աշխարհի կառավարման բուրգի գագաթին:

Սույն պնդումը ճիշտ լինելու վկայությունն է այն փաստը, որ 300-ի կոմիտեն «Կլոր սեղանի» հովանու ներքո հիմնել է Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտը (ՌՀՄԻ): Սա ՄԻ-6-ի և Թավիստոկի ինստիտուտի սարքն է «սև քարոզի» ու «թաց գործերի» (հետախուզական ժարգոնով այսպես է ասվում մարդու արյուն թափելը), ինչպես նաև միջուկային ճարտարարվեստի և ակաբեկության հետ կապված գործառնություններ կատարելու համար: Ինստիտուտի «սև քարոզը» և տված տեղեկությունները տարածվում են համաշխարհային մամուլի միջոցով, ինչպես նաև ուղիղ գծով հասնում են կառավարություն և զինվորական հիմնարկներ:

Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի անդամներ են լրատվական 87 խոշոր գործակալություններ, ինչպես նաև միջազգային թերթերի ու հանդեսների 138 խմբագիրներ և առաջատար լրագրողներ: Հիմա արդեն զիտեք, թե լրագրի որևէ սյունակը կամ բաժինը վարող ձեր սիրելի լրագրողը որտեղից է ստանում իր տեղեկանյութը և ինչի համապատասխան է ձևում իր կարծիքը: Հիշեցի՞ք Ջեյ Անդերսոնին, Թոմ Ուիկերին, Մեմ Դոնալդսոնին, Ջոն Չանսելերին, Մերի Մակ-Գլաուրիին, Սեյմուր Հերշին, Ֆլորա Լյուիսին, Էնտոնի Լյուիսին և մյուսներին: ՌՀՄԻ-ի մատակարարած ամբողջ տեղեկանյութը, առանձնապես նախագահ Սադամ Հուսեյնին սևացնելու կամ Լիբիայի վրա կատարվելիք գրոհն արդարացնելու և Պաղեստինի ազատագրման կազմակերպությանը դատապարտելու նպատակով տված «խրադարձությունների բեմադրությունները» հատուկ պատվերով հորինվում է յուրաքանչյուր դեպքի համար: Մեյ Լեյում կատարված սպանդի պատմությունը, որ հրապարակեց Սեյմուր Հերշը, հենց ՌՀՄԻ-ն էր տրամադրել: Սա շեշտում են, որ այսուհետև ոչ մեկը սխալմամբ չկարծի, թե Հերշի տեսակ մարդիկ «լրագրողական հետաքննություններ» են անցկացնում:

Ըստ Լիպմանի ու Բերնեյսի սահմանման՝ Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտը հասարակական կարծիքի կերպաձևման քարճրագույն շարակարգն է: Հասարակական կարծիք կերպաձևելու գործում գլխավոր դերը հիմա խաղում են ոչ թե գրքերը, այլ թերթերը, որոնք հրապարակում են լնտյալ լրագրողների կարծիքները: ՌՀՄԻ-ն հիմնվել էր ոչ միայն որպես կարծիքների ստեղծման համադասիչ (կոորդինացիոն) կենտրոն, այլև որպես այդ կարծիքներն ու բեմադրությունները առավել լայն լսարանի հասցնելու համակարգ: ՌՀՄԻ-ն 300-ի կոմիտեի հիմնարկների փոխկապակցվածության և փոխգործողության վառ օրինակ է:

ՌՀՄԻ ստեղծելու գաղափարը ծագել է 1957 թվականին «Բիլդեր-

քերգերների» հանդիպման ժամանակ: Անհրաժեշտ է հիշեցնել, որ Բիլ-դեյքերգերյան կոնֆերանսը ՄԳԹԻ-ի ղեկավարությամբ ՄԻ-6-ի կատարած աշխատանքի արդյունքն է: Կոնֆերանսի գաղափարը հուշել է Ալիստեր Բուչանը՝ լորդ Թվիդսմուրիի որդին: Այդ ժամանակ Բուչանը ՄԳԹԻ-ի խորհրդի նախագահն էր, «Կլոր սեղանի» անդամը, ինչպես նաև թագավորական ընտանիքին շատ մերձ մարդ: Սույն կոնֆերանսը ջերմորեն իր շարքերն ընդունեց լեյբորիստական կուսակցության առաջնորդ Դենիս Հիլին: Ներկաների մեջ էր նաև Ֆրանսուա Դյուշանը, որի դաստիարակ ժամ Մոնե Դյուշենեն ղեկավարում էր «Լոակոլոմ հանձնաժողովը»՝ Կոլումբոս քաղաքում գտնվող թավիստոկյան կենտրոնի Հ. Վ. Դիքսի խնամակալությամբ:

Հասարակական կարծիք կերպաձևելու քարոզչական այս վիթ-խարի կառույցի ղեկավար խորհրդի կազմի մեջ են մտնում հետևյալ անձերն ու կազմակերպությունները.

Ֆրենկ Բիքսոնը, որը մի ժամանակ եղել էր Իռլանդիայի հանրապետական բանակի կիսազինվորական կազմավորումների վերահսկիչը (սա Քենիայում նախապատրաստել և իրականացրել է «Մաու-մաու»-ների սպատամբությունը),

Ռոբերտ Լյսվուդի ներկայացրած Lazard Freres բանկը,

Ջոն Լուդոնի ներկայացրած «Ն.Մ.Ռոթշիլդ» բնկերությունը,

Schroeder Bank-ի ներկայացուցիչ Փոլ Նիտցեն (սա կարևոր դեր է կատարել սպառազինությունների վերահսկման մասին համաձայնագրեր կնքելու գործում, ինչը ՄԻՇՏ եղել է ՄԳԹԻ-ի վերահսկողության տակ),

«Նյու Յորք թայմսի» Ք. Լ. Չուլցբերգերը,

Հեռախոսության կենտրոնական վարչության (ՀԿՎ) նախկին տնօրեն Ստենաֆիլդ Թյուրները,

Penguin Books հրատարակչության ներկայացուցիչ Փիտեր Բալվոկորեսին,

Էնդրյու Շոենբերգի ներկայացրած Սիջազգային գործերի թագավորական ինստիտուտը,

Լրագրողներ և լրահաղորդներ (ռեպորտյորներ), մասնավորապես Ֆլորա Լյուիսը, Դյու Սիդլստոնը, Էնտոնի Լյուիսը, Մաքս Ֆրենկելը,

Դենիել Էլսբերգը,

Հենրի Բիսինջերը,

ՀԿՎ-ի բաժանմունք Հեռախոսության և գնահատման ազգային վարչության (National Intelligence Estimates) նախկին տնօրեն Ռոբերտ Բուլին:

1957 թ. «Բիլդերբերգերների» հանդիպումից հետո Բիսինջերը հրահանգ է ստանում Մանհեթենում բացելու «Կլոր սեղանի» գրասենյակ,

որի միջուկը եղան Հեյզը, Էլսթերգը, Գալպերինը, Շլեզինգերը, Մակնամարան և Մակ-Բանդի եղբայրները: Քիսինջերին հանձնարարում են Նիքսոնի վարչակազմի գործադիր բոլոր պաշտոնները զբաղեցնել «Կլոր սեղանի» անդամներով, որոնք նվիրված են ՄԳԹԻ-ին և, հետևաբար, Անգլիայի թագուհուն: Պատահական չէ, որ Քիսինջերը գործառնությունների կենտրոն է ընտրում Նիքսոնի մարդկանց հին հավաքավայրը՝ «Պիեռե» հյուրանոցը:

Քիսինջերի և «Կլոր սեղանի» գործառնությունների էությունը հետևյալն էր. ՄԳԹԻ-ի նախագահ Էնդրյու Շոենբերգի կարգադրությամբ պատնեշվում է հետախուզության հետ կապ ունեցող բոլոր կազմակերպությունների գործունեությունը, ինչի հետևանքով գործառնական (օպերատիվ) տեղեկությունները դադարում են անմիջաբար Նիքսոնին հասնելուց: Դա նշանակում էր, որ Քիսինջերն ու նրա աշխատակիցներն էին ԱՄՆԻԿԱՅԻ և ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՄՆ-Ի ԻՐԱՎԱՊԱՀ ԲՈԼՈՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԱՅԼԵՎ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇՆԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ 5-ՐԴ ԲԱԺՆԻ ՀԱՂՈՐԴԱԾ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԱՄԲՈՂՋ ՏԵՂԵԿԱՆՅՈՒԹՆ ՍՏԱՆՈՒՄ նախագահին ներկայացվելուց առաջ: Այս հանգամանքը երաշխավորում էր, որ լիովին թաքցված կլինի ԱՄՆ-ում ՄԻ-6-ի հսկած ակաբեկչական բոլոր կազմակերպությունների ու գործառնությունների մասին տեղեկանյութը: Մա Գալպերինի իրավասության ոլորտն էր:

Աշխատելով այս գործելակարգով՝ Քիսինջերն իսկույն գերիշխանություն է հաստատում Նիքսոնի նախագահության հանդեպ: Իսկ այն քանից հետո, երբ Նիքսոնը վարկաբեկվում է Քիսինջերի խմբի ձեռքով և վտարվում պաշտոնից, Քիսինջերն այնպիսի աննախադեպ լիազորություններ է բռնատիրում (ուզուրպացնում), որպիսիք ոչ մեկը չի ունեցել Ուոտերգեյտից ո՛չ առաջ, ո՛չ էլ հետո: Ահա հազվադեպ հրապարակվող այդ իրավունքներից ու լիազորություններից մի քանիսը.

Քիսինջերը հրամայում է կազմել «Ազգային անվտանգության հարցերի վերաբերյալ թիվ 1 հուշագրի» տեքստը: Գործը հանձնարարում է Գալպերինին, որը «Կլոր սեղանի» մարդկանց միջոցով ՄԳԹԻ-ից ստանում է պատրաստի բնագիրը: Այդ հուշագիրը Քիսինջերին ԱՄՆ-ի գերագույն իշխանության լիազորություններ է տալիս՝ նրան դարձնելով «Վերահսկիչ խորհրդի» (Verification Panel) նախագահ: Ռազմավարական սպառազինությունները սահմանափակելու բոլոր բանակցությունների ղեկավարությունն իրականացվում էր այստեղից՝ Փոլ Նիտցեի, Փոլ Ուորնկեի և Էլի մի ամբողջ կույտ դավաճանների միջոցով, որոնք գործում էին Ժնևում գտնվող սպառազինությունների վերահսկողության ներկայացուցչությունում:

Քիսինջերը նշանակվում է «Վիետնամի գծով հետազոտական հա-

տուկ խմբի» մեջ, որն ուսումնասիրում և գնահատում էր Վիետնամից ստացված զինվորական ու քաղաքացիական բոլոր զեկույցները, ներառյալ հետախուզական տվյալները: Քիսինջերը նաև պահանջում և ստանում է «40-րդ կոմիտեին» հսկելու իրավունքը: Սա գերզադանի գործակալություն էր, որի խնդիրն էր սրուշելը, թե երբ և որտեղ պետք է քայքայիչ աշխատանք սկսել, ապա՝ նաև հետևելը գործառնությունների կատարման ընթացքին:

Միևնույն ժամանակ Քիսինջերը Հետաքննությունների դաշնային բյուրոյին (FBI) հրամայում է լսել բոլորի, անգամ իր մերձավոր աշխատակիցների հեռախոսագրույցները, որպեսզի այն տպավորությունն ստեղծի, թե ինքը վերահսկում է բացարձակապես ամեն ինչ: Նրա շրջանակի մարդկանց մեծ մասն իրագել էր, որ հեռախոսագրույցները գրանցվում են: Բայց մազ էր մնում, որ նախազգուշական այդ միջոցները հարվածեին հենց իրեն՝ Քիսինջերին: Հրամայվել էր ականջ դնել ՄԻ-6-ի գործակալ ոմն Հենրի Բրենդոնի հեռախոսին, սակայն սրան տեղյակ չէին պահել այդ մասին: Պարզվում է, որ Բրենդոնը, գործակալ լինելուց բացի, նաև լոնդոնյան «Թայմս»-ի լրահաղորդն է: Քիչ էր մնում Քիսինջերին պաշտոնանկ անելն սրա պատճառով, որովհետև ոչ մեկն իրավունք չուներ այդպես վարվելու լոնդոնյան «Թայմս»-ի հետ:

Էլսբերգի գործունեության և սրան հաջորդած Ուոտերգեյտի լրիվ պատմությունը չափազանց երկար է, ուստի չենք կարող այստեղ շարադրել: Բավական է ասելը, որ Քիսինջերն Էլսբերգին վերահսկել է այն օրվանից, երբ սրան հավաքագրել էին Քենթրիջում ուսանող եղած ժամանակ: Էլսբերգը միշտ անզվիջում դիրք է բռնել հօգուտ Վիետնամում վարվող պատերազմի, բայց հետզհետե «բարեփոխվել» է՝ դառնալով արմատական ձախ գործունորդ (ակտիվիստ): Սրա «բարեփոխումը» շատ քիչ է պակաս այն հրաշքից, որ Պոլոս առաքյալին պատահեց Դամասկոսի ճանապարհին¹:

ԱՄՆ-ի նոր ձախերի «բույր» «Կլոր սեղանի» և Քաղաքական ուսումնասիրությունների ինստիտուտի (ԲՈՒԻ) միջոցով գործող ՄԻ-6-ի աշխատանքի արդյունքն է: ԲՈՒԻ-ն առաջատար դեր է կատարել հանրապետական կարգ ունեցող շատ երկրների քաղաքականությունը փոխելու հարցում և այդ գործունեությունը նույնիսկ հիմա շարունակում է Հարավային Աֆրիկայում և Հարավային Կորեայում: ԲՈՒԻ-ի շատ

¹ Ակնարկում է Պոլոսի դարձի գալը: Հրեության ջերմ պաշտպան և քրիստոնեության դիմերիմ բշմամի Սողոսը Դամասկոս էր գնում, որ ձերբակալի այնտեղ հայտնված քրիստոնյաներին: Գանապարհին նրան է հայտնվում Հիսուսը, և Սողոսը դարձի է գալիս՝ դառնալով քրիստոնեության սյուն Պոլոս առաքյալ (Վ. Ա.):

գործառնություններ լուսաբանվել են 1990 թ. հրապարակված «ՔՈՒԻ-ն նոր հայացք է» («IPS Revisited») աշխատության մեջ:

Քաղաքական ուսումնասիրությունների ինստիտուտի հիմնական խնդիրը քառս ծնող տարածայնություններ սերմանելը և տարազեկում (դեզինֆորմացիա) սփռելն է: Ամերիկայի երխտասարդության դեմ ուղղված այդպիսի ծրագրերից մեկը հիմնվում է թմրանյութերի տարածման վրա: ՔՈՒԻ-ի վերահսկած «առաջին շարակարգի» որոշ կազմակերպությունների գործունեության, գանազան գարշելի ելույթների (ինչպիսին էր Նիքսոնի ավտոթափարը քարկոծելը), այլև ահաբեկչական պայթեցումների կազմակերպման հետևանքով երկրում ստեղծվել էր ստի ու խաբեության մթնոլորտ, ինչը միլիոնավոր ամերիկացիների ներշնչել է, թե Ամերիկայի գլխին սոսկալի սպառնալիք է կախվել՝ հանձինս ԽՍՀՄ Պետանվտանգության կոմիտեի ու Ջինված ուժերի հետախուզական գլխավոր վարչության, ինչպես նաև Կուբայի DGI հետախուզական ծառայության: Լուր էր տարածվել, թե սրանք Ջորջ Մակգովերնի միջոցով կապված են ժողովրդավարական կուսակցության հետ: Սա փաստորեն տարազեկման այն «օրինակելի» արշավներից էր, որոնցով հռչակվել է ՄԻ-6-ը:

Հայդեմանը, Էրլիխմանը և Նիքսոնի ամենամերձավոր օգնականները չզիտեին այս երևույթների իսկական պատճառները. ուստի Մալիտակ տնից հայտարարությունների հեղել էր տեղում, թե Արևելյան Գերմանիան, Խորհրդային Միությունը, Հյուսիսային Կորեան ու Կուբան ահաբեկիչներ են պատրաստում և դրամավորում են ԱՄՆ-ում նրանց կատարելիք գործառնությունները: Կասկածում են, թե Նիքսոնն առհասարակ որևէ բան իմացած լինի ՔՈՒԻ-ի, էլ չասած սրա՝ իր դեմ գործած լինելու մասին: Մենք տարազեկման նույնպիսի ազդեցության ենք ենթարկվել Պարսից ծոցի պատերազմի ժամանակ, երբ հաղորդվում էր, որ ամեն «ուանգի ու ձևի» ահաբեկիչները միտք ունեն ԱՄՆ լցվելու և պայթեցնելու այն ամենը, ինչ հնարավոր է:

Նախագահ Նիքսոնն ուղղակի թաղված է եղել անտեղյակության խավարի մեջ. նույնիսկ չի իմացել, որ Քիսինջերի աշակերտ Դավիդ Յանգն աշխատում է Մալիտակ տան ներքնահարկում՝ հետևելով «լրատվության արտահոսքին»: Յանգն ավարտել էր Օքսֆորդը և Քիսինջերի հետ երկար ժամանակ կապված էր «Կլոք սեղանի» հիմնարկների միջոցով, որոնցից մեկն էլ Milbank Tweed-ի իրավաբանական գրասենյակն էր: Նախագահ Նիքսոնն արժանի ախտյան չէր այն ուժերի առաջ, որոնք նրա դեմ էին ելել ՄԻ-6-ի ու ՄԳԹԻ-ի, այսինքն՝ Բրիտանիայի թագավորական ընտանիքի դեկավարությամբ:

Ինչ վերաբերում է «ուտերգեյտյան գործին», ապա Նիքսոնն այստեղ մեղավոր էր միայն մի բանում. չզիտեղ ինչ է կատարվում իր շուրջը: Երբ Ջեյմս Մակ-Բորդը «խոստովանվում է» դատավոր Ջոն Սիլի-

կին, Նիքսոնի համար պետք է պարզ դառնայ, որ Մակ-Քորդը երկակի խաղ է անում: Հարկ էր, որ նա հարուցեր Քիսինջերի ու Մակ-Քորդի մշտական կապերի հարցը: Մա կխոչընդոտեր իրադարձությունների զարգացումը և կփլուզեր ՄԻ-6-ի ուտերգեյտյան ողջ գործառնությունը:

Նիքսոնը չի չարաշահել նախագահական իր իշխանությունը: Նրա մեղքն այն է, որ չի պաշտպանել ԱՄՆ-ի Սահմանադրությունը և տիկին Քեթրին Մեյեր Գրեհենմյն ու Բեն Բրեդլիին չի մեղադրել հեղաշրջում նախապատրաստելու նպատակով դավադրություն կազմակերպելու մեջ: Քեթրին Մեյեր Գրեհենմյն ծննդաբանությունը հույժ կասկածելի բնույթ ուներ, ինչը շուտով ի հայտ կբերեր նույնիսկ «Նա նկարում էր սպանություն» ֆիլմաշարի Ջեսիկա Ֆլետչերը: Բայց նույնիսկ իմանալով այս բանը՝ «Կլոր սեղանի» վերահսկիչները հանդուգն քայլերի էին դիմում, որ ճշմարտությունը ջրի երես չելնի: «Վաշինգտոնի փոստի» դերն այն էր, որ անդադար «մերկացումների» օգնությամբ կրքեր բորբոքեր՝ նախագահ Նիքսոնի հանդեպ հասարակական անվստահության մթնոլորտ ստեղծելով նրա մեղքի որևիցե ապացույցի բացակայության պարագայում անգամ:

Մամուլի հսկայական իշխանությունը, ինչը ճշտորեն կանխագուշակել էին Լիպմանն ու Բերնեսյը, երևում էր այն բանից, որ յուր ամուսին Ֆիլիպ Լ. Գրեհենմյն (ըստ պաշտոնական վարկածի՝ ինքնասպան եղած) սպանության մեջ վաղուց կասկածվող տիկին Լ. Գրեհենմյն ներկայացվել էր իբրև միանգամայն կարգին ու առաքինի անձնավորություն: Մյուս դավադիրները, որոնց հարկ էր մեղադրել խոսվության և պետական դավաճանության մեջ, սրանք էին՝ Քիսինջեր, Հեյզ, Գալպերին, Էլսերգ, Յանգ, Մակ-Քորդ, Ջոզեֆ Բալիֆանո և ՔՈՒԻ-ի Հոմսկին, ինչպես նաև Հետախուզության կենտրոնական վարչության այն գործակալները, որոնք սողսկել էին Մակ-Քորդի տունը և վառել նրա բոլոր թղթերը: Հարկավոր է մի անգամ էլ ասել, որ Ռոտերգեյտը, ինչպես որ շատ այլ գործառնություններ, որոնք այստեղ նկարագրելու հնարավորությունը չունենք, ցուցադրեց 300-ի կոմիտեի հաստատած ԼԻԱԿԱՏԱՐ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ Միացյալ Նահանգների վրա:

Թեև Նիքսոնն ընկերություն էր անում էրլ Ռոյեննի պես մարդկանց և մաֆիայի որոշ պարագլուխների հետ, որոնք Ռոյեննի համար տուն էին շինել, այդ չէր նշանակում, որ նրան հարկավոր էր նվաստացնել ու անվանարկել ուտերգեյտյան խայտառակության միջոցով: Նիքսոնին չսիրելս բացատրվում է այն բանով, որ նա 1972 թվականին պատրաստականորեն ստորագրեց հակահրթիռային պաշտպանության համակարգերը սահմանափակելու ամոթալի պայմանագիրը և ընկերասիրական հարաբերություններ ուներ Լեոնիդ Բրեժնևի հետ:

Այս ամբողջ գործի մեջ ամենասարտնեղիչ ճախորդություններից մեկը «ԻՆՏԵՐՏԵԼ» գործակալության կեղտոտ դերը մերկացնելու անկա-

րողությունն էր: Corning Group ընկերության այս հետախուզական մասնավոր նողկալի գործակալությունը ուտտերգեյտյան նյութերի վերաբերյալ տեղեկատվության «արտահոսքեր» էր սալարում Լուվարդ Քենեդիի համար: «ԻՆՏԵՐՏԵԼ»-ի [ծանոթ անուն չի՞ հիշեցնում] նման հետախուզական մասնավոր գործակալությունները ԱՄՆ-ում գոյություն ունենալու իրավունք չունեն: Սրանք ՍՊԱՌ-ՆԱԼԻՔ ԵՆ մասնավոր կյանքի մեր իրավունքի համար և վիրավորում են ազատ մարդկանց:

Մեղքը նաև նրանց վզին է ընկնում, սվքեր, ինչպես ենթադրվում էր, պետք է նախագահ Նիքսոնին պաշտպանեին նրա վրա գցվող պողպատե մեկուսիչ ցանցից: Նիքսոնին նվիրված մարդկանց մեջ շատ քիչ էին հետախուզության մասնագետները, որոնք, բացի սլանից, չգիտեին, թե ինչպիսի խնամքով են մշակվում Բրիտանիայի հետախուզական ծառայությունների գործառնությունները: Նրանք փաստորեն չնչին իսկ պատկերացում չունեին, որ ամբողջ «ուտտերգեյտյան գործը» բրիտանական հետախուզության գործառնությունն է: «Ուտտերգեյտը», ինչպես որ Ջոն Ֆ. Քենեդիի սպանությունը, պետական հեղաշրջում էր ու նաև դավադրություն Ամերիկայի Միացյալ Նահանգների դեմ: Թեպետ այսօր այս փաստը չի ընդունվում, վստահ են՝ երբ բոլոր գաղտնի փաստաթղթերն ի վերջո հրապարակվեն, պատմության մեջ կարձանագրվի, որ այս երկու դավադրությունները, մեկը՝ Քենեդիի, իսկ մյուսը՝ Նիքսոնի դեմ, իրոք եղել են, և որ դրանց հետևանքով ամբողջովին քայքայվել են այն հաստատույթներն ու հիմքերը, որոնց վրա խարսխվում է Միացյալ Նահանգների հանրապետությունը:

Այն մարդը, որին հիրավի արժե խայրանել որպես դավաճանի, և որը բոլորից ամենամեղավորն է հակակառավարական գործունեության մեջ, է՛ Ալեքսանդր Հեյզը: Այս գրագիրը (քլերկը), շտաբային այս գնդապետը, որն իր թղթե գործունեության ընթացքում ոչ մի անգամ գորք չի ղեկավարել ռազմաբեմում, անսպասելիորեն քաղաքական քատերաքեն հանվեց բարձրագույն մակարդակի գուգահեռ աներևույթ կառավարության կողմից: Նախագահ Նիքսոնը Հեյզի մասին մի անգամ ասել է, որ նա Քիսինջերից թույլտվություն է խնդրում նույնիսկ գուգարան գնալու համար:

Հեյզը «Կլոր սեղանի» արգասիք էր: Նրա վրա ուշադրություն էր դարձրել «Կլոր սեղանի» անդամ Ջոզեֆ Քալիֆանոն՝ ԱՄՆ-ում Նորին մեծության ամենավստահելի անձանցից մեկը: Քալիֆանոն, լինելով Ժողովրդավարական ազգային համաձայնագրի իրավախտրիրատուն, Ալֆրեդ Բուլդուինի՝ «ջրմուղագործներից»¹ մեկի հետ հարցազ-

¹ Դավադիրները «Ուտտերգեյտ» հյուրանոցում «աշխատել» էին ջրմուղագործի կերպ մտած (Վ. Ա.):

րույց էր ունեցել ԳԻՇԵՐԱՅԻՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԻՑ ՄԻ ԱՄԻՍ ԱՌԱՋ: Պարզվում է, որ Քալիֆանոն բավական հիմար է, որովհետև Բուրուիհի հետ ունեցած իր գրույցի մասին շարադրած գեկուցագրի մեջ Մակ-Քորդի անցյալին վերաբերող որոշ մանրամասներ էր տվել, ինչպես նաև ասվում էր, թե Մակ-Քորդն ինչու է Բուրուիհին առել իր «թիմի» մեջ:

Ավելի վատն այն էր, որ Քալիֆանոյի գեկուցագիրը բովանդակում էր Նիքսոնի և վերրնտրման կոմիտեի ունկնդրված հեռախոսագրույցների մանրամասն վերծանությունը¹: Այս ամենը եղել էր ՆԱԽՔԱՆ ներխուժումը: Քալիֆանոյին հարկավոր էր մեղադրել դաշնային (ֆեդերալ) տասնյակ հանցագործությունների մեջ, սակայն դրա փոխարեն նրան հնարավորություն են ընձեռում խուսափելու կատարած հանցագործությունների համար սլատասխան տալուց: Կեղծ բարեսրտաշտ Մեմ Էրվինը «Փոքրամասնության [արվամուլների ու լեսբուհիների] խորհրդի» Ֆրեդ Թոմփսոնին չի թողնում այս համոզիչ ապացույցները ներկայացնել ուտերգետյան լսումների ժամանակ. և սա անում է այն ծիծաղաշարժ պատրվակով, թե դրանք «չափազանց վարկածային բնույթ ունեն»:

«Կլոր սեղանի» հրամանով Քիսինջերը գնդապետ Հեյզին «չորսաստղանի» գեներալ է շինում: Ասուպի պես կայծակնային այս առաջխաղացումն ԱՄՆ-ի զինվորական տարեգրության մեջ ամենաարագն էր. Հեյզը լոք էր տվել ԱՄՆ-ի ավելի քան 280 բանակային գեներալների և ամենաբարձրաստիճան սպաների գլուխների վրայով:

«Ծառայության մեջ Հեյզի այս առաջխաղացման» հետևանքով 25 ավագ գեներալներ ստիպված էին պաշտոնաթող լինել: Նախագահ Նիքսոնին և ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻՆ ԴԱՎԱՃԱՆԵԼՈՒ համար Հեյզը հետո իբրև պարզև ստացավ ՆԱՏՕ-ի զինված ուժերի գլխավոր հրամանատարի պաշտոնը, թեև նա ԱՄԵՆԱՑԱԾՐ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆ ՈՒՆԵՑՈՂ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆ ԷՐ, ՈՐ ԵՐԲԵՎԻՑԵ ՉԲԱՂԵՑՐԵԼ Է ԱՅՍ ՊԱՇՏՈՆԸ: Այստեղ նա արդեն լոք է տվել ՆԱՏՕ-ի երկրների և Միացյալ Նահանգների 400-ից ավելի ավագ գեներալների վրայով:

Երբ այս նշանակման լուրը հասնում է խորհրդային Չինված ուժերի բարձրագույն հրամանատարությանը, մարշալ Օգարկովը Լեհաստանից ու Արևելյան Գերմանիայից կանչում է Վարշավայի պայմանագրի իր երեք բարձրագույն գեներալներին, և նրանք ուրախությամբ իրար են շնորհավորում ու մինչև գիշեր շամպայն խմում: Հեյզի՝ ՆԱՏՕ-ի ուժերի հրամանատար եղած ժամանակաշրջանում խորհրդային Չինված ու-

¹ Բարձրապաշտոն անձանց հեռախոսագրույցները ծածկագրվում են՝ բլտերը վերածվում են հնչյունների (Վ. Ա.):

ժերի արհեստավարժ ընտրանին, մարդիկ, որոնք միշտ միայն ուղղա-
կան գործով էին զբաղվել, Հեյզի հանդեպ ծայրաստիճան արհամար-
հական վերաբերմունք ունեին և նրան բացելիքաց «ՆԱՏՕ-ի գրասենյա-
կի կառավարիչ» (օֆիս-մենեջեր) էին կոչում: Նրանք գլխտեին, որ Հեյզն
իր նշանակման համար պարտական է ՄԳԹԻ-ին, այլ ոչ թե Միացյալ
Նահանգների զինվորականներին:

Թող հայտնի դառնա, որ զինվորական նոր նշանակման պատճա-
ռով Վաշինգտոնից հեռանալուց առաջ Հեյզը Քիսինջերի հետ իրապես
քանդում է Միացյալ Նահանգների նախագահի վարչակազմը: Այն քա-
նոր, որ Քիսինջերն ու Հեյզն էին բողել իրենց հետևից, որքան ինձ հայտ-
նի է, պատշաճ կերպով չի արտացոլվել փաստաթղթերի մեջ: 1973 թվա-
կանի ապրիլի պետական հեղաշրջումից հետո ՄԳԹԻ-ի պնդմամբ Հեյ-
զը փաստորեն դառնում է ԱՄՆ-ի կառավարության ղեկավարը: Նա
«Կլոր սեղանի» համար Բրուկլինգի ինստիտուտից, Քաղաքական ու-
սումնասիրությունների ինստիտուտից և «Միջազգային հարաբերու-
թյունների խորհրդից» 100 գործակալ է ընտրում, որոնց Վաշինգտոնում
նշանակում է պետական բարձրագույն պաշտոնների: Այդ մայրիկ,
ինչպես որ Հեյզն ինքը, լիավիճ ենթարկվում էին օտարերկրյա տելու-
թյանը: Տեղի ունեցած աղետի ընթացքում ծվատվեց Նիքսոնի վարչա-
կարգը, նրա հետ էլ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները:

ԱՄՆ-ը դեռ ուշքի չի եկել Ուտերգեյտի գրեթե մահացու վերքից:
300-ի կոմիտեն էր պատվիրել այս գործառնությունը, որը կատարել են
ՄԳԹԻ-ն, «Կլոր սեղանը» և ՄԻ-6-ի ԱՄՆ-ում բնադրած գաղտնի վե-
րահսկիչ գործակալները:

Նախագահ Նիքսոնի՝ սկզբում մեկուսացվելը, դավաճաններով շր-
ջապատվելը, իսկ ապա դիմադրելու կամքից զրկվելը տատացիորեն հա-
մապատասխանում են անձի վրա լիակատար վերահսկողություն հաս-
տատելու թավխատկյան գործելակարգին, որը ձևակերպել է Թավխա-
տկի տեսաբանը՝ դոկտոր Կուրտ Լևինը: Այս գրքում մասնա-կիարեն
արդեն շարադրել են Լևինի առաջարկած գործելակարգը, բայց, հաշվի
առնելով նախագահ Ռիչարդ Նիքսոնի օրինակի բնորոշ լինելը, կար-
ծում են, որ արժե այն կրկնել:

«Վախեցնելու ուղղակիության միջոցով բարոյական ոգին ընկճե-
լու գլխավոր եղանակներից մեկը ճշտիվ պահպանումն է հետևյալ մար-
տավարության. հարկավոր է մարդուն պահել անորոշության մեջ թե՛ իր
ներկա դրության, թե՛ առաջիկայում սպասվելիքի առումով: Բացի դրա-
նից, երբ կարգապահական խիստ տույժեր տալու և լավ վերաբերմունք
խոստանալու միջև արվող հաճախակի տարությունները հակասա-
կան լուրերի տարածման հետ մեկտեղ իրերի հասկանալի դասավորու-
թյունը դարձնում են անհասկանալի, այդժամ մարդս կորցնում է այն

բանի պատկերացումն ու վստահությունը, թե իր որևիցե որոշակի ծրագիրը կհանգեցնի ցանկալի նպատակին, կամ էլ հակառակը՝ կհեռացնի դրանից: Նման պայմաններում նույնիսկ այն անձնավորությունները, որոնք հստակ նպատակներ ունեն և պատրաստ են ոխակի դիմելու, կաթվածահար վիճակի մեջ են ընկնում իրենց անելիքը չիմանալուց առաջացած ուժեղ մտատանջությունից»:

Քիսինջերն ու Հեյզը թավիստոկյան ձեռնարկներին հետևել էին կետր կետին: Դրա հետևանքով «ստացել» էինք շփոթահար, վախեցած և լիովին բարոյալքված մի նախագահ Նիքսոն, որի համար միակ հնարավոր ելքը, ինչպես որ նրան հուշել էր Հեյզը, պաշտոնաթող լինելն էր: 1983 թվականին երկու աշխատություն էի գրել՝ «Թավիստոկի ինստիտուտ. չարիք ու մահ բերող հաստատության» («The Tavistock Institute: Sinister and Deadly»), և «Թավիստոկի ինստիտուտ. Բրիտանիայի վերահսկողությունը ԱՄՆ-ի քաղաքականության վրա» («The Tavistock Institute: Britain's Control of U.S. Policy»), որանց հիմքը ձեռքս ընկած թավիստոկյան գաղտնի ձեռնարկներն են: Այս աշխատությունների մեջ Թավիստոկի գործելածներն ու գործողությունները նկարագրված են շատ մանրամասնորեն:

Նիքսոնին պաշտոնանկ անելու համար կիրառված թավիստոկյան գործելածներն այնքան այտյունավետ էին, որ մեյր երկրի ժողովուրդը կուրորեն հավատաց զրպարտությանը, տարագեկմանը և այրեստականորեն սարքված իրադրություններին, որոնք դավադիրները ճշմարտության տեղ էին հրամցրել, այնինչ Ուոտերգեյտը սկզբից մինչև վերջ հիմնված էր դիվական ստի վրա: Մա շեշտելը կարևոր է, որավհետև մենք, լիարկե, չենք տեսել ուոտերգեյտյան տեսակի ամենավերջին գործառնությունը:

Որո՞նք էին նախագահ Նիքսոնի արած՝ իբրև թե հետկանչի (լիմալիչ-մենտի)՝ արժանի խախտումները: Այդ ի՞նչ «անհերքելի ապացույցներ» են, որոնք պիտի հիմնավորեին մեղադրանքը: Նախ՝ «անհերքելի ապացույցները» մասին: Այդ ամբողջ ԿԵՂԾԻԶԸ Քիսինջերն ու Հեյզն էին թխել հունիսի 23-ի ձայնագրչային գրանցման թթխմամբ, և այդ գրանցման միջոցով Հեյզը Նիքսոնին համոզել էր, որ հանձնվի Լեոն Յավորսկուն:

Հեյզը նախագահ Նիքսոնին ժամերով թլոզել էր, թե ձայնագրչի այդ ժապավենը կկործանի նրան, քանի որ «առանց որևէ կասկած հարուցելու» ապացուցում է Նիքսոնի մեղավոր լինելը լուրջ խախտումների մեջ, և նրա մասնակից լինելը ուոտերգեյտյան դավադրությանը: Հեյզի բերած փաստարկներին Նիքսոնի առաջին արձագանքը եղել է հետևյալը. «Դա բացալիճակ անհեթեթություն է,

¹ Պետության բարձրագույն պաշտոնյաներին պառլամենտի դատին ենթարկելու ընթացակարգը (Վ. Ա.):

պետք չէ դրան մեծ նշանակություն տալ»: Սակայն Հեյզը շարունակել է իրենը պնդել, մինչև որ Նիքսոնի խելքին նստեցրել է, թե նա չի կարող հաջողապես պաշտպանվել Սենատի առաջ: Եվ այս պնդման հիմքն ընդամենը հունիսի 23-ի ձայնագրությունն էր:

Իսկ ինչպե՞ս է Հեյզը կատարել իր առաքելությունը: Գործելով «Կլոր սեղանի» վերահսկիչների՝ իր համար սարքած բեմաբեմով, Հեյզը նախապատրաստում է «անհերքելի ապացույցներ» պարունակող ձայնագրչային գրանցման չխմբագրված վերձանությունը: Իլյականում այդ գրանցումը ոչ մի այնպիսի բան չէր բովանդակում, որ նախագահ Նիքսոնը չկարողանար բացատրել: Այդ բանն զգալով՝ Հեյզը գրանցման չխմբագրված և պաշտոնապես չհաստատված խոսքաշարը (տեքստը) տարածում է Սպիտակ տանը և Սենատում եղած Նիքսոնի ամենատուկուն համախոհների, ինչպես նաև հանրապետական կուսակցության ղեկավարների շրջանում: Այդ խոսքաշարը, որը «նվազակցվում» էր Նիքսոնի վստահյալ օգնականի տված այնպիսի մեկնաբանությամբ, ինչպիսին «անհերքելի և սպանիչ ապացույցն» է, աղավինների խմբի վրա նետված բազեի տպավորություն է գործում. Նիքսոնի կողմնակիցները խուճապի են մատնվում և դեստպեն թռչում՝ ծակուծուկ փնտրելով:

Այս հսկայապետական քայքայիչ գործողություններից հետո Հեյզն իր գրասենյակ է կանչում Նիքսոնի կայուն կողմնակից, կոնգրեսական Չարլզ Ուիգինսին, որը համաձայնվել էր Ներկայացուցիչների պալատում գլխավորելու հետևանքի ընթացակարգը խոչընդոտելու պայքարը: Հեյզը նրան հայտնում է այն աղաղակող, բացահայտ սուտը, թե «պայքարը տանու է տրված»: Դրանից հետո Ուիգինսը կորցնում է Նիքսոնին պաշտպանելու հետաքրքրությունը՝ ենթադրելով, որ Նիքսոնն ինքն է հանձնվելու համաձայնություն հայտնել: Հեյզը նույն հնարքն է բանեցնում նաև սենատոր Գրիֆինի վրա, որը Սենատում նախագահի առաջատար կողմնակիցն էր: ՀԵՅԳԻ ԴԱՎԱՃԱՆԱԿԱՆ, ՀԱԿԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՍԵՆԱՏՈՐ ԳՐԻՖԻՆԸ ՆԱԽԱԳԱՀ ՆԻՔՍՈՆԻՆ ՆԱՄԱԿ Է ԳՐՈՒՄ ՊԱՇՏՈՆԱԹՈՂ ԼԻՆԵԼՈՒ ԿՈՉ ԱՆԵԼՈՎ ՆՐԱՆ:

ԴՐԱՆԻՑ ԵՐԵՔ ԱՄԻՍ ԱՌԱՋ «Կլոր սեղանից» վերահսկվող Զադաբական ուսումնասիրությունների ինստիտուտը՝ Ջեյմս Վարբուրգի «ճուտը», իր հիմնադիրներից ու անդամներից մեկի՝ Մարկուս Ռասկինի միջոցով նախագահ Նիքսոնին պաշտոնաթողության ճիշտ նույնանման վերջնագիր էր ներկայացրել, որն ընդամենն հրապարակվել էր Բրիտանիայի հետախուզության քարուղչաթերթ «Նյու Յորք թայմս»-ի մայիսի 25-ի կամարում: Ուստերգետյան ողբերգությունը մի քայլ էր դեպի անշուքի բարբառություն, որն ընդգրկում է Միացյալ Նահանգները և մեզ տանում է դեպի Համաշխարհային մլասնական կառավարություն՝ Համաշխարհային նոր

կարգ: ԱՄՆ-ն այժմ նույն վիճակի մեջ է, ինչ որ Իտալիան, երբ Ալբո Մոլոն փորձում էր նրան փրկել ստեղծված անկայունությունից:

Իսկ ի՞նչ խախտումների համար էր մեղադրվել Նիքսոնը: Ջոն Դոնարը, որի բրիտանական բնավորությունը շատ էր սազում նրան հանձնարարված այն խնդրին, որ նախագահի դեմ այսպես կոչված հետկանչի ետմղվածները հայաուցի, ԱՄՆ-ի ներսում երբևիցե անցկացված հսկողության ամենալայնածավալ հակահետախուզական ԱՊՕԲԻՆԻ գործառնություններից մեկի հեղինակն ու կատարողն էր:

Գլխավորելով Միջգերատեսչական հետախուզության վարչությունը՝ Դոնարը տեղեկություններ էր հավաքում դաշնային կառավարության բոլոր գործակալություններից, այլև ԱՄՆ-ի Հարկային վարչությունից: Այդ ծրագիրը կապված էր Քաղաքական ուսումնասիրությունների ինստիտուտի հետ: Ջոն Դոնարի առաջխաղացման հիմնական գործոններից մեկը Հետախուզության կենտրոնական վարչությանը, որին օրենքով արգելված է երկրի ներսում հսկողությամբ զբաղվելը, 10-12 հազար քաղաքացիների (ոչունց նա կասկածում էր քաղաքական այլախոհության մեջ) անուն-ազգանունները տալն էր՝ նրանց գործունեությունը հետաքննելու համար:

1974-ի հուլիսի 18-ին օրենքի այս մեծ նախանձախնդիրը համապատասխան ճոռոմությամբ Նիքսոնի դեմ «մեղադրանքներ» ներկայացրեց. սույն դրվագը հաղորդվեց ազգային հեռուստատեսությամբ: ՈՉ ՄԻ ԱՊԱՅՈՒՅՑ ՉԿԱՐ, ՈՐ ՆԻՔՍՈՆԸ ՀԵՏԿԱՆՉԻ ԱՐԺԱՆԻ ՈՐԵՎԷ ԲԱՆ Է ԱՐԵԼ: Նիքսոնի իբր թե կատարած «հանցագործությունների» առթիվ Դոնարի արտասանած բոցաշունչ ճառի բովանդակությունն այնքան տափակ ու փուչ էր, որ առհասարակ զարմանալի էր, թե գործի արարողություններն ինչու էին շարունակվում: Եկամտահարկի հետ կապված մեքենայության և Կամբոջայի չարտոնված ռմբակոծման մեղադրանքների, ինչպես նաև «վշտանության չարաշահման» անուրչ մեղադրանքի (ինչը յուրաքանչյուր նորմալ դատարան լրջորեն չէր քննի) առաջադրում. ահա այն ամենը, ինչին ընդունակ էր Դոնարը: Երբ Նիքսոնը պաշտոնաթող եղավ 1974-ի օգոստոսի 8-ին, ԱՄՆ-ը հայտնվեց իր պատմության մեջ ստեղծված ամենաանկայուն դրության մեջ:

Այդ անկայունությունն առավել ուժգնորեն դրսևորվեց տնտեսական ու ֆինանսական քաղաքականության մեջ: 1983 թ. Վիրջինիայի նահանգի Վիլյամսբերգ քաղաքում տեղի ունեցավ միջազգային բանկիրների հանդիպում, ինչի նպատակն էր Միացյալ Նահանգների բանկային համակարգն ամբողջապես ապախոշորացնելու՝ մանրա-տելու (դեզինտեգրացնելու) ռազմավարություն մշակելը: Այդ ծրագրված իրադարձությունը ԱՄՆ-ի Սենատին պետք է ստիպել, որ անվերապահորեն համաձայնվի երկրի ֆինանսական ու դրամական քաղաքականու-

թյան վրա Միջազգային արժույթի հիմնադրամի (ՄԱՀ-ի) վերահսկողությամբ հաստատվելուն: Ուոլստրիտում գտնվող Morgan Guarantee բանկի Դենիս Ուիտերստունը համոզվածորեն հայտարարում է, որ ԱՄՆ-ի համար դա կլինի փրկության միակ ուղին:

Սույն առաջարկությանը սատար է կանգնել «Դիտչլիի խումբը» (Ditchley Group), որը 1982-ի մայիսին ստեղծվել էր Լոնդոնի Դիտչլիի զբոսայգում: Այդ արտասահմանյան օտար խումբը, ի խախտումն «Շերմանի հակատրեստային օրենքի» ու «Բլեյտոնի օրենքի», 1983-ի հունվարի 10-11-ին հավաքվում է Վաշինգտոնում և դավադրություն կազմակերպում ԱՄՆ-ին դրամական ու ֆինանսական ազատության ոլորտում ինքնիշխանությունից (սուվերենիտետից) զրկելու նպատակով: Միացյալ Նահանգների գլխավոր դատախազն իմանում է այդ հանդիպման և դրա նպատակների մասին: Խմբի անդամներին դաշնային հանցագործության կատարման համար հանցավոր համաձայնության մեջ մեղադրելու փոխարեն նա պարզապես «ուրիշ կողմ է նայում»:

Վերոհիշյալ օրենքների համաձայն՝ դավադրության ապացուցումը միակ անհրաժեշտ պայմանն է հանցագործության մեջ մեղավոր լինելը ճանաչելու համար, իսկ դավադրությունն իրոք կատարված լինելու ապացույցների պետք եղածից ավելի էին: Բայց քանի որ «Դիտչլիի հիմնադրամը» (Ditchley Foundation) հավաքվել էր Միջազգային գործերի թագավորական ինստիտուտի պահանջով, իսկ հանդիպումը կազմակերպել էր «Կլար սեղանը», ապա, բնականաբար, Արդա-բաղատության նախարարությունում ոչ մեկը չի խիզախում կատարել այն գործողությունները, որոնք պահանջվում են Միացյալ Նահանգների օրենքները խտիվ պահպանելու երդում տված անձանցից:

ԱՄՆ-ի գանձարանային ու դրամական քաղաքականության վերահսկողությունը բռնատիրելու (ուզուրսյացնելու) «Դիտչլիի հիմնադրամի» ծրագիրը մշակել էր սիոնականության (սիոնիզմի) թունդ կողմնակից, Բրիտանիայի թագավորական ընտանիքի մերձավոր հավատարմատար և 300-ի կոմիտեի անդամ սրբ Հարոլդ Լևերը: Սա մտնում էր 300-ի կոմիտեի կարևոր ընկերության՝ UNILEVER հսկայական բուրգի տնօրենների խորհրդի կազմի մեջ: Լևերի ծրագրով նախատեսվում էր ՄԱՀ-ի ազդեցությունն ընդլայնել այն աստիճան, որ սա կարողանա ազդել բոլոր երկրների, այդ թվում՝ ԱՄՆ-ի կենտրոնական բանկերի վրա և նրանց աստիճանաբար դնել ՀամՄԻԿառի վերահսկողության տակ:

Այս բանը կենսականորեն կարևոր քայլ էր դիտվում այնպիսի իրադրություն ստեղծելու համար, որի ժամանակ ՄԱՀ-ը սլետք է դառնա աշխարհի բանկային գործի գերագույն իրավարարը (արբիտրը): Հունվարի գերթաքուն հանդիպմանը նախորդել էր 1982-ի հոկտեմբերյան հանդիպումը, որտեղ եղել են աշխարհի 36 խոշորագույն բանկերի ներկա-

յացուցիչները: Հանդիպումը կայացել է Նյու Յորքի «Վիատա» հյուրանոցում: Հոկտեմբերի 26-27-ի հանդիպման համար կազմակերպված պահպանության և ան-վտանգության մակարդակն ուղղակի աննախադեպ էր: «Դիտչիի խմբի» այս հանդիպումը ևս տեղի է ունեցել Միացյալ Նահանգների օրենսդրության խախտմամբ:

Հավաքվածներին դիմելով՝ սրբ Հարություն Լևերն ասում է, որ մինչև 2000 թ. անհրաժեշտ է ազգային ինքնիշխանությանը վերջ տալ որպես հնամենի վերապրուկի: «ԱՄՆ-ը պետք է շուտով իր համար պարզի, որ երբ ՄԱՀ-ը ձեռքն առնի վերահսկողությունը, իր վիճակն այլևս չի տարբերվի «Երրորդ աշխարհի» երկրի վիճակից», - ասում է սրբ Հարություն: Առժամանակ անց պատվիրակներին հաղորդում են, որ ՄԱՀ-ին ԱՄՆ-ի զանձարանային քաղաքականության վերահսկիչ նշանակելու ծրագրերը Սենատին ներկայացնելու համար պատրաստ կլինեն առ 2000 թվականը:

Ռիմեր դե Վրիզը, ելույթ ունենալով Morgan Guarantee-ի անունից, ասում է. «Ժամանակն է, որ ԱՄՆ-ը դառնա Միջազգային հաշվարկների բանկի անդամ: Հարկ է, որ նա վերանայի իր հիսնամյա տատանումները»: Բրիտանիայի ու Գերմանիայի որոշ բանկատերեր, զգուշանալով ԱՄՆ-ի օրենսդրությունը խախտելուց, ասում են, որ «Դիտչիի խումբն» այլ բան չէ, եթե ոչ արժույթների փոխանակելի արժեզների խնդիրները կարգավորելու կոմիտե: Ֆելիքս Ռոհատինը (Rohatyn) ևս խոսում է ԱՄՆ-ի բանկային օրենսդրության մեջ փոփոխություններ մտցնելու խիստ անհրաժեշտության մասին՝ այն հաշիվն անելով, որ ՄԱՀ-ը կարողանա ավելի էական դեր կատարել այդ երկրում: Ռոհատինը գլխավորում էր «Հոմեական ակումբի» Lazard Freres բանկը, որը մտնում է մեզ արդեն ծանոթ Eagle Star Group-ի կազմի մեջ:

«Կլոր սեղանի» անդամներ Վիլյամ Օգդենն ու Վեռներ Ստանզը խանդավառությամբ են պաշտպանում իր ֆինանսական ինքնիշխանությունից ԱՄՆ-ի իրաժարվելը հոգուտ ՄԱՀ-ի և Միջազգային հաշվարկների բանկի (ՄՀԲ-ի): Մատնական «Փ-2» օթյակի բանկ «Ալֆա խումբը» (The Alpha Banking Group) ներկայացնող պատվիրակներն ասում են, որ ԱՄՆ-ին հարկավոր է ենթարկեցնել «համաշխարհային բանկի ավելի բարձր իշխանությանը»՝ նախքան դեպի Համաշխարհային նոր կարգ ընթանալն իրապես սկսվելը:

1983-ի հունվարի 8-ին, նախքան հունվարի 10-11-ի մեծ հանդիպումը, Մայիտակ տանն ընդունվում է Հանս Ֆոգելը՝ «Հոմեական ակումբի» առաջատար անդամներից մեկը: Նախագահ Ռոնալդ Ռեյգանը Ջորջ Շուլցին, Կասպար Ռայնբերգերին, Ջորջ Քենանին ու Լեյն Քիրկլանդին հրավիրում է ներկա լինելու իր հանդիպմանը Ֆոգելի հետ, որը նախագահ Ռեյգանին բացատրում է «Դիտչիի խմբի» նպատակներն ու խնդիրները: Այդ օրվանից նախագահ Ռեյգանը կտրուկ փոխում է իր դիրքը:

րուշումը և սկսում է աշխատել 300-ի կոմիտեի զանազան գործակալությունների հետ, որպեսզի ՄԱՀ-ն ու ՄՀԲ-ն դարձնի ԱՄՆ-ի ներքին ու արտաքին դրամական քաղաքականության կառավարման մարմիններ:

300-ի կոմիտեի աներևույթ կառավարությունը հսկայական ճնշում է գործադրել ԱՄՆ-ի վրա նրան վատթարացնելու համար: Ամերիկյան ազատության վերջին ամբոցն է, ու մինչև մեզ չգրկեն ազատությունից, մեծապես կդժվարանա Համաշխարհային կառավարության՝ իշխանության գլուխ կանգնելը: Համաշխարհային միասնական կառավարություն ստեղծելը շատ բարդ գործ է, որը պահանջում է հսկայական վտրձ և հմտություններ, կազմակերպչական ունակություններ, վերահսկողություն զանազան երկրների կառավարությունների և նրանց քաղաքականության վրա: Միակ կազմակերպությունը, որն ունակ է ավելի կամ պակաս հաջողությամբ գլուխ բերելու այդ վիթխարի խնդիրը, 300-ի կոմիտեն է: Այդեն տեսանք, թե նա որքան է մոտեցել լիակատար հաջողությանը:

Մարդկության պայքարն ընթանում է նախ և առաջ հոգևոր առումով: Ցավոք սրտի, քրիստոնեական եկեղեցիները դարձել են սոցիալական հասարակ ակումբներ, որոնց կառավարում է անչափ չարագույր Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը (ԵՀԽ), որի ակումբները գտնվում են ոչ թե Մոսկվայում, այլ լոնդոնյան Միտիում, ինչպես որ կտեսնենք գրքի վերջում գետեղված գծապատկերից¹, որտեղ տրված է Համաշխարհային կառավարության եկեղեցու կառուցվածքը: Այդ հիմնարկությունը 1920 թ. ստեղծվել է որպես ՀամԿառնի քաղաքականությունն իրականացնելու միջոց և հանդիսանում է երկարաժամկետ ծրագրման ասպարեզում 300-ի կոմիտեի ունեցած կարողությունների ու հնարավորությունների խորհրդանիշը:

Իր կառուցվածքով ու նշանակությամբ Եկեղեցիների համաշխարհային խորհրդին համանման մի ախտավոր կազմակերպություն էլ «Անհանգստացած գիտնականների միություն» (Union of Concerned Scientists) կոչեցյալն է, որը հիմնվել է «Եռակողմ հանձնաժողովի» ձեռքով և դրամավորվում է Կառնեգիի բարեգործական հիմնադրամից, Ֆորդի հիմնադրամից և Ասպենի ինստիտուտից: Սույն խումբը պայքար է մղում կանխելու համար ԱՄՆ-ի կողմից արդյունավետ միջոցի ստեղծումը Խորհրդային Միության տիեզերական խարսխման լազերային զենքի դեմ, որը տիեզերքից կարող է ոչնչացնել Միացյալ Նահանգների տարածքում կամ ո՛րևէ այլ տեղում գտնվող յուրաքանչյուր նշանակետ:

Ամերիկայի Ռազմավարա-պաշտպանական նախաձեռնության

¹ Հեղինակի խոստացած գծապատկերը գրքում չկա (Վ. Ա.):

(ՌՊՆ /COIN/) (SDI, Strategic Defence Initiative) ծրագիրը նախատեսված էր դիմակայելու խորհրդային տիեզերական լազերային համակարգի սպառնալիքին, ինչը գոյություն ունի հակառակ այն հավաստիացումներին, թե «կոմունիզմը մեռած է»: Խորհրդային ներկայացուցիչ Գեորգի Արբատովը «Անհանգստացած գիտնականների միության» հետ ունեցած հանդիպման ժամանակ ասաց, որ շատ կարևոր է ՌՊՆ-ի ծրագրին դիմակայելը, որովհետև եթե այդ ծրագիրն սկսի իրագործվել, ապա «դա ռազմական աղետ կլինի»: Անհանգստ գիտունների միությունն ամեն տարի դեմ է կանգնում ամեն մի բյուջեի, որ հատկացումներ է պարունակում կենսականորեն կարևոր ՌՊՆ-ի համար: Բանը նրան է հասել, որ 1991 թ. վերջին բյուջեի միջոցները չեն բավարարում անգամ անհրաժեշտ նվազագույն հետազոտություններ դրամավորելու համար, իսկ ուղեծրում [հակահրթիռային] համակարգ տեղակայելու մասին չենք էլ ասում: Այս «Անհանգստացած գիտնականների միությունը» կառավարվում է ՄԳԹԻ-ի կողմից և լցված է բրիտանական ՄԻ-6-ի գոյծակալներով:

Ամերիկայում կյանքի գեթ մի ոլորտ չկա, որ 300-ի կոմիտեի աներևույթ կառավարության հսկողության տակ չլինի և նրա կողմից չնպատակամղվի «հարկավոր» ուղղությամբ: Չկա ընտրված որևէ պաշտոնյա կամ քաղաքական առաջնորդ, որ չենթարկվի նրա իշխանությանը: Ցայժմ ոչ մեկը չի խուսափել գաղտնի կառավարիչներին չենթարկվելու համար դաժան պատժից: Նրանք առանց տատանվելու յուրաքանչյուրից «սարսափելի օրինակ» են շինում մյուսների համար՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահներին էլ հետը:

300-ի կոմիտեի ձեռքը երևում է ամենուրեք՝ սկսած 1789 թվականից, երբ Երեմիա Բենտամին ու Շելբուռնի կոմս Վիլյամ Պետտին, որոնք կրակ էին կտրել իրենց ծրագրած և իրագործած Ֆրանսիական հեղափոխության հաղթանակից, Բրիտանիայի թագը կանչում է, որպեսզի նրանց համատեղ փորձն օգտագործի Ամերիկայի գաղութաբնակների դեմ: Դա երևում է նաև 1812 թվականին, երբ բրիտանացիները կողոպտեցին ու հրդեհեցին Վաշինգտոնը՝ ոչնչացնելով այն գաղտնի փաստաթղթերը, որոնք կմերկացնեին երիտասարդ Միացյալ Նահանգների դեմ նրանց կատարած դավաճանական քայքայիչ գործողությունները՝ ընդհուպ մինչև ուտտերգեյտյան դավը նախագահ Նիքսոնի դեմ և նախագահ Ջենեթիի սպանությունը:

Մեր գիրքը մի փորձ է Ամերիկայի ժողովրդի աչքը բացելու այն սոսկալի ճշմարտության հանդեպ, որ մենք անկախ երկիր և անկախ ժողովուրդ չենք. մենք այդպիսին երբեք էլ չենք եղել, քանի որ մեզ ղեկավարել է աներևույթ կառավարությունը՝ 300-ի կոմիտեն:

300-ի ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԿԻՆ ԵՎ ԱՅԺՄ ԳՈՐԾՈՂ,
ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՆՐԱ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՏԱԿ
ԳՏՆՎՈՂ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՆ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Academy for Contemporary Problems - Արդի խնդիրների ակադեմիա
Africa Found - Աֆրիկայի հիմնադրամ
Agency of International Development - Միջազգային զարգացման
գործակալություն

Albert Previn Foundation - Ալբերտ Պրեվինի հիմնադրամ

Alliance Israelite Universalle - Իսրայելական համաշխարհային
միություն

American Civil Liberties Union - Զաղաքացիական ազատություննե-
րի ամերիկյան միություն

American Council of Race Relations - Միջոցառայական հարաբերու-
թյունների ամերիկյան խորհուրդ

American Defense Society - Ամերիկայի պաշտպանության ընկերու-
թյուն

American Press Institute - Ամերիկայի մամուլի ինստիտուտ

American Protective League - Ամերիկայի պաշտպանական լիգա

Anti-Defamation League - Հակավարկարեկչական լիգա

Arab Bureau - Արաբական բյուրո

Arab Higher Committee - Արաբական բարձրագույն կոմիտե

ARCA Foundation - «ARCA»-ի հիմնադրամ

Armour Research Foundation - «Armour»-ի հետազոտական
հիմնադրամ

Arms Control and Foreign Policy Caucus - Սպառազինությունների վե-
րահսկողության և արտաքին քաղաքականության խորհրդակցություն

Arthur D. Little, Inc. - «Արթուր Դ. Լիթլ, Inc.» ընկերություն

Asian Research Institute - Ասիայի հետազոտությունների
ինստիտուտ

Aspen Institute - Ասպենի ինստիտուտ

Association for Humanistic Psychology - Մարդասիրական
հոգեբանության միություն

Augmentation Research Center - Աճի հետազոտությունների կենտրոն

Baron De Hirsh fund - Բարոն դը Հիրշի հիմնադրամ

Battelle Memorial Institute - «Բատել մեմորիալի» ինստիտուտ

Berger National Foundation - Բերգերի լոգոյին հիմնադրամ

Berlin Center for Future Research - Ապագայի հետազոտությունների

բեռլինյան կենտրոն

Bilgerbergers - Բիլդերբերգերներ (Բիլդերբերգերների ակումբ)

Black Order - Սև շքանշան

Boycott Japance Goods Conference - Ճապոնական ապրանքների
բոյկոտման կոնֆերանս

British Newfoundland Corporation - «Բրիթիշ Նյուֆաունդլենդ»
կորպորացիա

British Royal Society - Բրիտանիայի թագավորական ընկերություն

Brotherhood of Cooperative Commonwealth - Կոոպերատիվ
ընկերակցության եղբայրություն

Bureau of International Revolutionary Propaganda - Հեղափոխական
սրբապազանդայի միջազգային բյուրո

Canadian Jewish Congress - Կանադայի հրեական համաժողով

Cathedral of St. John the Divine, New York - Սբ. Հովհաննես
Աստվածաբանի տաճար, Նյու Յորք

Center for Advanced Studies in the Behavioral Sciences - Մարդու վար-
քի նորագույն ուսումնասիրությունների կենտրոն

Center for Constitutional Rights - «Սահմանադրական իրավունքների
համար» կենտրոն

Center for Cuban Studies - Կուբայի ուսումնասիրությունների
կենտրոն

Center for Democratic Institutions - «Ժողովրդավարական
հաստատությունների համար» կենտրոն

Center for International Policy - Միջազգային քաղաքականության
կենտրոն

Center for the Study of Responsive Law - Պատասխանական
օրենսդրության ուսումնասիրման կենտրոն

Christian Socialist League – Բրիտոնեա-սոցիալիստական լիգա

Cini Foundation - Չինիի հիմնադրամ

Club of Rome - Հռոմեական ակումբ

Cominform - Բոմբինֆորմ

Committee for the Next Thirty Years - Հաջորդ երեսուն տարվա
կոմիտե

Committee of Fourteen - Տասնչորսի կոմիտե

Committee on National Morale - Ազգի բարոյական ոգու կոմիտե

Committee to Frame a World Constitution - Համաշխարհային
սահմանադրության մշակման կոմիտե

Communist League - Կոմունիստական լիգա

Congress of Industrial Organizations - Արդյունաբերական
կազմակերպությունների համաժողով

Council on Foreign Relations - Միջազգային հարաբերությունների
խորհուրդ

David Sassoon Company - «Դավիթ Սասուն» ընկերություն

De Beers Consolidated Mines - «Դը Բիրս քոնսոլիդեյտեդ մայնս»
ընկերություն

Democratic League of Brussels - Բրյուսելի ժողովրդավարական լիգա

East India Committee of 300 - Օստինդական 300-ի կոմիտե
[խորհուրդ]

Economic and Social Control (ECOSOC) - Տնտեսական և
սոցիալական վերահսկողություն

Environmental Fund - Շրջակա միջավայրի պաշտպանության
հիմնադրամ

Environmetrics Inc. - «Էնվիրոնմետրիքս» ընկերություն

Esalen Institute - Իզալենի ինստիտուտ

Fabian Society - Ֆաբիականների (Ֆաբիոսականների) ընկերություն

Federation of American Zionists - Ամերիկյան սիոնականների
դաշինք

Fellowship for a Christian Social Order - «Քրիստոնեական
սոցիալական կարգի համար» ընկերություն

Fellowship of Reconciliation - Հաշտության ընկերություն

Ford Foundation - Ֆորդի հիմնադրամ

Fordham University Institution Educational Research - Ֆորդհամի հա-
մալսարանի կազմավորման խնդիրների հետազոտական ինստիտուտ

Foundation for National Progress - «Ազգային առաջադիմության
համար» հիմնադրամ

Garland Fund - Գարլանդի հիմնադրամ

German Marshall Fund - Մարշալի գերմանական հիմնադրամ

Governing Body of the Israelite Religious Community - Իսրայելա-
կանների կրոնական համայնքի կառավարող խորհուրդ

Gulf South Research Institute - Հարավային ծովածոցի
հետազոտական ինստիտուտ

Haganah - Հագանա

Harvard University - Հարվարդի համալսարան

Hells Fire Club - Դեմոսիսի կրակի ակումբ

Horace Mann League - Հորացիուս Մանի լիգա

Hudson Guild - Հուդզոնի գիլդիա

Hudson Institute - Հուդզոնի ինստիտուտ

Hudson Bay Company - Հուդզոնի ծովածոցի ընկերություն

Imperial College University of London - Լոնդոնի համալսարանի
կայսերապետական քոլեջ

Industrial Christian Fellowship - Արդյունաբերական քրիստոնյա ընկերություն

Institute for Brain Research - Ուղեղի հետազոտությունների ինստիտուտ

Institute for Pacific Relations - Խաղաղօվկիանոսյան հարաբերությունների ինստիտուտ

Institute for Policy Studies - Քաղաքական ուսումնասիրությունների ինստիտուտ

Institute for Social Research - Սոցիալական հետազոտությունների ինստիտուտ

Institute for the Future - Ապագայի ինստիտուտ

Institute for the World Order - Աշխարհի կարգի ինստիտուտ

Institute on Drugs, Crime and Justice - Թմրանյութերի, հանցագործությունների և արդարադատության ինստիտուտ

Inter-Alpha - Ինտեր-ալֆա

Inter-American Social Development Institute - Միջամերիկյան սոցիալական զարգացման ինստիտուտ

International Institute for Strategic Studies - Ռազմավարական ուսումնասիրությունների միջազգային ինստիտուտ

Interreligious Peace Colloquium - Միջկրոնական խաղաղության զիտածողով

Irgun - Իրգուն

Knights of Malta - Մալթայի ասպետներ (Մալթայի ուխտ)

League of Nations - Ազգերի լիգա

Management Institute - Կառավարման ինստիտուտ

London Board of Deputies of British Jews - Բրիտանիայի կլետա պատգամավորների լոնդոնյան խորհուրդ

London School of Economics - Լոնդոնի Տնտեսագիտության դպրոց

Mery Carter Paint Company - Մերի Բարտեր փեյնտ քոմպանի

Massachusetts Institute of Technology - Մասաչուսեթսի ճարտարարվեստական (տեխնոլոգիական) ինստիտուտ

Mellon Institute - Մելոնի ինստիտուտ

Metaphysical Society - Բնագանգական (մետաֆիզիկական) ընկերություն

Milner Group - Միլների խումբ

Mocatto Metals - Մոկատո մետալս

Mont Pelerin Society - «Մոնտ Փելերին» ընկերություն

NAACP

National Action Research on Military/Industrial Complex - Ռազմարդյունաբերական համալիրի ազգային հետազոտություններ

National Center for Productivity Institute - Արտադրողականության ազգային կենտրոնի ինստիտուտ

National Council of Churches - Եկեղեցիների ազգային խորհուրդ

National Opinion Research Center - Հասարակական կարծիքի հետազոտության ազգային կենտրոն

National Training Laboratories - Ազգային հոգեմարզման (թրենինգային) լաբորատորիաներ

New Democratic Coalition - Ժողովրդավարական նոր դաշինք (կոալիցիա)

New World Foundation - Նոր աշխարհի հիմնադրամ

New York Rand Institute - «Rand»-ի նյույորքյան ինստիտուտ

NORML

North AtlantikTreaty Organization (NATO) - Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն

Odd Fellows - Գաղտնի եղբայրություն

Order of St. John of Jerusalem - Սուրբ Հովհաննես Երուսաղեմացու ուխտ

Order of The Golden Dawn - Ոսկե ալշալույսի ուխտ

OXFAM

Oxford Univac - Օքսֆորդ յունիվակ

Pacific Studies Center - Խաղաղօվկիանոսյան ուսումնասիրությունների կենտրոն

Palisades Foundation - «Փալիսայդես» հիմնադրամ

Peninsula and Orient Navigation Company - «Փենինսուլա Էնդ Օրիենտ» ծովագնացական ընկերություն

PERMINDEX – ՓԵՐՄԻՆԴԵԶ

Princeton University - Փրինստոնի համալսարան

Rand Corporation - «Ռենդ» կորպորացիա

Rand School of Social Sciences - «Ռենդ» կորպորացիայի սոցիալական գիտությունների դպրոց

Research Triangle Institution - «Ռիսերչ Թրայենգլ» հետազոտական ինստիտուտ

Rhodes Scholarship Committee - Ռոդսի կրթաթոշակի կոմիտե

Rio Tinto Zinc Company - «Ռիո Թինտո ցինկ» ընկերություն

Riverside Church Disarmament Program - «Ռիվերսայդ Չերչ» զինաթափման ծրագիր

Round Table - Կլար սեղան

Royal Institute for International Affairs - Միջազգային գործերի բազավորական ինստիտուտ

Russell Sage Foundation - «Ռասել Սեյջ» հիմնադրամ

San Francisco Foundation - «Սան Ֆրանցիսկո» հիմնադրամ
 Sharps Pixley Ward - Շարփս փիքսլի վարդ
 Social Science Reserch Council - Հասարակական գիտությունների
 ուսումնասիրման խորհուրդ
 Socialist International - Սոցիալիստական ինտերնացիոնալ
 Socialist Party of the United States - Միացյալ Նահանգների
 սոցիալիստական կուսակցություն
 Society for Promotion of Study of Religions - Կրոնների
 ուսումնասիրմանն աջակցող ընկերություն
 Society of Heaven (TRIADS) - Դրախտի ընկերություն
 (Երրորդություններ)
 Soviet State Committee for Science and Technology - ԽՍՀՄ
 Գիտության և տեխնիկայի պետական կոմիտե
 Stanford Research Institute - Ստենֆորդի հետազոտական
 ինստիտուտ
 Stockholm International Pease Research Institute - Ստոկհոլմի
 խաղաղության միջազգային հետազոտական ինստիտուտ
 Sun Yat Sen Society - Սուն Յատ Սենի ընկերություն
 Systems Development Corporation - Համակարգերի զարգացման
 միավորում
 Tavistok Institute of Human Relations - Թավիստոկի մարդկային
 հարաբերությունների ինստիտուտ
 Tempo Corporation - «Տեմպո» կորպորացիա
 The High Twelve International - Տասներկու բարձրագույնների
 ինտերնացիոնալ
 The Rublic Agenda Foundation - Ընկերության օրակարգի
 հիմնադրամ
 The Quality of Life Institute - Կյանքի որակի ինստիտուտ
 Theosophisty Society - Աստվածիմացության (թեոսոֆիայի) ընկերու-
 րություն
 Thule Society - «Թուլե» ընկերություն
 Transatlantic Council - Անդրատլանտյան խորհուրդ
 Trilateral Commission - Եռակողմ հանձնաժողով
 U.S. Association of the Club of Rome - ԱՄՆ-ում «Հոոմեական
 ակումբի» միություն
 U.S. Institute for Peace - Խաղաղության ամերիկյան ինստիտուտ
 Union of Concerned Scientists - Անհանգստացած գիտնականների
 միություն
 UNITAR – ՅՈՒՆԻՏԱՐ
 University of Pennsylvania Wharton School - Փենսիլվանիայի

համալսարանին առընթեր Վարտոնի դպրոց

Warburg, James P. and Family - «Վարբուրգ, Ջեյմս Փ. և ընտանիք»
ընկերություն

Western Training Laboratories - Արևմտյան հոգեմարզման
լաբորատորիաներ

Wilton Park - «Ուիլտոն» զբոսայգի

Women's Christian Temperance Union - Կանանց ժուժկալության
(սրափության՝ շխմելու) քրիստոնեական միություն

Wong Hong Hon Company - «Վոնգ Հոնգ Հոն» ընկերություն

Work in America Institute - Ամերիկայի աշխատանքի ինստիտուտ

World Council of Churches - Եկեղեցիների համաշխարհային
խորհուրդ:

ՀԱՏՈՒԿ ՀԻՄՆԱԳՐԱՄՆԵՐ ԵՎ ՇԱՀԵՐԻ ԽՄԲԵՐ

Arab Bureau - Արաբական բյուրո

Aristotelian Society - Արիստոտելյան ընկերություն

Asian Research Institute - Ասիական հետազոտությունների
ինստիտուտ

Bertrand Russell Peace Foundation - Բերտրան Ռասելի
խաղաղության հիմնադրամ

British American Canadian Corporation - Բրիտանա-ամերիկա-
կանադական կորպորացիա

Brotherhood of Eternal Love - Հավերժական սիրո եղբայրակցություն

Cambridge Apostles - Քեմբրիջյան առաքյալներ

Canadian Histadrut Campaign - Կանադայի «Հիստադրուտ»
ընկերություն

Canadian Pacific Ltd.- Կանադիան փասիֆիկ լտդ.

Caribbean- Central American Action Group - Գործողության
Կարիբյան-Կենտրոնական Ամերիկայի խումբ

China Everbright Holdings Ltd.- Չայնա էվերբրայտ հոլդինգս լտդ.

Chinese People's Institute of Foreign Affairs - Արտաքին գործերի
չինական ժողովրդական ինստիտուտ

Council of South America -Հարավային Ամերիկայի խորհուրդ

Endangered People's Society - Վերացող ժողովուրդների
ընկերություն

English Property Corporation Ltd.- Անգլիայի գույքի անգլիական
միավորում

Hospice Inc.- «Հոսպիս ինկ.» (Ճերսոնց)
 International Brotherhood of Teamsters - Բեռնավտոյի վարորդների միջազգային եղբայրություն
 International Red Cross - Միջազգային Կարմիր Խաչ
 Jerusalem Foundation, Canada - Երուսաղեմի հիմնադրամ, Կանադա
 Kissinger Associates - Քիսինջերի օգնականներ
 Kowloon Chamber of Commerce - Կովլունի առևտրապալատ
 Organization of American States - Ամերիկյան պետությունների կազմակերպություն
 Overseas Chinese Affairs Committee - Չինաստանի արտասահմանյան գործերի կոմիտե
 Radio Corporation of America(RCA) - Ամերիկայի ռադիոկորպորացիա
 Royal Police of Hong Kong - Հոնկոնգի թագավորական ոստիկանություն
 Young Men Christian Association(YMCA) - Երիտասարդ քրիստոնյաների միություն:

ԲԱՆԿԵՐ

American Express Bank - Ամերիկյան էքսպրես բանկ
 Banca de la Svizzera d'Italia - Բանկա դե լա Չվիցերա դ' Իտալիա
 Banca Andioino - Բանկա Անդիաինո
 Banca d'America d'Italia - Բանկա դ' Ամերիկա դ' Իտալիա
 Banca Nazionale del Lavoro - Բանկա նացիոնալե դել լավորո
 Banca Privata - Բանկա պրիվատա
 Banco Ambrosiano - Բանկո ամբրոզիանո
 Banco Caribe - Բանկո Կարիբե
 Banco Commercial Mexicana - Բանկո կոմերսիալ մեքսիկանա
 Banco Consolidato - Բանկո կոնսոլիդատո
 Banco d'España - Բանկո դ'Էսպանա (Իսպանիայի բանկ)
 Banco de Colombia - Բանկո դե Կոլոմբիա (Կոլոմբիայի բանկ)
 Banco de Comercio - Բանկո դե կոմերսիո
 Banco de Iberio-America - Բանկո դ' Իբերիո-Ամերիկա
 Banco de la Nacion - Բանկո դե լա նասիոն
 Banco del Estada - Բանկո դել էստադա
 Banco Internacional - Բանկո ինտերնացիոնալ
 Banco Latino - Բանկո լատինո

Banco Mercantile de Mexico - Բանկո մերկանտիլե դե Մեքսիկո
 Banco Nacional de Cuba - Բանկո նացիոնալ դե Կուբա
 Banco Nacional de Panama - Բանկո նացիոնալ դե Պանամա (և
 պանամական 54 փոքր բանկեր)
 Bangkok Commercial d'Italian - Բանգկոկ կոմերսիալ դ'իտալիան
 Bangkok Metropolitan Bank - Բանգկոկ մետրոպոլիտեն բանկ
 Bank al Meshreq - Բանկ ալ մեշրեկ
 Bank America - Բանկ Ամերիկա
 Bank for International Settlements - Միջազգային հաշվարկների
 բանկ
 Bank Hapoalim - Բանկ հապոալիմ
 Bank Leu - Բանկ լեու
 Bank Leumi - Բանկ լեումի
 Bank of Bangkok - Բանկ օֆ Բանգկոկ
 Bank of Boston - Բանկ օֆ Բոստոն
 Bank of Canada - Բանկ օֆ Կանադա
 Bank of Credit and Commerce International (BCCI) - Բանկ օֆ կրեդիտ
 և առևտրի ինտերնեշնլ (Միջազգային վարկի և առևտրի բանկ)
 Bank of East Asia - Բանկ օֆ Իստ Էյշա (Արևելյան Ասիայի բանկ)
 Bank of England - Անգլիայի բանկ
 Bank of Escambia - Բանկ օֆ Էսկամբիա
 Bank of Geneva - Բանկ օֆ Ժեներա (ժնևի բանկ)
 Bank of Ireland - Բանկ օֆ Այրլենդ (Իռլանդիայի բանկ)
 Bank of London and Mexico - Բանկ օֆ Լոնդոն և Մեքսիկո
 Bank of Montreal - Բանկ օֆ Մոնրեալ
 Bank of Norfolk - Բանկ օֆ Նորֆոլկ
 Bank of Nova Scotia - Բանկ օֆ Նովա Սկոտիա
 Bank Ohio - Բանկ Օհայո
 Banque Bruxelles-Lambert - Բանկ Բրյուսել-Լամբեր
 Banque Commerciale Arabes - Բանկ կոմերցիալ արաբ
 Banque du Credit International - Բանկ դյու կրեդիտ ինտերնացիոնալ
 Banque de Paris et Pays-Bas - Բանկ դը Փարի և Փայ-Բա
 (Փարիզի և Նիդերլանդների բանկ)
 Banque Francais et Italienn por l'Amérique du Sud - Բանկ Ֆրանսե
 դ'իտալիեն պոր լ' Ամերիկ դյու սուդ (Հարավային Ամերիկայի համար
 ֆրանսիական և իտալական բանկ)
 Banque Louis Dreyfus e Paris - Բանկ Լուի Դրեյֆուս և Փարի
 Banque Privee - Բանկ Փրիվե
 Banque Sud Ameris - Բանկ սյուդ ամերիս
 Barciays bank - Բարկլայս բանկ

Baring Brothers Bank - Բերինգ Բրոթերս բանկ
 Barnett Banks - Բարնետ բանկս
 Baseler Handelsl Bank - Բազելեր Հանդել բանկ
 Basel Committee on Bank Supervision - Բանկային վերահսկողության
 Բազելի կոմիտե
 BCCI (տե՛ս ծանոթությունը)
 Canadian Imperial bank of Commerce - Կանադիան իմպերիալ բանկ
 օֆ կոմերց
 Centrust Bank - Ցենտրաստ բանկ
 Chartered Bank - Չարտերեդ բանկ
 Charterhouse Japhet Bank - Չարտերհաուզ ջաֆետ բանկ
 Chase Manhattan Bank - Չեյզ Մանհեթեն բանկ
 Chemisal Bank - Չեմիկլ բանկ (միաձուլվել է Չեյզ Մանհեթեն
 բանկին)
 Citibank - Սիտիբանկ
 Citizens and Southern Bank of Atlanta - Սիտիզենս անդ սաուզերն
 բանկ օֆ Ատլանտա
 City National Bank of Miami - Սիտի նեշնլ բանկ օֆ Մայամի
 Claridon Bank - Քլարիդոն բանկ
 Cleveland National City Bank - Քլիվլենդ նեշնլ սիտի բանկ
 Corporate Bank and Trust Company - Բորպորեյտ բանկ էնդ Թրաստ
 քոմպանի
 Credit and Commerce American Holdings - Կրեդիտ էնդ կամերց
 ամերիկան հոլդինգս
 Credit and Commerce holdings, Netherlands Antilles - Կրեդիտ էնդ
 կամերց հոլդինգս, Նիդերլանդների Անտիլյան կղզիներ
 Credit Suisse - Կրեդիտ սուիս (Շվեյցարական կրեդիտ)
 Crocker National Bank - Բրոկեր նեշնլ բանկ
 De Neufelize, Schlumberger, Mallet Bank - Դե Նոյֆլից, Շլումբերգեր,
 Մալլե բանկ
 Dresdener Bank - Դրեզդեներ բանկ
 Dusseldorf Global Bank - Դյուսելդորֆ գլոբալ բանկ
 First American Bank of Georgia - Ֆյուստ ամերիկան բանկ օֆ Ջորջիա
 First American Bank of New York - Ֆյուստ ամերիկան բանկ օֆ Նյու
 Յորք
 First American Bank of Pensacola - Ֆյուստ ամերիկան բանկ օֆ
 Փենսակոլա
 First American Bank of Virginia - Ֆյուստ ամերիկան բանկ օֆ
 Վիրջինիա
 First American Banking Corp.- Ֆյուստ ամերիկան բանկինգ

քորպորեյշն

- First Empire Bank - Ֆյուստ էմպայր բանկ
- First Fidelity Bank - Ֆյուստ ֆիդելիտի բանկ
- First National Bank of Boston - Ֆյուստ նեշնլ բանկ օֆ Բոստոն
- First National City Bank - Ֆյուստ նեշնլ սիտի բանկ
- Florida National Bank - Ֆլորիդա նեշնլ բանկ
- Foreign Trade Bank - Ֆորին քրեյդ բանկ (Արտաքին առևտրի բանկ)
- Franklin National Bank - Ֆրանկլին նեշնլ բանկ
- Hambros Bank - Համբրոզ բանկ

Hong Kong and Shanghai Banking Corporation (HSBC)-Հոնկոնգ էնդ Շանհայ բանկինգ քորպորեյշն (HSBC) (Հոնկոնգի և Շանհայի բանկային կորպորացիա)

- Independence Bank of Encino - Ինդեպենդենս բանկ օֆ Էնսինո
- Israeli Discount Bank - Իսրայելի դիսկաունտ բանկ
- Litex Bank - Լիտեքս բանկ
- Ljubljanska Bank - Լյուբլյանսկա բանկ
- Lloyds Bank - Լլոյդս բանկ
- Marine Midland Bank - Մարին Միդլանդ բանկ
- Midland Bank - Միդլանդ բանկ
- Morgan Bank - Մորգան բանկ
- Morgan Et Cie - Մորգան և ընկերություն
- Morgan Grenfell Bank - Մորգան գրենֆել բանկ
- Moscow Narodny Bank, London - Մոսկվայի ժողովրդական բանկ,

Լոնդոն

- National Bank of Cleveland - Նեշնլ բանկ օֆ Էլիվլենդ
- National Bank of Florida - Նեշնլ բանկ օֆ Ֆլորիդա
- National Westminster Bank - Նեշնլ Վեստմինստեր բանկ
- Orion Bank - Օրիոն բանկ
- Paravicini Bank Ltd. - Պարավիչինի բանկ լտդ.
- Republic National Bank of New York - Ռեպուբլիկ նեշնլ բանկ օֆ Նյու Յորք (վերջերս գնվել է Հոնկոնգ էնդ Շանհայ բանկինգ քորպորեյշնից)
- Royal Bank of Canada - Ռոյալ բանկ օֆ Կանադա
- Schroder Bank - Շրյոդեր բանկ
- Seligman Bank - Չելիգման բանկ
- Shanghai Commercial Bank - Շանհայ կոմերցիալ բանկ
- Soon Bank - Սունգ բանկ
- Standard and Chartered Bank - Ստանդարդ էնդ չարտերեդ բանկ
- Standard Bank - Ստանդարդ բանկ
- Swiss Bank Corporation - Սուիս բանկ քորպորեյշն
- Swiss Israel Trade Bank - Սուիս Իզրաել քրեյդ բանկ (Շվեյցարա-

խորայելական առևտրական բանկ)

Trade Development Bank - Թրեյդ դեվելոպմենտ բանկ (Առևտրի զարգացման բանկ)

Unibank - Յունիբանկ

Union Bank of Israel - Յունիոն բանկ օֆ Իզրաել (Իսրայելի միավորված բանկ)

Union Bank of Switzerland - Յունիոն բանկ օֆ Սվիտզերլանդ (Շվեյցարիայի միավորված բանկ)

Vanying Bank - Վանյինգ բանկ

White Weld Bank - Ուայտ ուելդ բանկ

World Bank - Համաշխարհային բանկ

World Commerce Bank of Nassau - Ուորլդ կոմերց բանկ օֆ Նասաու

World Trade Bank - Առևտրի համաշխարհային բանկ

Wozchod Handelsbank - Վոչոդոլ հանդելսբանկ:

Ծանոթություն

Վերոհիշյալ բանկերից յուրաքանչյուրը, բացառությամբ «Բազելի բանկային գործի կոմիտեի», մասնակցել է և գուցե դեռևս մասնակցում է թմրանյութի, ադամանդի, ոսկու և զենքի առևտրին:

BCCI: Այս բանկին մի քանի անգամ մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա մասնակցել է թմրանյութի համաշխարհային առևտրից ստացված փողի լվացմանը: Մրա կառուցվածքը միահյուսվում է 300-ի կոմիտեի բազում այլ կառուցվածքներին ու կազմակերպություններին: Չափազանց հետաքրքիր է սրա մեկուսախմբային կառուցվածքը: Մերձավոր արևելքի երկրների բաժնետերերի շահամասը կազմում է 35%, ներառյալ հետևյալներին.

Բահրեյնի կառավարող ընտանիքինը,

Շարջայի կառավարող ընտանիքինը,

Դուբայի կառավարող ընտանիքինը,

Սաուդյան Արաբիայի կառավարող ընտանիքինը,

Իրանի կառավարող ընտանիքինը,

Մերձավոր արևելքի գործարարների խմբինը:

BCCI (Կայմանի կղզիներ) ընկերության շահամասը 41% է,

Bank of America-ինը՝ 24%:

Կայմանի կղզիներում և Լյուքսեմբուրգում գտնվող BCCI-ի ընկերություններն իրենց ներկայացուցչություններն են բացել Մայամիում, Բոկա Ռատոնում, Թամպայում, Նյու Յորքում, Սան Ֆրանցիսկոյում և Լոս Անջելեսում:

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ՈՒ ՉԵՌՆԱՐԿՈՒՅԹՆԵՐԸ (ՖԻՐՄԱՆԵՐԸ)**

American Bar Association (Ամերիկայի փաստաբանների միություն)
Clifford and Warnke (Էլիֆորդ և Ուորնկե)
Coudert Brothers (Բուդեր քրազերս)
Cravaith, Swain and Moore (Էրավայթ, Սվայն և Մուր)
Wilkie, Farr and Gallagher (Ուիլկի, Ֆար և Գալլագեր):

ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԸ
Price Waterhouse (Փրայս Ուոտերհաուզ):

**ԹԱՎԻՍՏՈԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵ-
ՐՈՒՄ**

FLOW LABORATORIES (Ֆլոու լաբորատորիա): Պայմանագրեր [պատվերներ] են ստանում Առողջապահության ազգային ինստիտուտից:

MERLE THOMAS CORPORATION (Մերլ Թոմաս քորպորեյշն): Պայմանագրեր [պատվերներ] է ստանում ԱՄՆ-ի Ռ-ազմածովային ուժերից. վերլուծում է արբանյակների հաղորդած տվյալները:

WALDEN RESEARCH (Ուոլդեն ռիսերչ/հետազոտություններ/): Աշխատում է շրջակա միջավայրի աղտոտումը վերահսկելու ասպարեզում:

PLANNING RESEARCH CORPORATION (Փլենինգ ռիսերչ քորպորեյշն /Պլանավորման և հետազոտությունների կորպորացիա/), **ARTHUR D. LITTLE** («Արթուր Դ. Լիթլ» ընկերություն), **G. E. TEMPO** («Ջի Է. Թեմպո» ընկերություն), **OPERATIONS RESEARCH INC.** («Օպերեյշնս ռիսերչ ինկ.» ընկերություն):

Սա մի մասն է շուրջ 350 ընկերությունների, որոնք հետազոտություններ են կատարում, ամփոփագրեր կազմում և հանձնարարականներ տալիս կառավարությանը:

Սրանք բաղկացնում են մասն այն բանի, որին ԱՄՆ-ի նախագահ Էյզենհաուերը կոչում էր «ժանրային քաղաքականության համար հնարավոր մի վտանգ, որն ինքը կարող է դառնալ գիտաճարտարարվեստի

ընտրանու գերին»:

BROOKINGS INSTITUTION (Բրուկինգի ինստիտուտ)

Սա իր աշխատանքը նվիրում է մի քանի, որը կոչվում է «ազգային օրակարգ»: Կազմել է նախագահ Գուվերի ծրագիրը, նախագահ Ռուզվելտի «Նոր ուղղություն (կուրս)»-ը, Քենեդիի վարչակազմի «Նոր բնագծեր» ծրագիրը (որից շեղվելը Ջոն Քենեդիին կյանք արժեցավ), ինչպես նաև նախագահ Ջոնսոնի «Մեծ հասարակությունը»: Վերջին 70 տարվա ընթացքում Բրուկինգի ինստիտուտը 300-ի կոմիտեի անունից զգալի չափով որաշում է Միացյալ Նահանգների կառավարության քաղաքականությունը:

HUDSON INSTITUTE (Հուդզոնի ինստիտուտ)

Այս ինստիտուտը Հերման Խանի ղեկավարությամբ բուլտից շատ է գործ արել (բացառյալ «Մեծ հնգյակը») կերպածևելու համար քաղաքական ու սոցիալական իրադարձություններին ամերիկացիների արձագանքելը, նրանց մտածելակերպը, ո՞ւմ օգտին քվեարկելու որաշում ընդունելը և ընդհանրապես հասարակության մեջ նրանց վարքը: Հուդզոնի ինստիտուտը մասնագիտանում է պաշտպանական քաղաքականության ասպարեզում հետազոտություններ կատարելու և ԽՍՀՄ-ի հետ հարաբերություններ կերտելու ուղղությամբ: Ռազմական ասպարեզում նրա կատարած աշխատանքների մեծ մասը դասակարգվում է որպես «գաղտնի»: (Վիետնամի պատերազմի ժամանակ նրա գաղափարներից էր Սայգոնը խրամատով շրջանակելը): Նրա առաջին փաստաթղթերից մեկի վերնագիրն էր «Կայունությունն ու հանգստությունը հին ազգերի մեջ», երկրորդինը՝ «ԱՄՆ-ի ազգային անվտանգության քաղաքականության հարցերի վերլուծական տեսություն»:

Հուդզոնի ինստիտուտը հպարտանում է իր գործունեության բազմազանությամբ. NASA-ին օգնել է տիեզերական ծրագրեր մշակելու հարցում և նպաստել է երիտասարդական նոր տարազլի ու գաղափարների տարածմանը, երիտասարդների խոռվությունների հարուցելուն և ավագ սերնդից նրանց խորթանալուն, ինչը բացահայտորեն դրամավորվում էր «Կոկա-կոլա» ընկերությունից: Հուդզոնի ինստիտուտը միանգամայն արդարացիորեն կարելի է համարել 300-ի կոմիտեի՝ ՌԻՂԵՂ ԱՐԴՈՒԿԵԼՈՒ ԻՒՄՆԱՐԿՆԵՐԻԿԻց մեկը: Միջուկային պատերազմների նրա մի քանի բեմադրքները հույժ հետաքրքրական են: Եթե կարող եք դրանք ճարել, կհանձնարարելի «Ջերմամիջուկային պատերազմի հիմնական վեց վտանգները» և «Ջերմամիջուկային պատերազմի հնարավոր հետևանքները», իսկ ամենասարսափազդու

փաստաթղթերից մեկի վերնագիրն է «Իսրայելա-արաբական միջուկային պատերազմը»:

Հուդզոնի ինստիտուտը նաև խորհրդատուն է 300-ի կոմիտեի ընկերությունների, որոնք են (եթե սահմանափակվենք պրանցից մի քանիսի անուններով) Rank-ը, Xerox-ը, General Electric-ը, IBM-ն ու General Motors-ը: Բայց նրա իրոք խոշոր պատվիրատուն համարվում է ԱՄՆ-ի Պաշտպանության նախարարությունը, սրը խորհուրդներ է ստանում քաղաքացիական պաշտպանության, ազգային անվտանգության, ռազմական քաղաքականության և սպառազինության վերահսկման խնդիրների վերաբերյալ:

NATIONAL TRAINING LABORATORIES (Ազգային հոգեմարզման (թրենինգային) լաբորատորիաներ (ԱՀԼ))

ԱՀԼ-ները հայտնի են նաև որպես Մարդու վարքի գծով կիրառական գիտությունների միջազգային ինստիտուտ: Սա ուղեղարդուկման մի իսկական կենտրոն է, որը հիմնված է Կուրտ Լեինի սկզբունքների վրա: Ինստիտուտի գործելակարգը նախատեսում է այսպես կոչված Հ-խմբեր (հոգեմարզման խմբեր)՝ արհեստականորեն ստեղծված հոգեկարման (հոգեհոսագնապի) պայմաններում կատարվող մարզումներ, որոնց ընթացքում մասնակիցները հանկարծակի ստիպված են լինում պաշտպանվելու չարամիտ ու անարդար մեղադրանքներից: ԱՀԼ-ներն անդամ են Կրթության ազգային միավորման (ԿԱՄ-ի), որը Միացյալ Նահանգների դասատուների ամենամեծ միավորումն է:

Հետաքրքրական է այն փաստը, որ ԱՀԼ-ները, պաշտոնապես մերժելով «ոսասայականությունը» և աշխատելով ԿԱՄ-ի հետ, մշակել էին մի առաջարկություն, ըստ որի ուսուցման գոյծում կիրարկվելու էին կրթական վկայաթղթեր (գրավոր վկայություններ՝ վաուչերներ), որոնք դժվարուսույց երեխաներին կգատելին ընդունակներից, իսկ դրամամիջոցները կբաշխվեին դժվարակիրք երեխաների թվին համապատասխան, որոնց կբաժանեին ուսումնական ծրագրերը կանոնավորապես յուրացնողներից: Այս առաջարկությունը չի ընդունվել:

UNIVERSITY OF PENNSYLVANIA, WHARTON SCHOOL OF FINANCE & COMMERCE (Փենսիլվանիայի նահանգի համալսարանին առընթեր Վարտոնի ֆինանսատնտրային դպրոց)

Երկվ Թրիստի հիմնած և Թավիստոկի «խելքատրեստներից» մեկը հանդիսացող Վարտոնի դպրոցը դարձել է ԱՄՆ-ում Թավիստոկի ամեն-

նակարևոր հիմնարկներից մեկը «վարքագիտական (քիևհորիստական) հետազոտությունների» (մարդու վարքի հետազոտությունների) ոլորտում: Վարտոնը գրավում է այնպիսի պատվիրատուների, ինչպիսին, օրինակ, ԱՄՆ-ի Աշխատանքի նախարարությունն է, որը «թխավի» վիճակագրություն պատրաստելու խորհուրդներ է ստանում Wharton Econometric Forecasting Associates Incorporated ընկերության միջոցով: Այս գործելակերպը մեծ «պահանջարկ» է վայելում, որովհետև թևակոխում ենք 1991 թվականը՝ ունենալով միլիոնավոր գործազուրկներ, որոնց ԱՄՆ-ի Աշխատանքի նախարարությունը չի հաշվառում և չի արտացոլում:

Վարտոնի դպրոցի տնտեսական կադապարավորումն (մոդելավորումն) օգտագործում են 300-ի կոմիտեի՝ Միացյալ Նահանգներում և Արևմտյան Եվրոպայում գտնվող խաշոր ընկերությունները, ինչպես նաև ՄԱՀ-ը (Միջազգային արժույթի հիմնադրամը): Վարտոնն «աճեցրել» է այնպիսի նշանավոր գործիչների, ինչպիսիք են Ջորջ Շուլցն ու Ալան Գրինսպենը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Այս ինստիտուտը ստեղծել են թավիստոկյան «խելքատրեստի» մասնագետներ Ռենսիս Լիկերտը, Դորվին Քարտրայտը և Ռոնալդ Լիպերտը: Սրա աշխատանքներն ընդգրկում են «Հասարակության մեջ կատարվող փոփոխությունների մարդկային ըմբռնումը», «Երիտասարդները անցումային շրջանում» և «Ամերիկացիներն ինչպես են ընկալում իրենց հոգեկան առողջությունը»: Ինստիտուտի պատվիրատուներից են «Ֆորդի հիմնադրամը», ԱՄՆ-ի Պաշտպանության նախարարությունը, ԱՄՆ-ի Փոստային ծառայությունը և ԱՄՆ-ի Արդարադատության նախարարությունը:

INSTITUTE FOR THE FUTUR (Ապագայի ինստիտուտ)

Սա թավիստոկյան սովորական հիմնարկ չէ, որովհետև դրամավորվում է «Ֆորդի հիմնադրամից», սակայն երկարաժամկետ կանխատեսման իր գործելակարգն ընդօրինակում է բոլոր «խելքատրեստների» մոդից: Ապագայի ինստիտուտը նախագուշակում է այն փոփոխությունները, որոնք, ինչպես ինքն է կայծում, տեղի կունենան հիսնամյա ժամանակաշրջանում: Ենթադրվում է, որ ինստիտուտն ունակ է կանխասելու սոցիալ-տնտեսական միտումները և տազնապ հնչեցնելու այն բանից որևէ շեղման առթիվ, ինչն ինքը սահմանում է որպես բնականոն վիճակ:

Ապագայի ինստիտուտը հնարավոր և բնականոն է համարում ապագայի գործերին հիմա՝ միջամտելը և գալիք հիմնախնդիրներին լուծումներ տալը: Նրա այսպես կոչված «Դեկլիքյան՝ բյուրոները» որոշում են, թե ինչն է բնականոն, իսկ ինչը՝ ոչ, և պատրաստում են որոշակի դիրքորոշում թելադրող փաստաթղթեր, որոնց հիման վրա կառավարություններն «ուղղորդվում» են հարկավոր գծով, որպեսզի գլխատեն այնպիսի խմբերի, ինչպիսիք են, օրինակ, «հասարակական անկարգություններ առաջացնող մարդիկ»: (Սրանք կարող են լինել հայրենասիրական խմբեր, ույունք պահանջում են վերացնել հարաճուն հարկերը, կամ պահանջում են, որ անշեղորեն պահպանվի զենք կրելու իրենց իրավունքը:)

Ինստիտուտի հանձնարարականներն են արհեստական վիժումների մասին օրենսդրությունն ազատականացնելը, քննադատության գործածությունը ծավալելը, քաղաքների տարածք մտնող ավտոմոբիլներից տուրք գանձելը, դպրոցներում հակաբեղմնավորում սովորեցնելը, հրազենի պարտադիր գրանցում կատարելը: Ինստիտուտը նաև հանձնարարում է քրեական հանցանք չհամարել թմրանյութ գործածելը, օրինականացնել համասեռամոլությունը, դրամապարզև տալ «ընտանիքի պլանավորման» (այսինքն՝ ծնելությունը սահմանափակելու) համար, նույնիսկ գյուղական վայրում Կամբոջայի Պոլ Պոտի ոճով նոր բնակատեղեր ստեղծելու առաջարկության համար: Հիմա ակնհայտ է այն փաստը, որ Ապագայի ինստիտուտի առաջադրած շատ նպատակներ արդեն լիավիճ իրականացել են:

INSTITUT FOR POLICY STUDIES (Քաղաքական ուսումնասիրությունների ինստիտուտ (ԶՈՒԻ))

ԶՈՒԻ-ն իր գործունեության հենց սկզբից զբաղվում է Միացյալ Նահանգների արտաքին ու ներքին քաղաքականությունը ձևելով ու փոխելով: Այն հիմնադրել են ԱՄՆ-ում Ջեյմս Վարբուրգի և Ռոբշիրդի վերահսկման տակ գտնվող կազմակերպությունները: Նրան սատար են կանգնել Բերտրան Ռասելն ու Բրիտանիայի սոցիալիստները Ամերիկայի իրենց գործակալների ցանցի միջոցով, որոնք ընդգրկում են «Արդյունաբերական ժողովրդավարության լիգան», որի մեջ Լեոնարդ Վուդկոկը անդրաբեմային առաջատար դեր է կատարել: «Արդյունաբերական ժողովրդավարության լիգայի» տեղական առաջատար գործիչներ

¹ Հին Հունաստանի Դեկլիք քաղաքի անունից, որը հռչակված էր գուշակություններ անող քրմուհի Պյութիայով (Վ. Ա.):

րի մեջ գտնում ենք «պահպանողական» Ջին Քիրկպատրիկին, Իրվին Սուալին, Յուջին Ռոստոփին (սպառազինությունների վերահսկողության բանակցությունների մասնակից), Լեյն Քերկլանդին (արհմիութենական առաջնորդ) և Ալբերտ Շենկերին:

Չուտ ձևական նպատակների համար ՔՈՒԻ-ն 1963 թ. պաշտոնապես գրանցել են Մարկուս Ռասկինը և Ռիչարդ Բարնետը, որոնք պատրաստության լրիվ դասընթացն անցել էին Թավիստոկի ինստիտուտում: Դրամավորման մեծ մասը կատարել էին Ռոբշիլդի ամերիկյան ընկերակիցները, մասնավորապես Ջեյմս Վայբուրգի ընտանիքին պատկանող ընկերությունները, «Շտեյնի ընտանիքի հիմնադրամը» և «Սամուիլ Ռուբինի հիմնադրամը»: Սամուիլ Ռուբինը պաշտոնապես կոմունիստական կուսակցության անդամ էր: Նա յուրացրել էր «Ֆաբերժե» առևտրամականիչը (Ֆաբերժեն եղել է Ռուսաստանի արքունիքի ոսկերիչը) և Ֆաբերժեի անվան շնորհիվ մեծ հարստություն էր դիզել:

ՔՈՒԻ-ի նպատակները որոշվում էին Բրիտանիայի «Կլոր սեղանի» շարադրած ծրագրով, որի հիմքը գալիս էր Թավիստոկի ինստիտուտից. ընդ որում՝ դրա կենտրոնական կետերից մեկը ԱՄՆ-ում «նոր ձախերի» ստորին կազմակերպություններ ստեղծելն էր: ՔՈՒԻ-ն պետք է ցնկներ՝ ծներ պայքար, երկպառակություններ ու անկարգություններ. պետք է հանգեցներ անտառային փոթորկալի հյդեհի պես տարածվող քառսի: Նրա առաջադրանքի մեջ էին մտնում ձախ ժխտողական (նիհիլիստական) սոցիալիզմի «խղետներն» արմատավորելը, ամեն տեսակ թմրանյութի անսանձ գործածությունը պաշտպանելը: Ինստիտուտը պետք է գործեր որպես Միացյալ Նահանգների քաղաքական տիրախավին թակելու «մեծ փայտ»:

Բարնետի ու Ռասկինի վերահսկողության տակ էին հասարակական բազմապիսի տարրեր ու անձեր, ինչպիսիք են «Սև հովազները», Դանիել Էլսբերգը, Ազգային անվտանգության խորհրդի անդամ Գալպերինը, «The Weathermen Underground» ընդհատակյա շարժումը, Venceramos շարժումը, ինչպես նաև Ջորջ Մակհովերնի ընտրական շտաբը: Չկար մի խնդիր, որ դժվարալույծ լիներ ՔՈՒԻ-ի և նրա վերահսկիչների համար: Նրանք ձեռնարկում էին ամեն գործ և հաջողության հասնում:

Վերցրեք, օրինակ, Քիսինջերին «փախցնելու» դավադրությունը. սա ղեկավարել էր ՄԻ-6-ի գործակալ, պակստանական ծագում ունեցող Էքբալ Ահմեդը, որը եղել էր «TROST»-ի (Լոնդոնում հաստատված տրոցկիստական ահաբեկիչ կազմակերպության) անդամ: Հետաքննությունների դաշնային բյուրոն «դավադրությունը» շուտով «բաց է անում», և այն կիսատ է մնում: Իսկ Ահմեդս դառնում է տնօրենը Անդրազգային ինստիտուտի (The Transnational Institute)՝ ՔՈՒԻ-ի ամենա-

ազդեցիկ գործակալություններից մեկի, որը քամելեոնի սխ «գունափոխվել»՝ անվանափոխվել էր (առաջ կոչվում էր «Յեղային հարաբերությունների ինստիտուտ»), երբ հարավաֆրիկյան հաստուկ ծառայություն BOSS-ի (Bureau of State Security- Ազգային անվտանգության բյուրոյի) գործակալներն ի հայտ էին բերել, որ նա կապված է եղել «Ռոդսի կոթաթռչակառուների» ու Հարի Օպենհեյմերի հետ, իսկ Հարավային Աֆրիկայի հանրահան արդյունաբերության մեջ՝ անգլա-ամերիկյան շահերի հետ: Այդ նույն ժամանակ BOSS-ը դիմակազերծում ու վարկաբեկում է նաև «Հարավային Աֆրիկայի հիմնադրամը» (South Africa Foundation):

Կուսալիտոլիումի բլրի իր ազդեցիկ առգործչական (լոբբիստական) բազմաթիվ խմբերի միջոցով ԲՈՒԻ-ն անդադար ու անգթաբար բանեցնում էր յուր «մեծ փայտը» Կոնգրեսի վրա ճնշում գործադրելու համար: ԲՈՒԻ-ն ունի արտաբուստ իրարից անկախ, իսկ իրականում միասնաբար աշխատող առգործիչների (լոբբիստների) ցանց. այնպես որ կոնգրեսականները բոլոր կողմերից մշակվում են կարծես թե տարբեր և իրարից հեռու առգործիչներից: Այս կերպ ԲՈՒԻ-ն Ներկայացուցիչների պալատի առանձին անդամներին ու սենատորներին կարող է հեշտությամբ քվեարկել տալ հոգուտ «ընթացիկ միտումի» և «իրադարձությունների բնական ընթացքի»: Օգտագործելով Կուսալիտոլիումի բլրում առանցքային պաշտոններ զբաղեցնող մարդկանց՝ ԲՈՒԻ-ն կարողացել է ճեղքել մեր օրենսդրական համակարգի բուն ենթակառուցվածքը, խախտել դրա շարժման ընթացքն ու գործելու սկզբունքը:

Առա ասածիս առարկայական օրինակը. 1975 թ. ԲՈՒԻ-ի մասնագետներից մեկը ներկայացուցիչների պալատի անդամ Ջոն Բոնիերսին (Միչիգան) և պալատի 47 անդամների համոզում է ԲՈՒԻ-ին խնդրել, որ բյուջեի վերաբերյալ մի հետազոտություն գրի, ինչը հակակայի նախագահ Ջերալդ Ֆորդի ներկայացրած բյուջեի նախագծին: Ու թեև խնդրանքը պալատում չի ընդունվում, այն նորից քվեարկման է դրվում 1976, 1977 ու 1978 թվականներին և ստտարվում է ԲՈՒԻ-ի կողմնակիցներից:

Այնուհետև՝ 1978 թ., 57 կոնգրեսական թույլտվություն է ստորագրում, որ ԲՈՒԻ-ն բյուջեի նախագիծ մշակի, ինչն անում է Մարկուս Ռասկինը: Սրա կազմած բյուջեն նախատեսում էր 50 տոկոսով կրճատել պաշտպանության ծախսերը. առաջարկում էր բնակարանով ապահովելու սոցիալիստական ծրագիր («որը կմրցակցի մասնավոր տնատիրության հետ ու աստիճանաբար կփոխարինի դրան և կվերացնի գրավադրական (հիպոթեկային) շուկան»), առողջապահության ազգային ծառայություն, «կրթության համակարգի մեջ արմատական այնպիսի փոփոխությունների կատարում, որոնք կվիժեցնեն գիտելիքների րաշխման վրա կաալիտալիստական վերահսկողությունը», արմատա-

կան մի քանի այլ գաղափարներ:

Ռազմավարական սպառազինությունները սահմանափակելու բանակցությունների վրա ՔՈՒԻ-ի ազդեցությունն այն գլխավոր գործոնն էր, ինչը Նիքսոնին 1972 թ. ստորագրել տվեց հակահրթիռային պաշտպանության համակարգերը սահմանափակելու դավաճանական պայմանագիրը, որը Միացյալ Նահանգներին համարյա 10 տարի փաստորեն անպաշտպան դարձրեց միջմայրցամաքային հրթիռների գրոհի դեպքում: ՔՈՒԻ-ն եղել և ցայսօր մնում է ամենահարգի «խելքատրեստներից» մեկը, որը վերահսկում է արտաքին քաղաքականության վերաբերյալ որոշումների ընդունումը. իսկ այդ քաղաքականությունը մենք՝ ժողովուրդս, համարում ենք մեր օրենսդիրների գործը:

Աջակցելով երկրի ներսի մարտնչող ուժերին, կապեր ունենալով արտասահմանի հեղափոխականների հետ, կազմակերպելով այնպիսի «հաղթանակներ», ինչպիսիք «Պենտագոնի փաստաթղթերի» կրակարակումներն են, պաշարելով մեկուսախմբային կառույցները, ջնջելով ընդհատակյա շարժումների և քաղաքական բնականոն գործունեության միջև եղած տարբերությունները, թափանցելով կյունական կազմակերպություններ և դրանք օգտագործելով Ամերիկայում տարածայնություններ սերմանելու համար (օրինակ՝ կրոնի դիմակով ցեղային արմատական քաղաքականություն տարածելով), իր գաղափարները սփռելու համար բանեցնելով պետական լրատվամիջոցները՝ Քաղաքական ուսումնասիրությունների ինստիտուտը լիովին արդարացնում է այն դերը, որի համար հիմնվել էր:

STANFORD RESEARCH INSTITUTE (Ստենֆորդի հետազոտական ինստիտուտ (ՄՀԻ))

Մրա առաջին նախագահ Ջեսի Հոբսոնը 1952 թ. արտասանած ճառում պարզաբանել է, թե ինչ ուղղությունների պիտի հետևի ինստիտուտը: Ստենֆորդը կարելի է կոչել Միացյալ Նահանգների կառավարման գործի թավիստոկյան թագի «ադամանդներից» մեկը: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից անմիջապես հետո հիմնված այս ինստիտուտը Չարլզ Ա. Անդերսոնի ղեկավարությամբ կենտրոնանում է մարդկանց գիտակցության վերահսկման ասպարեզում հետազոտություններ կատարելու և «ապագայի գիտությունների» վրա: Ստենֆորդի տանիքի տակ էր բուն դրել «Չարլզ Ֆ. Քեթերինգի հիմնադրամը», որը մշակել էր «Մարդու կերպարափոխման» ծրագիրը, ինչի վրա հիմնվել է «Ջրհոսի դավադրությունը»:

Ստենֆորդի գլխավոր հաճախորդներն ու պատվիրատուները սկզբում առավելապես պաշտպանական գերատեսչություններն էին, բայց նրա զարգանալու հետ ավելանում են նաև մատուցած ծառայությունների տեսակներն ու պատվիրատուները: Նրա ծառայություններից օգտվողների մեջ էին «Ուելս Ֆարգո» բանկը, «Բեխտել Բորպորեյշնը», «Հյուլետ Փակարդը», «Բենկ օֆ Ամերիկան», «Մակդոնել Դուգլասը», «Բլիթը», «Իստման Դիլոնը» և TRW-ն: Ստենֆորդի առավել գաղտնի նախագծերից մեկն էր քլմիական ու մանրէական զենքի օգնությամբ սլատերազմ վարելու մշակումը:

Ստենֆորդի հետազոտական ինստիտուտը եռանդունորեն օգտագործում է առնվազն 200 փոքր «խելքամանների» պաշարները՝ հետազոտություններ կատարելով ԱՄՆ-ի կյանքի բոլոր կողմերի վերաբերյալ: Սույն համակարգը հայտնի է «ARPA-ի ցանց» անունով, որը, գուցե, այս երկրում [ԱՄՆ-ում] յուրաքանչյուր մարդու կյանքի վրա լիակատար վերահսկողություն հաստատելու ամենամեծ նախագիծն է: Ներկայումս Ստենֆորդի համակարգիչները կապված են գիտահետազոտական 2500 «քույր» կազմակերպությունների հետ, որոնցից են Հետախուզության կենտրոնական վարչությունը, Bell Telephone Laboratories ընկերությունը, ԱՄՆ-ի Բանակի հետախուզության վարչությունը, Ռազմածովային հետախուզության վարչությունը (ՌԾՀՎ), RAND-ը, Մասաչուսեթսի ճարտարարվեստական ինստիտուտը, Հարվարդի համալսարանը և UCLA-ն [Կալիֆորնիայի համալսարանը Լոս Անջելեսում]: Ստենֆորդն առանցքային դեր է կատարում «գրադարան» ստեղծելու գործում՝ վարելով ARPA-ի փաստաթղթացուցակը:

«Մյուս գործակալություններին», իսկ դրանք արդեն հայտնի են ընթերցողին, թույլատրված է կարևոր և բանալի բլտերի ու խոսքերի որոնումներ կատարել ՍՀԻ-ի «գրադարանում», ծանոթանալ աղբյուրներին և լրացնել ու թարմացնել իրենց հիմնակայքերը՝ դրանք համապատասխանեցնելով ՍՀԻ-ի հիմնակայքերին: Օրինակ՝ Պենտագոնն օգտագործում է ՍՀԻ-ի հիմնակայքերը, և, անտարակույս, նույն բանն անում են ԱՄՆ-ի կառավարության մյուս գործակալությունները: Պենտագոնյան «կառավարման ու վերահսկողության» բոլոր խնդիրները լուծվում են Ստենֆորդում:

Թեև այս գործելակերպն ու եղանակները նախատեսված են իրր թե բացառապես զինված ուժերի համար, ոչ մի ելուշխիք չկա, ուր այդ հետազոտությունների արդյունքները չեն կարող կիրառվել քաղաքացիական դաշտում: Ստենֆորդը հայտնի է իր պատրաստակամությամբ՝ անել ինչ ասես և ում համար ասես, և, կարծում են, որ եթե ելքիցե ՍՀԻ-ի գործունեությունը լիովին գաղտնագերծվի, ապա դրա փաստական արդյունքների պատճառով բարձրացած գայլույթի ու վրդովմունքի

ալիքը կհանգեցնի այդ ինստիտուտի լուծարմանը:

MASSACHUSETTS INSTITUTE OF TECHNOLOGY, ALFRED P. SLOAN SCHOOL OF MANAGEMENT (Մասաչուսեթսի ճարտարարվեստական ինստիտուտ (ՄՃԻ), Ալֆրեդ Փ. Սլոունի կառավարման դպրոց)

Այս առաջատար ինստիտուտը սովորաբար չի դիտվում որպես ԱՄՆ-ի բավիստոկյան համակարգի բաղկացուցիչ մաս: Մարդկանց մեծամասնությունն այն համարում է գուտ ամերիկյան հիմնարկ, սակայն ամենևին էլ այդպես չէ: ՄՃԻ - «Ալֆրեդ Սլոունը» կարելի է ընդհանուր կերպով ենթաբաժանել հետևյալ խմբերի.

արդի ճարտարարվեստ (տեխնոլոգիա)

փոխհարաբերությունները արդյունաբերության մեջ

խմբական հոգեբանությունն ըստ Լևինի սկզբունքների

NASA - ERC-ի համակարգչային հետազոտությունների լաբորատորիաներ

ռազմածովային հետազոտական խումբ, հոգեբանություն

շարժուն համակարգեր:

ՄՃԻ-ի պատվիրատուների ցուցակն ընդգրկում է հետևյալ կազմակերպությունները.

American Management Association (Կառավարման ամերիկյան միություն)

American Red Cross (Ամերիկյան Կարմիր Խաչ)

Committee for Economic Development (Տնտեսական զարգացման կոմիտե)

GTE

Institute for Defense Analysis (IDA) (Պաշտպանական վերլուծության ինստիտուտ)

NASA

National Academy of Sciences (Գիտությունների ազգային ակադեմիա)

National Council of Churches (Եկեղեցիների ազգային խորհուրդ)

Sylvania (Սիլվանիա)

U.S. Army (ԱՄՆ-ի բանակ)

U.S. Department of State (ԱՄՆ-ի Պետդեպարտամենտ)

U.S. Navy (ԱՄՆ-ի Ռազմածովային նավատորմ)

U.S. Treasury (ԱՄՆ-ի Ֆինանսների նախարարություն)

Volkswagen Company («Ֆոլքսվագեն» ընկերություն):

Պաշտպանական վերլուծության ինստիտուտի գործունեության ընդգրկույթն (դիապագոնն) այնքան լայն է, որ հարյուրավոր էջեր

կպահանջվեին նրան զբաղեցնող խնդիրների նկարագրելու համար:

RAND RESEARCH AND DEVELOPMENT CORPORATION (Գիտահետազոտական և փորձնական - կառուցագիտական (կոնստրուկտորական) մշակումների «ՌԵՆՏ» կորպորացիա)

ՌԵՆՏ-ը, անտարակույս, թավիստուկյան հավաքածուի ամենաարժեքավոր «խելքամանն» է և, զուցե, ՄԳԹԻ-ի ամենահարգի հիմնարկը Սիացյալ Նահանգների քաղաքականությունը վերահսկելու գործում: ՌԵՆՏԻ-ի հետաքրքրությունների ոլորտն ընդգրկում է միջմայրցամաքային հրթիռների ծրագիրը, ԱՄՆ-ի արտաքին քաղաքական հայեցակարգը կերտելու նախնական վերլուծությունը, տիեզերական ծրագրեր մշակելու նախաձեռնությունները, ԱՄՆ-ի միջուկային քաղաքականությունը, կորպորացիաների գործունեության վերլուծությունը, ռազմական ասպարեզի հարյուրավոր զանազան նախագծեր, Հետախուզության կենտրոնական վարչությունը՝ գիտակցության վիճակը փոխող այնպիսի թմրանյութերի գործածության կապակցությամբ, որպիսիք են փեյոթը և ԼՍԴ-ն («ՄԿ-Ուլտրա»-ի գաղտնի գործառնությունը, սրը շարունակվում է արդեն 20 տարի):

Ահա ՌԵՆՏ-ի պատվիրատուներից մի քանիսը.

American Telephone and Telegraph Company (AT&T) (Ամերիկայի հեռախոսային ու հեռագրական ընկերություն)

Chase Manhattan Bank («Չեյզ Մանհեթեն» բանկ)

International Business Machines (IBM) (Ինտերնեշնլ բիզնես մաշինս)

National Science Foundation (Ազգային գիտական հիմնադրամ)

Republican Party (Հանրապետական կուսակցություն)

TRW

U.S. Air Force (ԱՄՆ-ի Ռազմաօդային ուժեր)

U.S. Department of Health (ԱՄՆ-ի Առողջապահության նախարարություն)

U.S. Department of Energy (ԱՄՆ-ի Էներգետիկայի նախարարություն):

ՌԵՆՏ-ի ծառայություններից օգտվում են հազարավոր հույժ պատկառելի ընկերություններ, կառավարական հիմնարկներ ու կազմակերպություններ, որոնց բոլորին թվարկելն ուղղակի հնարավոր չէ: Նրա «մասնագիտացված» ստորաբաժանումների մեջ կա մի խումբ, որն ուսումնասիրում է ջերմամիջուկային պատերազմի ծագման պահն ու զարգացման ուղիությունը, ինչպես նաև այդ հետազոտությունների հիման վրա մշակում է բազմաթիվ բեմալքներ: Սի ժամանակ ՌԵՆՏ-ին մեղադրում էին այն բանի համար, թե ԽՍՀՄ-ը նրան

հանձնարարել է մշակելու Միացյալ Նահանգների կառավարության անձնատուր լինելու (կապիտուլյացվելու) պայմանները: Մեղադրանքը կտրուկ ճանապարհով հասնում է ԱՄՆ-ի Սենատ, որտեղ այն պաշտպանում է սենատոր Սայմինգտոնը: Հետագայում նա զոհվում է իր դեմ ուղղված հողվածների պատճառով, որոնք վրան էին թափում տիրախավին ենթակա մամուլի վրդովմունքն ու արհամարհանքը: Իսկ «ՌԵՆԴ» ընկերության հիմնական բանուգործը ուղեղ արդուկելն է:

Հանրագումարի բերելով՝ կտամ Միացյալ Նահանգների թավիստոկյան այն գլխավոր հիմնարկների անունները, որոնք ուղեղի արդուկմամբ են զբաղվում բոլոր մակարդակներում, ներառյալ կառավարական, զինվորական, գործարար, կրոնական և կրթական կազմակերպությունները.

Brookings Institution (Բրուկինգի ինստիտուտ)

Hudson Institute (Հուդզոնի ինստիտուտ)

Institute for Policy Studies (Քաղաքական ուսումնասիրությունների ինստիտուտ)

Massachusetts Institute of Technology (Մասսչուսեթսի ճարտարարվեստական ինստիտուտ)

National Training Laboratories (Ազգային հոգեմարզման լաբորատորիաներ)

Rand Research and Development Corporation (Գիտահետազոտական և փորձնական-կառուցագիտական մշակումների «ՌԵՆԴ» կորպորացիա)

Stanford Research Institute (Ստենֆորդի հետազոտական ինստիտուտ)

Wharton School at University of Pennsylvania (Փենսիլվանիայի համալսարանին առընթեր Վարտոնի դպրոց):

Իմ աղբյուրներով հաստատված է, որ այս կազմակերպություններում աշխատողների ընկանուր թիվը մոտ 50.000 է, իսկ դրանց բյուջեն հասնում է 10 միլիարդ դոլարի:

Ստորև տրվում է 300-ի կոմիտեի համաշխարհային խոշորագույն կազմակերպություններից մի քանիսի ցուցակը

Americans for a Safe Israel - Ամերիկացիները՝ հանուն անվտանգ Իսրայելի

Biblical Archaeology Review - Աստվածաշնչային հնագիտական հանդես

Bilderbergers - Բիլդերբերգերներ (Բիլդերբերգերյան ակումբ)
 British Petroleum - Բրիթիշ փետրոլեում
 Canadian Institute of Foreign Relations - Կանադայի միջազգային
 հարաբերությունների ինստիտուտ
 Christian Fundamentalism – Բրիտանյա հիմքայնականներ
 Council on Foreign Relations, New York - Միջազգային
 հարաբերությունների խորհուրդ, Նյու Յորք
 Egyptian Exploration Society - Եգիպտոսի հետազոտական
 ընկերություն
 Imperial Chemical Industries - «Իմպերիալ քեմիկլ ինդաստրիզ»
 ընկերություն
 International Institute for Strategic Studies - Ռազմավարական
 մտումնասիրությունների միջազգային ինստիտուտ
 Order of Skull and Bones - Գանգի և ոսկորների ուխտ
 Palestine Exploration Fund - Պաղեստինի հետազոտական
 հիմնադրամ
 Poor Knights of the Templars - Տաճարական աղքատ ասպետներ
 Royal Dutch Shell Company - «Ռոյալ Գուտչ Շելլ» ընկերություն
 Socialist International - Սոցիալիստական ինտերնացիոնալ
 South Afrika Foundation - Հարավային Աֆրիկայի հիմնադրամ
 Tavistock Institute of Human Relations - Թավիստոկի մարդկային
 հարաբերությունների ինստիտուտ
 Temple Mount Foundation - «Թեմպլ Սաունտ» հիմնադրամ. Տաճարի
 լեռան (տաճարի վերականգնման) հիմնադրամ
 The Atheist Club - Աստվածամերժների (աթեիստների) ակումբ
 The Fourth State of Consciousness Club - Գիտակցության չորրորդ
 վիճակի ակումբ
 The Hermetic Order of the Golden Dawn - «Ռսկե արշալույս»
 անթափանց (հերմետիկ) ուխտ
 The Milner Group - Միլների խումբ
 The Nazi Princes - Արքայադուստր Նազի
 The Order of Magna Mater - Մեծ մոր ուխտ
 The Order of the Divine Disorder - Աստվածային անկարգության
 ուխտ
 The RIA - ՄԳԹԻ (Միջազգային գուրծերի թագավորական ինստի-
 տուտ)
 The Round Table - Կլար սեղան
 Trilateral Commission - Տռակոլմ հանձնաժողով
 Universal Freemasonry - Համաշխարհային ֆարմասոնություն
 [ֆրանկմասոնություն, մասոնություն]

Universal Zionism - Համաշխարհային սիոնիզմ
 Vickers Armament Company - «Վիքերս» զինագործական ընկերու-
 քուն
 Warren Commission - Ուորենի հանձնաժողով
 Watergate Committee - Ուոտերգեյտյան կոմիտե
 Wilton Park - Ուիլտոնի գրասայֆի
 World Council of Churches - Եկեղեցիների համաշխարհային
 խորհուրդ:

300-ի ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԿԻՆ ԵՎ ԱՅԺՄՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Abergavemy, Marquis of - մարքիզ Աբերգավեմի
 Acheson, Dean - Աչեսոն Դին
 Adeane, Lord Michael - լորդ Ադեանե Մայքլ
 Agnelli, Giovanni - Ագնելի Ջիովանի
 Alba, Duke of - դուքս Ալբա
 Aldington, Lord - լորդ Օլդինգտոն
 Aleman, Miquel - Ալեման Միգել
 Allihone, Professor T.E.- պրոֆեսոր Ալլիհոուն Թ.Ե.
 Alsop Family Designate - Ալսոպ, ընտանիքի ներկայացուցիչ
 Amory, Houghton - Ամորի Հուստոն
 Anderson, Charles A. - Անդերսոն Չարլզ Ա.
 Anderson, Robert O. - Անդերսոն Ռոբերտ Օ.
 Andreas, Dwayne - Անդրեսա Դուեյն
 Asquith, Lord - լորդ Ասկվիթ
 Astor, Jonh Jacob and successor, Waldorf - Աստոր Ջոն Ջեյքոբ և
 ժառանգ Ուոլվորթ
 Aurangzeb, Descendants of - Աուրանգզեբ և նրա սերունդներ
 Austin, Paul - Օստին Փոլ
 Baco, Sir Randolph - սրբ Բակո Ռենդալֆ
 Balfour, Arthur - Բալֆուր Արթուր
 Balogh, Lord - լորդ Բալոգ
 Bancroft, Baron Stormont - բարոն Բանկրոֆտ Ստորմոնտ
 Baring - Բերինգ
 Barnato, B. - Բարնատո Բ.
 Barran, Sir John - սրբ Բարան Ջոն
 Baxendell, Sir Peter - սրբ Բաքսենդել Փիտեր
 Beatrice of Savoy, Princess - արքայադուստր Բեատրիս Սավոյացի

Beaverbrook, Lord - լորդ Բիվերբրուկ
Beck, Robert - Բեք Ռոբերտ
Beeley, Sir Harold - սրբ Բիլի Հարոլդ
Beit, Alfred - Բեյտ Ալֆրեդ
Benn, Anthony Wedgewood - Բեն Էնթոնի Վեջվուդ
Bennet, John W. - Բենետ Ջոն Ու.
Benneton, Gilberto or alternate Carlo - Բենետոն Ջիլիբերտո կամ

Կալո

Bertie, Andrew - Բերտի Էնդրյու
Besant, Sir Walter - սրբ Բեզանտ Վալտեր
Bethal, Lord Nicholas - լորդ Բեթալ Նիկոլաս
Bialkin, David - Բյակլին Դավիդ
Biao, Keng - Բյաո Բենգ
Bingham, William - Բինգհամ Վիլյամ
Binny, J.F. - Բիննի Ջ. Ֆ.
Blunt, Wilfred - Բլանտ Ուիլֆրեդ
Bonacassi, Franco Orsini - Բոնակասի Ֆրանկո Օրսինի
Bottcher, Fritz - Բոտխեր Ֆրից
Bradshaw, Thornton - Բրեշու թորնտոն
Brandt, Willy - Բրանդ Վիլլի
Brewster, Kingman - Բրյուստեր Բինգման
Buchan, Alastair - Բուչան Ալիստեր
Bulfer, Warren - Բաֆեր Ուորեն
Bullitt, William C. - Բուլիտ Վիլյամ Ս.
Bulwer-Lytton, Edward - Բուլվեր-Լիտտոն Էդուարդ
Bundy, McGeorge - Բանդի Մակ Ջորջ
Bundy, William - Բանդի Վիլյամ
Bush, George - Բուշ Ջորջ
Cabot, John, Family Designate - Բարոտ Ջոն, ընտանիքի

ներկայացուցիչ

Caccia, Baron Harold Anthony - բարոն Քաչիա Հարոլդ Էնտոնի
Cadman, Sir John - սրբ Քադման Ջոն
Califano, Joseph - Քալիֆանո Ջոզեֆ
Carrington, Lord - լորդ Քարինգտոն
Carter, Edward - Քարտեր Էդուարդ
Catlin Donat - Քատլին Դոնատ
Catto, Lord - լորդ Քատտո
Cavendish, Victor C.W. Duke of Devonshire - Քավենդիշ Վիկտոր,

Դևոնշիր դուքս

Chamberlain, Houston Stewart - Չեմբերլեն Հյուստոն Ստյուարտ

Chang, V.F. - Չանգ Վ.Ֆ.
 Chechirin, Georgi or Family Designate - Չեչիրին Գեորգի կամ
 ընտանիքի ներկայացուցիչ
 Cherchill, Winston - Չերչիլ Ուինստոն
 Cicireni, V. or Family Designate - Չիչիրենի կամ ընտանիքի
 ներկայացուցիչ
 Cini, Count Vittorio - կոմս Չինի Վիտտորիո
 Clark, Howard - Քլարկ Հովարդ
 Cleveland, Amory - Քլիվլենդ Էմորի
 Cleveland, Harland - Քլիվլենդ Հարլանդ
 Clifford, Clark - Քլիֆորդ Քլարկ
 Cobold, Lord - լորդ Բոբոլդ
 Coffin, the Rev William Sloane - Քոֆին, վերապատվելի Վիլյամ
 Սլոուն
 Constanti, House of Orange - Քոնստանտի, Օրանսկիների տուն
 Cooper, John, Family Designate - Կուպեր Ջոն, ընտանիքի
 ներկայացուցիչ
 Coudenhove-Kalergi, Count - կոմս Բուդենհոուվ-Քալերգի
 Cowdray, Lord - լորդ Բուուդրեյ
 Cox, Sir Percy - սրբ Բոբս Փերսի
 Cromer, Lord Evelyn Baring - լորդ Բրոմեր Էվելին Բերինգ
 Crowther, Sir Eric - սրբ Բրուութեր Էրիկ
 Cumming, Sir Mansfield - սրբ Քամֆինգ Սենսֆիլդ
 Curtis, Lionel - Քուրտիս Լայոնել
 D'Arcy, William K. - դ'Արսի Վիլյամ Զ.
 D'Avignon, Count Etienne - կոմս դ'Ավինյոն Էտիեն
 Danner, Jean Duroc - Դաններ Ջին Դյուրոկ
 Davis, Jonh W. - Դևիս Ջոն Ու.
 De Beneditti Carlo - դե Բենեդիտի Կարլո
 De Bruyne, Dirk - դե Բրյույն Դիրկ
 De Gunzberg, Baron Alain - բարոն դե Գունզբերգ Ալան
 De Lamater, Major General Walter - զեներալ-մայոր դե Լամատեր
 Վալտեր
 De Menil, Jean - դե Մենիլ Ջին
 De Vries, Rimmer - դե Վրիս Ռիմեր
 De Zulueta, Sir Philip - սրբ դե Չուլետա Ֆիլիպ
 D'Arenberg, Marquis Charles Luois - մարքիզ դ'Արենբերգ Շարլ Լուի
 Delano, Family Designate - Դելանո, ընտանիքի ներկայացուցիչ
 Dent, R. - Դենտ Ռ.
 Deterding, Sir Henri - սրբ Դետերդինգ Հենրի

Di Spadaforas, Count Guitierrez - կոմս դի Սպադաֆորաս Գուտիերես
 Drake, Sir Eric - սրբ Դրեյկ Էրիկ
 Duchene, Francois - Դյուշան Ֆրանսուա
 DuPont - Դյուպոն
 Edward, Duke of Kent - Էդուարդ, Քենտի դուքս
 Eisenberg, Shaul - Այզենբերգ Շաուլ
 Elliott, Nicholas - Էլիոտ Նիկոլաս
 Elliott, William Yandel - Էլիոտ Վիլյամ Յանդել
 Elsworthy, Lord - յորդ Էլստորսի
 Farmer, Victor - Ֆարմեր Վիկտոր
 Forbes, John M. - Ֆորբս Ջոն Մ.
 Foscaro, Pierre - Ֆոսկարո Պիեռ
 France, Sir Arnold - սրբ Ֆրանս Առնոլդ
 Fraser, Sir Hugh - սրբ Ֆրեյզեր Հյու
 Frederik IX, King of Denmark Family Designate - Ֆրեդերիկ IX,
 Գանիայի թագավոր, ընտանիքի ներկայացուցիչ
 Freres, Lazard - Ֆրեր Լազար
 Frescobaldi, Lamberto - Ֆրեսկոբալդի Լամբերտո
 Fribourg, Michael - Ֆրայբուրգ Մայքլ
 Gabor, Dennis - Գաբոր Դենիզ
 Gallatin, Albert, Family Designate - Գալատին Ալբերտ, ընտանիքի
 ներկայացուցիչ
 Gardner, Richard - Գարդներ Ռիչարդ
 Geddes, Sir Auckland - սրբ Գեդես Օքլանդ
 Geddes, Sir Reay - սրբ Գեդես Ռեյ
 George, Lloyad - Ջորջ Լլոյդ
 Giffen, James - Գիֆեն Ջեյմս
 Gilmer, John D. - Գիլմեր Ջոն Դ.
 Giustiniani, Justin - Ջուստինիանի Ջաստին
 Gladstone, Lord - յորդ Գլադստոն
 Gloucestor, The Duke of - Գլոստերի դուքս
 Gordon, Walter Lockhart - Գորդոն Վալտեր Լոքհարտ
 Grace, Peter J. - Գրեյս Փիտեր Ջ.
 Greenhill, Lord Dennis Arthur - յորդ Գրինհիլ Դենիզ Արթուր
 Greenhill, Sir Dennis - սրբ Գրինհիլ Դենիզ
 Grey, Sir Edward - սրբ Գրեյ Էդուարդ
 Gyllenhammar, Pierres - Գյլլենհամար Պիեռ
 Haakon, King of Norway - Հասակոն, Նորվեգիայի թագավոր
 Haig, Sir Douglas - սրբ Հեյզ Դուգլաս
 Hailsham, Lord - յորդ Հեյլշեմ

Haldane, Richard Burdone - Հոլդէյն Ռիչարդ Բերդուն
 Halifax, Lord - լորդ Հալիֆաքս
 Hall, Sir Peter Vickers - սրբ Հոլ Փիքըր Վիքերս
 Hambro, Sir Jocelyn – սրբ Համբրո Ջոսելին
 Hamilton, Cyril - Համիլտոն Սիրիլ
 Harriman, Averill - Հարիման Ավերել
 Hart, Sir Robert - սրբ Հարտ Ռոբերտ
 Hartman, Arthur H. - Հարտման Արթուր Հ.
 Healey, Dennis - Հիլի Դենիզ
 Helsby, Lord - լորդ Հելսբի
 Her Majesty Queen Elizabeth II - Նորին մեծություն Եղիսաբէթ II
 քագուհի
 Her Majesty Queen Juliana - Նորին մեծություն Յուլիանա քագուհի
 Her Royal Highness Princess Beatrix - Նորին մեծություն
 արքայադուստր Բեատրիս
 Her Royal Highness Queen Margreta - Նորին քագավորական
 մեծություն Մարգրետա քագուհի
 Heseltine, Sir William - սրբ Հեզլտայն Վիլյամ
 Hesse, Grand Duke descendants, Family Designate - Հեսսէ, մեծ դուքս
 և հետնորդներ, ընտանիքի ներկայացուցիչ
 Hoffman, Paul G. - Հոֆման Փաուլ Գ.
 Holland, William - Հոլանդ Վիլյամ
 House of Braganza - Բրագանզայի տուն
 House of Hohenzollern - Հոհենցոլերնների տուն
 House, Colonel Mandel - գնդապետ Հաուս Մանդել
 Howe, Sir Geoffrey - սրբ Հոու Ջեֆրի
 Inchcape, Lord - լորդ Ինչկէյպ
 Jamieson, Ken - Ջեյմիսոն Էեն
 Japhet, Ernst Israel – Ջեֆետ Էռնստ Իսրայել
 Jay, John, Family Designate - Ջեյ Ջոն, ընտանիքի ներկայացուցիչ
 Jodry, J. J. - Ջոդրի Ջ.Ջ.
 Joseph, Sir Keith - սրբ Ջոզեֆ Բեյթ
 Katz, Milton - Էսգ Միլտոն
 Kaufman, Asher - Բաուֆման Աշեր
 Keynes, John Maynard - Էյնս Ջոն Մեյնարդ
 Keith, Sir Kenneth - սրբ Էյթ Էենեթ
 Keswick, Sir William Johnston, or Keswick, H.N.L. - սրբ Էեսուիկ
 Վիլյամ Ջոնստոն կամ Էեսուիկ Հ.Ն.Լ.
 Kimberli, Lord - լորդ Բիմբերլի
 King, Dr. Aleksander - դոկտոր Բինգ Ալեքսանդր

Kirk, Grayson L. - Քիրկ Գրեյսոն Լ.
 Kissinger, Henry - Քիսինգեր Հենրի
 Kitchener, Lord Horatio - յորդ Քիտչեներ Հորացիո
 Kohnstamm, Max - Քոնստամ Մաքս
 Korsch, Karl - Քորշ Կարլ
 Lambert, Baron Pierre - բարոն Լամբեր Պիեռ
 Lawrence, G. - Լորոենս Ջ.
 Lazar - Լազար (ինարավոր է՝ Ղազար, Ղազարոս - թարգմ.)
 Lehrman, Lewis - Լեիրման Լյուիս
 Lever, Sir Harold - սրբ Լևեր Հարոլդ
 Lewin, Dr. Kurt - դոկտոր Լևին Կուրտ
 Lippmann, Walter - Լիպման Վալտեր
 Livingstone, Robert R., Family Designate - Լիվինգստոն Ռոբերտ Ռ.,
 ընտանիքի ներկայացուցիչ
 Lockhart, Bruce - Լոքհարտ Բրյուս
 Lockhart, Gordon - Լոքհարտ Գորդոն
 Linowitz, S. - Լինովից Ս.
 Loudon, Sir John - սրբ Լուդոն Ջոն
 Luzzatti, Pierpaolo - Լուզատի Պիեռպաոլո
 Mackay, Lord of Clatsfern - յորդ Մակքեյ Քլասֆերնացի
 Mackay-Tallak, Sir Hugh - սրբ Մակքեյ-Թալակ Հյու
 Mackinder, Halford - Մաքինդեր Հեյֆորդ
 MacMillan, Harold - Մակմիլան Հարոլդ
 Matheson, Jardine - Մաթսոն Ջարլին
 Mazzini, Gueseppe - Մաձինի Զուզեպե
 McClaughlin, W.E. - Մակ-Քլոուլին Ու.Ե.
 McCloy, John J. - Մակ-Քլոյ Ջոն Ջ.
 McFadyean, Sir Andrew - սրբ Մակ-Ֆեդեն Էնդրյու
 McGhee, George - Մակ-Ջի Զորջ
 Mellon, Andrew - Մելոն Էնդրյու
 Mellon, William Larimer or Family Designate - Մելոն Վիլյամ Լարի-
 մեր կամ ընտանիքի ներկայացուցիչ
 Meyer, Frank - Մեյեր Ֆրանկ
 Michener, Roland - Միչեներ Ռոլանդ
 Mikovan, Anastas - Միկովան Անաստաս (ինարավոր է՝ Անաստաս
 Միկոյան-թարգմ.)
 Milner, Lord Alfred - յորդ Միլներ Ալֆրեդ
 Mitterand, Francois - Միտերան Ֆրանսուա
 Monett, Jean - Մոնե Ժան
 Montague, Samuel - Մոնտեգյու Սամուիլ

Montefiore, Lord Sebag or Bishop Hugh - յորդ Մոնտեֆիոր Չեբագ
կամ Բիշոպ Հյուգ
Morgan, John P. - Մորգան Ջոն Փ.
Mott, Stewart - Մոտ Ստյուարտ
Mountain, Sir Brian Edward - սրբ Մաունտեն Բրայան Էդուարդ
Mountain, Sir Dennis - սրբ Մաունտեն Դենիզ
Mountbatten, Lord Louis - յորդ Մաունտբատեն Լուի
Munthe, A., or family designate - Մունթե Ա. կամ ընտանիքի
ներկայացուցիչ
Naisbitt, John - Նեյսբիտ Ջոն
Neeman, Yuval - Նեեման Յուվալ
Newbigging, David - Նյուբիգինգ Դավիդ
Nicols, Lord Nicholas of Bethal - յորդ Նիկոլս Նիկոլաս Բեթալ
Norman Mountague - Նորման Մոնտեգյու
O'Brien of Lotherby, Lord - յորդ Օ'Բրայեն Լոթերբի
Ogilvie, Angus - Օգիլվի Անգուս
Okita, Saburo - Օկիտա Սաբուրո
Oldfield, Sir Morris - սրբ Օլդֆիլդ Մորիս
Oppenheimer, Sir Earnest, and successor, Harry - սրբ Օպենհեյմեր
Էռնեստ և նրա ժառանգ Հարի
Ormsby Gore, David (Lord Harlech) - Օրմսբի Գոր Դեկ (յուլ
Հարլեխ)
Orsini, Franco Bonacassi - Օրսինի Ֆրանկո Բոնակասի
Ortolani, Umberto - Օրտոլանի Ումբերտո
Ostigue, J.P.W. - Օստիգայ Ջ. Փ. Ու.
Paley, William S. - Փալեյ Վիլյամ Ս.
Pallavacini - Պալավաչինի
Palme, Olaf - Պալմե Օլաֆ (Ռիլոֆ)
Palmerston - Փալմերստոն
Palmstierna, Jacob - Փալմստիերնա Յակոբ
Pao, Y.K. - Փաո Ի.Զ.
Pease, Richard T. - Փիզ Ռիչարդ Թ.
Peccei, Aurellio - Պեչեի Աուրելիո
Peek, Sir Edmund - սրբ Փիկ Էդմունդ
Pellegreno, Michael, Cardinal - կարդինալ Պելեգրենո Միքայել
Perkins, Nelson - Փերկինս Նելսոն
Pestel, Eduard - Փեստել Էդուարդ
Peterson, Rudolph - Փետերսոն Ռուդոլֆ
Petterson, Peter G. - Փետերսոն Փիտեր Գ.
Petty, John R. - Փետի Ջոն Ռ.

Philip, Prince, Duke of Edinburgh - արքայազն Ֆիլիպ, Էդինբուրգի դուքս

Piercy, George - Փիրսի Չորջ

Pinchott, Gifford - Փինչոտ Գիֆորդ

Pratt, Charles - Փրատ Չարլզ

Price Waterhouse, designate - Փրայս Ուոտերհաուզ, ներկայացուցիչ

Radziwall - Ռաձիվալ

Rainer, Prince - արքայազն Ռայներ

Raskob, John Jacob - Ռասկոբ Ջոն Ջեյկոբ

Recanati - Ռեկանատի

Rees, John Rawlings - Ռիզ Ջոն Ռոուլինգս

Rees, John - Ռիզ Ջոն

Rennie, Sir John - սրբ Ռեննի Ջոն

Rettinger, Joseph - Ռետինգեր Ջոզեֆ

Rhodes, Cecil John - Ռոդս Սեսիլ Ջոն

Rockefeller, David - Ռոքֆելեր Դավիդ

Role, Lord Eric of Ipsden - լորդ Էրիկ Իփսդեն

Rosenthal, Morton - Ռոզենթալ Մորտոն

Rostow, Eugene - Ռոստոու Յուջին

Rothmer, Lord - լորդ Ռոթմեր

Rothschild Elie de or Edmon de and/or Baron Rothschild - Էլի դը

Ռոթշիլդ կամ Էդմոն դը Ռոթշիլդ

Runcie, Dr. Robert - Դոկտոր Ռանսի Ռոբերտ

Russell, Lord John - լորդ Ռասել Ջոն

Russell, Sir Bertrand - սրբ Ռասել Բերտրան

Saint Gouers, Jean - Սեն Ժուր Ժան

Salisbury, Lord - լորդ Սեյլսբերի

Samuel, Sir Marcus - սրբ Սամուել Մարկուս

Sandberg, M.G. - Սանդբերգ Մ.Գ.

Sarnoff, Robert - Սարնոֆ Ռոբերտ

Schmidheiny, Stephan - Շմիդհայնի Ստեֆան

Schoenberg, Andrew - Շյոնբերգ Էնդրյու

Schroeder - Շրյոդեր

Schultz, George - Շուլց Ջորջ

Schwartzenburg E. - Շվարցենբուրգ Ե.

Shawcross, Sir Hartley - սրբ Շոուկրոս Հարտլի

Sheridan, Walter - Շերիդան Վալտեր

Shiloach, Rubin - Շիլոախ Ռոբին

Silitoe, Sir Percy - սրբ Սիլիտոու Փերսի

Simon, William - Սայմոն Վիլյամ

Sloan, Alfred P. - Սլոան Ալֆրեդ Փ.
 Smuts, Jan - Սմութս Յան
 Spelman - Սպելման
 Sproull, Robert - Սպրուլ Ռոբերտ
 Stals, Dr. C. - դոկտոր Ստալս Ս.
 Stamp, Lord Famili designate - լորդ Ստամպ, ընտանիքի ներկայա-
 ցուցիչ
 Steel, David - Ստիլ Դեյվիդ
 Stiger, George - Ստայգեր Ջորջ
 Strathmore, Lord - լորդ Ստրաթմոր
 Strong, Sir Kenneth - սրբ Ստրոնգ Էդենթ
 Strong, Maurice - Ստրոնգ Մորիս
 Sutherland - Սյութերլանդ
 Swathling, Lord - լորդ Սուեյթլինգ
 Swire, J.K. - Սուայր Ջ. Է.
 Tasse, G. or Family Designate - Թասե Գ. կամ ընտանիքի ներկայա-
 ցուցիչ
 Temple, Sir R. - սրբ Թեմպլ Ռ.
 Thompson, William Boyce - Թոմփսոն Վիլյամ Բոյս
 Thompson, Lord - լորդ Թոմփսոն
 Thyssen-Bornamisza, Baron Hans Henrich - բարոն Թյոսսեն Բորնենի-
 ցե Հանս Հենրիխ
 Trevelyn, Lord Humphrey - լորդ Թրևելին Համֆրի
 Turner, Sir Mark - սրբ Թյորներ Մարկ
 Turner, Ted - Թյորներ Թեդ
 Tyrone, Lord - լորդ Թայրոն
 Urquidi, Victor - Ուրքիդի Վիկտոր
 Van Den Broek, H. - վան Դեն Բրուկ Հ.
 Vanderbilt - Վանդերբիլտ
 Vance, Cyrus - Վենս Սայրուս
 Verity, William C. - Վերիտի Վիլյամ Ս.
 Vesty, Lord Amuel - լորդ Վեստի Ամուել
 Vickers, Sir Geoffrey - սրբ Վիքերս Ջեֆրի
 Villiers, Gerald Hyde family alternate - Վիլիերս Ջերալդ Հայդ,
 ընտանիքի ներկայացուցիչ
 Volpi, Count - կոմս Վոլպի
 Von Finck, Baron August - բարոն ֆոն Ֆինկ Ավգուստ
 Von Hapsburg, Archduke Otto, House of Hapsburg-Lorraine - Սեծ
 դուքս ֆոն Հաբսբուրգ Օտտո, Հաբսբուրգ Լորալինդացու տուն
 Von Thurn and Taxis, Max - ֆոն Թուրն և Թաքսիս Մաքս

Wallenberg, Peter or Family Designate - Վալենբերգ Փիտեր կամ
 Ընտանիքի ներկայացուցիչ
 Wang, Kwan Cheng, Dr. - դոկտոր Վանգ Զվան Չենգ
 Warburg S. C. - Վարբուրգ Ս. Ս.
 Ward Jackson, Ledy Barbara - լեդի Ուորդ Ջեքսոն Բարբարա
 Warner, Rawleigh - Ուորներ Ռոլեյ
 Warnke, Paul – Ուորնկե Փոլ
 Warren, Earl - Ուորեն Էրլ
 Watson, Thomas - Ուոթսոն Թոմաս
 Webb, Sydney - Վեբ Սիդնեյ
 Weill, David - Վեյլ Դավիդ
 Weill, Dr. Andrew - դոկտոր Վեյլ Էնդրյու
 Weinberger, Sir Caspar - սրբ Զասպար Ուայնբերգեր
 Weizman, Chaim - Վեյցման Խաիմ
 Wells, H.G. - Ուելս Հ. Գ.
 Wheetman, Pearson (Lord Cowdray) - Ուիտմեն Փիրսոն (լորդ
 Զոուդրեյ)
 White, Sir Dick Goldsmith - սրբ Ուայտ Դիկ Գոլդսմիթ
 Whitney, Straight - Ուիտնի Ստրեյտ
 Wiseman, Sir William - սրբ Վայսման Վիլյամ
 Wittelsbach - Վիտելսբախ
 Wolfson, Sir Isaac - սրբ Վոլֆսոն Իսաակ
 Wood, Charles - Վուդ Չարլզ
 Young, Owen - Յանգ Օուեն:

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՓՆՏՐՈՂՆԵՐԻՆ

Հայրենակիցներ,

Ձեր կարդացած գիրքը բանալի է հասկանալու համար արդիականության հիմնական խնդիրներից մեկը՝ ՄԱՐԴՈՒ ԳԻՏԱԿՎՅՈՒԹՅԱՆ խնդիրը: Հեղինակի հետազոտությունը այն բանի հերթական հաստատումն է, որ Մարդկային Յեղի թշնամին ՆԵՆԳԱՓՈԽԵԼ Է ՄԱՐԴԿԱՆՑ ԳԻՏԱԿՎՅՈՒԹՅՈՒՆԸ: Մենք բոլորս մե՛ր խելքով չենք ապրում: Մեր գիտակցությունը վերահսկում և կառավարում են, իսկ առանձին մարդկանց գիտակցության վերահսկման ու կառավարման միջոցով կառավարվում են ժողովուրդներն ու պետությունները:

ՄԵՆՔ ՀՈՐԴՈՐՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ՁԵՐ ԳԻՏԱԿՎՅՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԱՏԱԳՐԵՔ թշնամու դրույթահրահանգներից ու կապանքներից, ինչը հնարավոր է անել միայն անզիջում պայքարով:

ՄԵՆՔ ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՆՔ, որ գոյություն ունի վաղնջական, հետևաբար և ՄԱՐԴՈՒ ԳԻՏԱԿՎՅՈՒԹՅԱՆ ՃՇՄԱՐԻՏ ԴԱՇՏ, որի մե՛ջ միայն կարող է կիմնվել մարդուս կյանքը, և մե՛ր ձեռքով իրականանալ մեր սեփական, այլ ոչ թե օտարածին նպատակների կատարումը:

Արդիականության պահը մեզ համար որպես գլխավոր առաջադրանք է հաստատում ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՆՈՐ ՈՒ ՎՍԵՄ ՄՇԱԿՈՒՅԹ ԿԵՐՏԵԼԸ:

Թաքուն ուժերը, որոնք մարդկանց գիտակցությունը լիովին վերահսկելու համակարգ են կառուցել և վզներից թշնամական դրույթահրահանգներ փաթաթել, մեր ժողովրդին խոչընդոտում են ելնելու մշակութաստեղծ դաշտ: Թշնամու դրույթահրահանգները հնարավոր է հաղթահարել նախ և առաջ մարդկանց գիտակցությունը վսեմացնելով: Սրանից բացի՝ յուրաքանչյուրս պետք է թշնամու մասին ծանրակշիռ գիտելիք ունենա:

Մեր Հայրենիքի բոլոր Մարդկանց համատեղ աշխատելու, մեր ժամանակի առավել հրատապ խնդիրներին լուծում գտնելու, բնիկ Մարդկային գիտելիքներ մշակելու, վասն Հայրենյաց ճակատ կազմելու հորդոր ու խրախույս ենք կարդում: Մենք հստակ պատկերացում ունենք այն ԳԱՂՏՆԱԾԱԾՈՒԿ ՈՒԺԵՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ մասին, որոնք Մարդկության դեմ բազմահազարամյա պայքար են մղում: Առանց այդ վերին աստիճանի արդիական Գիտելիքի՝ ներկայումս անկարելի է

նույնիսկ հասկանալ, թե իսկապես ինչ է կատարվում
իրականության մեջ, էլ չասած այն, թե ինչպես պետք է դիմակայել
ճարտարարեն նյութվող և իրականացվող ծրագրերին:

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՎԵՐ ՕՐԵՆՔ ՉԿԱ:
ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄԱ ՀՈԳԵՎՈՐ ԴԱՇՏՈՒՄ
ՃԱԿԱՏ ԿԱԶՄԵԼՆ Է:

Չոն Բոլեման

300 - Ի ԿՈՄԻՏԵՆ

**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ**

Թարգմանեց

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԱԳՅԱՆԸ

**Շապիկն ու
Էջադրումը՝ Ա. Ս. Մելիքյանի**

**Տպագրությունը՝ օֆսեթ, թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 60/84,
Ծավալը՝ 17,75 տպագրական մանուկ:
Տպաքանակը՝ 1.000 օրինակ:**

«Մի՛ ակնածիր հզորից, մինչև մահ պայքարի՛ր
հանուն ճշմարտության, և Տեր Աստված
կպայքարի քեզ հետ:

Մի եղի՛ր հանդուգն քո լեզվով և
ծույլ ու դանդաղկոտ՝ քո գործորում:
Մի եղի՛ր քո տան մեջ առյուծի պես և
դաժան՝ քո ծառաների հանդեպ»:

Աստվածաշունչ, Սիրաք